

საქართველო

1898

საქართველო

გარეგანი, სახელმწიფო და შიდა საქმეების

დასახელება

№ 6

გ. ბ. ბ. ბ. ბ. ბ.

1901



გ. ბ. ბ. ბ. ბ.

Типография Груз. Издат. Т—ва. | საქართველოს სახელმწიფო და შიდა საქმეების
1901

№ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, II Հողից կտրուածներ, Լեօի . 5
2. ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ, բան. ներկայացողի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի. 45
3. ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅՆԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ, Ա. Դաբբինեանի 50
4. ԲՕԼԷՍ, պատմութեամբ Գօրկիյի, թարգմ. Ե. Կ.—եանի. 64
5. ՄԵՐ ԿԱՆԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Ա. Չիլիկեանի 70
6. ՕՐՕՐՕՑԻ ՆՐԴ, նմանութիւն ներկայացողի, Կ. Կրասիլ-
նիկեանի 86
7. ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, զրամա Գ. Հառապամանի, թարգմ.
Ե.—Ա. 88
8. ՓՈՔՐԻԿ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ, պատկեր, Գ. Բաշինջաղեանի 107
9. ՓՈՐՈՒԱԾ Է ԲԱՀՈՎ, բան. ներկայացողի, թարգմ. Ա.
Ծառուեանի 124
10. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, վէպ Ալֆօնս Դոդէի, թարգմ. Տ.
Յովնանեանի 125
11. ՄԱԼԱՐԻԱՆ ՆԻ ՄՈԾԱԿՆԵՐԸ, բժշկ. վ. Արծրունու. 145
12. ՎԱՏԱՍԵՌՄԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՒ, բժ. Բ. Ա. . 156
13. ԲԻԵՐՆՍՈՆԻ ՆԻ ԻՐՍԷՆԻ ՎԵՐՋԻՆ ԴՐԱՄԱՆԵՐԸ, Ե.
Թափշեանի 159
14. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի . 169
15. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. 25) В. Тотоміанцъ. „Потребни-
тельные общества на западѣ, Լ. Ա.—26) Գ. Մ. Կա-
րադեղեան. „Գերմ. Օգնութեան ընկ. Տաճկ. համար,
Լ. Ա.—27) Ա. Ծառուեան. „Գրչի հանաքներ“, Լ. Ա.
—28) Բժ. Վ. Արծրունի. „Վատ ծառ“, Բժ. Գ. Ա.—
29) Անդրանիկ. „Դէրսիմ“, Լ.—30) Մ. Զ. Մեղեան,
„Քահանայական Խնդրի“ շուրջը, Մ.—նոր ստացուած
դրժեր 205
16. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. «Հողային տուրքը» և հարկերը
Կովկասում, Ա. Զաւարեանի 217
17. † Վ. Ա. ՄԱՆԱՍՍԷԻՆ, բժ. Գ. Սարգսեանի 232
18. ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Տ. Փի-
րումեանի 237
19. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական կարգերի էվոլյու-
ցիան.—Մարդկանց գործունէութիւնը ուղղող երկու
սկզբունք.—Առևտուրը և արդիւնադրժութիւնը իբրեւ

Նոր շրջան I տարի

Հրատ. XIII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6

Յ Ո Ւ Ն Ի Ս

1901



Թ Ի Յ Լ Ի Ս

Типография Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերության.
1901

Дозволено цензурою Тифлисъ, 17-го іюня 1901 г

№ 6

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԳԻՒՂԻ ՄԱՐԳԻԿ, II Հողից կտրուածներ, Լեօի . 5
2. ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ, բան. նեկրասովի, թարգմ. Կ. Կրասիլնիկեանի. 45
3. ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ, Ա. Դարբինեանի 50
4. ԲՕԼԷՍ, պատմուածք Գօրկիյի, թարգմ. Եւ. Կ—եանի. 64
5. ՄԵՐ ԿԱՆԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Ա. Չիլիկեանի 70
6. ՕՐՕՐՕՑԻ ԵՐԳ, նմանութիւն նեկրասովի, Կ. Կրասիլնիկեանի 86
7. ՄԵՆԱԿ ՄԱՐԳԻԿ, զրամա Գ. Հաուպտմանի, թարգմ. Ե.—Ա. 88
8. ՓՈՔՐԻԿ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ, պատկեր, Գ. Բաշինջաղեանի 107
9. ՓՈՐՈՒԱԾ Է ԲԱՀՈՎ, բան. Նիկիտինի, թարգմ. Ա. Մասուրեանի 124
10. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, վէպ Ալֆօնս Դօդէի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի 125
11. ՄԱԼԱՐԻԱՆ ԵՒ ՄՈԾԱԿՆԵՐԸ, բժշկ. վ. Արծրունու. 145
12. ՎԱՏԱՍԵՌՄԱՆ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՒ, բժ. Բ. Ա. 156
13. ԲԻԵՐՆՍՈՆԻ ԵՒ ԻԲՍԷՆԻ ՎԵՐՋԻՆ ԴՐԱՄԱՆԵՐԸ, Ե. Թոփչեանի 159
14. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, XVIII ԴԱՐՈՒՄ, Լեօի . 169
15. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. 25) В. Тотоміанцъ. „Потребительныя общества на западѣ, Լ. Ա.—26) Գ. Մ. Կարաղեղեան. «Գերմ. Օգնութեան ընկ. ծառի. համար, Լ. Ա.—27) Ա. Մասուրեան. „Գրչի հանաքներ“, Լ. Ա.—28) Բժ. Վ. Արծրունի. „Վատ ծառ“, Բժ. Գ. Ա.—29) Անդրանիկ. „Դէրսիւ“, Լ.—30) Մ. ք. Մելեան, „Քահանայական Խնդրի“ շուրջը, N.—նոր ստացուած զբօսը 205
16. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. «Հողային տուրքը» և հարկերը Կովկասում, Ս. Զաւարեանի 217
17. † Վ. Ա. ՄԱՆԱՍՍԷՆ, բժ. Գ. Սարգսեանի 232
18. ՎՐԱՑ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԻՑ, Տ. Փիւրումեանի 237
19. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակական կարգերի էվօլյուցիան.—Մարդկանց զործունէութիւնը ուղղող երկու սկզբունք.—Առևտուրը և արդիւնազործութիւնը իբրեւ

- հասարակական կազմակերպութեան արդիւնք. — Միջ-
նորդներից պաշտպանող ընկերակցութիւններ. — Ռօչդէ-
լեան սպառողական ընկերակցութիւն. — Կօօպերատիւ և
ակցիօներական ընկերութիւնների տարբերութիւնը. —
Ինչո՞ւ կօօպերատիւ ընկերութիւնները չեն ծաղկում
հայերիս մէջ. — Նահ և սկզբունք. — Նոր տերունիքը գա-
ղափարական դարձնելու միջոցներից մէկը. Գրիգ. Արծ-
րունու հրապարակախօսական լօղումների հրատարա-
կութիւնը առանձին գրքով. — Մաի կրիզիսը Քիֆլիսում.
Բնակարանների կրիզիս. — Տնատէր ձայնաւորների կա-
տարելիք դերը. **Լ. Էւոն Սարգսեան** 247
20. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. I. Ռոզման հարցը Արարատեան
դաշտում, II. — Պօ: II. Վիճակագրական տեղեկու-
թիւններ Ալեքսանդրօպօլի հալ-լուսատրչականների
մասին. Ն. Բ. Ն. 256
21. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական պատերազմի վախճանը.
— Բօտայի նամակը. — Քիւրքական ուղեգրութիւններ. —
Ազգերի հաւասարութեան սկզբունքը. — Ֆրանց-Յովսէփը
չեխերի մայրաքաղաքում. — Կեօրբերի տնտեսական-հա-
սարակական ծրագիրները. — Վալդէկ-Րուսսօյի բանուո-
րական կենսաթոշակի օրինակիծը. **Լ. Ս.** 264
22. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ, Նամակ Թաւրիզից,
Ե. Ֆրանգեանի 268
23. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, II. տիկին Ս. Տիւսաբ, Լ. 283
24. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ 289
25. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 290
26. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 291
27. ՅԱԻԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլստօյի, թարգմ.
Տ. Յովհաննիսեանի 129—160

Գ Ի Ի Ղ Ի Մ Ա Ր Դ Ի Կ

(Շարունակութիւն)

Գ Լ Ո Ի Խ Ե Ր Ր Ո Ր Դ

Ա

Սովորականի պէս՝ երեկոյեան ամայութիւնը շատ վաղ տիրեց այն հեռաւոր թաղին, որ տարածուած էր արեւմտեան մերկ թումբերի ստորոտում:

Դա իսկապէս թաղ էլ չէր, այլ քաղաքի մի արուարձանը և կոչուում էր Նոր-Գաղութ: Եւ իրաւ, տների այդ մեծ խումբը կարծես այստեղացի չէր, կարծես մի օտար տեղից էր արշաւել եկել, բայց չը համարձակուելով լողորովին կաշել քաղաքին, խառնուել նրա հետ, իջել էր այստեղ, թողնելով իր և քաղաքի մէջ չոր ու աւազոտ դաշտի մի երկար, նեղ շերտ:

Մի՛ հատ լայն փողոց անցնում էր նրա ամբողջ երկարութեամբ, ծայրից ծայր: Գաղութի շնչափողն էր դա, առանց որի չէր կարող կեանք լինել տների այդ անկարգ զանգուածի մէջ. և ամբողջ այդ զանգուածը աշխատել էր, որքան կարելի է, խիտ սեղմուել նրա երկու կողերին, որքան կարելի է մօտ լինել նրան, շնչասպառ չը դառնալու համար: Դուրս գալով թաղից, փողոցը դաշտի վրայով գիմում էր դէպի քաղաք: Այստեղ նա լայն ու մեծ շնչափող չէր, այլ նմանում էր մի ոլորուն կնճիթի, որ իր սուր ծայրով խրւում էր հարուստ քաղաքի մարմնի մէջ, խրւում էր աննկատելի

կերպով, յանկարծ, դողի զգուշութեամբ, միանալով քաղաքին դուրս եկող բազմաթիւ մանր ու նեղ փողոցներին մէկի հետ:

Թւում էր թէ այդ բոլորը դիտմամբ է այդպէս դասաւորուած. այդ կնճիթը շատ հարկաւոր էր Նոր-Գաղութին. դրա միջով էր այնտեղ ապաստանած մերկութիւնը դուրս ծծում քաղաքի ճարպոտ ու գեր մարմնից այն ամենը, ինչ կարելի էր քաշել դէպի իրան, ինչ հարկաւոր էր իր ապրուստի համար:

Եւ ճարպոտ ու գեր մարմինը յօժարութեամբ էր թոյլ տալիս այդ պարազիտին ծծել իրան: Թոյլ էր տալիս, որովհետեւ Նոր-Գաղութը մի մեծ կեղտատար փոս էր նրա համար: Արդիւնաբերական մեծ կենտրոնի մէջ ամեն օր հասարակական տականքներ էին գոյանում: Այդ մրուրն ու դժբախտութիւնը դուրս էին չալուում դէպի այն կողմը և Նոր-Գաղութը հաւաքում ու ծածկում էր իր մէջ այդ բոլորը: Փոխարէնը քաղաքը թոյլ էր տալիս նրան հաւաքել իր հարուստ սեղանի փշրանքները, վերաբերում էր այդ աննկատելի կողոպուտին մատների արանքով և նոյն իսկ մի-մի ուշադրութիւն էլ էր դարձնում իր կեղտապահ փոսի վրայ:

Այդ ուշադրութեան մի նշանն էր փողոցային լապտերներ վառողը, որ փոքրիկ սանդուղքը ուսը գցած՝ մտաւ Նոր-Գաղութի փողոցը և սկսեց վառել՝ այնտեղ դրած երեք թէ չորս լապտերները:

Խաւարը այնքան թանձր էր, որ լապտերները հազիւ էին կարողանում յաղթահարել նրան և մի քանի լուսաւոր շերտեր գցել փողոցի վրայ: Դեռ նոր էր լապտեր վառողը հեռացել, երբ այդ լուսաւոր շերտերից մէկում երևան եկաւ մի կարճահասակ ջահէլ մարդ: Նա քայլում էր աշխոյժով, բայց քայլերը անլսելի էին նոյն իսկ այդ մեռելային լուսութեան մէջ. նրա պատառոտուած, անկրունկ կօշիկները չէին էլ կարող որ և է ձայն հանել:

Լապտերը մի վայրկեան լուսաւորեց նրա ամբողջ

մարմինը: Այստեղի բնիկներից մեկն էր դա, մեկը այն դասակարգից, որ յայտնի է «բոբիկ» ընդհանուր անունով: Մի քիչ դեպի ձախ էր ծռուած նրա մարմինը. ձախ թևն էր նրա հաւասարակշռութիւնը պահպանում և հէնց այդ պատճառով էլ անդադար յետ ու առաջ էր շարժւում: Իսկ աջ թևից միայն մի փոքրիկ կտոր էր կպած նրա ուսին և այդտեղ, այդ կտորի տակ, ինչ-որ շորի կապոց կար: Մոխրադոյն, սևացած պինջակի թևքը կախ էր ընկած այդ կապոցի վրայից և տատանւում էր փալասի կտորի նման:

Մենաւոր «բոբիկը» շտապում էր: Կարծես նա էլ վախենում էր Նոր-Փաղութի վաղ երեկոյից: Ինչե՛ր չք կան այս խաւարի մէջ: Թէև թաղի աջ ծայրում, փոքրիկ տնակի մէջ, մինչև առաւօտ վառւում է ճրագը և ամենքը գիտեն որ այդտեղ երեք օստիկան են դրուած, բայց ո՞վ է նրանց նայում: Հէնց ինքը, այդ մի թևանի մարդը, շատ էր մտածում թէ կայ պահականոց...

Ահա մի բաց դուռ: Նա կանգ է առնում: Փաղցած շան հստառութիւնը նրան զգալ է տալիս թեթև որսի մօտիկութիւնը: Համարձակ մի քայլ է անում դեպի մութ բակը. տեղ-տեղ ճրագներ են երևում, դեռ մարդիկ չեն քնել և անպատճառ մի բան թողած կը լինեն դրսում: Բայց մթութեան մէջ մի սպառնալից մռռոց լսուեց և նա իսկոյն յետ դարձաւ: Շունը... նա ամենից շատ այդ թշնամուց է վախենում, որովհետև մի թևով չէ կարելի կռուել նրա հետ: Եւ մի քանի քայլ հեռու փախչելով, նա երեսը դարձրեց դեպի շան կողմը, խաւարի մէջ բարձրացրեց բռունցքը, սպառնում էր նրան և զգուշիկ հայհոյանքներ թափում: Այդ բոլորի մէջ երևում էր իր յոյսերի մէջ խաբուած, անզօր մարդու կատաղութիւնը. ինչքան թոյն կար սրտում, յիշոցների միջոցով թափեց իր այնքան ատելի թշնամու գլխին: Շունը հաչում էր, իսկ նա պատասխանում էր նրան հեռուից իր հաչոցով: Այդ մենամարտութիւնը, վերջապէս, ձանձրացրեց երկոտանի ախոյեանին և նա շարու-

նակեց իր ճանապարհը: Բայց կատաղութիւնը նրան խեղդում էր. և ուրիշ մի ճար չը գտնելով, նա ոտով պինդ խփում էր իւրաքանչիւր փակ դռան և հէնց որ շնահաչոց էր բարձրանում մէկի ետեւում, նա էլ բարձրացնում էր իր ձայնը և նոյն եռանդով հայհոյում: Մի տեղ ոտի հարուածից վախեցած՝ մի կատու դուրս թռաւ ինչ-որ անկիւնից: Լապտերը մօտ էր. նա տեսաւ փախչողին և առիւծ կտրած վազեց նրա ետեւից, պատարաստ իր ամբողջ կատաղութիւնը այդ պատահած թոյլի վրայ թափելու:

Բայց կատուն կորաւ, իսկ նա շուտով թողեց լայն փողոցը, շուռ եկաւ դէպի աջ և անյայտացաւ տների քառսի մէջ: Ինչ-որ նեղ ու ոլորուն ճեղքեր էին այնուհետեւ և ոչ թէ փողոցներ: Ամայութիւնը, խաւարը աւելի ևս ահաւոր էին, երկիւղը զսպեց նրան, հարկադրեց էլ աւելի արագացնել քայլերը. բայց և այնպէս, կատաղութիւնը երբեմն այնպէս էր բռնում, որ նա չէր կարողանում չը մոռալ իր յիշոցները:

Նոր-Պաղութն էլ ունէր իր երջանիկ և դժբախտ մասերը, իր ունեւորութիւնն ու չքաւորութիւնը: Մենաւոր մարդը այստեղ էլ չքաւորութեան զաւակ էր. նա դիմում էր ամենաէժան բնակարանների կողմը և համարեա թաղի ծայրին հասաւ:

Քարէ մի ցածրիկ պատ երեւաց, որ շրջապատում էր ահագին, ընդարձակ բակը և դալիս էր մի անկիւնում բարձրացած մեծ դռների երկու կողմերին կաշում: Բայց ներս մտնելու համար ոչ ոք չէր դիմում այդ փայտէ ահագին, ծանր փեղկերին, որոնք միշտ անշարժ էին մնում: Նոյն իսկ մի թեւանի մարդու համար էլ ոչինչ դժուարութիւն չէր՝ բարձրանալ այդ պատի վրայ և մի թեթեւ թռիչքով ընկնել նրա միւս կողմը:

Նա կտրեց մեծ բակը, դիմեց դէպի աջ ծայրը. բայց այդ միջոցին հակառակ ծայրից մի բարակ հաչոց լսուեց: Մարդը մի ակնթարթում փոխուեց. ինչ-որ վայրենի աղաղակ դուրս թռաւ նրա բերանից և նա արագ

սլացաւ դէպի այդ ձայնը. այս անգամ աւելի կատաղի կերպով հայհոյանքներ էր թափում, իբրև մի թշնամի, որ գիտէ թէ ուժեղը ինքն է, յաղթողն էլ ինքը պիտի լինի: Նա գիտէր որ այդտեղ մի շատ փոքրիկ շնիկ էր ապրում: Ինչ կասկած որ նրանից շատ հեշտ էր հանել նրա ամբողջ ցեղի վրէժը: Խեղճ շնիկը, ի հարկէ, ոչինչ չար միտք չունէր նրա դէմ, նոյն իսկ ճանաչում էլ էր նրան և եթէ հաչում էր, պատճառը այն էր միայն, որ շուն էր: Իսկ մի թեւանին վազեց նրա վրայ:

Շնիկն էլ տաքացաւ, բայց չը դնաց յարձակուողի դէմ, այլ խոյս էր տալիս նրա առջևից, դէս ու դէն էր ցառկում: Թոյլի այդ տեսակ պաշտպանութիւնը աւելի ևս կատաղացրեց յարձակուողին: Նա վայր գցեց իր կիսատ թևի տակ պահած կապոցը, որպէս զի աւելի անգամ լինի և գործադրէ թևի կտորն էլ: Եւ իրաւ, այդպէս նա աւելի ուժեղացաւ: Շնիկը անողորմ հալածանքից չզկուած, ինչքան կարողութիւն ունէր, ցոյց էր տալիս հաշտի մէջ. բայց գլուխը կորցրեց և գիմեց դէպի մի ինչ-որ անկիւն: Դա թակարդ էր նրա համար. բաց տեղ չը գտնելով իր չորս կողմը, նա յուսահատութիւնից սեղմուեց մի պատի. և ահա այդտեղ վրայ հասաւ յարձակուողը մի քանի քթացի տուեց նրա փոքրիկ մարմնին, ուշադրութիւն չը դարձնելով նրա փոքրիկ առամենքի վրայ: Սրտապատառ ճիշեր արձակելով, խեղճ կենդանին գլորուեց գետին, տափալուեց պատի տակ, ոտակածի պէս դարձաւ: Հնչեց յարձակուողի յաղթական հայհոյանքը, ամենից դարչելին նրա յիշոցներէց: Ու վերադառնալով բակը, նա սկսեց որսնել իր կապոցը, նորից դրեց նրան կիսատ թևի տակ: Լսում էր շնիկի տղիւղորմ հեծկտանքը: Գլխուած սրիկան, վերջապէս, հանգստացրեց իր սիրտը. շան տանջանքները նրան մեծ բաւականութիւն էին պատճառում: Այդ երեւաց նրանից, որ նա մատը դրեց լեզուի վրայ, երկու անգամ շուացրեց:

Սուկսը հասաւ նշանակուած տեղը: Այ կողմի եր-

կու յարկանի տան նկուղում քունը արդէն ծանրացած էր մի քանիսի վրայ, բայց սուր սուղոցները հասկացրին թէ ով է գալիս, այն էլ ինչ ուրախ արամադրութեան մէջ: Երեք գլուխ բարձրացան, սպասում էին երկրորդ նշանին. դա էլ շուտով լսելի դարձաւ: Բակից դէպի ցած, դէպի նկուղը, մի փայտէ սանդուղք էր տանում: կանգնելով նրա ծայրին, մի թեւանի մարդը սկսեց դանդաղ իջնել չարածճի երեխայի նման և բարձր ձայնով համբել աստիճանները: Դեռ տասնութերորդին չէր հասել նա, երբ շառաչւնով բացուեց նկուղի դուռը:

Բ

Նրան անուանում էին Կոնատ: Բայց նա մօրից չէր այդպէս ծնուել: Չորս տարի առաջ նա դեռ զըրկուած չէր իր թեւից և սեփական անունից:

Այդ ժամանակ նա բանում էր տեղական մի մեծ գործարանում: Եւ այնտեղ ամենքին յայտնի էր իբրև ժիր ու հասկացող բանուոր. ճանաչում էին նրան բոլոր ընկերները, գիտէին որ նա Արշակն է: Ճանաչում էր և գիտէր նոյն իսկ գործարանի գլխաւոր կառավարիչը, թէև նա շատ քիչ էր երևում այդտեղ, երևացած ժամանակն էլ հազիւ մի երկու րոպէ էր մնում: Նա էլ գնահատում էր Արշակի երկաթի գիմացկանութիւնը, նրա եռանդն ու ճարպիկութիւնը: Գիւղից նոր եկած այդ անմօրուս պատանին մի կարճ միջոցում ընտելացաւ գործարանի մեքենաներին, ամենքը ասում էին թէ նա սովորել է մեքենաների լեզուն, բնութիւնը, այնպէս լաւ է ճանաչում ամեն մէկին, ինչպէս գիւղում ճանաչում էր նախրի իւրախանչիւր կովին:

Նրա հայրը մշակ Խաչատուրն էր, որին տեսանք աղքատանոցում: Այս շատ հեզ ու խոնարհ, միշտ հազող, վերին աստիճանի դանդաղկոտութեամբ հալուող ու մաշուող մարդն էր, որ դալով այս մեծ քաղաքը, բերել տուեց իր ամբողջ ընտանիքը գիւղից, ուր նա հող

չունէր և նոյնպէս մշակութիւն էր անում ուրիշների համար: Քաղաքում նա իրան վատ չէր զգում և տաճան երկու տարեկան Արշակը, իբրեւ նրա միակ արու զաւակը, առաջնորդեց դաղթական ընտանիքը դէպի օտարութիւն: Նոր էր նա աշխարհ տեսնում և շարունակ ասում էր իր մօրը, թէ ինքը չի կորչի մեծ քաղաքում:

Եւ դա սուտ չէր: Մշակ Խաչատուրը արդէն մտածում էր նրա համար հարս բերելու մասին: Ծանօթ բարեկամները խրախուսում էին այդ միտքը. ժամանակ է, մանաւանդ արժէ որ Արշակի պէս տղամարդը հարսներից ամենագեղեցիկն ունենայ: Ու հայրը իր քաղցր ժպիտների մէջ յանդգնութիւն չէր համարում միմի անգամ հեռուն գնալ: Հայրական ցնորքները նրան էլ էին օրօրում և նա հաւատում էր, որ եթէ բանը այսպէս գնայ, հեռու չեն լինի այն օրերը, երբ իր ոսկորների համար էլ հանգստութիւն կը գայ: Թէ ինչպէս և ի՞նչ կարգով պիտի կատարուէր այդ հրաշքը—նա հոստատառապէս ասել չէր կարող. բայց որդու աշխատանքով ապրող մի ծերունի հայր, որի ամբողջ պարտականութիւնն է օրը երկու անգամ եկեղեցի գնալ և աղօթել որդու համար—սա իրական բան էր: Ինքը, Խաչատուրը, չէր հնարել այսպիսի ապագայ. նրա խելքը հնարել էլ չը գիտէր: Այդպիսի ծերունիներ շատ և շատ կան և եթէ նա ինքն էլ այդ շատերից մէկը դառնայ, դա ոչ վարմանալի կը լինի, ոչ էլ մեղք:

Ոսկի երազների մէջ էր երջանիկ հայրը, երբ մի օր նրան լուր բերեցին, թէ Արշակը վնասուել է և պառկած է հիւանդանոցում: Բացուեց ծնողական արտասուքների առուն:

Առաջին օրերը հօրն ու մօրը թոյլ չը տուին տեսնել, թէ ինչպէս է վնասուած իրանց որդին: Գործարանական թաղում, սեւացած տների, ծխացող խողովակների մէջ, բարձրացած էր հսկայ գեղեցիկ տունը: Այդտեղ էին տարել Արշակին: Արդիւնաբերական աշխարհը պարծենում էր, որ մեքենաներին զոհուող ազ-

գաբնակութեան համար նա այսպիսի հիւանդանոց է կառուցել: Ոչինչ չէր խնայուած նրան զարդարելու, յարմարեցնելու համար. և նրա մէջ հարուստ ու ծաղկած է մանասանդ վիրաբուժական բաժինը: Ահագին գումարներ էին ծախսել և արտասահմանից ստացել էին ամեն տեսակ գործիքներ, որոնք ներկայացնում էին գիտութեան և արուեստի վերջին խօսքը, հրաշալիքները... Հիւանդանոցի բժիշկները ամեն անգամ մեծ պարծանքով էին յիշում, որ գործիքների այդքան հարըստութիւն, այդպիսի հիանալի ընտրութիւն չունի ոչ մի հիւանդանոց Ռուսաստանի գործարանական բաղադրներում:

Այդ բաժնում էր Արշակը: Վերջապէս մշակ խաչատուրն իմացաւ թէ այդ փառահեղ շինութեան մէջ ինչ են արել նրա որդուն. իմացաւ և սկսեց ծեծել իր խեղճ գլուխը: Մեքենան ջարդել էր Արշակի աջ թևը և բժիշկները կտրել էին մսի և ոսկորի այդ ալանդակ, այլ ևս աւելորդ զանգուածը:

Անցան շաբաթներ և հիւանդանոցի մաքուր, լայն ու լուսաւոր սենեակներից մի մարդ դուրս եկաւ: Մի բոլորովին նոր, փոփոխուած, այլ ձևով շինած մարդ: Նա այլ ևս Արշակը չէր, նա այնուհետեւ Կոնստան էր: Թևի հետ գնացել էր նրա ամբողջ ոյժը, նրա ինքնավատահոլութիւնը: Այժմ նա բոլորովին անպէտք էր, և հասկանալ չէր կարելի թէ ինչո՞ւ, ի՞նչ մաքով և ի՞նչ յոյսով իջաւ նա հիւանդանոցի սանդուղքի վերջին աստիճանից, ոտքը գրեց իրական հողի վրայ:

Մայրը, այնքան ժամանակ ինքն իրան կեղեքելուց յետոյ, գոհ էր որ որդին գոնէ վերադարձաւ. հիւանդանոցը նրա գիւղական խելքին սպանդանոց էր երեւում: Այդ սպանդանոցից որդին գլուխը վրան է դուրս եկել: Մի՞թէ այդքանն էլ բաւական չէր: Բայց մայրերը չեն աշխարհին ուղղութիւն տուողները: Օ՛, եթէ նրանց սրտին մնար, ամենքն էլ լաւ են, ամենքն էլ երջանիկ և

սիրելի լինելու իրաւունքն ունեն: Ամենքը, և ամենից առաջ, ի հարկէ, Կոնատը...

Եւ մայրը աւելի ևս սիրեց իր խեղճ սրգուն, նրա համար ոչինչ էր, որ դառն աղքատութիւնը սկսեց խեղդել ամբողջ ընտանիքը: Մշակ Խաչատուրը լուռ էր, աւելի ևս խեղճացած: Կորսն նրա ոսկի երազները: Այժմ նրա հազը աւելի սաստկացաւ, աւելի յամառ ու խեղդող դարձաւ: Ի՞նչ դատաստան էր դա: Հարկաւոր էր որ այժմ Խաչատուրի թեւի վրայ նոր թեւ բանէ, հարկաւոր էր որ նա կրկնապատիկ շատ գործ կատարէ: Չէ՞ որ այժմ միայն նրա աշխատած կոպէկներն էին ամբողջ ընտանիքի յոյսը:

Արշակի համար ապրուստի մի միջոց էր մնում— ողորմութիւն հաւաքել: Եւ հայրը մի քանի անգամ հասկացրեց նրան թէ թեւից զրկուած լինելը շատ մեծ առիթ է որ նա մարդկանցից հաց խնդրէ: Շարունակ անբուժ ու հեծում էր Խաչատուրը, անիծում էր իր ծնուած օրը, երկնքից մահ էր աղաչում: Կոնատը սկզբում այնքան ճնշուած էր յանկարծակի վրայ հասած թշուառութիւնից, որ փորձեց կատարել հօր խրատը: Բայց անտանելի էին այն մի քանի օրերը, երբ նա ամօթից փշուռելով, ինքն իր դէմ զայրացած, ձեռք էր մեկնում պատահած մարդկանց: Եւ նա չափչափում էր փողոցները, քաղցած, անտէր, հալածուելով շրջապատի բարացնող անտարբերութիւնից:

Մի օր նա ողորմութիւն խնդրեց մի հաստ պարոնից, որ շուկայում ուտելեղէն էր գնում: Բարի էր ելնում նրա դէմքը. իսկ փողի քսակը, որից նա անդադար սպիտակ ու ոսկի դրամներ էր հանում, ցոյց էր տալիս թէ նրա համար ոչինչ բան է մի սև փող տալ խեղճ մարդուն: Եւ Կոնատը մի առանձին վստահութեամբ դիմեց նրան, երկու երեք անգամ կրկնեց իր խնդիրը, որ աւելի պահանջի էր նման, քան աղաչանքի: Բայց սև փողի տեղ նա ստացաւ մի կոյտ լիրբ հայհոյանքներ: Օրը կիրակի էր, շուկան լի էր մարդ-

կանցով. հաստ պարոնը բղաւում էր, ոստիկան կանչեց և առանց այլ և այլութեան յայտնեց նրան թէ այդ մի թեւանի մարդուն պէտք է բռնել, որովհետեւ նա այստեղ մարդկանց գրպաններն է կտրում: Ոստիկանը քաշեց, հեռացրեց Կոնատին. և նա կատաղութիւնից շրթութունքները կրծոտելով, հեռացաւ: Նա էլ էր հայհոյում, բայց ոչ միայն հաստ ու անամօթ պարոնին. հայհոյում էր նա ամենքին, այդ ահագին բաղմութիւնը, այդ ամբողջ աշխարհը, իրան, իր տունն ու տեղը: Գնում էր սաստիկ արագ քայլերով, փախչում էր: Մի տեղ մի պատ տեսաւ, որի ետեւում դատարկ գետին էր երևում: Նա ձեռքի ամբողջ թափով իր ըսակը չալտեց, գցեց պատի միւս կողմը: Չը նայեց էլ ըսակին. նա բոլորովին դատարկ էր, թէև օրը արդէն կէսօրին էր հասնում:

Ու զնաց այնուհետեւ թափառելու, իր համար անկիւն որոնելու: Ամեն տեղ նրա ճակատը պատի էր զարնւում, ամեն տեղ նա լցւում էր դառնութեամբ, զայրոյթով: Նոյն իսկ իր տանն էլ նա չէր կարողանում նստել: Այդ թափառումների ժամանակ նա լսեց որ մի մարդ որոնում է իրան: Գինետներում ինգլիքներ գրող մի փողոցային փաստաբան էր դա, որ մի անգամ տեսնելով Կոնատին, իմացել էր որ դա փրաստւած բանուոր է: Գտաւ նրան, հասկացրեց որ նա կարող է գործարանատիրոջից լաւ փող ստանալ, բացատրեց թէ ինչ պէտք է անել և վերջը յանձն առաւ իր սեփական ծախսով գործ սկսել դատարանում: Նա պատմեց մի քանի զարմանալի դէպքեր իր գործունէութիւնից: Իր համար մասնագիտութիւն էր դարձրել փրաստւած բանուորների դատը պաշտպանելը. և քանի՜ քանիսի համար էր գումարներ կորզել գործարանատէրերից:

Կոնատը իր դժբախտութեան մէջ առաջին անգամն էր կարեկցութիւն տեսնում: Միայն գինետների փաստաբանն էր, որ վարուեց նրա հետ, ինչպէս վարւում է մարդը մարդու հետ. միայն նա էր, որ քաղցր խօսք

ունէր, ծիծաղում էր, ծիծաղեցնում էր, տանում էր գինեւոտն, խմացնում էր իր հաշուով: Կռնատը կպաւ նրան, նրան իր բարերարը, իր պահապան հրեշտակն էր համարում: Եւ համաձայնութիւն տուեց նրա դրած պայմաններին. նրա տուած օղին մոռացնել էր տալիս ցան ու կսկիծը. և անգործ բանուորը տեսնում էր որ աշխարհի մէջ դեռ կարելի է ապրել:

Սկսուեց գործը: Փաստաբանը տանում էր նրան մինչև գործարանատիրոջ գրասենեակը, ճանապարհին սովորեցնում էր նրան թէ ինչ պէտք է ասել այնտեղ. ինքը մնում էր սպասելու փողոցի մի անկիւնում, իսկ Կռնատը մտնում էր իր թևի արժողութիւնը պահանջելու: Զարմանալի մաքուր, չքեղ ու փայլուն էր գրասենեակը: Ամեն տեղ թանկագին կահ-կարասիք, ելեքտրական լամպներ: Մաքուր հագնուած մարդկանց մի բազմութիւն նստած էր սեղանների ետևում, հաշոււմ էր, գրում էր: Բայց այդ չքեղութիւնը կարծես վախենում էր դժբախտ Կռնատից:

Սկզբում նրան համարեա դուրս արին. բայց յետոյ նրան յանձնեցին մի խուզած բեղերաւոր, մէջքից կորացած մարդու: Սա յատկապէս վարձուած էր այսպիսի դէպքերի համար: Եւ սկսեց գործ դնել իր բոլոր ճարտիկութիւնները վնասուած աշխատաւորին զգուեցնելու համար. երկար ու անվերջ սակարկութիւններ էր անում, տանում բերում էր, վախեցնում, յուսահատեցնում: Կռնատը վազուց այդ թակարդների մէջ ընկած կը լինէր, եթէ նրա բարերար փաստաբանը մի րոպէ թողնէր նըրան: Երբ գործը հաշտութեամբ վերջացնելու յոյս չը մնայ, երբ փառահեղ գրասենեակը սկսեց փախուստ տալ, հարկւր ու մի պատճառներ հնարել, նա դիմեց դատարանին:

Այստեղ էլ գործը երկար ձգձգուեց: Գործարանատէրը երկու անգամ անյայտացաւ և դատարանի ծանուցադիրը կարելի չէր լինում յանձնել նրան: Մի տարուց յետոյ հազիւ գործի քննութիւն նշանակուեց: Ամ-

բողջ այդ ժամանակ Կոնստը վայելում էր բարերար փաստաբանի և երկու-երեք գինետների կատարեալ վրստահութիւնը և աշակցութիւնը: Ի հաշիւ ապագայ ստանալիքի նրան օղի և գինի էին բաց թողնում: ծանօթների շրջանը հետզհետէ աւելանում էր և նա խորում էր հասարակութեան տականքների մէջ, հաղարից մի անգամ էր երևում իրանց տանը, այն էլ այնպիսի դրութեան մէջ, որ մշակ Խաչատուրը լաց էր լինում:

Փառահեղ գրասենեակը իր կողմից նշանակել էր քաղաքի առաջնակարգ փաստաբանին: Ո՞վ կարող էր նրա գէմ դուրս գալ: Գինետան փաստաբանը վախեցածի նման էր: Թէև նա յոյս ունէր մի երգուեալ հաւատարմատարի տալ գործը, բայց և այդպէս, չատ բան չէր սպասում դատարանից: Այդպէս սկսեց նա խօսել մանաւանդ այն ժամանակից յետոյ, երբ տեսակցութիւն ունեցաւ խուզած բեղերաւորի հետ: Բանը վերջացաւ առանց դատի. Կոնստից ապահովութեան բուր թղթերը ստացան և տուին նրան երեք հարիւր ուսուրի փող:

Այդ գումարը թոյնի մի մեծ բաժակ էր խեղճի համար: Մի ամբողջ ամիս նրան լիզում էին գինետներու: Փողոցային փաստաբանը ստացաւ իր բաժինը և այնքան շնորհակալ եղաւ, որ մինչև իսկ երկու անգամ համբուրեց նրա ճակատը: Բայց ամեն ինչ իր վերջն ունի. վերջացան և Կոնստի փողերը. ու մի օր նրան փողոց չպրտեցին: Այլ ևս ուր գնալ: Ոչ մի տեղ չէր մնացել: Միւս երեկոյեան նա բնեց քաղաքային մի փոքրիկ ու խուլ այգու նստարանի վրայ: Այդտեղից նրան հալածեցին և նա ուրիշ տեղերում որոնեց այնպիսի անկիւն, ուր կարելի էր պառկել բաց երկնքի տակ:

Քաղցածութիւնը աւելի անողորմ հալածող էր, քան ոստիկանը: Այժմ միայն նա իմացաւ, թէ որպիսի ճարպիկութեամբ, որքան հիմնաւոր կերպով կողոպտել են իրան: Կողոպտել էր գինետան փաստաբանը, կողոպտել էր խուզած բեղերաւոր մարդը. սրանք երկուսը

գործակիցներ էին, բաժին էին առնում երկու կողմից էլ՝ թէ բանուորից և թէ գործարանատէրից։ Այժմ էր հասկանալի, թէ ինչո՞ւ նրանք այնքան ձգձգում էին. փաստաբանը պինդ էր կանգնած, որովհետեւ պէտք էր որ խուզած բեղերաւորը յայտնէր գրասենեակին, թէ շատ դժուար է հաշտութեամբ վերջացնելը. թէ որքան էր նա վախեցրել գործարանատիրոջը, երևում էր նրանից, որ վարձուել էր քաղաքի առաջնակարգ փաստաբանը։ Եւ այդպիսի հնարքներով այդ երկու մարդիկ երկուպատիկ աւելի էին ստացել գրասենեակից, քան ինքը կոնատն էր ստացել։ Այնուհետեւ ո՞վ էր, որ խնայեց նրան. ո՞վ մնաց, որ չը խլէր նրանից այն կոպէկները, որոնք նրա մսի և արեան գինն էին կազմում։ Գինեվաճառները խաբում, շողջորթում էին որ պլոկեն. մի բաժակ օղի ստացողը համբուրում էր նրան։ Յետո՞յ։ Երբ այլ ևս տկլոր մարդու վրայ թել չը մնաց, որ կարելի լինէր քաշել, յափշտակել, նրան գցեցին փողոցները, քաղցած շների հետ ապրելու։

Դրանք դասեր էին կոնատի համար։ Հարկաւոր էր ապրել. բայց ի՞նչպէս, ինչ հնարքով։—Կողոպուտով, ուրիշ միջոց չը կար. ամեն տեղ նրան մղում էին դէպի այդ ճանապարհը։ Ընկերներ դանելը դժուար չէր. նա շուտ վարժուեց, կատարելագործուեց նրանց գպրոցում։ Ընդունակութիւնները, որոնք յայտնուել էին նրա մէջ գործարանում աշխատելիս, չէին չքացել այժմ, երբ նա մի սրիկայ էր։ Մի կարճ միջոցում նա յայտնի դարձաւ իբրեւ մէկը ամենայանդուգն գողերից։ Պնդերես, յամառ մի գող, որ մանր յանցանքներ էր գործում և երբ բռնուում էր, թեթեւ պատիժների էր ենթարկւում։ Ձախ ձեռքի երկու մատները մտցնել մարդկանց գլուպանները, թոցնել նախասենեակներում կախած շորերը, իւրաքանչիւր պղնձի կտոր, իւրաքանչիւր գին ունեցող առարկայ, որ մնում էր դռներին—այս արարքների մէջ էր կոնատը հռչակ ստացել։

Բանտը ոչ միայն չէր վախեցնում նրան, այլ, ընդ-

հակառակը, մի ցանկալի տեղ էր քաղցածութեան և ջրտերի ժամանակ. այնտեղ գոնէ մի տաք անկիւն, մի կտոր հաց կարելի էր ունենալ: Եւ Կոնստանդնուպոլիսի ժամանակին այնտեղ իր համար մի անկիւն պատրաստել: Եւ որքան նա շատ էր իր հոշակը բարձրացնում իր արհեստի մէջ, այնքան խիստ, այնքան անողորմ կերպարանք էր ընդունում հալածանքը նրա դէմ: Երբ նա հազարից մի անգամ երևում էր փողոցում, իր տեղում կանգնած ոստիկանը իսկոյն անհանգիստ շարժումներ էր գործում, արագ քայլերով ուղեւորւում էր դէպի նրան և դեռ չը հասած՝ հեռու էր վռնտում, հրամայում էր կորչել, անյայտանալ: Բանը այնտեղին էր հասել, որ նոյն իսկ դռնապահ Յակոբն էլ գիտէր, թէ նրան չէ կարելի ներս թողնել աղքատանոցը. և ծերունին էլ անխնայ էր նրա վերաբերմամբ: Շատ անգամ էր նա փորձել խաբել դռնապահին, բայց ամեն անգամ անաշուղ, ամեն անգամ ծեծ էր կերել նրանից:

Մշակ Խաչատուրը, հազից խեղդուելով, ասում էր Յակոբին, թէ ինքը այլ ևս Արշակ կամ Կոնստանտինով որդի չունի...

Գ

Քառակուսի, լայն սենեակի անկիւնից մի փոքրիկ աղջիկ վազեց նրա առաջը:

—Մենք իմացանք, իմացանք որ գալիս ես, ասաց նա երեխայի զուարթ ձայնով:

Կոնստանդնուպոլիսի բերած կապոցով թեթև խփեց նա գլխին: Աղջիկը ծիծաղեց, պտոյտներ արաւ նրա շուրջը:

—Շարիկին ծեծեցիր, մենք այն ժամանակ իմացանք... Ինչպէս ծեծեցիր... Դու շատ վատ ես ծեծում...:

—Հարկաւոր էր, արտասանեց Կոնստանդնուպոլիսի ժամանակին, որ զգուշացնէր արտայայտութիւն գտաւ նրա անհրապոյր դէմքի վրայ:

Եւ նա անցաւ այն անկիւնը, ուր սովորաբար քը-

նում էր: Իսկ փոքրիկ աղջիկը շարունակեց իր շատախօսութիւնը:

—Մարիամն էլ իմացաւ: Նա էլ ասաց թէ Կոնատն է: Հարցրո՞ւ իրանից:

Այս խօսքերի վրայ Մարիամը, որ պառկած էր անկողնում, արագ վեր թռաւ և դէն գցելով իր վրայի հնամաշ վերմակը, եռանդուն կերպով բողոքեց իր փոքրիկ քրոջ դէմ:

—Հո՛ւ, իմացայ, բայց Կոնատ չասացի,—պատասխանեց նա:—Ես երբէք Կոնատ չեմ ասում:

Փոքրիկը հակառակն էր պնդում: Մի տաք բանակուիւ սկսուեց երկու քոյրերի մէջ: Բանն այն էր, որ այս երեխաների համար Կոնատ չը կար, չը պիտի լինէր. կար Արշակ: Ինքը, Կոնատն էր այդպէս պահանջում և սովորեցրել էր երկուսին էլ, մի քանի անգամ ծեծելուց յետոյ: Այժմ նա չէր նեղանում, մինչև իսկ բարեհոգութեամբ էր նայում վէճին, երբեմն և ժպտում էր: Այնքան չաւ էր նրա տրամադրութիւնը այս երեկոյ: Բանակուիլը շուտով փոխուեց հայհոյանքների: Նա դարձեալ ժպտում էր:

—Լսւ, թող, գոչեց նրանց մայրը, մի քնաթաթախ չեղոտ կի՛ն, որ պառկած էր պատի տակ և ամբողջ ժամանակ կուռում էր քնի հետ, ուզում էր իմանալ թէ ինչ է այն կապոցը, որ բերեց Կոնատը:

—Շան լակոտները չեն թոյլ տայ որ մարդու հետ երկու խօսք խօսենք, ասաց նա, ծուլութեամբ վեր կենալով և սաստիկ յօրանջելով:

—Ի՞նչ ես բերել, Արշակ. ուտելո՞ւ բան է, հարցրեց նա:

Վէճն ու խօսքը վերջացաւ: Ամենքը լռեցին, սպասում էին պատասխանին: Բայց Արշակը երբէք իսկոյն չէր յայտնում թէ ինչ է իր բերածը: Սիրում էր նա նախ վառել իրան սպասողների մէջ մի սաստիկ հետաքրքրութիւն, մի լարուած անհամբերութիւն և ապա միայն ցոյց էր տալիս, թէ ինչ ունի իր հետ: Տղամարդու, ու-

րիչներին կերակրող տղամարդու, անձնասիրութիւնն էր այդ փոքրիկ հաճոյքը պահանջում:

—Ի՞նչպէս է Մարիամը, հարցրեց նա չեչոտ կնոջից, անպատասխան թողնելով նրա հարցը, որ մի երկու անգամ էլ էր կրկնուել:

—Այսօր լաւ էր...

—Լաւ էր առաւօտը, շտապեց աւելացնել փոքրիկ աղջիկը: Բայց մինչև կէսօր ման եկաւ: Դողոցը բռնեց...

Մայրը բղաւեց նրա վրայ: Երեխան կուչ եկաւ, բաշուեց դէպի Կոնատը. թէև դողում էր նա, բայց փոքրիկ, շատախօս լեզուն այրում էր նրան և հարկադրում էր ասել ամեն ինչ: Կոնատը սիրտ տուեց, պատուիրեց ասել, մինչև իսկ բարկացաւ մօր վրայ: Եւ երեխան շտապեց մի շնչով արտասանել այն բոլորը, ինչ գիտէր:

—Դողոցը բռնեց, յետ դարձաւ, ես մնացի,—կարկուտի պէս վրայ տուեց նա:—Մայրիկը լաւ ծեծել է Մարիամին, թէ ինչո՞ւ կէսօրին է տուն եկել և քիչ է բերել: Բայց ես որ եկայ, տապալակս լիքն էր: Երկու շահու հաց ծախեցինք: Հիմա մայրիկի աղլուխի ծայրում կապած է: Ինձ չը ծեծեց:

Նա երջանիկ էր: Բայց Կոնատը այլ ևս չէր լսում նրան: Նա սկսեց սաստիկ յանդիմանել մօրը, որ հիւանդ աղջկան ուղարկել է ողորմութիւն հաւաքելու: Յանդիմանում էր կատաղի կերպով, անխնայ և իսկոյն, ի հարկէ, անցաւ հայհոյանքներին: Կինը սկզբում լռութեամբ էր տանում, բայց յանկարծ նա էլ իր փշերը հագաւ, սկսեց մէկին երկու պատասխան տալ: Լեզուն դժբախտութեան այս որջում սանձեր չէր ճանաչում: և «կոպէկանոց բող», «դող շուն», «թուկից փախած ժուլիկ» խօսքերը, դրանցից դեռ էլ սարսափելիները, հընչում էին սենեակի մէջ: Այդ երկու թշուառները պատրաստ էին իրար ծուռատելու. մէկը մոռացել էր դեռ չը բացուած կապոցը, միւսը չը լսելն էր դնում «դուրս կորիւր» հրամանները:

Միայն հիւանդ աղջիկն էր, որ աշխատում էր հաշտեցնել կռուողներին իր արտասուքներով: Նա մինչև անգամ գրկեց Կռնատի ծնկները և թոյլ չը տուեց որ նա գնայ դէպի իր մայրը: Իսկ փոքրիկ Շուշանը բոլորովին խրուեց սենեակի անկիւնը և այդտեղից նայում էր չռած աչքերով, կատուի պէս, աներկիւղ: Նա հաւատացած էր որ իրան մոռացել են, չեն նկատում: Բայց կատաղած մայրը յանկարծ յարձակուեց նրա վրայ. չէ որ այս բոլորի պատճառը այդ փոքրիկ դէնն էր:

Բոլոր մասները խրելով երեխայի թաղքի պէս իրար կպած մազերի մէջ, նա սկսեց անողորմ կերպով քաշել, ձգձգել և մի քանի անգամ էլ գլուխը պատին խփեց: Ծեծուողը սկսեց բղաւել: Բայց մայրը մի քանի աքացիներ էլ տուեց նրան: Շուշանը ծեծւում էր այնպէս, ինչպէս մի քանի րոպէ առաջ Շարիկը դրսում: Սակայն Կռնատը այստեղ այն չէր, ինչ էր դրսում, շնիկը ծեծելիս: Հիմա նա խղճաց, և բռնելով մօր թևից, նա սաստիկ թափով դէնն հրեց նրան: Հաւասարակշռութիւնը չը կորցնելու և վայր չընկնելու համար, կիներ մի քանի քայլ առաջ վազեց և կոխ տուեց անկիւնում քնած մարդու կուրծքը:

Տեսարանը փոխուեց: Այդ քնածն էլ տնկեցներից էր: Իւրաքանչիւր գիշեր այդ անկիւնում քնելու համար նա վարձ էր տալիս Մարիամի և Շուշանի մօրը: Այս երեկոյ էլ, ինչպէս համարեա միշտ, նա հարբած եկաւ և քնեց: Բայց աղմուկն ու տանտիրուհու ոտները ընդհատեցին նրա սարսափելի անհանգիստ քունը: Ու նստեց նա: Գլուխը, թելից կախուածի նման, ընկաւ նրա կրծքի վրայ: Բարձրացնելով բռունցքը, նա գոռաց.

— Կը կոտորեմ... Հճճճճ...

Մի ահագին մարդ էր: Շուշանը սարսափից լուեց, Կռնատը հարկաւոր համարեց պաշտպանողական միջոցներ ձեռք առնել: Ծանր վայրկեաններ անցան, բայց փոթորիկը ինքն իրան չանցաւ: Հարբածը բարձրացրեց

գլուխը, դէս ու դէն նայեց, սաստիկ չրմիացրեց պապակուած շրթունքները:

—Փող եմ տալիս, ասաց նա մի զարհուրելի խռպոտ, դազանային ձայնով:

—Փող... Կը կոտորեմ...

—Լճւ, մրափիր, մրափիր, զգուանքով արտասանեց կինը, կարծես շատ դժգոհ, որ այդ անտեղի միջամտութիւնը թոյլ չը տուեց մի լաւ «ձեռքով տալ» դոյշանը:

Բայց այդ ձայնը չը հանգստացրեց հարբածին: Զեռքերը յատակին յենելով, նա մեծ դժուարութեամբ ոտքի կանգնեց ու սկսեց օրօրուել, թևերը շարժել: Կիսատ մնացած քունը կատարելապէս դժուարեւ էր նրան: Քայլերը ուղղեց դէպի դուրս, բայց դեռ դռան չը հասած՝ տեսաւ թէ ով է նստած: Ու նորից օռնաց նա:

—Կռնատ... շուն... շան...

Սա լուռ էր, յետ ու յետ էր քաշուում: զիտէր որ ոյժը հակառակորդի մէջ է: Բայց խմանալը բաւական չէր. հարբածը հասաւ նրան, երեքալով դիտում էր նրան, կարծես ուզում էր նախ վճռել թէ ինչպէս պէտք է վարուել զոհի հետ:

Վճիռը տուեց ինքը, Կռնատը: Սարսափելի էր նրա դէմքը այդ միջոցին: Կատաղած էր նա, զօռով էր շունչ քաշում, բայց անզօր էր այդ կատաղութիւնը. հայհոյանքներ էին թափւում նրա ծռուած բերանից: Զգոնց հարբածը որ և է վերաւորանք: Բարձրացնելով իր ահագին բռունցքը, նա գոռաց.

—Հէյ, քո ստեղծողի...

Բռունցքը սաստիկ թափով իջաւ Կռնատի մէջքին, մի խուլ ձայն հանեց: Յնցուեց մի թևանի մարդը. ուրիշ ճար չունէր, հայհոյելով ընկաւ մէջքի վրայ, կատաղութիւնից շրթունքը կծեց և ջուխտ օտներով խփեց հարբածին: Սա վայր ընկաւ, բայց էլի վեր կացաւ: Ի՞նչ պիտի լինէր, եթէ մէջ չընկնէր տանտիկինը, որ բռնեց

նրան, հրամայեց կամ պառկել ընել, կամ դուրս կորչել: Հարբածը թողեց ամենքին և երկու թևերի մէջ առնելով կնոջը, բարձրացրեց նրան: Երեխաները ճչացին:

—Փող եմ տալիս, ոռնում էր ահագին մարդը, աշխատելով կնոջ գէմքը կպցնել իր գէմքին:

Բայց դրա փոխարէն նա ստացաւ կնոջ հարուածները իր գէմքի վրայ: Ազատուելով նրա գրկից, տանտիկինը սկսեց հրել նրան դէպի դուրս: Կռնատը վեր կացաւ որ օգնէ նրան: Հարբածը հանեց իր փողի քրսակը և գցեց պատի տակ:

—Փող եմ տալիս... Այս գիշեր ծոցումդ....

Երեք ձեռքեր միաժամանակ խփեցին նրա կրծքին: Եւ նա կողճի պէս վայր ընկաւ իր անկիւնում, տարածուեց մէջքի վրայ: Այդպէս էլ անշարժացաւ: Ընդհատուած քունը նորից տարաւ նրան...

Տանտիկինը շտապեց գտնել փողի քսակը և անյայտացնել նրան: Յաժրիկ առաստաղի տակ մի փոքր հանդստութիւն տիրեց: Կռնատը քրտնել էր և հեռւում էր, մէջքը պատին տուած: Դէպի նրան սողաց Շուշանը և հանդարտ հարցրեց.

—Պինդ խփեց...

—Պինդ էր,—նոյն ձայնով պատասխանեց Մարիամը,—բայց Արշակն էլ ի՜նչպէս խփեց, երկու ոտով...

—Նա շատ ուժեղն է. որ ուղի, այս տունը կը քանդէ. ես վախում եմ նրանից, ասաց Շուշանը:

—Ես էլ եմ վախում, հաստատեց Մարիամը.—հիմա էլ սիրտս թմրեցում եմ...

—Դու էլի կը ծեծեմ նրան, Արշակ:

—Շան արիւն թափել չեմ ուզում, պատասխանեց սա.—թէ չէ, մի դանակ կը խփեմ...

—Դանակ, բացականչեց Շուշանը.—Դու ունեմ դառնակ:

Կռնատը գրպանից հանեց մի դանակ: Երեխան ձեռքը քսեց դանակի կոթին և զարմացած առաջ տարաւ իր հարց ու փորձը:

— Սրանով են խփում, հո... Սա սպանում է։ Դանակ խփած ես, Արշակ։

— Դեռ չէ. բայց դրա ժամանակն էլ կը գայ։

Տիրեց լռութիւն։ Չար սատանայ էր մտել այս տունը. կռնատը որքան բան ունէր հաղորդելու։ Բայց խօսք ու զրոյց չէր տաքանում։ Միմեանց չէին մօտենում։ Այս երեկոյ այնքան հրաշագործ չէր երևում կրօնատի թևի տակ բերածը։ Նոյն իսկ Շուշանն էլ այլ ևս կերակուր չէր գտնում իր կրակոտ լեզուի համար։ Մարիամը թուլացած պառկեց, իսկ նրա մայրը էլի խորասուզուեց կէս-քնի մէջ։ Վերևում, առաստաղի տակ բացած նեղ պատուհանում, պլպլում էր փոքրիկ լամպան, մոյգ-տեղին լուսաւորութիւն տարածելով այդ բոլորի վրայ։

Սակայն այդպէս երկար չը շարունակուեց։ Չար սատանան հեռացաւ, տեսարանը փոխուեց։

Մի հատ տնկեց էլ կար այս գիշեր այս տխուր, սեւացած, գարշահոտ փոսի մէջ, որ մարդկանց բնակարան էր դարձել, մտել էր հողի տակ, վերևից կուչ եկել և տաքանում էր իր պատուպարած թշուառների շնչով։ Այդ տնկեցն էլ իրան ցոյց տուեց։ Դռան կողքին, ջրի փոքրիկ կարասի մօտ, մի ինչ-որ սև շոր շարժուեց։ Լսուեց երեխայի լաց։ Ոչ ոք ձայն չը հանեց։ Եւ շորի տակից, «մայրիկ» կանչելով, դուրս սողաց մի փոքրիկ երեխայ։

Բայց չը կար նրա մայրիկը։ Մութը կոխելու վրայ էր, երբ նա բերեց երեխային այստեղ, պառկեցրեց, ինքն էլ պառկեց կողքին և սկսեց քնացնել նրան։ Մայրական ծոցի մէջ մնալու յոյսով էլ անմեղ երեխան առնուչ ու խոր քնի մէջ մտաւ։ Այդ բոլորէին էր սպասում մայրը. նա կամացուկ վեր կացաւ, խնամքով ծածկեց երեխային, մինչև իսկ խաչակնքեց նրան և ապա մի թեթև սակարկութիւն սկսեց տանտէր կնոջ հետ։ Մի գիշերուայ օթեան էր նա խնդրում իր երեխայի համար։ Համաձայնութիւնը շուտ կայացաւ. մայրը տուեց

նրան սպիտակ շաքարահացի մի կտոր, ասաց որ դա բաւական է երեխային հանգստացնելու համար, եթէ նա գիշերը զարթնէ և լաց լինի: Տանտիրուհին համաձայնուեց այդ պարտականութիւնը կատարել: Պէտք էր ծածկել երեխային, որ չը մրսէ. պէտք էր չը վախեցնել նրան: Ստանալով դէսի շարժումներով արտայայտած դրական պատասխաններ, մայրը հանգստացաւ ու գնաց: Գնաց ամբողջ գիշերը իր մարմինը վաճառելու: Ուրիշ միջոց չունէր նա իրան և այդ փոքրիկին ապրեցնելու համար:

Մի կլորիկ ու առողջ տղայ երեխայ էր դա: Բառաչում էր մայրը կորցրած գառան պէս. կարմրել էր շոքից, շրջապատողների լուսթիւնը աւելի և աւելի գրգռում էր նրան: Այժմ նկատեց խեղճը, որ օտար, անծանօթ մարդկանց մէջ է, սրտապատառ վաղեց դէպի դուռը, փախչել, իրանց տունը գնալ էր ուղում: Բայց դուռը կողպած էր և նա երեսի վրայ վայր ընկաւ ու սկսեց ոտներով գետինը ծեծել:

Ամենից թոյլն էր այդ երեխան այս տան մէջ. նրանից ոչ ոք չէր վախենում և այդ պատճառով նրա լացն ու շիւանը, նրա դէս ու դէն ընկնելը, նրա բաց, ծումուտած բերանը, աչքերը տրորող փոքրիկ բռունցքները զուարճութիւն էին պատճառում: Ամենից առաջ ծիծաղեց չարածճի Շուշանը: Փոքրիկ առուակի խոխոջոյի նման էր այդ ծիծաղը և վարակիչ: Մարիամը բարձրացրեց գլուխը և նոյնպէս ծիծաղեց: Կիսաբաց աչքերով նայում էր նրա մայրը և անվրդով էր, բարէ արձանի նման: Բայց ո՞րքան էր երեխայի խեղճ մայրը աղաչել նրան: Նա հաճութեամբ խոստացել էր իր այդ գիշերուայ աշխատանքի մի մասը տալ այդ կնոջը, միւս մասով վաղը շաքարահաց պիտի առնէր երեխայի համար: Իսկ չեչոտ, կախարդի պէս տղեղ տանտիրուհին, քնի և անշարժութեան գերի, ձայն ու ծպուտ չէր հանում:

Կռնատը հարցրեց նրան թէ ի՞նչ երեխայ է դա:

Եւ նա պատմեց մանրամասն կերպով: Այսպէս նրանք էլի մօտեցան իրար. Կռնատը սկսեց դատադուլթիւններ անել, հայհոյել անառակ մօրը, տանտիրուհին համաձայն էր նրա հետ: Եւ նրանք հաշտուեցին:

— Ինչո՞ւ այդ պիղծ լակոտին թողիր այստեղ, հարցրեց նա:

— Փող պէտք է ստանամ, ամբողջ կէս մանէթ: Առաւօտը պիտի բերէ: Կէս մանէթը հօ գէն դցել չի լինի, Արշակ:

— Կէս մանէթ... Հիմա նա, երեւի, թուրքերի գրուկումն է և նրանցից ամեն մէկին ջոկ-ջոկ հաւատացնում է թէ ինքը սիրում է նրան, շատ է սիրում... Մեռնում է նրա համար... Թի՛ւհ...

Նա զգուանքով թքեց: Այդ թուրքի մէջ կոլոլուած էր մի սաստիկ ատելութիւն անառակ կանանց դէմ: Նա ինքն էլ շատ անգամ ընկել էր նրանց ճանկը, խաբուել էր, և հաւատացած էր որ գրանք ամենից վատ, ամենից զղուելի արարածներն են. աւելի զղուելի քան գինեվաճառները, նոյն իսկ աւելի զղուելի քան անխնայ հալածող ոստիկանները: Նրա համար սրիկայ քող լինելը աւելի պատուաբեր էր, քան անառակութիւնը:

— Ա՛խ, եթէ հիմա ձեռքս ընկնէ՛ր, արտասանեց նա ատամները կրճտացնելով. կը կտրատէի... Դանակս դեռ չեմ արիւնոտ արել, բայց երևում է որ առաջին անգամ նրանով մի բող պիտի մարթեմ: Բոլորի՛ն կոտորել...

Այդ ամբողջ զգուանքի և կատաղութեան առարկան չը կար այստեղ և Կռնատը աւելի էր բորբոքւում: Բայց զղուելի արարածի զղուելի ծնունդը այստեղ էր. և սրիկան ատեց այդ անմեղ մանուկին իր ամբողջ սրտով: Այժմ անտանելի էր նրա համար երեխայի ճզվողոցը: Նա մի քանի անգամ գոռաց որ լուէ: Բայց, հակառակի պէս, լացի ձայնը աւելի սաստկացաւ: Վախում էր երեխոյն, նրա ձայնը արդէն խռիւռոցին էր հասել, բայց չը կար մի քաղցր խօսք, որ հանգստացնէր նրան: Ընդհա-

կառաւր, Կոնստը տեղից վեր կացաւ որ իր ձեռքով նրա ձայնը կտրէ:

—Շան բերք, պիտի սատկեա թէ չէ,—գոչեց նա և մի թռիչքով հասաւ երեսային:

Սա զգաց օտար մարդու մօտենալը, աւելի տափակուեց, գետնից կպաւ, ճանկոտտում էր հողը: Բայց իզուր. Կոնստը իր ձեռքի մէջ հաւաքեց նրա շապիկի մէջքը ու բարձրացրեց իր թևը: Խողի ճտի պէս բղաւող երեսման սկսեց պտոյտ գալ օդի մէջ և յուսահատական շարժումներ անել ոտներով, ձեռքերով:

—Սրան նայիր, ասաց նա ծիծաղելով,—չան լակուտից ինչո՞վ է պակաս: Սնւս, կտրիր ձայնդ, թէ չէ...

Տան տիրուհուն այնպէս թուաց թէ նա ուզում է պատերին խփել իր ձեռքից կախ ընկած երեսային և նա ազաչում էր այդպէս չանել, խնայել: Իսկ նա, այդ տպաւորութիւնը աւելի ևս սաստկացնելու համար, սկսեց յետ ու առաջ ճօճել իր թևը: Երեսման այդ շարժումների ժամանակ սարսափից կտրում էր ձայնը. բայց հէնց որ քիչ հանգստութիւն էր զգում, էլի սկսում էր կոկորդը պատռել: Բարձրացաւ մի վայրենի, դաղանային հռհռոց: Ծիծաղում էին ամենքը. ծիծաղում էր և տանտիրուհին: Այլանդակ էր նրա ծիծաղն էլ. բերանը տգեղ անկիւններ էր կաղմում, մի քանի հատ գեղին աստիճաններ երևան հանելով: Ամենից բարձր, վարակիչ ծիծաղը Շուշանի բռնչոցն էր:

Վերջապէս Կոնստը ձանձրացաւ: Տանելով փոքրիկին նոյն անկիւնը, ջրի կարասի մօտ, մի քանի անգամ խփեց նրա լիքը, կարմրած թշերին, բղաւեց նրա ականջի մէջ, ապա երեսի վրայ վայր գցեց ու հեռացաւ: Սարսափը իրանն արաւ. երեսայի լացը խեղդուած հեկեկանքների փոխուեց. կամաց-կամաց մարել էին սկսում և այդ հեկեկանքները: Նա քնեց, բայց քնի մէջ էլ հառում էր, երբեմն և վեր էր թռչում...

—Եթէ իմանո՞յ մայրը, Արշակ... Կէս մանէթն էլ չի տայ:

Արշակը էլի բորբոքուեց:

—Ի՞նչ, բացականչեց նա:—Եւ դու կը լռես: Նա խօսելու իրաւունք չունի, նա չուն է. այս լակոտի կէսն էլ տառ նրան, էլի շատ է...

Բայց տանտիկինը շտապեց հանդատացնել նրան: Երեխան դեռ խօսել չը գիտէ, ուրեմն ոչինչ չէ կարող ասել մօրը: Դեռ ինքը, այդ կինը պիտի գանգատուի թէ չար լակոտ է, իրան շատ է նեղացրել, չէ թողել հանգիստ քնել: Կոնատը նորից հաւատացրեց թէ չար ժէ այդ բաների մասին մտածել:

Այդ միջոցին Մարիամն ու Շուշանը դեռ զբաղուած էին երեխայի արածներով: Պատմում էին իրանց տպաւորութիւնները և ծիծաղում: Շուշանը ցոյց էր տալիս թէ ինչպէս էր կախուած երեխան, ինչպէս էր ձեռքերն ու ոտները թափահարում, թռպրտում: Այս անգամ չարածին բոլորին էլ նուաճեց: Կոնատը և մայրը գոհ ժպիտներով էին նայում նրան...

Դ

Հանգիստ ու խաղաղ էր երեկոյի քնացած մասը: Տնկեցներին ոչ ոք այլ ևս չը խանգարեց խաղաղութիւնը:

Հասաւ, վերջապէս, Կոնատի բերած կապոյը բաց անելու ժամը: Շուշանը նստեց մօր կողքին, սրա միւս կողքի և Մարիամի մէջ տեղը բռնեց Կոնատը: Կապոյը նա յանձնել էր Մարիամին, այսպէս էր անում միշտ: Մօր և երկու աղջիկների աչքերը փայլում էին ուրախութիւնից, բայց մանաւանդ զարմանքից, որսը այս անգամ շատ էր չաղ, դրա պէս մի բան այստեղ դեռ չէին տեսել: Երկու բաժանմունք ունէր կապոյը, մէկի մէջ կային ուտելիքներ, սպիտակ, փափուկ հաց, եփած միս, պանիր, խաշած ձուաներ: Մայրը իսկոյն սկսեց ուտել. Շուշանը հետեւեց նրա օրինակին: Չէր շտապում միայն Մարիամը: Նա ոչինչ չէր էլ ուզում ուտել. դանդաղ հիւան-

գութիւնը, որ մաշում էր նրան, վաղուց կտրել էր նրա ախորժակը: Նա բաց արաւ կապոցի միւս բաժանմունքը: Ձթի կտորներ, մի հատ նոր աղլուխ, մի ջուխտ նոր ոտնաման, մի հատ գուլպայ հիացմունք պատճառեցին տեսողներին, որոնց բաժինը մինչև այդ եղել էին միայն հնոտիները: Ամեն մէկը մի առանձին բերկրութեամբ շօշափում էր այդ իրերը, ուրախանում: Փոքրիկ էին ոտնամանները, Շուշանը միայն կարող էր նրանց հագնել: Եւ որքան նա ուրախ էր դրանով: Մի հատ գուլպան էլ նրա մօրն էր գալիս: Բայց միւս հատը չէ կար: Եւ կըռնատը, որ երջանիկ տրամադրութեան մէջ դիտում էր այդ ընտանեկան բաժանումը, շտապեց յայտնել որ զուր են որոնում միւս հատը:

—Միայն այդ կարողացայ վերցնել, ասաց նա.— շատ աչք ածեցի որ միւս հատն էլ ձեռք գցեմ, չեղաւ: Սատանան առաջս կտրած էր: Բայց հեշտ է. այսուհետեւ շատ և շատ հեշտ է...

Բերածից աւելի այդ խօսքերը զարմացրին երեքին: Ու կռնատը սկսեց պատմել.

—Լրագիր կարդացողը իմաց տուեց թէ քաղաքում մեծ պատրաստութիւններ կան,—այսպէս սկսեց նա.— հաւաքուել են շատ հարուստ մարդիկ, շատ փող են մէջ բերել որ ինչ է, լաւ պահպանեն հեռու տեղից փախած ու եկած մարդկանց: Դրանք շատուոր են, աղքատանոցի սենեակներն էլ բաւականութիւն չեն անում:..

—Ինչո՞ւ են փախել, հարցրեց Շուշանը յանկարծ:

Մայրը խփեց նրա գլխին, բայց կռնատը չը նեղացաւ այդ անտեղի միջամտութիւնից և առաջ տարաւ իր խօսքը.

—Ձեմ իմանում թէ ինչո՞ւ են փախել. ասում են թէ մի տեղ թուրքերը կատաղել են և կոտորել են հայերին: Բայց դա իմ ինչ բանն է: Եկել են, լցուել աղքատանոցը. հարուստները նրանց համար փող են հաւաքել: Այսքան էր մեղ հարկաւոր: Ընկերներս ինձ վրայ գցեցին այդ բանը, որ մի լաւ հոտոտեմ, տեսնեմ ապրելու տեղ

է թէ չէ: Ես էլ... Խեղքը մարդուն տուած է որ հասկանայ: Ինքս ինձ ասում եմ: Երբ մարդիկ սկսում են ողորմութիւն տալ խեղճերին, նշանակում է որ նրանց սրտերը տեղը չեն: Այսինքն, որ չեն խլում աղքատից, որ ինձ նմաններին չեն հալածում, նշանակում է որ թուլացել են, եթէ խօսացնես, լաց էլ կը լինեն: Հէնց այդպէս ժամանակն էլ մեր բանը աջողում է: Ինձանից հարցնես, ես իսկի չեմ իմանում թէ ի՞նչ է թուրքից փախածը և ի՞նչ է այստեղի աղաների փախցրածը: Մի և նոյն են ամենքը: Բայց դէ երբ լաց լինելու տեղն է եկել, թող, ասում եմ, նրանք լաց կը լինեն, իսկ մենք կ'ապրենք: Աղունը որ շատ է լինում, ոչ ոքի աչքին չէ էլ երևում որ ծտերը բարչ են տալիս, գողանում են իրանց փորի համար... Ես էլ գնացի:

— Հարուստների մօտ, հարցրեց Մարիամը:

— Ձէ, հարուստների մօտ ի՞նչ ունեմ: Գնացի աղքատանոց: Բայց փնց մտնեմ: Այնտեղ մի բոփակ գլուխ ապահ կայ, շանից էլ հակառակ մի ծերունի: Հոգիս հանում էր, երբէք չէր թոյլ տալիս որ ներս մտնեմ... Մի երեկոյ գուրս արաւ, չը թողեց որ մի անկիւնում քնեմ: Ես էլ այնպէս հայհոյեցի. լաւ որ ամուռ էր, հէնց պատի տակ էլ քնեցի: Ի՞նչ երկարացնեմ: Արժէր որ գանակս կողքը խրեմ, բայց համբերութիւնն էլ մի-մի լաւ է: Հիմա ասացի որ այժմ գիւղացի արջն էլ փափկած կը լինի: Գտայ մի ծանօթիս, որ աղքատանոցումն է ապրում, նրա հետ գնացի: Ներս եմ մտնում, դռնապահը նստած է, նայում է, բայց չէ տեսնում...:

— Ու դու գնացի՞ր, ասաց տանալիկինը, կրճելով մի մեծ ոսկոր:

— Կողքովը, իր աչքի առաջ: Հարուստների փոխուած սիրտը նրան կուրացրել էր...

Նա բարձր ծիծաղեց, մեծ ախորժանքով ձեռքը տարաւ իր գէմքի վրայով և կծու հեգնութեամբ շարունակեց.

— Շատ լաւ, ողորմի ձեր հօրը, ասում եմ: Մտայ,

նայեցի դէս ու դէն, տեսայ որ մարդավարի բաներ կան: Էգսն էլ գնացի, աւելի հեշտ էր մտնելը, իսկ երրորդ օրը հօ, կանգնեցի հետն էլ խօսեցի...

—Եւ չէ՛ր հասկանում, զարմացաւ կիներ:

—Ի՞նչ հասկանալ: Աղքատանոցը հարսանիքատուն է դառել: Բերող բերողի ետեւից: Ամեն ինչ թափուած է, կեր, խմիր: Հարուստ կանայք հաւաքուել են, շորեր են կարում: ձևողը ջոկ, կարողը ջոկ, հագցնողը ջոկ: Դռնապահը մի գլուխ ասում է թէ աշխարհը լաւացել է, հիմա ամենքը կ'ապրեն: Ասում եմ, չատ ճշմարիտ է, լաւացել է: Հայրս էլ այնտեղ էր, դռնապահի լաւ բարեկամն է: Էլի յիմարի նման սկսեց լաց լինել, որ ես յետ դառնամ իմ ճանապարհից: Դռնապահն էլ ասում է, աղաչում է, աղօթք է անում: Եկեղեցի, ի՞նչ աղքատանոց: Գլուխս տարան: Լսում եմ, բայց աչքս գործիս վրայ է: Դուք, ասում եմ, լսո՛ց եղէք, որ իմ բանը բանի նման լինի: Այսօր էլ գնացի, տեսայ որ էլի նոյնն է: Շատ բան վերցրի, տեսնող չը կար: Մի երկու կտոր տուր աղքատանոցում ապրող ծանօթիս, օրովհետեւ նրա սնդուկումն էի թագցնում վերցրածս. մի մասն էլ ընկերիս տուր...

—Եւ տակին այս մնաց, ընդհատեց նրա խօսքը տանտիրուհին, երկու մատի ծայրով հեռացնելով իր առջև ընկած կտորները:

—Գիտեմ, աւելացրեց նա խօսիչն—դու մեզ համար շան բաժին ես բերում...

Կռնատը մի րոպէ չը կարողացաւ խօսել: Նայում էր կնոջ արհամարհոտ դէմքին, տեսնում էր թէ սրբան նա դժգոհ է այժմ: Եւ հասկացաւ իր սխալը: Չը պէտք էր շատ էլ սրտաբաց լինել այդ կնոջ մօտ, չը պէտք էր ասել թէ մի ուրիշը մատ է գիպրել նրա բաժնին: Ագահութիւնն ու անկուշտութիւնը հրէշաւոր չափերով էին զարգացած նրա մէջ. և այդ էր պատճառը որ Կռնատը դատարկ ձեռքով չէր համարձակւում մոտնել այս սխեռակը: Եթէ քաղաքի կէսն էլ տայիր նրան, էլի

չէիր գոհացնի և նա էլի կ'ասէր՝ «բեր»։ Բայց ինչ անէր կոնատը։ Տրամադրութիւնը այնքան լաւ էր... ուզում էր շատ խօսել։ Շատ խօսեց, և ահա այսպէս եղաւ։

—Ընկերս վատ օրում է,—ասաց նա՝ իրան արդարացնելու համար։—Մի ամբողջ շաբաթ ձեռքը ոչինչ չէ ընկել։ Վատ ժամանակ է. ցուրտ, չոր... գործ չը կայ։ Բայց դա այն ընկերն է, որ ինձ շատ ու շատ է օգնել։ Անցեալ ձմեռը քաղցածութիւնից կոտորւում է ինք։ Նա եկեղեցուց մի կապոց մօմ գողացաւ, ծախեց և փողի կէսը ինձ տուեց, ուղիղ կէսը։

Դէպքը համոզիչ չէր կնոջ համար։ Ու կոնատը ուրիշ միջոցի դիմեց։

—Միամիտ մնացիր, Մարթա, այսուհետեւ լաւ կը լինի,—ասաց նա։—Դուռը բաց է, ես էլ, գիտես հօ, յիմար չեմ իմ գործի մէջ։ Շատ կը բերեմ, որքան սիրտը ուզում է։

—Էդուց էլ կը բերես, հարցրեց նա սառը կերպով։

—Ձէի ուզում էգուց էլ գնալ. շուտ-շուտ երևալը վատ է, կը հասկանան։ Բայց որ ասում ես, կը գնամ քեզ համար...

Նա բոլորովին խղճացաւ, բոլորովին հպտտակուեց այդ կնոջը։ Մի բան ունէր նրանից խնդրելու և պատրաստ էր այդ բանի համար նոյն իսկ ազաչանքներ անել, թէեւ ազաչանք ոչ մի տեղ և ոչ մի դէպքում չէր արել։

—Մի բան արա՛ ինձ համար, Մարթա, ասաց նա խղճալի ձայնով։—Ի՛նչ ուզում ես արա այդ կոտորները, միայն այս մէկից, այս կարմիր չիթից, չոր կարիր Մարիամի համար... Մի-մի տեսնեմ հագած, ինձ բաւական է...

Այդ բանը նա շատ էր ուզում։ Գեղեցիկ էր կարմիր չիթը և նա համոզուած էր որ Մարիամին շատ լաւ կը գայ այդ կոտորից կարած շորը։ Եթէ Մարթան այդ

բանն անէ, Կոնստանդ Էլ նրա ոչ մի խօսքին չէ չի ասի։
Բայց Մարթան պատասխանեց.

—Հողեմ Մարիամի գլուխը... Ափսոս է... Յետոյ
Էլ ո՞վ նրան հաց կը տայ։

—Երեկոները, տանը եղած ժամանակը, Մարթա,
ինդրում էր Կոնստանդ։

—Կարեմ, բայց ինչո՞վ կարեմ։ Փող բերե՞լ ես, շան-
որդի։

Կոնստանդ խորտակուած էր։ Փող չէր բերել։

—Փողի բանը դժուար էր, Մարթա, ասաց նա գան-
գատաւորի եղանակով։

Այժմ սկսում էին անաշուղտեան յիշատակները։

—Բայց գիտե՞ս ինչ բանից զրկուեցայ... Գիտե՞ս,
Մարթա։ Ոսկու սարեր կային...

Նա խորը հառաչեց և նրա դէմքի վրայ նորից ե-
րեան եկաւ այդ դասակարգին յատուկ լիրբ անբաւա-
կանութիւնը։

—Մի նոր և մեծ ընկերութիւն են սարքել՝ մեծ
գործ սկսելու համար։ Մարդիկ իրար գլուխ կոխ տա-
լով վազում են որ փող տան, բաժին վերցնեն։ Բանս
լաւ էր երևում։ Ընկերութիւն սարքողները գրասենեակը
վարձել էին մի լաւ, նոր տան մէջ, որ շատ ծակ ու ծու-
կեր ունի և, որ գլխաւորն է, հանդարտ փողոցի վրայ
է։ Գնացի։ Ոստիկաներ չեն երևում։ Կանգնել եմ մի
տեղ, նայում եմ։ Տեսե՞լ ես եկեղեցին Զատիկ օրը։ Ճիշտ
այդպէս գրասենեակը լցուած է մարդկանցով, բայց
բանի՜ քանիսներն են մնացել փողոցում կանգնած։ Հրաչք,
ինչ ասեմ, ես այդպիսի բան չեմ տեսել։ Ով մի քանի
հարիւր մանէթ ունի, վեր է առել եկել. ով չունի, ծա-
խել է իր կնոջ ոսկեղէնը, էլի եկել։ Ամենքը ուզում են
հարստանալ։ Ո՞վ ասես որ չը՞լինէր այնտեղ։ Էլ ճաշ ե-
փող, էլ ծառայ, էլ դարբին, էլ մշակ... Այնպէս են իրար
կոխ տալիս, այնպէս են առաջ ընկնում... Կ'ասես թէ
գրասենեակում ոսկին դարսած է, պէտք է շալակել և
դուրս տանել։ Գժուել էին։ Բայց ինձ ի՞նչ։ Իմն այն էր,

որ այս երկու մատը (նա բարձրացրեց ցուցամատն ու միջի մատը) հասնեն զբաղաններին: Մնացածը ես գիտեի: Եւ այն ժամանակ դու կը տեսնէիր, Մարթա, թէ ինչեր կը զնէի քո առաջ այստեղ. դեղին ոսկիներ, միմեանց վրայ դարսած, կոյտ-կոյտ...

— Ես էլ կը վերցնէի ու գլխիդ կը տայի, այդ հողած գլխիդ... Ռէխդ շատ մեծ է, բայց որ մէջը բան չէ ընկնում...

— Այդպէս է դառել իմ բանը: Մի ժամանակ կար...

— Է՛հ...

Եւ Մարթան երեսը դէպի մի կողմ դարձրեց: Արհամարհանք, նոյն իսկ զգուանք արտայայտող մի ծամածուլութիւն աւելի ևս տգեղացրեց այդ երեսը: Եւ նա բացականչեց.

— Մոխիրս գլուխդ... Եթէ մի պտուղ լինէիր, քեզանով առաջ քո հայրը կը մխիթարուէր...

Ի՞նչպէս լաւ գիտէր նա սանձահարել այս գզգըղուած, միշտ կատաղած մարդուն, որի համար աշխարհում, ըստ երևոյթին, ոչ մի սրբութիւն չը կար: Խոնարհ ու հնազանդ կերպով Կոնատը շարունակեց.

— Ուզում ես հայհոյիր, ուզում ես գետինը կոխիր, բայց մարդս պէտք է բախտ էլ ունենայ: Հեշտ կը լինէր զնալ, մտնել մարդկանց մէջ, խառնուել առնօղների հետ և ասել, թէ ես էլ եմ փող բերել, ես էլ եմ ուզում բաժին առնել: Բայց այս անտէր թւը... Նշանով մարդ եմ, ուր կորչեմ: Ամեն մէկը կը ճանաչէ... Մնում էր գողէ-գող մտնել: Այդպէս էլ արի: Հասել էի, հա... Ձեռքս ինչ գրպանի դիպչէր, դատարկ չէր մնայ. անփող գրպանը այդտեղ բան չունէր: Բայց մէկ էլ չրախկ... մի հատ մեծ ապտակ իջաւ դէմքիս, աչքերիցս կայծեր թռան. առջեւս ցցուած էր ոստիկանը: Ես—դէպի յետ, փախայ: Դու մի ասիր, մենակ նա չէ այդտեղ, ուրիշ երեք թէ չորս ընկերներ էլ ունի: Ոստիկաններին կանչել էին բերել, որ թոյլ չը տան

մարդկանց զօռով ներս պրծնել: Ընկերութիւն սարքողները ստացել են ինչ հարկաւոր է, հիմա ասում են՝ էլ չենք ծախում, փող չենք ուզում: Բայց մարդիկ կը պել են. չէ, ասում են, տուէք, մենք ուզում ենք: Լացով, աղաչանքով եթէ չէք տայ, մենք զօռով կը վերցնենք: Ու բերել էին ոստիկաններ, որ ազատուեն զօռով փող տուողներին: Հասկանում ես... Ոստիկաններից երկուսը իմ ետեւից ընկան. շուացնում են, ուրիշ տեղերից մարդ են կանչում: Փախչում եմ բամու պէս, ոտիս տակն էլ չեմ տեսնում: Թեւս ցաւում է: Լսւ, որ առջեւումս ոստիկան չը կայ. ծռուեցի դէպի մի նեղ փողոց. շունչս մէկ էլ ծովի ափին առայ: Բայց իմ ինձ հասաւ: Սիրտս կտրւում էր, որ վայր ընկնէ: Առաւօտից մի կտոր հաց չէր անցել բերանովս: Ունում էի, կոնձկոնձում էի մտքումս: Բաւական ժամանակ անցաւ, էլի ճակատս պնդացրի. լսեմ անգամ զօռով փող տուողներ ճարել չի լինի: Գնացի: Էլի այնպէս կանգնած էին մարդիկ. քիթս դէս-դէն տարայ, հոտ քաշեցի, ոչինչ չեղաւ...

—Շունը միս ծախողի առաջ...

—Հն, ողորմի հօրդ, Մարթա: Քաղցած, սատկող շուն, ընկած մսի բազարը: Ամեն տեղ մսեր, մսեր... Հոտը տալիս է ամեն կողմից, գլուխը պտոյտ է գալիս, բերանի ջուրը գնում է... Մի կտոր, թէկուզ ամենից չաղ կտորը տան, ինչ կը պակասի... Բայց չէ, Մարթա, շունը էլի լաւ է. նրան էլի չոր ոսկորից-բանից տալիս են. նրան թոյլ են տալիս թափուած արիւնը, ճարպի կտորները լեզուով հաւաքել...

Նա հեւալով յետ նստեց: Այժմ այլ ևս ուշադրութիւն չէր դարձնում իրան շրջապատողների վրայ. այժմ այստեղ չէր նա, այս ստորերկրեայ նկուղում, այլ դըրսում, հարիւր ու մի իր յայտնի թէ անյայտ թշնամիների, չարակամների առաջ: Ու ատամները միմեանց սեղմելով, փոքրիկ աչքերը բաց ու խուփ անելով, դունչը բարձրացրած՝ հայհոյում էր ամենքին և ամեն ինչ: Ան-

սպառ, սառսուռ ազդող մի ընդունակութեամբ նա չէր խնայում ոչ մարդ, ոչ սրբութիւն: Կտրած թեւը ջղաձգաբար ցնցւում էր, երբեմն նկատելի կերպով շարժւում, կարծես ցոյց տալու համար թէ ամեն ինչի պատճառը նա ինքն է և ոչ թէ մի այլ բան...

Բայց յուսահատութիւնը միայն հայհոյանքների չէր փոխւում: Նա հանեց գրպանից իր մեծ դանակը, օդի մէջ դողացրեց:

—Սա դեռ մնում է, բացականչեց նա և հռհռաց ամբողջ սրտից:—Մի օր էլ այսպէս դուրս կը գամ...

Եւ նա օդի մէջ ցոյց տուեց թէ ինչպէս ես դանակ խփում:

—Մի մատ մոխիր քեզ ծածկէ, ասաց Մարթան:— Կանանց ու երեխաների մօտ կը հանես, ի հարկէ...

Եւ նա մի գարշելի շարժումով հասկացրեց նրան որ ինքը չէ վախենում:

—Ձէ, չէ, Մարթա, քեզ մօտ ես ինձ կը մորթեմ: Աստ, կարճւում ես շորը թէ չէ: Ձեռ կարում—ինձ սպանում եմ:

—Փող բեր, կը կարեմ...

—Փող... քեզ մօտ կայ, հարբածի քսակը, այդ լակոտի կէս մանէթը...

Դարձեալ մի լկտի շարժում գործեց կինը և ասաց.

—Քեզ համար էլ աշխատեմ, հո:

—Մարթա, կարիր, ես կը բերեմ, ես պարտք եմ ուզում քեզանից: Մէկին հինգ կը տամ, ուրիշ հնար չը լինի, սրանով կը սպանեմ ու կերեմ: Կը բերեմ ինչ որ ուզես, ինչ որ անես... Էգուց կը տեսնես...

Մարթան միայն ծիծաղեց:

2

Կռնատը ամեն դիչեր չէր լինում Մարթայի տանը: Բայց և այնպէս, նա այստեղ մի առանձին դիրք ունէր: Տեսանք թէ ինչպէս էր նա իրաւունքներ բանե-

ցնում այս տանը. Բանը այն տեղին էր հասնում որ Մարթան նոյնիսկ ոչինչ վարձ չէր ստանում նրանից գիշերելու համար:

Ի՞նչ էր սա նշանակում:

Մի օր նա անցնում էր քաղաքային այգու մօտով և տխուր էր, մռայլ: Գեղեցիկ, պարզ օր էր. գարունը նոր էր բացվում, առաջին սիրուն օրն էր նա բերել: Բայց Կոնատը չէր նկատում իր շուրջը տիրող կենդանութիւնը. ծտերը ուրախ-ուրախ թռչկոտում էին ծառերի վրայ, երեխաները վազվզում էին այգու ծառերի տակ: Նրա համար այդ բոլորը ոչինչ էր. նրան տանջում էր այն միտքը թէ ուր պէտք է գիշերել: Արեգակը թեքւում էր դէպի արևմուտք և գիշերելու հարցը առելի և առելի էր մեծանում: Կար, ի հարկէ, միակ անվարձ տեղը—փողոցը. բայց նա վախում էր առաջին իսկ գարնանային գիշերը երկնքի տակ անց կացնելուց: Մի քանի օր էր, նա իրան լաւ չէր զգում. միտք էր և ուզում էր իրան պահպանել: Բայց ի՞նչպէս, ինչպէ՞ Ոչինչ չունէր. նոյն իսկ մի կտոր հացի փող էլ չէր կարողացել գողանալ...

Յանկարծ նրա ուշադրութիւնը գրաւեց մի այսպիսի տեսարան: Վերելից մարդիկ էին գալիս: Դրանք, երեւի, գնում էին խառնուելու այն ահագին բաղմունքին, որ զբօսնում էր ներքեւում: Իսկ այդ ներքեւը քաղաքի ամենալայն, ամենագեղեցիկ, հարուստ փողոցն էր: Նա երևում էր այստեղից: Երևում էին անվերջ շարժուն խմբեր, տղամարդիկ, կանայք, երեխաներ: Վերելից եկողների ետեւից, փողոցի միջով, գնում էր մի փոքրիկ աղջիկ, քսակը թևի տակ դրած: Դա մի մուրացկան երեխայ էր: Որտեղից որ էր մի ոստիկան լոյս ընկաւ: Նա գնաց դէպի աղջիկը և հրամայեց նրան յետ դառնալ կամ մտնել կողքի նեղ փողոցը:

Եւ Կոնատը հասկացաւ թէ ինչո՞ւ այդպէս պիտի անէր աղջիկը: Մեծ, գեղեցիկ փողոցում մուրացկանու-

Թիւն անելը արգելուած էր: Այժմ մանաւանդ պիտի սաստկանար արգելքը, բանի որ մեծ փողոցը դատարկ ու ամայի չէր, այլ մի ամբողջ դարնանային տօն էր պարունակում իր մէջ: Այնտեղ խօսում, ծիծաղում էին, թարմ օդ էին ծծում:

Հասկանում էր փոքրիկ աղջիկը որ այնտեղ գնալ չէ կարելի: Փոխանակ ոստիկանի հրամանին հնազանդուելու, նա ծռուեց դէպի մի կողմը, կուչ եկած շարունակեց իր ճանապարհը: Աշխատում էր մի կերպ խոյս տալ կարգապահութեան կանոններից, անցնել: Իսկ կարգապահութեան կանոնների վրայ հսկողը մատը թափ տուեց նրա վրայ, ոտը գետնին խփեց, ձեռքի շարժումներով ցոյց էր տալիս թէ դէպի վեր պէտք է գնալ: Աղջիկը ապշած նայում էր նրան, դողդոջիւն քայլեր էր փոխում, բայց շարունակ դէպի ցած: Եւ ոստիկանը բռնեց նրա թևից, բաշեց դէպի վեր, ինքն էլ քայլեց նրա հետ:

Փողոցում մի սրտապատառ ճիչ բարձրացաւ: Անցնողները նայեցին ու էլի անցան: Փոքրիկ մուրացիկը լաց էր լինում: Առաջին վայրկեանում ոստիկանն էլ չփոթուեց. և ազատելով իր թևը նրա ձեռքից, աղջիկը սարսափահար, գլուխը կորցրած, ուղղակի վազեց այգու երկաթէ ցանկապատի վրայ, կարծես պիտի խորտակէր նրան կամ թռչէր նրա վրայով: Երկու բանն էլ անհնարին էր կատարել: Ոստիկանը էլի բռնեց նրա թևից, տարաւ դէպի բարձր: Նա կատարում էր իր պաշտօնը առանց որ և է բռնութեան դիմելու: Բայց աղջիկը այդչէր հասկանում: Եւ էլի սկսեց լաց լինել սիրտ կտրատող ձայնով: Սարսափը նրան խեղդում էր. ոստիկանը աւելի լաւ համարեց թողնել նրան այդտեղ ու հեռանալ: Այդ վայրկեանին էր սպասում Կոնատը, որ անցել էր մի անկիւն և նայում էր չռած աչքերով: Նա արագ մտեցաւ երեխային, բռնեց նրա ձեռքից և տարաւ դէպի վեր: Ի՞նչպէս էր աղջիկը արտասուք թափում, ի՞նչպէս էր դողում նրա փոքրիկ մարմինը: Տեսնելով իր

պէս մի գղզգուած մարդու, նա փոքր ինչ սիրտ առաւ. նմանը նմանին շուտ է հասկանում և նա թոյլ տուեց որ ձեռքը մնայ այդ անծանօթ մարդու ձեռքում:

—Մի վախիր, ես այստեղ եմ, ասում էր Կոնատը: Իսկ փոքրիկը, արտասուքներ թափելով, հեծում էր.

—Վախում եմ... մայրիկ...

—Նա բեզ ոչինչ չարաւ. ասում էր միայն, որ մեծ փողոցը չը գնաս: Եւ ճշմարիտ էր ասում. այնտեղ հիմա մեծ-մեծ, հարուստ պարոններ են ման գալիս:

Բայց աղջիկը էլի չէր հասկանում: Այդպիսի մուրացկանի նա դեռ չէր հանդիպել: Բոլորովին անփորձ, բոլորովին խեղճ ու կրակ. և ճրքան ամաչկոտ, ճրքան վախկոտ...

—Դու մայր ունե՞ս, հարցրեց նա:

—Մայրիկ... ինձ տա՛ր... Վախում եմ... Զուր եմ ուզում...

Կրակի պէս այրում էր նրա փոքրիկ երեսը, ձեռքը Կոնատի ձեռքի մէջ դրում էր:

—Մի վախիր... Ես այստեղ եմ...

Եւ Կոնատը մտքեց նրան այգի, տարաւ դէպի ջրի աւազանը: Այժմ նա համարձակ էր. բոլորովին ուշադրութիւն չը դարձրեց, որ մարդիկ կան, որ կարող է ոստիկան դուրս գալ: Զուր տալով երեխային, նա նոյն կերպով յետ տարաւ նրան: Նկատելով ցանկապատի մօտ մի մենաւոր ծառ, քայլերը ուղղեց դէպի այդ կողմը, նստեցրեց աղջկան, ինքն էլ նստեց: Ինչ սիրուն, գառնուկ երեխայ: Գեղեցիկ էին նրա աչքերը. Կոնատը ագահութեամբ նայում էր նրանց մէջին, տեսնում էր այնտեղ անսահման միամտութիւն, վստահութիւն, հաւատ: Եւ նրան յափշտակում էր այդ սիրուն հայեացքը:

Նա հարց ու փորձ արաւ: Ամենից շատ ուզում էր իմանալ, թէ ինչո՞ւ փոքրիկը դէպի ցած էր գնում: Եւ իմացաւ, որ նա ողորմութիւն է ուզում դռներին, փո-

ղոցում մարդու չէ մօտենում: Տեսել էր երեխան չըրջողների մեծ բազմութիւն և գնում էր նայելու: Այգու միւս կողմից գալիս էր այդ բազմութեան աղմուկը, լսում էր խօսքերի անընդհատ դղրդիւնը: Կռնատը նայեց դէպի այն կողմը, ականջ դրեց, կարծես ուզում էր իր կողմից էլ վճիռ տալ—կարո՞ղ է այնտեղ մուրացիկ լինել թէ ոչ: Եւ նրա դէմքը աւելի թթուեց, տոգորուեց դառնութեամբ, սրովհետեւ նա էլ վճռեց որ, այո՛, չէ կարող լինել... Այս խեղճը, որ այստեղ, ցանկապատի տակ թրպրտում էր ինչպէս բոյնից ընկած ծտի ճուտ, իր անհասկացողութեան զոհ է դարձել: Ամեն տեսակ զոհ այն փողոցի համար—պէտք է...

Անցան րոպէներ: Աղջիկը հանգստանում էր,—կռնատը ոչինչ չէր խնայում նրան ուշքի բերելու համար: Նա այնքան աշողութիւն ունեցաւ, որ նոյն իսկ ծիծաղեցնում էր նրան: Բայց դրա համար որքան նա պիտի զսպէր իրան, խեղդէր իր սեփական զգացմունքները, մոռանար իր կսկիծները: Առաջին անգամն էր այդ մարդը անձնագոհութեան դիմում...

—Կարո՞ղ ես մենակ տուն գնալ,—հարցրեց նա, նայելով մայր մտնող արեգակին:

Նրանք էլի վեր կացան: Բայց աղջիկը էլի սկսեց լաց լինել, այս անգամ նոյն իսկ աւելի թունդ: Կռնատը էլի գործի գցեց իր իմացած բոլոր միջոցները. էլի խօսում էր քնքշութեամբ, սիրտ էր տալիս, խնդրում էր ասել պատճառը: Վերջապէս, նա իմացաւ պատճառը: Իմացաւ, և խայթուածի պէս ցնցուեց: Աղջիկը չէր համարձակւում տուն գնալ. նրա քսակում շատ քիչ բան կար, մայրը պիտի ծեծէր: Իսկ նա ծեծում է սաստիկ...

Այդ ի՞նչ տեսակ մայր է. ուղարկել այսպիսի հում ու խեղճ երեխային մուրացկանութեան, ուղարկել Նորֆադուլթից, մենակ... և դեռ ծեծել: Խեղճ երեխայ... Նրա ցաւը այնքան փոքր չէր, ինչպէս թւում էր սկզբից: Ոչինչ միթիթարանք, ոչինչ յուսադրութիւն նրան չէր օգնի...

Եւ ինչպէս մի քանի ընդէ առաջ նա համարձակ տանում էր երեխային մարդկանց մէջ՝ ջուր խմմեցնելու համար, այնպէս էլ այժմ քայլեց դէպի Նոր-Քաղովթ: Տանում էր սիրուն ու խեղճ Մարիամին տուն. այնտեղ էլ պէտք էր պաշտպանել նրան, այնտեղ էլ չը պէտք էր թոյլ տալ որ նա լաց լինի: Եւ Կոնատի քայլուածքը հաստատ էր, վճիռը՝ անյողդող...

Նրան, ճիշտ որ, աջողուեց այդ օրը երկրորդ անգամ պաշտպանել երեխային: Մարթան տուն եկաւ. Շուշանը, այն ժամանակ դեռ վեց տարեկան, կպած էր նրա փէշից և լաց էր լինում յոգնածութիւնից: Մօր քսակումն էլ շատ բան չը կար. բայց այդ հանգամանքը այժմ այնքան սարսափելի չէր Մարիամի համար: Կըռնատը պատմեց ամեն ինչ. մայրը միայն հայհոյեց. դա էլ բաւական էր արդէն չափից դուրս վախեցած երեխային աւելի ևս դողացնելու համար, բայց բանը ծեծի չը հասաւ: Եւ դրա պատճառը Կոնատն էր: Մարթան համաձայնուեց որ նա գիշերէ այնտեղ, վարձը կարելի էր յետոյ տալ:

Այսպէս սկսուեց այդ երկուսի ծանօթութիւնը: Հետեւեալ օրերը Մարիամը հիւանդացաւ: Դա մի տարօրինակ հիւանդութիւն էր: Երեխան հանգիստ քուն չուներ, աչքերը փակել չէր կարողանում վախից. մութը սարսափ էր պատճառում նրան և քնած ժամանակն էլ նա վեր էր թռչում կամ յանկարծ բըռնում էր, կարծես մէկը խեղդում էր նրան: Այդ հիւանդութեան ժամանակ մանաւանդ հասկացաւ Կոնատը թէ ինչ տեսակ մայր ունեն երկու անբախտ երեխաները...

Ու նա էր որ խնամում էր երեխային: Մայրը ամբողջ օրը գնում էր իր արհեստին: Կոնատը պատրաստ էր միշտ նրա կողքին նստել, եթէ միայն այս տանը որ և իցէ մէկին ձրի կերակրելու կարգ լինէր: Այդպիսի կարգ չը կար. ամեն մէկը պարտաւոր էր մի բան բերելու: Եւ Կոնատը օրէնը մի կամ երկու անգամ վազում էր քաղաք յատկապէս Մարիամի բախտին որսա-

լու: Ամեն դառնութիւնների, ամեն զրկանքների սովորած երիտասարդը այժմ մի առանձին յուզմունքով էր ճանապարհ ընկնում: ամեն աջողութիւն էր ցանկանում իրան, սկսեց նոյն իսկ երկինքն էլ ճանաչել և քաղաք մտնելիս՝ Աստուած էր կանչում: Օգնում էին և ընկերները: Եւ նա կարողանում էր շուտ վերագառնալ, միշտ հետը մի բան բերել:

Այդ բերածները այնքան աննշան չէին, որ տանտիրուհուն դուր չը գային: Հետզհետէ Մարթան սովորեց այդ անթեւ մարդուն օգտակար համարել: Կռնատը ուրիշ կերպ չէր կարող նրան նուաճել: Շատ փորձեր արեց, շատ ջանք թափեց, բայց վերջը համոզուեց որ օր ու գիշեր անել այդ կնոջ հետ կարելի է՝ միմիայն հպատակուելով նրան: Եւ նա հպատակուեց. այստեղ, այս տան մէջ էր նա սանձահարուած, սողում էր հլու հրամանակատարի պէս: Նա պատմում էր Մարթային իր բոլոր արկածները, բոլոր գաղտնիքները, նրան էր տալիս այն ամենը, ինչ կարողանում էր յափշտակել: Եւ այդ բոլորը Մարիամի համար: Սա էր, որ առաջին անգամ նրան մոցրեց իրանց տուն. սա դարձաւ պատճառ որ նա այլ ևս չը հեռանայ այդ տանից:

Անցել էր այդ օրուանից երկու տարի: Այժմ Մարիամը տասն երկու տարեկան աղջիկ էր: Շատ չէր փոխուել նրա վիճակը, դարձեալ ծեծում էր նրան մայրը, երբ նա քիչ բան էր բերում իր քսակի մէջ: Հիւանդութիւնը մնաց նրա մէջ, որ շուտ-շուտ հարկադրում էր նրան պառկել: Միայն Մարթան էր, որ լաւ կարգադրեց իր վիճակը: Շուշանը այնքան հասել էր որ կարող էր մենակ գնալ ողորմութիւն հաւաքելու: Աւելորդ էր, ուրեմն, որ մայրն էլ գնայ նրա հետ: Երեք հոգի աշխատում էին, իսկ նա նստած էր տանը և նրա գործն էր աւելի և աւելի խիստ պահանջել որ աշխատողները բերեն, շատ բերեն: Ամբողջ օրը ընկած էր կողքի վրայ, ոչինչ հոգս չունէր, պարապութիւնից խմել էլ սկսեց:

Սենեակի անկիւնները վարձով տալը նրա եկա-

մուտների մի նշանաւոր աղբիւրն էր: Բայց ի՞նչ տեսակ արարածներ էին մտնում այդտեղ. Մարթան երբէք չէր էլ հարցնում թէ ով ինչ է. նրանք 5—10 կոպէկ վարձն էր: Գիշերողների մէջ ոչինչ խտրութիւն չը գնելը դեռ ախորժելի էլ էր նրա համար, որովհետեւ գտնւում էին և այնպիսիները, որոնց հետ կարելի էր «քէֆ անել»: Այլանդակ կերպարանքը նրան չէր արգելում սիրային յարաբերութիւններ որոնել...

Կոնատը շատ անգամ էր զարհուրում այս տան մէջ: Լինում էին բոպէներ, երբ նա բորբոքւում էր, կուռում, պահանջներ անում: Բայց յաղթել էր երբեկիցէ: Գեղեցիկ, քաղցր էին այն ժամերը, երբ նա երեկոյեան նստում էր Մարիամի կողքին, լսում էր նրա միամիտ, երեխայական քչփչոցը: Տարիները չէին փոխում այդ երեխային: Հիւանդութիւնը մաշում էր, բայց նա նոյնն էր մնում: Կոնատը մտածում էր նրան այստեղից հանելու, մի ուրիշ տեղ դնելու մասին: Բայց ո՞ւր գտնել այդպիսի տեղ: Աղքատութիւնը չունէր մի մաքուր, վայելուչ անկիւն:

Թէև այդպէս, Կոնատը մի անգամ զայրացած յայտնեց իր միտքը Մարթային: Բայց ի՞նչ պատասխան ստացաւ.—Մի սարսափելի բռնի միայն, մի այնպիսի ծաղր, որ հազարաւոր սուր խայթոցներ մխեց նրա սրտի մէջ: Ապա այդ մայրը առանց քաշուելու, հաստատ կերպով յայտնեց որ Մարիամը նրանն է, ով շատ փող կը տայ: Նա դէմ չէր որ Կոնատը վերցնէ Մարիամին, դէմ չէր որ նա հէնց այժմից սիրէ նրան, ինչպէս կարգն է...

—Բայց փո՞ղ, փո՞ղ... Առանց փողի դու նրան այնպէս կը տեսնես, ինչպէս տեսնում ես ականջիդ ետեւը...

Այդ օրուանից աւելի ևս սաստկացան Կոնատի յուզմունքները: Մի նոր բան զգաց նա իր մէջ. այնտեղ, իր ներսում, մի ինչ-որ սուրբ բան վիրաւորուած էր: Մարիամը երբէք ուրիշինը չի լինի: Բայց ի՞նչպէս անել այդ բանը: Նա ձեռք բերեց մի մեծ դանակ: Նրա սուր բերանը հանգստութիւն էր պատճառում և ասում

էր թէ շատ միջոցներ կան այդ ծանր հարցը լուծելու համար. փող էլ կարելի էր ձեռք բերել, ախոյեան էլ կարելի էր ոչնչացնել:

Ու նա սկսեց պատրաստուել՝ այդ սուր բերանը լաւ գործածելու համար: Աւելի ևս անգուլթ ու կատաղի դարձաւ, աւելի կատարելագործեց իր սրիկայութիւնը: Դանակը, վերջապէս, կարող էր մի բան էլ այս սարսափելի կնոջը հասկացնել: Բայց այս երեկոյ նա տեսաւ որ Մարթան նոյն իսկ գանակն էլ արհամարհել գիտէ: Ի՞նչ ֆնաս, յանկարծ հասկացաւ նա: Հօ կարելի է, երբ այլ ևս ճար չի լինի, կոխել գանակը իր, Կոնատի, կուրծքը: Մի հանգստացնող հանգամանք էլ այս երեկոյ բացուեց: Բայց Կոնատը դեռ ապրել էր ուզում, ուստի էլի շարունակեց համոզել Մարթային որ կարմիր կտուրից շոր կարէ Մարիամի համար:

Եւ յամառութիւնը այս անգամ օգնեց նրան: Աղքատանոցը մեծ յոյսեր էր տալիս: Նրա օգնութեամբ, ո՞վ գիտէ, գուցէ կարելի է և գնել Մարիամին:

Մարթան զիջեց: Եւ այսպէս լաւ վերջացաւ երեկոն գոթախտ Կոնատի համար...

Լ է Օ

(Կը օտրուակուի)

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՆԴԻՍԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

(Նեկրասով)

Ահա՛ գեղեցիկ հանդիսամուսք:
Ամբողջ ֆաղաք մի՛ստ տուն օրերին,
Մի ստեղծական ցաւով համակուած,
Մօտենում է այդ տենչած դռներին:
Անունն ու պատճառն իրանց գրելով,
Հիւրերը նորից տներն են ցում,
Եւ այնքան են գոհ իրանց արածով,
Որ կարծես չունեն էլ ուրիշ կոչում:
Իսկ լի օրերին, այդ շէնք մուսքում,
Լցում են աղփատ եւ քուտա մարդիկ.
Ե՛ւ ծրագրամոլ, ե՛ւ պատճառ խնդրող,
Ե՛ւ զառամեալ ծեր, ե՛ւ ողբեալիք:
Սուրհանդակներն էլ առատօտեան վաղ
Թղթելով նրա մօտ զընում են, գալիս,
Ոմանք դառնալով երգում են ուրախ,
Իսկ շատ խնդրատու դառնագին լալիս:

Մի անգամ տեսայ ես՝ ոռոս գիւղացիք
Ձերմ աղօթելով մօտեցան մուսքին
Եւ մի կողմ փաշտած կանգ առան լոկի,

Շէկ գլուխները քառե արած կրծքին:
 —«Թո՛ղ մեզ»—ասացին ժանձ դոնապահին,
 Սրտում կրելով ե՛ւ յոյս, ե՛ւ սանջանք:
 Նա աչքի սակով նայեց հիւրերին,
 Գեղեցիկ չէին արտափուս նրանք:
 Երես ու ձեռքները արեւից այրուած,
 Գզգզուած բանկոն ուսին կիսամերկ.
 Կորացած մէջքին պարկը շալակած,
 Վզին խաչ կախած, եւ արիւնաներկ
 Ոսներին հագած կոպիւս տելներ,
 (Երեւի նրանք շատ երկար օրեր
 Ճամբայ են եկել հեռու նահանգից):
 —«Դոնա՛պահ, լսուեց մի ձայն վերելից,
 Քե՛ի՛ր դրանց դէն, մեր մեծաւորը
 Ձէ սիրում չո՞ս, կեղտո՞ս ամբոխին»...
 Եւ դուռը փակուեց, պահ մի կանգնելով,
 Հէզ պանդուխտները գրպանը բացին,
 Բայց դոնապահը չը թողեց, լուման
 Քիչ էր անկասկած, եւ ուղի ընկան,
 Այրուելով սաստիկ արեւի տապից,
 Արդար դասաստան խնդրելով Տէրից:
 Ձեռքները նրանք անյոյս շարժելով,—
 Եւ քանի աչքս տեսնել սակաւին
 Կարող էր նրանց,—բաց գլուխներով
 Վշտահար, իսուր-լուռ գնում էին:

Իսկ Տէրը այդ պերճ, շեղ պալատի
 Դեռ ննջում էր խոր եւ անդորր քնով...
 Դո՛ւ, որ գտնում ես միշտ նախանձելի՛
 Անառակութեամբ, անամօք ստով
 Եւ կեր ու խումով լի զագիր կեանքը,
 Զարթի՛ր, դեռ շատ կան հանդիմներ անասնձ,
 Դարձո՛ւր, ձեռքիդ է նրանց փրկանքը,
 Բայց լացը ի՛նչ փոյթ քախտաւոր մարդկանց...

Քեզ անաւոր չէ շանքը երկնքի,
 Իսկ երկրայինը ունես քո ձեռքում,
 Եւ որքան վշտեր անելանելի
 Այդ անյայտ մարդիկ կրում են արտում:
 Ի՛նչ փոյթ խեղճերի այդ արցունք, թախծ,
 Ի՛նչ փոյթ քեզ թշուառ ժողովուրդը հեզ.
 Ինչպէս անվերջ տօն քո անուշ կեանքից,
 Ձեռն կարողանայ սքափուել երբէք:
 Եւ ինչո՞ւ համար. խեղճ ժողովրդի
 Բարօրութիւնը դու անուանում ես
 Գրչակի լոկ խաղ: Է՛հ, առանց այդ էլ
 Դու փառքով կ'ապրես, փառքով կը մեռնես:

Իդիլիական կեանքից էլ խաղաղ,
 Անյոյզ կը սահեն ծեր օրերը քո
 Եւ Սիցելիայի երկնի տակ չֆնաղ
 Ծառերի բոյրի հովանու ներքոյ,
 Մեանջանալով, թէ ի՛նչպէս ծովում
 Արեւն է սուզում ոսկի շերտերով,
 Եւ օրօրուելով Միջերկրականի
 Վէտ ալիքների մեղմիկ երգերով,
 Դու մանկան նման կը ննջես, պատած
 Քո ընթանիքի սիրով, խնամքով,
 (Որ սպասում է անհամբեր մահիդ)
 Անիւնդ մեզ մօտ կը բերեն շուտով,
 Որպէս զի յարգեն հանդէտով թաղման,
 Եւ կ'իջնես, հերո՛ւ, դու սառ գերեզման...
 Հայրենի երկրից անիծուած գաղտուկ,
 Բայց փառաբանուած գովքով մեծաշուք...

Եւ սակայն ինչո՞ւ այսպիսի անձը
 Խեղճ մարդկանց համար անհանգիստ անել,
 Հէնց մենք սրանցից վրէժ չը հանե՞նք.
 Եւ անվտանգ է... Եւ մի բանում էլ

Պատճառ կը գտնենք մխիթարութեան...
Ի՛նչ փոյթ թէ խեղճը տուժէ ամեն օր,
Այդպէս է կամքը Նախախնամութեան...
Դրան վաղուց է ռամիկը սովոր:

Քաղաքից հեռու անուր մաշտան
Նրանք ունեցածը օղիի կը սան,
Եւ համբայ կ'ընկնեն իստ'ւր, թախծալի,
Եւ կը հառաչեն... Երկի՛ր հայրենի,
Օ՛, յիշի՛ր դու ինձ այն օրեւանը—
Այդպիսի անկիւն ես չեմ տեսել դեռ,
Ուր քո հերկողը եւ պահպանը,
Ուր ռուս ռամիկը միշտ չը հառաչէր:
Նա հառաչում է դաւաճում, համբիւն,
Նա հառաչում է բանտում, ախոռում,
Հանգիստի մէջը՝ շրջան ձեռներին,
Կալում, դէզի սակ, սափաւակներում՝
Գիշերն անցնելով բաց երկնքի ներքոյ.
Նա հառաչում է իր սան մէջ անուր,
Աստու արեւի լոյսից էլ դժգոհ,
Ամենայն մի խուլ փաղափում խեղճուկ.
Նա հառաչում է դատարանների
Եւ պալատների դռների առաջ,
Նա հառաչում է սիրտը վշտով լի:
Գնա՛ Վօլգի ափ, Երջի՛ր ձախ ու աջ,
Ո՛ւմ հառաչն է այն հնչում տրամազին,
Ռուսաց լայնարձակ գետի եզերքում:
Երգ անուն տուինք այդ հառաչանքին,
Որ հէգ մաւաքաւ բուրլակն է երգում:

Ա՛հ, Վօլգա՛, Վօլգա՛, գարնան ջրառաս
Դաւաճը դու չես հեղեղում ա՛յնքան,
Ո՛րքան ամբոխի վշտով յուսահատ
Լցուած է հողը մեր հայրենական:

Որտեղ ժողովուրդ, այնտեղ է՛լ հառաչ...
 Է՛հ, եղբայր, մինչ ե՛րբ անվերջ հառաչես,
 Արդեօք ոյժով լի դու պիտի զարթնե՞ս,
 Թէ՛ նակասագրի օրէնքի առաջ
 Խոնարհուած եւ լուռ՝ ինչ որ տակաւին
 Դու կարող էիր, ողջ կատարեցիր,
 Երգ ստեղծելով հառաչի՜ նման,
 Եւ ապա հոգով ընդմի՛շտ ննջեցիր...

4. ԿՐԱՍՈՒՆԻԿԵԱՆ

ՍԱԼՄԱՍՏԻ ՀԱՅԵՐԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

(Վ Ե Ր Ջ)

Դ

Սալմաստի հայերի հողերը վարչութիւնը.— Գահանաները.— Նրանց բարոյական և տնտեսական վիճակը.— Նրանց դիրքը.— Եկեղեցիները.— Եկեղեցիների տնտեսական վիճակը.— Երէցփոխները.— Եկ. կալուածները.— Վանքերը.— Դէրիկը.— Հասարակական հիմնարկութիւնները.— Դպրոցները.— Նրանց տնտեսական և բարոյական վիճակը.— Վրթական գործը անցելում.— Վրթական գործիչները.— Տեղական ոյժը.— Վնտրոնական դպրոցի խնդիրը.— Աղջկանց ուսումնարանները.— Հայ-գերմանական որբանոցը Վալասարում 1897 թուին.— Վաթուիկ միսիօնարների ուսումնարանը Հաֆթուանում.— Վենետիկ Միթրարեանների ուսումնարանը Սալայում.— Սալմաստի կանանց բարեգ. ընկերութիւնը.— Գր.— ընթերցարանները. թատրոնը:

Սալմաստը, իբրև Ատրպատականի թեմի ամենաբազմահայ գաւառ, առանձին փոխանորդութիւն է կազմում: Սալմաստի բազմաչարչար ժողովուրդը պարսիկ պաշտօնականների ոտնձգութիւններից ազատուելու համար, չարունակ կարիք է զգացել արթուն, աշխուրջ և գործունեայ փոխանորդների, որոնք իրանց երբեմնակի բողոքներով, յաջողել են սանձահարել այս ու այն պարսիկ պաշտօնեայի կամայականութիւնները, ժողովրդին պաշտպանել են զանազան զրպարտութիւններից և ոտնձգութիւններից: Ներկայումս առաջնորդական փոխանորդի և գործակալի պաշտօն է վարում սալմաստեցի մի քահանայ, որ մի ծերունի, բարեմիտ, խեղճ, տգէտ անձն է, բոլորովին անկարող Սալմաստի փոխանորդի ծանր պաշտօնը կատարելու:

Սալմաստի 27 կանգուն եկեղեցիները ունեն ընդամենը 21 քահանայ: Հաֆթուան, Փայաջուկ, Մահլամ գիւղերից իւրաքանչիւրն ունի 3 քահանայ, Սառնա և Սաւրա՝ երկ-երկու, մնացածները՝ մէկ-մէկ, իսկ մի քանի փոքր գիւղեր առանձին քահանայ չեն պահում: Միջին հաշուով իւրաքանչիւր քահանային 80 տուն ծուխ է ընկնում: Միջին հաշուով իւրաքանչիւր քահանայի տարեկան եկամուտը հաւասար կը լինի մօտաւորապէս 130 ուռլու: Քահանաները՝ չնչին բացառութեամբ հող ունեն:

Սալմաստի հայ քահանաները բոլորն էլ տղէտ, անուսում և իրանց կոչման անարժան մարդիկ են: Նրանցից վեցը յայտնի գրբաց՝ «Թուղթ ըչկայող» են. երկուսը յայտնի գինեմոլ, մէկը հռչակաւոր երազատես և սրբախօս: Քահանաների մեծ մասը աղբակեցիներ են, որոնք մէկ-երկու տարի այս ու այն վանքում կարդալուց յետոյ, Սալմաստ գաղթելիս, եկեղեցիներում տիրացութիւն են արել և ապա քահանայ ձեռնադրուել:

Քահանաները ժողովրդի մէջ, ինչպէս նաև մասամբ կառավարութեան առաջ, բաւական բարձր դիրք և ազդեցութիւն ունեն: Գիւղական ժողովներում քահանայի ներկայութիւնը անհրաժեշտ է, մի որ և իցէ վճիռ կայացնելու ժամանակ քահանայի ձայնը գերակշռող է: Հարկաւոր է դատարան գնալ, քահանան պէտք է առաջնորդի ժողովրդին, խնդրադիր, բողոքագիր պէտք է ներկայացնել բարձր իշխանութեան, քահանան նախ պէտք է ստորագրի, մուրհակները քահանաներն են դրում:

Տարէցտարի քահանաների դիրքն ընկնում է Սալմաստում, ինչպէս կառավարութեան նոյնպէս ժողովրդի առաջ, մասամբ քահանաների ապիկարութեան, մասամբ էլ պարսկական կարգերի շնորհիւ: Հոգևորականութեան փոխարէն հետզհետէ առաջ է անցնում վաճառականական դասակարգը:

Քահանաների և ժողովրդի միջև վէճ ու կռիւն անպակաս է, որոնք առաջ են գալիս քահանաներին զանազան ծիսակատարութիւնների համար վարձատրելու ժամանակ:—«Չենք կարող ապրել, առարկում են քահանաները—ժողովուրդն իր պարտքը չէ ճանաչում, ինչպէս որ հարկն է մեզ չէ վարձատրում»:—«Հիմիկուայ քահանաները—զանգատում է ծխականը—Աստուած աղատի, խօմ քահանայ չեն, սաստիկ ագահ են, ինչքան էլ վարձատրենք դարձեալ դո՛հ չեն լինիլ. ո՞վ էր տեսել որ քահանան պսակի համար 15—20 դրան (3—4 ուրլի) հարկ վերցնի, առաջ ժամանակները 2—3 դրան տալիս էինք տէրտէրին, նա հազար անգամ էլ շնորհակալութիւն էր յայտնում. իսկ սրանց, տալիս ենք, չենք տալիս, միշտ գանգատ ենք լսում»:

Բնորոշը այն է որ ժողովուրդը չէ գանգատում քահանաների ապիկարութիւնից, անարժանութիւնից կամ անվայել ընթացից, ոչ: «Մեր տէրտէրը, Աստուծ կարգը հաստատ պահի, շատ ուսումով ի, ժամի թղթերը ջրի պէս կարդալի, աղէկ ձայն ունի, երաղըսանից աղէկի խասկընալի, Թուղթ ըչկալու մէջ էլ զօջաղ ի, ամա մէ խասըաթը վստի,—անկուշտ ի, անկուշտ»: ժողովուրդը, քահանաների ագահութիւնից գանգատուող ժողովուրդը, ներկայումս կամենում է քահանային վարձատրել այն չափով, ինչ չափով «առաջի տարիները», մոռանա-

լով որ ինքը ծխականը, ինչպէս մենք ցոյց տուինք, եթէ սրանից 10 տարի առաջ կարողանում էր 50 ռուբլով ապրել, հիմի 5X50 ռուբլի պէտք է ծախսի, որպէս զի գոնէ այն ժամանակուայ պէս ապրել կարողանայ:

Սալմաստում ներկայումս կան 27 եկեղեցի: Ընդհանրապէս քարաշէն են եկեղեցիները և կամսարակապ, վերանորոգուած անցեալ դարի ընթացքում, մութ են և առհասարակ խոնաւ: Կտուրները չըջապատուած են 1—2 արշին քարաշէն պատով, որոնց վրայ կան բաղմաթիւ ծակեր: Բարբարոսների աւարառութեան ժամանակը ժողովուրդը հաւաքւում էր եկեղեցի, իսկ կռուող ուժերը բարձրանում էին կտուրն ու պատնէշների յետեր պաշտպանուելով, հրացան արձակելու հնարաւորութիւն էին ունենում այդ պատերի վրայ բացուած ծակերի միջով: Կան այնպիսի մեծ ծակեր այդ պատնէշների վրայ, որոնց միջով կարելի է մի քանի փութ ծանրութեամբ քարեր արձակել դէպի ներքեւ: Իր ձևով, մեծութեամբ, առաստաղի մէջ դռնուող գաղտնի սնցքերով, պահարաններով ու ջրամբարներով նշանաւոր է Դրիշկի ս. Աստուածածին եկեղեցին *):

Սալմաստի եկեղեցիները հասոյթների կողմից շատ աղքատ են և ընդհանրապէս դուրի են անշարժ կալուածներից: Փաստերը ցոյց են տալիս որ եկեղեցիները փոխանակ հետզհետէ հարստանալու, աղքատանում են և զրկւում իրանց անշարժ կալուածներից: Օր. Փայաջուկի եկեղեցին սրանից մի քանի տարի առաջ ունէր մօտ 1500 քառ. արշին տարածութեամբ մի արտ. իսկ այժմ դա սեփականութիւն է դարձել գիւղի հարուստներից մէկին: Նոյն եկեղեցին ունէր մի ընդարձակ բակ, այժմ այդ բակի տեղը կանգնել է գիւղացիներից մէկի տունը:

Կալուածների, ինչպէս նաև եկեղեցական միւս հասոյթների հետ՝ երէցփոխները ինչպէս կամեցել են, այնպէս էլ վարուել են և վարւում են մինչև այժմ: Եթէ փոխանորդը կամ Ատրպատականի առաջնորդը Սալմաստում եղած ժամանակ հաշիւ չը պահանջեն երէցփոխներից, եկեղեցու հաշիւները կը մնան անքննենքի: Ժողովրդին հաշիւ տալու սկզբունքը գոյութիւն չունի Սալմաստում: Երէցփոխին Առաջնորդարանի կողմից տրւում է մի հաշուեմատեան, բայց միայն երէցփոխներն են իրանց հաշ-

*) Յիշ. եկեղեցու մեծութիւնը ցոյց է տալիս, թէ իր հիմնարկութեան ժամանակը ո՛րքան շատ ժողովուրդ է ունեցել. այնինչ այժմ հազիւ թէ 30 տուն հայ է մնացել այդտեղ, մինչդեռ Հաֆթուանի եկեղեցին, որ նրա 1/3 մեծութիւնը հազիւ թէ ունենայ, 300 տնից ասելի բնակիչ ունի: Գաղթականութեան ժամանակը Դրիշկի հայերը գաղթել են, նրանց տեղը բռնել են այժմ թուրքերը:

ուրիշ գլուխ հանում: Երէցփոխի վստահութեան է յանձնուած եկեղեցու հաշիւը: Այն գիւղերում, ուր ժողովուրդը համեմատաբար աւելի միամիտ, երկիւղած է, երէցփոխները աւելի բարեխիղճ են դէպի իրանց պաշտօնը, քան թէ Հաֆթուան, Փայաջուկ, Ղալասար, Սաւրա, Մահլամ և այլ գիւղերում, ուր երէցփոխները եթէ հաշուի մէջ «անգիրտութեամբ սխալուեն», քահանաների օգնութեան կը դիմին իրանց սխալն ուղղելու...

Երէցփոխները գաղափար չունեն իրանց իրաւունքի և պարտականութեան մասին, բայց այդ բանում նրանք մեղաւոր չեն, որովհետեւ չը կան գրաւոր կանոններ, որոնք որոշէին նրանց պաշտօնի սահմանը, և ժողովուրդը գիտակցութիւն չունի հասարակական գործերից: Ամեն մի գիւղի երէցփոխ ղեկավարւում է իր խղճի թելադրութեան չափով:

Մի անգամ Սալմաստի գիւղերից մէկի գերեզմանատնից անցնելիս, ինձ ցոյց տուին թէ ինչպէս գիւղացիներէց մէկը իր այգու և եկեղեցապատկան հողի սահմանագիծ կազմող առուի ընթացքը մի քանի արշին երկարութեամբ փոխել էր, որով թէ եկեղեցու հողի մի մասը և թէ առուի ափի վրայ անկուած մի քանի ծառերը, միացրել էր իր բաժնին: Երբ նոյն գիւղի երէցփոխի հետ այդ մասին խօսեցի, նա ինձ իբրեւ պատասխան ասաց. «Ինձ ինչ, ես այսօր երէցփոխ եմ, իսկ վաղը ոչ. ինչո՞ւ բողոքեմ նրա դէմ և «վատամարդ» լինեմ. թող խօսեն գիւղի իշխանները»...

Սալմաստեցի հայը բացի իւրաքանչիւր գիւղում մի, նոյն իսկ երկու (ինչպէս օր. Քէօհնա-շըհէր.) եկեղեցի ունենալուց, ունեցել է մի քանի վանքեր և մատուռներ: Կար ժամանակ որ ջերմեռանդ ժողովուրդը այդ տեղերը գնում էր ուխտի, ուրախութիւն էր անում. իսկ այժմ համարեա թէ բոլորովին դադարել է ուխտագնացութիւնը չնորհիւ վերջին տարիների սալմաստեցու գլխովն անցնող դէպքերի, որոնց ազդեցութեան տակ նա կորցրեց իր ուրախ արամադրութիւնը:

Սալմաստի վանքերից ամենանշանաւորն է Դէրիկի ս. Աստուածածնի վանքը, որ այժմ աւերակ է բոլորովին: Այդ վանքը գտնւում է Սալմաստից վան գնացող ճանապարհի վրայ, գաւառի արևմտեան մասում, Քէօհնա-շըհէր գիւղից դէպի արևմտահիւսիս 2 ժամ հեռու. ընկած մի մեծ ձորի մէջ փռուող լեռնաբլուրի լանջի վրայ, չըջապատուած լեռներով և ձորերով: Օգը սքանչելի է, ջրերը՝ առատ, սառն ու վճիտ են, ունի նաև հանքային տաք ջրեր: Մինչև 80-ական թուականների վերջերը վանքը հող չունէր. վանահայրը ապրում էր ուխտաւորների աջակցութեամբ: 1891—92 թուերին Բ. վ. Թաւադարեանի վանա-

հայրութեան օրով՝ զլիաւոր աջակցութեամբ Սալմաստի ժողովուրդի և «Սալմաստի կանանց բարեգ. ընկերութեան» մի խումբ բարեմիտ անձինք վանքի համար 500 թիւմանով գնեցին ընդարձակ հողեր։ Մի մօտաւոր գաղափար տալու համար վանքի հողերի ընդարձակութեան մասին, այստեղ եմ դնում վանքի կալուածներին լաւ ծանօթ մի անձնաւորութեան ինձ տուած մի քանի թուեր։ Դէրիկի կալուածներում կարելի է տնկել աւելի քան 3,000,000 բարդի կամ կաղամախի ծառ. բայց դրանից, հացահատիկների մշակութեան յարմար գիւղերում կարելի է ցանել տարեկան 300 բոռը ցորեն, իսկ արօտամարգերում կարելի է պահել աւելի քան 1000 ոչխար ու տաւար։ Վանքն ունի նաև մարմարիոնի հանք։ Վանքի այդ կալուածը գնուած է 500 թիւմանով Քէօհնա-չըհարցի սէիդներից և կտակուած հէնց նոյն օրը Մայր-Աթոռին։

Մեծ ոգևորութիւն էր տիրում Սալմաստում, երբ վանքը նոր էր գնուել, վանքի առաջը սկսեցին ծառեր տնկել, գաղթականների բնակութիւն հաստատեցին և սկսեցին երկրագործութեամբ ու անասնապահութեամբ զբաղուել, վանքը նորոգուեց (պարսպել չը թոյլատրուեց), միաբանութիւնը բազմացաւ, բայց երկար ճիգ թափելուց յետոյ Տաճկաստանի քրդերը 1894 թուի ամիսներ վանքը քարուքանդ արին. միաբանութիւնը և գաղթականները վանքը պաշտպանելու իրաւունք չունենալով, թողին հեռացան։ Այժմ ինչպէս ականատեսները վկայում են, այդ նըւիրական սրբավայրի շէնքը հողին հաւասարած է, վանքի միայն մի պատն է կանգուն մնացել, որի հովանու տակ մնում են միայն մի քանի գերեզմաններ։ Դէրիկի կենսատու ջուրը քուրդըն է խմում այժմ, նա է ծծում նրա սքանչելի թարմ օդը, նա է օգտուում վանքի այդ ընդարձակ կանաչադարձ կալուածներից...

Դէրիկից յետոյ յիշեմք Սալմաստի վանքերից ս. Թադէոսի վանքը Հաֆթուան գիւղում. այստեղ էր, որ իյաչիկ վ. Դատեանը 1898 թուին Սալմաստի Կենտր. դպրոցի հիմքը դրեց, բայց չը կարողացաւ գլուխ բերել, կիսատ թողեց և հեռացաւ։ Կան նաև մատուռներ Հին-Քաղաքում (ս. Օհանէս), Սառնայում (Մար-Իւխանաս=ս. Յովհաննէս), Զավաջուկում (Փիրը-չատ) և այլն և այլն։

Խիստ ցաւալի և անմխիթար վիճակի մէջ է գտնուում Սալմաստի կրթական գործը։ Չը նայած որ Սալմաստեցին վաղուց է ղգացել ուսման կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը, բայց մինչև այսօր Սալմաստի գիւղերից ոչ մէկը չէ կարողացել ապահով հիմքերի վրայ դնել մի կանոնաւոր երկդասեան կամ գոնէ

միգասեան ծխական ուսումնարան: Հաֆթուան, Փայաջուկ, Ղալասար, Սաւրա, Մահլամ, Հին-քաղաք, Սառնա, Սանամէրիկ գիւղերը աւելի քան 10 տարի է որ ուսումնարան ունենալու փորձեր են անում, շատ գիւղերում շինուել են ուսումնարանի շէնքեր, շատ կրթական գործիչներ՝ իբրև ուսուցիչ մտել են յիշեալ գիւղերը և տարիներով գործել են, գիւղացիներն էլ բաւական զոհողութիւններ են արել, բայց այդ բոլոր բարոյական ջանքը և նիւթական զոհաբերութիւնը զուր կորել են և այսօր յիշեալ գիւղերի ուսումնարանները նոյն վիճակում են գտնուում, ինչպէս սրանից 10 տարի առաջ: Դրա գլխաւոր պատճառը նրանում է, որ հէնց սկզբից հիմքը սխալ է դրուել: Ոչ մի դպրոց իր ապագան չէ ապահովել: Իւրաքանչիւր ուսումնարան սկզբից մինչև այժմ կառավարուել է բացառապէս աշակերտների թոշակով: Այդ հանգամանքի վրայ առանձին ուշադրութիւն դարձրեց Ատրպատականի առաջնորդ Այվատեան եպիսկոպոսը 1899 թուին, իր դէպի Սալմաստ կատարած ճանապարհորդութեան ժամանակը: Նա դպրոցները նիւթապէս ապահովելու նպատակով մի քանի միջոցներ առաջարկեց, որոնց մէջ կարևորն էր այն միջոցը, որ տարիներ առաջ գործադրութեան էր առաջարկել հանգ. Մխիթարեան եպիսկոպոսը: Այդ միջոցը հետեւեալն էր. իւրաքանչիւր գիւղացի, մուրհակով՝ պարտաւորուում էր ամեն տարի իր կարողութեան չափով մի չնչին գումար (2 ռուբլի և նրանից բարձր) վճարել եկեղեցուն: Դա պէտք է շարունակուէր մի քանի տարի, մինչև որ դպրոցն ունենար այնքան դրամագլուխ, որի տոկոսով կարելի լինէր ապահովել դպրոցի ծախքերը: Այվատեան եպիսկոպոսի այդ առաջարկութիւնը, թէև սկզբում ընդունելութիւն գտաւ, բայց դարձեալ անգործադրելի մնաց երկու գլխաւոր պատճառով. նախ՝ այդ առաջարկն արուեց մի այնպիսի ժամանակում, երբ սալմաստեցին արդէն տնտեսապէս խիստ վատ վիճակի մէջ էր գտնուում. երկրորդ՝ որ գիւղացիների մէջ վէճեր ծագեցան և մի քանի տղրուկ աղաներ չը համաձայնեցին և ժողովրդի միտքը պղտորելով գործը բոլորովին խանգարեցին:

Ներկայումս շատ թէ քիչ ապահովուած է համարուում Ղալասարի երկգասեան ուսումնարանը, համագիւղացի մի քանի վաճառականների չնորհիւ, որոնք մի որոշ գումար փող բանկին են յանձնել (այդ փողը դարձեալ նրանց է մնում), այդ գումարի տոկոսը յատկացրած է ուսումնարանին: Հաֆթուանի երկգասեան ուսումնարանը թէև նոյնպէս ապահովուած չէ, բայց պահուում է չնորհիւ այն հանգամանքի, որ գիւղը մեծ է և աշակերտների թիւը շատ: Մնացեալ գիւղերում կամ բոլորովին չը կան ուսումնարաններ, կամ թէ չէ միջոցների սղութեան

պատճառով յանձնուած են այնպիսի ասլիկար և անարժան ուսուցիչներ, որոնք սրանից 10—15 տարի առաջ վոնդուեցին Սալմաստի ուսումնարաններէ, իսկ այժմ վերստանձնել են ուսուցչական պաշտօնն ու դպրոցը կառավարում են խալիֆայական մէթօդով:

Սալմաստի կրթական գործի մինչև այժմ կազմակազմ և անկանոն կերպով շարունակուելու զօրաւոր պատճառներէ մինն էլ այն է, որ սալմաստեցիք իրանց դպրոցական գործում խիստ կրաւորական դեր են կատարել: Կրթական գործին այս կամ այն կերպ մղում տուողն սկզբից մինչև այժմ եղել են դրսեցիները: Նրանք են մտել այս կամ այն գիւղը և ուսումնարան բացել, աշակերտներ հաւաքել: Նրանք են եղել դպրոցին այս կամ այն ուղղութիւն տուողները, ըստ իրանց հայեցողութեան և կամայականութեան: Եւ որովհետև դրսեցի ուսուցիչներն ընդհանրապէս մի կամ երկու տարուց աւելի չեն կարողացել փնալ իրանց պաշտօնում, դպրոցները բառի բուն նշանակութեամբ խաղալիք են դարձել բախտի ձեռքը: Իսկ սալմաստեցիները մինչև այժմ էլ չեն աշխատում իրանց կրաւորական դերից դուրս գալու: Յաւալին այն է որ համոզուելով թէ դրսեցիները յարմարութիւն չունեն Սալմաստում երկար ժամանակ տեղացիների համար ձեռնտու պայմաններով գործելու, նրանք չեն աշխատում տեղական ուժեր պատրաստելու: Մինչև այժմ Սալմաստում գործող ուսուցիչները շատ չնչին բացառութեամբ դրսեցիներն են եղել:

Տեղական ուժեր պատրաստելու նպատակով վաղուց կարիք է զգացուել Սալմաստում մի կենտրոնական ուսումնարան հիմնելու: Այդ խնդիրը բաւական ուժգին կերպով արծարծում էր 1894—95 թուերին Սալմաստի թեմական տեսուչ հանգուեալ Մ. Աւետիսեանի օրով. այդ նպատակով 1897 թուին Ռուսաստանում բնակուող սալմաստեցիներից երկու հոգի նուիրեցին 11,000 ռուբլի: Ինչպէս ասացի վերելում 1898-ին իրաւի վ. Դատեանը կենտր. դպրոցի հիմնարկութիւնը ձեռնարկեց, բայց կառավարութեան կողմից արգելքի հանդիպելով, կիսատ թողեց և հեռացաւ: Այժմ կենտր. դպրոց ունենալու խնդիրը Սալմաստի շրջանից դուրս է եկել և ընդհանրացել է ամբողջ Պարսկաստանում: Թաւրիզցիները յարմար են տեսնում Թաւրիզում չինել կետը. ուսումնարան, իսկ ոմանք էլ կենտ. դպրոցի համար ամենայարմար տեղը Թէհրանն են համարում: Ուրեմն Սալմաստի խեղճ ժողովուրդը իր զաւակներին պէտք է ուղարկի Թէհրան կամ թէ Կովկաս՝ միջնակարգ կրթութիւն ստանալու: Շատերը Սալմաստում յարմար չեն տեսնում կենտրոնականի հիմնարկութիւնը այն պատճառով, որ Սալմաստն իբրև Պարս-

կաստանի ծայրերից մէկը, հեռու կենտրոնական իշխանութեան հսկողութիւնից, պարսիկ պաշտօնեաների կամայականութեան խաղալիք կը դառնայ: Այդ այդպէս բացատրելուց յետոյ նրանք աւելացնում են, թէ ատրպատականցիները հնարաւորութիւն ունեն իրանց որդիներին Կովկաս ուղարկելու, իսկ Թէհրանի, Ջուղայի աղքատ դասակարգը՝ նշ: Բայց իրական փաստերն ահա ինչ են ցոյց տալիս: Վերջնէնք օրինակ հէնց Ատրպատականի թեմի ամենաբազմահայ, բաղմակարօտ Սալմաստի գաւառը, քանի որ մեր խօսքն էլ Սալմաստի մասին է: Վերջին 10 տարուայ ընթացքում Սալմաստից Կովկասի միջնակարգ ուսումնարանները սովորելու գնացել են ոչ աւելի քան 8 հոգի. դրանցից 4-ը վաճառականների որդիներ են եղել, իսկ 4-ը, հասարակ դասակարգի զաւակներ: Այդ 8 հոգուց 5-ը մտել են մեր հոգեւոր դպրոցները և ձրի են սովորել (3-ն աւարտել են, 2-ը դեռ շարունակում են), իսկ մնացած 3-ը ուսական միջնակարգ ուսումնարանները (գիմնազիա և ըէալական դպրոց): Վաճառականների որդիները պատրաստուած են վաճառականութեան համար. մէկն արդէն դեռ չաւարտած՝ ըէալականի IV դասարանից դուրս է եկել և պարապում է յիշեալ զբաղումով, ինչպէս նաև մի ուրիշ վաճառականի որդին, որ աւարտել է Ներսիսեան դպրոցը: Ուրեմն Սալմաստի 10,000 բնակիչ հայերը 10 տարուայ ընթացքում, Կովկաս սովորելու ուղարկել են ընդամենը չորս հոգի հասարակ դասակարգից, այնինչ Թէհրանից 1898 թուին Կովկասի միջնակարգ ուսումնարաններից միայն Գ. ճեմարանում կային 4 աշակերտ: Ճշմարիտ է Ատրպատականից Կովկաս գնալը աւելի հեշտ է, քան թէ Թէհրանից և ես հէնց այժմ կարող եմ Կովկասում ցոյց տալ միմիայն Բաֆֆիի ծննդավայր Փայաջուկ գիւղից 18 հոգի 12—16 տարեկան պատանիներ, որոնք, սակայն, ոչ քե դպրոցում սովորում են, այլ frshnf են քալում իրանց ծնողների նիւթական կառիք հոգալու համար: Եւ այդ պատանիները Սալմաստի ամենահարուստ գիւղերից մէկի զաւակներ են:

Իզական սևուի կրթութեան կարևորութիւնն էլ զգացել են սալմաստեցիք, և երբեմն ունեցել են Հաֆթուանում, Փայաջուկում, Ղալասարում աղջկանց ուսումնարաններ, բայց դրանցից մնում է միայն Ղալասարինը, որ իր գոյութիւնը պահպանում է չնորհիւ «Սալմաստի կանանց բարեգործական ընկերութեան»: Դպրոցը ունի մի վարժուհի (150 ռ. ոռճիկով) և միացած է տղայոց ուսումնարանի հետ:

1897 թուին հայ որբերին օգնող գերմանական ընկերութիւնը (Hilfsbund) յանձին Ե. Լեպսիուսի, Սալմաստի Ղալասար գիւղում, Թիւրքիայից Սալմաստ ապաստանող որբերի համար

բաց արաւ մի որբանոց, որ սակայն մի տարի հազիւ կարողացաւ գոյութիւնը պահպանել, որբանոցի լիազօր վերատեսուէչ պատեօր ֆօն Բէրգմանի և տնտեսական-ուսումնական մասի կառավարիչ և ուսուցիչ Մ. Բաղդասարեանի միջև պատահած խռովութիւնների պատճառով։ Որբանոցը տեղափոխուեց Սալմաստից Խոյ, ուր մնաց մինչև անցեալ տարի, որբանոցում իննամուտ և սովորում էին 100-ի չափ որբեր և որբուհիներ։ Իսկ այժմ աւելի պակաս է նրանց թիւը։

Խօսելով Սալմաստի կրթական հիմնարկութիւնների մասին, յիշենք այստեղ նաև ամերիկացի միսիօնարների դպրոցը Հաֆթուան գիւղում։ Կար ժամանակ, որ այդ միսիօնարները բաւական ոգևորութեամբ աշխատում էին իրանց պրօպագանդան առաջ տանել, դպրոցն էլ բաւական վայելուչ դիրքի մէջ էր։ Իսկ այժմ շատ աննախանձելի վիճակի մէջ է գտնուում միսիօնարների դպրոցը, որի ղեկավարութիւնը յանձնուած է մի թերուս հայի։ Միսիօնարների մինչև այժմ թափած ջանքերի և ձեռք բերած արդիւնքի վրայ նայելով, պէտք է ասել՝ «դուր ջանք և անօգուտ վաստակ»։

Վենետիկի Միսիթարեաններն էլ մի վանք-ուսումնարան ունեն Սաւրայում։ Բաւական աննախանձելի վիճակի մէջ է գտնուում այդ հիմնարկութիւնը, որ մինչև այժմ գէթ չնչին չափով չէ կարողացել արդարացնել Միսիթարեան Միաբանութեան յոյսը։ Իսկ վնաս տուել է թէ Միսիթարեաններին և թէ սաւրացիներին՝ առաջիններին նիւթապէս, իսկ վերջիններին բարոյապէս։ Բաւական է յիշել միայն Մ. Վ. Նազարեանցի անունը, որ մինչև 1890 թիւը իբրև ներկայացուցիչ-պրօպագանդիստ գործում էր յիշեալ գիւղում։ Բսլորովին նրա հակապատկերն էր ներկայացնում իր բնաւորութեան չիտակութեամբ, ազնւութեամբ նրա յաջորդ՝ Ալեքսանդրօպօլում ծնուած Արիստակէս վարդապետը, որ սակայն մի տարի հազիւ թէ կարողացաւ մընալ այդ պաշտօնում և չքաւորութեան մէջ թողալստի զոհ գընաց անցեալ 1900 թուի դեկտեմբերին։

Այժմ փոքր-ինչ էլ ծանօթանաւք Սալմաստի միւս հասարակական հիմնարկութիւնների հետ, որոնց մէջ աչքի ընկնողն է «Սալմաստի կանանց Բաֆֆի-բարեգործական ընկերութիւնը», հիմնուած 1888 թուին Ղալասար գիւղի կանանց նախաձեռնութեամբ։ Սալմաստի տիկիների ընկերութեան ծրագիրն ընդարձակ և օգտակար է—ուսումն տարածել Սալմաստի իգական սեռի մէջ—բայց ծրագիրն ուսումնասիրելու համար միջոցները սուղ են։ Մինչև այժմ միայն հարուստ Ղալասար գիւղումն ու-

նեն մի փոքր աղջկանց ուսուցման: Ընկերութեան անդամուհիները բացառապէս սալմաստեցի հայուհիներն են:

Սալմաստում կան նաև մի քանի գրադարան-ընթերցարաններ, որոնց մէջ ամենակարևոր տեղը բռնում է Հաֆթուանի «Գրասիրաց» ընկերութեան գր.-ընթերցարանը, հիմնուած 1886 թուի մարտի 16-ին, յիշելու միշտ արժանի Վ. Գօլօշեանի եռանդուն նախաձեռնութեամբ: Գրադարանը ունէ աւելի քան 1000 կտոր գիրք: Շատ վտանգներ են անցել գրադարանի գըլխով: Մի քանի անգամ ընկերութիւնը լուծուել և վերակազմուել է:

Հաֆթուանից յետոյ երկրորդ տեղը բռնում է Ղալասարի «Արծրունի» գրադարան-ընթերցարանը, հիմնուած է 1898 թուին, նոյն գիւղում այժմ ուսուցիչ պ. Ս. Թադէոսեանցի եռանդուն ջանքերի շնորհիւ: Ընկերութիւնը զգալի առաջադիմութիւն է ցոյց տալիս հետզհետէ:

1893 թուին Փայաջուկում, ուսուցիչ պ. Ն. Գրիգորեանցի նախաձեռնութեամբ հիմնուած է «Բաֆֆի»*) գրադարանական ընկերութիւնը, որ սակայն 2 տարի յետոյ լուծուած է: 1897 և 1899 թուերին թէև կրկին փորձեր եղաւ ընկերութիւնը վերակազմելու համար, բայց ապարդիւն անցան, շնորհիւ այն հանգամանքի, որ Փայաջուկը աւելի քան միւս գիւղերը զուրկ է երիտասարդ ոյժերից. ամբողջ երիտասարդութիւնը օտարութեան մէջ է գտնուում:

*) Փայաջուկը Բաֆֆիի ծննդավայր զիւղն է. այժմ այդ գիւղում մնում է Բաֆֆիենց տունը, որ չալտնի է գիւղում «Միրզանց տուն» անունով: Այն սենեակը, ուր Բաֆֆին ապրում էր, մնում է մինչև այժմ, թէև ներսից մի քանի տեղ պատերն ու առաստաղը պատառոտուել են: Սենեակի պատերը սպիտակ ծեփով ներկուած են և զարդարուած են արևելեան-պարսկական գոյնի և ճաշակի ծաղկանկարներով և պատերի մէջ ամրացած փոքրիկ հայելիների կտորներով: Առաստաղի կենտրոնում նոյնպէս ամրացած է մի մեծ հայելի, շրջապատուած կաճեալ քանդակներով: Սենեակի արևելեան պատի վրայ բացուած են երկու պատուհաններ, որոնց վերևի կիսակամարած մասը զարդարուած է գոյնզգոյն և զանազանաձև ապակիների կտորներով: Սենեակի մի անկիւնում դրուած է այն փոքրիկ, ցածրիկ, հնամաշ և հնաձև քառանկիւնի սեղանը, որի վրայ աշխատելիս է եղել ինքը Բաֆֆին: Սենեակի հիւսիսային պատից կախուած է տ. Բաֆֆիի նկարել տուած Խրիմեան Հայրիկի և Բաֆֆիի նկարը մի թերթի վրայ: Սենեակի արևելեան պատի առաջ շինուած է մի փոքր պատշգամբ. պատշգամբի առաջ, բակի կենտրոնում կայ մի զեղեցիկ պարտէզ-ծաղկանոց, որի արևելեան գոյնի բազմազան ծաղիկները ամառը զարդարում են պատշգամբը և սենեակի պատը:

Այժմ կենդանի մնում է Բաֆֆիի ծերունի մայրը, երկու եղբայրները և ինն քոյրերը: Բաֆֆիենց տներն ու կալուածները կամաց-կամաց ուրիշների սեփականութիւն են դառնում...

Գրադարան-ընթերցարան կայ նաև Մահլամ գիւղում, ուր թէև գրադարանից օգտուողների թիւն աւելի մեծ է քան միւս գիւղերում, բայց որովհետև տեղացիների մէջ չը կայ դեկավարող ոյժ, այդ պատճառով էլ գրադարանը անխնամ վիճակի մէջ է գտնուում:

Ընդհանրապէս Սալմաստի գրադարան-ընթերցարանները դեռ եւ շատ քիչ յաճախորդներ ունեն, չնորհիւ այն հանգամանքի որ ընթերցասիրութիւն չը կայ այնտեղ:

Սալմաստում երբեմն-երբեմն ուսուցիչներն նախաձեռնութեամբ և սիրողների մասնակցութեամբ ներկայացումներ տրուել են: Այդ նպատակով 1894 թուին առաջին անգամ Հաֆթուսում Մ. Աւետիսեանի ջանքերով շինուեց բաւական ընդարձակ թափերասրահ: Փայաջուկում առաջնորդարան կոչուած հին և խարխուլ շէնքի սենեակներից մէկը ծառայում է իբրև դահլիճ ներկայացումների համար: Իսկ Ղալասար գիւղում անցեալ 1900 թուի ամիսներ, ուսուցիչ պ. Ս. Թադէոսեանի անխոնջ աշխատութեամբ շինուեց մի կանոնաւոր դահլիճ:

Ե

Սալմաստի հայերի բարքը.—Նրանց վերաբերումը դէպի գաղթականները, երիտասարդութիւնը, ընտանեկան դաստիարակութիւնը.—Սալմաստեցու ֆիզիկականը.—Հիւանդութիւններ, ամուսնութիւնը.—Սալմաստեցի հայուհու դիրքը.—Սալմաստի հայաբնակ գիւղերի ձևը:

Սալմաստի հայերը ոչ միայն տնտեսապէս, այլ բարոյապէս էլ յետադիմել են, վարք ու բարքերը Սալմաստում փոխուել, այլանդակուել են: «Ժամանակը շատ է վատացել, դանդաղուում է սալմաստեցին, առաջուայ ժամանակները մեր մէջ հասարակական կեանք կար, փոխադարձ վստահութիւնը, սէրը տիրում էր մեր մէջ. եթէ մէկին մի դժբախտութիւն պատահէր, ամբողջ գիւղը կը ցաւակցէր, եթէ մի վտանգ էր սպսոնում մէկին, ամբողջ գիւղը մասնակցում էր. Զրօրհնէքի, Զատիի տօներին, ամբողջ գիւղի տղամարդիկը միասին հաւաքուած սկսում էին գիւղի մի ծայրից միւս ծայրը, առանց աղքատ-հարուստի խտրութեան, շնորհաւորելու զնալ: Իսկ այժմ.—«Այժմ Աստուած ազատի. որդին իր հօրն ուրանում է, հարևանը հարևանի հետ ուղիղ չէ խօսում, աղքատական աղքատների հետ թշնամացել է, գիւղ գիւղի հետ խռով է, մէկի ցաւը միւսին ուրախութիւն է պատճառում»: Դա դառն իրականութիւն է որ սալմաստեցին խոստովանում է: Օտարագնացութիւնը, տնտեսական դրութեան հետզհետէ տագնապալի կերպարանք ստանալը, պարսիկ պաշ-

տօնեաների ճնշումները մի խումբ դրսեցիների գործ դրած վայրագութիւնները սալմաստեցի հայի բարքերը փոխեցին, նրան յուսահատեցրին:

Սակայն Սալմաստի հայը զուրկ չէ առաքինութիւններից. նա եղբայրսիրութեան սքանչելի օրինակ տուեց Վասպուրականի վերջին սարսափների ժամանակ երբ մի քանի հազար սովալըլուկ գաղթականներ մերկ ու սոված Սալմաստ թափուեցին: Դա այն ժամանակներն էին, երբ մի կողմից պարսիկ պաշտօնեաները գաղթականների պատրուակով հազարներով փող էին կորզում Սալմաստի հայերից, իսկ միւս կողմից հացի արտատուոր թանգութիւնը ստիպում էր նրանց իրանց տները, արտերը գրաւ դնել, կահ-կարասիներ ծախել՝ քաղցից ազատուելու համար: Ահա այդ յուսահատեցնող պայմանների մէջ նրանք առանց թմբուկի, առանց լրագիրների էջերում իրանց անունը անմահացնելու, հնարաւոր եղածի չափ պատապարեցին հալածականներին. հաց տուին նրանց, տեղ տուին այդ թշուառականներին...

Սալմաստում բառի բուն նշանակութեամբ երիտասարդութիւն չը կայ, որովհետեւ պանդխտութիւնը լափում է Սալմաստի ամբողջ երիտասարդութիւնը: Գիւղից գիւղ շրջելիս դուք բացի կանանցից, ծերերից ու մանուկներից մի քանի գաղթական երիտասարդների կարող էք տեսնել:

Սալմաստեցին ֆիզիկապէս պնդակազմ է, սակայն պանդխտութիւնը հետզհետէ Սալմաստում մտցնում է սերունդ այլանդակող ակտեր և հիւանդութիւններ:

Մանուկների մէջ զանազան հիւանդութիւններ—տիֆ, դիֆտերիա, ինֆլուէնցա, ծաղիկ, կարմրուկ յաճախ են պատահում և մեծամեծ զոհեր տանում չնորհիւ այն հանգամանքին, որ Սալմաստում ներկայումս չը կան բժիշկներ, դեղատուն:

Ամուսնութիւն Սալմաստում շատ է կատարուում: 15—20 տարին տղամարդի ամուսնութեան ժամանակ է համարում. իսկ աղջկանց՝ 11—15 տարին: Սալմաստեցուն եթէ ասէք որ տղային կամ աղջիկներին չուտ էք ամուսնացնում, նրանք ձեզ կը պատասխանեն՝ «Ո՛չ, մեղանում թէ տղան և թէ աղջիկը չուտ են համուում»:

Խիստ տխուր պատկեր է ներկայացնում ընտանեկան դատարարակութիւնը Սալմաստում: Թոթովախօս մանուկի «նախկին խօսքը»-ծնողներին հայհոյելն է: 6—7 տարեկան մանուկը պղծալիկ գող է, ճարպիկ ստախօս և հմուտ հոյհոյող: 10 տարեկան մանուկը՝ աղուէսի պէս խորամանկ: Իսկ 15 տարեկան պատահին հետաքրքրութեամբ մի ինչ-որ բան է փնտռում աղբիւրից

ջուր կրող հարսի իւրփանգի (երեսի քողի) տակ: Եւ այդ վատ յատկութիւնները մանուկի բնաւորութեան մէջ մտնում, արմատանում են շնորհիւ ընտանեկան կոպիտ բարքերի և փողոցային կեանքի: Սալմաստեցի մանուկը օժտուած է մտաւոր ընդունակութիւններով, սաստիկ սրամիտ է, արագ ըմբռնողութիւն և նուրբ երեակայութիւն ունի նա: Բայց այդ ընդունակութիւնները կրթութեան ու դաստիարակութեան բացակայութեան պատճառով կամ մեռնում են սալմաստեցու մէջ կամ զարգանում են ոչ ցանկալի ուղղութեամբ:

Սալմաստի հայուհին համարեա նոյն գիրքն ունի և նոյն իրաւունքն է վայելում ընտանեկան և հասարակական շրջանում, ինչպէս հայ կանանց մեծագոյն մասը Հայաստանում:

Մի կողմից պարսկական-հարէմական կեանքի պայմաններն ստիպում են սալմաստեցի հայուհուն խիստ փակուած կեանք վարել և սահմանափակ իրաւունքներ վայելել, իսկ միւս կողմից տան տղամարդու տարիներով տանից բացակայ մնալու հանգամանքը ստիպում է նրան որոշ չափով ազատութիւն վալել: Նա կարող է գիւղից գիւղ գնալ, քաղաքում առևտուր անել, անհրաժեշտ դէպքերում դատարան գնալ, այգին կամ արտը մշակելու համար գործաւորներ վարձել, նրանց կառավարել և այլն: Խիստ փակ կեանք վարելու ստիպուած են հարուստ դասակարգի կանայք, որոնք համարա թէ գիշեր-ցերեկ փակուած են մնում իրանց տներում: Պանդխտութեան շնորհիւ, հետզհետէ անբարոյականութիւնը կանանց մէջ ընդարձակ ծաւալ է ստանում:

Սալմաստի հայաբնակ գիւղերն անհամեմատ գեղեցիկ են, քան Անդրկովկասի հայաբնակ գիւղերը *): Տներն ձեր՝ բարձր, ընդհանրապէս երկյարկանի: Բազերում կան ծաղկանոյներ և պարտէզներ: Տները թէև արտաքուստ առանձին չքեղութիւնից զուրկ են—այդպէս է ամբողջ Պարսկաստանում—բայց ներսից աչքի են ընկնում իրանց մաքրութեամբ և արեւելեան ճաշակի զարդարանքներով: Փողոցները թէև բաւական կանոնաւոր և լայն են, բայց մաքուր չեն, մանաւանդ գիւղի շրջակայքը, ուր կուտակում են անասունների աղբը և զանազան կեղտոտութիւններ (տարին մի անգամ մաքրում են այդ կեղտոտու-

*) Եթէ դուք նախ անցնէք Շարուր-Գարալագեազի գիւղերից, որոնց բնակիչները սալմաստեցի գաղթականներ են, և ապա Սալմաստի հայաբնակ գիւղերը մոնէք, կը տեսնէք որ վերջիները առաջինների նկատմամբ քաղաքներ են, չը նայած որ 70 տարի է լինում ինչ Սալմաստի գաղթականները բնակութիւն են հաստատել իրանց այդ գաղթավայրում:

թիւները և փոխադրում են արտերը: Գիւղերը շրջապատուած են այգիներով և անտառներով, որոնք զարնան կամ ամրան ժամանակը գեղեցիկ տեսք են տալիս Սալմաստի գիւղերին:

Ահա մոռացուած Սալմաստի ներկայ վիճակը: Դա հայաբնակ մի անկիւն է, ուր հմուտ և լուրջ գործիչների համար լայն ասպարէզ է բացուած:

ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Բ Օ Լ Է Ս

(Գորկիյի)

Մի օր ծանօթներէցս մէկը ահա թէ ինչ պատմեց ինձ.

—«Մոսկուայում ուսանող եղածս ժամանակ աշնպէս պատահեց որ ես դրացի եղայ... «նրանցից» մէկի հետ:

Նա լեհուի էր, անունը Թերեզա: Մի բարձրահասակ կին էր՝ թխահեր, սև-սև, ծայրերը միացած յօնքերով, մեծ, կոպիտ երեսով, որ կարծես կացնով կտրած լինէր: Նա ինձ սարսափեցնում էր իր մթադոյն աչքերի անասնական փայլով, թանձր ու զօրեղ ձայնով, կառապանի ձևերով ու չուկայի վաճառական կնոջ յատուկ ահագին կազմուածքով...

Ես ապրում էի վերնայարկում. նրա դուռը ուղիղ իմ դռան դիմացն էր: Երբեմն պատահում էր, որ դուռս ամենևին բաց չէի անում, երբ իմանում էի թէ նա տանն է: Բայց այդ, ի հարկէ, շատ սակաւ էր պատահում: Երբեմն էլ պատահում էր որ մենք հանդիպում էինք իրար դուրսը, սանդուխտների վրայ, և նա ժպտում էր երեսիս աշնպիսի ժպիտով, որ ինձ գիշատիչ ու ցինիկ էր թւում: Շատ անգամ տեսնում էի նրան հարբած, բուի աչքերով և զրդ-զրդուած մազերով: Նա ծիծաղում էր մի տեսակ անճոռնի կերպով... Այդպիսի դէպքերում նա ինձ ասում էր՝

«Բ՛արով ձեզ, պարոն ուսանող», ու սկսում էր յիմարաբար քրքրալ և դրանով իմ զգուանքն աւելացնել դէպի իրան:

Անշուշտ ես կը հեռանայի բնակարանիցս, որպէս զի ազատուէի այդ հանդիպումներից ու ողջուններից, եթէ բնակարանս մի շատ գողտրիկ սենեակ չը լինէր. նրա լուսամտից բացւում էր մի ընդարձակ տեսարան ու անշափ էլ հանդարտ փողոցի վրայ էր, ուստի ես էլ համբերում էի:

Մի առաւօտ էլ, երբ դեռ անկողնումս, մէջքիս վրայ պառկած, միտք էի անում, թէ ինչ մի հիմնաւոր պատճառ գտնեմ դասախօսութեան չը գնալուս համար, մէկ էլ յանկարծ դուռս բացուեց և չէմքում երևաց այդ անտանելի Թերեզան ու արտասանեց իր բամբ ձայնով.

—Բարով ձեզ, պարոն ուսանող:

—Ի՞նչ էք կամենում, ասացի: Նա չփոթուած էր երևում ու մի տեսակ աղաչական կերպարանք ունէր, մի բան՝ որ շատ էլ սովորական չէր նրա դէմքի համար:

—Գիտէ՞ք ինչ, պարոն, ես պէտք է մի բան խնդրեմ ձեզանից, ու յատուկ խնդրում եմ որ չը մերժէք այդ լաւութիւնն անել ինձ:

Ես պառկած, ձայն չեմ հանում ու մոտժում եմ.

«Այ դու խորամանկ... անշուշտ այդ մի փորձ է իմ անմեղութեան դէմ, ո՛չ աւել և ո՛չ պակաս»:

«Պի՛նդ կաց, Եգօր», ինքս ինձ սիրտ տուի ու հարցական կերպով նայեցի նրա երեսին:

—Գիտէ՞ք, ես պէտք է մի նամակ ուղարկեմ իմ հայրենիք, ասում է նա շատ աղաչաւոր, հանդարտ և երկչոտութեամբ:

«Է՛հ, սատանան տանի քեզ, համեցէք», ասացի մտքումս, ու վեր կացայ նստեցի սեղանիս մօտ, վերցրի թուղթ ու գրիչ և գիմեցի նրան.

—Եկէ՛ք, այստեղ նստեցէք և ասացէ՛ք թէ ի՛նչ պէտք է գրեմ:

Նա զգուշութեամբ ներս եկաւ, նստեց ցոյց տուածս արժուի վրայ ու մեղաւորի պէս նայեց երեսիս:

—Դէ՛հ, ասացէ՛ք, ո՛ւմ պէտք է գրեմ:

«Վարչապայի ճանապարհի վրայ, Սվենցեհանի քաղաք, Բօլէսլաւ Կաշպուտին»...

—Յետո՛յ, ասացէ՛ք:

«Սիւրելիդ իմ Բօլէս... իմ հոգեակ, իմ հաւատարիմ սիրեցեալ... Թո՛ղ Մարիամ Աստուածածինը պահէ ու պահպանէ քեզ: Իմ ոսկէ հոգեակ, ինչո՞ւ այսքան երկար ժամանակ չեմ գրում քո վշտահար աղաւնեակ թերեզային»:

Քիչ մնաց որ փոթկացնէի: «Վշտահար աղաւնեակ»... Էլ ի՛նչ ասել կ'ուզի: Ահագին հասակով, փթմնոց բռնցքով ու այնպիսի սև ուսիով, որ կարծես աղաւնեակը իր ողջ կեանքում չարունակ ծխնելոյզ մաքրելիս է եղել ու ոչ մի անգամ ջրի երես չի տեսել: Մի կերպ զսպելով ինձ, ծիծաղս պահեցի ու հարցրի.

—Ո՞վ է այդ Բօլէստը:

—Բօլէս, պարոն ուսանող, Բօլէս:

Կարծես նա վշտացաւ որ ես սխալ ասացի իր սիրեցեալի անունը:

—Բօլէսը իմ փեսացուն է...

—Փեսացո՛ւ:

—Սակայն ինչու է գարմանում պարոնը: Միթէ աղջիկ տեղովս չեմ կարող ես ես փեսացու ունենալ:

«Նա՛, աղջիկ»... Հրաշալի է...

—Օ՛, ինչու չէ, ասացի. ամեն ինչ կարող է պատահել: Իսկ վաղուց է որ նա ձեր փեսացուն է:

—Վեցերորդ տարին է:

«Օհ՛», ասացի մտքիս մէջ: Վերջապէս մենք նամակը գրեցինք այնպէս՝ դու ես իմ պարոն, քնքոյշ ե սիրալիր, որ ես ինքս էլ կը փափագէի Բօլէսի տեղը լինել, բայց միայն այն պայմանով, որ թղթակիցը լինէր ոչ թէ Թերեզան, այլ մի ուրիշը, նրանից մի քիչ նրբակազմը:

—Սրտանց շնորհակալ եմ ձեզանից, պարոն, ձեր քաջածնեղութեան համար, ասաց ինձ Թերեզան զուլիս տալով: Կարելի է ես ես կարող եմ մի բանով օգտակար լինել ձեզ:

—Ո՛չ, շատ շնորհակալ եմ:

—Բայց կարելի է պարոնի շապիկը կամ վարտիքը հարկաւոր է կարկատել:

Զգացի որ այդ շրջագգեստով մասսօդօնտը ստիպեց ինձ կարմրել, ուստի ես բաւական կոպտութեամբ յայտնեցի, թէ կարիք չունեմ նրա ծառայութեան:

Նա դուրս գնաց:

Անցաւ մի երկու շաբաթ: Մի երեկոյ լուսամտիս առաջ նստած, չըւշըւացնում էի, աշխատելով մի կերպ սթափուել ինքս ինձանից: Տխուր էի շատ, իսկ եղանակն անտանելի, ուրիշ տեղ գնալ էլ չէի ուզում: Յիշում եմ, տխրութիւնից ես էլ սկսեցի ինքս ինձ վերլուծել: Այդ ես բաւական տխուր էր, բայց ուրիշ ոչինչ չէի ուզում անել: Եւ մէկ էլ յանկարծ բացուեց սենեակիս դուռը... «Փառք Աստուծոյ, մարդ եկաւ», անցաւ մտքովս...

—Պարոն ուսանողը հօ որեւէ չտապով գործ չունէ:

Թերեզան է, հը՛:

—Ո՛չ, ինչ է որ:

—Կը կամենայի խնդրել պարոնին՝ էլի մի նամակ գրել:

—Համեցէք: Բօլէսի՛ն:

—Ո՛չ, այժմ նրա կողմից:

—Ի՞նչ:

—Օ՛, ես յիմարս. ներկեք, պարոն, ես այն չասացի, ինչ որ պէտք էր: Հարկաւոր է այժմ գրել ոչ թէ ինձ, այլ մի ընկերուհու... այսինքն ոչ թէ ընկերուհուս, այլ մի ծանօթիս: Նա ինքը չէ գրում, բայց նա ունէ մի հարսնացու, ինչպէս ես ինքս: Ուրեմն կարելի է արդեօք, պարոն, որ մի նամակ գրէք Թերեզին:

Նայում եմ նրան. դէմքն էլի այլայլուած է, մատները դուռում են, կարծես մի բանից չփոթւում է... Ինձ թուաց թէ ես զլիւի ընկայ:

—Գիտէ՞ք ինչ, տիկին, ասում եմ, ոչ մի Բօլէս ու Թերեզա չը կայ, այդ բոլորը դուք սուտ էք ասում: Խնդրեմ ինձ մի քսմսուէք, ես չէի կամենայ ձեզ հետ մտերմանալ... Հասկացա՞ք:

Նա յանկայծ մի տեսակ վախեց, մոլորուածի պէս տեղն ու տեղը մնաց մխտում կանգնած. սկսեց մի տեսակ ծիծաղելի կերպով չփշիփացնել չրթունքներով, կամենալով մի բան ասել, բայց ոչինչ չասաց: Սպասում եմ թէ վերջը ինչ է լինելու, և տեսնում եմ ու զգում, որ կարծես ես մի քիչ սխալուել եմ՝ կասկածելով նրա մասին, թէ նա ցանկանում է ինձ ուղիղ ճանապարհից չեղել: Թւում էր որ այդտեղ ուրիշ բան կար...

—Պարոն ուսանող,—սկսեց նա, և յանկարծ ձեռքը թափ տալով, շտապով դարձաւ դէպի դուռը և դուրս գնաց:

Ես մնացի անտանելի զգացմունքի տակ: Լսեցի թէ ինչպէս նրա դուռը չըխկալով փակուեց. երևում էր որ բարկացել էր գիրուկ կիներ: Մտածեցի ու վճռեցի գնալ մօտը և գրել նրա համար, ինչ որ պէտք է: Մտայ նախասենեակը. նա նստած էր սեղանի առաջ ու յենուելով նրան, սեղմել էր ձեռքերով գլուխը...

—Լսեցէք, ասում եմ...

Ահա միշտ էլ այսպէս, երբ ես սկսում եմ այս պատմութիւնը ու հասնում եմ հէնց այս տեղին, սարսափելի անհեթեթ բան եմ զգում... Է՛հ, յիմարութիւն...

—Լսեցէք, ասում եմ:

Նա տեղից վեր թռաւ, եկաւ դէպի ինձ, աչքերը չռած, ձեռքը զրեց ուսիս ու չչնջաց, աւելի ճիշտն ասած՝ բռնացրեց իր կոպիտ ձյնով:

—Հա, ինչ է, հը... Լաւ, չը կայ ոչ մի Բօլէս. Թերեզա ես չը կայ. սակայն ձեզ ինչ... Միթէ ձեզ համար դժուար է գրիչը տանել-բերել թղթի վրայ, հը... Ա՛խ, դուք, և այն էլ այդպէս քնքոյշ տեղովդ... Ոչ ոք չը կայ—ոչ Բօլէս և ոչ Թերեզա. մենակ ես եմ ու կամ... Դէհ, էլ ուրիշ ինչ, հը...

—Թոյլ տուէք, ասում եմ, բոլորովին շուարած այդ ընդունելութիւնից,—ուզածդ ինչ է: Ասում էք Բօլէս չկայ...

—Այո, չը կայ. յետոյ:

—Թերեզա էլ չը կայ:

—Թերեզան էլ չը կայ. ես եմ Թերեզան:

Ոչինչ չը հասկացայ. չռած աչքերով ուշադրութեամբ նայեցի նրա երեսին՝ արդեօք մեղանից ո՞վ է ցնդուածը: Նա

նորից սեղանին մօտենալով, սկսեց բան որոնել նրա վրայ ուսալա գալով դէպի ինձ ասաց.

—Եթէ ձեզ համար այդքան դժուար էր Բօլէսին գրելը, այն ժամանակ վերցրէք ձեր գրածը, ինձ համար ուրիշներն էլ կը գրեն:

Տեսնում եմ ձեռքին Բօլէսին գրածս նամակը... Փն...

—Լսեցէք, Թերեզա. ինչ է նշանակում այս ամենը: Էլ ինչ հարկաւոր է որ ուրիշները գրեն ձեզ համար, քանի որ գրածս դեռ չէք ուղարկել:

—Ո՞ւմ:

—Բօլէսին:

—Բայց նա չը կայ:

Բոլորովին բան չը հասկացայ: Մնում էր միայն թքել և դուրս գալ:

Բայց նա սկսեց բացատրել.

—Հն, ինչ է, շարունակեց նեղացած.—նա չը կայ. ինչ արած, չը կայ,—և ձեռքով շարժում գործեց օդում, կարծես ինքն էլ չը հասկանալով, թէ ինչո՞ւ նա չը կայ,—բայց ես ուզում եմ որ նա լինի... Միթէ ես էլ այնպիսի մարդ չեմ, ինչպէս ուրիշները: Ի հարկէ ես... Ես գիտեմ որ ոչ ոքի չեմ վնասում, եթէ նրան գրում եմ...

—Բայց ասացէ՛ք՝ ո՞ւմ:

—Բօլէսին...

—Բայց չէ՞ որ նա չը կայ:

—Ա՛խ, Տէր իմ Աստուած. լնւ, ինչ անենք որ չը կայ... Այո՛, չը կայ, բայց այնպէս ենթադրենք, որպէս թէ կայ... Ես նրան գրում եմ և դուրս է գալիս, որ նա էլ կայ... Իսկ Թերեզան—ես եմ, և նա պատասխանում է, իսկ ես նորից նրան...

Ես նոր հասկացայ, թէ բանն ինչու՞մն է, և այդ շատ մեծ ցաւ պատճառեց ինձ. սաստիկ ամօթ դգացի... Իմ կշտիս, երեք քայլ ինձանից հեռու ապրելիս է եղել մի մարդ, որ ոչ ոք չուէ աշխարհիս երեսին, որպէս զի սիրով վերաբերուի նրան, սրտագին լինի հետը, և այդ մարդը իր համար ընկեր է ստեղծել երևակայութեան մէջ...

—Ա՛յ, դուք ինձ համար նամակ գրեցիք Բօլէսին և իսկ ես ուրիշին կարդալ տուի. երբ կարդում էին մօտս և ես լսում էի, կարծում էի, թէ Բօլէսը կայ, և յետոյ խնդրում էի գրել Բօլէսից Թերեզին, այսինքն ինձ: Երբ այդպիսի մի նամակ գրում են ինձ և ես կարդալ եմ տալիս ու լսում, այն ժամանակ բոլորովին հաւատացած եմ լինում, թէ Բօլէսը կայ, և այդ բանից սիրտս թեթևութիւն է զգում:

Ահա, այդ տարօրինակ դէպքից յետոյ ամենայն ճշտութեամբ շարաթը երկու անգամ նամակ էի գրում՝ մէկը Բօլիսին, իսկ միւսը՝ իբրեւ Բօլէսից պատասխան թերեզին: Այնպէս լաւ էին դուրս գալիս այդ նամակները, որ շատ անգամ նրանց ընթերցանութիւնը լսելիս, թերեզան սկսում էր բարձրաձայն հնկնկալ: Եւ որովհետեւ ես նրա աչքերից արտասուք էի թափել տալիս իմ գրած նամակներով՝ երեսկայտկան Բօլէսից իրան, նա էլ դրա փոխարէն գուլբաներիս ծակերն էր լքողում, մաշուած սպիտակեղէնս կարկատում: Այդ դէպքից երեք ամիս անցած մի ինչ-որ բանի համար նրան բանտարկեցին: Երեւի խեղճ կինը հիմա մեռած կը լինի...»:

Ծանօթս թափ տուեց ծխախոտից մոխիրը, մտախոհութեամբ նայեց երկնքին և այսպէս վերջացրեց.

—«Այո, մարդ որքան աւելի է ճաշակում դառնութեան բաժակից, այնքան նա աւելի ազահաբար է պապակում քաղցրութեան: Բայց մենք այդ չենք հասկանում, այլ զարդարուած մեր հնացած առաքինութիւններով, նայում ենք ինքնահաւանութեամբ և համոզուած ենք, թէ մենք մի-մի անսխալականներ ենք... Դուրս է գալիս բաւական յիմար և... շատ անգութ բան... Թէ ինչ է, նրանք բարոյապէս ընկած մարդիկ են... Բայց ի՞նչ է նշանակում՝ բարոյապէս ընկած մարդիկ: Նախ և առաջ հօ մարդիկ են. ունեն միևնոյն ոսկրը, արիւնը, միևնոյն միսը և միևնոյն նեարդերը, ինչ որ մենք: Այդ բանը վկայում են ամբողջ դարեր ամեն Աստծու օր: Իսկ մենք լսում ենք և... սատանան գիտէ թէ ի՞նչ անհեթեթութիւն է մեր արածը: Կամ ո՞վ իմանայ, գուցէ արդէն բոլորովին լալացել ենք մարդասիրութեան մեծագոյ Քարոզից... Այն ինչ իսկապէս մենք ինքներս էլ բարոյապէս ընկածներ ենք և գուցէ դեռ աւելի ևս ցած ընկած... ամեն տեսակ մեծամտութեան արտի անդունդի մէջ, իսկ կարծում ենք թէ մեր նեարդերն ու մեր ուղեղը աւելի գերազանց են, քան այն մարդկանցը, որոնք աւելի պակաս խորամանկ են մեղանից, որոնք չեն կարողանում աւելի լաւ յոյց տալ իրանց, քան թէ մենք ենք ցոյց տալիս մեր... չունեցած արժանաւորութիւնները... Է՛հ, ինչ և է, այս մասին այսքան էլ հերքէր: Եւ այս ամենը այնքան հին է, որ նորից ու նորից այդ մասին խօսելիս, մարդ ամօթ էլ է զգում: Շատ հին երգ է, այո՞...»

ԵՒԳԵՆԻՍ ԿՐ.—ԵԱՆ

ՄԵՐ ԿԱՆԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեղանում թէ վիճակագրական տեղեկութիւններ պակասում են և թէ առանձին ուսումնասիրութիւններ չը կան, որոնց վրայ հիմնուելով կարելի լինի ճիշտ և բազմակողմանի կերպով լուսաբանել մեր կանանց բարքը և դրութիւնը: Չը նայելով դրան, այնուամենայնիւ աւելորդ չեմ համարում զոնէ իմ դիտողութիւններս ի նկատի ունենալ և միայն որոշ տեղերում երևացող պակաս կողմերի վրայ մատնացոյց անել:

Միթէ իսկապէս ներկայ հայ կինը մեր վէպերի մէջ դուրս բերած մաքուր, անարատ, համեստ, ընտանեկան օջաղի սրբութիւնը ճանաչող և նահապետական պարզ դրութեան մէջ ապրող մի իդէալական էակ է: Միթէ իրօք նա իր ամուսնու հաւատարիմ ընկերակիցն է և հասարակական փոքրիկ կեանքի մէջ դաստիարակիչ, բարոյական ազդեցութիւն թողնողն է: Դժբախտաբար իմ տեսածն ու լսածը այդ մասին այնչափ էլ միութարական չեն: Ինձ պատահել են անձնաւորութիւններ, որոնք հայ կնոջ ընկած դրութեան, նրա անհաւատարմութեան մասին լսել անգամ չեն ուզեցել: Երբ մենք էլ, ինչպէս եւրոպացիները, ամեն տեղի մասին կանոնաւոր, ուսումնասիրած տեղեկութիւններ, վիճակագրութիւններ ունենանք, ահա այն ժամանակ մեր առաջ զտնուած երևակայական պատկերը տեղի կը տայ իրականին՝ իր լաւ և սղեղ կողմերով:

Ինձ շատ անգամ պատահել է այս կամ այն դաւառական թղթակցի հետ խօսել, թէ ինչո՞ւ ապա մեր կեանքի այդ պակասաւոր փաստերի մասին չեն հաղորդում, և իրբն պատասխան լսել եմ որ նրանք այդ ամենը լոյս աշխարհ չեն ուզում բերել միմիայն այն պատճառով, որ իրանք ևս չըձապատող ժողովրդի նման են դատում: «Ի՞նչ օգուտ զգուկի դէպքեր առաջ բերելուց, այդպիսի փաստերը ժողովրդի վրայ վատ տպաւորութիւն կը թողնեն, նրանց աւելի կը փչացնեն և աչքերը կը բանան», առարկում են նրանք: Այսպիսով ախտը ծածկելով, քանի գնում մեծա-

նուժ, նեխուում է և մի օր էլ ամբողջ մարմնի համար վարակիչ դառնում: Պէտք է մերկայնել մեր հասարակական ախտերը, պէտք է քննել նրանց պատճառները և միայն այն ժամանակ կարելի կը լինի բուժել նրանց:

Մեր կանանց դրութեան պակասաւոր կողմերի մասին ես կ'ուզենայի խօսել, իբրև օրինակ վեր առնելով Շիրակի, Ղարսի, ԼՂմիածնի գաւառի և Ապարանի գիւղերը, որոնցով ես առանձնապէս հետաքրքրուել եմ:

Ի՞նչ կը տեսնենք այդ տեղերում:

Գնում էք գիւղ, ապրում էք մի երկու շաբաթ. ձեր առաջ բացւում է մաքուր, համեստ գեղջկուհու պատկերը: Դուք այնտեղ այդ ժամանակամիջոցում ոչ մի առանձին բան չէք կարող նկատել, բայց եթէ պատահի մի հարսի, մի կնոջ խեթ աչքով նայել, այն ժամանակ վայն եկել ձեզ տարել է: Մէկ էլ տեսաք կատաղած գիւղացիք բահերով, թառերով, մահալներով ձեզ վրայ յարձակուելին և ջարդ ու փշուր արին: Մարդ այդ ժամանակ կամայ-ականայ համոզւում է, որ ընտանեկան պատիւը, կնոջ կապը ամուսնու հետ՝ հաստատ և անխզելի է:

Բայց դժբախտաբար սա երևոյթի միայն արտաքին կողմն է. վեր առէք նրա ներքին կողմը ծածկող քօղը և ձեր առաջ կը գան թագնուած վէրքերը:

Փորձեցէք միևնոյն տեղում մի քանի ամիս ապրել, ծանօթացէք որոշ պառաւ կանանց և տղամարդկանց հետ, այն ժամանակ էլ ինչեր չէք լսիլ, էլ ինչեր չէք կարող անել նոյն իսկ մի փոքրիկ, մի քանի կողէկ արժող ընծայով... Մօտեցէք գիւղերում պտտուող չարչիներին (մանրավաճառներ), նրանք ձեզ դրօշկան կերպով կ'ասեն թէ որ հարսը, որ կինը վաճառում է իր մարմինը այս կամ այն միջնորդ կնոջ օգնութեամբ: Մի քանի գիւղացի կանայք և երիտասարդներ ինձ հաստատում էին, որ Շիրակի բաղմաթիւ գիւղերում համարեա չէ կարելի իր ամուսնուն հաւատարիմ կին գտնել. նրանք ամենքն էլ սիրեկաններ ունեն: Ամուսիններից թագուն իրանց զգայմունքները յայտնելու համար դրանք հարսանիքներում, պար, եայլի խաղալիս, ուրախութեան ժամանակ առիթ են գտնում իրանց հայեացքներով, աչքերի շարժումով, պարելիս՝ ձեռքերի, ոտքերի սեղմիլով, մէկմէկու հասկացնել իրանց ցանկութիւնները: Ինչ ասել կ'ուզի որ այդ գաղտնիքը բացուելով նախանձոտ ամուսինների մէջ գժտութեան պատճառ է դառնում: Մէկ էլ տեսար կինը մարդու հարուածների տակ ջարդ ու փշուր եղաւ կամ թէ կինը չը կարողանալով տանել մարդու անհաւատարմութիւնը, բացարձակ կերպով հեռանում է օրինաւոր ամուսնուց և գիւղի իշխանի,

հարստի կամ ազդեցիկ մարդու հետ որպէս սիրուհի՝ նրա օրինաւոր կնոջ մօտ ապրում և մեծամեծ դժուարութիւնների ու դանդաւանների տեղիք տալիս: Այսպիսի դէպքեր դժբախտաբար Շիրակի գիւղերում քիչ չեն:

Գիւղերում դուք մի ուրիշ քստմենքի փաստ էլ կը տեսնէք. երբեմն հայրերը կամ տան մեծերը իրանց փոքրահասակ որդիներին պսակում են հասակաւոր աղջիկների հետ (այս պատճառը նրանք բացատրում են աշխատաւոր ձեռք ներս բերելով) և մինչև որդու մեծանալը իրանք են նրա հետ յարաբերութեան մէջ մտնում: Ուրիշները, մանաւանդ գիւղի աւելի ջահէնները, օգտուելով այդ հանգամանքից, նորահարսին միջնորդների միջոցով գրաւում են և օգտուում: Ես չափ անգամ տեսել և լսել եմ պսակուած տղաների մասին, որոնք այնչափ փոքր են, որ իրանց կանանց մօտ չեն ուղում քնել, այլ նրանցից փախչում, մայրերի ծոցն են մտնում և նրանց պաշտպանութիւնը ինդրում: Չը նայելով որ նրանք տղաներին խրատում են, հասկացնում, բայց ի դուր. նրանք զեռ չեն զգում այն սեռական պրզիւր, ինչ յատուկ է հասակաւոր աղջկան: Երբեմն էլ նորահարսն ստիպուած է իր ամուսնու՝ իբրեւ փոքր տղայի շորերը հանել, պառկեցնել, խնամք տանել, որպէս փոքրիկ տղայի վրայ: Ասածներս ապացոյց կարող է ծառայել այն ընդհանուր հրապարակական բողոքը, որ նորահարսները իրաւացի կերպով իրանց ամուսինների դէմ անում են: Որպէս օրինակ առաջ եմ բերում հետեւեալ ժողովրդական երգը.

1. Իմա՛լ էնեմ, իմա՛լ էնեմ (ի՞նչպէս անեմ),
Եար պատիկ ա, շտարել եմ.
Եար մ' ունեմ շատ պուճուր ա,
Ընչուր (մինչև) իրկուն գեղ կը պտտայ: Իմա՛լ էնեմ և ալլն:
2. Ձեղ ի՞նչ բեմ, իմ խէրն ու մէր,
Որ էս պճուկին ընձի չլ տէր.
Վղի վղնոց ինչի՞ս պէտքն էր,
Ծոց մտնելու եար մ' պիտէր: Իմա՛լ էնեմ, իմա՛լ էնեմ,
Սարեր ձորեր մաշուել եմ:
3. Իրկունը բերի գախա (ժամանակ է),
Բերի սաթլ (ամանը), թեխ կախ ա.
Եկան ասին եարոջ մախ ա (մահ է),
Աչքս կուլայ սիրտս ուրախ ա: Իմա՛լ էնեմ և ալլն:
4. Քեղի մեռնեմ խաթուն կեսուր,
Քո ծուռ (ղիժ) լաճին խրատ մի տուր,
Ձերթալ պառկի գոմշի մտուր,
Թըղ գայ պառկի վըր իմ դօշուն,
Երկէն բոյին (հասակին), սիրտակ դօշին ի՞նչ կալ խտուր
(պակասութիւն): Իմա՛լ էնեմ և ալլն:

- Գետուկ ձիւն ա, շուարեւ եմ,
Եար պղտիկ ա, մաշուել եմ: Իմա՞լ էնեմ...
5. Էսօր չիրկուն կիրակմուտ ա,
Մարդ մ' ունեմ խաուտ ճուտ ա,
Տարէք չօղէն, թո՛ղ կուտ ուտայ
Յիրիկունը կը կտկտայ: Իմա՞լ էնեմ...
6. Վզիս վզնոց շնկշնկացնեմ,
Մարդիս քնից զարթեցնեմ
Որ չի կարայ, ես ի՞նչ անեմ,
Եար պղտիկ ա, շուարեւ եմ:
7. Մարդ մ' ունեմ դեղին-մեղին,
Որն օր տեսնայ պատուի լեղին,
Ձեռնէն բռնեմ տամ զրոգին,
Եթամ հասնեմ իմ սիրողին:

Ընթերցողը հայ նորահարսի սրտի բողոքը պարզ տեսնում է. նա գանգատուում է ամուսնու փոքրութեան համար, որ իրանից փոխչում, զոմչի մսուրն է մտնում. նա անիծում է իր ծնողներին, որ իրան ծախել են. նա իր ցաւը յայտնում է սկեսուրին, որ իր գիծ աղային խրատ աայ: Անգամ նրան մահուան բերան է տալիս, գրողին է իր ձեռքով յանձնում, որ իր սիրողին հասնի և այլն: Միթէ սա հարիւրաւոր բողոքները ձայն չէ, որ մէկի բերանով յայտնուած է: Այս երգը ես առաջին անգամ (մի քանի տարի առաջ) Ապարանի գիւղերում լսեցի և այժմ բաւականին տարածուած է և երգւում է:

Սրա հակառակ պատահում են դէպքեր, որ աղջիկը չափազանց փոքր է լինում, կամ նոյն իսկ երկու պսակուածները ես: Յայտնի է, որ կինը իր բնական կոչմանը ծառայելու ժամանակ պէտք է ֆիզիկապէս պատրաստ լինի. իսկ երբ օրգանիզմը այդ կոչման չէ համապատասխանում, այնտեղ առհասարակ ամուսնական բախտը կասկածելի է, որովհետև հիւանդութիւն, դժուար ծննդաբերութիւն, պարբերական ցաւեր, չբերութիւն և այլն խանգարում են կեանքի նպատակն ու ուրախութիւնը: Այս դէպքերն ահա շատ անգամ սուբի կն լինում իրարից սառչելու և շատ անգամ բաժանուելու: «Արարատ» ամսագրի անցեալ տարուայ համարներում գրուեց մի քանի ամուսնալուծութեան մասին. ահա այդպիսի զոյգերից մէկին ես պատահեցի Շուշուայ կոնսիստորում. աղջիկն այնչափ փոքր էր, որ փոխանակ քննիչ հոգևորականի հարցին պատասխանելու, զրաւուեց նրա թեի գունաւոր աստառից և ասում էր. «Ի՞նչ լաւն է, ի՞նչ լաւն է». ապա ուշադրութիւնն ընկնելով փայլուն մոմակալների և լամպայի վրայ, մօտեցաւ նրանց, ձեռք տուեց, հրացաւ և խնդրեց որ իրան տան: «Ի՞նչ պիտի

անև», հարցրեց մէկը. «Կը խաղամ», եղաւ պատասխանը: Խեղճ աղջիկը 10—11 տարեկան էր և ամուսնութեան մասին բոլորովին բան չէր հասկանում: Նոյն երեխայական հասակում էր և տղան: «Ինչո՞ւ պսակեցիր այս երեխաներին», հարցրին պսակող քահանային: «Մեր կողմում բոլորն էլ շուտ են պսակուում, պատասխանեց նա. եկէք քրքրեցէք և կը տեսնէք որ ասածս ճշմարիտ է»:—Չէ որ նրանք ամուսին լինել չեն կարող, հարցրին նրան: «Ճիշտ է, ասում էր նա. բայց մի քանի տարի իրար մօտ կ'ապրեն, կը մեծանան»: Թէ դրանից ինչպիսի չարիքներ կարող է առաջանալ, այդ իւրաքանչիւր ոք կարող է հասկանալ:

Եղբայրների մէջ իրար կնոջ սիրելը նոյնպէս բաւականին տարածուած սովորութիւն է. սրա պատճառը մասամբ իրար հետ մի սենեակում գիշերելու և այլ ընտանեկան նեղ հանգամանքներն են: Եթէ Շիրակի գիւղերը մի կողմ թողնենք, որտեղի բնակիչները քաղաքի մօտ լինելը, երկար ժամանակ զօրք բնակուելը և մի քանի անգամ տեղի ունեցող ոռոս-տաճկական պատերազմը կարող էր նպաստել այդ տգեղ սովորութեանը, և վեր առնենք Ապարանի գիւղերը, այն ժամանակ իսկապէս զարմանալ և ջաւել կարելի է: Մի դաւառ, որ քաղաքներից օրերով հեռու, աշխարհից կտրուած, լեռների մէջ փակուած երկիր է, ահա այստեղ ևս նման փաստեր պակաս չեն: Ինձ հաստատ աղբիւրներից տեղեկացրին, որ ընկած կանայք այնտեղ ևս մեծամասնութիւն են կաղմում: Նոյն գրութիւնը, նոյն սիրողներ ունենալը այստեղ ևս սովորական բաներ են: Հէնց վերջիչեալ «Իմալ էնեմ», «Խանում Եւաջան» շատ տարածուած ժողովրդական երգերը այստեղի ծնունդն են: Ապարանի մի քանի գիւղեր, մանաւանդ Բ.-Ապարանի, Ալիւքիւշակ, Ղարաքիլիսա, Գիւլիջա, Զ—ի, Ղ—ի այլն այնչափ բացուած են և այդ ակտը այնպէս տարածուած է, որ անգամ եւրոպական կեանքի հետ կարելի է համեմատել: Այնտեղ գիշերելիս, շատ անգամ մէկը մօտենում է ձեզ և կին է առաջարկում: Նոյն գիւղերում բանիմաց գիւղացիներից մի քանիսը ինձ հաւաստիացրին, թէ կինը մարդուց, մարդը կնոջից, սիրեկանը սիրուհու ամուսնուց և ընդհակառակն, այնչափ էլ չեն քաշում: Նրանք բացարձակ կերպով այցելում են նրանց, խմում, զուարճանում, քէֆ են անում: Կինը պարծանք է համարում՝ երիտասարդ, դիքը ունեցող մէկին, գիւղի դատաւորին կամ հարուստ մարդու ճանկել և նրանից տարեկան մի քանի ուլբլու հաղուստ, զարգարանք ստանալ: Այդպիսի մարդկանցից մէկը հրապարակով իմ ներկայութեամբ պարծենալով ասում էր. «Կիրակ-

մտին գնացի Տ-ի մօտ, մարդը վրայ եկաւ: Երբ հետաքրքրուեցի թէ ի՞նչ ասաց, նա սառը և հանգիստ կերպով պատասխանեց. «Սկիւ. ասաց՝ տօ շմնորդի, էս օր կիրակմուտ ա, Աստուծուց վախեցէք և մի օր էլ պահեցէք»: Մի քահանայ էլ գինետան դռանը նստած իր նմանների մէջ պարծենալով ասում էր. «Ափսոս, որ միւրուքս շատ ճերմակեց, ընդամենը 40 կնոջ եմ ձեռք գցել, Աստուած ողորմած է, վաթսուների կը հասցնեմ»: Նոյն քահանան իմ ներկայութեամբ հպարտանալով կրկնեց և վատահուլութեամբ ասում էր, թէ երբ ինքը ցանկանայ մէկին հիւրասիրել, այս ինչը կամ այն ինչը երբեք իրան չեն մերժի: Ուրշափ մեծ եղաւ իմ զարմանքը, երբ շատերը այդ հաստատուեցին և փաստերով ապացուցեցին, որ այդ գիւղերում իրանք ամուսինները մարդիկ են զտնում, տանը հիւրասիրում, նրանց հաշուով կնոջ հետ միասին քէֆ անում, ապա բերած հիւրին նրա մօտ թողնելով իրանք հեռանում: Պատահել են բողոքող կանայք ևս և ամուսնուն գանդատուել են, բայց նրանք փոխանակ պաշտպանելու, ասել են. «Ի՞նչ կը լինի որ նրանց հետ էլ լինես. իս չի պակասի»: Մի ուրիշ քահանայ էլ իմ յանդիմանութեան դէմ որպէս պաշտպանութիւն ասում էր ժողովրդի մէջ. «Եթէ վատ բան էր, ապա Աստուած ինչո՞ւ ստեղծեց, ինչո՞ւ թողեց որ քոյր ու եղբայր իրար հետ միանան և սերունդ առաջացնեն. դէհ մենք էլ ուրիշ բան չենք անում և Աստծու դէմ չենք մեղանշում»: Այսպիսի հրէշաւոր փաստեր լիքն են այն կողմերում:

Ես բոլորովին զարմացայ, երբ մի քանի դայեակներից իմացայ, թէ Ղարաբաղի գիւղերում, նոյն իսկ Շուշում կան մարդիկ, որոնք երկու կին ունեն: Երբ իսկական կնոջից որդի չէ լինում, այն ժամանակ ամուսինը իրան իրաւունք է համարում չէնից կամ քաղաքից մի ուրիշ կին բերել, իր ընտանիքում օրինաւոր կնոջ հետ պահել, որդիներ ունենալ նրանից և ապա փող տալով հեռացնել և կամ թէ միշտ պահել: Ներկայումս ձեզ քաղաքում անուանանուն ցոյց կը տան մարդիկ, որոնք այդպէս են ապրում, որդիներ ունեն և կարծես հասարակութեան համար մի սովորական բան է և այդպէս էլ պիտի լինի: Ինչպէս պատմեցի, նորեկ կինը ևս դրա վրայ սովորական կերպով է նայում: Գալիս է, մի օտար մարդու կրքին տարիներով բաւականութիւն է տալիս և վերջն էլ չնչին գումարով վեր է կենում գնում, որդիներից բաժանուում, հեռանում. ի՞նչ կեանք է դա... Օրինական կանայք այս բանին աւելի նախանձախնդիր պիտի լինէին, բայց նրանք էլ ստիպուած՝ անտարբեր աչքով են նայում և կարծես մի տեսակ հաշուում են այն մոգը հետ, թէ ամուլի կանանց հետ այդպէս էլ պիտի վարուեն: Ասիթ է եղել մի երկու

այդպիսի կանանց հարցնել. նրանք երկար ու բարակ չեն խօսում, այլ բաւականանում եմ ասելով. «Մենք ինչ կարող ենք անել, երբ նա (ամուսինը) այդ ուղում է. միթէ կարելի է հակառակուել, մանաւանդ որ որդիքը եկեղեցական կարգով մկրտւում և օրինաւոր ժառանգ են համարւում»։ Բայի զրահից Ղաւրաբաղի, Չանգեղուրի և Ղափանի կողմերում ևս պակաս քստմնելի փաստեր չը կան. ինձ հաստատ աղբիւրները, պատմեցին, թէ Չ. գիւղում մի մարդ իր նորապսակ կնոջը առաջին գիշերուայ համար ծախում է թուրքերին, բայց որովհետև կինը չէ համաձայնում, դրա համար հարազատ ամուսնու ձեռքով սպանւում է։ Չանգեղուրի Այ. գիւղում մի քահանայ երկրորդ կին է պահում և ամեն տեղ սիրուհուն է տիրուհի կոչում և ոչ թէ իր հարազատ կնոջը. միևնոյն գիւղում մի կին իր սիրեկանի հետ գիշերը ամուսնուն խեղդելով ջրհորն են ձգում։ Ի հարկէ յիշեալ յանցաւորները կառավարութեան կողմից իրանց պատիժն ստանում են։ Չանգեղուրի Տ. և Հ. գիւղերում, ամուսնուն հաւատարիմ կին գտնելը հազուադէպ է։ Նոյն դաւառի Ս. գիւղում աղջիկ ծնելիս նրանց բերանները տափին են դնում, տեղաշարժով ծածկում են և այլ սրանց նման բաներ են անում, որ նորածինները խանձուրուրի մէջ խեղդուեն, այնպէս որ այս գիւղում աղջիկների խիստ պակասութիւն կայ։ Այս կողմերում ևս ընդհանրացած առած է չբեր կանանց համար, որ ասում են. «Բարձդ փոխիր», այսինքն բայի օրինաւոր ամուսնունուց, ուրիշին ևս պիտի ճանաչես և այլն։

Մի քանի խօսք էլ քաղաքների մասին։

Մի կողմ թողնենք Թիֆլիսն ու Բաղուն, որտեղի կեանքը, եթէ չեմ սխալւում, կարելի է եւրոպական կեանքի ընկած դրութեան հետ որոշ չափով համեմատել, և վեր ասենք Ալեքսանդրապոլ, Կարս, Երևան քաղաքները։ Այդ տեղերում էլ նոյնպէս արտաքուստ գիւղական կեանքի համեմատութիւնը կարող էք տեսնել. մեծերին, օտարներին և առհասարակ մարդկանց տեսնելիս, նոյն իսկ հասակաւոր կիներն անգամ տեղից վեր է կենում, տուն մտնում, կամ ամօթխածութեամբ բարեւում, հետը չէ խօսում, տան մէջը առաջ չէ գալիս. բայց դժբախտաբար այդ ամենն էլ արտաքին քաղաքաւարական և սովորական վարմունքների հետքեր են։ Ներս մտէք նրանց ընտանեկան կեանքի մէջ, հետաքրքրուեցէք և շատ ցաւալի բաներ կը տեսնէք ու կը լսէք. կոիւ, աղմուկ, անհամաձայնութիւն, սիրոյ բացակայութիւն, կեղծիք, ամուսնական անհաստատարմութիւն և այլն։ Կը տեսնենք դիրք ունեցող, հասարակութեան մէջ յարգանք վայելող տիկիներ, որոնց անցեալի քօղը եթէ

վեր առնենք՝ նոյն բաները կ'երևան։ Այս ամենը մեծ մասամբ սուս-փուս, առանց ազմուկի ծածկում, մնում է. սա էլ ունի իր որոշ պատճառները։ Ինքս մի քանի պարոնների ճանաչում եմ, որոնք իրանց ձեռքով հարազատ կանանց ծախում և օգտւում են։ Կան կանայք էլ, որոնք թոյլ ամուսիններին խաղացնում են և նոյն իսկ նրանց միջոցով իրանց սիրողների հետ ապրում։ Որպէս զի ժողովրդի բամբասանքների առարկայ չը լինեն և իրանց զիբը պահեն, զրանք խորամանկ միջոցների էլ են դիմում—առաւօտը կանուխ կնոջը զուգում զարգարում են և իրանք էլ հետը գնում են իբր եկեղեցի, բայց դիտէք ուր են մտնում—ճանապարհին շեղուելով ներս են գնում բաղնիք, որտեղ վաղօրօք ժամագիր են նրա սիրականները։ Այս բաների համար միջնորդ են հանդիսանում բաղանիքներում ծառայող քիսաչիները, գալլաքները, կին ծառայողները և այլն։

Գալով որդիներ փչայնելուն և ապօրինի ծնումներին, այդ ևս որոշ չափով պատահում են։ Վերջին տարիներում քաղաքներում շատ դէպքեր են պատահել, որ երիտասարդները որպէս նշանած, սիրահարուած կամ թէ շատ մօտ բարեկամ, մուտք են գործում ընտանիքների մէջ, աղջկայ պատիւը արատաւում, և յղի դուրսեան մէջ թողնում, հեռանում։

Քոստի քանի այգալիսի դէպքեր եմ տեսել և լսել, տղաները զուրկ լինելով բարոյական որ և է զգացմունքից, բայց ի բայ մերժում են և բայատում իրանցից, որ իբր թէ իրանք էլ այդ անսպասելի անպատուութիւնից վիրաւորելով, հեռացել են։ Այսպէս արին N-քաղաքում մի հայ զինուոր և երկու արհեստաւոր, որոնք աղջիկներից հեռացել էին, բայց երբ վախեցրին պատժով՝ միջնորդներ ձգեցին և ամուսնացան։ Սակայն շատ շատերը անպատիւ հեռանում են և խեղճ աղջիկները մնում են զժբախտ։ Մի աղջիկ էլ իր նշանածի այգալիսի ստոր արարմունքից վիրաւորուած, ցանկացաւ նրան զաչոյնով սպանել ուրիշի հետ պսակուելու գիշերը. բայց չըջապատողները խափանեցին և չարագործ փեսան անպատիւ մնալով, անմեղ աղջիկը տուժեց։

Այգալիսիների ծնողները շատ անգամ դիմում են դեղագործին՝ խնդրում, աղաչում են, որ միջոցներ ցոյց տան՝ աղջկան այդ խայտառակ դուրսիւնից աղատելու համար։ Երբեմն էլ թշուառ ծնողները դիմում են քաղաքի այս կամ այն աղեղեղիկ մարդկանց, տեղական յաջորդին, քահանաներին, որ աղայի վրայ աղղեն, որպէս զի աղջկան չը թողնի հեռանայ ու իրանք արատաւորուեն։ Երբեմն էլ ամօթխած ծնողները ժողովրդից քաշուելով, աղջիկներին գիւղերն են հեռացնում և տգէտ դայակների ձեռքը մատնում, շատ կոպիտ ասիական միջոցների դիմում և աղջկան

կամ ազատում են և կամ մեռնում: Այսօր շատերին կարելի է ցոյց տալ, որոնք հէնց միևնույն պատճառներով իրանց ներքին գործարաններից այս կամ այն մասը վնասել են և որդէճնու-թիւնից զրկուել:

Գալով կենդանի ծնուածների պարտը կելուն, այդ ևս որոշ չափով կայ: Այսօր վերոյիշեալ քաղաքների ամեն մի եկեղեցու բակում տարեկան մի քանի նորածին մանուկներ են գնւում: Դուրս են գալիս անզաւակ, բարի մարդիկ, որոնք մկրտել են տալիս և որդեգրելով հոգեզաւակ են դարձնում: Երբեմն լինում են գէպքեր, որ նորածինների դիակները աղբիւրների մօտ, աղբանոցներում, ջրի, կոյուղների, գետերի մէջ են գցում և այս կամ այն կենդանուն բաժին դարձնում և այլն: Այսօր բազմաթիւ ծնողներ շատ որդիներ չունենալու համար, ամեն տեսակ միջոցներ են գործ գնում չը բեղմնաւորուելու. քանի-քանի կանայք այդ միջոցներին զոհ են գնացել: Իմ զիտողութիւններն ինձ այն եզրակացութեան են բերել, որ քաղաքներում որդիներ չունենալու համար արուեստական միջոցներ գործադրողները մեծամասնութիւն են կազմում. այս միևնույն բաները դիւղերում անգամ կարելի է տեսնել: Եթէ վերոյիշեալները համեմատենք եւրոպական կանանց հետ, պարզ կը տեսնենք, որ համարեա նոյն բաները փոքր չափով, տարբեր ձևերով մեղանում կայ և դա օրէց օր շատանում է: Կեանքի նեղ պայմանները, տնտեսական ընկած դրութիւնը և այլ հանգամանքներ օրէց օր նպաստում են դրան: Միայն մեղանում պատահածները ծածկւում են, պարտը կւում և երեան չեն գալիս: Շատ շատերն էլ եղածը չը տեսնելու են տալիս և չեն էլ ուղում իրանց հաւատացնել այդ բանի մէջ—դարաւոր ժառանգական սովորութիւնները նրանց կաշկանդում են և իբր դրանով ազգային պատիւը պաշտպանւում տեսնում:

Ի՞նչին վերագրել այս երեոյթները:

Դրանց պատճառները շատ բարդ են և ղանաղան հանդամանքների ծնունդ, բայց և այնպէս, երևի, գլխաւոր պատճառների շարքում պէտք է համարել հետեւեալը.

ա) Հայ կնոջ վերին աստիճանի սքիսկական, բռնի դուրսիւնը.—նա որպէս աղջիկ շատ բաների մէջ ազատ է, բայց երբ կին եղաւ, նրա բոլոր ազատութիւնը սահմանափակւում է: Նա այժմ ենթարկւում է տան բոլոր, մինչև անգամ փոքրերի հսկողութեանը, նկատողութեանը, մանաւանդ ամուսնու: Սա՛ տեղիանտեղի, յարգելի թէ առանց յարգելի պատճառների, կնոջ գըլխին հայհոյանքի կոյտեր է թափում, նրան անպատուում, որից

յետոյ շատ անգամ էլ սրան յաջորդում է ծեծ ու քաշ, կարծես ստրկի հետ գործ ունի: «Մի լաւ դամչի (մտրակ) պատից կախ արա, ահա դա է կնոջ աստուածը»—ասում են Ղարաբաղի գաւառում: Չը նայելով, որ կինը ո՛ր տան, ո՛ր դրսի աշխատանքի մի մասի գործակիցն է, բայց և այնպէս ատանց ծեծի, անպատուութեան չի մնայ: Այսպիսի բարբարոսութիւնը այնչափ ընդհանրացած է, որ եթէ մէկը կամ միւսը իր կնոջը խնայէ կամ նոյն տանջանքներին ուշ-ուշ ենթարկէ, այն ժամանակ իրանք կանայք ևս կը զարմանան: «Ել ինչո՞ւ տղամարդն է, որ չը ծեծէ», շատ անգամ դուք կը լսէք գեղջկուհու բերանից: «Կինը երկու աստուած ունի, ասում են Շիրակում, մէկը Վերինը ամենքի համար, միւսը ներքեւում—նրա ամուսինը»:

Մի սկեսուր շատ անգամ իմ ներկայութեամբ նախատում էր որդուն, որ կնոջը յաճախ չէր ծեծում: «Քա, էդ իմա՛յ տղամարդ-ես, դու էնպէս սաստիք, որ զարբ ունենաս և կինդ ուռի պէս դողայ առաջդ», ասում էր մի ուրիշը իր որդուն: Շատ անգամ կանայք ամուսնու հասցրած տանջանքներից չեն դժգոհում, կարծելով թէ այդպէս էլ պիտի լինի, դա կնոջ ճակատագիրն է, և միթէ կարող է կին լինել, որ մտրդուց ծեծ չուտէ: Աւելի շուտ նրանք անտեղի պատիժներից են գանգատւում. «Եթէ մեղք ունեմ, թող ծեծէ, բան չունեմ ասելու», ասում են նրանք. իսկ սրա վրայ աւելանում է ամուսնու անհաւատարմութիւնը, նրա վարմունքը ուրիշի հետ, ընծաներ տանելը, հաճոյախօսութիւնները, շարունակ նրա յետիւց քաշ գալը՝ ահա այդ ժամանակ նա խիստ կերպով վիրաւորւում է, ամօթից ուրիշի երեսին պարզ չէ կարող նայել, ամաչում է և աշխատում է մի կերպ վրէժ առնել: Ահա այս բանը առիթ է տալիս նրան թագուն կերպով սիրողներ գտնել: Միևնոյն պատճառները, միևնոյն դէպքերը հետեւապէս երևում են քաղաքների ստորին և միջին դասակարգերում ևս:

բ) Տնտեսական նեղ դրութիւն.—Շատ անգամ նիւթական նեղ դրութիւնը անճարացած մօրը ստիպում է իր որբերին կերակրելու համար իրան ծախել. երբեմն էլ ծոյլ, թոյլ ամուսինների անպէտքութեան շնորհիւ է դրա մէջ ընկնում, կամ թէ չէ ամուսինները իրանց սիրածներով զբաղուելով, հարազատ կնոջը, որդիներին անուշադիր թողած, չեն հոգում, այնպէս որ կինը դարձեալ նոյն միջոցին է գիւմում: Ամուսինների արբեցողութիւնը, նորաձեւութիւններին հետեւելը, շոյալութիւնն ու զեղխութիւնը ևս պակաս նպաստող պայմաններ չեն:

գ) Տգիտութիւնը.—Չունենալով մտաւոր, բարոյական պատրաստութիւն, շատ անգամ կեանքի տգեղ օրինակները,

օրուայ դէպքերը խառնուելով ծայրայեղ չքաւորութեան հետ, նրանց մէջ թուլանում, ոչնչանում է միակ 'նեղուկը'՝ կրօնական զգացմունքները. այն զգացմունքները, որոնք զոնէ այդպիսիններին շատ անբարոյական և անպատիւ գործերից կարող էին հեռացնել: Այժմ այդ ևս բացակայելով, էլ ոչ մի արբութիւն չեն ճանաչում, այլ կարելոյն չափ գուարճութեան, բաւականութեան յետից են ընկնում: Յայտնի է նոյնպէս, որ սրանց հետ կապուած են անշարժութիւնը, զեղխութիւնը, որից հեռանալը սովոր մարդու համար շատ դժուար կը լինի:

դ) Ժողովրդի անողոքութիւնը, որ դարձեալ տգիտութեան հետեանք է. այդպիսի կանանց ամենախիստ կերպով դատապարտում, թքում, մրում են. նրանք ի նկատի չունեն որ շատ անգամ խեղճերը մեղաւոր չեն, այլ նրանց թշուառացնող և այդ գրութեան մէջ գցողը նոյն իսկ իրանց ամուսինները, որդիներն ու մօտիկներն են: Այսպիսի խեղճալի գրութեան մէջ նրանց ոչ միայն չեն օգնում, այլ և նրանց ապագան, նրանց անունը արատաւորելով ձգում են: Էլ հասարակութեան մէջ ինչպէս երեւան, էլ ինչու ապրեն, էլ ով նրանց գործ, աշխատանք կը տայ, մնում է մեռնել կամ յաւիտենական դատապարտութեան մատնուել: Այդպիսի գրութիւնից շատ անգամ օգուտ են քաղում միջնորդ պառաւները, մանրամասնները, այդ գործով պարագող կանայք և վերջապէս հասարակաց տուն պահողներն ու գցում պոռնկութեան մէջ: Մի անգամ այդ գրութեան մէջ ընկնելուց յետոյ, էլ անհնարին է նորից ընտանիքին վերադառնալ: Շատ անգամ այդպիսի դէպքերի մասին լսել եմ, որ նրանք թէև զգուած, անտանելի գրութեան մէջ են, բայց և այնպէս անկարող են դուրս գալ. ամօթը, հասարակական կարծիքը նրանց կաշկանդում է: Եթէ չը լինէր ժողովրդի այդպիսի դատապարտելի ընթացքը, միակողմանի վերաբերմունքը միմիայն դէպի կանայք, թերեւ նրանցից շատերը հնարաւորութիւն ունենային ազատուել:

Աղջիկ փախչնելը ևս նպաստում է այս բանին. սա էլ անտեսական նեղ գրութեան և հին սովորութիւնների մի տեսակն է: Երկու ջահէլները սիրահարում են, դատակարգների տարբերութիւնը, տղայի չքաւորութիւնը, որ որոշ ընծաները չը կարողանալով լրացնել, փախչում, ոյժով տանում է և տիրապետում: Շատ անգամ էլ առանց փոխադարձ սիրոյ, նոյն իսկ առանց աղջկայ ցանկութեան ու գիտութեան նոյն կերպ փախչնելով տիրանում են. սրա հետեանքը լինում է ատելութիւն, անհաւատարմութիւն, անգամ ուղանութիւն:

Մի քանի խօսք ևս մեր կանանց աշխատանքի մասին:

Որովհետև ամուսնութեան և կանանց բարոյականութեան համար, ինչպէս վերում յիշուեց, մեծ նշանակութիւն ունի տնտեսական, նիւթական գրութիւնը, այդ պատճառով յարմար է մի քանի խօսքով ներկայացնել կանանց աշխատանքը և նրանց ընդհանուր ծանրաբեռնուած գրութիւնը: Հին և միջին դարերում հազիւ էր պատահում, որ կանայք ընտանեկան սահմանից դուրս գալին հասարակական ասպարէզ և իրանց աշխատանքով ապրէին: Այս բանի համար թէև դրական վիճակագրութիւններ չը կան, բայց հաւանօրէն շատ քչերին չէր յաջողում ամուսնութեան հովանու տակ մտնել: Ներկայումս էլ ասիական շատ հասարակութիւններին մէջ, նոյն իսկ մեր հայկական զիւղական կեանքում, համարեա կանանց գրութիւնը նոյնն է: Եւրոպական, և առհասարակ քաղաքակրթութիւնը առաջ գնացած երկրներում, ուր արհեստներն ու մեքենագործութիւնը ծաղկել, դրամադուխտ իր ձևրանները տարածել է աշխատաւոր և բանուոր դասակարգի վրայ, ահա այդպիսի տեղերում նոր տնտեսական պայմանները կանանցից շատերին ևս անգործ, անտուն և անհայ են թողնում: Նրանց նախկին ընտանեկան աշխատանքները և ձեռագործները չնորհիւ մեքենաների ընկան, այնպէս որ նրանք մի կտոր հալով իրանց գոյութիւնը պահպանելու համար ստիպուած են կեանք լալիող, ընտանիքի հիմքը քանդող գործարանների մէջ թափուել: Նրանք օրն ի բուն վատաւողջ օդի, դժուար աշխատանքի, չնչին ոռճիկ պատճառով ծերանում, մաշում և անընդունակ են դառնում առողջ, թարմ սերունդ առաջացնելու: Ահա այս նեղ գրութիւնն ստիպեց կանանց հարց հարուցանելու:

Այսօր Գերմանիայում միլիօնից աւելի կանայք չեն կարող մարդու գնալ, մասամբ տղամարդկանց սակաւութեան պատճառով, մասամբ էլ՝ որ նրանք չեն ամուսնանում: Այսպէս է և բոլոր քաղաքակիրթ աշխարհներում. այդ նշանակում է թէ ներկայումս միլիօնաւոր կանայք մեծանում, պատրաստում են այն կոչման համար, որի ճանապարհը փակ է նրանց առաջ: Կնոջը խորհուրդ են տալիս ամուսնանալ, նրանց վրայ շատ տեղերում ծաղրում են, որ ընտանեկան կեանքից դուրս են գալիս և հասարակական ասպարէզ իջնում: Այդպէս է վարում նոյն իսկ բանիմաց, հասարակական ծաղիկ երիտասարդութիւնը, նոյն իսկ ուսանողութեան մեծամասնութիւնը: Կնոջը խորհուրդ են տալիս մնալ իր նախկին ասպարէզում և դրան հասնելու համար միջոցներ չեն տալիս: Միթէ ծիծաղելի չէ գործի և խօսքի մէջ եղած այսպիսի հակասութիւնը: Բացի դրանցից ի՞նչ խորհուրդ ունի ներկայ կնոջից պահանջել նախկին կանանց կատարած գործունէութիւ-

նը: Նախկին կինը մահում, գործում էր, բայց գիտութիւնը հնարեց բազմապիսի գործիքներ, մեքենաներ, շինուեցան գործարաններ և ներկայ կինը չը կարողանալով բացարձակ մրցել՝ ստիպուած տեղի տուեց և թողեց իրան հաց տուող գործը: Այսպէս է ամեն մի քաղաքակիրթ երկրում, այսպէս հետզհետէ լինում է նոյն իսկ մեր փոքրիկ կեանքում:

Կար ժամանակ, երբ հայ գիւղացին շատ քիչ շոր էր դրսից առնում. մեծամասնութիւնը իր կնոջ, իր աղջկայ պատրաստածն էր: Ներկայումս համարեա ամեն ինչ նա դրսից է առնում, այնպէս որ, շարունակ փող դուրս տալով և եկամուտի աղբիւրը քչանալով՝ օրէց օր նա զգալի կերպով նիւթապէս ընկնում է: Նախկին մարդը ինքն էրտանը պատրաստում՝ իւղ, մոմ, երչիկ, կտաւ, գարեջուր և այլ բաներ. իսկ ներկայ քաղաքակրթութիւնը իր գիւրին միջոցներով խլեց ընտանիքների, հետևապէս և կնոջ ձեռքից այդ զբաղմունքները: Ուրեմն ոչ թէ ներկայ կինն է հեռացել իր ասպարէզից, այլ ասպարէզն է նրանից հեռացել: Շատ անգամ որպէս բողոք դուք կը լսէք կրթութեւ մարդու բերանից, թէ կանայք դուրս գալով ասպարէզ, իրանց ամենաբարձր բարիքը, ամենագնահատելի արժէքաւոր կանացիութիւնը կորցնում են: Սրա նման է բողոքում տգէտը և ամբոխը. բայց ինչո՞վ են նրանք պաշտպանում այդ թանկագին կանացիութիւնը. մի՞թէ նրանով որ ամենափափուկ դէպքերում տղամարդ բժշկի օգնութեան են դիմում. կամ մի՞թէ նրանով, որ հազարներով ստիպում են ամուսնանալ միայն ապրուստ ունենալու համար: Էլ որտեղ մնաց նրանց քնքոյշ զգացմունքները, սիրոյ աղբիւրը: Ազնիւ աշխատանքի ասպարէզը փակելով նրանց առաջ, ստիպում են դուրս գալ փողոց, մտնել գործարան, վաճառատուն, գինեւո՞ւն, սրճարան և այլ տեղեր, որոնք ոչ միայն կանացիութիւնն են կորցնում, այլ և դէպի կեանքի անկումն են խորխորաւ են առաջնորդում:

«Այո, աղջիկները գիւտ գտան, ասում է կանանց հարցի պաշտպան մի գերմանուհի. նրանք տեսնելով որ ազնիւ կերպով անկարելի է գոյութիւն պահպանել, շատ լաւ յիշեցին իրանց կանացիութեան մասին, դուրս բերին դրան հրապարակ, ծախեցին և իրանց թանկագին զարդը փող դարձրին»: Այսպէս կանանց հարցը, նրանց դրութիւնը երկար ժամանակ հրապարակի հրատապ խնդիրներից մէկը դարձաւ և հետևանքն եղաւ այն՝ որ կանայք աշխատանքի ազատութիւն ստացան: Միայն այդ ազատութիւնը շատ սահմանափակ, միակողմանի, մկանունքային և ֆիզիկական էր. մի բան, որ նրա կոչման, կազմութեան և պահանջներին հակառակ է:

Եթէ եւրոպական պետութիւնները, ինչպէս Իտալիա, Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա, Անգլիա, Շվեդ-Նորվեգիա և այլն, ի նկատի ունենանք և նրանց վիճակագրութիւնը առաջ բերենք, այն ժամանակ ակներև կը տեսնենք, որ բոլոր կանանց 20—40⁰/₀ իրանց սեպական աշխատանքով են կերակրուում. այսինքն նրանք պարապում են առևտրով, կրպակների, սննդի, բնասօրանների, սրճարանների մէջ և այլն ծառայութեամբ, նոյնպէս լուացարարութեամբ, գործարաններում աշխատելով և դաշտային մշակութեամբ, անգամ մի քանի տեղերում տաժանակիր ծանր աշխատութեամբ և այլն:

Թէ այդ բաներին նրանք որչափ զոհ են տալիս և ինչ թշուառ դրութիւն է նրանց ներկայանում, այդ դարձեալ նոյն վիճակագրութիւնը մեզ ցոյց կը տայ*): Հէնց օրինակ վեր առնենք հայելու գործարանները. այնտեղ սնդիկի ազդեցութիւնը կանանց խիստ վնասակար և մահաբեր է, իսկ կլայկի—անագի գործարաններում 100 յղի կանանցին 58-ը վիժում են. բացի դրանից ծնուած տղաների 75,5⁰/₀ մեռած են լինում. իսկ կենդանի մնացած 21,5⁰/₀-ից հազիւ 13-ը մինչև երկու տարեկան հասակն են ասլորում:

Այսպէս էլ հայելու գործարաններում 65⁰/₀ մանուկներ են զոհ գնում, ապակի յղկելու գործարաններում 55⁰/₀, արձիճեայ թերթեր պատրաստելու տեղերում 40⁰/₀: Յղի կանանց և նրանց ապագայ սերնդի համար աւելի շատ վնասակար են արհեստական ծաղիկ չինելու, գունաւոր թղթեր պատրաստելու, քիմիական միջոցներով պարապող գործարանները: Սրանց կարգին են պատկանում լույկու, գուտապերչից զանազան իրեր, մետաքսեայ հիւսուածքներ պատրաստող գործարանները և այլն: Մի խօսքով համարեա ոչ մի բան չը կայ, ուր կինը իր ուժը փորձած չը լինի. այսպիսի զէպքերում նա ոչ թէ միայն իր ֆիզիկականով է տուժում, այլ բարոյականով և իր կոչմանը անպատուաբեր արկածների ենթարկւում: Հէնց այդ պատճառով շատ բողոքներից ու պահանջներից յետոյ, հազիւ հազ գործարաններում, կանանց և մարդկանց իրար հետ աշխատելը մի քանի տեղերում վերացրին: Այս ամենի հետ ինչ վարձ է ստանում կինը. միթէ այդ մարդուն հաւասար, բնաւ ոչ: Եթէ դարձեալ դիմենք վիճակագրութեան, կը տեսնենք, որ ամեն տեղ, ամեն գործի մէջ կինը միշտ պակաս է ստոնում: Աւելի պարզ լինելու համար առաջ բերեմ մի քանի օրինակներ: Գերմանայում Բադէնի մեծ դքսութեան մէջ սովորական աշխատաւորը ամսօր

*) Брандъ—„Современная Женщина“.

ստանում է օրական 1 մարկ 95 զբ. իսկ ձմեռը 1 մ. 45 զբ. իսկ կինը՝ 75 զբ. Ֆրանկֆուրտի նահանգում տղամարդիկ ստանում են 2 մ. $1\frac{1}{2}$ -ից մինչև $3\frac{1}{2}$. իսկ կանայք 1—2 մ.: Պաղատելիքներ պատրաստելու գործարաններում մարդիկ ստանում են 3 մ., իսկ կանայք $1\frac{1}{2}$ մ.: Դանիայում մարդիկ միջին թվով օրավարձ են ստանում 5, 38 կրօն, գիւղերում 4, 16 կ., իսկ կանայք 2, 59 կ. գիւղերում 1, 52 կ.: Բօհեմիայում թեկեր մանելու գործարաններում մարդիկ չաբաթական վարձ ստանում են 3,4-ից մինչև 10 գուլդէն, կանայք 2,10—4,80 գ.: Շաքարի գործարաններում մարդիկ ստանում են չաբաթական 2,40—9 գուլդէն, կանայք՝ 1,90—3,50 գ. և այլն:

Հայ կինը ևս աշխատանքի վարձատրութեան կողմից այնչափ լաւ դրութեան մէջ չէ. այնտեղ, որտեղ կանայք շալ, կըտաւ, տափալործ շալերի տեսակներ, կարպետ, գորգ են պատրաստում, շատ չնչին են վարձատրում, այսինքն օրական հազիւ 20—40 կ. են ստանում: Թէ ինչո՞ւ կանայք քիչ վարձ են ստանում, այդ բանի վրայ շատերը թեթեւ կերպով նայելով, երբեմն անհիմն ենթադրութիւններ են անում: Նրանք ասում են, թէ կանայք համեմատաբար քիչ կարիք և ծախս ունեն, դրա համար էլ նրանք սակաւ վարձով բաւականանում են. այս կարծիքը, ի հարկէ միակողմանի լինելով, չէ կարող ճիշտ լինել:

Ֆրանսիացի քաղաքատնտես Լը-Ռուա Բօլլէ այդ հարցի առիթով նկատում է, թէ բացի այն, որ կանայք բնականից ֆիզիկական ոյժով օժտուած չեն, այլ և ներկայ հասարակութիւնը նրանց մտաւոր կերպով բարձրանալու և կռուելու զէնքեր չէ տալիս. բացի դրանից, գործունէութեան ումն ասպարէզ նրանց առաջ բաց չէ—մնում են որոշ ասպարէզներ. իսկ այստեղ նրանց թուի շատութեան պատճառով բոլորի համար տեղ չը կայ: Կան գործեր, որտեղ գիտութիւն, պատրաստութիւն, տեղեկութիւններ են պէտք, բայց որովհետեւ կանայք այդ չունեն, ուրեմն կամայ ակամայ նրանք ստոր են պաշտօններով և քիչ վարձով պէտք է բաւականանան: Մի և նոյն ժամանակ, ուր ֆիզիկական ոյժ է պէտք, այնտեղ բնականաբար նրանք չեն կարող տղամարդկանց հետ մրցել. ուրեմն մնում է, որ այստեղ էլ պակաս ստանան: Կանայք ոչ մի մասնագիտական դպրոց չունենալով, բնական է, որ չեն էլ կարող այդպիսի պատրաստութիւն ունենալ և դրա համապատասխան էլ նշանաւոր գործեր ձեռք բերել: Միւս կողմից Լը-Ռուա Բօլլէն ապացուցանում է, թէ կանայք աւելի չնչին գնով համաձայն են աշխատել. նրա կարծիքով տղամարդ աշխատաւորը չէ կարող քչով

բաւականանալ, ինչպէս կ'ինը. նա շատ ծախսի կարիք ունի, ընտանիքի տէր է, նա կը բողոքէ, կը դիմէ մի ուրիշ տեղ աւելի աջող գործ գտնելու և վերջապէս հակառակ դէպքում կը գաղթէ այլ երկիր: Սրա հակառակ կ'ինն անկարող է տղամարդու նման ընդհանուր բողոք ներկայացնել, գործադուլ անել, դրամատիրոջ հետ մրցել, օտար աշխարհ դիմել և այլն: Վերջապէս գործարան մտնող աշխատող կանայք մեծ մասամբ ներանք են լինում, որոնք կամ անաջող ամուսնութիւնից են փախել կամ չէ յաջողուել ամուսնանալ և կամ թէ ընտանիք ներքի այն մեծացած աղջիկներն են, որոնք ոչ թէ ընտանիք չունեն կառավարելու, այլ թերևս մասամբ էլ տանից բաժին են ստանում, այնպէս որ նրանք պակասը լրացնելու համար են աշխատում:

Կան էլ, որ իրանց չոր գլուխը պահելու համար են աշխատում, որ քաղցից չը մեռնեն, ուստի և քիչ օրավարձով բաւականանում են:

Ա. ԶԻՆԻՆԿԱՐԵԱՆ

Օ Ր Օ Ր Ո Ց Ի Ե Ր Գ

(Նամանորին Նեկրասովի)

Քնի՛ր, դու մա՛նուկ, անմեղ սակաւին,
Քնի՛ր դու անդորր,
Խաւարը տիրեց նիրհող աշխարհին,
Քեզ օրօ՛ր, օրօ՛ր:
Ես քեզ չեմ պատմի անուշ հեքիաթներ,
Այլ նամարտութիւն.
Իսկ դու քո՛ւն եղիր, քո սեւուկ աչքեր
Խո՛ւփ արա, նախշուն:

Քո հարազատ մօր երգը չէ հնչում
Օրօրոցիդ քով,
Դայեակն է, աւա՛ղ, քեզ նանիկ կանչում
Իր օտար հոգով:
Խորք է քեզ համար մայրենի երգը,
Տխո՛ւր, սգաւոր.
Քո՛ւն եղիր, հոգիս, խո՛ր է այդ վերքը,
Քեզ օրօ՛ր, օրօ՛ր:

Հեռո՛ւ երկիրներ քո հայրը գաղթեց
Գիւղից հայրենի,
Եւ նենգ միջոցով շատ փող վաւսակեց՝
Դարձաւ անուանի:

Իր պերն պալատում փարթամ, երջանիկ
Ապրում է այսօր.
Նա էլ չէ յիշում ազգ ու հայրենիք,
Քեզ օրօ՛ր, օրօ՛ր:

Դու կը մեծանաս անհոգ եւ անվիշ
Կեանքի մէջ փափուկ,
Եւ ժրանսուհու կրթութեան ընդմիջ
Կը մնաս usուկ:
Դու չես բոթովի մայրենի լեզուով
Քեզ անկարեւոր,—
Քնի՛ր, խեղճ մանուկ, քնի՛ր անխռով,
Քեզ օրօ՛ր, օրօ՛ր:

Հօրդ մահից յետ կը լինես ժառանգ
Դու օրինական,
Իսկոյն կ'սկսես վարել մի գեղիս կեանք՝
Իսկ անասնական...
Ու կ'անհետանա՛յ քո հօր վաստակած
Ոսկին բունաւոր...
Քնի՛ր, հա՛յ մանուկ, ընդմիջ խորթացած,
Քեզ օրօ՛ր, օրօ՛ր:

Աշխարհից աշխարհ միջ կը թափառես
Ունայն ու անմիջ,
Եւ պարծենալով դու քեզ կ'անուանես
Հայ կօսմօպօլիս...
Ա՛յդպէս դու կ'անցնես անօգուտ, դարդակ
Քո կեանքը բոլոր,
Եւ մահ կը գտնես օտար երկնի տակ,
Քեզ օրօ՛ր, օրօ՛ր:

Կ. ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

Մ Ե Ն Ա Կ Մ Ա Ր Դ Ի Կ^{*)}

Դ Ր Ա Մ Ա

Գերհարս Հառապսմանի

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ժամանակը՝ առաւօտեան մօտ ժամի 10 է։ Գրասեղանի վրայ դեռ վառուում է լամպը։ Տիկ. Կէթէն նստած է սեղանի առաջ՝ խորասուզուած հաշիւների մէջ։

Դուրսը, պատշկամբում, մէկը մաքրում է կօշիկները։ Կէթէն կէս բարձրանում է և լարուած սպասում։ Բրաունը մտնում է։

Տիկ. Կէթէ. (Դիմաւորելով նրան)։ Ա՛խ.—Այդ դո՛ւք էք։ Այդ շատ սիրալիք է ձեր կողմից։

ԲՐԱՈՒՆ. Բարի լոյս։ Ի՞նչ խայտառակ եղանակ է։

Տիկ. Կէթէ. Ի՞նչպէս մութ է այսօր։ Եկէ՛ք այստեղ։ Վառարանում կրակ կայ։—Տիկին Լէմանը ձեզ հաղորդեց։

ԲՐԱՈՒՆ. Այո՛, նա ինձ մօտ էր։

Տ. Կէթէ. (Նախընթաց հանգիստ արձայնութեան հակառակ՝ արժատվոր կենդանութեամբ եւ ջղային եռանդով)։ Սպասէ՛ք։ Ես ձեզ համար սիգար բերեմ։

ԲՐԱՈՒՆ. Ո՛չ, չնորհակալ եմ։—Ո՛չ, ոչ։ (Շտապում է Կեթի յետեւից եւ հասնում նրան, երբ սա նիզ է քափում գրեթէ պահարանից վայր բերել սիգարներով արկղը)։

Տ. Կէթէ. Ես կը ցանկայի, որ դուք ձեզ բոլորովին յարմար զգայիք։

ԲՐԱՈՒՆ. (Նայելով Կեթիին)։ Բայց ես ծխելու ցանկութիւն չունեմ։

Տ. Կէթէ. Արէք այդ ինձ հաճոյք պատճառելու համար։ Ես շատ սիրում եմ ծխախոտի հոտը։

ԲՐԱՈՒՆ. Եթէ այդպէս է, համեցէ՛ք... (Կայցնում է սիգարը)։

^{*)} Տե՛ս «Մուրճ» № 5.

Տ. Կէթէ. Դուք պէտք է առաջուայ նման բողոքովին չը քաշուէք:—Իսկ այժմ, ախ դուք չա՛ր մարդ. ինչո՞ւ ամբողջ մի շաբաթ չեկաք մեզ մօտ:

ԲՐԱՌԻՆ. Ես կարծում էի այլ ևս հարկաւոր չեմ Հանսին:

Տ. Կէթէ. Բայց ի՞նչպէս դուք կարող էք...

ԲՐԱՌԻՆ. Նա այժմ ունէ օրինորդ Աննա Մառը:

Տ. Կէթէ. Եւ ի՞նչպէս կարողանում էք այդ ասել:

ԲՐԱՌԻՆ. Նա հօ թքում է իր բարեկամներին վրայ:

Տ. Կէթէ. Դուք հօ գիտէք նրա գիւրադրդիւ բնաւորութիւնը: Ձե՞ որ նա լրջութեամբ չասաց այդ:

ԲՐԱՌԻՆ. Սակայն և այնպէս. և ես շատ լաւ գիտեմ, թէ ո՞վ է նրա վրայ ազդում այդ ուղղութեամբ: Առհասարակ, այդ Մառը կարող է խելօք անձնաւորութիւն լինել, բայց մի բան հաստատ է. նա յամառ է ու ետական, անխնայ, երբ մի նպատակի է ձգտում: Իմ առաջ նա երկիւղ է կրում: Նա լաւ գիտէ, որ ինձ չէ կարող խաբել:

Տ. Կէթէ. Բայց ի՞նչ նպատակ կարող է նա ունենալ...

ԲՐԱՌԻՆ. Հանսը նրան հարկաւոր է, ո՞վ գիտէ, ի՞նչ բանի համար: Ես խանգարում եմ նրան: Իմ աղղկցութիւնը նրա սրտովը չէ:

Տ. Կէթէ. Բայց ես իսկապէս բողոքովին չեմ նկատել, որ...

ԲՐԱՌԻՆ. (Բարձրաձայնով): Ես զօռով չեմ ստիպում ինձ հաւատալ: Հանսի խնդրքով միայն եկայ այստեղ: Եթէ աւելորդ եմ, կը հեռանամ կրկին:

Տ. Կէթէ. (Արագ եւ ազդու): Աննան այսօր գնում է:

ԲՐԱՌԻՆ. Միթէ: Ուրեմն նա դնում է:

Տ. Կէթէ. Այո: Եւ այդ պատճառով, պարոն Բրաուն, ես ուզում էի ձեզ խնդրել... Հանսէսի համար սարսափելի կը լինէր, եթէ նա այժմ յանկարծ մնար մենակ: Դուք պէտք է առաջուայ նման մեզ յաճախէք, պարոն Բրաուն: Յիշադար մի եղէք գէպի նա, մի նեղացէք նրա կոշտութիւնից: Դուք հօ ճանաչում էք նրան: Ձե՞ որ մենք գիտենք, թէ իսկապէս որչափ նա բարի է:

ԲՐԱՌԻՆ. Ես, ճիշտ է, շատ վիրաւորուող չեմ, բայց...

Տ. Կէթէ. Լաւ, ուրեմն մնացէք մեզ մօտ: Հէնց այսօր: Ամբողջ օրով:

ԲՐԱՌԻՆ. Վերջապէս ես կարող եմ գնալ և կրկին դալ:

Տ. Կէթէ. Բայց այնպէս, որ դուք այստեղ լինէք նրա մեկ-նեկու ժամանակ: Այ, կը տեսնէք թէ ինչպէս այժմ մեզ մօտ լաւ կը լինի: Ես ևս սովորեցի շատ բան ըմբռնել. մենք կ'անցկացնենք շատ հանգիստ և հիանալի ձմեռ:—Հա՛, մի բան էլ էի ձեզ

հարցնելու (կասակի ձեռով): Ես ուզում եմ փող վաստակել:—Ես, այո, լուրջ: Միթե մենք ես ստեղծուած չենք աշխատելու համար, մենք կանայքս:

ԲՐԱՈՒՆ. Այդ ինչպէս յանկարծ այդպիսի մի գաղափար ծագեց ձեր մէջ:

Տ. Կէթէ: Այդ ինչ զուարճութիւն է պատճառում, պարոն Բրաուն:

ԲՐԱՈՒՆ. Փող վաստակել—հեշտ է ասել:

Տ. Կէթէ. Հէնց, օրինակի համար, ես կարող եմ ձենապակու վրայ նկարել: Այս սերվիզը իմ նկարածն է, կամ եթէ այդ էլ չեղաւ... ասեղնագործել: Դիցուք սպիտակեղէնի վրայ՝ գեղեցիկ նշանագրեր հանել:

ԲՐԱՈՒՆ. Բայց դուք անկասկած միայն կատակ էք անում:

Տ. Կէթէ. Էհ, ո՛վ գիտէ:

ԲՐԱՈՒՆ. Քանի որ դուք ինչ ոչ մի բացատրութիւն չէք տալիս, ես իսկապէս չը գիտեմ...

Տ. Կէթէ. (Ոգեւորուելով): Դուք կարող էք լռութիւն պահպանել:—Ա՛խ, ո՛չ: Կարճ ասած, մարդկանց մէջ կան պահանջներ... մենք բոլորս էլ այնպիսի բնաւորութիւններից չենք, որոնք կարողանում են հաշուով ապրել:

ԲՐԱՈՒՆ. Գոնէ Հանսը:

Տ. Կէթէ. Ա՛խ, ո՛չ... այսինքն չը պէտք է դրա համար շատ տանջուել: Միայն պէտք է հոգալ որ բաւականութիւն անի:

ԲՐԱՈՒՆ. Երբ դուք յոյս ունէք այնքան շատ վաստակել... հիմիկուց կարելի է ասել որ դուր կը լինին ձեր ջանքերը:

Տ. Կէթէ. Գուցէ տարին չորս հարիւր թաւեր...

ԲՐԱՈՒՆ. Չորս հարիւր թաւեր: Հազիւ թէ:—Սակայն ինչու հէնց չորս հարիւր:

Տ. Կէթէ. Ինչ այդքան է հարկաւոր:

ԲՐԱՈՒՆ. Կրկին մէկը օգտուել է Հանսի անսահման բարութիւնից:

Տ. Կէթէ. Ո՛չ, ամենեկին ո՛չ:

ԲՐԱՈՒՆ. Գուցէ պէտք է այդ օրիորդ Աննային օգնել:

Տ. Կէթէ. Ո՛չ, ոչ, ոչ: Ի՞նչեր էք մտածում: Ի՞նչպէս ձեր միտքը եկաւ այդ:—Այլեւ ոչինչ չեմ ասիլ: Ո՛չ մի խօսք, պարոն Բրաուն:

ԲՐԱՈՒՆ. (Վերցնելով գլխարկը): Յամենայն դէպս ես անկարող եմ այդ բանում ձեզ օգնել: Այդ իսկապէս կը լինէր...

Տ. Կէթէ. Դէ լաւ, լաւ: Թողնենք այդ բանը: Բայց դուք կը վերադառնաք:

ԲՐԱՈՒՆ. (Պատասխանելով զնայ): Ի հարկէ, բնականաբար:

— Իսկ ձեր մտադրութիւնը իսկապէս լուրջ է, տիկին Կէթէ:

Տ. Կէթէ. (Ուզում ե ծիծաղել, աչեւում եւեւում ե արտասուք): Ախ, ոչ, ես միայն կատակ արի: (Ուժգին գլխով ե անում ե կիսակասակ ձեւով ասում): Գնացէ՛ք, գնացէ՛ք: (Չը կարողանալով այլեւս զսպել իր յուզմունքը, վազում ե ննջարան):

ԲԲԱՌԻՆ. (Մտախոն հեռանում ե):

Տ. ՖՅՎԵՐԱՏ. (Ձեռին լոբիով լի սկաւառակ, նստում ե սեղանի մօտ եւ պնդում):

Տիկ. Կէթէն վերադառնում է, մօտենում է գրասեղանին:

Տ. ՖՅՎԵՐԱՏ. (Թափահարում ե լոբին սկաւառակի վրայ): Այդ շատ լաւ եղաւ, հիմա կրկին կը տիրի մեզ մօտ խաղաղութիւն:—Այդպէս չէ, Կէթէ:

Տ. Կէթէ. (Խոնարհուելով հաշիւների վրայ): Թող ինձ, ես պէտք է մտածեմ, մայրիկ:

Տ. ՖՅՎԵՐԱՏ. Ախ, հա՛:—Բեզ էլ չեմ խանդարիլ:—Ո՞ւր է նա դնում, իսկապէս:

Տ. Կէթէ. Կարծեմ, Յիւրիկ:

Տ. ՖՅՎԵՐԱՏ. Շատ էլ լաւ է անում: Այնտեղ նրան աւելի յարմար է:

Տ. Կէթէ. Ի՞նչպէս թէ, մայրիկ: Կարծեմ նա քեզ դիւր էր գալիս:

Տ. ՖՅՎԵՐԱՏ. Ի՛նչ, չէ, չէ, նրան ես չեմ հաւանում. նա ինձ համար չափազանց մօղեռն է:

Տ. Կէթէ. Բայց մայրիկ:

Տ. ՖՅՎԵՐԱՏ. Եւ առհասարակ այդ ի՞նչ բանի նման է: Զահէլ աղջիկ երեք օր է ման է գալիս ծակ թեքով:

Յոհաննէսը գլխարկով, պատշկամբից, շտապ դիմում է իր առանձնասենեակը:

Տ. Կէթէ. Հմննէս:

ՅՈՀԱՆՆԷՍ. Ես եմ:

Տ. Կէթէ. Ես էլ գնմ երկաթուղու կայարանը:

ՅՈՀԱՆՆԷՍ. (Թօքուելով ուսերը): Այդ դու գիտես: (Մըսնում ե առանձնասենեակը):

ՓՈՐ դադար:

Տ. ՖՅՎԵՐԱՏ. Էլ ի՞նչ պատահեց նրան: (Վերջացնում ե լոբի պնդելը եւ տեղից վեր կենում): Իսկն ասած արդէն ժամանակ է որ այստեղ կրկին վերականգնի խաղաղութիւն:—Առանց այն էլ արդէն մարդիկ սկսել են խօսել այդ մասին:

Տ. Կէթէ. Ինչի մասին:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես ոչինչ չը գիտեմ: Ես միայն ասում եմ որ... Եւ վերջապէս այդ բոլորը փող արժէ:

Տ. Կէթէ. Ա՛խ, մայրիկ, արժէ այդ մասին խօսելը. միթէ մէկ չէ՝ երեք թէ չորս հոգու համար պատրաստուի:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Չէ, մի ասի՛ր, Կէթիւէն, փշրանքներից հաց է կաղմուում:

Յոհանէսը մտնում է, նստում, ոտը ոտի վրայ է դրում և թերթում է մի գիրք:

ՅՈՀԱՆՆԵՍ. Անամոթ, լիբը պաշտօնեայ: Եւ դո՛ւ դեռ կայարանի տեսուչ է կոչւում. խմում է, խմում, ամբողջ օրը խմում: Եւ միևնույն ժամանակ ինչպէս կողիտ է... Է՛:

Տ. Կէթէ. Ե՞րբ է մեկնում ամենայարմար զնայքը: Մի բարկանար, Հաննէս:

ՅՈՀ. Առնասարակ այս զղուելի մի փոս է: (Աղմուկով փակում է գիրքը եւ ցատկում տեղից): Ես եւ չեմ մնում այստեղ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ի՞նչ ես ասում, տղաս, չէ՞ որ դու չորս տարով ես բռնել բնակարանը:

ՅՈՀ. Ուրեմն ես պէտք է հիմա այստեղ կորչեմ, որովհետեւ դժբախտութիւն ունեցայ մի յիմարութիւն անել և չորս տարով պայմանաւորուել բնակարանի համար:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դու ինքդ էի՛ր միշտ ցանկանում ապրել զիւղում: Հիմա հագիւ կէս տարի այստեղ ես, կրկին դժգոհ ես:

ՅՈՀ. Շվէյցարիայում էլ գիւղ կայ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Իսկ երեխան: Ի՞նչ էք անելու նրա հետ: Ուզում էք նրան էլ ձեզ հետ երկրից երկիր քաշքշել, ի՞նչ է:

ՅՈՀ. Շվէյցարիայում աւելի առողջարար է ապրել, քան այստեղ նաև Ֆիլիպպիկի համար:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Սիրելիս, ինչպէս տեսնում եմ դու չուտով կը պատրաստուես լուսինն էլ գնալ: Է՛հ, արէք ինչ ուզում էք: Ինձ, պառաւիս վրայ, ի՞նչ հարկ կայ ուշադրութիւն դարձնել: (Հեռանում է դրսի դռնով):

Փոֆֆ դադար:

ՅՈՀ. (Հառաչում է): Պարոններ, զգո՛յշ կղէք, ասում եմ ձեզ:

Տ. Կէթէ. Այդ որտեղից գլուխդ եկաւ Շվէյցարիա գնալ:

ՅՈՀ. Այո՛, այո՛. հեղ կերպարանք չիմիր: (Նրա ձեռով արտասանելով): «Այդ որտեղից գլուխդ եկաւ Շվէյցարիա գնալ»: Լսի՛ր, ես չափ լաւ եմ հասկանում, թէ ի՞նչ է թագնուած այդ խօսքերի տակ: Ես լաւ գիտեմ, թէ դու ինչ ես մտածում: Ճիշտ ես իմացել. ես սրտանց կ'ուզեմայի լինել այնտեղ, որտեղ

օրիորդ Աննան է: Այդ բոլորովին բնական է: Այդ կարելի է նոյն խակ ասել բացարձակ:

Տ. Կէթէ. Հանձնէս—դու այսօր բաւական տարօրինակ ես: Այնպէս տարօրինակ... աւելի լաւ է ես հեռանամ:

ՅՈՀ. (Արագութեամբ): Ես ինքս էլ կարող եմ հեռանալ: (Դուրս է գալիս պատշաճաբար):

Տ. Կէթէ. (Հառաչելով եւ գլուխը շարժելով շեմքում է): Օ՛, Տէր իմ, Տէր իմ...

Օրիորդ Աննան մտնում է, գնում է աթոռի վրայ՝ զլխարկը, պոչուսակը և վերարկուն:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես պատրաստ եմ: (Դիմելով Կեթէին): Դեռ ես ժամանակ կայ.—Ի՞նչքան է մնում...

Տ. Կէթէ. Առնուազն երեք քառորդ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ա՛խ.—Ինչ համար ձեզ մօտ շատ լաւ էր, և ահա արդէն պէտք է մեկնել:

Տ. Կէթէ. Այո, ժամանակը անցնում է:

ՕՐ. ԱՆՆԱ. Այժմ ես պէտք է բոլորովին փակուեմ Յիւրբիխում: Պարապել, պարապել, ուրիշ ոչինչ չեմ ուզում տեսնել:

Տ. Կէթէ. Քեզ հետ իւզուհայ կը վերցնես:

ՕՐ. ԱՆՆԱ. Ո՛չ, չնորհակալ եմ: Ուտել չեմ ուզում: (Կարճ լռութիւն): Միայն չուտ անցնէին այդ առաջին օրերը, ողջոյնները: Ուղղակի անտանելի է: Բոլոր այդ բարեկամները և հարց ու փորձերը, բոլոր: (Դողում է ինչպէս grsից):—Դու մի-մի անգամ ինձ կը գրես:

Տ. Կէթէ. Օ՛, ի հարկէ: Միայն թէ մեզ մօտ քիչ նորու-թիւներ եւս չլինում:

ՕՐ. ԱՆՆԱ. Կը նուիրես ինձ քո պատկերը:

Տ. Կէթէ. Ինչո՞ւ չէ, ուրախութեամբ: (Ուռնում է գրասեղանի մի արկղում): Բայց սա հինն է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Քնքովութեամբ շոյում է նրա ծոծրակը: Գրեթէ կարեկցաբար): Իմ բարակ պարանոցիկ:

Տ. Կէթէ. (Դեռ փնտռելով, յետ է դառնում: Վշտալի հեզ-նութեամբ): Ասե՛նք նրա վրայ եղած գլուխն էլ շատ ծանր չէ, Աննա:—Ահա և պատկերս: (Տալիս է Աննային մի լուսանկար):

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ աջող է, շատ աջող: Գուցէ ունես և քո մարդու պատկերը:—Ես ձեզ բոլորիդ շատ սիրեցի:

Տ. Կէթէ. Ձը գիտեմ կայ թէ ոչ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ա՛խ, սերելի Կէթէն, փնտռիր, փնտռիր:—Մէկը կայ:—Այո:

Տ. Կէթէ. Մէկը դեռ մնացել է:

ՕՐ. ԱՆՆԱ. Կարող եմ ես վերցնել:

Տ. Կէթէ. Այո, Աննա, վերցրո՛ւ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Շտապ քաղցնում է լուսանկարը): Իսկ այժմ —այժմ ես ձեզնից չուտով կը մոռացուեմ:—Ա՛խ. Կէթխէն, Կէթխէն: (Լալով քնկնում է նրա վզով):

Տ. Կէթէ. Ո՛չ Աննա... ես միշտ... ի հարկէ, Աննա, ես միշտ յիշելու եմ քեզ և...

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ սիրելո՛ւ

Տ. Կէթէ. Այո, Աննա: Այո:

ՕՐ. ԱՆՆԱ. Ասա ինձ միայն, սիրո՞ւմ ես դու ինձ:

Տ. Կէթէ. Ինչո՞ւ ես կասկածում:

ՕՐ. ԱՆՆԱ. Դու մի քիչ էլ ուրախ չես, Կէթէ, որ ես գնում եմ:

Տ. Կէթէ. Ի՞նչ ես ուզում դրանով ասել:

ՕՐ. ԱՆՆԱ. (Բոլորովին բաց քողեկով Կեթիին): Այո, այո: Այդ լաւ է որ ես գնում եմ: Յամենայն դէպս: Մայր Ֆոկերատին էլ այլիս դիւր չէ գալիս իմ ներկայութիւնը:

Տ. Կէթէ. Այդ բանին ես չեմ հաւատում:

ՕՐ. ԱՆՆԱ. Կարող ես ինձ հաւատալ: (Նստելով սեղանի մօտ): Ինչի՞ համար է այդ ամենը: (Ինքզինքը մոռանալով դուրս է հանում քաղցրած լուսանկարը եւ մտախոհ նայում նրան): Ո՛ր պիտի խոր կնճիւռ ունի նա բերանի շուրջը:

Տ. Կէթէ. Ո՞վ:

ՕՐ. ԱՆՆԱ. Հաննէսը:—Ուղղակի թախծի կնճիւռ: Այդ առաջ է գալիս միայնակ լինելուց: Ով մենակ է, նա պէտք է շատ տանջուի ուրիշներից:—Ի՞նչպէս ծանօթացաք դուք:

Տ. Կէթէ. Ա՛խ, այդ եղաւ...

ՕՐ. ԱՆՆԱ. Նա դեռ ուսանող էր:

Տ. Կէթէ. Այո, Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Դու դեռ շատ ջանել էիր և դու ասացիր «այո»:

Տ. Կէթէ. (Կարմրելով եւ շփոթուած): Այսինքն, ես...

ՕՐ. ԱՆՆԱ. (Համարեա տանջուելով): Ա՛խ, Կէթխէն, Կէթխէն: (Թաղցնում է լուսանկարը եւ վեր կենում): Դեռ ժամանակ կայ:

Տ. Կէթէ. Դեռ շատ:

ՕՐ. ԱՆՆԱ. Շատ: Ա՛խ, Աստուած: (Նստում է դաշնամուրի առաջ): Դու չես նուագում: (Կեթե տարժում է գլուխը): Չես էլ երգում: (Կեթե կրկին տարժում է գլուխը): Իսկ Հաննէսը սիրո՞ւմ է երաժշտութիւն: Ո՛չ:—Ես նուագում էի և երգում առաջ: Հիմա վաղուց է որ թողել եմ: (Յանկարծակի տեղից վեր կենա-

լով): Միւնսն է: Ինչ կարելի էր վայելել, վայելուեց: Պէտք է գոհ լինել: Իրերի վրայ տարածուած է մի ինչ որ շոգի, ինչ որ չնչառութիւն. այդ է ամենից լաւը: Այդպէս չէ, կէթէ:

Տ. Կէթէ. Այդ ես չը գիտեմ:

ՕՐ. ԱՆՆԱ. Այն ամենը, ինչ քաղցրութեամբ է բուրում, իսկապէս քաղցր չէ:

Տ. Կէթէ. Կարելի է այդպէս է:

ՕՐ. ԱՆՆԱ. Իսկութեամբ այդպէս է:—Ախ, ազատութիւն, ազատութիւն: Պէտք է ազատ լինել ամեն կողմից: Չը պէտք է ունենալ ոչ հայրենիք, ոչ ընտանիք, ոչ բարեկամներ:—Հիմա պէտք է որ ժամանակը լինի:

Տ. Կէթէ. Դեռ ոչ, Աննա:

Փոքր դադար:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես ծիրիխում կը լինեմ շատ կանուխ: Ամբողջ եօթ օր առաջ:

Տ. Կէթէ. Հա:

ՕՐ. ԱՆՆԱ. Միայն թէ շուտ սկսուէին պարապմունքները: (Յանկարծ հեկեկալով փաթաթուում է Կեթի վզով): Ախ, Աստուած, անձկութիւնից ու վշտից սիրտս կտրատուում է:

Տ. Կէթէ. Խեղճ, խեղճ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Շտապ ազատուելով նրա գրկից): Բայց ես պէտք է գնամ: Պէտք է:

Փոքր դադար:

Տ. Կէթէ. Աննա—հիմա որ դու գնում ես—միթէ չես ուզում ինձ խորհուրդ տալ:

ՕՐ. ԱՆՆԱ. (Տխրութեամբ, կարեկից ժպիտով): Սիրելի կէթիս:

Տ. Կէթէ. Դու այդ հասկացար... դու այնպէս բարերար ազդեցութիւն ունեցար նրա վրայ:

ՕՐ. ԱՆՆԱ. Ազդեցութիւն ունեցայ: Իսկապէս:

Տ. Կէթէ. Այո, Աննա:—Եւ լսիր—ինձ վրայ նոյնպէս: Ես պէտք է քեզից շատ բաների համար չնորհալալ լինեմ: Եւ ես այժմ հաստատ վճռել եմ... խորհուրդ տուր ինձ, Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես չեմ կարող քեզ խորհուրդ տալ: Ես վախենում եմ քեզ խորհուրդ տալ:

Տ. Կէթէ. Դու վախենում ես:

ՕՐ. ԱՆՆԱ. Ես քեզ շատ եմ սիրում, շատ եմ սիրում, Կէթիս:

Տ. Կէթէ. Ախ, եթէ ես կարողանայի մի բան անել քեզ համար, Աննա:

ՕՐ. ԱՆՆԱ. Այդ դու չես խղճախիլ անել—չես կարող անել:

Տ. Կէթէ. Բայց գուցէ... գուցէ ես գիտեմ թէ ինչից ես տանջուում:

ՕՐ. ԱՆՆԱ. Ինչից եմ տանջուում, անխելք աղջիկ:

Տ. Կէթէ. Ես կարող էի ասել, բայց...

ՕՐ. ԱՆՆԱ. Լիբրում-լարում, ինչից պէտք է տանջուեմ: Գնահ, գնահ: Եկել եմ այստեղ, կրկին հեռանում եմ: Ոչինչից ոչինչ էլ չի պատահել: Տես, կրկին երեսայ սիրելի արեր: Եկ վերջին անգամ գնանք պտտենք այդին: Ինչ էլ լինի, հարիւրաւոր ե հազարաւոր մարդիկ աւելի վատ են ապրում—կամ... Մի բան յիշեցի—ես պէտք է խկոյն մի երկու խօսք գրեմ:

Տ. Կէթէ. Այդ կարող ես այստեղ անել: (Տեղ ե բաց աճում գրասեղանի վրայ): Բայց ոչ: Թանաքը ե գրիչը այնտեղ են, Հաննէսի սենեակում: Նա այնտեղ չէ: Գնահ այնտեղ, Աննա: (Նա բողնում ե Աննային դռնով եւ մնում մենակ):

Փոքր դադար:

ՅՈՀ. (Ներս ե մտնում դրսից: Աւելի անհանգիստ քան առաջ): Դարձեալ սկսեց անձրեկել:—Մենք պէտք է կառք պատուիրէինք:

Տ. Կէթէ. Հիմա շատ ուշ է այդ անել:

ՅՈՀ. Այո, դժբախտաբար:

Տ. Կէթէ. Բրաունը այստեղ էր:

ՅՈՀ. Այդ ինձ չէ հետաքրքրում: Ի՞նչ էր նա ուզում:

Տ. Կէթէ. Նա կրկին յաճախելու է մեզ ե ամեն ինչ ձեր մէջ լինելու է ինչպէս առաջ:

ՅՈՀ. (Կարճ ծիծաղում ե): Ծիծաղելի է: Այդ պէտք է ինձ հիացնի:—Գուցէ դեռ կը համենք, եթէ ուղարկենք:—Ա՛խ, առհասարակ...

Տ. Կէթէ. Կառք կանչելու, Հաննէս: Մինչեւ կայարանը հօ հեռու չէ:

ՅՈՀ. Բայց սաստիկ ցեխ է, հաղիւ կարելի է անցնել: Առհասարակ դժուար է երեակայել աւելի վատ եղանակ ճանապարհորդելու համար:

Տ. Կէթէ. Այդ ոչինչ, կուպէում է նա նստելու:

ՅՈՀ. Նա երբորդ կլասսում, որ ամբողջապէս լքցուած է ե բացի այդ՝ թաց ոտերով:

Տ. Կէթէ. Նա ի հարկէ կը նստի կանանց կուպէում:

ՅՈՀ. Գոնէ տուր նրան մեծ պլէդը:

Տ. Կէթէ. Այո, այո: Արդարեւ ես ինքս էլ մտածեցի դրա մասին:

ՅՈՂ. Ա՛խ, առհասարակ բոլոր բանը այնպէս անսպասելի չուտ սկստահեց:

Տ. Կէթէ. (Ձէ պոսասխանում):

ՅՈՂ. Նա անշուշտ ուրախութեամբ կը մնար մի երկու օր ես:

Տ. Կէթէ. (Փոքր լուսնիկից յետոյ): Ձէ որ դու նրան առաջարկեցիր:

ՅՈՂ. (Աւելի խիստ): Այն ես, բայց ոչ դուք: Ոչ դու և ոչ մայրս: Դուք այն ժամանակ լսել էիք և նա այդ ի հարկէ նկատեց:

Տ. Կէթէ. Ա՛խ, այդ... Ոչ... ես չեմ կարծում որ, Հաննէս...

ՅՈՂ. Իսկ եթէ հրաւիրելու ժամանակ երկուսը կանգնած են—ձկները նման լուռ—ի հարկէ կը կորչի ամեն մի ցանկութիւն մնալ և ակամայ կը գերադասի մերժել:—Չիշտն առած՝ ինձ համար շատ ցաւալի է որ մենք նրան վճնդում ենք այսպիսի մի զիշեր ու վատ եղանակին:

Տ. Կէթէ. (Մօտեցալով նրան երկչոտ ցնցոտեամբ): Ո՛չ, Հաննէս: Այդպէս սխալ մի նայիր բանի վրայ: Եւ մի մտածիր միշտ այդպէս վատ իմ մասին: Վճնդելու մասին խօսք անգամ չը կայ, Հաննէս:

ՅՈՂ. Դուք բաւականաչափ նրբազգաց չէք: Դուք կարծես կոյր էք: Ինձ վրայ այդ այնպիսի սպաւորութիւն է թողնում, որ կարծես թէ մենք ուղղակի աթոռը դնում ենք դռան առաջ... Ուղղակի: «Բաւական է որքան մնացիր, հիմա գնա:—Հիմա գնա, ուր կամիս հեռացիր, կորիւր ճանապարհը հարթ է քո առաջ»... Ահա այդպէս է ինձ թւում, Կէթէ: Բաժանուելիս էլ ամենաշատը մի սառն ափսոսանք և աւելի ոչինչ:

Տ. Կէթէ. Ոչ, Հաննէս: Մենք աշխատեցինք նրան մի քիչ էլ ապահովացնել:

ՅՈՂ. Եւ դու կարծում ես որ նա այդ կ'ընդունի: Եւ յետոյ այդ մեր արածը դեռ շատ քիչ է: Փողը չէ կարող քաւել մեր անսիրելութիւնը:

Տ. Կէթէ. Բայց, Հաննէս, մի անգամ հօ նա պէտք է դնայ:

ՅՈՂ. Այդպէս խօսում են ֆիլիստէրները, Կէթէ: Նա այստեղ ապրում էր, նա մեր բարեկամը դառաւ, և այժմ, ասում են ֆիլիստէրները՝ մենք պէտք է բաժանուենք: Այդ ես չեմ հասկանում: Այդ մի անիծուած անմտութիւն է, որ ամեն տեղ կտրում է մարդու ճանապարհը, որ ամեն տեղ փչացնում է նրա կեանքը:

Տ. Կէթէ. Ուրեմն դու ուղում ես, որ նա դեռ մնայ այստեղ:

ՅՈՀ. Ես բնաւ ոչինչ չեմ ուզում: Ես միայն այնքանն եմ ասում, որ այդ... որ մեր մտածելու եղանակը ուղղակի այնպէս ողորմելի է և նեղսիրտ ինչպէս ամեն մի ֆիլիստէրական մտածողութեան եղանակ: Եւ եթէ ինձնից կախուած լինէր—որքան ես գիտեմ—եթէ ես ձևականապէս կաշկանդուած չը լինէի ամեն տեսակ չնչին յարաբերութիւններով, ես կ'իմանայի այլ կերպ վերջացնել այս բաները, ես խիղճս այլ ձևով կը պահպանէի, ես այլ կերպ կը վերաբերէի դէպի ինձ, քան այժմ: Հաւատացէք ինձ:

Տ. Կէթէ. Բայց գիտե՞ս դու, Հաննէս,—ինձ թւում է—իսկապէս չուտով—այստեղ ես աւելորդ կը լինեմ:

ՅՈՀ. Այդ ես չեմ հասկանում:

Տ. Կէթէ. Եթէ դու—ինձ հետ միայն—գոհ չես:

ՅՈՀ. Տէր Աստուած: Հայր երկնաւոր: Ոչ—իսկապէս—արդարեւ—գիտե՞ս դու—այդ էր ինձ պակաս: Իմ ջղերս էլ հօ նաւի պարաններ չեն: Այդ այլ ես տանել այժմ ես անկարող եմ: (Գնում է պարտեզ):

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Ներս է բերում մի գաւաթ բուլիօն, դնում է սեղանի վրայ): Այս էլ օրիորդի համար:

Տ. Կէթէ. (Յուսահատութիւնից կոտրուած դիմում է հեկեկալով սիկին Ֆօկերասին, փաքալում է հեծկլալով եւ քոքովելով նրա վզով): Մայրիկ—մայրիկ. ես պիտի փախչեմ—փախչեմ այստեղից—փախչեմ այս տնից—փախչեմ բոլորիցդ:—Այդ չափազանց է, չափազանց... Մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Աստուած սիրես, զաւակս—այդ ի՞նչ է—ինչպէս... ո՞վ համարձակուեց քեզ...

Տ. Կէթէ. (Փոխուելով, զայրացած): Ո՛չ, ես այնքան էլ դէն ընկած չեմ որ ինձ դուրս չբարտեն: Եւ թոյլ չեմ տալ ինձ դուրս չալրտել: Մայրիկ, ես իսկոյն ճանապարհ եմ ընկնում: Նաւով—դէպի Ամերիկա—միայն փախչել, փախչել այստեղից—դէպի Անգլիա—ուր ոչ ոք ինձ չէ ճանաչում, ուր...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց զաւակս—դէպի Ամերիկա—ողորմած Աստուած: Սակայն ի՞նչ պատահեց քեզ: Դու ուզում ես փախչել քո մարդուց, քո երեխայից. Ֆիլիսալիկը պէտք է առանց մօր մեծանայ: Այդ անկարելի բան է:

Տ. Կէթէ. Ախ, ի՞նչ բան է «մայր» նրա մայրը մի յիմար, կարճամիտ անձնաւորութիւն է: Ինչի՞ն է նրան հարկաւոր ինձպէս մի յիմար, սահմանափակ անձնաւորութիւն: Ես այժմ գիտեմ, որքան յիմար և սահմանափակ եմ ես: Նրանք այդ ինձ ասում էին ամեն օր: Նրանք ինձ այնչափ չնչին ողորմելի դարձ-

ըին, որ ես այժմ ինքս ինձ զղուելի եմ: Ո՛չ, ո՛չ, հեռու այստեղից, հեռու:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց Կէթխէն, ինքդ մտածիր... մարդուցդ ու երեխայիցդ... Աղաչում եմ քեզ ի սէր Աստուծոյ, ի սէր Բրիտանիայի:

Տ. Կէթէ. Առհասարակ երբ և իցէ նա պատկանել է ինձ: Սկզբում նա պատկանում էր իր բարեկամներին, այժմ Աննային: Ինձ հետ միայն՝ նա երբէք գոհ չէ եղել: Ես անիծում եմ իմ կեանքս: Ես ձանձրացայ այս անիծեալ գոյութիւնից:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Նոյնպէս իրանից դուրս գալով, սասիկ ոգեւորւելով կարծես յանկարծակի պարզւում է նրա մեքում ամեն ինչ: Նրա աչքերը յառած եւ փայլուն, նրա այտերը փոփոխակի գունատւում եւ կարմրում են): Տեսնում էք, Տեսնում էք: (Յոյց է տալիս մատով տարածութեան մեջ): Տեսնում էք այժմ: Տեսնում էք: Ի՞նչ էի ես ասում: Տեսնում էք: Այն տունը, ասացի ես, որտեղից զթատէր Աստուածը հալածուած է, մի գիշերուայ մէջ փլուում է: Տեսնում էք: Մի մոլորուէք: Հիմա տեսնում էք: Ի՞նչ էի ես ասում: Նախ աստուածուրաց, ապա չնացող, ապա... Կէթխէն:

Տ. Կէթէ. (Ուժասպառ մաքաւելով) Ո՛չ, մայրիկ: Ո՛չ, ո՛չ, մայրիկ: Ես... Ես...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Կէթխէն.—հաւաքիր ուժերդ, գնանք: Մէկը գալիս է: Ե՛կ գնանք: (Կեթի հետ հեռանում են ննջարանը):

Յոհաննէսը մտնում է պատշկամբից: Տիկին Ֆոկերատը բաց է անում ննջարանի դուռը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ա՛խ, այդ դու ես, Հաննէս: (Ներս է մտնում, բոլոր ոյժով, աշխատում է ննջել իր չափազանց յուզմունքը: Ձեւացնում է քե մի բան փնտռում է սենեակում): Հաննէս:

ՅՈՀ. Ի՞նչ է, մայրիկ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ոչինչ: (Մինչ Յոհաննէսը հարցական հայեացքով նայում է նրան): Ի՞նչ ես այդպէս նայում:

ՅՈՀ. Միայն ինձ թուաց, որ կարծես դու... Ես պէտք է ասեմ որ չեմ հաւանում, երբ դուք այդպէս հետեւում էք ինձ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Տղան, տղաս, քեզ համար լաւ է, որ ձմեռ է գալիս: Դու այնպիսի դրութեան մէջ ես... Առաջ դու այդպէս վատ չէիր վերաբերւում դէպ ինձ: Ամենից առաջ դու պէտք է հանգստութիւն ունենաս:

ՅՈՀ. Այո, այո. ի հարկէ: Դուք միշտ աւելի լաւ գիտէք քան ես ինքս, թէ ինչն է ինձ համար լաւ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Մանաւանդ որ Կէթէն էլ դեռ բոլորովին չէ կազդուրուել:

ՅՈՂ. Աննան հօ իսկապէս մի մեծ նեղութիւն նրան չը պատճառեց:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ինչքան չը լինի: Ես ինքս պառաւ տեղովս ուրախութեամբ ամեն բան կ'անէի, բայց ծերացած ոսկոռներս երբեմն չեն դիմանում:

ՅՈՂ. Եւ այդ բանը անելու բնաւ կարիք չունես, այդ ես քեզ հարիւր անգամ եմ ասել: Տան մէջ մենք բաւական թուով ծառաներ ունենք:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բայց օրիորդը վերջապէս պէտք է հօ դարձեալ իր պարապմունքները սկսի:

ՅՈՂ. Այդ նրա գործն է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛չ, ես բոլորովին չեմ հասկանում: Ամեն բան սահման ունի: Հերիք է: Նա բաւական երկար այստեղ մնաց:

ՅՈՂ. Իսկապէս ի՞նչ ես դու ուզում: Այդ բոլորը ինձ այնպէս տարօրինակ է թւում... ես ուղղակի չեմ հասկանում:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դու ուզում ես այդ Մառին յորդորել՝ էլի մնալ և...

ՅՈՂ. Հէնց այդպէս եմ անելու: Եւ անպատճառ այդպէս եմ անելու: Անպատճառ... Մի բան ունեւ դրա դէմ, մայր:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Սպառնալից դեմքով): Յոհաննէս, Յոհաննէս:

ՅՈՂ. Ո՛չ, մայրիկ, իսկապէս այնպէս է բանը որ... Աստուած իմ, կարծես ոճիր է կատարուել, ի՞նչ է: Այդ արդէն ո՛չ միայն...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Համոզեցուցիչ, բայց բարեսրտեամբ): Տղաս: Խելացի եղիր: Լսիր ինձ հանգստութեամբ: Ախր ես քո մայրն եմ: Չէ որ ես քո լաւն եմ ցանկանում: Առհասարակ մարդ չի լինի, որ ինձնից աւելի շատ քեզ բարի ցանկայ: Լսիր, ես ի հարկէ գիտեմ, որ դու ազնիւ բնաւորութիւն ունես—բայց մենք թոյլ մարդ արարածներ ենք, Հաննէս, և կէթէն կասկածանքով է նայում—և...

ՅՈՂ. (Ծիծաղելով): Մի նեղանար, մայրիկ, բայց ես չեմ կարող չը ծիծաղել: Իսկապէս ուրիշ բան չէ մնում անել, քան ծիծաղել: Մայր, ախր ուղղակի ծիծաղելի է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ա՛խ, երեխայ, երեխայ: Աւելի ուժեղներն են ընկել այդպիսի թակարդներ: Յաճախ այդ նկատում են այն ժամանակ, երբ արդէն շատ ուշ է:

ՅՈՂ. Ա՛խ, մայր իմ: Եթէ իսկապէս դուք ուզում էք որ ես խելքս չը կորցնեմ—ի սէր Աստուծոյ այդպիսի խօսակցութիւններով ինձ մի տանջէք: Ինձ մի չփոթէք, ինձ մի յուսահատեցրէք: Մի չչնջէք ականջիս բաներ, որ... մի ձգէք այն-

պիտի յարաբերութիւնների մէջ, որոնք ինձնից հետու են: Թա-
խանձապին խնդրում եմ ձեզնից, պարոններ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Դու պէտք է վերջապէս գիտե՞նաս, ինչ ես
դու անում, Հաննէս: Ես միայն ասում եմ քեզ զգո՛յշ եղի՛ր:

Տիկ. Ֆօկերատը գնում է Ննջարան: Օր. Աննան դալիս է:

ՕՐ. ԱՆՆԱ. (Նկատելով Յոնանցսիին): Պարոն զօկտօր:
(Մօտենում է արուին, որի վրայ դրած են նրա իրերը եւ վեր-
ցնում է անձրեւից պաշտպանող վերաբոն, որպէս զի նազնի):
Դէհ, այժմ գնանք:

ՅՈՂ. (Վազում է նրա մօտ եւ օգնում նրան հագնուել): Ու-
րեմն աշնուամենայնիւ գնում էք:

ՕՐ. ԱՆՆԱ. (Կոնկում է վերաբոն): Ինչի մասին որ ասա-
ցիք, չուտով ինձ կ'ուղարկէք:

ՅՈՂ. Այդ ես չեմ մոռանալ: Գիտէք, օրիորդ Աննա, ես
մի քիչ աւելի հանգիստ կը լինէի, եթէ դուք թոյլ տայիք մեզ
բարեկամական իրաւունքի վրայ հիմնուելով...

ՕՐ. ԱՆՆԱ. Ինձ վիրաւորում էք, պարոն զօկտօր:

ՅՈՂ. Դէ լաւ, այլ ես դրա մասին չեմ խօսիլ: Բայց դուք
պիտի ինձ խստատանաք—գիմել ամեն մի կարիքի դէպքում: Որ
իրաւունք ունենան ուրիշները օգնել... այդ մենք բնաւ չենք ու-
ղենալ:

ՅՈՂ. (Մօտենում է ննջարանի դռան եւ կանչում): Մայր,
Կէթէ:

Կէթէն և տ. Ֆօկերատը մտնում են:

ՕՐ. ԱՆՆԱ. (Համբուրում է Տ. Ֆօկերատի ձեռք): Անսահ-
ման շնորհակալ եմ: (Կէթէն եւ Աննան ջերմ համբուրում են):
Դու իմ բարի, իմ սիրելի... տես, զրիւ հա:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բարի ճանապարհ:

Տ. Կէթէ. Լաւ.—բախտաւոր... (Լաց է լինում)... Բախ-
տաւոր ապրես, թո՛ղ... (Հեկեկանքից չի կարողանում շարունա-
կել):

Յոհաննէս տանում է Աննայի պայուսակը: Կէթէն և տ. Ֆօկերատը
ճանապարհ են դնում նրանց մինչև պատշկամբը: Այնտեղ նրանք հանդի-
պում են Բրաունին, որ հրաժեշտ է տալիս Բաժանում են: Տ. Ֆօկերատ,
Կէթէ և Բրաուն մնում են պատշկամբի վրայ: Կէթէն թաշկինակով է ա-
նում: Յետոյ վերադառնում են դրանք սենեակը:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Միաբարելով հանդարտ լացով Կէթէին): Էհ,

զաւակս, զաւակս: Մի վշտանար այդպէս: Աննան այդ կը տանի, նա ջահէլ է:

Տ. Կէթէ, ինչպէս սրտաշարժ էին նրա աչքերը: Ախ, շատ վատութիւններ է նա կրել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ, Մենք բոլորս էլ վարդերի վրայ չենք քայլում, Կէթէ:

Տ. Կէթէ, Ախ, որչափ շատ է վիշտն ու տանջանքն աշխարհիս վրայ: (Գնում է ննջարանը):

Փոքր դադար:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Բուրժուին էլ ձեռք չէ տուել: (Վերցնում է քասք դուրս ցանելու համար: Կանգնում է Բրաունի առաջ): Պարոն Բրաուն, ես պէտք է ձեզ ասեմ. վերջին տասը րոպէներին—ճիշտ եմ ասում... բաւական չարչարանք կրեցի: (Մի քանի քայլ է անում, բայց յանկարծ վրան քուլութիւն է գալիս եւ սփալում է նստել): Հիմա ես այդ զգում եմ—բոլոր անդամներս ցաւում են: Կարծես փչրուած լինեմ:

ԲՐԱՈՒՆ. Միթէ մի բան պատահեց, տիկին Ֆօկերատ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես ուզում եմ գոհ լինեմ: Այո, ես չեմ ուզում ոչինչ ասել, միայն թէ դեռ դրանով վերջանայ: Ողորմած Աստուած մատով մեզ սպառնաց—և ես նրան հասկացայ... Դուք էլ ասե՛ք նոյնպէս անաստուածի մեկն էք: Այո, այո, բայց հաւատացէ՛ք պառաւ, փորձուած կնոջ, պ. Բրաուն: Առանց նրան հեռու չես գնալ: Շուտ կամ ուշ կը սայթաքուես և կ'ընկնես: (Փոքր դադար): Գնամ տեսեմ... (Ուզում է վեր կենալ, բայց դեռ աս է ուժասպառ): Այսպէս է լինում: Ով գիտէ արդեօք դրանից մի բան չը պատահի: (Ականջ է դնում դեպի դուռը): Այդ ով է այնտեղ... Տան մէջ: Սանդուխտներով մէկը բարձրանում է:—Ախ հա: Մեզ մօտ լուացք է լինելու: Աղախինները թռչում են լուացքը:—Այժմ հանգստութիւն կը տիրի, այժմ կրկին կարելի կը լինի գործով զբաղուել: (Փոքր դադար): Տեսնում էք այնպիսի ոսկէ բնաւորութիւն, այնպիսի ազնիւ անբիծ մարդ ինչպէս Յոհաննէսը... Տեսնում էք ո՛ր է տանում, երբ մարդ ապաւինում է իր սեփական ոյժերին: Այդ բոլորը մեծահնչիւն խօսքեր են թէ «ես ունեմ գործի կրօն»: Եւ կրկին ահա երևում է թէ ինչ է դուրս գալիս: Ողորմած Աստուածը միայն փչում է և իսկոյն քանդուում են մեր թղթէ տնակները:

Յոհաննէսը յուզուած, քիչ շփոթուած, արագ մտնում է դռի դռնից:

ՅՈՂ. Տղերք, նա մնում է:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Չը հասկանալով): Ո՞վ է—Հաննէս—մնում:

ՅՈՂ. Նա մնում է էլի մի երկու օր, մայր: Բնականաբար օրիորդ Աննան:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Կարծես կաթուածահար եղած): Օրիորդ Աննան մն... բայց ուր է նա:

ՅՈՂ. Նա իր սենեակում է, մայր: Բայց ես չեմ հասկա-
նում...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ուրեմն այդպէս:

ՅՈՂ. Շնորհ արեք խնդրեմ և անհեթեթ փքուն բաներ մի
ստեղծէք: Այդ...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Վեր է կենում եւ հրամայաբար): Հաննէս:
Լսիր ինձ: (Ազդու): Ես քեզ ասում եմ. այդ կինը այստեղ այլ
ևս բան չունի անելու: Այդ կինը անպատճառ պէտք է թողնի
հեռանայ մեր տնից: Ես անպայման այդ պահանջում եմ:

ՅՈՂ. Մայր, այս ում տանն ենք մենք:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Օ՛, դու... այդ ես գիտեմ: Այդ ես չատ լաւ
գիտեմ: Այս մի մարդու տունն է, մի մարդու... որ մոռացել է
իր պարտաւորութիւնը, որ... և յետոյ դու ինձ յիշեցնում ես,
որ ես այստեղ... ի հարկէ, ի հարկէ... ես կարող եմ այդ... այդ
անձի համար տեղս բաց անել:

ՅՈՂ. Մայր, դու այնպիսի տօնով ես խօսում օրիորդ Ան-
նայի մասին, որ ես չեմ կարող փանել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Իսկ դու այնպիսի տօնով ես խօսում մօրդ
հետ որ մեղանշում է չորրորդ պատուիրանի դէմ:

ՅՈՂ. Մայր, ես կ'աշխատեմ ինձ զսպել: Բայց մի քիչ էլ ի
նկատի ունեցէ՛ք իմ հոգեկան դրութիւնը: Թէ ոչ կարող է այն-
պիսի բան պատահել... Դուք կը ստիպէք ինձ անել այնպիսի
բան, որ յետոյ ես անկարող կը լինեմ ուղղել:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ո՛վ ինքը իր վրայ ձեռք է բարձրացնում, նա ա-
նիծուած է միշտ և յաւիտեան:

ՅՈՂ. Մի և նոյն է: Ուրեմն... պէտք է կրկնակի զգոյշ
լինէք:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես ձեռներս լուանում եմ: Ես հեռանում
եմ, գնում բոլորովին:

ՅՈՂ. Մայր:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Ես կամ այդ անձնաւորութիւնը:

ՅՈՂ. Մայր, դու անկարելին ես պահանջում: Ես հազիւ
կարողացայ նրան համոզել մնալ: Հիմա ի՞նչ է, ես պէտք է գնամ
նրա մօտ և... Աւելի չուտ ես ինձ գնդակահար կ'անեմ:

Տ. ՖՕԿԵՐԱՏ. (Յանկարծակի վճռակաճութեամբ): Լաւ—այն
ժամանակ ինքս կը գնամ նրա մօտ: Ես ուղղակի կը յայտնեմ

նրան իմ կարծիքը... Օ՛հ, նենգամիտ կօկէտ: Այդ... նա է քեզ գցել իր ցանցը:

ՅՈՀ. (Կտուլմ է նրա ճանապարհը): Մայր, դու չես գնալ նրա մօտ: Նա իմ պաշտպանութեան տակ է, և ես կը կարողանամ նրան պաշտպանել կոպիտ վիրաւորանքներով:—Ում դէմ էլ որ լինի:

ԲՐԱՌԻՆ. Հաննէս, բայց Հաննէս...

Տ. ՖՕԿԵՐԱՏ. Լաւ, լաւ: Ես արդէն տեսնում եմ—որ այդ... որ այդ շատ հեռու է քեզ տարել: (Հեռանում է դրսի դռնով):

ԲՐԱՌԻՆ. Սակայն Հաննէս, ինչ է քեզ պատահել:

ՅՈՀ. Թողէք ինձ հանդիստ—դուք՝ հողի աւերողներ:

ԲՐԱՌԻՆ. Խելքի եկ, Հաննէս: Իմ անունս Բրաուն է: Ես մտադրութիւն չունեմ քեզ բարոյական քարոզներ ասել:

ՅՈՀ. Պարոններ, դուք պղծում էք իմ գաղափարներս: Դա հողեկան բռնութիւն է: Դրանից ես սարսափելի տանջւում եմ: Այլ ևս ես ոչ մի խօսք չեմ արտասանի:

ԲՐԱՌԻՆ. Հաննէս, այժմ դու չես կարող լուել: Այդ բանը այնպիսի ընթացք ստացաւ որ դու յայտնի չափով ստիպուած ես խօսել: Աշխատիր մի քիչ էլ աւելի սառնարիւն լինել:

ՅՈՀ. Էլ ինչ էք ուզում իմանալ: Ինչո՞ւմ էք ինձ մեղադրում: Պարոններ, յամենայն դէպս ես պէտք է մերժեմ ապացոյցներ բերելու մեր անմեղութեան համար: Այդ չի թոյլ տայ իմ հպարտութիւնը, հասկան՞ում ես... զգուանք... մտածելն անգամ:

ԲՐԱՌԻՆ. Լսիր ինձ, Հաննէս: Ես իրերի վրայ նայում եմ բացարձակապէս սթափ աչքով:

ՅՈՀ. Թէ ինձնից հարցնես, նայիր ինչպէս քո ցանկութիւնն է: Միայն ոչ մի խօսք քո հայեացքների մասին, որովհետեւ իւրաքանչիւր քո խօսք՝ երեսիս խփած մտրակի հարուածների է հաւասար:

ԲՐԱՌԻՆ. Հաննէս, դու պէտք է համաձայնուես, որ դու կրակի հետ ես խաղում:

ՅՈՀ. Բոլորովին չեմ կարող համաձայնուել: Իմ յարաբերութիւնները դէպի Աննան ազատ է ձեր դատաստանից:

ԲՐԱՌԻՆ. Դու հօ չես ուրանալ որ դու որոշ պարտաւորութիւններ ունես դէպի քո ընտանիքը:

ՅՈՀ. Դու հօ չես ուրանալ որ ես որոշ պարտաւորութիւններ ունեմ և դէպի ինքս ինձ: Տեսնում էք, դուք մի գլուխ մեծ մեծ խօսում էիք—և այժմ երբ ես առաջին ազատ քայլն եմ ա-

նում, դուք արդէն վախենում էք, դուք արդէն խօսում էք պարտաւորութիւնների մասին, դուք արդէն...

ԲՐԱՌԻՆ. Ես բնաւ չէի ուզում այդ ասել: Ինչ բան է պարտաւորութիւն: Դու միայն պէտք է պարզ յայտնես: Այստեղ հարցը այն է որ կամ Աննան կամ քո ընտանիքը:

ՅՈՀ. Լսիր, դու կարծես գիտեի ես: Ինչո՞ւ դուք բոլոր ուժով աշխատում էք ընդհարումներ առաջացնել, որոնք գոյութիւն չունեն: Բոլորովին արդարացի չեն ձեր ասածները: Ես ընտրութիւն անելու կարիք չունեմ: Այն ինչ ինձ միացնում է Աննայի հետ՝ նոյն չէ, ինչ որ ինձ միացնում է Կէթէի հետ: Մէկը միւսին չէ շօշափում: Վերջապէս, սատանան տանի, ախր դա բարեկամութիւն է, որ հիմնուած է նրա վրայ, որ մենք հոգեպէս իրար նման ենք, որ մենք իրար նման ենք զարգացել: Այդ պատճառով մենք հասկանում ենք իրար ախտեղ եւ, ուր մեզ ուրիշները այլ եւ չեն հասկանում, ուր դուք ինձ այլ եւ չէք հասկանում: Այն օրից երբ նա այստեղ է, ես ապրում եմ կարծես նորից ծնուած: Ես կրկին գտայ զուարթութիւն եւ յարգանք դէպի ինքըս ինձ: Ես զգում եմ ստեղծագործական սյօ, ես զգում եմ որ այդ բոլորը կատարուեց նրա շնորհիւ: Ես զգում եմ որ նա իմ զարգացման համար մի պայման է: Իբրեւ բարեկամուհի է նա ինձ հարկաւոր, հասկանում ես դու: Միթէ չեն կարող տղամարդը եւ կինը նաև բարեկամներ լինել:

ԲՐԱՌԻՆ. Հաննէս, մի բարկացիր վրաս, իսկապէս դու ոչ մի անգամ գործի վրայ չը նայեցիր սթափ աչքով:

ՅՈՀ. Մարդիկ, դուք չը գիտէք, թէ ինչ էք անում, ասում եմ ես ձեզ: Դուք դատում էք մի ողորմելի շարլօնով, որ ես գցել եմ ոտներիս տակ: Եթէ դուք ինձ սիրում էք, ինձ մի խանգարէք: Դուք հասկացողութիւն չունէք, թէ ինչ է կատարում իմ մէջ: Որ վտանգներ կան, այժմ, ձեր յարձակումներից յետոյ, ես ինքս էլ գրեթէ հաւատում եմ: Բայց ես ունեմ կամք, ապահովելու ինձ համար այն, ինչ ինձ համար կեանքի պայման է, առանց սահմանը անցնելու: Ես կամք ունեմ, այդ դու հասկանում ես:

ԲՐԱՌԻՆ. Այդ քո հին պակասութիւնն է, Հաննէս: Դու ուզում ես միացնել այնպիսի բաներ, որոնք բնաւ չեն միացնուի: Իմ կարծիքով միայն մի հնարաւորութիւն կայ—դնալ Աննայի մօտ, հասկացնել նրան իրերի դրութիւնը եւ ինչդրել նրան հեռանալ այստեղից:

ՅՈՀ. Վերջացրիր: Ինչ ասելու էիր ասացիր: Որ քեզ համար բոլորովին պարզ լինի գոնէ այդ կէտը եւ իզուր խօսքեր չը

կորցնես, դէ իմացիր: (Փայլասակող աչքերով եւ շեշտելով իւրա-
 քանչիւր խօսք): Այն, ինչ զուր ուղղում էք, չի պատա-
 հի:—Ես այն չեմ, ինչ որ մի քիչ առաջ էի, Բրաուն: Ես ունեմ
 մի բան ինձ վրայ տարածուած, որ ինձ ղեկավարում է: Դուք
 և ձեր կարծիքները այլևս ոչ մի ոյժ չունէք ինձ վրայ: Ես ինքս
 ինձ գտայ և կը լինեմ ինքս ինձնից կախուած: Ես ինքս՝ հակա-
 ռակ ձեզ բոլորիդ: (Շատ զնում ե պարապելու սեմեակը):

Բրաունը թօթում է ուսերը:

Ե.—Ա.

ՓՈՔՐԻԿ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ

I

Վանում տեղի ունեցած մեծ կոտորածից յետոյ, Թիֆլիզի փողոցներում թափառում էին երկու երեխայ՝ տղայ և աղջիկ։ Երկուսն էլ կիսամերկ, աղտոտ դէմքերով ու գզգզուած մազերով։ Դժուար չէր գուշակել որ նրանք որբեր էին և անկասկած եղբայր և քոյր, որովհետեւ չափազանց նման էին իրար։ Նրանց դալկացած այտերը և թախծալից աչքերը վկայում էին, որ մարդիկ չատ հեռու էին նրանց խնամելու մտքից։

Թէ քաղցից և թէ առհասարակ անտանելի պայմաններից առաջացած իրքան բան կար գրած նրանց ճակատների վրայ և իրքան հեշտ էր կարդալ, բայց ո՞վ էր հետաքրքրուողը։ Մանկական անհոգութեան համար ոչինչ նշանակութիւն չունէին կեղտից գարշահոտութիւն արձակող ցնցոտիները, նոյնպէս աննկատելի կը լինէր նրանց համար մայրական խնամքի բացակայութիւնը և նրանք կը կարողանային անհոգ ապրել ճնճողւկների նման, եթէ անօթութիւնը չը նեղացնէր։ Քաղցից առաջ եկած տանջանքը, որ երեխաների համար ամենասոսկալի բանն է, իր բնորոշ կնիքն էր դրոշմել նրանց կազմուածքի ամեն մի մասի վրայ։ Ո՛չ հայեացքի և ոչ շարժուածքի մէջ չէր նշմարուում մանուկներին յատուկ ախտոյժ։ Ընդհակառակն, կարծես երբեք մանկութիւն չէին ունեցած՝ սկսած ծնուելու առաջին վայրկեանից իսկ։

Մարդկանց անողորմ ու անարդար լինելու կենդանի օրինակներ էին այդ էակները։ Կանգ առան մի մեծ

ու նախշուն տան առաջ, մի ըոպէ խորհրդակցեցին իրար հետ ու նստեցին պատի տակ: Եղբայրը իր պատահաբար շորի փէշից պոկեց սպիտակ թելի կտորը, գցեց քրոջ բերանը, կապեց ատամն ու քաշեց հանեց: «Սա երեք», բացականչեց փոքրիկը և արիւնոտ թուրեր արծակելով աւելացրեց՝ «չորրորդն էլ քիչ շարժուում է»:

Երկիւղալի ու կասկածոտ քայլերով մտան նոյն տան բակը, նայեցին շուրջը և ապա տղան, որի տարիքը հազիւ թէ տասից անց լինէր, սկսեց դողդոջիւն ձայնով երգել մի տարօրինակ եղանակ, իսկ աղջիկը փորձեց պար դալ: Երգ ու պար ամեն տեղ և ամենքի համար զուարճալի բաներ են, բայց այս վայրկեանին տխուր ու հոգեմաշ էին:

Ի՞նչ կարող է լինել աւելի սրտաշարժ, երբ քաղցից ստիպուած մանուկը, մի պատահ հաց ստանալու համար, կոշտ մարդկանց առջև պարում ու երգում է, մոռացած նոյն իսկ նոր հանուած ատամի ցաւը: Ի՞նչ է հրեշտակ, ի՞նչ է մաքրութիւն ու անմեղութիւն, եթէ ոչ երեսայ: Ո՞վ ունի իրաւունք աշխարհիս բարիքներն ու կեանքի քաղցրութիւնները անհոգ վայելելու, եթէ ոչ մանուկը:

Փոքրիկները շարունակում էին իրանց գործը: Մէկը արագ-արագ անհասկանալի բառեր էր արտասանում, որոնց կէսը չփոթուելուց կուլ էր տալիս, իսկ միւսը անդադար պտոյտներ էր գործում, երևակայելով որ պարում է:

Սենեակների միջից բարկութեան ձայն լսուեց: Տանտիկինը հրամայեց սպասաւորին արտաքսել «լակոտներին», որպէսզի բան չը գողանան: Հաւատարիմ ծառան գոռալով դուրս վազեց պատշգամբը ու իր բռունցքները ցոյց տալով, սպառնաց ջարդելու, եթէ խախտն չը հեռանան: Նրանք լեղապատառ վաղ տուեցին դէպի փողոց, ուր փոքրիկը գետնին տապալուեց: Երգն ու պարը մի ակնթարթում լացի փոխուեց: Տանտիկնոջ անչափահաս զաւակները պատուհանից դիտում էին այս տե-

սարանը: Նրանցից ամենամեծը խորհրդաւոր ձայնով ա-
սաց միւսներին. «Նրանք դողեր են»:

— Ո՛տքի կանգնիր, Թագօ, մի վախենար, սիրտ էր
տալիս եղբայրը, աշխատելով դետնից բարձրացնել
ըրո՞ջը:

Երեխայի գլուխը պտտւում էր: Անցուդարձ անող
մարդկանց թիւը մեծ էր, բայց որբերի մօտով անցնե-
լիս ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում:

Երկու աչքով կոյր մի բարձրահասակ երիտասարդ,
որ նոյնպէս օտարական է, տարիներ ընթացքում այդ-
փողոցումն է լինում կանգնած՝ երբեմն հիւսիսային, եր-
բեմն հարաւային կողմում, նայելով եղանակին: Նա իր
երկայն ու ծուռ փայտը ձեռքին, անշարժ յենուած է
լինում պատին և ոչ ոքից ողորմութիւն չի խնդրում: Ոչ
ոք էլ նրան բան չի տալիս: Ինչո՞վ է կերակրւում այդ
կմախք դարձած թշուառը: Նա իր ձեռնափայտը սալա-
յատակին աւփտափելով՝ կամաց-կամաց մօտեցաւ երե-
խաներին ու սկսեց մեղմ ձայնով հետները խօսել, հար-
ցուփորձ անել: Փոքրիկները կարճառօտ պատմեցին, որ
իրանց հօրը քիւրդերը սպանել են, իսկ մայրը մի շաբաթ
առաջ ճանապարհի կիսին մեռել է: Կոյրը գլուխը շար-
ժեց ու տալով նրանց մի կոպէկանոց դրամ՝ պատուի-
րեց, երբէք չը մտնել հարուստների բակը:

Մանուկները նորից գնացին թափառելու: Կանգ-
էին առնում խանութների առաջ, դիտում էին իրանց
հետաքրքրող իրերը, զարմանում էին, հիանում և կրկին
թափառում: Քաղցը տանջում էր երկուսին էլ հաւասա-
րապէս, սակայն իրար բան չէին ասում: Մի անգամ
միայն աղջիկը հարցրեց՝ «Կարօ, ո՞վ կը տայ մեզ հաց»:
«Աստուած», եղաւ պատասխան:

Դուրս եկան մի շատ երկայն փողոց և իրար ձեռ-
քից բռնած անցան մի ծայրից միւսը, ուր քաղաքը վեր-
ջանում է: Այնտեղ նկատեցին մի արջի քոթոթ, որ
չլթայով կապած էր սափրիչի արհեստանոցի առջև և
թաւալուելով փոշիի մէջ մռմռում էր: Կանգ առան այս

զուարճալի տեսարանի դիմաց ու ի սրտէ ծիծաղեցին:

Արհեստանոցի դռան մօտ, երկայն նստարանի վրայ նստած էին չորս հոգի լեռնըցիներ: Բոլորեքեան բերանները պինդ սխմած ու այտերը փքած անշարժ նըստած էին: Մի-մի անգամ մատների միջոցով էին իրար բան հասկացնում: Այդ ռամիկները արջի քոթոթից ոչ պակաս հետաքրքրութիւն չարժեցին Կարօյի ու Թագօի մէջ: Արհեստանոցի ներսից լսուում էր ծիծաղ և ուրախութիւն:

Դալլաբ Պօղոսը, այս ցայտնի զուարճասէր ու հանաքչի մարդը, իր մշտական սեղանակիցների հետ նոր էր նստել ճաշի, երբ այդ լեռնըցիները եկել էին մօրուքները սափրելու: Պօղոսը չուզե՛նալով ոչ ճաշից զրրկուել և ոչ մուշտարիից, պատուիրել էր այդ կիսավայրենիներին մի-մի կում ջուր պահել բերաններում՝ «որ պէսզի մազները փափկեն»: Ինքը իր ընկերների հետ չարունակում էր ճաշել: Միամիտ մարդիկ, բոլորովին չեն թաղրելով, որ իրանց գլխին խաղ են խաղում, համբերութեամբ կատարում էին պատուէրը: Նրանցից մէկը, յանկարծ ուժգին փռտացրեց ու իր բերանի ջուրը ամբողջապէս փչեց կողքին նստողի երեսին: Մանուկները սրտալի ծիծաղեցին: Ներսից նոյնպէս լսուեց բարձրաձայն հռհռոց: Պօղոսը դուրս եկաւ և լուրջ կերպով ստիպեց կրկին ջուր առնելու: Այդ միջոցին նա նկատեց երեխաներին, որոնց չափազանց կեղտոտ ու պատառոտած, տարօրինակ հագուստը նրա գուլթը չարժեց:

— Ինչո՞ւ էք կանգնել այստեղ, հարցրեց նա:

Որքերը պատասխանի տեղ իրար կպան ու պատրաստուեցին փախչելու: Սափրիչը վրայ հասաւ, բռնեց նրանց ու բարեսրտութեամբ հարցրեց.

— Ի՞նչ էք ուզում:

— Մենք հայ քրիստոնեայ ենք, պատասխանեց Կարօն դողդոջիւն ձայնով:

— Հայ էք թէ միթո՞նի, այդ չեմ հարցնում...

— Վանեցի ենք, շտապեց աւելացնել երեխան:

—Վանեցի էք թէ ջհաննամեցի, այդ էլ չեմ հարցնում: Դու ասա, քաղցած էք թէ չէ:

—Հա, քաղցած ենք, շատ քաղցած ենք:

—Ես էլ եմ շատ քաղցած, արտասանեց բարակ ու հիւանդոտ ձայնով աղջիկը և այնպիսի աղերսալի հայեացք ձգեց խօսակցի երեսին, որ դահիճի սիրտն անգամ կը յուզէր:

Սափրիչը վայրկենաբար երևակայեց իր զաւակներին այս դրութեան մէջ ու զարհուրեց: Իսկոյն դուրս բերեց սեղանի վրայ գտնուող ճաշի մնացորդը, հացի կտորներ ու կանաչեղէն, երկու հաւասար մասի բաժանեց ու տուեց:

Մանուկների դէմքերի վրայ ժպիտ խաղաց: Կան դէպքեր, երբ մարդ մի պատառ հացով երջանկութիւն է պատճառում ուրիշին: Մանուկները շտապով հեռացան այդտեղից, իրանց հարստութիւնը կրծքներին պինդ սեղմած, կարծես վախենալով որ մէկը ձեռքներից կը խլի: Նրանք դիմեցին մերձակայ բարձրաւանդակը, ուր գտնուում է բաւական ընդարձակ հրապարակ և ուր երթեւեկութիւնը շատ սակաւ է: Ընտրեցին մի ապահով անկիւն, նստեցին ու ազահաբար բերանները լցրին: Մի ականթարթում վերջացրին իրանց ունեցածը, չը թողնելով ամենաչնչին փշրանք անգամ: Ստամոքսին լիութիւն տալուց յետոյ, անմիջապէս թագօն գտաւ տաշեղ ու մի փալասի կտոր և դրանցից տիկնիկ սարքեց, պառկեցրեց իր ծնկան վրայ, նանիկ ասաց ու քնացրեց: Կարօն էլ անգործ չէր: Գետինը փորեց, մի տնակ շինեց, այնպիսի տնակ, ուր թագօի տիկնիկը կարող էր տեղաւորուել: Բաւական նմանեցրել էր իր հայրական գետնափոր տնակին, որ այժմ աւերակ էր արդէն:

Գործը աւարտելուց յետոյ պառկեց մէջքի վրայ, աչքերը ուղղեց երկնքին, ուր ամպի մի փոքրիկ կտոր հանդարտ սահում էր. աչքերով այնքան հետեւեց, մինչև որ ամպը հալուեց ու ձուլուեց մուգ կապուտակի հետ: Կա-

րօն ընկաւ մտածմունքի մէջ: Յիշեց որ քիչ ժամանակից յետոյ արեւը մայր պէտք է մտնի, օրը կը մթնի, ամեն մարդ իր տուն կ'երթայ ու ամբողջ քաղաքը հանդիստ կը բնի, իսկ իրանք: Մտաբերեց հօրը, մօրը, մտաբերեց նոյնպէս ընկերներին, որոնց հետ միասին լուսադէմին հասան քաղաք ու բաժանուելով իրարից՝ ցրուեցին զանազան կողմեր: Ո՞րտեղ են այժմ նրանք, ինչպէս գտնի: Նրա մանկական հոգուն պաշարեց ծայրայեղ յուսահատութիւն: Կիսախուփ աչքերից դուրս ցայտեցին արտասուքի խոշոր կաթիլներն ու հատիկ-հատիկ գլորուեցին ականջների կողմը: Քոյրը դեռ ևս անհոգ խաղում էր իր տիկնիկի հետ, որ պաշտպան ունէր: Արեւը մայր մտաւ: Խաւարը աստիճանաբար տարածուեց երկրի երեսին, տալով բոլոր առարկաներին տխուր կերպարանք: «Երանի՛ր կրկին քաղցած լինէինք, թէկուզ կրկնապատիկ, բայց ունենայինք մի ապահով անկիւն», մտածեց Կարօն:

— Հանգիստ բնիր, պատուիրեց Թագօն իր տիկնիկին, դնելով փոսի մէջ ու յետոյ դիմեց եղբօրը.— ո՞րտեղ պէտք է քնենք:

— Աստուած կը տայ, պատասխանեց նա, բայց ինքը չէր հաւատում այդ բանին:

— Աստուած չի տայ, յուսահատ ձայնով արտասանեց փոքրիկը և սրտալի ներս քաշեց օդը:

— Հապա այսօր հացը ի՞նչպէս տուեց:

— Նա Աստուած էր:

Տիրեց լռութիւն: Տղան չը գիտէր ինչ պատասխանէր: Քրոջ կասկածը խիստ վհատեցրեց իրան: Կուչ եկաւ, մատները կրծոտեց, շրթունքները ծռեց: Մի րոպէ կարողացաւ զսպել իրան. բայց շուտով կզակը դողդողաց, ինչպէս ցրտից, ու սկսեց լալ: Քոյրը նոյնպէս հետեւեց նրա օրինակին և այսպէս երկու փոքրիկ արարածներ, միայնակ, հեռու մարդկանց աչքերից, բարձրաւանդակի վրայ կանգնած դառն կերպով լալիս էին:

— Աստուած կը տայ, Կարօ, Աստուած կը տայ...

էլ չեմ ասի՝ չի տայ... արտասուքի մէջ խեղդուելով համոզում էր փոքրը մեծին։

Մանուկներին համար ոչ մի դրուժիւն երկարատե չէ։ Երկուսն էլ շուտով միասին լռեցին։ Մութը թանձրանում էր։ Կաղբէկ լեռան դադաթն ու նրան չըջապատող ժայռերը անյայտացան խաւար մառախուղի մէջ։ Ս. Դաւթի սարը իր դաժան կերպարանքով նայում էր ցած, իր փէշերի տակ ապաստանած քաղաքամասին։ Ճրագների լոյսը այստեղ ու այնտեղ արագութեամբ դուրս էին ցայտում սև ֆօնի միջից, ոմանք հեղ ու խոնարհ, ոմանք համարձակ ու յանդուգն։ Մի տեղ նրանք փայլուն խումբ էին կաղմել, կարծես ծիծաղում, ուրախանում էին, միւս տեղ իրարից բաժանուելով աարբեր կողմեր էին քաշուել։ Մի այլ տեղ կլոր չըջանակի ձև էին ընդունել, երրորդ, չորրորդ տեղ եռանկիւնի կամ քառանկիւնի գիծ էին քաշել և այսպէս՝ անհաշիւ։ Կապտախառն-մոխրագոյն երկնակամարը, կարծես երկրի հետ մրցելու համար դուրս էր նետում իր անսահման խորքերից դոհարների հատիկներ եւ բաժանում զանազան խմբակների։ Ո՛րքան խորհրդաւորութիւն, ո՛րքան վեհութիւն կայ այդ գաղտնալից աշխարհի մէջ։

Սակայն մանուկներին չէր հետաքրքրում այդ սովորական բանը։ Նրանք յափշտակուել էին քաղաքի տեսքից։ Այդ ինչ ահագին բան է, այդ ինչ լուսաւորութիւն է։ Նայեցին իրանց շուրջը և սթափուեցին, նորից զգացին, որ անտուն, անտէր և միայնակ են։

Քիչ հեռու նկատուում էր աղքատ տնակների մի երկայն շարք, ուր բոլորից ուշ վառուեցին աղոտ ճրագները։ Յանկարծ նրանց մօտով անցաւ մի բարձրահասակ մարդ, ձեռքին կեղտոտ վառած լապտեր և ուսից կախած սանդուղ։ Նա անհոգ կերպով նայեց նրանց դէմքերին, շուացրեց ինչոր մի յիմար եղանակ ու անհետացաւ։ Տախտակէ պարսպի միջից մի մեծ դամբու դուրս կոխեց գլուխը ու կատաղաբար սկսեց հաշել։ Երեխաները թողեցին այդ ամայի տեղը։

II

Քոթոթը այս անգամ հանդիստ պառկած էր ու իր թաթն էր լիզում: Սափրիչը նստած նոյն նստարանի վրայ, ուր ցերեկով գիւղացիք սպասում էին, թառ էր ածում: Ներսը աղանի վրայ նշմարւում էր մի ձմերուկ ու մի հատ էլ կլոր սև հաց: Դա ընթրիք էր ամբողջ ընտանիքի համար: Պօղոսը ընդհատեց չառգեան ու գոռաց՝ «Ո՞վ էք, ի՞նչ էք ուզում»: Աղջիկը թագնուկեց եղբոր քամակին: Կարօն կախեց գլուխը ու մնաց անշարժ:

— Խնկ էք, շանլակոտներ... Ի՞նչ էք ուզում... Փիէ, առաջ երկուսն էին, հիմա մէկը դառաւ...

Թառը դրեց նստարանի վրայ ու պատրաստուեց վեր կենալու, որ տեղեկանայ թէ ովքեր են, բայց խկոյն մտաբերեց, որ մի քանի ժամ առաջ տեսել է դրանց:

— Փռնչի *), դու ես. եկ այստեղ:

Երեխաները մօտեցան ու կանգ առան:

— Ի՞նչ էք ուզում:

— Մութն է...

— Տնաքանդ, բաս ես քոռ եմ, չեմ տեսնում, որ մութն է, ընդհատեց նա երեխայի խօսքը. — հարցնում եմ՝ ի՞նչ էք ուզում. հաց:

— Ձէ, աղա՛ջան, հաց չենք ուզում... Ո՞ւր գնանք...

— Ջար ու ջհանդամ... Ո՛ւր ուզում էք, գնացէք, զայրացած պատասխանեց սափրիչը:

— Տուն չունենք... գիշեր...

Խօսքը խեղդուկեց Կարօի կոկորդի մէջ ու նա մեքենայաբար մի քանի քայլ յետ գնաց: Աղջիկը կարծես այդ բանին էր սպասում, սկսեց հեկեկալ:

Պօղոսը վեր թռաւ տեղից ու արագ-արագ յետ ու առաջ քայլելով, յիշոցների կուտակ ուղղեց՝ յայտնի չէ թէ ում: Ի միջի այլոց քոթոթն էլ միջանի քացի կե-

*) Թիֆլիսի հացթուխները մեծ մասամբ վանեցի են:

րաւ: Խեղճ կենդանին, իր համար հանդարտ պառկած էր ու առանց պատճառի այնպէս խանդարեցին նրա անդորրութիւնը. նա կատաղաբար դէս ու դէն ընկաւ, սկսեց շղթան կրծել, կարծես վճռեց յաւիտեան բաժանուել իր տիրոջից այդ անարդարութեան համար:

—Հիմա ինձանից ի՞նչ էք ուզում, զայրացած ձայնով հարցրեց Սափրիչը, մի վայրկեան կանգ առնելով մանուկների առջև.—գո՞ւմէլ են էս շ... մեղայ Աստուծոյ... Վա՛, փիէ՛... բեհեսաբ նամաղուլ արի, հաց տուեցի... դաւի դառաբայ դարձան գլխիս... Գիտէ՞ք, տանը չորս հատ ձեզ պէս լակոտներ ունեմ... հացի փող հաղիւ եմ աշխատում...:

Որբերը դառնազին արտասուում էին և նրանց կեղտոտ դէմքերի վրայ նոր կեղտեր էին աւելանում:

Աննկարագրելի է մանուկի թախիժը, երբ նա տեսնում է իրան անօգնական, նամանաւանդ գիշերուայ ժամին:

—Բարի իրիգուն:

—Աստծու բարին:

Եկողը հին չուխա հագին մի մարդ էր: Ուսի վրայից ցած բերեց իր խուրջինը, որի մէջ դարսած էին որմնադրական գործիքները, անխօս մտաւ ներս, նստեց միակ աթոռի վրայ ու սպիտակ բծերով ծածկուած իր մորթէ հին գլխարկը գցեց անկիւնը:

—Կանցէք այդտեղ, չը հեռանաք, կոպտաբար հրամայեց Պողոսը երեխաներին ու սկսեց ածիլել արհեստաւորի մօրուքը:

Մանուկների ուշադրութիւնը կրկին գրաւեց քոթութը: Այնպիսի շարժումներ էր գործում նա, այն տեսակ էր մոմուում ու իր շղթայի հետ խաղում, որ կարծես դիտաւորութիւն ունէր նրանց ծիծաղեցնելու: Եւ իրաւ ծիծաղեցնում էր:

—Աստուած տայ, քանի որդի ունես, ուստայ Պողոս:

—Երկու ջուխտ, մի հատ էլ ճանապարհին է:

—Տղայ, աղջիկ:

—Դիփ տղերք են, էն մէկն էլ իմ հաշուով տղայ պէտք է լինի:

—Աստուած լսի... Հիմա քեզ են սպասում էլի, որ դուքանը կողպես...

—Ձէ, բարեկամ, սրանք իմ որդիքը չեն:

Պողոսը կարճառօտ պատմեց բանի էութիւնը:

—Վայ, վայ, վայ... Հիմա ուր պէտք է տանես... Լաւ կը լինի, որ տէրտէրի մօտ տանես... Կերթաս կ'ասես՝ օրհնեա՛ տէր, էսպէս-էսպէս բան է պատահել... Անտուն, անտէր երեխէք են... Սրա հետաքը նա գիտէ... Տէր-Ձաքարն, էլի:

—Նա էլ կ'ասի՝ «քո հէրն էլ անիծած, դրանցն էլ հետը: Կէս գիշերին ուր ես ինձ անհանդիստ անում»:

—Դու գիտես, Պողոս ջան, դու ինձանից լաւ գիտես, կարճ կտրեց որմնադիրը, շփեց իր նոր ածիլած այտերը, հինգ կողականոց դրեց սեղանի վրայ ու բարի գիշեր մաղթելով, շտապով հեռացաւ:

III

Պողոսը լաւ խորհելուց յետոյ, որոշեց առաւօտեան եկեղեցի տանել այդ երեխաներին և ժամերգութիւնից յետոյ քահանաներին յանձնել: Իսկ այս գիշեր ուրտեղ պահէ: Իր տանը պահել անկարելի էր: Երկու խոշոր պատճառ կար: Միակ սենեակը, ուր վեց հոգի ապրում էին, խիստ նեղ էր, տեղ չը կար. իսկ երկրորդ և գլխաւոր պատճառն այն էր, որ այս կռաւիտ մարդը քաշվում էր իր կնոջից. նա երբեք չէր համարձակուի տանել այս կեղտոտ ու գլխուած որբերին ու յայտնել, թէ «Աստուծոյ հիւրեր են»: Իսկապէս վախենում էր: Իր փոքրիկ արհեստանոցումն էլ տեղ չը կար, քանի որ արջի քոթոթն էր գիշերում այնտեղ:

—Հիմա ի՞նչ էք ուզում ինձանից, հը՞մա... Հիմա

նւր տանեմ ձեզ... Համեցէք, տունս հեռու չէ, գնանք, գնանք, էլի՛:

—Գնանք, հազիւ լսելի ձայնով արտասանեց Կարօն:

—Գնանք, շատ լաւ կը լինի. գնանք, էլի... Դուք Անօին չէք ճանաչում, դուք կապաս Անօին չէք ճանաչում: Հետտի միջառկ կը տայ ինձ էլ, ձեզ էլ, որ երեք անգամ մալաղ անենք:

Պողոսը աստիճանաբար տաքանում էր, յիշոցներ ու հայհոյանքներ էր թափում, ո՛վ գիտէ, ո՛ւմ հասցէին: Վերջապէս լռեց: Սեղանի վրայից վերցրեց հինգ կոպէկանոց դրամը ու գնելով Կարօի ձեռքը, հանդիստ կերպով ասաց.

Ահա, սա ձերն է, ես խօ չեմ խլում: Աստուած ձեզ է տուել: Դէ, գնացէք, այ ճանապարհ, տեսէք ինչ լայն է:

Մանուկները լուռ ու անձայն փորձեցին քայլեր փոխել:

—Ո՞ւր էք գնում, զուռումսաղներ, դուռաց սափրիչը. գիտէ՞ք ուր էք գնում:

—Բաս ինչ անենք, անգա-ջան:

—Կացէք, մտածենք տեսներ, Աստուած ինչ է տալիս:

Այս ասելով գազանին ներս տարաւ և պատի մէջ ամրացած մի մեխից սաստիկ կարճ կապից: Յետոյ իր խոշոր գանակով հացը գծեց, չափեց, համարեց քանի կտոր պէտք է դուրս գայ ու վերջը երկու ծայրերը կըտրեց ու տալով երեխաներին, հրամայեց իսկոյն ուտել: Մի փոքր մտածելուց յետոյ ձմերուկից էլ բաժին հանեց նրանց:

—Ահա, պատի մօտ դուք կը ընէք, այնտեղ էլ քոթոթը: Չը վախենաք, պինդ է կապած: Եթէ նա ղալմաղալներ անէ, դարձեալ միք վախենայ, հանդիստ ընեցէք: Լոյսը բացուելուն պէս կը գամ ու կը տանեմ ժամ:

Նորից պատուիրելուց յետոյ թէ ինչպէս պէտք է պառկեն, ճրագը հանգցրեց, արհեստանոցի դուռը կողպեց ու բարձրաձայն բարի գիշեր ասելով դնաց:

IV

Փոքրիկ գաղթականները պառկել էին աղիւսապատ մերկ յատակի վրայ, գլխների տակ ունենալով լաթով ծածկուած գերանի մի կտոր: Թագօն մէջքը կպցրել էր պատին ու եղբօր վզովն էր փաթաթուել: Աչքերը պինդ ծածկել էր և աշխատում էր շնչառութիւնն աննկատելի դարձնել: Սաստիկ վախենում էր արջից: Գազանը չէր ուզում հաշտուել իր վիճակի հետ, զայրանում էր, թաթերը մերթ պատին, մերթ յատակին էր զարնում: Երբեմն սուր ճիչ էր արձակում, երբեմն փնթփնթում, բայց շարունակ կրծոտում էր շղթան, որ չէր թոյլ տալիս ազատ թաւալուելու: Կարօն երկիւղից կուչ էր եկել ու գլուխը թագցրել իր ցնցոտիների մէջ: Սիրտը ուժգին թռթռում էր: Ամեն վայրկեան սպասում էր, որ գազանը շղթան կը կտրի, կը յարձակուի իրանց վրայ ու պատառ-պատառ կ'անէ: Մինչդեռ նա մտածում էր միմիայն այս բանի մասին, նրա գլխի մէջ պտտւում էին իրար ետևից անթիւ մտքեր, անորոշ ու անկապ, բայց բոլորը անցեալից: Թագօն թևերը թուլացրեց, շնչառութիւնը լսելի դարձրեց: Երկիւղի զգացմունքը շատ յաճախ քուն է բերում մանուկների աչքերին: Նա քնեց: Կարօի դուրս թիւնը կրկնապատիկ վառացաւ, այժմս տւելի անօդնական զգաց իրան: Նա պարզ լսում էր, թէ ինչպէս արջը իր ատամներով շղթան կամաց-կամաց քերում, մաշում էր և իսկոյն նետուելու էր դէպի ինքը: Միքանի անգամ իրար վրայ յոգւոց քաշեց ու յուսահատուած հնազանդուեց իր ճակատագրին, որ գազանը վերջ պէտք է տայ իր գոյութեանը: Նա, որ քրոջը այնպէս խնամում էր, այս վայրկեանին միանգամայն մոռացել էր նրան և դողում էր միմիայն իր կաշուի համար: Արցունքները շատ տե-

սակ են լինում և բոլորն էլ վշտին թեթևութիւն տը-
ւող, բայց մահուան դատապարտուածի արցունքը բոլո-
րովին ջուր բան է: Ահա այդ արցունքի սակաւութիւ կա-
թիլները դուրս ցայտեցին տաս տարեկան երեխայի աչ-
քերից: Շուրջը տիրում էր անթափանցելի խաւար: Մի-
մի անգամ դղրդալով կառքեր էին անցնում փողոցով
ու գետինը չարժում:

Տիրեց լուսթիւն:

Կարօն ենթադրեց, թէ չղթան արդէն փշրուած
է և քոթոթն ազատ: Ամենեւին մոռացել էր Պողոսի
պատուէրը, որ աներկիւղ լինեն, գազանը ամուր է
կապած: Անդիտակցաբար վեր թռաւ տեղից, վեր ա-
ռաւ աթոռը, որ կողքին էր դրած, պտտեցրեց օդի
մէջ միքանի անգամ, բայց չուտով ուժասպառ եղաւ:
Չորեք ու աթոռը իր առջև ամրացնելով, ատամները
պինդ սեղմեց և սպասողական դիրք ընդունեց: Անցան
րոպէներ, դարձեալ լուսթիւն: «Մայրիկ, օգնիր, մայ-
րիկ», յանկարծ ճիշ արձակեց քնած տեղից Թագօն:
«Մայրիկ», մեքենայաբար ձայնակցեց նաև եղբայրը
ու գլորուեց գետին:

Խեղճ դաղանը, որ հաղիւ հանգստացել էր և կա-
մացուկ իր թաթն էր լիզում, նորից սկսեց մռնչալ,
հառաչել ու իր չղթան թափահարել: Կարօն ուրախա-
ցաւ, որ իր ենթադրութիւնը սխալ է եղել: Նստեց
քնած քրոջ կողքին, աթոռը յամենայն դէպս ձեռքից
բաց չը թողնելով, և զարմացած ականջ դրեց իր սրտի
բաբախումին, որ այդ աստիճան ուժգին ու բարձրա-
ձայն խփում էր: Սաստիկ ծարաւել էր, կոկորդը չո-
րացել և բերանում թուրը ցամաքել, դառնացել էր:
Սառը քրտնքը ճակատից ցած էր իջնում, իսկ ամբողջ
մարմինը շոքից նեղանում, թէև հով էր: Հանեց վրայից
իր անթիւ տեղերից կարկատած վերարկուն, փռեց գետ-
նին ու կրկին պառկեց քրոջ կողքին, որոշելով անպատ-
ճառ քնել: «Ինչո՞ւ եմ վախենում», աշխատեց սիրտ տալ

իրան, «չէ՞ որ արջը հեռու է մեզանից և պինդ կապած: Թագօն որ բնած է, վստ է»: Միբանի սրբերի անուն տուեց, երկու-երեք անգամ խաչակներեց, գլուխը դրեց առաջուայ նման ու աչքերը փակեց: Լուսթիւնը կատարեալ էր, բայց, զարմանալի բան, նրա ականջները չէին լսում: Ձիաքարչի զանգակները, գետի աղմուկը, կառքերի դղրդիւնը, ամբոխի գոռում-գոչիւնը իրար հետ խառնուած ազմկում էին նրա լսելիքը: Երբեմն դիտմամբ ականջ էր դնում այդ ձայներին ու զարմանքից ապշում, թէ այդ ինչո՞ւ է այդպէս: Բայց իսկոյն էլի տանջուել էր սկսում, շուռ էր գալիս միւս կողքին, մատները ցցում էր ականջների մէջ, բայց իզուր, հալածող ձայները չէին ոչնչանում: Փորձեց մէջքի վրայ պառկել: Մարմինը աստիճանաբար սառչում էր և այդ դուր էր գալիս նրան: Ձեռքերը գլխի տակ դարսեց, ոտները ձգեց հանգիստ քնելու համար, բայց աչքերը չէին հնազանդւում, նրանք բացւում էին լայն, շատ լայն, կարծես խաւարի մէջ բան էին որոնում: Այդպէս երկար ժամանակ անշարժ մնաց: Ուղեղը սկսեց բթանալ, երեւցին սև տարածութեան մէջ փայլուն մանր բոլորաձև գծեր, որոնք լայնացան, ընդարձակուեցին և վերջապէս լոյս սփռեցին ամեն տեղ: Երեւցին զանազան դէմքեր, սկզբում աղօտ, յետոյ շատ պարզ, բոլորովին կենդանի: Մանուկը դիտում էր և նրան թւում էր այս բոլորը բնական... Նա քնեց:

Կէս գիշերը անցել և լուսադէմը մօտենում էր: Օդը ցրտել էր: Փոքրիկ աղջիկը ծնդները ծալել, փորին էր կպցրել, իսկ բազուկները կրծքին: Երկու ափերի մէջ ծնօտը առած շարունակ ցնցւում էր: Հազին ունեցած չորը խիստ բարակ էր ու մաշուած՝ աչնան լուսաբացի հովիւց պաշտպանելու համար: Նա անհանդիստ էր, ստէպ-ստէպ հառաչում էր, անկապ խօսում, լաց լինում, սակայն բնած էր: Չոր ու սառը յատակը անողոք ցաւեր էր պատճառում և նա երբեմն կարծես փորձում էր դիւրքը

փոխելու, բայց այդ նրան չէր աշուղւում, մնում էր մե-
խածի նման միեւնոյն կողքի վրայ պառկած:

Կարօն անդադար չարժւում էր, մի րոպէ անգամ
հանգստութիւն չունէր, ձեռքերը աջ ու ձախ տանում
բերում էր, կարծես վերմակ էր որոնում: Ամբողջ մար-
մնով դողում էր ու տատաները իրար զարկում: Երա-
զում սառը ջրի մէջ լողանում էր ու սաստիկ մրսում:
Ուզում էր դուրս գալ ջրի միջից ու շորերը հագնել, բայց
ընկերները խանգարում էին, բռնում էին թեից ու նո-
րից ներս բաշում: Խնդրում էր, ազաչում էր, հայհոյում
էր, որ իրան հանգիստ թողնեն, սակայն չարածնինները
անգթաբար շարունակում էին նոյնը և բարձրաձայն ծի-
ծաղում: Սկսում էր լալ, օգնութեան կանչել ծնողնե-
րին, բայց, զարմանալի բան, իր լացի ձայնը հեռու չէր
գնում, այլ միմիայն իր ականջների մէջ էր մտնում:
Խլանալու չափ թնդում էին ականջները, նա չարչար-
ւում էր, տանջւում էր, հաւաքում էր ոյժերն ու աղա-
ղակ էր բարձրացնում: Արթնացաւ:

Քոյրը նստած ու գլուխը դրած նրա գլխի վրայ
սրտալի լաց էր լինում: Կարօն դժուարութեամբ մոտա-
բերեց իրանց դռնուած տեղը, օրուայ անցքը: Շուտով
հագաւ իր վերարկուն ու փաթաթուելով քրոջ վզին
սկսեց գոլրգոլրել, համոզել, որ կրկին բնի: Մանուկը
ոչինչ չէր ուզում լսել, նա կրկնում էր միեւնոյն բանը՝
«մայրիկ», «մայրիկ»: Եղբայրը մեծ դժուարութեամբ հաս-
կացրեց իրանց վիճակը: Փաղաքշելով ու համբուրելով
մի փոքր հանգստացրեց:

— Մենք սրտեղ ենք, Կարօ:

Տղան արցունքը աչքերին այդ էլ բացատրեց ու
յետոյ սկսեց համոզել կրկին քնելու: Երեխան շարու-
նակ խօսում էր, զանազան անհեթեթ հարցեր էր առնու-
ն ու պատասխան պահանջում: Ուշքի գալուն պէս առա-
ջին հարցը եղաւ.

— Տիկնիկա հօ ոչ որ չի տանի:

Կարօն, Թիֆլիզ հասնելուն պէս, շատ բան մոռացաւ իր ցաւերից: Նոր, անծանօթ հողաւր, անսովոր դրութիւնը, տարօրինակ մթնոլորտը, բազմի երկիւղը ջնջել էին անցեալի յիշատակը: Այժմ, այս վայրկեանին, գիշերային խաւարի մէջ, քրօշը երկու ձեռքով սլինդ գրկած, շրթունքները շարժում էր, աղաչում էր Աստուծուն, չը զրկել իրանց այսպիսի ապահով անկիւնից:

— Էլ չեմ վախում, շէնջաց Թագօն:

— Մաս, եղաւ պատասխան:

Քոթոթը, երևի համբերութիւնից դուրս գալով, անախորժ կերպով գոռաց: Երեխաները ցնցուեցին: Թագօն առանց այլ ևս ձայն հանելու ուղեց նորից պառկել, բայց չը կարողացաւ, սրովհետեւ ոսկորները շարդուել էին ու ամբողջ մարմինը ցաւում էր: Եղբայրը նրան նստեցրեց իր ծնկան վրայ ու ամուր գրկեց: Այսպէս իրար կպած լուռ ու անշարժ դողում էին ցրտից:

Հնչեց եկեղեցու զանգակը, որի ձայնը տատանուելով երկարացաւ, հետզհետէ նուազեց, մարեց: Զանգակի ձայնը խորհրդաւոր ու մեղամաղձոտ է լինում լուսաբացին: Երեխաների սիրտը, արդեօք ուրախութիւնից թէ երկիւղից, սկսեց ուժգին թնդալ: Կարօն մըտքում ասաց՝ «Զման» և երեսը խաչակնքեց ու քրօշն էլ ստիպեց նոյնը անել: Նրա դէմքի վրայ յոյսի ժպիտը խաղաց և նա քրօշ ականջին փոփսաց. «Շուտով կը լուսանայ»: Աղջիկը իբրեւ պատասխան ուղեց ասել, որ ինքը քաղցած է, հաց է ուզում, բայց քանի որ վախենում էր քոթոթից, մի անհանգիստ շարժումով բաւականացաւ: Կարօն այդ զգաց ու շտապեց յորդորել՝ քիչ էլ համբերել:

Լսեցին ինչպէս մի մեծ աքաղաղ թռերը թափահարեց ու հաստ ձայնով աւետեց լոյսի մօտենալը: Կարօն այդ վայրկեանին մտաբերեց հայրենիքը, նոյն իսկ իրանց անակի հօտն զգաց: Դրսից լսուեց սայլերի ճռոճոց, մտրակի շառաչիւն, շների հաջոց, գիւղացի-

ների երգի ձայն: Տախտակների արանքներից թափան-
ցեց կապտագոյն աղօտ լոյսը և երեք արարածներ մի-
մեանց աչքերին նայելով, անկեղծ կերպով ժպտացին:

Վիճակակիցները իրար հասկանալ գիտեն: Յան-
կարծ գազանը երկու թաթի վրայ կանգնեց, նրա աչքերը
փայլեցին. նա գլուխը շարժեց ու այն ձևով փնթփնթաց,
որ կարծես ուղուժ էր երեխաներին մի ուրախ լուր
յայտնել: Եւ իրաւ, անմիջապէս ահագին կողպէքի մէջ
պտտուեց բանալին:

Գ. ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ

ՓՈՐՈՒԱԾ Է ԲԱՀՈՎ...

(Ն Ի Կ Ի Պ Ե Դ Ի)

Փորուած է բահով գերեզմանը խոր.
Կեա՛նք իմ անուրախ, կեա՛նք իմ մենաւոր,
Կեա՛նք իմ համբերող, կեա՛նք անօթեւան,
Կեա՛նք իմ անմրունչ—դու գիշեր աւնան.
Անցա՛ր, ա՛յ խղճուկ, միշտ սեւ օրերում,
Հանգա՛ր նրագի պէս ամայի վայրում...

Ի՛նչ արած... Քընի՛ր, իմ անլո՛յս վիճակ,
Յաւէ՛ս կը գոցուես խրփով ամբափակ.
Կը ծածկի՛ քեզ հող, կը նընժի՛ քեզ քար—
Մէ՛կ մարդով միայն կը պակսի աշխարհ...
Կա՛ս, չը կա՛ս—մէ՛կ է. ո՛ւմ ի՛նչ ցաւ ու հոգ.
Քեզ յիշող անգամ չի՛ լինի ոչ ոք...

Ահա՛ երգի ձայն՝ անվի՛շտ, անկարի՛ք—
Երգում է նորեկ այն խօսնակ-թրոջնիկ
Եւ լողում ազատ օդում կապուտակ,
Երգն է հնչալի—արծաթի՛ զանգակ...
Բայց կամա՛ց... արդէն վերջ կեանքի հարցին,
Վերջ ե՛ւ երգերին, ե՛ւ սուգ ու լացին...

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ

ԵՒ

ՌԻՍԼԵՐ ԱԻԱԳ

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԳ

I

Դասաւորք

Այն մարդիկ, որոնք տկարութեան կամ աշխատանքի չնորհիւ ապրում են միշտ փակուած իրանց սենեակում ու կալած իրանց պատուհանից, վարժւում են չրջակայ պատերի, տանիքների ու պատուհանների հորիզոնին և առանձին հետաքրքրութեամբ են վերաբերւում դրսի անց ու դարձ անողներին:

Անշարժ նստած իրանց տեղում, նրանք հաղորդակից են դառնում փողոցի կեանքին, և գործադրաչ անցորդները, որոնք ամեն օր ճիշտ մի և նոյն ժամին անցնում են նրանց աչքի առաջով, չը գիտեն, ի հարկէ, թէ իրանք իբր կանոնաւորիչ են ծառայում ուրիշների կեանքի համար, թէ կան բարեկամ աչքեր, որոնք պահում են նրանց ճանապարհը և գրեթէ կարօտ են զգում, երբ իրանք պատահմամբ ուրիշ ճանապարհով են անցնում:

Տիկին Դըլօքէյնը, որոնք ամբողջ օրը փակուած էին մնում իրանց սենեակում, զբաղւում էին այգալիսի լուռ դիտողութիւններով: Պատուհանի նեղութեան պատճառով, մայրը, որի աչքերի լոյսը սկսել էր պակասել աշխատանքից, նստում էր լոյսից մօտիկ, բարձրացրած չղարչէ վարագոյրի առաջ, իսկ սուղիկը նրա կողքին իր բազկաթոռի մէջ, բայց լոյսից մի քիչ հեռու: Մայրը աղջկան ասում էր ամենօրեայ անցորդների անունները, երբ նրանք երևում էին փողոցում: Ժամանցի մի միջոց էր այդ ու խօսակցութեան նիւթ, և աշխատանքի երկար ժամերը աւելի կարճ էին թւում, ընդմիջուելով սովորական անցորդների երևան գալովը: Այդ անցորդների մէջ, որոնք նոյնպէս սաստիկ

զբաղուած մարդիկ էին, կային երկու փոքրիկ քոյրեր, մի մոխրագոյն վերարկուով պարոն, մի երեխայ, որին տանում էին դպրոց ու յետ բերում և մի փայտէ ոտով ծերունի պաշտօնեայ, որի քայլերը ողբազին հնչում էին մայթի վրայ:

Այդ վերջինին հազիւ հաղ էին նշմարում,—նա անցնում էր մուլին ընկնելուց յետոյ. նրա անցնելը աւելի նրա ոտնաձայնիցն էր իմացւում, և այդ ոտնաձայնը ամեն անգամ հնչում էր փոքրիկ կաղիկի ականջին իբրև մի ուժգին արձագանք իր ամենատխուր մտքերի:

Այդ բոլոր փողոցային բարեկամները, առանց իրանց իմանալուն, զբաղեցնում էին այդ երկու կանանց: Անձրև զալիս նրանք ասում էին. «Ոեղճերը թրջուելու են... Տեսես երեխան տուն կը հասնի՞ մինչև անձրև գալը»: Եւ եղանակները փոխուելիս, երբ մարտի արևը փողփողեցնում էր ջրոզող մայթերը, կամ դեկտեմբերի ձիւնը ծածկում էր նոյն մայթերը իր սպիտակ փաթիլներով ու սև նիշերով, այդ երկու ճղնակեացները, տեսնելով մի նոր հագուստ իրանց փողոցային բարեկամներին հաղին, մտածում էին՝ «Ամառն եկել է» կամ «Ձմեռը սկսուել է»...

Մայիսեան օր էր, այն պայծառ ու մեղմ երեկոներէից մէկը, երբ աների ներքին կեանքը բաց պատուհանների միջով սփռւում է դէպի դուրս: Դէզիրէն ու մայրը, պատուհանի կողքին նստած, զօռ էին տալիս իրանց մատներին ու ասեղներին, օգտուելով իրիկնագէմի վերջին շողքից, նախ քան լամպը վառուելը: Կսւում էին չրջակայ բակերում խաղացող երեխան շի աղաղակներ, դաշնամուրների խուլ հնչիւններ և փողոցով իր կիսադատարկ սայլակը քաշող այս կամ այն չրջիկ մանրա-լաճառի ձայնը: Գարունը էր զգացւում օդի մէջ, որ համախառն էր սմբուլի և եղրեանի մեղմ բուրմունքով:

Տիկին Դըլօբէլը ձեռքի զործը նոր փայր էր դրել և, պատուհանը փակելուց առաջ, արմունկները վանդակին յենած, ականջ էր դնում այն ժխորին, որ այդ մեծ քաղաքի աշխատաւոր ընակիչները բարձրացնում էին, ուրախ-ուրախ չրջադայելով փողոցներում իրանց աշխատանքը վերջացնելուց յետոյ: Այդպէս նայելով, առանց երեսը շուռ տալու նա խօսում էր ազջկայ հետ:

—Ահա պ. Սիգիզմունդը դուրս եկաւ գործարանից: Ո՛րքան շուտ է դուրս գալիս այսօր... Օրերի երկարանալուցն է դուրսէ, բայց ինձ թւում է, թէ ժամի եօթն էլ չը կայ դեռ: Այդ ո՛ւմ հետ է ծեր դանձապահը... Վա՛... Կարծես... Հա՛, հա՛... Կարծես պ. Ֆրանցը լինի... Բայց այդ անկարելի բան է... Պ. Ֆրան-

յը հրտեղ է հա հիմա. համ էլ նա միրուք չունէր... Ինչ էլ լի-
նի, շատ նման է նրան... Մտիկ տուր, հոգիս:

Բայց Դէզիրէն չէ վեր կենում բազկաթոռից. նա նոյն իսկ
չի շարժւում ամենեկին: Աչքերը մոլորուն, ասեղը օդի մէջ, ան-
շարժացած իր աշխատաւոր գեղեցիկ դիրքում, նա վերացել է
երազների կապուտակ աշխարհը, այդ սքանչելի երկիրը, ուր
կարելի է ազատ համարձակ դնալ, առանց ուշք դարձնելու որ
և է տկարութեան վրայ: Այդ Ֆրանց անունը, որ նրա
մայրը, մի պատահական նմանութիւն նկատելով, մեքենայօրէն
արտասանեց, նրա համար պարունակում է իր մէջ անցեալի հա-
զար ու մի պատրանքներ և ջերմ յոյսեր, վաղանցուկ, ինչպէս
այն կարմրութիւնը, որ պատում էր նրա այտերը, երբ Ֆրանցը,
երեկոները տուն վերադառնալիս, մի բողբոջով մտնում էր նրանց
մօտ նրա հետ խօսելու: Ո՛րքան հեռու է այժմ այդ բոլորը: Ո՞վ
կը հաւատայ, որ մի ժամանակ Ֆրանցը ապրում էր նրանց կողքի
փոքրիկ սենեակում և յաճախ լսւում էր նրա ոտնաձայնը սան-
դուխներով բարձրանալիս կամ սեղանի զրդուցը, որ նա հրելով
մօտեցնում էր պատուհանին, դժագրութեամբ պարապելու հա-
մար: Ի՞նչ ախուր և միևնոյն ժամանակ քաղցր զգացմունքով էր
ախանջ դնում նա, երբ Ֆրանցը, նստած նրա ոտների մօտ ցա-
ծիկ աթոռի վրայ, խօսում էր Սիդօնի մասին, մինչդեռ նա
յարգարում էր իր ճանճիկներն ու թռչնիկները:

Առանց աշխատանքը զադարեցնելու, նա քաջալերում էր
Ֆրանցին, մխիթարում էր նրան, որովհետև Սիդօնին շատ ու
շատ փոքրիկ վշտեր էր պատճառել խեղճին, նախ քան վերջին
հարուածը հասցնելը Ֆրանցի ձայնի հնչիւնը, երբ նա խօսում
էր Սիդօնի մասին, և աչքերի փայլը, երբ մտածում էր նրա մա-
սին, սրբան էլ այդ տարօրինակ թուի, հիացնում էին Դէզիրէ-
յին, այնպէս որ երբ ֆրանցը յուսահատուած հեռացաւ Պարի-
զից, նա թողեց իր յետին աւելի սաստիկ մի սէր, քան այն,
որ ինքը տանում էր իր սրտում, — մի սէր, որ փոքրիկ կազիկի
միշտ միանման սենեակի և նստակեաց ու անշարժ կեանքի չնոր-
հիւ մնալու էր անփոփոխ իր ամբողջ դառնութեամբ, մինչդեռ
նրա սէրը հետզհետէ օդն էր ցնդելու և գոլորչիանալու մեծ ճա-
նապարհների բաց երկնքի տակ:

... Մութն ընկնում է բոլորովին: Այդ քաղցր երեկոյի խա-
ւարի հետ խեղճ ազդկան պատում է մի անհուն տխրութիւն:
Անցեալի երջանիկ ցուրը հետզհետէ չքանում է նրա համար, ինչ-
պէս վերջալոյսի այդ շերտը պատուհանի նեղ բացուածքում,
ուր մայրը մնացել է կռթնած:

Յանկարծ դուռը բացւում է... Դժուար է որոշել, թէ ով

է կանգնած չէմքին... Ո՞վ կարող է լինել: Տիկին Դըլօբէշների մօտ հիւրեր երբէք չեն գալիս: Մայրը, երեսը շուռ է տալիս և, կարծելով սկզբում թէ խանութից ևկել են շաքաթուան աշխատանքը տանելու, ասում է.

—Իմ ամուսինը հէնց նոր դնաց ձեր մօտ, պարոն... Այստեղ ոչինչ չի մնացել: Պ. Դըլօբէշը բոլորը տարաւ:

Բայց պարոնը առաջանում է, առանց ոչինչ պատասխանելու, և քանի մօտենում է պատուհանին՝ կերպարանքը սկսում է աւելի որոշ երևալ: Մի բարձրահասակ, յաղթանդամ երիտասարդ է այդ, արեւո ղէմքով և խիտ ու շէկ միրուքով: Զօրեղ ձայնով ու փոքր ինչ կոպիտ արտասանութեամբ նա ասում է.

—Վա՛, մայրիկ, միթէ չէք ճանաչում ինձ:

—Նա ձեզ իսկոյն ճանաչեցի, պարոն Ֆրանց, ասում է Դէզիրէն բոլորովին հանգիստ ձևով և սառն ու դրական տոնով:

—Տէր իմ Աստուած, պարոն Ֆրանցն է, բացականչում է տիկին Դըլօբէշը և ձեռաց վազում է լամպը վառում ու պատուհանը փակում:

—Ուրեմն դուք էք, սիրելի Ֆրանց... Ինչ հանգիստ ձայնով է ասում սա... «Նա ձեզ իսկոյն ճանաչեցի»... Աղջիկ հօ չի, սառցի կտոր է... Միշտ էլ այդպէս կը մնայ:

Ճիշտ որ սառցի կտոր: Երեսը բոլորովին սպրտնել է և Ֆրանցի ձեռքի մէջ ձեռքը բոլորովին սպիտակ է ու սառը:

Ֆրանցը դանում է, որ նա սիրունացել է, աւելի ևս ներքայցի:

Նա դանում է, որ Ֆրանցը հիանալի է, ինչպէս միշտ, միայն թէ նրա աչքերի խորքում այժմ երևում է յոգնածութեան ու տխրութեան արտայայտութիւն, որի չնորհիւ նա աւելի սղաւմարդի տպաւորութիւն է գործում, քան Պարիզից դնալիս:

Յոգնածութիւնը՝ Սիգիզմունդի տարսափելի նամակի ազդեցութեան տակ կատարած շտապողական ճանապարհորդութեան հետեանքն էր: Խթանուած այդ խայտառակութիւն բառից, նա իսկոյն և եթ, առանց արձակուրդի սպասելու, ճանապարհ էր ընկել, վտանգելով իր պաշտօնն ու ամբողջ ապագան, և շոգենաւից ուղղակի երկաթուղի նստելով՝ շունչն առել էր Պարիզում: Կարող էր միթէ չը յոգնել, մանաւանդ որ բոպէնեւրը հաշւում էր, թէ երբ պէտք է տեղ հասնի, և անհամբեր երեակայութեամբ տասը անգամ անցնում էր գնալիք ճանապարհը, մտատանջուելով անվերջ կասկածների, երկիւղների ու վարանումների մէջ:

Տխրութիւնը աւելի վաղուցուայ բան էր: Նա սկսուել էր այն օրից, երբ նրա սրտի սիրելին մերժել էր նրա կինը զառ-

նալ, որպէս զի, վեց ամիս անցած, ամուսնանալ նրա եղբոր հետ. երկու սարսափելի հարուած՝ մէկը միւսի յետեից և երկրորդը աւելի ևս դառն քան առաջինը: Պէտք է ասել, սակայն, որ ամուսնանալուց առաջ մեծ եղբայրը նրանից նամակով թոյլտուութիւն էր խնդրել այդ երջանկութիւնը վայելելու. համար և այդ խնդիրը արտայայտել էր այնպիսի արտաշարժ ու քնքոյշ խօսքերով, որ հասցրած հարուածի սաստկութիւնը մի փոքր թեթեւեղ էր դրա ջնորհիւ. այնուհետև պանդխտութիւնը, աշխատանքի շատութիւնը և երկար ճանապարհորդութիւնները փարատել էին այդ վիշտը, թողնելով նրա սրտում միայն մի ընդհանուր մեղմանդձիկ տրամագրութիւն, եթէ հին սիրոյ մնացորդ չը համարենք այն ատելութիւնը և դայրոյթը, որ նա այժմ զգում է իր եղբոր պատիւը արատաւորող կնոջ դէմ:

Բայց ոչ. Յրանց Ռիսլէրի ուզածը միայն այն է, որ Ռիսլէրների պատուի վրէժը հանի: Նա եկել է ոչ իբրև սիրահար, այլ իբրև դատաւոր, և թող Սիդոնին զոյշ սլահի իրան:

Վագոնից իջնելուն պէս դատաւորը ուղղակի գնացել էր գործարան, յուսալով, թէ, յանկարծակի ու անակնկալ կերպով լոյս ընկնելով, միանգամից կ'իմանայ, թէ ինչ է անցնում դառնում այնտեղ:

Դժբախտաբար, այդ ժամանակ ոչ ոք չը կար գործարանում:

Պարտէզի խորքում գտնուող փոքրիկ ապարանքի պատուհանների փեղկերը փակուած էին երկու շաբաթից ի վեր:

Քեռի Աշիլը յայտնեց նրան, որ տիկիները ապրում էին իրանց ամարանոցներում, ամուսիններն էլ երեկոները գնում էին նրանց մօտ:

Յրօմօն կրտսերը գործարանից շատ վաղ էր հեռացել, իսկ Ռիսլէր աւագը հէնց նոր էր գնացել:

Յրանցը վճռեց խօսել ծերունի Սիդիգմունդի հետ: Բայց շաբաթ օր էր, բանուորավարձ ապրու երեկոյ էր, ուստի նա պէտք է սպասէր, մինչև որ քիչ-քիչ հասնէր բանուորների երկար շարանը, որ սկսւում էր Աշիլ քեռու սենեակի մօտից ու վերջանում գանձապահի ցանցապատի առաջ:

Մանկութիւնից ի վեր Պարիզի բանուորների նման ապրած լինելով, Յրանցը, չը նայած իր անհամբերութեանը և սաստիկ տիրութեանը, այնուամենայնիւ հաճոյք էր զգում, զտնուելով այդ կենդանութեան մէջ, այդ վերին աստիճանի ինքնուրոյն բարբերի մէջ: Բոլոր թէ ազնիւ և թէ անառակ դէմքերի վրայ պարզ երևում էր աշխատանքի շաբաթը վերջացրած լինելու գոհունակութիւնը: Մարդ զգում էր, որ կիրակին դրանց համար

սկսւում էր շաբաթ երեկոյեան, ժամի եօթին, գանձապահի փոքրիկ լամպի առաջ:

Պէտք է առնտրական մարդկանց շրջանում սպրած լինել լաւ հասկանալու համար այդ միօրեայ հանգստեան ամբողջ քաղցրութիւնը և հանդիսաւորութիւնը: Վատառողջ աշխատանքներից չզլթայուած այդ խեղճ մարդկանցից շատերը սպասում են այդ երանելի կիրակի օրուան, որպէս զի կարողանան մի փոքր մաքուր օդ շնչել, որ այնքան անհրաժեշտ է նրանց առողջութեան, նրանց կեանքի համար: Եւ պէտք է տեսնել, թէ ինչ զուարթութիւն է տիրում, ինչ զօրեղ պահանջ է արտայայտւում ազմկալից ուրախութեան: Թւում է, թէ ամբողջ շաբաթուայ աշխատանքի ճնշումը օդն է ցնդում մեքենաների շոգիի հետ, որ սուլելով և ծխալով դուրս է թռչում ու ցրւում առուակների վրայով:

Բոլոր բանուորները հեռանում են ցանցապատի մօտից, հաշուելով իրանց սև ձեռների մէջ փայլող փողերը: Ո՛րքան հիասթափութիւններ, փնփնթոյներ, տրտուշներ, բաց թողած ժամիր, կանխիկ վերցրած գումարներ: Եւ այդ ձայների ու խոշոր դրամների զնգզնգոյի մէջից լսւում էր հանդարտ ու անողոր ձայնը Սիգիզմունդի, որ անսրտութեան էր հասնում, պաշտպանելով իր պատրօնների շահերը:

Ֆրանցին յայտնի էին վճարման օրերի բոլոր դրամները, ձայների կեղծ և անկեղծ կրէճները: Նա գիտէր, որ մէկը փող էր պահանջում իր ընտանիքի համար, հալածաբանութիւն, զեղալաճառին հասնելիքը և երեխաների ուսման վարձը վճարելու համար, իսկ մի ուրիշը, որպէս զի տանէր զինետուն կամ մի աւելի ևս վատ տեղ: Նա գիտէր նոյնպէս, թէ այդ տիտուր ու ճնշուած կանացի ստուերները, որոնք դնում դալիս էին գործարանի դարպասի առաջ, երկար հայհաղքներ գցելով բակերի խորքը, բոլորն էլ սպասում էին իրանց հարազատներին, — որը հօրը, որը ամուսնուն, — որպէս զի իսկոյն և եթէ տանէին նրանց իրանց բնակարանը յանդիմանական և համողիչ խօսքերով:

Օ՛հ, բոբիկ երեխաներ, հին չալերի մէջ փաթաթած ծծկեր մանուկներ և աղտոտ կանայք, որոնց արտասուալից դէմքերը նոյնքան սպիտակ են, որքան և նրանց գլխանոցները...

Օ՛հ, դարանամուտ անառակութիւն, որ պտոյտ է դալիս դանձապահի արկղի շուրջը, անբարոյականութեան որջեր, որոնց ճրագները փայլում են մութ փողոցների խորքում, և զինեաներ աղօտ լուսամուտներով, ուր իրանց չինձու գոյներով շարէշար դարսուած են արկօհօլի հազար ու մի թոյները:

Ֆրանցին յայտնի էին այդ բոլոր թշուառութիւնները:

բայց երբէք նրանք այնքան մոայլ, այնքան դառն չէին թուացել նրան, որքան այդ երեկոյ:

Վարձավճարը վերջացել էր: Սիգիզմունդը դուրս եկաւ իր գրասենեակից:

Երկու բարեկամները ճանաչեցին միմեանց ու գրկախառնուեցին, և քսան չորս ժամով դադար առած ու իր բոլոր դատարկ չէնքերով համրացած գործարանի լռութեան մէջ՝ գանձապահը բացատրեց Ֆրանցին գործերի գրութիւնը: Նա պատմեց նրան Սիգօնիի բռնած ընթացքը, խելագար ծախսերը, ընտանեկան պատուի ընդ միշտ արատաւորումը: Ռիսէրն ու կինը վերջերը մի ամառանոց էին առել Անիէրում, որ առաջ մի դերասանուհու տուն էր եղել, և սաքքուել էին այնտեղ հոյակապ կերպով: Զիկը ու կառքեր էին պահում, և առհասարակ չքեղ ու չուայ կեանք էին վարում: Ծերունի Սիգիզմունդին ամենից շատ անհանգստացնողը այն էր, որ Ֆրոմօն կրտսերը իրան աւելի զգոյշ էր պահում: Մի ժամանակից ի վեր նա այլ ևս փող չէր վերցնում գանձարանից, և սակայն Սիգօնին ծախսում էր աւելի, քան երբ և իցէ:

—Chai bas confiance!... բացականչեց խեղճ դանձապահը թափ տալով գլուխը... chai bas confiance...

Յետոյ ցածացնելով ձայնը, շարունակեց.

—Բայց քո եղբայրը, սիրելի Ֆրանց, քո եղբայրը... Ի՜նչ պէս բացատրել նրա բռնած զիրքը: Նրա հոգը չէ ամենևին. աչքերը երկինք քցած, ձեռները գրպանը դրած, ման է գալիս իր համար, ուշք ու միտք այդ երեկոյ հնարելիք մեքենային տուած, որ դժբախտաբար շատ ինչ է գլուխ գալիս... Կ'ուզես ուղիղն տեսնա... Եղբայրդ կամ սրկիայ է կամ տխմար:

Այդպէս խօսելով նրանք զրօննում էին փոքրիկ պարտէզում, երբեմն կանգ էին առնում, յետոյ նորից սկսում քայլել: Ֆրանցին թւում էր, թէ ինքը քնած է և վատ . երազ է տեսնում: Շտապ ճանապարհորդութիւնը, տեղի և կլիմայի յանկարծական փոփոխութիւնը, Սիգիզմունդի խօսքերի անընդհատ տարափը, այն նոր դադափարը, որ պէտք էր կազմել Ռիսէրի ու Սիգօնիի մասին, — այն Սիգօնիի մասին, որին նա երբեմն այնքան սիրում էր, — այդ բոլորը միացած չլմեցնում, խելացնորութեան էին հասցնում նրան:

Ուշ էր: Գիշերը մօտենում էր: Սիգիզմունդն առաջարկեց նրան դնալ իր հետ Մօնրուժ և գիշերել այնտեղ իր մօտ. նա մերժեց, պատճառ բերելով յոգնածութիւնը, և մենակ մնալով Մառէյում օրուայ այդ անորոշ ու տխուր ժամին, երբ արևի լոյսը չքանում է և գաղի լոյսը դեռ չէ վառուած, նա մեքենայա-

բար գնաց Բրաբ փողոցի կողմը, դէպի իր հին բնակարանը:

Սրահի դռանը յայտարարութիւն կար կախուած՝ վարձու սենեակ տրամադրու համար:

Հէնց այն սենեակին էր այդ, ուր նա այնքան տարիներ ապրել էր իր եղբոր հետ: Ամեն ինչ իր տեղումն էր. ահա աշխարհագրական քարտէզը՝ կաշուած պատին չորս քորոցով, ահա վերնագաւթի պատուհանը, ահա և տիկին Դըլօրէլների փոքրիկ ցուցաստանը՝ մօղային թռչուններ ու ճանճեր:

Այդ տիկիների դուռը կիսաբաց էր. բաւական էր մի քիչ հրել ներս մտնելու համար:

Անկասկած, ամբողջ Պարիզում այդ աշխատաւոր և անփութ ընտանեկան յարկը ամենալաւ տեղն էր, ուր նա կարող էր գտնել ազատով ապաստան և հանգստացնել իր խռովուած հոգին: Իր ուղեկորոյս կեանքի ներկայ ալէծփութեան մէջ մի տեսակ խաղաղ ու խորայնատակ նաւահանգիստ էր այդ, արևալից ու անդորր ծովափով, ուր կանայք բանում են, սպասելով իրանց ամուսիններին ու հայրերին, մինչդեռ զբաւում մոնչուս է հողմը, ալէկոծելով ծովը: Բայց աւելի ևս նրան զբաւում էր դէպի այդ բնակարանը, թէև նա պարզ չէր գիտակցում այդ, անխաբ համակրութիւնների փոխադարձութիւնը և գորովալից զգացմունքի այն հրաշագործ յատկութիւնը, որ մեր սրտին թանկագին է դարձնում դէպի մեզ տածուող սէրը նոյն իսկ այն դէպքում, երբ մենք ինքներս չենք սիրում մեզ սիրողին:

Որքան սիրում էր նրան այդ սառցակտոր քաղցրիկ Դէլիլէն: Ո՛րչափ փայլում էին նրա աչքերը, նոյն իսկ ամենատնտարբեր բաների մասին խօսելիս: Ինչպէս ֆօսֆօրօտած իրերը հաւասարապէս փայլում են բոլորը, այնպէս էլ նրա արտասանած ամենամանշան խօսքերից սիրուն երեսը զուարթանում ու պայծառանում էր: Ի՞նչ քաղցր հանդիստ էր այդ Ֆրանցի համար Սիգիզմունդի կոպիտ խօսակցութիւնից յետոյ:

Նրանք երկուսով ոգևորուած խօսում էին այդպէս, մինչ տիկին Դըլօրէլը դրում էր ճաշը *):

—Մեզ հետ կը ճաշէք, այնպէս չէ, պարոն Ֆրանց: Հայրիկը տանը չէ. ինչ որ պատրաստել էինք, տարաւ խանութը, բայց երևի ճաշին կը վերադառնայ:

Երևի ճաշին կը վերադառնայ:

Խեղճ կինը մի տեսակ հպարտութեամբ էր ասում այդ:

Արդարև, իր թատրոնապետութեան անաջողութիւնից յետո՛ւ

*) Արեւմտեան Եւրոպայում շատ ուշ են ճաշում առհասարակ:

տոյ, հռչակաւոր Դըլօբէլը այլ ևս զբոսում հաց չէր ուտում, նոյն իսկ այն երեկոները, երբ խանութից ստանում էր իր կնոջ ու աղջկայ բանուածքների վճարը: Խեղճ թատրոնապետը այնքան ճաշ ու ընթրիք էր կերել ճաշարանում ապառիկ, որ այլ ևս չէր համարձակում սաք զնել այնտեղ: Դրա փոխարէն, նա ամեն շաբաթ երեկոյ անպատճառ տուն էր բերում հետը երկու կամ երեք քաղցած ու անսպասելի հիւրեր իր «հին ընկերներին», անաջողութեան զոհ դարձած դերասաններին: Այդ երեկոյ էլ նա բնական կերպով մուտք գործեց իր բնակարանը երկու անգործ մնացած դերասանների հետ, որոնցից մէկը Մէյի թատրոնի ֆինանսիստն էր, իսկ միւսը՝ Անժէրի թատրոնի կոմիկը:

Բամպի լոյսի առաջ կուշ-կուշ եկած, խորշումած ու անխառն երեսով կոմիկը՝ նման էր ծերունազէմ տղայի: Ֆինանսիստը, որի վրայ չէր երևում սպիտակեղէնի որ և է նշոյլ, կտաւերես կօշիկներ ունէր հագին: Դըլօբէլը, դռնով ներս մտնելուն պէս, ուզեց հանդիսաւոր կերպով ներկայացնել նրանց, բայց խօսքը բերնումը կիսատ մնաց, որովհետեւ իսկոյն նկատեց Ֆրանց Ռիպերին:

— Ֆրանց... սիրելի Ֆրանց... դուք ծերունի: Դերասանը մեղօգրամատիկական ձայնով, ջղաձգարար թափ տալով ձեռները օդի մէջ, և երկարատես ու ճոռոմաձև պրկախառնութիւնից յետոյ ներկայացրեց հիւրերին միմեանց:

— Պ. Ռօբրիկար, Մէյի թատրոնից:

— Պ. Շանդըզոն, Անժէրի թատրոնից:

— Ֆրանց Ռիպէր, ինժէնէր:

Դըլօբէլի բերնում շատ տուուզ էր դուրս գալիս այդ ինժէնէր բառը:

Դէպիւրէն մի սիրուն ծամածոութիւն արեց, տեսնելով իր հօր ընկերներին: Ո՛րքան լաւ կը լինէր, որ տանաստանու լինէին այդպիսի մի օր: Բայց մեծ մարդու հոգը չէր այդ: Նա զբաղուած էր իր գրպանները դատարկելով: Նախ և առաջ նա զուրս հանեց մի հիւսնայի կարկանդակ. «տիկիներն համար եմ առել», ասաց նա, մոռանալով, որ իր բերնի ջուրը գնում էր այդպիսի կարկանդակների համար: Յետոյ երևան եկաւ մի խնկեւտին. այնուհետեւ՝ Արլի երչիկ, չաքարակալած շաղանակներ և բալ, որ նոր էր շուկայ հանուել:

Մինչ ֆինանսիստը յափշտակուած աշխատում էր բարձրացնել իր անկերոյթ չալիկ օձիքը, իսկ կոմիկը «գնո՛ւֆ, գնո՛ւֆ» էր անում այնպիսի մի շարժումով, որ տաս տարուց ի վեր

մոռացուած էր Պարիզում, Դէզիրէն սարսափով այն էր մոռածում, թէ ինչ ահագին ծակ էր բանալու այդ յանկարծապատրաստ ճաշկերոյթը իրանց չարաթական ողորմելի եկամուտների մէջ, իսկ մայրը շուարած իրար գլխով էր տալիս իրանց ամանների պահարանը, որպէս զի բաւականաչափ աման գըտնէր այդքան հիւրերի համար:

Ճաշը շատ ուրախ անցաւ: Երկու դերասանները ազահաբար խօսում էին, ի մեծ զուարճութիւն Դըլօբէլի, որ նրանց հետ մտաբերում էր հին յիշողութիւններ իրանց դերասանական կեանքից: Դոփուար է երևակայել աւելի ողորմելի բաներ: Կուլիսների կոտորած նեղուկներ, հանգած կանթեղներ, բորբոսնած բեմական պարագաներ, սրոնք փշուր-փշուր են լինում ձեռք տալիս:

Նրանք իրար հետ այնպէս էին խօսում, կարծէք ամենամտերիմ բարեկամներ լինէին, գուէին ասում միմեանց և իրանց տափակ ոճով յիշեցնում էին միմեանց իրանց անթիւ յաջողութիւնները, որովհետեւ, իրանց ասելով, նրանց երեքին էլ ամբողջ քաղաքներ ծափահարել էին յափշտակութեամբ, անթիւ պսակներ էին տուել ու յաղթական կերպով ման ածել փողոցներով:

Այդպէս խօսելով, նրանք շարունակում էին ուտել, այնպէս, ինչպէս ուտում են դերասանները,—գէմքերը երեք քառորդ մասով գէպի հանդիսատեսները դարձրած, ստուարաթղթէ կերակուրների շուրջը նստած բեմական հիւրերի կեղծ շտապողութեամբ, խօսքերը ընդմիջելով կերակրի պատառներով, աշխատելով տպաւորութիւն գործել բաժակը վայր դնելիս ու ակոռը սեղանին մօտեցնելիս կամ իրանց հետաքրքրութիւնը, հիացմունքը, ուրախութիւնը, սարսափն ու զարմանքը արտայայտել դանակի ու պատառաքաղի ճարտար փորձածութեամբ: Տիկին Դըլօբէլը ականջ էր դնում նրանց՝ ժպիտն երեսին:

Երեսուն տարուց ի վեր դերասանի կին լինելով, նա չէր կարող փոքր ինչ վարժուած չը լինել այդ տարօրինակ ձևերին:

Բայց սեղանի մի փոքրիկ անկիւնը զատուած էր մնում մնացեալ սեղանակիցներից, կարծես բաժանուած լինելով մի տեսակ ամպով, որի միջով չէին կարողանում անցնել տիամար խօսքերը, կոպիտ ծիծաղները և պարծենկոտ ինքնազովութիւնները: Ֆրանցն ու Դէզիրէն խօսում էին իրար հետ կիսաձայն, առանց որ և է բան լսելու իրանց շուրջը ասուածներից: Նրանց քաղցր խօսակցութեան միակ նիւթը գէպքեր էին իրանց մանկութիւնից, ծիծաղաշարժ սլատմութիւններ՝ հարեանութեան կեանքից և առհասարակ մի ամբողջ անորոշ անցեալ, որի

արժէքը կայանում էր միայն նրանում, որ ընդհանուր յիշողութիւններ էր զարթեցնում նրանց մէջ և միատեսակ կայծեր էր փայլեցնում նրանց աչքերում:

Յանկարծ ամպը պատռուեց և Դըլօբէլի ահուկի ձայնը ընդհատեց նրանց խօսակցութիւնը.

—Դեռ չեմ տեսել եղբօրդ,—հարցրեց նա Փրանցին, որպէս զի այնպէս չը թուէր, թէ ամենեւին ուշադրութիւն չէ դարձնում նրա վրայ,—կնոջն էլ չեմ տեսել... Օ՛հ, կը տեսնես թէ ինչ աղջիկ պարոն է դարձել: Հագուստներ եմ ասում, մեր տղայ, որ բերանդ չտած կը մնայ: Էլ ինչ ասեմ: Անիէրում մի ամառանոց ունեն, որ կատարեալ դղեակ է: Շէքերն էլ այն կողմերումն են ապրում... Է՛հ, մեք ուր, նրանք ուր: Հարստացել են, հին ծանօթներին մարդատեղ չեն դնում... Էլ ոչ բարի լոյս ենք լսում նրանցից, ոչ էլ մէկ օրից մէկ օր դռներս են բաց անում, տեսնեն մեռած ենք թէ կանք զեռ եւ... Դու դիտես, որ իմ հողը չի ամենեւին, բայց այս կանանց համար շատ վերաւորական է այդ...

—Օհ, հայրիկ,—աշխուժով ասաց Դէզիրէն,—դուք գիտէք, որ մենք այնքան սիրում ենք Սիդօնիին, որ չենք կարող նեղանալ նրանից:

Դերասանը բռնեցքով կատաղի հարուած իջեցրեց սեղանին.

—Ու շատ դուր էք անում... պէտք է անպատճառ նեղանալ այն մարդկանցից, որոնք ամեն ջանք գործ են դնում մեզ վերաւորելու, ստորացնելու համար:

Նա դեռ սրտումը պահում էր թատրոնի համար խնդրած գումարի մերժման ոլոր: Ասենք, նա չէր էլ ծածկում այդ:

—Եթէ իմանայիր, ասում էր նա Փրանցին, եթէ իմանայիր, թէ ինչպէս են շաղ տալիս փողերը... Մարդու ափսոսը գալիս է... Եւ բոլոր ծախսածների մէջ չը կայ մի բան, որ հիմնաւոր լինի ու խելացի... Բայց երբ ես մի փոքրիկ գումար խնդրեցի եղբօրիցդ, որով իմ ապագան բոլորովին ապահովուած կը լինէր և որից ինքն էլ մեծ շահ կը ստանար, նա բացէ ի բաց մերժեց... Ի հարկէ, ինչպէս կարող էր չը մերժել, երբ կինը այնքան պահանջող է: Նա ձի է նստում, կառքով դնում է ձիարշաւների և մարգու- քթիցը բռնած պտտեցնում է նրան, բոլորովին այնպէս, ինչպէս իր զամբիւղածն կառքը Անիէրի ղեաափում... Խօսքը մեր մէջ, չեմ կարծում, որ իրան շատ էլ բախտաւոր զգալիս լինի մեր Ռիսլէրը... Ինչ խաղ ասես խաղում է կինը խեղճի գլխին...

Էք-զերասանը վերջացրեց խօսքը աչքով անելով կո-

միկին ու ֆինանսիստին, և մի րոպէաչափ նրանց մէջ տեղի ունեցաւ մնջկատակ ակնարկների փոխանակութիւն,—դէմքի պայմանական շարժումներ, ծամածռութիւններ, զանազան «հէ, հէ»-ներ, «հը՛մ, հը՛մ»-ներ և ուրիշ այդպիսի բացականչութիւններ:

Փրանցը չմեկ էր: Առանց նրա աշխատելուն, ամեն կողմից գալիս էին փաստեր ասպնդուցանելու սարսափելի ճշմարտութիւնը: Սիգիզմունդը ուրիշ ոճով էր խօսում, Դըլօբէլը՝ ուրիշ, իրանց բնաւորութիւնների տարբերութեան համեմատ: Բայց հետեւանքը նոյնն էր դուրս գալիս:

Բարեբախտաբար, ճաշը վերջացաւ: Դերասանները, երեքն էլ, վեր կացան ու զնացին Բլօնդէլ փողոցի դարեջրատունը: Փրանցը մենակ մնաց ակիկներէի հետ:

Տեսնելով նրան իր կողքին, քաղցր ու կաթոգին, Դէզիբէն յանկարծ լցուեց բուռն երախտագիտութեամբ դէպի Սիգօնին: Նա ասաց ինքն իրան, որ, ինչ էլ լինի, Սիգօնիի մեծահոգութեանն է պարտական ինքը այդ երջանկութեան նշոյլի համար, և այդ միտքը սիրտ տուեց նրան պաշտպանելու իր հինաւուրց բարեկամին.

—Գիտէ՞ք, պարոն Փրանց, շատ էլ չը հաւատաք այն բոլորին, ինչ որ հայրս ասաց ձեր հարսի մասին: Հայրիկը միշտ սովորութիւն ունի մի քիչ չափազանցանքելու: Ես հաստատ զիտեմ, որ Սիգօնին անընդունակ է այնպէս վատ լինել, ինչպէս նրան մեղադրում են: Ես հաւատացած եմ, որ նրա սիրտը չի փոխուել, որ նա շարունակում է սիրել իր հին բարեկամներին, թէպէտ և մի քիչ անտես է անում նրանց... Խնչ արած, կեանքն է այդպէս. մարդկանց ակամայ բաժանում է իրարից: Այնպէս չէ, պարոն Փրանց:

Օ՛հ, ինքն սիրուն էր թւում նա Փրանցին այդպէս խօսելիս: Երբէք Փրանցը այդ աստիճան չէր նկատել նրա դիմադների նրբութիւնը ու կաշիի արխտոսկրատալան գոյնը, և երեկոյեան, հեռանալով նրանց սենեակից՝ խանդաղատուած այն ոգևորութեամբ, որով Դէզիբէն պաշտպանում էր Սիգօնիին, և այն բոլոր սքանչելի կանայցի պատճառաբանութիւններով, որոնցով նա բացատրում էր իր բարեկամունքն ու լռութիւնն ու անուշադրութիւնը,—նա մտածում էր, եսական ու միամիտ հաճոյքի զգացմունքով, թէ այդ մանկաման աղջիկը սիրելիս է եղել իրան ու դուրսէ սիրում է դեռ ևս, պահպանելով սրտումը նրա համար մի ջերմ ու ասպնջով սնկիւն, ուր մարդ ապաստանում է միշտ, երբ վերք է ստանում կեանքից:

Ամբողջ գիշերը իր հին սենեակում քնի մէջ օրօրուելով

ճանապարհորդական շարժումից և ալէկոծ ծովի ու սաստիկ քամու ազմուկից, որ մնում է մարդու ականջներում երկարատև նաւարկութիւնից յետոյ, Ֆրանսը երազի մէջ տեսնում էր պատոննեկական ժամանակը, փոքրիկ Շէբին, Դէզիբէ Դըլօբէլին, իրանց խաղերը, իրանց աշխատանքները և Կենտրոնական Դպրոցը, որի ահագին ու մռայլ շէնքերը ներհում էին այժմ մօտակայքում, Մառէյի խաւար փողոցներում:

Յետոյ, երբ արեւ դուրս եկաւ և լոյսը, անվարադոյր պատահանների միջով ներս թափանցելով, սկսեց տանջել նրա աչքերը ու յիշեցնել պարտականութեան զգայմունքը և ցերեկը անելիք գործերը, նա դարձեալ ընկաւ երազի մէջ և նրան թւում էր, թէ Կենտրոնական Դպրոցը գնալու ժամանակն է և եղբայրը, գործարանը իջնելուց առաջ, բաց է արել դուռը ու ձայն է տալիս իրան.

—Վեր կաց, ծոյ տղայ, վեր կաց...

Այդ քաղցր ու կաթոգին ձայնը, որ չափազանց կենդանի ու իրական կերպով էր հնչում երազի համար, ստիպեց նրան բոլորովին բանալ աչքերը:

Ռիսէրը կանգնած էր նրա անկողնի կողքին և խանդաղատանքի սքանչելի փայտով սպասում էր, որ նա զարթնի, և—ապացոյց, որ այդ յերաւի Ռիսէրն էր—եղբօր տեսութեան ուրախութիւնը արտայայտելու համար, նա ուրիշ խօսք չէր գտնում ասելու, բացի իր սովորական բացականչութիւնից.

—Շատ գոհ եմ... շատ գոհ:

Թէև կիրակի էր այդ օրը, բայց Ռիսէրը, իր սովորութեամբ, եկել էր գործարան, որպէս ղի, օգուտ քաղելով այնտեղ տիրող լուծթիւնից ու խաղաղութիւնից, աշխատէր իր տպագրիչի վրայ: Գալուն պէս՝ Աշիլլ քեռին ասել էր նրան, որ եղբայրը իջել է իրանց հին բնակարանում, և նա վազէվազ եկել էր այնտեղ, ուրախացած, զարմացած և փոքր ինչ ցաւելով, որ առաջուց իրան իմաց չէին տուել և մանաւանդ այն բանից, որ Ֆրանսը զբոհել էր իրան վերադարձի առաջին երեկոն միասին անց կացնելու զուարճութիւնից: Այդ ցաւը նա անդադար արտայայտում էր իր կցկտուր նախադասութիւնների սկզբում և վերջում և նրա ասածները մնում էին միշտ կիսատ, ընդհատուելով հազար ու մի հարցերով և գորովի ու հրճուանքի բուռն արտայայտութիւններով: Ֆրանսը իրան արդարացնելու համար առաջ բերեց իր յոգնածութիւնը և այն զուարճութիւնը, որ զգաց նորից գտնուելով իրանց հին սենեակում:

—Լաւ, լաւ,—ասում էր Ռիսէրը,—բայց այժմ այլ եւս բաց չեմ թողնի քեզ... իսկոյն և եթ պէտք է գաս գնանք Անիէր...

Ես այսօր արձակուրդ եմ տալիս ինձ... Ինքդ ասա, կարո՞ղ եմ միթէ աշխատել քո գալուց յետոյ... Այ թէ կը զարմանայ... կ'ուրախանայ փոքրիկս... Ես ու նա շարունակ յիշում էինք քեզ... Ո՛րքան ուրախ եմ, ո՛րքան ուրախ...

Եւ խեղճ մարդը ուրախութիւնից ցնծում էր և, չը նայելով իր սովորական լուակեցութեանը, շատախօս դարձած, հիսունում էր իր Ֆրանցի վրայ, գտնում էր, որ նա մեծացել է։ Եւ սակայն կենտրոնական Դպրոցի աշակերտը արդէն հիանալի հասակ ունէր գնալուց առաջ, միայն թէ այժմ նրա դիմագծերը աւելի առնական էին դարձել, թիկունքը լայնացել էր և առհասարակ շատ մեծ տարբերութիւն կար սեմինարիստի շէնք ու շնորհք ունեցող նախկին ջահէլ տղայի մէջ, որ երկու տարի առաջ ուղեւորուեց զէպի Իսմայիլիա, և այս գեղեցկագէժ, դարձնագոյն, լուրջ ու մեղմ պարթև տղամարդու մէջ։

Մինչ Ռիսլէրը այդպէս զմայլում էր նրա վրայ, Ֆրանցն էլ, իր կողմից, ուշի ուշով դիտում էր իր եղբորը և, էլի առաջուան պէս միամիտ, գորովալից ու երբեմն մաքամալոր գտնելով նրան, ասում էր ինքն իրան.

—Ո՛չ, այդ անկարելի է... նա նոյն ազնիւ մարդն է, ինչ որ առաջ էր։

Եւ մտաբերելով միևնոյն ժամանակ, թէ ինչ բաներ էին համարձակում ենթադրել այդ ազնիւ մարդու մասին, նա իր ամբողջ բարկութիւնը ուղղում էր այդ կեղծաւոր ու անառակ կնոջ դէմ, որ այնքան յանդուգն ու անպատիժ կերպով էր դաւաճանում իր ամուսնուն, որ նրան իր մեղսակիցն էր կարծել տալիս։ Օ՛, ինչ սարսափելի բացատրութիւն է ունենալու ինքը այդ կնոջ հետ. որքան խիստ է խօսելու հետը։

—Ես արգելում եմ ձեզ, տիկին, լսո՞ւմ էք, ես ձեզ արգելում եմ արատաւորել իմ եղբոր պատիւը։

Նա շարունակ մտածում էր այդ բանի մասին, նայելով, թէ ինչպէս արագ-արագ սլանում էին նրա աչքի առաջով Սէն-ժէրմէնի երկաթուղու երկարութեամբ ձգուած ճոռղ ծառերը։ Ռիսլէրը, նրա դէմ ու դէմը նստած, խօսում էր անվերջ։ Նա պատմում էր գործարանի մասին, իրանց գործերի մասին։ Ինքն ու ընկերակիցը ամեն մէկը քառասուն հազար ֆրանկ շահ էին ստացել վերջին տարին. բայց այդ ոչինչ էր այն շահի առաջ, որ նրանք կը ստանան, երբ սկսի բանել նրա Տպագրիչը։ «Պտուտուղ տպագրիչ, սիրելի Ֆրանց, պտուտուղ ու տասներկու անկիւնաւոր տպագրիչ, որ անուի մի պտոյտով կը տայ տասից մինչև տասներկնգ զոյն ունեցող նաչխ, կարմիր՝ վարդագոյն տեղի վրայ, մուգ կանաչ՝ բաց կանաչի վրայ, առանց իրար հետ

չփոթելու, առանց իրար հետ ձուլելու, այնպէս որ ոչ մի գիծ չի վնասի իր կողքի գծին և ոչ մի երանգ չի ջնջի կամ ծծի միւս երանգները... Հասկան՞ում ես, սիրելիս... Մի մեքենայ, որ արուեստագէտ է լինելու, ինչպէս մի մարդ... Այդ ամբողջ յեղափոխութիւնն է գցելու որմաթղթերի արդիւնագործութեան մէջ»:

—Բայց,—հարցնում էր Ֆրանցը, մի քիչ անհանգիստ սրբտով,—արդէն հնարե՞լ ես քո Տպագրիչը, թէ նոր ես գտնելու:

—Գտել եմ... վաղուց եմ գտել... Վաղը ես քեզ ցոյց կը տամ իմ բոլոր նախագիծները: Այդ մեքենայի համար աշխատեցիս, ես նայն իսկ հնարել եմ մի ինքնաշարժիկ կախիչ, որմաթղթերը ցամաքանոցի ձողերից կախ տալու համար... Եկող շաբաթ ես տեղափոխուելու եմ մեր գործարանի վերնատունը և այնտեղ գաղտուկ, իմ աչքի առաջ, պատրաստել եմ տալու իմ հնարած մեքենայի առաջին օրինակը: Այնպէս պէտք է անել, որ երեք ամսուայ ընթացքում արտօնաթղթերը ստացուեն և Տպագրիչը սկսի բանել... Կը տեսնես, սիրելի Ֆրանց, թէ ինչպէս կը հարստանանք բոլորս... Աւելորդ է քեզ ասել, թէ որքան ուրախ կը լինեմ, եթէ կարողանամ այդպիսով փոքր ինչ երախտահատոյց լինել Ֆրամօններին այն բոլոր բարեկեանքի համար, որ նըրանք արել են ինձ... Գոհութիւն Աստուծուն,—բարեկ բարեկ յետեից թափւում է գլխիս...

Ու սկսեց թուել իր կեանքի բոլոր բարեյաջողութիւնները: Սիդօնի պէս համակրելի էակ չէր կարող գտնուել աշխարհումս. մի հիանալի կին էր այդ, որ մեծ պատիւ էր բերում նրան: Աքանջելի տուն ու տեղ ունէին: Շատ լաւ հասարակութիւն էր լինում նրանց մօտ: Սիդօնին կատարեալ սոխակի պէս էր երգում տիկին Դօբսօնի արտայայտիչ մեթօդի չնորհիւ: Այդ տիկին Դօբսօնն էլ հիանալի կին էր... Մի բան միայն տանջում էր խեղճ Ռիսլէրին,—իւր և Սիգիզմունդի մէջ պատահած անհասկանալի գժտութիւնը: Ֆրանցը գուցէ կարողանար օգնել նրան այդ գաղտնիքը լուսաբանել:

—Օ՛, անպատճառ, ես կ'օգնեմ քեզ, եղբայր,—պատասխանեց Ֆրանցը ատամներն իրար սեղմած, և բարկութիւնից արիւնը խփեց ճակատը, մտածելով, որ մարդիկ կարող էին կասկածով վերաբերուել այդ մարդուն, որի աննկնղ ազնւութիւնը այդքան ախնայտնի կերպով ինքնաբերաբար և միամտօրէն արտայայտում էր նրա առաջ: Բարեբախտաբար ինքն այդտեղ էր և ամեն ինչ կարգի էր բերելու, իբր դատաւոր:

Մինչ այդ՝ նրանք արդէն մօտեցել էին Անիէրի տանը: Ֆրանցը գեռ հեռուից ուշք էր դարձրել այդ տան վրայ չնորհիւ

ներա օտարոտի սանդուխին, որ բարձրանում էր աշտարակածի, փայլելով իր նոր ու կապտագոյն թիթեղաբարերով: Նրան թւում էր, թէ այդ տունը շինուած է յատկապէս Սիդոնիի համար, իբրև մի իսկական վանդակ այդ քմայածն ու աչք ծակող փետուրներով զարդարուած թռչունի համար:

Երկյարկանի շալէ էր այդ, որի հայեակերպ ապակիները ու վարդագոյն վարագոյրները նշմարւում էին դեռ երկաթուղու մէջից, փայլին տալով կանաչաւէտ մարդագետնի խորքում, ուր կախուած էր անդլիական մետաղից շինուած մի անագին գունդ:

Տան մօտովը հոսում էր Սէնան, որ դեռ բոլորովին պարզեան տեսք ունէր, կաշկանդուած՝ շղթաներով, խճողուած՝ լողարաններով ու մեծ-մեծ նաւերով և նաւամատոյցին կապուած փղբրիկ ու թեթև մակոյկներով, որոնք վեր-վեր էին թռչում ամենաչնչին ալիքներից, զոյց տալով իրանց բոլորովին թարմ ներկուած ու ածուխի փոշով ծածկուած յաւախոտ անունները: Սիդոնիի պատուհաններից երևում էին ջրափի ճաշարանները, որոնք լուռ ու հանգիստ էին լինում շաբաթուայ ընթացքում, իսկ կիրակիները ծայրէծայր լցւում էին խայտաբղէտ ու աղմուկալից ամբոխով, որի հրճուանքները խառնուում էին թիւրի ծանր ճղիււններին և, բարձրանալով երկու եզերքներից, ի մի էին ձուլւում գետի վերևում՝ չուկների, աղաղակների, կոչերի, ծիծաղների ու երգերի այն հոսանքի մէջ, որ տօն օրերին անընդհատ ելեէջներով ընթանում է Սէնայի երեսով տասը մղոն տարածութեան վրայ:

Լի օրերը այդտեղ կարելի էր տեսնել բացօձիք, անգործ ու դատարկաշրջիկ բազմութիւն, կոշտ յարդէ լայն, սրածայր զլիարկներով ու բրդէ բաճկոններով տղամարդիկ և, արածող կովեր երագող հայեացքով, դառիվայրի վրայ պարապ նստոտած կանայք: Բոլոր շրջիկ մանրավաճառները, երգեհոն ածողները, տաւիղահարները, թափառական խեղկատակները՝ կանգ էին առնում այդտեղ, ինչպէս արուարձանում: Գետովը լիքն էր դրանցով և եզերքների տնակների պատուհանները միշտ բացւում էին դրանց մօտենալիս ու նրանց մէջ երևում էին անհոգ կոճակուած սպիտակ բաճկոններ, խճուած մազեր ու պարապութեան չիբուխներ, որոնց տէրերը կարօտով սպասում էին այդ թափառաշրջիկ գոհակութիւններին, իբրև դրացի Պարիզի քաղցր յիշողութիւնների:

Տխուր ու տգեղ էր այդ բոլորը:

Դեռածիլ խտրը արդէն գեղնել էր ոտի տակ տրորուելով, փոշին մրի պէս սև էր, և սակայն ամեն հինգչաբլթի կոկօտների բարձր շրջանը անցնում էր այդ տեղով, գնում Կազինօ, անա-

գին աղմուկ հանելով վարձու կառքերի դիւրարեկ անիւներով: Այդ բոլորը սաստիկ դուր էր գալիս Սիգօնին, որ պարբերակ էր մինչև ուղ ու ծուծը. բացի դրանից, երեխայ ժամանակը փոքրիկ Շէբը շատ բան էր լսել Անիէրի մասին հռչակաւոր Դըլօրէլից, որ շատ ուրիշ գերասանների նման ցանկութիւն էր տաժում ունենալ այդ տեղերում մի տուն, մի փոքրիկ գիւղական անկիւն, ուր կարելի լինէր գիշերները, ժամի տասներկու և կէսին, վերադառնալ թատրոնից:

Փոքրիկ Շէբի բոլոր երազները այժմ իրագործում էր Սիգօնի Ռիսլէրը...

Երկու եղբայրները մօտեցան գետափի կողմի դարպասին, որ սովորաբար կողպած չէր լինում: Նրանք ներս մտան, անցնելով դեռ մատղաշ թաւուտների արանքով: Տեղ-տեղ երևում էին զանազան փոքրիկ շէնքեր,—բիլիարդի սենեակը, պարտիզպանի տնակը, ապակիապատ ջերմոցը,—որոնք յիշեցնում էին երեսաներին իբր խաղալիք տրուող չվէյցարական շալէների այլ և այլ մասերը, իսկ ամբողջը—թեթի, հաղիւ հազ կպած հողին ու պատրաստ օղը ցնդելու սնանկութեան կամ քմահաճոյքի ամենաչնչին շնչից—նմանում էր կօկօտի կամ բօրսայական խաղերով զբաղուած դրամատերի վիլլայի:

Յրանցը դիտում էր իր շուրջը՝ փոքր ինչ չլացած: Պարտէզի խորքում, ծաղկազարդ անօթներով շրջապատուած պատշգամբի վերևում, երևում էին դահլիճի բարձր պատուհանները՝ բաց վանդակափեղկերով: Դրան մօտ շարուած էին ծալովի աթոռներ, մի ամերիկական ճօճաթոռ և մի փոքրիկ սեղան, որի վրայ դեռ մնում էր սուրճի սարքը: Ներսից լսում էին դաշնամուրի ուժգին բաղխումներ և ձայների խուլ շշուռջ:

—Ա՛յ թէ կը զարմանայ Սիգօնին, ասում էր բարեհոգի Ռիսլէրը, յուշիկ քայլելով աւաղի վրայով,—նա ինձ սպասում է միայն երեկոյեան... Այժմ երաժշտութեամբ է զբաղուած տիկին Դօրսօնի հետ:

Եւ յանկարծակի բանալով դուռը, դեռ ներս չը մտած, չէմքիցը գոռաց իր բարեհոգի թաւ ձայնով.

—Իմացիր, թէ ում եմ բերել հետս:

Տիկին Դօրսօնը, որ մենակ նստած էր դաշնամուրի առաջ, վեր թռաւ տեղումը, և ընդարձակ դահլիճի խորքում, արևադարձային բոյսերի յետևում, որոնք բարձրանում էին մի սիրուն սեղանի վրայ, կարծես շարունակելով նրա նուրբ ու զոդորիկ գծերը, շտապով ոտքի կանգնեցին ժօրժն ու Սիգօնին:

—Օ՛խ, վախացրեցիք ինձ... ասաց վերջինը, վազելով դէպի Ռիսլէրը:

Գորգի վրայ ֆրֆոսաց նրա փոթփոթազարդ սպիտակ տնային հագուստը, որի միջով անց կացրած կապոյտ ժապավենները յիշեցնում էին երկնքի կապոյտ կտորներ ամպերի արանքին, և արդէն չփոթութիւնից ազատուած, բաց ճակատով, սիրալիր դէմքով և իր մշտական թեթև ժպիտով, նա մօտեցաւ ու համբուրուեց իր ամուսնու հետ և մեկնեց ճակատը Ֆրանցին, ասուով.

—Բարև, եղբայր Ֆրանց:

Ռիսլէրը թողեց նրանց մենակ ու ինքը մօտեցաւ Ֆրոմօն կրտսերին, սաստիկ զարմանալով, որ նրան գտնում է իր տանը.

—Ի՞նչպէս, դուք այստեղ էք, Շօրշ... Ես կարծում էի, թէ Սալինի էք գնացել...

—Այո, բայց երեակայեցէք... Ես եկայ... Կարծում էի, թէ կիրակի օրերը մնում էք Անիէրում... Ուզում էի ձեզ հետ խօսել մի գործի մասին...

Եւ իսկոյն սկսեց, խօսքերն իրար խառնելով, պատմել ներան ինչ-որ մի կարևոր ապսպրանքի մասին: Սիդօնին անյայտացաւ՝ Ֆրանցի հետ մի քանի աննշան խօսքեր փոխանակելուց յետոյ: Տիկին Դօբսօնը շարունակում էր իր մեղմիկ տրէմօլները, այնպէս, ինչպէս նուազում են թատրոնում կրիտիկական դրութիւնների ժամանակ:

Եւ յիշաւ, դրութիւնը բաւական լարուած էր: Միայն Ռիսլէրի լաւ տրամադրութիւնն էր, որ չէր թողնում, որ ամենքը սաստիկ նեղուած զգան իրանց, նա ներողութիւն էր խնդրում Ֆրոմօնից, որ տանը չէր գտնուել, և ուզում էր իսկոյն ցոյց տալ իր տունը Ֆրանցին: Դանլիճից գնացին ակոռատունը, ակոռատոնից՝ մառանները, կառասրահները, ջերմոցը: Ամեն ինչ նոր էր, փայլուն, շողշողուն և չափազանց փոքր ու անյարմար:

—Բայց,—ասում էր Ռիսլէրը փոքր ինչ հպարտութեամբ, —չատ փող է նստել այս բոլորը:

Նա ուզում էր, որ Ֆրանցը գմայլի, տեսնելով Սիդօնիի գնած տան ամենաչնչին մանրամասնութիւնները, ցոյց էր տալիս նրան բոլոր յարկերը բերուած ջուրն ու գազը, կատարելագործուած զանգերը, պարտէզի կահ-կարասիները, անգլիական բելլիարդը, ջրաբուժանոցը, և այդ բոլորը անում էր բուռն և րախտագիտութեան ցոյցերով Ֆրոմօն կրտսերի հասցէին, որ նրան դարձնելով իր առևտրական ընկերակիցը, ուղղակի մի գանձ վերցրել ու դրել էր նրա բռի մէջ:

Ամեն անգամ, երբ Ռիսլէրը այդպէս արտայայտում էր իր երախտագիտութիւնը, Ֆրոմօնը ամօթահար ու անհանգիստ կուչ էր գալիս, զգալով Ֆրանցի օտարոտի հայեացքը:

Նախաճաշը թմրած անցաւ:

Խօսողը գրեթէ միայն տիկին Դօքսօնն էր, որ երջանիկ էր զգում իրան, խորասուզուած սիրային ինտրիգայի մէջ: Շատ լաւ իմանալով կամ, աւելի ճիշտ ասած, կարծելով, թէ շատ լաւ իմանում է իր բարեկամունքը՝ գաղտնիքը, նա հասկանում էր Ֆրանցի խուլ ցասումը, — այդ կատաղութիւնը նախկին սիրահարի, որ տեսնում է իր տեղը գրաւուած ուրիշից, — հասկանում էր նաև ակոյեանի երևան գալուց վրդովուած ժօրժի անհանգրստութիւնը, քաջակերում էր մէկին մի հայեացքով, մխիթարում էր միւսին մի ժպիտով, հիանում էր Սիդօնի անդորրութեան վրայ և ամենայն արհամարհանքով էր վերաբերւում գարշելի Ռիպլէրին, այդ կոպիտ ու վայրագ բռնակալին: Նա ամեն ջանք գործ էր դնում մանաւանդ թոյլ չը տալու համար, որ սեղանի շուրջը լուծիւն տիրի, — անտանելի լուծիւն, որ այնքան ծիծաղելի ու ճնշող կերպով ընդհատուած է ամաններին դիպչող պատառաքաններին ձայնով:

Նախաճաշը վերջանալուն պէս Ֆրոմօն կրտսերը յայտնեց, որ ինքը վերադառնում է Սալինի Ռիպլէր աւագը չը համարձակեց նրան պահել, մտածելով, որ իր սիրելի տիկին Շօրչը բողբոջին մենակ կը մնայ այդ կիրակին. և սիրելեանը, առանց կարողանալու մի խօսք ասել իր սիրուհուն, կիզող արեւի տակ գնաց դէպի երկաթուղու կայարանը Ռիպլէրի ուղեկցութեամբ, որ ոչ մի կերպ չէր ուզում մենակ թողնել նրան մինչև գնացքը նստելը:

Տիկին Դօքսօն մի րոպէ նստեց Ֆրանցի ու Սիդօնի հետ մի փոքրիկ տաղաւարում, որ զարդարուած էր խաղողի պատատուկաձև ստաբրի վարդադոյն բողբոջներով. բայց յետոյ, զգալով, որ ինքը խանգարում է նրանց, նա վերադարձաւ դահլիճը և, ինչպէս մի քիչ առաջ, երբ ժօրժը այնտեղ էր, սկսեց նուազել ու երգել մեղմ ու արտայտիչ կերպով: Լուռ պարտէզի մէջ, այդ խուլ երաժշտութիւնը, դուրս սփռուելով ճիւղերի արանքով, յիշեցնում էր թռչունի մնչիւն մրրիկից առաջ:

Վերջապէս նրանք մենակ մնացին:

Տաղաւարի ցանցապատի տակ, որ դեռ լերկ էր և զուրկ սողարթից, մայիսեան արեւը շատ էր կիզիչ: Սիդօնին ձևաքով հովանի էր անում աչքերին, նայելով գետափով անցողաբաձ անողներին: Ֆրանցը նոյնպէս նայում էր դուրսը, բայց դէպի ուրիշ կողմ, և երկուսն էլ այնպէս էին ցոյց տալիս, թէ ոչ մի կախում չունեն միմեանցից, սակայն յանկարծ երկուսն էլ միևնոյն րոպէին շուռ եկան դէպի իրար միատեսակ շարժումով և միատեսակ մտածմունքով:

—Խօսելիք ունեմ ձեզ հետ, ասաց Ֆրանսյը իսկ և իսկ այն րոպէին, երբ Սիդօնին ուզում էր բանալ բերանը:

—Ես էլ խօսելիք ունեմ,—պատասխանեց Սիդօնին լուրջ եղանակով,—բայց դնանք այն կողմը... այնտեղ աւելի յարմար կը լինի:

Եւ նրանք մտան մի փոքրիկ պավիլիօն, որ շինուած էր պարտէզի խորքում:

S. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄԱԼԱՐԻԱՆ ԵՒ ՄՈԾԱԿՆԵՐԸ

Մալարիան (դոլցոց, դոլեռոց, հաննային ջերմ, բնդմիջուով ջերմ, տեղի և այլն) յայտնի է ամենքին:

Կովկասը իրաւամբ տեղային երկիր է համարուում: Եւ, ճշմարիտ որ, ջերմը թագաւորում է մեր երկրի շատ տեղերում: Նրանից ազատ են մնացած միայն լեռնային ազգաբնակչութիւնները: Երևանը իր չրջականերով, առհասարակ ամբողջ Արարատեան հովիտը, Վրաստանի ընդարձակ պտղաբեր երկիրները, ամբողջ Սև ծովի եզրերը, Բաթումից սկսած մինչև Դրիմ, մալարային են, այսինքն այդ տեղերում տիրում են մալարային հիւանդութիւնները:

Մարդիկ բաւական անտարբեր են դէպի այդ հիւանդութիւնը, երևի այն պատճառով, որ այդ ցաւից մարդիկ իսկոյն չեն մեռնում, թէև այդպիսի դէպքեր էլ են պատահում:

Բանն այն է, որ դոլեռոցը միայն դոլցոց ու ջերմը չէ, սրանք հիւանդութեան աչքի ընկնող արտայայտութիւններն են և ժողովուրդը միայն սրանց է ճանաչում:

Այն ինչ, մալարիան խոր թափանցում է մարդու կազմուածքի մէջ ու մեծ աւերումներ անում և այդպիսով զարմանալի կերպով թուլացնում մարդու մարմինը, որ ամենաթեթև հիւանդութիւնից անդամ քայքայւում է: Ասում են, որ միայն Հնդկաստանում նրանից տարեկան հինգ միլիոն մարդ է մեռնում: Ո՛րչափ ժողովուրդ է, ուրեմն, կոտորւում Իսալիայում, Չինաստանում, Ամերիկայում, Աֆրիկայի ծովեզրը, մեր ծովերի ափերին ու Փոքր-Ասիայում:

Բայի այդ, հիւանդութիւնները ամբարն զանազան ու տարբեր նշաններով են արտայայտւում, որ երբեմն նոյն իսկ բժիշկները զժուարանում են հասկանալ, թէ դա մալարիա է: Ժողովուրդը ճանաչում է միայն սուր դողէրոցքը, որ բնորոշւում է երկք հիւանդական երևոյթներով, որոնք կազմում են մալարիայի նսպան (պարօքսիզմը), այն է—դող, ջերմ եւ frisson. այդ է այն երրորդութիւնը, որ բնորոշւում է ճահճային տենդը: Նրա

մի ուրիշ բնորոշ յատկութիւնն էլ այն է, որ նօսպայից յետոյ (իսկապէս քրտինքից յետոյ) հիւանդը իրան առողջ է զգում մինչև հետևեալ օրը, երբ միևնոյն ժամին կրկնուում է նօսպան իր երեք չրջաններով:

Ահա այն աչք ծակող երևոյթները, որոնցով ամենքը ճանաչում են դողէրոցը:

Ժողովուրդը գիտէ նոյնպէս, որ երկար ժամանակ ջերմողը լինում է զուճատ, սակաւարիւն, նիհար, թոյլ, փորն ուռած, ենթակայ սրտի բարախման, ծանրաչնչութեան, մարսողութեան խանգարումների, արիւնհոսութիւնների և այլն:

Իրապէս, մալարիան սաստիկ հարուածում է մարդուս կազմուածքը և հասցնում նրան ծերութեան և յարատև հիւանդութիւնների ենթակայ դարձնում: Տուժում են մանաւանդ երեխաները, ծերերը և ուրիշ տկարութիւններից թուլացածները:

Գիտնականները երկար ժամանակ չէին կարողանում բացատրել նօսպաների որոշ ժամերին կրկնուելու և երեք չրջանների զարմանալի յաջորդութեան պատճառը: Չէին հասկանում նոյնպէս, թէ ինչի՞ ալի հիւանդութիւնը տիրում է գլխաւորապէս ճահճային, խոնաւ երկրների, ծովերի ու զետերի աղմոսափերին, և առհասարակ այնպիսի տեղերում, որտեղ կանգնած, անշարժ զբոս կան ու նրանց շուրջը կամ մէջը հարուստ բուսականութիւն կայ: Անմեկնելի էր թւում և այն կարևոր հանգամանքը, որ ջերմը ամբողջ տարին չէ թագաւորում, այլ տարուայ որոշ եղանակներին—դարնանն ու աշնանը, երբ խոնաւութիւնը աւելի չատ է: Յետոյ անհասկանալի էր այն բանը, որ մարդիկ աւելի հիւանդանում են իրիկնապահից մինչև առաւօտ, երբ աւելի սաստիկ է օրուայ խոնաւութիւնը (ճահճների գոլորշիանալուց): Վաղուց յայտնի է, որ քամին կարողանում է ցրել կամ մեղմացնել հիւանդութիւնը, որ ստորին յարկում, նկուղներում մարդիկ աւելի հեշտութիւնով են հիւանդանում քան վերին յարկերում. առհասարակ հիւանդութիւնը նուազում է, երբ որ մարդիկ բարձրանում են լեռները: Վաղուց նկատուած է և այն զարմանալի փակտը, որ անտառը (կամ առհասարակ մի երկու շաք ծառեր), նոյն իսկ մի բարձր պատ, կանգնեցնում են հիւանդութեան տարածումն: Հռոմում առաջ (նախ քան անտառների կտորումն) ջերմը բոլորովին չէր նկատուում, իսկ հիմա, երբ չրջապատող անտառները ոչնչացրած են, դարձել է մալարիայի կենտրոն:

Ինչին պէտք է վերագրել դողէրոցի այս տարօրինակ յատկութիւնները:

Շատ զիտումներ ակններն են արել այն իրողութիւնը, թէ կանգնած ջուրը իր հետ կարող է տեղափոխել ջերմը: Նաւերի վրայ մարդիկ հիւանդանում են, երբ վերցրած են լինում իրանց հետ ճահճային ջուր:

Այդ երևոյթները բացատրելու համար ստեղծուեց միազմաաիկ (ժամանոսութեան) թէօրիան, որով ենթադրուում է, թէ ճահիճների մէջ առանձին նիւթեր են գոյանում և թունաւորում օդը: Այստեղից և մալ-աւ'իա (վաճ օդ) անունը:

Սակայն միազմ միայն մի բառ է, որ իրապէս ոչինչ չէ բացատրում, և ուրեմն չէր կարող բաւարարութիւն տալ իսկական գիտնականին:

Նորանոր հետազօտութիւնները վերջապէս տուեցին մեր ձեռքը յիշած տարօրինակ ֆակտերի մեկնութեան բանալին: 1880-ին մի ֆրանսիացի բժիշկ, Լավըրանը, խոշորացոյցով քննելով գողայնողների արիւնը, գտաւ նրա մէջ ահագին քանակութեամբ շարժուն միաբջջային մարմնիկներ, որոնք մտնում են արեան կարմիր գնդակների մէջ և ուտում նրանց:

Դրանք արեան մակաբոյծներն (պարազիտ) են, այսինքն այնպիսի էակներ, որոնք ապրում են ու զարգանում ուրիշ կենդանու արիւն ծծելով: Նրանք չափազանց մանր են, այնչափ մանր, որ արեան մի կարմիր գնդակի մէջ կարող են տեղաւորուել մինչև չորս վրաբոյծեր, երբեմն էլ ընդհակառակը, այդ գնդակներից աւելի մեծ են լինում: Նրանք զանազան ձևեր են ընդունում ու պոչիկներ արձակում. մտնելով արեան կարմիր գնդակների մէջ, նրանք ծծում են կարմիր ներկանիւթը, այնպէս որ իրանք կարմրում են, իսկ գնդակները խոնաւնում, կորցնում են իրանց գոյնը:

Այսպիսով, արեան վրաբոյծը քանդում, ոչնչացնում է կարմիր գնդակները: Որոշ մեծութեան հասնելով, նա հերձւում է և տալիս է 10—20 մանր էակներ, որոնք նոյնպէս մտնում են կարմիր գնդակների մէջ: Ենթադրում են, որ այդ հերձման միջոցին է սկսւում դողը, այնպէս որ դողի պատճառը գուցէ այդ բազմամանումն է: Եւ քանի որ դողը լինում է ամեն օր, կամ օրը մէջ, կամ երեք օր մի անգամ, ուրեմն պէտք է ենթադրել, որ ամեն ձևի գողէրոյք իր սեփական մակաբոյծն ունի, որի հերձումն կատարւում է զանազան ժամանակամիջոցներում, ամեն օր (ամեն օրեայ ջերմ), օրը մէջ (երկօրեայ ջ.) և այլն:

Ահա այս է դողէրոյքի նորագոյն թէօրիան: Ճահնային օեղը մի հիւանդութիւն է, որ առաջ է գալիս ահագին քանակութեամբ մակաբոյծների ներմուծմամբ արեան մէջ և արեսն գնդակների շնորհիւ:

Ո՞րտեղ են դոյանում այս պարազիտները և ի՞նչպէս են մտնում նրանք արեան մէջ:

Այդ հարցերին պատասխանում է այժմ մոծակային կոշուած թէօրան:

Վաղուց յայտնի է, որ ջերմոտ երկրներում մոծակներ չատ են լինում: Մի անդլիայի բժիշկ առաջին անգամ կարծիք յայտնեց, որ մի կապ կայ այդ միջատների ու ջերմի տարածուելու մէջ:

Վերջին ժամանակներս շատ գիտնականներ սկսեցին զբաղուել այդ խնդրով և գնացին ամենայայտնի մալարիական երկրներ *) — հետազոտութիւններ անելու այդ ուղղութեամբ:

Մի շարք յայտնի գիտնականներ ապրելով խիստ ջերմային երկրներում, երկար փորձերից ու գիտումներից եկան այն զարմանալի եզրակացութեան, թէ մալարիայի տարածողը մոծակներն են:

Ի՞նչպէս:

Մոծակները կծելով ջերմոցին, ծծում են նրա արիւնը, իսկ արեան հետ և յիշած մակաբոյժները, յետոյ կծելով մի առողջ մարդու, լցնում են նրա մէջ թոյնը և հիւանդացնում նրան:

Ուրեմն ամենից առաջ մոծակը պիտի կծէ մի հիւանդի, որ նրանից թոյնը վերցնէ: Այս է պատճառը, որ շատ տեղեր թէն մոծակներ կան, բայց ջերմ չը կայ. — այդ մոծակները անվնաս են:

Բայց եթէ մոծակը մի ջերմոց հիւանդի կծել է ու նրա արիւնը ծծել, նա դառնում է արդէն ջերմաբեր:

Այսպէս օրինակ, եթէ մոծակներին լցնենք մի վանդակի մէջ ու մէկ մարդ այնտեղ իր թեր մաշնի և մոծակները կծեն, մարդը կը հիւանդանայ:

Այդպիսի փորձեր արուած են:

Իտալացի պրոֆ. Բասսիանը մոծակներին կծել տուեց ջերմ ունեցողների, յետոյ ուղարկեց նրանց Լօնդօն բժ. Պատրիկ Մէնսօնին: Այնտեղ բժշկի որդին իրան կծել տուեց այդ մոծակներին և ինքը մալարիա ստացաւ:

Այդ փորձը կտրական կերպով ապացուցում է այն փակտը, թէ մոծակը ջերմի տարածող է:

Մենք ասացինք, որ մոծակը մալարիայի թոյնը (արեան մակաբոյժը) վերցնում է մարդու արիւնից:

Եւ, յիշաւի, գիտնականները հիւանդից դուրս ոչ մի տեղ չեն գտած այդ մակաբոյժը — ոչ ջրերի մէջ, ոչ մոծակի ձուի ու

*) Հնդկաստան, Նոր-Գվինիա, Իտալիա, Աֆրիկա:

թրթուրներէ, ոչ ոքի ու հողի մէջ, այլ միմիայն մոծակի (կծող մոծակի) արեան մէջ:

Այստեղից պարզ է, որ մոծակի մէջ բնականաբար չը կան մակաբոյծներ, այլ դրանք երևում են այն ժամանակ, երբ մոծակը կծում է հիւանդ մարդուն ու ծծում նրա արիւնը:

Ասածներէիցս հետեւում է, որ արեան յիշած մակաբոյծները մինչև այսօր գտնուած են միմիայն մարդու ու մոծակի արեան մէջ:

Դուրս է գալիս, որ մարդն ու մոծակը իրար տալիս են այդ մակաբոյծները. մոծակը կծելով հիւանդ մարդուն, վերջնում է նրա մակաբոյծները, յետոյ կծում առողջին ու տալիս նրան այդ մակաբոյծները: Այսպիսի հակառակ հոսանքներ են տեղի ունենում այդ երկուսի մէջ—մարդուց մոծակին ու մոծակից մարդուն:

Իտալացի պրոֆ. Մատտէի (di Mattei) ցանկալով իմանալ, թէ՛ ճշմարիտ է արդեօք, որ մոծակներից պաշտպանուելով, մարդ չի հիւանդանայ գողէրոցքով, հետեւեալ փորձն արեց.

Չորս ուրիշ հոգու հետ նա գնաց սիցիլիական երկաթուղային մի կայարան (Volsavria), որ յայտնի է իբրև ջերմի բուն. այդտեղ նրանք բնակուեցան երկու սենեակում, որոնց լուսամուտներն ու դռները փակուած էին շատ խիտ ցանցով, որպէսզի մոծակները նրանց միջով ներս չը մտնեն:

Այսպիսով մոծակները չէին կարող երեկոններն ու գիշերները ներս մտնել ու կծել նրանց: Ընտրուած էր տարուայ ամենավտանգաւոր ժամանակը. գործը տեւեց 33 օր: Մոծակները ահագին երանակներով (խմբերով) լցրել էին օդը, և այնուամենայնիւ փորձի ենթարկուած մարդկանցից ոչ ոք չը հիւանդացաւ, չը նայած, որ չորս կողմը ամենքն էլ հիւանդ էին: Այդ փորձը կրկնակի ապացոյց է, որ վնասաբեր նիւթը մոծակների մէջն է:

Մի ուրիշ համանման փորձ ևս:

Անգլիայից ուղարկել էին Իտալիա մի տեսակ փայտաչէն վրան (ծառաք), որի լուսամուտներն ու դռները ծածկուած էին թանձր ցանցով. այդ վրանը դրեցին Տիբբ գետի ափին, ամենաջերմային տեղում և նրա մէջ տեղաւորուեցին մի քանի հոգի: Նրանք ցերեկը զբօսնում էին, պաշտպանուելով ի հարկէ մոծակներից, իսկ արեղակի մայր մտնելուց սկսած մինչև առաւօտ փակուած մնում էին այդ վրանի մէջ: Փորձի ենթարկուածները բոլորն էլ առողջ մնացին, այն ինչ դրացիները ամենքն էլ հիւանդացան: Մալարիան ուսումնասիրող իտալական մասնագէտովը ուրիշ շատ փորձեր ևս արեց և եկաւ նոյն եզրակացութեան:

Յունիս, 1901.

Կապաչիօ հովտում այնչափ կատաղութեամբ տիրում է ջերմը, որ յուլիսից մինչև նոյեմբեր բոլոր բնակիչները թողնում են իրանց տունն ու տեղը և ապաւինում բարձր տեղեր: Այդտեղ մասնաժողովը արեց իր փորձերը. 104 հոգի ենթարկուեցին փորձին: Յունիսի 25-ից նրանք ամենքը, արևի մայր մտնելուց մինչև նրա ծագման ժամը, փակւում էին իրանց բնակարաններում, որտեղ բոլոր ծակերը կախւում էին մետաղից շինած թանձր ցանցով, կամ թէ նրանք տեղաւորւում էին նոյնպիսի ցանցերից շինած վանդակների մէջ և հովանոցներում *): Հետևանքն այն եղաւ, որ այս 104 մարդուց ոչ մէկը կը վարակուեց մալարիայով, այն ինչ ուրիշ 349 հոգուց, որոնք ապրում էին առանց այդ զգուշութիւնների, միայն 7—8 ազատ մնացին ջերմից, իսկ մնացածները հիւանդացան:

Բժ. Մատտէի հետեցնում է, թէ ամենաւատ հիւանդոս տեղերում եւ այն էլ տարուայ ամենաերկիւղալի ժամանակ կարելի է ազատ ցնել բացօթեայ եւ չր հիւանդացալ դոզերոցով, եթէ միայն մարդ լաւ պահպանուի մոծակներից:

Ամենքին յայտնի մոծակները կազմում են հարիւրից աւելի ցեղեր, որոնք տարբերւում են միմեանցից: Շատ ցեղեր բուրրովին անվնաս են. այսպէս ուրեմն կան մալարիաբեր և անվնաս մոծակներ:

Մոծակների մեծ թաղաւորութիւնը այսպիսով բաժանւում է երկու մեծ կարգերի—մալարիաբեր և անվնաս. առաջին կարգերի մոծակային ցեղերից հաշւում են այժմ 20-ից աւելի.— սրանք anophéles-ն են, իսկ անվնաս ցեղերը աւելի եւ (մօտ 101), պատկանում են culex կարգին և շատ աւելի են տարածուած. կծողները որձերն են, այն ինչ էգերը բոյսերի հիւթերով են կերակրւում: Էգերը իրանց ձուիկները դնում են կանգնած ջրերի երեսին. այս ձուիկներից դուրս են գալիս թրթուրներ, որոնք ապրում են ջրի մէջ մինչև հասունացած միջատ դառնալը: Ուրեմն ջուրը, այն էլ լճացած կանգնած ջուրը անհրաժեշտ է մոծակների աճման համար. մանաւանդ ծովեզրի տիղմերը, որտեղ աղի ջուրը խառնւում է միւս ջրի հետ և կազմում ճահիճներ: Հոսող ջրերում այդ միջատներից չեն գտնւում:

Թրթուրները ապրելով ջրի մէջ, չուտ-չուտ բարձրանում

*) Դուրս գալիս ծածկում էին երեսներն ու փղը վռալով և հագնում էին ձեռնոցներ:

են ջրի երեսը և օդ ծծում իրանց շնչափողիկով: Այդ յատկութեան վրայ է հիմնուած նրանց ոչնչացնելու ձևը:

Հասունացած մոծակները արդէն օդաբնակ են դառնում, նրանք շատ դանդաղ են թռչելու մէջ և իրանց ծնած տեղից հեռու չեն կարող թռչել. սակայն կարող են տեղափոխուել երկաթուղիների և նաւերի հետ: Նրանք երևում են գլխաւորապէս մայիսին և անհետանում են հոկտեմբերին: Չմեռը թաղնւում են ծառերի ճեղքուածքների ու փեճակների և թուփերի մէջ, իսկ թըրթուրները կարող են ամբողջ ձմեռը ապրել ջրի մէջ:

Քամին յրում է մոծակներին, այդ պատճառով էլ բարձր տեղերում մոծակ չը կայ:

Վտանգալից ժամանակը երեկոն է մինչև առաւօտ, արևի ծագելը, որովհետև գիշերուայ ժամերին են դուրս գալիս այդ միջատները իրանց թաքկացած տեղերից:

Յիշե՛ք նաև, որ այժմ մոծակներին են վերադրում և մի քանի ուրիշ հիւանդութիւնների տարածումը, ի միջի այլոց և սարսափելի դեղին տենդը:

Առողջապահութիւնը այն ժամանակ միայն հնարաւոր կը լինի, միայն այն ժամանակ մարդ կարող կը լինի պաշտպանել իրան թշնամուց, երբ լաւ է ճանաչում այդ թշնամուն, երբ գիտէ նրա թոյլ կողմերը:

Մաւրաբայի իսկական պատճառը վերջապէս այսօր մեզ յայտնի է. ուրիմն այսօր մենք աւելի լաւ ենք զինուած նրա դէմ և աւելի հեշտ կերպով կարող ենք պաշտպանուել նրա կոտորածներ հարուածներից:

Մենք ցոյց տուինք որ մոծակները համարւում են հիւանդութեան տարածողները, որ նրանք աճում են լճացած, ճահճային ջրերի մէջ, որ նրանք վարակիչ թոյնը (մակաբոյժները) վերցնում են ջերմող հիւանդի արիւնից, կծկով նրան:

Այս գիտելիքները թելադրում են մի շարք առողջապահական միջոցներ: Երկու գլխաւոր հիմնական միջոցներ կան, որոնք վերանալով, կը վերանայ աշխարհիս երեսից նա և գողէրոցը. — կամ պէտք է չորացնել բոլոր նահնային ջրերը, որպէս զի մոծակները այլեւս չը կարողանան այնտեղ անել ու զարգանալ, կամ քե չե բժեկել բոլոր ջերմ ունեցող մարդկանց, որպէս զի մարդուն արեան մեջ այլեւս չը մնան մակաբոյժներ, — այն ժամանակ մոծակները կծեն էլ, դարձեալ ոչինչ, որովհետեւ այլեւս չեն կարող մալարիայի բոյն վերցնել ու առողջներին էլ վարակել *):

*) Յիշելի միջոցները քաղուած են ֆրանսիական մի մեծ մասնածոյութի գեկուցումից:

Ճահիճները չորացնելը ահագին նշանակութիւն ունի. դրանից մոծակները անհետանում են: Եթէ դժուար է չորացնել մեծ ճահիճները, դոնէ տների մօտինը, կանգնած ջրերը պիտի հետացնել, իսկ դրա համար հարկաւոր է միայն որ բակերում ու փողոցներում փոսեր չը լինեն, որպէս զի անձրեւի ջրերը չը կանգնեն: Բակերի գետինը պէտք է թեք լինի միշտ, որ ջրերը հեշտութիւնով հոսեն: Ի նկատի ունենալով, որ հոսող ջրի մէջ մոծակների թրթուր չէ լինում, պէտք է միշտ թարմացնել կանգնած ջրերը, եթէ հնար չը կայ չորացնելու նրանց. օրինակ, նորոգել շատրուանների, «հաւուզների» ջրերը, կամ բրնձի արտերի մէջ յաճախ նոր ջուր թողնել: Ճահճային տեղերը չորացնելու համար մեծ յաջողութեամբ տնկում են տրագ աճող ծառեր—նոճի (сосна) և էֆկալիպտուս, որոնք ծծում են գետնի խոնաւութիւնը և միևնոյն ժամանակ չեն արգելում արեւին թափանցել գետին: Ջրհորների բերանը պէտք է ծածկուած լինեն: Մեծ լճացած ջրերի մէջ մոծկանների թրթուրները ոչնչացնելու համար բաւական է այնտեղ ձգնել անեցնել, որովհետև ձկները զարմանալի ազահութեամբ ոչնչացնում են նրանց: Աւելի փոքր տարածութիւն ունեցող ջրերը մոծակի թրթուրից մաքրելու համար գործ է ածւում մի ուրիշ միջոց, այն է նաւթ կամ կերօսին, կամ որ և է ձէթ:

Մենք գիտենք, որ թրթուրը չէ կարող ապրել ջրի խորքում, նրան օդ է հարկաւոր, և այդ նպատակով նա շուտ-շուտ ջրի երեսն է դուրս գալիս ու օդ ծծում իր շնչափողիկով: Ուրեմն եթէ ջրի երեսը մի մածուծիկ նիւթ ածուած լինի, այդ հիւթը կը լցնի թրթուրի շնչափողիկը և կը խեղդի նրան: Այս թէօրիան միանգամայն հաստատուեց փորձով: Այդպիսի ջրերի վրայ մի քանի տեղ լցնում են նաւթ, որ հաւասար բարակ շերտով տարածւում է ջրի մակերևոյթի վրայ, կամ թէ չէ մի շոր թաթախելով նաւթի մէջ, քսելով անց են կացնում ջրի երեսից.— չորը յեաքից նաւթ է թողւում և այդպիսով նաւթի բարակ շերտ է կանգնում ջրի երեսին:

Այդ բանը սկսում են անել զարնան սկզբներին, երբ թրթուրը դեռ մոծակ չէ դարձած, և կրկնում են ամառուայ մէջ միջառնի անգամ, որովհետև նաւթը կամ կերօսինը գոլորշիանում է, անհետանում ու ջրի երեսը դարձեալ բացւում. այդ պէտք է կրկնել երկու շաբաթը կամ գոնէ ամիսը մի անգամ, մինչև ցրտերը վրայ հասնեն: Դրա ծախսը միանգամայն չնչին բան է:

Ահա այն միջոցները, որ պէտք է անեն զիւղերն ու քաղաքները միասին, ընդհանուր ոյժերով ու ընդհանուր ծախսերով:

Բայց զբանից, ամեն մարդ պիտի ինքն իրան պաշտպանի:

Ինքնապաշտպանութեան համար հետևեալ միջոցները պիտի ձեռք առնել.

1) Տուճր.—Յայտնի է, որ ջերմային երկրներում աւելի շատ են հիւանդանում ցած տեղերում բնակողները: Օրինակ, եթէ քաղաքի կամ գիւղի տների մի մասը ներքեումն է (գետի ափին), իսկ մի մասը բարձրում—սարի վրայ, ներքեի տների բնակիչները միշտ հիւանդ են լինում, այն ինչ սարի վրայի բնակիչները ազատ են մնում դողից: Ուրեմն տները պէտք է, որքան կարելի է, բարձր տեղերում շինել, իսկ եթէ այդ զժուար է, այն ժամանակ դռնէ պէտք է ճահիճներից և կանգնած ջրերից հեռու բնակուել: Գիւղերում տնակները երբէք չը պէտք է փոսերի մէջ շինել, այլ բարձր թումբերի վրայ, որովհետեւ բարձր տեղերում անձրեւի ջուրը չէ կանգնում ու լճանում: Բարձր տեղերում բնակուելու մի ուրիշ առաւելութիւնն էլ այն է, որ այնտեղ օդափոխութիւնն աւելի ազատ է կատարւում, քամիներ են լինում, որոնք ցրւում են ու ոչնչացնում մոծակներին:

Այս նոյն հիման վրայ չը պէտք է գետնափոր տներում ապրել. այդպիսի տները հարիւր տեսակ վտանգներ են առաջացնում, ի միջի այլոց և ջերմ, որովհետեւ այդ տները միշտ խոնավ են ու թաց, նրանց պատերի տակ ջրեր են հաւաքւում, նեխւում և այլն: Նկատուած է նոյնպէս, որ երկյարկանի տների մէջ ներքեւի յարկում բնակուողները ջերմում են, իսկ վերին յարկինը ոչ:

Շատ վատ սովորութիւն է տների չուրջը խիտ ծառեր տնկելը: Այդ ծառերն արգելում են արեւին ներս մտնել և չորացնել տան չորս կողմի գետիներ: Խիտ ծառերը արգելում են նոյնպէս և լաւ օդափոխութիւնը տան չուրջը և չեն թողնում, որ քամին ազատ փչի ու մաքրի օդը: Մոծակներն էլ շատ յարմար բուռն են շինում այդ ծառերի վրայ. յայտնի է, որ նրանցից անտառներում շատ կան: Խորհուրդ կը տանք տների չուրջը նոճի և էֆկալիպատու տնկել, որոնք արգելք չեն լինում ոչ արեւի և ոչ քամու թափանցելուն ու լաւ չորացնում են գետիներ:

2) Ճախճախուտ ու մոծակաշատ տեղերում պէտք է ցանցեր դործ անել դռների ու լուսամուտների առաջ: Այս ցանցերը պէտք է շինուեն երկաթէ թելերից և չըջանալի մէջ ամրացնուեն ու երեկոները, արեւ մայր մտնելիս, հազցնուեն լուսամուտների ու դռների առաջ: Ցանցերը կարող են լինել նոյնպէս և շատ բարակ կիսէից (մարլայից): Բայց ինչից էլ որ շինած

լինեն այդ ցանցերը, նրանց ծակերը պէտք է այնչափ մանր լինեն, որ մոծակը անկարող լինի մէջներովն անցնել: Պէտք է հսկել, որ չը լինի թէ մի տեղ պատուում լինի ու մոծակն անցնի:

Շուք երկիրներում ընակիչները քնում են պատշգամբների վրայ կամ կտուրների և առհասարակ դուրսը:

Առաջին՝ երբեք չը պէտք է բակերում և ցած տեղեր քնել, որովհետև, ինչպէս ասել ենք, մոծակները ներքևումն են հաւաքւում: Աւելի լաւ է էլի կտուրների վրայ քնել: Բայց որտեղ էլ քնեն, անհրաժեշտ է թափանցիկ (ցանցաւոր) գործուածք վրան չլինել. մահճակալի վրայ կիսէից վարադոյր դրել, ինչպէս այդ գործ է ածւում վաղուց անտի չաք տեղերում: Իսկ եթէ այդ էլ անհնար է, խորհուրդ կը տանք հաղնում արտակել և դուխը փաթաթել այդպիսի կիսէով ու ձեռնոցներ հաղնել:

3) Ճամբորդները կամ թափառական մարդիկ, երբ որ ստիպուած են լինում ջերմոտ տեղերում բացօթեայ գիշերել, պէտք է իրանց մօտ օջաղ վառեն, որովհետև մոծակները ժողովում են կրակի շուրջն ու այրւում, կամ ծուխը հեռացնում է նրանց:

4) Փորձերը ցոյց տուին, որ մոծակները փախչում են դանազան հոտերից, օր. կերօսիների, կարբօլեան թթուի: Այնպէս որ կարելի է սենեակում այս հեղուկների մէջ թաթախած շորեր կախել. ավստոս միայն որ նրանց հոտը այնպէս անախորժ է մարդուն: Զանազան հոտաւէտ բաների ծուխը նոյնպէս առանձին նշանակութիւն չունի, որովհետև միայն ժամանակաւորապէս է թմրեցնում մոծակներին, բայց չէ սպանում:

5. Պէտք է խմել միայն թարմ մաքուր ջուր (դետի կամ, աւելի լաւ է, աղբիւրի), իսկ եթէ ստիպուած են ջրհորի ու առհասարակ կանգնած ջուր խմել, հարկաւոր է նախապէս եփ տալ ու սառեցնել: Աւելի լաւ է ի հարկէ ջրի փոխարէն թէյ գործածել:

6. Արաղ-գինին լիսա է, երբեք չը պէտք է գործ ածել: Նրանք ոչ թէ կաղդուրում են մարմինը, այլ ընդհակառակը թուլացնում: Արբեցողները աւելի դժուար են տանում դող-էրոյքը:

7) Պէտք է աշխատել երեկոները (արեւ մայր մտնելիս) տուն վերադառնալ, որովհետև հէնց այդ ժամերից է սկսւում մոծակների արշաւանքը:

8) Օտար մարդիկ, գնալով ջերմոտ երկիր, նախադրուշու-թեան համար պիտի ամեն օր խինա (քինաքինա) ընդունեն, հինգից մինչև 10 գրան (երեխաները 2—4—5 գր.): Խինայի

ընդունելը յաճախ կանգնեցնում է զողէրոյքը: Բնիկներն էլ կարող են օգտուել այդ միջոցից:

9) Ամեն յոգնեցնող աշխատանք մնաս է: Օրուայ ամենաշոք ժամերին պէտք է հանգստանալ:

Դրանք են անհրաժեշտ զգուշութիւնները:

Մնում է մի երկու խօսք աւելացնել բժշկութեան մասին:

Բժշկութիւնը մալարիայի մէջ ահագին նշանակութիւն ունի. նրա դէմ մենք մի զօրեղ զէնք ունենք—խիւսան, որից պէտք է առատութեամբ օգտուել:

Ամեն տան մէջ պիտի լինի այդ զեղը. ամեն ճամբորդ իր հետ պէտք է ունենայ դրանից:

Վերջին ժամանակներս (անցեալ տարի) փորձեր են արուած մալարիան ևս չիճուկով բժշկել: Սակայն մինչև այսօր որոշ հետեանք չէ տուել այդ ձևի բժշկութիւնը, որ այնպիսի հրաշքներ է գործում ուրիշ հիւանդութիւնների բժշկութեան մէջ, ինչպէս օրրինակ, գիֆթերիտի:

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Վ Ա Տ Ա Ս Ե Ռ Մ Ա Ն Հ Ա Ր Ց Ի Ա Ռ Թ Ի Ի

Մեր մամուլի մէջ վերջերումս արծարծուած վատասեռման հարցի առթիւ*) կամենում ենք դարձնել հետաքրքրողների ուշադրութիւնը և հետեւել պատճառների վրայ.

1) Եթէ համեմատենք մեր հայ ազդաբնակչութիւնը իր հետ ապրող ուսման կամ գերմանացիների հետ, իսկոյն աչքի կ'ընկնի մերոնց թէ փոքրահասակ, թէ գունատ և թէ սակաւարիւն լինելը: Հայերիս թոյլ կազմուածքը աւելի ակնյայտնի երևում է զինուորագրութեան ժամանակ, երբ հարկաւորւում է ընտրել առողջ կազմուածք ունեցողներին: Մահմեդականների մէջ պարթև հասակ, դեղեցիկ տիպեր պատահում են ազնուական դասակարգի մէջ, որ մեր կարծիքով հետեւանք է թէ սեռական ընտրութեան և թէ լաւ ապրուստի:

2) Գալով իգական սեռին՝ վերջինս թէ թուով սակաւ է արուններից, մինչ լուսաւորեալ երկրներում ընդհակառակն է լինում, թէ աւելի թոյլակազմ է ու նիհար և թէ շատ փոքրահասակ ու միանգամայն թառամած: Գիւղական կանանց մէջ աւելի է տարածուած թէ մահ, թէ զանազան հիւսնդութիւններ, որոնց մեծ մասը հետեւանք է ծննդաբերութեան և աների խոնաւ հակառողջապահական պայմանների:

3) Երեխաները ըստ մեծի մասին նիհար են, թուլակազմ, ցուրտ ժամանակներին կասկած, որոնք տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ մահացութեան մեծ տոկոս են ստալիս: Մեր դիւղերում բաւական շատ են զոյգեր առանց երեխաների և այդ ևս գլխաւորապէս կանանց հիւանդութիւնների պատճառով:

4) Մինչ դեռ ուռւ կամ գերմանացի դաղթականների դիւղերը չինուած են առողջարար տեղերում և որոշ պլանով, լայն փողոցներով և յարմար դեմնավեր շինութիւններով, բազկայած երկու կամ աւելի սենեակներից, մերոնց դիւղերն ընդհակառակը

*) Տե՛ս, ի միջի այլոց, «Մշակ» № 32. Տիկին Ս. Գանիէլեկեանի յօդուածը:

ներկայացնում են միմեանց վրայ կուտակած գեանափոր տներ, նեղ փողոցներով: Այդ որջերը չունեն լուսամուտներ և ծխով միշտ լի են լինում:

Ռուսների մօտ ամեն զուգում կան բաղանիքներ՝ թէ ընդհանուր և թէ մասնաւոր, տնային, իսկ մեր գիւղերում ամենեին: Կարելի է դտնել հայ գիւղացիներ, որոնք տարիներով չեն լողացած, մինչդեռ մալականները ամեն չաբաթ բաղանիքներ են գնում:

5) Հագուստի կողմից՝ միևնոյն անհոգութիւնը, անմաքրութիւնն ու անյարմարութիւնը, մանաւանդ կանանց հագուստի նրկատմամբ: Մերոնք միևնոյն հագուստն են պործաղրում թէ ձմեռ և թէ ամառ: Ձմեռ ժամանակ կը տեսնէք հայ գիւղացիներին ցրտից պողալիս, կուչ եկած: Կերակուրի մասին ևս մեր գիւղացին հոգ չէ տանում, շատ սակաւ են կերակուր եփում, թէյ խմում: Մսի համ միայն հարսանիքների և թաղումների ժամանակ են տեսնում: Կերակուրը զլսաւորապէս հացն է թէ մեծերի և թէ փոքրերի համար. և այլն էլ ոչ թէ ցորենի, այլ շատ անպամ վարու կամ կորեկի, իսկ գետնախնձոր, կամ ուրիշ բուսեղէն՝ լօրի, բակլայ և այլն, շատ պակաս են լինում և առնովի, ուրեմն և մեծածախնութեան համար անմատչելի: Հետեապէս մեր գիւղացիների թէ բնակարանը, թէ հագուստը, թէ սնունդը վերին ստորիմանի անբաւարար է և հակառուղջապահակաւ:

6) Այժմ դառնանք մանաւորապէս այն պայմաններին, որոնք աւելի ևս վատթարացնում են մեր գիւղացիների կենսունակութիւնը, այսինքն՝ նպաստում են վատասեռման:

Շատերին յայտնի է, որ մեր գիւղերում ամենավնասակար սովորութիւն կայ, այն է՝ աղջիկներին վաղաժամ ամուսնացնում են՝ սկսած 12 տարեկան հասակից: Բայց այդ ինչորի մասին մանրամասն խօսել է արդէն բժ. Վ. Արծրունին «Մուրճի» ներկայ տարուայ համարներում տպուած «Ամուսնութիւն» յօդուածում: Յանկալի էր այդ յօդուածները տեսնել տպուած առանձին զըրքոյլով և տարածուած ժողովրդի մէջ:

7) Գալով քաղաքներում ուսրող հայերին, պիտի ասենք որ այդտեղ ևս կան վատասեռման պատճառներ: Այժմ քաղաքներում, ինչպէս յայտնի է, պսակը դարձել է մի տեսակ առետուր. ո՛վ ունի լաւ օփառ, նա կարող է մարդու գնալ, իսկ ո՛վ զուրկ է օփառից, թէն առողջ է, գեղեցիկ և խելօք, նա ըստ մեծի մասին մնում է տանը: Յայտնի բան է որ այդպիսի պայմաններում սպասել առողջ և գեղեցիկ սերունդ, անկարելի է, և այդ է պատճառը, որ մեր հարուստ ու ինտելիգենտ դասակարգի մէջ գեղեցիկ և առողջ սերունդ քիչ կարելի է դտնել: Առողջ ու գեղեցիկ

սերունդ աւելի գտնուում է միջին դասակարգում, ուր պսակ-
ուողներին ընտրութիւնը այն աստիճան զրամական հաշուով չէ
լինում, ինչպէս աւելի ունեւոր դասակարգում:

Պէտք է այստեղ կցել մի քանի խօսք ևս զինուորագրու-
թեան ազդեցութեան մասին: Դժբախտաբար, մեր զինուորներից
շատերը վերադառնում են տուն հիւանդացած վնասւած
ախտով և պատճառ դառնում այդ վատ ցաւի տարածման:

Ահա մեր ցեղի թէ՛ գեղեցկութեան և թէ՛ յաղթանդամու-
թեան արդելաոխիթ պատճառներից մի քանիսը: Ինչպէս զժուար
չէ եզրակացնել վերև ասածներից, պէտք է աշխատել ամեն կերպ
որ ժողովուրդը լուսաւորուի, հասկանայ իր ցաւերի պատճառ-
ները, բարւոքի իր տնտեսական դրութիւնը. ահա միայն այդ
ժամանակ կարելի կը լինի մեր վատասեռման առաջն առնել:

ԲԺ. Բ. Ա.

ԲԻԵՐՆՍՈՆԻ ԵՒ ԻԲՍԼՆԻ ՎԵՐՋԻՆ ԴՐԱՄԱՆԵՐԸ

Նորվեգիական զրականութեան պարծանքը. — Բիերնսոնի միստիքական զրաման. — «Ueber unsere Kraft» (Մեր ուժից վեր է) Բերլինում. — Իբսլն է և նրա վերջին զրաման — «Wenn wir Toten erwachen» — (Եթէ մենք յարութիւն առնենք):

Իբսլն և Բիերնսոն — ահա երկու պատկառելի անուններ, որոնք վաղուց արդէն ծանօթ են նաեւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհին:

Թէև զրանք երկուսն էլ միևնոյն հայրենիքի զաւակներ են, երկուսն էլ սնուել ու կրթուել են միևնոյն ժամանակում (Իբսլն 73 տարեկան, իսկ Բիերնսոնը 69), միևնոյն հասարակութեան միջնորդում, բայց նրանց համոզմունքներն ու արծարծած մտքերը տարբեր են:

Բիերնսոնը մի անվախ քաղաքական գործիչ է լիբերալ — դիմոկրատիական ուղղութեամբ. նա իր գրչի ոյժը փորձել է զրական բոլոր ասպարէզներում: Նա գրել է և քաղաքական յօդուածներ, և մանրավէպեր, և բանաստեղծութիւններ, և զրամաներ: Բայց բոլոր այդ գրուածքներում էլ նա մնացել է միևնոյն քաջարի հեղինակը, միևնոյն շնորհալի բնավիտտը:

Բայց Բիերնսոնի ամբողջ տաղանդը պատկերացնելը, նրա բոլոր երկերի մասին մանրամասն խօսելը մեզ շատ հեռու կը տանէր: Ուստի բաւականանանք միայն նրա նշանաւոր «Ueber unsere Kraft» զրամայով, որ աջնքան համակրանք զրաւեց Բերլինում: Դրաման բաղկացած է երկու մասից:

Առաջին մասում *) զլխաւոր հերոսն է պատտոր Զանգը: Նա ունի հաստատուն կամք, բարի սիրտ և անյողողող հաւատ: Առօրեայ կեանքի ընթացիկ ևրեոյթները սակաւ են զրաւում նրան: Նա ձգտում է գէպի բարձրն ու անհասանելին, գէպի հրաշքն ու գերբնականը:

*) Դա բաղկացած է 2 գործողութիւնից:

Ժողովուրդը յարգում է նրան և նոյն իսկ հաւատում, որ նրա մէջ կայ մի ինչ-որ արտասովոր ոյժ, որ այնքան զարմանալի երևոյթներ է առաջացնում, այնքան հրաշքներ է կատարում...

Շրջակայ գիւղերից, հեռու վայրերից զալիս են բազմաթիւ հաւատացողներ նրան տեսնելու, նրա հրաշագործութեանն ականատես լինելու:

Միմիայն իր աղօթքի ուժով նա շատերին է բժշկել, շատերին է այս կամ այն տառապանքից ազատել...

Այժմ էլ նա ուղւում է բժշկել իր անդամաւոյժ կնոջը, որ երկար տարիներ տանջւում է ծանր ցաւերից ու անքնութիւնից...

Այն, ուղւում է Չանգը, բայց իր խոր հաւատից կուրացած բոլորովին հաշիւ չի տալիս, թէ արդեօք հնարաւոր է այդպիսի մի մեծ հրաշք, արդեօք նա ունի բաւական ոյժ դրա համար: Նա կարծում է, որ եթէ կինն էլ հաւատայ, եթէ երկու երեւոյթանքն էլ (էլիաս և Բահիլ) նրա հետ աղօթեն, այն ժամանակ տեսչանքը կ'իրականանայ և թշուառ կլարան ընդ միշտ կ'աղատուի դառն տանջանքից:

Բայց, աւանդ, երեւոյթները վաղուց արդէն կորցրել են իրանց մանկական հաւատը, այն հաւատը, որ ներշնչել էր Չանգը թէ խօսքով և թէ գործով: Այժմ այդ հաւատի փոխարէն արմատացել է կասկածն ու երկմտութիւնը:

— Ի՞նչ է քրիստոնէութիւնը, հարցնում է էլիասը հօրից. ո՞ր են իսկական քրիստոնեաները, այն քրիստոնեաները, որոնք ճշտօրէն ըմբռնել են Յիսուսի վարդապետութիւնը և ամենայն ջանք ու եռանդով հետևում են նրան: Չը կան... Կայ միայն մի հաւատացող, միայն մի ճմարիտ քրիստոնեայ... Այդ էլ դու ես...

Սրտի դառն կակիծով լսում է Չանգը իր զաւակները կարծիքները հաւատի և կրօնի, կեանքի և իրականութեան մասին և վերջը վճռում է միայնակ դարձել հրաշքը...

Ահա նա կանգնած է եկեղեցւում, ահա լսում է նրա ջերմեռանդ աղօթքը... Ո՛րքան հաւատ, որքան զգացմունք կայ նրա մէջ: Կրօնական երգի ձայնը հասնում է Կլարայի ականջին և անուշ քուն բերում նրա աչերին: Հիւանդը քնած է մանկական հանգիստ քնով, իսկ Չանգը միայնակ աղօթում է ու երգում աւելի զգացուած, աւելի յուզուած...

Յանկարծ լսում է որոտ, դղրդոց. հսկայ ժայռի ահաղին բեկորները թափւում են եկեղեցու վրայ, բայց նա մնում է կանգուն, իր յարկի տակ անվնաս պահելով աղօթող պաստորին:

Ժողովրդի բազմութիւնը հաւաքւում է եկեղեցու բակում. աղմուկ է տիրում ամենուրեք, բայց Չանգը դեռ աղօթում է, Կլարան դեռ քնած է իր անուշ քնով...

Այդ միջոցին Չանգի բնակարանում հաւաքւում են բազմաթիւ հոգեւորականներ, որոնք միախոնարական համագումարից վերադառնալով, եկել են անձամբ տեսնելու կատարուած հրաշքը:

Նրանց խօսակցութիւնը տալիս է հոգեւորական դասակարգի ճշգրիտ պատկերը...

Այդտեղ ի միջի այլոց պատահող Բրատտ խոստովանում է իր թերահաւատութիւնը, յայտնում է, որ հոգեւորականներից չատերն իրանք էլ չեն հաւատում ինչ որ քարոզում են, և վերջապէս հրաժարւում է իր կոչումից, ասելով՝

— Կրօնն այլ ևս չի կարող մարդկութեան միակ իդէալը լինել: Մարդ կարող է ապրել և մեռնել իր հայրենիքի, ընտանիքի և համոզմունքի համար...

Բայց ահա և հրաշքի վերջաբանը... Հեռուից լսում է եկեղեցու զանգակի ղօղանջիւն, ներդաշնակօրէն հնչում է՝

Ալէլուիան, Ալէլուիան,

Ալէլուիան, Ալէլուիան...

Հոգեւորականները ծունգ են չղքում և ձայնակցում երգեցողութեանը: Այդ միջոցին երևում է Չանգը, իսկ միւս կողմից բացւում է անդամալոյծի սենեակի դուռը և Կլարան սպիտակ շորերը հագին, ահագին բազմութեամբ չրջապատուած կամացուկ քայլում է դէպի առաջ...

Նա փաթաթւում է Չանգի վզովը և մրմնջում.

— Դու անպնահատելի... դու իմ սիրելի...

Սակայն բառերը սառում են նրա շրթունքներին և անշնչապաճ դիակը գետին է փռւում:

— Բայց ես այդպէս չէի կարծում...

Շնչում է Չանգը և խոնարհւում Կլարայի չնչառութեանն ականջ դնելու:

Այդ բոպէին ինքն էլ կաթուածահար է լինում, իսկ եկեղեցու զանգակը դեռ ղօղանջում է այնպէս ողբաձայն...

Ահա այդպիսի ցաւալի վախճան է ունենում Չանգի ձրգտումը դէպի գերբնականը, դէպի «ոյժից վերը»:

Սակայն դրանով դեռ չէ վերջանում այդ կորստաբեր ձրգտումը: Դրամայի երկրորդ մասում հանդէս է գալիս արդէն հասուն երիտասարդ դարձած Էլիսը, որպէս զի շարունակէ հօր սկսածը: Բայց Էլիսը հաւատի ու կրօնական ջերմեռանդութեան մէջ չի որոնում հարցի լուծումը: Նա համեմատաբար աւելի գործնական հոտառութիւն ունի, աւելի լաւ է ճանաչում

հասարակական չարիքի պատճառը, ուստի և աւելի կօնկրեա
ասպարէզ է ընտրում իր գործունէութեան համար:

Նա իր ամբողջ էութեամբ նուիրւում է ժողովրդի գործին
և ամենայն ջանք ու եռանդով աշխատում է թեթևացնել թըշ-
ուառների ծանր վիճակը:

Դրանք ապրում են չորայած գետի խորխորատում, ուր
ոչ պայծառ արևի ճառագայթներն են թափանցում և ոչ էլ
թարմ ու ազատ օդ է շարժւում:

Դրանք դառն քրտինք թափելով, ամբողջ օրը աշխատում
են խոնաւ ու մութ հանքերում, բայց այնու ամենայնիւ չեն
կարողանում իրանց համար մի տանելի կեանք ստեղծել, կա-
րիքի ճանկերից գէթ մասամբ ազատուել: Եւ ինչպէս կարողա-
նան, երբ իրանց աշխատանքի տէրը չեն, երբ նրանք քրտինք
են թափում, իսկ արդիւնքը վայելում են խորխորատի վերեւում,
հարուստ քաղաքամասում ապրող կապիտալիստներն ու մանր
բուրժուաները:

Հետզհետէ սաստկանում է ժողովրդի թշուառութիւնը,
աւելի յաճախ են կրկնւում դժբախտ դէպքերը թէ հանքերում
և թէ առօրեայ կեանքում...

Վերջապէս չքաւորները վճռում են գործադուլ անել և
կապիտալիստներից պահանջել անհրաժեշտ բարենորոգումներ:
Ահա այդ բողոքող տարրի առաջնորդն է դառնում Էլիասը, ըն-
կերակից ունենալով նախկին պատուր Բրատտին:

Էլիասն իր տեսլերամենտին յատուկ ոգևորութեամբ անձ-
նատուր է լինում այդ գործին: Նա մի կողմից իր ճառերով
գրգռում, նոր ոյժ է ներշնչում բողոքողներին, իսկ միւս կող-
մից նիւթական օգնութիւն է հասցնում նրանց: Այդպէս անց-
նում են երկար ու ձիգ օրեր, բայց կապիտալիստները ոչ միայն
զիջումներ չեն անում, այլ ընդհակառակը վճռում են աւելի
խիստ միջոցներ ձեռք առնել ըմբոստներին ճնշելու և աւելի կե-
ղեքելու համար:

Չքաւորները պատգամաւորութիւն են ուղարկում յայտնի
գործարանատէր Հօզլէրի մօտ, բայց վերջինս հեղնանքով է ըն-
դունում պատգամաւորներին և դատարկաձեռն ճանապարհ
գցում...

Բողոքողները հետզհետէ ընկճւում են յուսահատութիւնից:
Այլ ևս նրանց վրայ չէ ազդում Էլիասի խօսքը, մանաւանդ որ
վերջինս արդէն ծախսել է իր ամբողջ ունեցածը և անկարող
է նպաստ տալ կարօտեալներին:

Ձը նայելով բոլոր այդ խռչնդոտներին, Էլիասը չէ յուսա-
հատւում և վճռում է մինչև վերջը տանել իր սկսած գործը: Իր

փայտայած զաղափարն իրագործելու, կեղեքուած ժողովրդի թշուառութիւնը թեթեւացնելու համար նա զոհեց իր ժամանակը, հանգստութիւնը, ամբողջ հարստութիւնը, այժմ էլ ուզում է զոհել կեանքը...

—Եթէ մարդիկ քարացրել են սրտները, թշուառների վիշտը չը զգալու համար, ասում է նա, եթէ նրանք փակում են իրանց աչքերը, չարիքն ու անարդարութիւնը չը տեսնելու համար, այն ժամանակ անհրաժեշտ է ծայրայեղ անձնազոհութիւն, նահատակութիւն, որպէս զի բթացած ջղերը ցնցուեն և զգան...

Նա կաշառում է մի գնչուհու, որի միջոցով մի գաղտնի անցք է պատրաստում Հօգլէրի ամրոցի տակ, այդտեղ մեծ քանակութեամբ դինամիտ է դնում և վերջը ծպտեալ շորերով մտնում է ամրոցն իբրև ծառայ:

Որոշեալ օրը բոլոր կապիտալիստները հաւաքւում են Հօգլէրի մօտ (ամրոցում) գործադուլի մասին խորհրդակցելու և չքաւորներին ճնշելու միջոցներ մտածելու:

Դա մի բնորոշ ժողով է, որտեղ բռնն համակրանքի են արժանանում ամենածայրայեղ բուրժուական մտքերը: Բոլոր ճառախօսները չեշտում են, որ կապիտալիստներն են պետութեան հիմքը, ժողովրդի ամենալաւ մասը, կապիտալիստներն են քաղաքակրթութեան զեկալարը, արդիւնագործութեան զարգացնողը և այլն և այլն...

Միայն մէկն է հասարակ ժողովրդի օգտին խօսում, բայց նա էլ ժողովականների ծաղր ու ծանակի առարկան է դառնում, և հեռանում է, ժողովը կիսատ թողնելով:

Վերջապէս Հօգլէրը փակում է ժողովը և նշան է տալիս խրախճանքն սկսելու. վառւում են գոյնզգոյն կրակները, հնչում է երաժշտութիւնը, ամեն կողմից լսւում է բերկրանք ու քըրքիջ...

Բայց ի՞նչ սարսափ... Յանկարծ լուր է տարածւում, թէ բոլոր դռները փակ են և չուտով ամրոցը դինամիտի պայթուցիկ օդը պիտի ցնդի: Խրախճանքը խանդարւում է: Ուրախութեան ձայները փոխարինւում են յուսահատութեան, հառաչանքի բացականչութիւններով: Սկսւում է բաբելոնեան խառնաչփոթութիւն: Սարսափահար և զած ժողովականներից մէկը խելարի նման լուսամուտից դուրս է ցատկում, միւսներն այս ու այն կողմ են ընկնում և վերջապէս բացատրութիւն են պահանջում խորհրդաւոր ծառայից:

Համարձակ առաջ է շարժւում Էլիսաբ և ասում.

—Ես եմ այս բոլորի հեղինակը... Ձեզանից ոչ ոք կենդանի դուրս գալու չէ այս ամրոցից...

Այդ ընդհանրությունը է ատրճանակի պայթիւնն և գնդակահար եղած էլիասը գետին է փռւում «Բահիլ, Բահիլ...» կանչելով:

Բայց էլիասի մահը չի վերացնում օրհասը: Մի ընդհանրություն է ճգնաժամը. վերջապէս լսւում է որոտընդոտ աղմուկ—ամբողջ ամբողջ քար ու քանդ է լինում, իր փլատակների տակ թողնելով անողոք կապիտալիստներին:

Դրամայի վերջին—չորրորդ գործողութիւնը ամբողջապէս լի է միստիցիզմով: Սկզբում բնմը ներկայացնում է երբեք ծաղիկներով մի տարածութիւն: Յետոյ ծաղիկները կամացուկ անհետանում են և նրանց տեղ բացւում է մի ծառախիտ պարտէզ:

Այստեղ նստարանի վրայ նստած է սևազգեստ Բահիլը: Նա ողբում է իր եղբոր—էլիասի մահը:

—էլի...աս, էլի...աս... մերթ ընդ մերթ մրմնջում է նա. օրբան խորը վիշտ կայ այդ մի հատիկ բառի մէջ...

Արտասուքի կաթիլներն անվերջ քամւում են աչքերից: Ոչ ոք չի կարողանում միջիթարել նրան. բայց ահա զայիս են մարմնացած յոյսն ու հաւատը մանուկ Կրէդոյի և դեռահաս Կոյս Սպերայի կերպարանքով և Բահիլի սիրած քիչ սիրտնաբէ Կրտսերում: Նա խոստովանում է, որ էլիասի մահն իզուր չէր, որ նրա փայփայած գաղափարն իրագործուելու է...

Այդ հաւատը նրա մէջ աւելի է ամրանում, երբ Կրէդոն ու Սպերան արժարժում են մանչեասերական *) ոգով ներշնչուած մտքեր, թէ ապագայում չարիքն ինքն ըստ ինքեան պիտի վերանայ, թէ շատ նորանոր դիւտեր պիտի լինին, որոնք կը թեթևացնեն ու կը բարւոյնեն բանուորական դրութիւնը և այլն...

Այդպէս ուրեմն դրամայի թէ առաջին և թէ երկրորդ մասում ներքին մղիչ ոյժն է «ձգտում դէպի ուժից վեր գործեր»...

Առաջին մասում պատուր Զանգն է զոհ գնում այդ ձրգտմանը, աշխատելով իր ջերմեոանդութեամբ հաւատ վերականգնել, իր հրաշագործութեամբ անդամալոյծին բժշկել:

Իսկ երկրորդ մասում զոհը էնտուզիաստ էլիասն է, որ դինամիտի ուժով ուղում է ոչնչացնել այն մեծ չարիքը, որ ամբողջ դարերի ընթացքում է հողի ու մարմին ստացել, որ մի

*) Այդ անունով կոչւում է տնտեսական այն ուղղութիւնը, որ կատարեալ ազատութիւն—laissez-faire—է քարոզում ոչ միայն ներքին ու արտաքին առևտրի, այլ և իրաքանչիւր տնտեսական ձեռնարկութեան մէջ:

չարք անտեսական ու սոցիալական պատճառների արդիւնք է կազմում:

Սակայն ուշադրութեան արժանին այդ իդէան չէ, այլ այն ճշգրիտ պատկերները, որոնք բնորոշում են ժամանակակից կեանքի զանազան հոսանքները, դասակարգային առանձնայատկութիւնները և ընդհանրապէս սոցիալական հարցի լաւ ու վատ կողմերը: Իբրեւ օրինակ բաւական է յիշել հոգեւորականների խօսակցութիւնը I մասում, չքաւորների ժողովը, Էլիասի ու Բրաստի ճառերը, պատգամաւորների ու Հօգլէրի խօսակցութիւնը, կապիտալիստների ժողովը և այլն:

Դրանցից պարզ երևում է, որ գրուածքի հեղինակն ունի ոչ միայն դրամատուրգի չնորք այլ և ընթացիկ կեանքը դիտելու և վերլուծելու ընդունակութիւն:

Ընդհանուր առմամբ դրամայի երկրորդ մասն աւելի ցընցող տպաւորութիւն է թողնում, քան թէ նոյն իսկ Հաուպտմանի հուշակաւոր «Ջուլհակները», թէև ներքին ոյժի կողմից տալիս երևում է նրանից:

Ահա այդ ցնցող տպաւորութեանը պէտք է վերադրել այն մեծ աջողութիւնը, որ դեռ վայելում է «Ueber unsere Kraft» դրաման Բերլինում:

Բոլորովին այլ դրոշմ է կրում Իբսէնի տաղանդը: Ո՛չ թէ իրականութիւնը, այլ իդէան—տենդենցիան է նրա գրուածքներում թաղաւորողը, ո՛չ թէ դասակարգային կամ կուսակցական ձգտումները, այլ ժամանակի ամբողջ ոգին է նրան զրադեցնողը: Նա կանգ է առնում անհատի, նրա հոգեբանական ելնէջների ու ձգտումների վրայ, բայց այդ ամենը չըջապատում է հասարակական մթնոլորտով: Նրա հերոսներն աւանց մի որ և է կոմպրոմիսի դիմում են միշտ դէպի անպայման ճշմարտութիւնը...

Ընդհանուր առմամբ Իբսէնի տաղանդը կարելի է նմանեցնել այն խորհրդաւոր նաւին, որ ճանապարհորդներին տանում է մի իդէալական, մի երանաւէտ աշխարհ, ուր սփռուած են աշխարհային բոլոր փառքերը, ուր թաղաւորում է միայն արդարն ու ճշմարիտը, լաւն ու բարին: Բայց հէնց որ մարդիկ ոտ են դնում այդ երկիրը, իսկայն զրկւում են կեանքից: Այդ վիճակին են արժանանում Իբսէնի հերոսները: Նրանք իրանց անհատական ներքին ձգտումներով դիմում են դէպի բարձր, դէպի ճշմարտութիւնը, բայց որոշ աստիճանին հասնելուն պէս զոհ են գնում մի որ և է հակառակ ոյժի:

Վաղաժամ վիշտն ու սրբացած վիճակը խորը հետքեր են Յունիս, 1901.

Թողել Իրաւնի հոգեկան կազմի վրայ. նա ունի մաշյլ ու սակաւախօս բնավորութիւն և սիրում է միայնակութիւն: Այդ մաշյլ միայնակութեան մէջ է զարգացել նրա զեղարուեստական տաղանդը. այդպիսի անհատականութեան ազդեցութեամբ են ծրնունդ ստացել նրա երկերը, որոնցից իւրաքանչիւրը մի նոր տենդենցիա է արծարծում:

Վերցնենք օրինակ նրա վերջին դրաման—«Wenn vir Toten erwachen» (եթէ մենք յարութիւն առնենք): Այդտեղ գլխաւոր հերոսը պրօֆէսոր Բուբեկն է և դրամայի ամբողջ ֆարուլան նրա «եսի» շուրջն է պտտւում:

Բուբեկ չնորհալի քանդակագործ է: Նա ուզում է մի բնորոշ արձան չինել, որ պիտի պատկերայնէ յարութեան օրը և համաշխարհային հոշակ պարզէ իր հեղինակին: Նա այդ խորհրդաւոր արձանի համար էմբլեմա է ընտրում դեռահաս կոյսի անարատ գեղեցկութիւնը: Նա աղքատիկ ընտանիքից դուրս է քաշում չքնաղ Իրենէին և համաձայնեցնում է մօզէլի գեր կատարել:

Անցնում են երկար ու ձիգ ամիսներ... Բուբեկը ամբողջ ժամերով ամենայն աջալրջութեամբ զննում է Իրենէի մերկանդամ մարմինը և մարմարիոնի վրայ ընդօրինակում նրա գեղեցկութիւնը...

Արձանը սլափաւոր է, քանդակագործի տենչանքն իրականացած: Նա յուզուած կերպով սեղմում է Իրենէի ձեռքը և բացականչում.

—Շնորհակալութիւն, Իրենէ, անկեղծ շնորհակալութիւն...

Այս բոլորը ինձ համար մի երջանիկ միջնադէպ էր, որ անցաւ...

Բայց այդ շնորհակալութիւնը սնապասելի հետեանք է ունենում: Իրենէն հեռանում է ընկճուած ու վշտացած և հետեւալ օրը անհետանում է առանց մի որ է տեղեկութիւն թողնելու: Բուբեկն սկսում է որոնել, այս ու այն կողմ, հարց ու փորձ անել, բայց իզուր: Իրենէն չը կայ ու չը կայ...

Անցնում են տարիներ: Բուբեկն ամուսնանում է մի ինչ-որ օրիորդ Մայիայի հետ: Սկսում է ամուսնական մոնոտօն կեանքը: Բայց չը կայ սէր, այն կրակոտ սէրը, որ ընդունակ է տաղանդներ կրթել:

Հանդիմանում է Բուբեկի ստեղծագործող ոյժը. նա դառնում է եսասէր ու ծածկամիտ: Բայց կեանքից դժգոհ է և Մայիան:

—Արնօղ, ասում է նա իր ամուսնուն, չէ որ ամուսնանալիս դու ինձ խոստացար բարձրացնել վերեւ—մինչև սարերի գագաթը և այնտեղ տալ ինձ աշխարհի բոլոր փառքերը: Հապա՞ռ և՛ են դրանք:

— Այո, պատասխանում է Բուբեկը, ես խոստացայ, բայց դու ընդունակ չես վերև բարձրանալու, ընդունակ չես վառքերի միտքն ըմբռնելու...

Եւ իսկապէս Մայիան դադարաւ չունի գեղարուեստի մասին, չի հասկանում իր ամուսնու ձգտումները...

Ահա այդպիսի պայմաններում նորից յայտնւում է Իրենէն և յեղափոխութիւն առաջադնում ձանձրացած ամուսինների կեանքում: Նրան տեսնելուն պէս Բուբեկը յիշում է անցեալ անուշ օրերը և բուռն ցանկութիւն է զգում այդ անցեալը վերագործնելու, յարութիւն տալու:

Իրենէն դառնացած սրտով բայ է անում իր յանկարծակի անհետանալու պատճառը.

— Ես մեռած եմ այն րոպէից, ասում է նա, երբ դու մեր ամբողջ անցեալը միջնադէպ համարեցիր... Այն ժամանակ առնելութիւնը բռնկուեց իմ մէջ, ատելութիւն դէպի գեղարուեստագէտը, որ անհոգ կերպով օգտուեց իմ մարմնից, իմ գեղարուեստի հասակից, որ գողացաւ իմ հոգին ու սիրտը և երբ նպատակն իրականացած էր, ինձ դէն շարտեց իբրեւ մի անպէտք իր... Դրանից յետոյ ես հրապարակ հանեցի իմ գեղեցկութիւնը փող վաճառելու համար. ես մերկանդամ դուրս եկայ իբրեւ կենդանի պատկեր, ես խելահաս արի շատ տղամարդկանց և վերջն ամուսնացայ նրանցից մէկի—մի ամերիկացու հետ, բայց նա ինքնասպանութեամբ իր կեանքին վերջ դրեց... Ես երկրորդ անգամ ամուսնացայ մի հանքատէր ռուսի (Սատով) հետ, բայց նրան էլ ինքս սպանեցի այն սուր դանակով, որ միշտ մօտս եմ պահում... Ես ունեցայ երեխաներ, բայց բոլորին էլ սպանեցի...

Այդ դառն խոստովանութիւնից յետոյ Բուբեկը յայտնում է, որ այսուհետեւ նրանք միշտ անբաժան պիտի մնան, որ նրանց կեանքը մի ուղիով պիտի ընթանայ:

— Իրենէ, ասում է Բուբեկը, դու նորից պիտի բայ անես իմ հոգին ու սիրտը, որոնց բանալին միայն քո ձեռքումն է գտնուում...

Այդ ամբողջ իրողութիւնը լսելով, Մայիան ուրախութիւնից բացականչում է.

— Ես ազատ եմ, ազատ.

Գերութեան ժամն անցաւ...

Ես ազատ եմ, թռչնի պէս ազատ...

Նա փոքրիկ սիրախաղ է սկսում կալուածատէր Ուլֆհէյմի հետ...

Բուբեկն ու Իրենէն գիշերային ժամադրութիւն են նշա-

նախում անտառում, սարի վրայ: Այստեղ նրանք նորից խօսում են ապագայի մասին:

—Ես մեռած էի, ասում է Իրենէն, բայց յարութիւն առայ, որոնցի և գտայ քեզ, բայց դու էլ, ամբողջ կեանքն էլ մեռելութիւն էք ներկայացնում...

—Ուրեմն թող գէթ մի անգամ կեանքի բարձրունքը հասնենք և ապա նոր մեր գերեզմանն իջնենք, պատասխանում է Բուբեկը:

Նրանք բարձրանում են սարի գագաթը, մառախուղից ազատուելու, պայծառ լոյս տեսնելու համար: Անցնում է մի բուպէ ես... Սարաժայի գագաթից ցած է զլորւում ձեան ահադին հիւսուածքը, իր հետ անդունդ տանելով Իրենէին և Բուբեկին:

Իսկ սարի այն կողմից հնչում է Մայիայի երգը՝ «Ես ազատ եմ... ես ազատ...»:

Ինչպէս տեսանք, այս դրամայում էլ Իրենէն հաւատարիմ է մնում իր տաղանդի յասկանիչին, այսինքն իր հերոսներին մօտեցնում է երանաւէտ աշխարհին և իսկոյն գերեզման դուրում...

Ե. ԹՈՓՉԵԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

XVIII ԴՍԲՈՒՄ

III

Մեռաւ Օրին, բայց նրա գործը նրա հետ գերեզման չը մնաւ: Մնում էր Մինաս վարդապետը, որ և խկոյն բռնեց իր հայրենասէր ընկերի տեղը: Յայտնելով Պետրոս Մեծին Օրիի մահը, նա խնդրում էր որ իրան մոռացութեան չը տան և խոստանում էր իր ծառայութիւնները մատուցանել:

Մինաս վարդապետը, ի հարկէ, Իսրայէլ Օրի չէր: Հայաստանցի մի վարդապետ, նա չունէր և չէր կարող ունենալ քսան տարի Եւրօպայում ապրած, արեւմտեան լեզուներին լաւ ծանօթ, զինուորական կրթութիւն ստացած Օրիի քաղաքագիտական ընդունակութիւնները, փորձառութիւնը և մանաւանդ մեծ, անչէջ եռանդը: Բայց զբանից, Օրիի նկրդակն էր Պֆալցի կուրֆուրստի պէս մի անձնական բարեկամ, որ այնքան ազդեցիկ գիրք ունէր Եւրօպայում և այնքան անկեղծ կերպով օգնում էր հայերին: Օրիի մահը հեռացնում էր այդ բարերարին հայոց գործից: Դա փոքր զրկանք չէր, այնուհետև այլ ևս եւրօպական արքունիքներում ոչ ոք չէր խօսում Պարսկաստանի լուծի տակ տառապաղ քրիստոնեայ ժողովրդի ազատութեան մասին:

Բայց Մինաս վարդապետը այն երախտիքն ունի, որ շարունակեց աշխատել Օրիի ուղղութեամբ, եթէ չը լինէր նա, ազատասիրական շարժումը կ'անհետանար հայերի մէջ իրրի մի վաղանցուկ երազ: Հայկական հարցը կենտրոնացաւ ռուսաց արքունիքում: Մինաս վարդապետին չաջողուեց յարաբերութիւններ պահպանել Արեւմտեան Եւրօպայի հետ, համակրութիւններ դնել այնտեղ: Նրա գործը այն եղաւ, որ շարունակեց միջնորդի դեր կատարել հայերի և ռուս կառավարութեան մէջ: Այդպիսի մի միջնորդ շատ հարկաւոր էր, որովհետև գործերը Արեւելքում ընդունում էին սուր, մեծական կերպարանք:

Օրինն չաջողուեց խորտակել սրբապետական տիրապետու-

թիւնը Հայաստանում: Բայց նրա դեպքանութիւնը Պարսկաստանի համար ահաւոր ցնցումներ առաջացնող մի կողմնակի պատճառ հանդիսացաւ: Ահա ինչպէս:

Շահ-Աբասի երկաթէ ոյժն էր որ միութիւն էր սլահապանում Իրանի զանազան մասերի մէջ: Նրա թուլամորթ յաջորդների ժամանակ անիշխանութիւնը սկսեց տալն ու վրայ անել երկիրը. ուժեղացան տեղական իշխանութիւնները, խաները և Պարսկաստանում ներքին խռովութիւնները անպակաս էին: Ընդունների մէջ Հիւսէին-Շահի ժամանակ անուն հանեց Աւղանըստանի Ղանդահար քաղաքը, ապստամբութիւնների մի բոյն, որ հպատակեցնելու համար պարսից շահերը շատ անգամ էին գէնքի դիմել: Ղանդահարը սաստիկ վտանգաւոր դարձաւ մանաւանդ այն ժամանակից, երբ այնտեղ ապստամբութեան գլուխ անցաւ Միր-Վէյսը, մի շատ ընդունակ պատերազմող և վերին աստիճանի ճարպիկ արեւելցի: Հիւսէին-Շահը, այդ մարդուն անվնաս դարձնելու համար, Ղանդահար ուղարկեց Գուրգին-խանին:

Գուրգին-խան—դա Գարթալինիայի Գիօրգի թագաւորի պարսկական անունն էր: Այդ թագաւորը չէր կարողանում հանդիստ նստել իր հայրենիքում, ուստի կանչուել էր Սպահան վրայ մի զօրաբաժնի հետ: Վրաստանը անթիւ դժբախտութիւնների, աւերմունքների մասնուած մի երկիր էր, որովհետեւ նրա երեք թագաւորները և բազմաթիւ իշխանները անբարոյսականացած ժամանակի փչացած որդիներ լինելով, միմեանց միս էին կրծուտում, միմեանցից իշխանութիւն և փառք խլելու համար: Գիօրգին համարեա միշտ ներքին պատերազմների մէջ էր ժամանակ անցկացնում. յամառ ու աւերիչ էին նրա պատերազմները մանաւանդ Հերակլ I-ի դէմ, որ կոչւում էր Նաղար-Ալի-խան և մահմեդականացած վրացի թագաւորների շարքում ամենահեշտաւորներից մէկն էր: Գիօրգին այդ կռիւների ժամանակ շատ անգթութիւններ ցոյց տուեց, շատ ստորութիւններ գործեց, բայց անկարող եղաւ իր դահը պաշտպանել Գարթալինիայում. այդ պատճառով էլ վրացի մի զօրաբաժնի հետ գնաց Պարսկաստան և ապրում էր Սպահանում:

Նշանակուելով Ղանդահարի կառավարիչ, Գուրգին-խանը պարսկական մեծ զօրք կուտեց այնտեղ, որպէս զի ճնշէ սիւնի աւղանների ապստամբութիւնը, իսկ յետոյ շարունակէ արշաւանք գէպի Բէլուշիստան: Ղանդահարում նա սկսեց մի սոսկալի գործունէութիւն. նրա զօրքերը կատարեալ իրաւունք ստացան կողոպտելու, աւերելու, քանդելու: Ինքը Գուրգին-խանը, կողոպտած հարստութիւններն էր գիզում, գինեխմութեան և ա-

հառակութիւնները մէջ էր օրեր անցկացնում: Աւղաններին հա-
արհամարհում էր, անուանում էր նրանց «մուղալ» և զուարճա-
նում էր վայրենի տեսարաններով. այսպէս, հա աւղանցի կա-
նանց հաւաքել էր տալիս իր առջև ու նրանց ծոցը կրակախառն
մոխիր էր ածել տալիս. ապա, տեսնելով նրանց տանջանքները,
ասում էր. «մուղալը լաւ է խաղում» *):

Անհնարին էր որ մի ժողովուրդ կարողանար դիմանալ այդ-
քան բռնութիւններին: Միր-Վէյսը ստիպուած էր տանել Գուր-
դին-խանի նախատնիքները լուծեամբ: Նա ունէր Մահմուդ
անունով մի որդի, որ գեղեցիկ տղայ էր: Վրայի խանը հրա-
մայում է հօրը որ որդուն «բերէ իր մօտ»: Մահմուդը, սաստիկ
վերաւորուելով այդ զգուելի առաջարկութիւնից, հեռանում է
Ղանդահարից: Կարող էր Գուրգին-խանը նախատեսել թէ մի օր
այդ գեղեցիկ աղան ինչպէս պիտի տալն ու վրայ անէ ամբողջ
Պարսկաստանը... Միր-Վէյսն էլ, հպատակուելով Ղանդահարի
ահարկու կռաւարչի հրամանին, հեռացաւ, գնաց Սպահան:
Գուրգին-խանը դրեց Հիւսէին-Շահին թէ պէտք է արգելել այդ
մարդուն Սպահանում, որովհետեւ դա էր աւղանական խռովու-
թիւնների հոգին: Եւ Միր-Վէյսը մնաց Սպահանում, իրաւունք
չունենալով հեռանալ այգտեղից:

Բայց դա նրա համար մի շատ օգտակար գերութիւն էր:
Սպահանում հա տեսաւ և համոզուեց թէ սրպիսի ոչնչութիւն է
ներկայացնում Պարսկաստանը: Հիւսէին-Շահը, իր անթիւ մօլ-
լանների խրատներին հպատակուելով, ինչ-որ շինութիւններ էր
սկսել Սպահանի մօտ, անձամբ հսկում էր այդտեղ տաճանակ
տարիների ընթացքում: Ոչինչ կարգ, ոչինչ զինուորութիւն. պա-
լատական հաւերէ կուտն էլ մի հարկ էր, որ պարտաւոր էին
տալ Զուղայեցի հայերը: Պատմում են, որ Հիւսէինը մի օր մի
ազոաւ է սպանում. և այդ ահագին քաջութիւնը յաւերժացնե-
լու համար նա հրամայում է ողորմութիւն բաժանել աղքատնե-
րին: Միր-Վէյսը այդ ընդհանուր յիմարութեան մէջ շատ լաւ
հատկացաւ թէ ինչ կարելի է անել կիսավայրենի, նետերով և
սրերով զինուած աւղանների օղնութեամբ: Պէտք էր միայն տա-
պալել Գուրգին-խանին և Սպահանից դուրս գնալու յարմարու-
թիւն գտնել:

Յարմար առիթը Օրիի գեսպանութիւնն էր: Միր-Վէյսը
սկսեց եռանդով շահադրծել այն երկիւղը, որ ազդել էր հայ
գեսպանը պարսից ողորմելի Շահին և նրան չըջապատողներին:
Օրին, ինչպէս երևում է, մօտիկ յարաբերութիւններ էր սկսել

*) Տէր-Յովհաննէս — «Պատմութիւն Նոր-Ջուղայու», հ. Ա., էր. 221:

Գուրգին-խանի հետ. նկատենք այստեղ, որ Գուրգին-խանի հարազատ եղբայրն էր Արշիլ արքայորդին, որ ապրում էր Մասկիայում և որին Օրին ուզում էր տանել իր հետ և հաստատել Վրաստանում: Այդպիսով, ի հարկէ, Գուրգին-խանն էլ կը միահարապէր այն ապստամբութեան, որ սրատրաստուում էր Անդրկովկասում, քրիստոնեաների մէջ: Միր-Վէյսը շտապեց այս հանգամանքը պարզել պարսից կառավարութեան առաջ. մի հանգամանք, որ կասկածելի էր դարձնում իր անհաշտ թշնամի Գուրգին-խանի հաւատարմութիւնը: Նա ասում էր որ Օրին գեապան չէ, այլ Ռուսաստանի զաղտնի գործակալ: Յայտնի են ոռոսաց թագաւորի ծրագիրները և փառասիրական ձգտումները. նա ուզում է իր կրօնակից քրիստոնեաներին բարձրացրել Պարսկաստանի դէմ. ապացոյց—նա գեապան է ուղարկում մի հայի, թէև այդ պաշտօնի համար կարող էր ուրիշ մարդ գտնել իր պետութեան մէջ: Եթէ Ռուսաստանը զօրք ուղարկէ, վրացիներն ու հայերը այս զօրքի հետ կարող են առանց մի անգամ հրացան արձակելու գրաւել բոլոր Անդրկովկասը մինչև Արաքս գետը: Ղանդահարի և Քիրմանի զօրքերը գտնուում են Գուրգին-խանի հրամանատարութեան տակ, իսկ խանը այդ զօրքերով ոչ միայն չի գնայ իր ազգակիցների և կրօնակիցների դէմ կռուելու, այլ կարող է մեծ խռովութիւններ յարուցանել Պարսկաստանի սրտի մէջ և վտանգել պետութիւնը:

Շահ-Հիւսէինը հաւատում է ճարպիկ աւղանցուն. բայց չը կարողանալով Գուրգին-խանին պաշտօնանկ անել կամ յետ կանչել, ամենից լաւ է համարում Միր-Վէյսին ոչ միայն ազատութիւն տալ, այլ և հաստատել նախկին կոչման մէջ: Շահը կարծում էր թէ այդ երկու ախոյեանները, միմեանց հետ մրցելով, միմեանց անվնաս կը դարձնեն Պարսկաստանի համար:

Բայց զա մի աղէտալի սխալ էր: Միր-Վէյսը գնաց Ղանդահար ոչ իր թշնամուն իսկոյն մարտի հրաւիրելու համար: Նա աւելի խելօք էր քան Հիւսէին-Շահը և նոյն իսկ Գուրգին-խանը: Ձիանալով վերջինիս բարեկամ, նա հաշտութիւն խօսեց և նոյն իսկ համաձայնուեց Գուրգին-խանին կնութեան տալ իր աղջկանը, որ հռչակուած էր իր գեղեցկութեամբ: Անհեռատես վրացին երկու ոտով ընկաւ թակարդի մէջ. իբրև գեղեցիկ աղջըկայ բախտաւոր նշանած՝ նա գնաց Միր-Վէյսի խնճոյքին և այնտեղ անշնչացաւ զայրացած աւղանների սրերի տակ: Նրա մարմինը քաջքշւում էր փողոցներում և անպատուութեան ենթարկւում: Կոտորուեց և վրաց ամբողջ զօրաբաժինը: Միր-Վէյսը իր ձեռքն առաւ իշխանութիւնը, հաւաքեց և կազմակերպեց մեծ զինուորական ոյժ. Ղանդահարը ոչ միայն անկախ էր, այլ և

պատրաստում էր անկող հարուածների տալ Պարսկաստանին:

Օրին իր վերադարձին դեռ Շամսիումն էր, երբ տեղի ունեցան այս շատ նշանաւոր դէպքերը: Դրանք հետեանք էին իր զեփաշուկութեան^{*)}: Բայց դեռ ինչեւ կային առջիւում: Արդէն 1711 թուականի մարտ ամսին նա յայտնում էր ոռոսաց կառավարութեան որ պարսից Շահը զօրք է ուղարկել Ղանդահարի գէմ, բայց այդ զօրքը սաստիկ ջարդ է կրել և փախուստ գարձել: Աւղանների այս աջողութիւնները կարծես ազդանշան էին Պարսկաստանը չրջապատող սիւննի մահմեդականների համար: Դարձեալ բորբոքում էր արիւնահեղ ընդհարումը իսլամի այդ երկու ճիւղերի մէջ: Նոյն 1711 թուականին, երբ Եսայի կաթողիկոսը վերադառնում էր Ասորոսիանից, լէզզիները սպառնալով էին պարսկական հողերը, կողոպտում և դերում էին ազգաբնակչութիւնը... Միւս կողմերից էլ սիւննիների արշաւանքներն էին պատրաստում: Արեւելքը հրդեհուելու վրայ էր:

Այդ արժարժուող բոցերը Պետրոս Մեծի համար ահագին նշանակութիւն ունէին: 1711-ին, ինչպէս գիտենք, նա պատերազմում էր Թիւրքիայի գէմ: Պատերազմը դժբախտ էր նրա համար: Պրուտ գետի մօտ նա քիչ էր մնում որ գերի ընկնէ Թիւրքերի ձեռքը և նրա ամուսին Եկատերինան մեծամեծ ընծաներով կաշառեց Թիւրք հրամանատարին, զնեց հաշտութիւն, որ ազատում էր և թագաւորին: Բայց այսպիսի անաջողութիւնները չէին կարող կոտրել Պետրոսի պողոտատէ եռանդը: Միաժամանակ շարունակում էր նա չվեդական պատերազմը և աշխատում էր որ Ռուսաստանը առեւտրական միջնորդ դառնայ Եւրոպայի և Ասիայի մէջ: Ամբողջ Արեւելքը, սկսած Չինաստանից մինչև Միջերկրական ծովը, նրա մեծ ծրագիրների մէջ առանձին կարևոր տեղ էր բռնում: Եւ այդ ահագին տարածութեան վրայ ամենից առաջնակարգ տեղը, որի համար Պետրոսը պատրաստ էր նոյն իսկ պատերազմ սկսել, սահմանակից Կովկասն էր իր Կասպիական ծովով: Հաստատուելով Բալտիկ ծովի ափերին, Պետրոսը սկսեց ջրանցք փորել տալ՝ այդ ծովը Կասպից ծովի մէջ թափուող Վոլգայի հետ միացնելու համար: Ջրային այդ յարմար ճանապարհով պիտի Պարսկաստանը իր ապրանքները փոխադրէր Եւրոպա: Կովկասը իբրև այդ ճանապարհի մի ծայրը, այնքան մեծ կարևորութիւն ունէր, որ Պետ-

^{*)} Մանրամասն կերպով այս անցքերի մասին խօսում է եղովտ Կրասնակի («Histoire de la révolution de la Perse, Paris, 1728»), որ 20 տարի ապրել է Սպահանում: Ձեռքի տակ մենք ունենք միայն փոքրիկ հատուածներ այդ աշխատութիւնից, որ, ինչպէս երևում է, շատ հետաքրքրական տեղեկութիւններ է պարունակում իր մէջ:

րոսի համար աւելի քան պարզ ու անխուսափելի մի անհրաժեշտութիւն էր Կասպից ծովի ափերին հաստատուելը:

Պէտք էր շտապել: Այդտեղ, այդ ծովի արեւմտեան ափերին, Ռուսաստանը կարող էր իր դէմ ունենալ մի այնպիսի դեռ զօրեղ թշնամի, ինչպէս էր Թուրքիան: Սիւննի մահմեդականութեան արշաւանքները Պարսկաստանի դէմ դէպի առաջ էին մղում և Թուրքերին, որոնք անհրաժեշտ էին համարում կուլ տալ հոգեւորք Պարսկաստանը: Անշուշտ, Շահ-Հիւսէյնի ողորմելի կառավարութիւնը ոչինչ արգելք չէր կարող դառնալ որ օսմանցիները Կովկասի արեւմտեան կողմից մի ոյժգին արշաւանքով համեն Կասպիականի ափերին, ուր նրանք տիրապետողներ էին մի ժամանակ: Եւ որովհետեւ Ռուսաստանը, չվեղական պատերազմի պատճառով դեռ չէր կարող զէնքի ոյժով գործել Պարսկաստանում իր առևտրական շահերը պաշտպանելու համար, ուստի Պետրոսը առ ժամանակ դիմեց գիպլոմատիական միջոցներին:

1715 թուականին նա մի նոր զեապանութիւն ուղարկեց Պարսկաստան: Դեսպան Արտեմի Վօլինսկի հրաման ունէր լաւ հետազօտելու պարսկական բոլոր գործերը, երկրի աշխարհագրական շրջերը, դինոտորական ոյժերը, ռազմական ճանապարհները: Այսքանը, ի հարկէ, դադանի պիտի կատարուէր: Իսկ զեապանութեան պաշտօնական, բացարձակ նպատակը առևտրական էր: Պէտք էր դաշնագիր կնքել, որով ռուս վաճառականներին ազատ առևտրի իրաւունք էր շնորհւում Պարսկաստանում. Շահը պիտի հրամայէր հայ վաճառականներին որ սրանք մետաքսը և այլ ապրանքները Եւրօպա ուղարկեն Աստրախանի և Պետերբուրգի վրայով:

Դեսպան Վօլինսկուն տուած հրահանգների մէջ կար և այս կէտը. «Տեղեկութիւններ հաւաքել հայ ժողովրդի մասին. շոտ է նա և ինչ տեղերում է ապրում. հայերի մէջ կան նշանաւոր մարդիկ ազնուականներից կամ վաճառականներից և ինչպէս են նրանք վերաբերում դէպի նորին թաղաւորական մեծութիւնը. սիրով և քաղցրութեամբ վարուել նրանց հետ և բարեկամութիւն հաստատել» *): Հայկական հարցը, ուրեմն, կար ռուսաց կառավարութեան առաջ: Մինաս վարդապետը յիշեցնողի, խընդրողի դեր էր կատարում:

Օրիի մահը մեծ հոգսեր պատճառեց վարդապետին: Պէտք էր նրա իրերը և գոյքը ազատել յափշտակութիւնից, վերջացնել նրա հաշիւները, վճարել պարտքերը: Այդ գործերով էր զբաղ-

*) С. Соловьевъ—„Исторія Россіи“ М., 1868. հատ. 18, եր. 28:

ուած Մինաս վարդապետը ամբողջ երեք տարի և նրա զրա-
գրութիւնների զլիաւոր առարկան այդ ժամանակամիջոցում
Օրբի գործերն են կազմում: 1714 թուականի վերջերում միայն,
այսինքն այն ժամանակ, երբ պատրաստուում էր Վօլինսկու
դեսպանութիւնը, նա ներկայացնում է մի ծրագիր թէ ինչպէս
կարելի է հայերին Ռուսաստանի հովանաւորութեան տակ առ-
նել: Այստեղ այլ ևս չը կան Օրբի համարձակ արշաւանքները,
մեծ նախագծերը. երևում է վարդապետ մարդը: Նա առաջար-
կում էր որ ռուսաց կառավարութիւնը պարսից Շահից իրա-
ւունք ստանայ իր հաշուով Կասպից ծովի ափին, Նիզովոյ նա-
ւահանգստում, մի հայկական վանք կառուցանէ: Վանքում կա-
րող էր հաստատուել ռուսաց մի ղօրաբաժին, որի հովանու-
տակ իր հաւաքուէին հայերը: Վարդապետը խորհուրդ էր տալիս
գլխիկ նաև կայսրի, կուրֆիւրստի օգնութեան, որ նրանք էլ
խնդրեն Շահին վանք կառուցանելու մասին: Եւ որպէս զի Մի-
նաս վարդապետը կարողանայ ցոյց տալ թէ ինքը միայն եկեղե-
ցական գործերի պատճառով է մնում Ռուսաստանում, խընդ-
րում էր թոյլ տալ իրան հայոց մի եկեղեցի կառուցանել Պե-
տերբուրգում: Մինաս վարդապետը պատրաստ էր գնալ Եւրօ-
պա, եթէ իր առաջարկած ծրագրի համար հարկաւոր լինի խընդ-
րել կայսրին և միւս վեհապետներին:

Այդ առաջարկութիւնը ոչինչ հետեւեանք չունեցաւ և չէր
կարող ունենալ, այնքան ակներև էր նրա խակութիւնը: Ռու-
սաց կառավարութիւնը աւելի օգտակար համարեց որ վարդա-
պետը դնայ Հայաստան և այնտեղ տեղեկութիւններ հաւաքէ:
Այդ ճանապարհորդութիւնը տեղի ունեցաւ 1716 թուականին և
կատարւում էր Իսրայէլ Օրբի գոյքերը որոնելու պատրուակով:
Ռուսաց կառավարութիւնը յանձնարարեց դեսպան Վօլինսկուն,
որ այդ ժամանակ դեռ Շամախումն էր գտնուում, աջակցել Մի-
նաս վարդապետին, որի առաքելութեան իսկական նպատակն
էլ յայտնուեց նրան: Բայց Վօլինսկին, յայտնի չէ թէ ինչու, ո-
չինչ աջակցութիւն ցոյց չը տուեց:

Նոյն տարուայ յուլիսին Մինաս վարդապետը հասաւ Էջ-
միածին. այդ ժամանակուայ կաթողիկոս Աստուածատուր Հա-
մադանցին աւելի լաւ համարեց հետեւել իր նախորդների օրի-
նակին և հեռու մնալ հայերի քաղաքական շարժումից, ուստի
և վարդապետին հաստատ խոստում չը տուեց, պատճառ բռնե-
լով թէ վախում է պարսիկներից. նա միայն մի նամակ գրեց,
որի մէջ յայտնում էր թէ վարդապետը ներկայացել է իրան,
պատմել է ամեն ինչ և ընդունուել է սիրով:

Ուրիշ կերպ էր վերաբերմունքը, ի հարկէ, Գանձասարի

վանքում: Եսայի կաթողիկոսը զրկաբայ ընդունեց վարդապետին, արքեպիսկոպոսութեան աստիճան տուեց նրան և մի նամակ գրեց Պետրոս Մեծին, որի մէջ եռանդուն և ջերմ խօսքերով խնդրում էր նրա օգնութիւնը, հովանաւորութիւնը: Բայի զրանից Եսային Ռուսաստանում ապրող հայերի առաջնորդ նշանակեց Մինաս վարդապետին: Այդպիսով Գանձասարի վանքը իր համար մի նոր թեմ էր ստեղծում Ռուսաստանում: Բայց աւելի կարևորը այն էր, որ այնուհետև Մինաս վարդապետը կարող էր շարունակել իր գործունէութիւնը իբրև ռուսահայերի առաջնորդ և իբրև Աղուանից կաթողիկոսութեան ներկայացուցիչ, այսինքն այն մարմնի, որ իր վրայ էր վերցրել հայերի քաղաքական վերածնութեան հոգսերը:

Գանձասարում գիտէին, ու ռուսաց դեսպանը ապրում է Շամախում: Մինաս վարդապետը, նոյն ամառուայ վերջին ճանապարհուելով դէպի Ռուսաստան, տարաւ իր հետ կաթողիկոսի մարդկանցից մի քանիսին, որպէս զի նրանց ներկայացնէ դեսպան Վօլինսկուն: Թագաւորի ներկայացուցչի ընդունելութիւնը մի լաւ ապացոյց կը լինէր հայերի համար, թէ Ռուսաստանը շարունակում է հայերի պաշտօնանը հանդիսանալ և չէ մոռացել իր խոստումները: Բայց Շամախում Վօլինսկին, չը նայած որ հրաման ունէր իր կառավարութիւնից, շատ ցուրտ ընդունելութիւն ցոյց տուեց վարդապետին և չուզեց խօսել նրա հետ: Դա մի գոռոզ և ինքնահաւան մարդ էր, և վարդապետը ստիպուած էր իր հետ եկածներին յետ դարձնել, ասելով թէ ինքը թուղթ կը ստանայ թագաւորից և կ'ուղարկէ կաթողիկոսին: Վօլինսկին ոչինչ չարաւ և այն ժամանակ, երբ Մինաս վարդապետը Նիդօլօյ նաւահանգստում կալանաւորուեց: Այդտեղ Օրիի մարդկանցից մէկը նրանից պահանջեց իր ոտնիկը և զանգատուեց տեղական թուրք իշխանութիւններին, որոնք բանա նստեցրին նրան:

Հետեւեալ 1717 թուականի մարտին Մինաս վարդապետը Մոսկիայումն էր և հաշիւ ներկայացրեց իր ճանապարհորդութեան մասին: Ամենամեծ յոյսը նա դրել էր Գանձասարի վրայ, որի թեմը բաղկացած էր 900 գիւղերից, զրանք մեծ գիւղեր են, ունեն հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր, շատերը և չորս հարիւր, նոյն իսկ զրանից էլ աւել տներ: Թէ էջմիածնի և թէ Գանձասարի թեմերում ապրող հայերի թիւը, վարդապետի կարծիքով, հասնում էր մօտ 200 հազարի: Վաճառական թէ գիւղացի, երևի այդ հաշուի մէջ նա նկատի ունէր միայն տղամարդկանց, քանի որ ասում էր թէ այդ քանակութիւնը պատեւրազմի ժամանակ թագաւորի կողմը կը բռնէ:

Իսկ ինչ զեկուցում տուեց Վօլինսկին հայերի մասին: Այդ մենք չը գիտենք: Նոյն մարտ ամսին նա մուտք գործեց Սպահան: Պարսից կառավարութիւնը պաշարուած էր նոյն երկիւղներով և կասկածներով, որոնք առաջ եկան Օրիի ժամանակ: Վօլինսկին իր բնաւորութեամբ այնքան զրգոյց պարսիկներին, որ նրան նոյն իսկ բանտարկեցին և ապա առաջարկեցին հեռանալ մայրաքաղաքից: Ի զուր դիմադրում էր ուսս գեպանը, պատճառ բերելով իր բերած առետրական առաջարկութիւնները: Շահի կառավարութիւնը խոստացաւ կատարել այդ բոլորը յետոյ և Վօլինսկին ստիպուած էր սեպտեմբերին ճանապարհ ընկնել Սպահանից: Բայց այդքան կարճ միջոցն էլ բաւական էր որ նա ճանաչէր Պարսկաստանը և կրկնէր Օրիի կարծիքները: Իր զեկուցումներին մէջ նա յայտնում էր թէ Պարսկաստանը բոլորովին փառած ու քայքայուած է, թէ Հիւսէին-Շահը մի ապուշ է, խաղաղք տարձած իրան շրջապատող յիմարների ձեռքին: Դեպքանը առաջարկում էր թողնել զիւանադիտական գործողութիւնները և ուղղակի զէնքի դիմել: չը պէտք է ձեռքից տալ ամենայարմար ժամանակը. Պարսկաստանը հոգեվարքի վրայ է, բայց կարող է երեւան գալ մի կարող և ուժեղ Շահ և այնուհետև նուաճման գործը կը դժուարանայ: Գուշակութիւնը միանգամայն ճիշտ էր. Վօլինսկին զրանից յետոյ նշանակուեց Աստրախանի նահանգապետ և շարունակ արծարծում էր պատերազմական գործողութիւններ սկսելու միտքը: Բայց Պետրոսը չէր շտապում, սպասում էր հիւսիսային պատերազմի վերջին:

Երբ Վօլինսկին վերադառնում էր Ռուսաստան, Շամախում նրան ներկայացաւ փարսազան-բէկ անունով մէկը, որ ուղարկուած էր վրաց Վախտանգ թագաւորի կողմից: Վախտանգը խնդրում էր որ ուսները անյապաղ սկսեն ազատարար պատերազմը և յայտնում էր որ ինքը ամեն ժամանակ պատրաստ է միանալ այդ արշաւանքին: Նա էլ հաւատացնում էր թէ Պարսկաստանը մի ոչնչութիւն է ներկայացնում: «Ժամանակ է որ քրիստոնեաները յաղթեն մուսիլմաններին, ոչնչացնեն նրանց», ասաց փարսազան-բէկը. նա խնդրում էր հրահանգներ տալ Վախտանգին թէ ինչպէս պէտք է պատրաստուել: Վօլինսկին, ի հարկէ, այդպիսի լիազօրութիւն չունէր, նա միայն կարող էր այդ խնդիրը ներկայացնել իր թագաւորին:

Իրագործուած էր Օրիի ծրագրի այն մասն էլ, որ վերաբերում էր Վրաստանին: Նրա ժամանակ, XVII դարի վերջին, չէր կարելի մեծ յոյս ունենալ թէ Անդրկովկասի երկու խոշոր քրիստոնեայ ժողովուրդները—հայերը և վրացիները կը միանան իսլամի ամբապետութեան դէմ: Վրաստանում միմեանց յաջոր-

դուռ էին մահմեդականացած վրացի թագաւորներ, որոնք սոսկալի դժբախտութիւն էին քրիստոնէայ երկրի համար: Պարսից Շահերի այդ մոլեռանգ ստրուկները, որոնք ամեն ինչ պատրաստ էին զոհել իրանց փառասիրութեան, չէին կարող, ի հարկէ, թոյլ տալ որ և իցէ ապստամբութեան միտք անգամ: Եւ Օրին, ինչպէս տեսանք, կամենում էր նախ մի յեղափոխութիւն կատարել Վրաստանում, թագաւորեցնելով աջտեղ, ուսմաների օգնութեամբ, Արշիլ արքայորդուն և այգլիսով վերջ տալով մահմեդական թագաւորների գոյութեան, ապա միայն միացնել հայերի ու վրացիների պատերազմական ոյժերը: Բայց դա մի շատ դժուար գործ էր, որ գլուխ չէր գայ առանց ահաւոր ջնջումների, ներքին կռիւների: Այժմ այդ վտանգը չը կար. Վախտանգը պարսիկների հաճութեամբ էր թագաւոր դարձել և ինքնաթոժար կերպով պատրաստ էր միանալ ապստամբութեան:

Վախտանգը XVIII դարի սկզբում մի լուսաւոր երևոյթ էր դժբախտ Վրաստանի համար: Նա թագաւորեց 1711-ին, բայց մահմեդականութիւն չընդունեց, մի բան, որ պարտաւորական էր վրացի թագաւորների համար: Այդ քաջագործութիւնը հեշտ չէր Վրաստանի այն անկարգ, խառնակ ժամանակներում: Վախտանգը միացնում էր իր մէջ հեռատես, քաղաքագէտ, հայրենասէր թագաւորի և լուսաւորութեան հովանաւորի յատկութիւնները: Նա էր, որ երկու տարի առաջ, երբ զեռ երկրի կառավարիչ էր, բայ արեց Թիֆլիսում առաջին վրացերէն տպարանը, հրատարակեց գրքեր, հաւաքեց ու մի տեղ ամփոփեց վրաց հին տարեգրութիւնները: Նա ջանք չէր ինայում բարեկարգութիւններ մտցնելու համար: Թշնամիներ, ի հարկէ, շատ ունէր. լարուեցան ինտրիգներ, գաւեր, որոնք հարկադրեցին նրան գնալ Պարսկաստան և Շահի արքունիքում ամրացնել իր զիւրքը: Այդտեղ նա ստիպուած եղաւ մահմեդականութիւն ընդունել և ստացաւ Հիւսէին-կուլի-խան անունը: Բայց այդ հանգամանքը ազդեցութիւն չարաւ նրա սրտի և հոգու վրայ. կրօնափոխութիւնը երեսանց էր և նա չարունակում էր մնալ մի լաւ քրիստոնէայ: Հիւսէին-Շահը պահեց նրան Պարսկաստանում, իսկ Քարթալինիայի կառավարիչ նշանակեց նրա Բակար որդուն, որ նոյնպէս հարկադրուած եղաւ մահմեդական դառնալ և ստացաւ Շահ-Նավազ անունը:

Վոլինսկու զեռալանութեան ժամանակ Վախտանգը զեռ Պարսկաստանում էր, բայց չարունակ մտածում էր թէ ինչպէս կարող կը լինի ազատել իր հայրենիքը պարսկական լուծից: Այդ պատճառով էլ նա Փարսապան-բէկին ուղարկեց Շամախի: Ամբողջ յոյսը դնելով Ռուսաստանի վրայ, Վախտանգը չէր կա-

բող անտես անել հայերի մէջ սկսուած շարժումը: Եւ նա միայն հայերի հետ:

Վերջապէս երկու քրիստոնեայ, բախտակից ազգերը հասկացան իրանց շահերը: Հայերի և վրացիների եղբայրակցութիւնը տանջուած, արիւնոտ հայրենիքի համար—անա ինչ խոշոր, հրաշալի նորութիւն էր ընթում ազատական շարժումը Անգլիոյ վրկովկասում: Եւ այդ նորութիւնը ստեղծում էին երկու մարդիկ, ազատութեան ողով տոգորուած երկու իշխանաւորներ, մէկը վրաց թագաւորն էր, միւսը—Եսայի կաթողիկոսը...

IV

Իսկ Պարսկաստանի զիւին խտանում էին աւելի և աւելի մռայլ, փոթորկալից ամպեր: 1717-ին ապստամբութիւն ծագեց Հէրաթում. ապստամբների ղեմ ուղարկուած պարսկական զօրքը սաստիկ պարտութիւն կրեց, էօղլէկները քարուքանդ արին Մէշէդի շրջականները: 1718-ին քրդական մի մեծ արշաւանք հեղեղեց Արարատեան երկիրը, Սալմաստը, Համադանի և նոյն իսկ Սպահանի շրջականները: Լէզգիների համար արդէն սովորական բան էր դարձել պարբերաբար իրանց սարերից իջնելը և սպառակութիւններ փռելը գէպի ամեն կողմ: Բայց ամենից նշանաւորը Ղանդահարի շարժումն էր, այնտեղ երևան էր եկել մի նոր ուժեղ ու անգութ նուաճող: Դա Միր-Վէյսի սրգի Միր-Մահմուդն էր, այն գեղեցիկ ազան, որին Գուրգին-խանը կամենում էր յափշտակել իր հարեմի համար... Աւզանները նրա առաջնորդութեամբ անցան պարսից սահմանը:

Սիւննի մահմեդականութիւնը, կարծես խօսք մի արած, յարձակում էր ամեն կողմից պարսկական գիտի վրայ և կտորկատ էր անում նրան: Հաղորդելով այս բոլորի մասին Մինաս վարդապետին՝ Այվազ անունով մի հայի միջոցով, Եսայի կաթողիկոսը շատ վառագուտ էր համարում հայերի զրութիւնը և յանձնարարում էր վարդապետին մեծ զուշութիւն, որպէս զի միանգամայն ծածուկ պահուի հայերի դործը: Նշանաւոր է որ նա զղուշացնում էր Մինաս վարդապետին և էջմիածնեցիներից: Մի տխուր, անպատուաբեր փաստ է, որ էջմիածինը, ինչպէս շատ անգամ տեսնէք, ոչ միայն չէր միանում հայկական շարժման, այլ և հակառակորդի դեր էր կատարում: Պատճառը էջմիածնի և Գանձասարի մէջ տիրող հին հակառակութիւններն էին: Էջմիածինը պահանջում էր որ Ազուանից կաթողիկոսները հպատակուեն իրան, ճանաչեն իր գերիշխանութիւնը: Վէճերը այդ հողի վրայ անպակաս էին. զրանց վրայ աւելանում էին և

հոգևորականութեան համար այնքան ահագին նշանակութիւն ունեցող դրամական հաշիւները: Բանն այն է, որ Շամախի քաղաքը և նրա նահանգը (Շիրվան) վաղուց կոռւախնձոր էին դարձել երկու աթոռների մէջ. իւրաքանչիւր կողմը իր թեմ էր համարում նրանց և չէր թոյլ տալիս որ հակառակ կողմը ժողովարարութիւններ կատարէ այնտեղ:

Եսայի կաթողիկոսի ժամանակ այդ հակառակութիւնները աւելի սուր կերպարանք ստացան: Եւ սակայն այնպիսի ժամանակներ չէին, երբ կարելի կը լինէր ամեն ինչ մոռանալ՝ կղերական իրաւունքների և եկամուտների համար: Եսային շատ լաւ էր հասկանում այդ բանը. դառնալով հայկական շարժման պարագլուխ, նա չէր կարող չը տեսնել որ էջմիածնական փառամոլութիւնը այդ վերին աստիճանի խորհրդաւոր, փափուկ միջոցներում կարող էր աւելի վտանգաւոր լինել հայերի համար, քան նոյն իսկ պարսիկների կասկածաբանութիւնը: Ուստի նա բռնեց զիջողութիւնների ու հաշտութեան ճանապարհը. մի քանի անգամ գնաց էջմիածին, իր հպատակութիւնը յայտնեց, վէճերին վերջ դրեց: Բայց և այնպէս, Աստուածատուր կաթողիկոսի ժամանակ յարաբերութիւնները նորից լարուեցան և Շամախում նորից հաստատուեցան էջմիածնեցիները: Դա մի սաստիկ հարուած էր, որ ստանում էր ոչ միայն Գանձասարը, այլ և հոյսոյ դործը: Մենք տեսանք թէ որքան կարևոր տեղ էր Շամախին՝ ռուսաց կառավարութեան հետ յարաբերութիւններ պահպանելու համար: Ահա այս պատճառով էր որ Եսային զգուշացնում էր Մինաս վարդապետին էջմիածնական լրտեսներից *), որոնք վխտում էին Շամախում և պատրաստ էին, Գանձասարին վնասելու համար, նոյն իսկ մատնութիւնների զիմել:

Բայց նամակով զգուշացնելը բաւական չէր. հարկաւոր էին աւելի իրական միջոցներ՝ էջմիածինը այդ կարևոր ժամանակներում անփնաս դարձնելու համար: Եւ 1719 թուականին Եսային նորից գնաց էջմիածին **): Այդ քայլն անել ստիպում էր և զրամական միջոցների պակասութիւնը: Միայն հայկական շարժումը որքան փող էր պահանջում Գանձասարի աղքատ ու փոքրիկ թեմից: Իսկ դործը գնալով մեծանում էր: Արդէն հայկական զօրք կազմելու գաղափարն էր ծագել: Շամախու պէս մի հարուստ, մեծ, վաճառաշահ քաղաքը օգնութեան նշանաւոր աղբիւր էր, բայց նրան յափշտակել էին էջմիածնեցիները: Բարեբախտաբար, Աստուածատուր կաթողիկոսը չը յամուռեց և Գանձասարը նորից յետ ստացաւ Շամախու թեմը:

*) ԾՅՅԵՆ, Եր. 327:

**) Սիմէոն կաթողիկոս — Զամբառ, Վաղարշ., 1873, Եր. 82.

Ուշագրաւ է որ Գանձասարի թեմը կազմող երկիրները թէ և այնպիսի մի մեծ գործի վրայ էին, ինչպէս էր քաղաքական ազատութեան համար պատրաստուող ապստամբութիւնը, բայց գոռոզ և ինքնահաւան էջմիածնեցիները աչքում վայրենի, անպիտան մի ժողովրդի հայրենիք էին համարուում: Ահա թէ ինչպէս էր դարգացած հայերի մէջ ընդհանուր շահերի գաղափարը: Այստեղ էլ մենք կանգնած ենք հայկական հին, աղէտալի իրականութեան առաջ: Մի գաւառի գործը անհասկանալի էր միւս գաւառի համար—այսպէս էր միշտ և այս պատճառով էր որ հայերը երբեք չը կարողացան մի միապաղաղ ոյժ կազմել...

Մենք տխուր պարտականութիւն ունենք այստեղ յիշատակելու, որ նոյն իսկ Գանձասարի թեմում էլ ներքին միաբանութիւնը և համաձայնութիւնը կատարեալ չէր: Ուր որ երևան է եկել մի անձնագոհ, աղղի գործին նուիրուած մարդ, նրա քթի տակ իսկոյն բուել է հայ դաւաճանը, մատնիչը: Այսպէս էր և Աղուանից երկրում:

Գանձասարի կաթողիկոսութիւնը երկար ժամանակից ի վեր Հասան-Ջալալիան իշխանական տոհմի ժառանգական սեփականութիւնն էր դարձել: Եսային էլ Խաչէնի այդ հին, նշանաւոր իշխաններից էր: XVII դարի վերջերում Զրաբերդի Մեծ-Շէն գիւղի Սարգիս քահանայի որդի Սիմէօն եպիսկոպոսը Մոսու սարի մի լանջի վրայ հիմնեց Երից Մանկանց վանքը և ապա, ինքնազուլի կաթողիկոս դառնալով, սկիզբ դրեց հակաթոռ կաթողիկոսական տոհմին: Այդ ժամանակից Աղուանից երկրի ներքին խաղաղութիւնը վրդովուեց. հակառակ կաթողիկոսների մէջ հաստատուեց մի եղբայրասպան պայքար, որ շարունակուեց երկար և գնալով աղէտալի կերպարանք ընդունեց: Երից Մանկանց վանքը դարձաւ դաւաճանութեան, օտարամոլութեան, մատնութեան օջախ: Սիմէօնի կաթողիկոսական տոհմը այդ միջոցներով էր պահպանում իր գոյութիւնը... 1705 թուին Սիմէօնին յաջորդեց Ներսէսը, որ դարձաւ Եսայի կաթողիկոսի «խոչընդոտն ու հակառակորդը» *): Հասկանալի է թէ նրան զփուարութիւններ էր յարուցանում այդ Ներսէսը իր փառասիրական կոիւնքերով: Երկիրը մի միութիւն էր կազմել օտարի լուծը թօթափելու համար, բայց ահա այդ ընտանիքի մէջ երևան եկաւ ազգային դաւաճանը: Ժողովուրդը գանգատուում էր, բողբոջում էր նրա դէմ: 1707 թուականին, երբ Օրին

*) «Ջամբու», եր. 82:

իբրև դեսպան գտնուում էր Շամախում, երկու հակաթոռ կաթողիկոսները կանչուեցին էջմիածին, ուր Աղէքսանդր կաթողիկոսը, քննելով բողոքները, նշովեց ներսէսին և կաթողիկոս հրատարակեց Նսայուն: Վտանգաւոր երկպառակութիւնը առժամանակ վերացաւ. բանադրուած, «նեռ» անուն ստացած ներսէսը պատուից ընկած էր, երկրում մնալ չէր կարողանում, աստանդական կեանք էր վարում: Բայց Նսային այդ միջոցով չէր կարող ընդ միշտ ազատուել իր անհաշտ թշնամուց: Վերջ ի վերջոյ նա հասաւ այն եզրակացութեան, որ ամենից լաւը խաղաղութիւնն է: Նա հաշտուեց ներսիսի հետ: Այդ զոհն էլ նրանից պահանջում էր հայկական գործը: Այնպիսի մի ժամանակ, երբ ամեն կողմից փոթորիկներ էին բարձրանում, չէր կարելի ընտանի թշնամի ունենալ:

Փոթորիկները շուտ վրայ հասան: 1720 թուականին, Միր-Մահմուդը, 10 հազար աւղանցի զօրքերի գլուխ անցած, յարձակուեց պարսկական Գիրման քաղաքի վրայ և գրաւեց նրան. բայց այդտեղ էլ Լուֆթ-Ալի-խանը, պարսից 20 հազար զօրքերով սաստիկ ջարդ տուեց նրան: Պարտութիւնը երկար չը կանգնեցրեց աւղաններին. պարսից արքունիքը մի ճակատագրական բթութեամբ իր կորուստն էր պատրաստում. աւղաններին ջարդող խանը անմիջապէս զոհ դարձաւ Սպահանի կանանոցների և նրանց ներքինիների վրէժխնդրութեան և չղթայակալ բանտարկուեց: Միր-Մահմուդը, նորից կարգի բերելով իր ոյժերը, առաջ շարժուեց:

Լէզգիները իրանց ձիւնապատ լեռների կատարներից կարծես տեսան այդ հեռաւոր արշաւանքը և իրանք էլ, յաջորդ տարին, անագին քանակութեամբ արշաւեցին դէպի Կուր գետի հովիտը: Նրանց առաջնորդների մէջ էր Դօվութ-բէկ անունով մէկը, որ անդադար բանակցութիւններ ունէր թիւրքաց սուլթանի հետ և կատարում էր Ստամբուլից եկած հրահանգները: Լէզգիները յարձակուեցան Շամախու վրայ. գրաւեցին, կողոպտեցին նրան: Իսկ կողոպտելու շատ բան կար այնտեղ: Շամախին այդ ժամանակ ամենափարթամ և ամենազեղեցիկ քաղաքն էր արևելեան Անդրկովկասում*): Այնտեղ էր կենտրոնացած առևտուրը Հնդկաստանի, Թիւրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի մէջ: Վաճառականների անհուն հարստութիւնները լէզգիների աւարը դարձան: Շիա մահմեդականները կոտորուեցան. Շամախու խանը սպանուեց: Միայն ոռւս վաճառականների փնտրը հասնում էր 500 հազար ռուբլու:

*) Նսայի կաթ., եր. 33.

Անդրկովկասի պարսիկ խաները միացան զիշատիչ լեռնականների դէմ և Բարդայի մօտ մեծ քանակութեամբ զօրք հաւաքեցին: Բայց ծոյլ, թուլամորթ մարդկանց այդ ահաղին բազմութիւնը չը դիմացաւ լէզգիների առաջին իսկ բաղխումին, փախուստ դարձաւ և ցիր ու ցաւ եղաւ: Երկիրը մատնուեց լեռնականների անսանձ վայրենութիւններին: Հայերը թէ Շամախում և թէ գաւառներում համեմատաբար շատ քիչ վնասուեցան: Բայց դա չէր նշանակում թէ լէզգիները առհասարակ պիտի խնայեն հայերին: Հարուստ աւարը բաժանել, տեղաւորել էր հարկաւոր, այդ պատճառով նրանք վերադարձան իրանց լեռները:

Յաջորդ գարնան այդ աւերիչ լաւան նորից իջաւ լեռներից, անցաւ Մուղանի դաշտը և Արաքսի հովիտով արշաւեց դէպի Ղարաբաղի լեռնաստանը: Նրա առջևից փախչում էր պարսկական զօրքը: Լէզգիները կողոպտեցին Դիղակ և Վարանդա գաւառները և ապա անցան Խաչէն գաւառը: Այդտեղ մանաւանդ սարսափելի էր կոտորածն ու աւարառութիւնը: Ազգաբնակչութիւնը փախաւ լեռները, մտաւ քարերի ծերպերը, թաղնուեց կուսական անտառների խորքում: Բայց իզուր: Ամեն տեղ համնում էին թշնամու ձեռքերը, ամեն տեղից դուրս էին քաշում թաղնուածներին: Եսայի կաթողիկոսը, թողնելով Գանձասարը, հեռացաւ նրա մօտ բարձրացած անմատչելի սարի գագաթը և այդտեղից տեսնում էր թէ ինչպէս էին գերում, կոտորում, թալանում լէզգիները: Երբ այլ ևս տանելու բան չը մնաց, լեռնականները սկսեցին յետ դառնալ դէպի Կուր գետը: «Մարդիկն ամենն արախողխող առնէին, կանաչքն, երեխայքն, աղջկունքն ամենն քշելու տանէին դէպի Դաղստան,—գրում են ականատեսները *),—ետուստ սուր, առաջուստ Կուր գետն, որն գեամին (նաւ) մտանէր, որն ձիոց ազի բռնելով, որն թափուէր երեսս ջրոյն. ջուրն արիւնխաւառն, երախայքն ամենն թափելով գետն տանէր որպէս խոիւ դարնանային: Եւս յորժամ անցուցանէին այն կողմն եսիրքն ամենն յորժամ բաժին-բաժին առնէին լազգիքն այս խղջուի քրիստոնեայքս. կանաչք, երեխայք, աղջկունքն, մայրն մէկ լազգոյ բաժին անկանէր, տղան մէկ ուրիշ լազգոյ բաժին անկանէր, աղջիկն մէկին անկանէր. յորժամ միմեանց բաժանէին, մայրն որդուց բաժանէին, աղջիկն ի մօրէն, միմեանց գիրկս անկանելով, սուգ աղաղակ բառնալով կոչեցուցանէին, ոչ տեսանէ աչս մարդոյ և ականջս ոչ լսէ ձայն արտասուելից սգոյն»:

*) ՅՅՈՅԵ, եր. 340:

Բայց և այնպէս, Հայաստանի համար այնքան սովորական այս հարուածը այս անգամ շատ էլ ցաւալի ու սարսափելի չէր: Նա առաջացրեց հակահարուած: Իզուր չէր հայ ժողովուրդը քսան տարիների ընթացքում սովորել զէնքի ուժով ազատութիւն ձեռք բերելու մտքին. իզուր չէին Նսայի կաթողիկոսի ջանքերն ու պատրաստութիւնները: Վախտանգ թագաւորը 1719-ին վերադարձել էր Վրաստան և ղինուորական ոյժ էր պատրաստում: Նսային էլ, որ բարեկամական յարաբերութիւններ ունէր նրա հետ, սկսեց նոյն գործը իր երկրում: Այժմ լէզզիների արշաւանքը միանգամայն անպատրաստ և անպաշտպան չը գտաւ երկիրը. լեռների վրայ ամրացած էին զինուած հայերի խմբերը, որոնց առաջնորդում էին տեղական մէլիքները և իւզբաշիները: Վտանգը միայրեց այդ խմբերը և Ղարաբաղը մի կարճ միջոցում 12 հազար սեփական հայ զօրք ունէր: Բայց այդ բազմութիւնը դեռ վարժ ու պատրաստ չէր, չուներ առաջնորդ. նա սպասում էր ուսաց թագաւորին, պիտի պահպանէր իր ոյժերը աւելի մեծ գործի համար: Այդ պատճառով էլ մանր, յանկարծակի արշաւանքներով էր բաւականանում և մի քանի անգամ ջարդեց լէզզիների և թուրքերի խմբերը *):

Այսպէս է սկսւում Ղարաբաղի հայ ղինուորութիւնը, որ գործեց XCVIII դարի համարեա մինչև վերջը և հայութեան մէջ մի նոր, չը տեսնուած երևոյթ էր կազմում ստրկութեան և տանջանքների երկար դարերից յետոյ: Լէզզիների արշաւանքն էր, որ նրան առաջին անգամ լոյս հանեց. նոյն արշաւանքն էլ հանդէս բերեց մի հանգամանք, որի նմանը չէր տեսել Անդրկովկասի քրիստոնէութիւնը:

Ղարաբաղի վիճակին ենթարկուեց և Գանձակ քաղաքը. լէզզիները պաշարեցին նրան և ասպատակութիւններ տարածեցին մինչև Սևանի լիճը: Գանձակը դիմադրում էր պաշարողներին և այդ միջոցին նրան օգնութեան հասաւ Վախտանգ թագաւորը, որ ունէր մի մեծ բանակ: Գիշատիչ լեռնականները աւելի լաւ համարեցին, առանց կռուի բռնուելու, հեռանալ այդ կողմերից: Վախտանգը բանակ դրեց Գանձակի մօտ. Նսայի կաթողիկոսն էլ այդ բանակում էր: Կամենալով պատժել սիւննի մահմեդականներին, որոնք միանում էին լէզզիների հետ և կողոպտում իրանց հարկաւաններին, Վախտանգը թոյլ տուեց իր զօրքին կողոպտել մահմեդական աղգաբնակւթիւնը, մանաւանդ որ գանձակեցիները, հակառակ իրանց խոստման, պաշար չը տուեցին վրաց զօրքին: Հրամայուած էր ձեռք չը տալ քրիստոնէականներին.

*) ЭЗОВЪ, кр. 341:

բայց վրացիները չը բաւականացան թուրք գիւղերի աւարով և լաւ քարուքանդ արին նաև շատ հայ գիւղեր *)։ Այդ թշնամական վարմունքը, սակայն, սառնութիւն չը գցեց երկու ազգերի մէջ։ Վախտանգը սէր և համակրութիւն էր ցոյց տալիս դէպի հայերը, իր ձեռքն առաւ հայ զօրքին կանոնաւոր կազմակերպութիւն տալու և դասաւորելու, ինչպէս նաև զօրագլուխներ նշանակելու գործը **): Մայիսի վերջերին վրաց բանակը վերադարձաւ տուն։ Վախտանգի հետ Եսայի կաթողիկոսն էլ գնաց Թիֆլիս, ուր մնաց չորս ամիս։

Մինչդեռ Անդրկովկասում այդ դէպքերն էին կատարւում, Պարսկաստանի մայրաքաղաքը օրհասկան տառնապի մէջ էր գտնւում։ Միր-Մամուդը, գրաւելով պարսկական քաղաքները, առաջացել էր մինչև Սպահան։ Հիւսէին-Շահը փորձեց դիմադրել այդ յաղթական արշաւանքին. նոր միայն գիւղացիներ հաւաքել տուեց, զինեց և ուղարկեց աւազանների դէմ։ Գիւլնարաթի մօտ, 1722-ի փետրուարի 25-ին, սկսուեց ճակատամարտը։ Պարսիկները 50 հազար հոգի էին, թւով երեք անգամ գերազանցում էին աւազաններից. բացի դրանից, նրանք ունէին 24 թրնդանօթ, մինչդեռ Միր-Մամուդի զօրքը ձիաւոր էր, զինուած սրերով, նիզակներով և վահաններով։ Այդ վայրենի խուժանը, այնու ամենայնիւ, յաղթութիւն տարաւ. նա խլեց պարսից թնդանօթները, կրակ սկսեց պարսկական բանակի դէմ և սա փախուստ դարձաւ։ Այնուհետև Պարսկաստանի մայրաքաղաքը և Շահը Միր-Մամուդի ձեռքումն էին։ Հիւսէին-Շահին մնում էր փակուել Սպահանում, յայտնի չէ թէ ինչի վրայ յոյս դնելով։ Աւազանները պաշարեցին Սպահանը. քաղաքում սկսուեց սոսկալի սով։ Ամեն ինչ մատնուած էր անխուսափելի կորստի։ Միայն Շահի որդի Թահմազը կարողացաւ փախչել Սպահանից և գնաց Ղազուին, յոյս ունենալով այդ կողմերում զօրք հաւաքել և գոնէ Պարսկաստանի հիւսիսային մասերում պահպանել Սէֆէվիդների թագաւորութիւնը։ Բայց նա կարողացաւ միայն 400 մարդ խմբել իր շուրջը...

Այս սոսկալի պարտութիւնները, այս արագ քայքայումը ցոյց են տալիս թէ Իսրայէլ Օրին որքան լաւ էր հասկացել Պարսկաստանի ոյժերը խորտակելու միջոցը։ Այժմ կատարւում էին նրա մշտական անդումները թէ Պարսկաստանը նուաճելու համար ոչ մեծ զօրք է հարկաւոր, ոչ երկարատև պատերազմ։ Պետոս Մեծը այժմ միայն աւելորդ համարեց անդործութեան մէջ

*) Նապի կաթողիկ., եր. 43.

**) ԹՅՈՅԵՆ, եր. 336.

մնալ: Շվեդական պատերազմը վերջացել էր 1721 թուականին, բերելով Ռուսաստանին ահագին օգուտներ, իսկ նրա թաղաւորին—կայսրի տիտղոս: Շամախում ուսւ վաճառականների կողոպտուելը մի գեղեցիկ առիթ էր, որին նա սպասում էր անհամբերութեամբ: Տարուայ վերջին նա հրամայեց արչաւանքի պատրաստութիւններ տեսնել Աստրախանում, իսկ երբ լուր ստացաւ որ Միր-Մահմուդը նուաճում է Պարսկաստանը, ինքն էլ ուղեւորուեց Աստրախան զօրքերի գլուխն անցնելու համար:

Հաւաքուել էր մի շատ պատկառելի բանակ. 30 հազար կանոնաւոր և մօտ 70 հազար անկանոն զօրքեր: Ձիաւոր զօրքը ցամաքային ճանապարհով դնաց դէպի Կովկասեան լեռները, իսկ մնացածները նաւ նստեցին յուլիսի 18-ին: Ինն օրից յետոյ նաւերը մօտեցան ափին. հասաւ և ձիաւոր զօրքը ու ամբողջ բանակը սկսեց առաջ խաղալ: Մինաս վարդապետն էլ ուսաց բանակի մէջ էր: Տեղացի իշխանները միմեանց ետեից հնազանդութիւն յայտնեցին ուսաներին. մէկը միայն չնչին դիմադրութիւն ցոյց տուեց և դրա համար էլ սաստիկ պատժուեց.—ուսները մոխրի կոյտ դարձրին նրա գիւղաքաղաքը: Օգոստոսի 23-ին Դերբենտը, առանց մի հրացան արձակելու, անձնատուր եղաւ կայսրին. նախը ծունկ չդրած՝ քաղաքի բանալիները յանձնեց Պետրոսին: Բազուի խանն էլ յայտնեց որ պատրաստ է հպատակուել: Մնում էր որ այդ ղեկավարական զբօսանքը դիմէ դէպի Շամախի:

Հասկանալի է թէ Պետրոսի այդ արչաւանքը ինչ ահագին տպաւորութիւն պիտի գործէր մահմեդական արեւելքում: Թիւրքիան նոյնպէս սկսեց պատերազմական պատրաստութիւններ տեսնել: Այժմ այլ ևս ծածուկ բան չէր որ ուսաց զօրքը դնում է Պարսկաստանը նուաճելու: Օսմանեան պետութիւնը անտարբեր մնալ չէր կարող: Երբ Հիւսէին-Շահը, Միր-Մահմուդի արչաւանքը կանգնեցնելու համար, դիմեց սուլթանի կառավարութեան և օգնութիւն խնդրեց, Ստամբուլում նրա դեսպանին յայտնեցին թէ չէ կարելի օգնել մի չիպի՝ սիւննու դէմ: Այժմ այլ ևս այդ հանգամանքը չը կար թիւրքիայի առաջ. ուսաց թագաւորը քրիստոնեայ էր և օսմանեան կառավարութիւնը շատ լաւ հասկանում էր, որ եթէ նա հաստատուի Անդրկովկասում, այն ժամանակ թիւրքահպատակ հայերն ու վրացիները նոյնպէս գլուխ կը բարձրացնեն և կը միմեան ուսաների հետ: Էրզրումի փաշան պատերազմական գործողութիւններ սկսելու հրաման ստացաւ:

Հասկանալի է նոյնպէս և այն զգացմունքը, որ այդ ժամանակ յուզում էր հայերին: Քսան տարի էր, ինչ նրանք խնդ-

րում էին, աղաչում էին և սպասում այս արշաւանքին։ Այժմ նա իրագործւում էր. և կասկած չէր կարող լինել որ եկել հասել է ազատութեան օրը։ Օգոստոսի 18-ին Շսայի կաթողիկոսը Թիֆլիսից գրում էր Մինաս վարդապետին թէ ամեն ինչ պատրաստ է, հայերն ու վրացիները միացել են և շուտով կը ճանապարհուեն կայսրին հանդիպելու։ «Պարսկաստանի այժմեան խառնակ դրութեան մէջ աւելի լաւ և յարմար ժամանակ որոնել չէ էլ կարող նորին կայսերական մեծութիւնը՝ պարսկական հողերը գրաւելու համար»—աւելացնում էր կաթողիկոսը և խնդրում էր շուտով հրահանգներ հասցնել թէ ինչ պէտք է անել։

Վախտանգը Պետրոսից հրաւէր էր ստացել զօրքերով դիմաւորելու իրան Շամախում և սեպտեմբեր ամսին ահադին բազմութեան գլուխ անցած, դուրս եկաւ Թիֆլիսից և ուղևորուեց դէպի Գանձակ։ Հասնելով Կոտրած կամուրջին (Խրամ գետի վերայ, Սընդըփօի), Վախտանգը առաջարկեց Շսայի կաթողիկոսին առաջ գնալ և հայ զօրքը հանել Ղարաբաղից, տանել դարձեալ Գանձակ։ Աղուանից կաթողիկոսը, ինչպէս վայել էր Հասան-Ջալալեան մի իշխանին, լաւ հասկանում էր և զինուորական գործը։ Մի տեղ հաւաքեց հայոց զօրքերը, փոքր ինչ վարժեցրեց, կարգ ու կանոն սովորեցրեց։ Տասն հազար ընտիր տղամարդիկ, երկրի երիտասարդութեան ծաղիկները, զէնքի տակ էին։ Նրանց առաջնորդողներն էին Շսային՝ Գիւստանից, Շրուանն ու Սարգիսը՝ Ջրաբերդից և Մէլիք-Յովսէփը՝ Գանձակից *)։ Մեծ ուրախութիւններով, «համարելով նոր նորոգեալ զինամեծութիւն հայոց», ինչպէս ասում է Շսային, զօրքը ճանապարհ ընկաւ։ Նրա հետ էին Շսային, Ներսէսը, եպիսկոպոսներ, քահանաներ։

Գանձակի մօտ, Զօլակ անունով տեղում, հայերը բանակ դրին։ Քաղաքի միւս կողմում իջել էր Վախտանգի բանակը։ Նրեք օրից յետոյ կայացաւ երկու զօրքերի հանդիսաւոր միացումը։ Հայերը գնացին վրաց բանակը. դեռ տեղ չը հասած, վրաց զօրքը զինուորական պատիւներով դիմաւորեց հայերին և սկսուեցին մի շարք զինուորական հանդէսներ. ձիարշաւ, հրացանածգութիւն։ Որքան ժամանակներից ի վեր չէր տեսնուած մի այդպիսի հանդիսարան. երկու քրիստոնէայ ազգեր, երկուսն էլ բախտակից, երկուսն էլ մի կաթսայի մէջ տապակուելիս, բայց հեռացած միմեանցից կրօնական նախապաշարմունքներ

*) Այսպէս են անուանուած այդ զինուորները պ. Նզեանցի գրքում (եր. 341)։ Իսկ Շսայի կաթողիկոսը անուանում է դրանց Սան, Շրուան, Շահնի և Սարուխան։

չնորհիւ, համարեա թշնամի միմեանց,—այժմ եղբայրանում էին մի սուրբ ուխտով: Եղբայրացնողը ազատութեան համար բարձրացրած ղէնքն էր. երկու կողմից էլ ներկայ էին բազմաթիւ հոգեւորականներ, նրանք էլ հաշտ ու բարեկամ էին միմեանց հետ: Վախտանգը խորին բաւականութեամբ էր զիտում լեռնցի հայ կտրիճների շարքերը և իր մօտ կանչելով մէլիքներին, ասաց նրանց. «Այսուհետեւ զօրացէք և քաջ եղէք. ոչ մի տեղից և ոչ ոքից մի վախենաք, որովհետեւ ահա հասել է քրիստոնեաների փրկութեան ժամանակը» *): Զինակից ազգերի եղբայրութեան ականատես ժողովուրդը հրճւում էր: «Խրախոյս բարձրացրած,—ասում է ականատեսը **)—ձայն արձակեցինք միմեանց հետ միասին, թէ զալու է քրիստոնեաների փրկիչը, ինչպէս մեր ճշմարիտ Փրկիչ Քրիստոսը Մաղկաղարդի օրը եկաւ Երուսաղէմ. և մեր երեխաները՝ Ուրվանա ի բարձունս, էին գոչում և մենք ամեն մէկս շորեր ունէինք սպտրաստ գցելու թագաւորի ոտների տակ, ասելով. «Օրհնալ եկեալ յանուն Տեառն»:

Բայց այդպէս չեղաւ Վաղաժամ, անհիմն էին հայ-վրացական բանակի հրճումները: Գանձակի մօտ ոչ ոք չը գիտէր, թէ այդ ժամանակ ինչ է կատարւում Կասպից ծովի ափին: Դեռ օգոստոսի 29-ին Պետրոսը զինուորական խորհուրդ կազմեց և յայտնեց, որ պէտք է զօրքերի մեծ մասը վերադարձնել Աստրախան: Կայսրը հրաժարւում էր արշաւանքը անձամբ առաջ տանելուց: Ի՞նչ էր պատճառը: Աստրախանից 12 նաւերով ալիւր էր ուղարկուած զօրքի համար. նաւերը փոթորիկի բռնուեցին և ափ նետուեցին, ալիւրը մեծ մասամբ փչացաւ Կարդաղբուած էր նոր պաշար ուղարկել Աստրախանից, բայց յոյս չը կար թէ այդ պաշարն էլ շուտ և անվտանգ կը ստացուի: Բացի զրանից, երկրի անսովոր կլիմայական պայմանները, մանաւանդ տիրող սաստիկ չոքերը մեծապէս սղոյթեցութիւն էին տնում զօրքի վրայ. հեծելազօրքի ձիաների մի նշանաւոր մասը կոտորուել էր: Ուստի Պետրոսը, թողնելով Դերբենտում բերդապահ զօրք և տալով իր զօրավարներին ապագայ գործողութիւնների հրահանգներ, ինքը վերադարձաւ Աստրախան, ուր հասաւ հոկտեմբերի սկզբում. իսկ զեկտեմբերին նա արդէն Մոսկովայումն էր:

Չսփաղանցութիւն կը լինէր Պետրոսի նահանջման մի միակ պատճառը պաշարների պակասութիւնը համարել: Մի երկրում, ուր ազգաբնակչութիւնը ոչինչ դիմադրութիւն չէր

*) Նսալի կաթ., եր. 49:

**) Զ30Ե, եր. 336:

ցոյց տալիս, զեռ չէր կարելի անյուսալի համարել արշաւող բանակի դրութիւնը, մանաւանդ որ հեռու չէր Աստրախանը, հեռու չէին և այն ևրկիրները, ուր ազգաբնակութիւնը այդպիսի հրճուանքով սպասում էր իր ազատարարներին: Պաշարների պակասութիւնը պատճառներից մէկն էր միայն. կային աւելի հիմնաւոր, աւելի լուրջ պատճառներ: Բանն այն էր, որ Պետրոսը Կովկասում լոկ առևտրական շահեր էր որոնում: Նրան հարկաւոր էր միայն Կասպից ծովը՝ Բալտիկ ծովի համար: Անդրկովկասեան քրիստոնեաների պատճառով պէտք էր ընդհարուել Թիւրքիայի և Պարսկաստանի հետ. այդպիսի մեծ պատերազմ չը կար Պետրոսի ծրագրի մէջ: Իսկ Կասպից ծովը գրաւելը, ինչպէս ցոյց էր տալիս փորձը, այնքան էլ դժուար չէր. այդ գործի համար բաւական էին և փոքրիկ զօրաբաժիններ, բայց դրանցից էլ աւելի կտրուկ միջոցը դիպլոմատիական ճանապարհն էր:

Դեռ նախ քան Աստրախանից դէպի Կովկաս ճանապարհուելը, յունիսի 25-ին, Պետրոսը հրամայեց գրել Պարսկաստանի ռուսաց հիւպատոս Աւրամովին հետևեալը. «Առաջարկիր հին կամ նոր Շահին կամ ում կը գտնես լիազօրութիւն ունեցող, որ մենք գնում ենք դէպի Շամախի ոչ թէ Պարսկաստանի դէմ պատերազմելու, այլ ապստամբներին (լէզզիներին) ոչնչացնելու համար, որոնք մեզ վնասներ պատճառեցին. և եթէ պարսից կառավարութեանը ներկայ ծայրայեղ քայքայուած դրութեան մէջ հարկաւոր է օգնութիւն, մենք պատրաստ ենք օգնել և մաքրել երկիրը բոլոր թշնամիներից, նորից հաստատել պարսից մշտական տիրապետութիւնը, եթէ դրա փոխարէն նա կը զիջէ մեզ Կասպից ծովի ափերում գտնուող մի քանի նահանգները, որովհետև գիտենք որ եթէ պարսիկները այժմեան թուլութեան մէջ մնան և մեր այս առաջարկութիւնը չընդունեն, այն ժամանակ թիւրքերը կը տիրեն ամբողջ Պարսկաստանին, մի բան, որին մենք հակառակ ենք. մենք չենք ուզում որ թիւրքերը տիրեն Պարսկաստանին, ոչ էլ ինքներս ենք ուզում տիրել» *): Հիւսէին-Շահի որդի Թահմազը, որ նոյնպէս մի խեղճ ու թոյլ արարած էր և թափառում էր հիւսիսային Պարսկաստանում, համաձայնութիւն տուեց այդ առաջարկութեան և մի ղեկավարութիւն ուղարկեց Պետրոսի մօտ այդ մտքով դաշնագիր կնքելու համար: Դեռպան Իսմայիլ-բէկը արտասուելով ասում էր ռուսաց հիւպատոսին. «Մեր հաւատը և օրէնքը բոլորովին ոչնչանում են, իսկ մեր տէրերի ստութիւնն ու զոռոգութիւնը չէ պակասում»:

*) Соловьевъ, Т. 18, кр. 47:

Պետրոսի անակնկալ վերադարձը մեծ վնասութիւն և անասելի կսկիծ պատճառեց հայերին և վրացիներին: Կայսրը գիտէր որ այդպէս պիտի լինի. ուստի ճանապարհից, Աստրախան վերադառնալիս, Թիֆլիս ուղարկեց Իվան Տօլստոյ անունով օֆիցերին, յանձնարարելով նրան հաւատացնել Վախտանգին որ արշաւանքը շարունակել չէր կարելի: Ապագայի մասին Պետրոսը ոչինչ խոստումներ չէր անում. ընդհակառակն, առաջարկում էր Վախտանգին, որ նա էլ իր կողմից միջնորդէ պարսից կառավարութեան առաջ որ Ռուսաստանին տրուեն ծովեզերեայ նահանգները: Տօլստոյի հետ Մինաս վարդապետը երկու հայ ուղարկեց, որոնք թէ պիտի խօսէին հայերի հետ և թէ տեղեկութիւններ հաղորդէին:

Վախտանգը դեռ Թիֆլիս չէր վերադարձել, երբ այնտեղ հասաւ Տօլստոյ: Վախտանգի որդի Վախուշտը, որ Թիֆլիսի կառավարիչն էր, սարսափով լսեց Պետրոսի վերադարձի լուրը: Տպաւորութիւնն այքան սաստիկ էր, որ Վախտանգը խնդրեց Տօլստոյին ծածուկ պահել իր բերած լուրը, որպէս զի ժողովուրդը չը յուսահատուի: Բանն այն էր, որ Էրզրումի փաշան, սուլթանի հրամանի վրայ հիմնուելով, ստիպողաբար պահանջում էր վրացիներից հպատակութիւն. թիւրք կառավարութիւնը արդէն պայքար էր սկսել Կ. Պօլսում ոռւսաց դեսպանի հետ և ասում էր թէ Պարսկաստանը միմիայն թիւրքիային կարող է պատկանել, քանի որ քրիստոնեաները երբէք Պարսկաստանի տիրապետողները չեն եղել: Իր այդ իրաւունքները թիւրքիան պատրաստ էր հաստատել պատերազմով. բայց մինչև Ռուսաստանի դէմ պատերազմ յայտարարելը, հրամայուեց Էրզրումի փաշային գրաւել Վրաստանը, Երևանը, Գանձակը: Վրացիները, յոյս ունենալով ոռւսների վրայ, մերժեցին թիւրքերի առաջարկութիւնը: Այժմ, երբ չքանում էր ոռւսների վրայ դրած յոյսը, ծագում էր օրհասական հարց—ինչ անել: Ժողովուրդը դեռ սպասում էր ոռւսներին և Տօլստոյ, իբրև ոռւս օֆիցեր, սրտառուչ ցոյցերի առարկայ էր դառնում Թիֆլիսի փողոցներում:

Ստանալով տխուր լուրը, Վախտանգը կտրադուլիս վերադարձաւ Թիֆլիս: Գուցէ նրան աջողութէր պատուով դուրս գալ դժուար դրութիւնից, եթէ այդ միջոցին Վրաստանի դժբախտ ճակատագիրը մի նոր թշուառութիւն չը յարուցանէր: 1722-ին մեռել էր Կախէթի Իմամ-Կուլի-խանը, մահմեդականացած վրացի թագաւորը: Նրան յաջորդեց եղբայրը, որի քրիստոնէական անունն էր Կոստանդին: Դա մի վերին աստիճանի կատաղի մահմեդական էր, Մահամմէդ-Կուլի-խան անունով, արիւնար-

բու, գոռոզ, քինախնդիր: Պարսից Շահից (Թահմազից) նա ստացաւ և Երևանի նահանգի կառավարութիւնը: Կախէթ հասնելուն պէս նա թշնամական գործողութիւններ սկսեց Վախտանգի դէմ: Դրդողը Վախտանգի եղբայր Նսսէն էր, որ գաղտնի կերպով իմաց տուեց Մահամէդ-Կուլի խանին թէ Վախտանգը ռուսաց թագաւորին հպատակուել է ուղում*): Դաւաճան եղբօր զգուշութիւն արարքը ներքին սարսափելի խռովութիւնների պատճառ դարձաւ: Կախէթի խանը մտաւ Գարթալինիա, քարուքանդ արեց: Դժբախտութիւններ էին թափուում Վախտանգի գլխին. Վրաստանի սահմանի վրայ երևաց թիւրքաց զօրքը և նորից հպատակութիւն պահանջեց: Եւ Վախտանգը ստիպուած էր կատարել այդ պահանջը, յոյս ունենալով որ Պետրոս Մեծը չի թողի իրան: Բայց թիւրքաց հպատակութիւնն էլ չազատեց նրան դժուարութիւններից: 1723-ին Մահամէդ-Կուլի-խանը զրաւեց Թիֆլիսը, աւերեց ու քանդեց նրան, բայց չը կարողացաւ վայելել այդ բարբարոսութեան պտուղները. թիւրքերը զրաւեցին Գարթալինիան և Մահամէդ-Կուլի-խանը ստիպուած էր նրանց յանձնել Թիֆլիսի բանալիները: Վախտանգը, զրկուելով մայրաքաղաքից և գահից, թափառում էր Վրաստանի լեռներում և անդադար օգնութիւն էր խնդրում Պետրոսից: Բայց իզուր. Տօլստոյը, որ դեսպանի նման մի պաշտօնեայի դեր էր կատարում նրա մօտ, հեռացաւ: Հանգամանքներից օգուտ քաղեց միայն Վախտանգի դաւաճան եղբայրը. նա քրիստոնեայ էր, ընդունել էր չիա մահմեդականութիւն, նորից քրիստոնեայ էր դարձել, այս անգամ էլ սիւննի մահմեդական դարձաւ և Մուստաֆա-փաշա անուանով սկսեց կառավարել Թիֆլիսը, իբրև օսմանեան վալի: Վախտանգը վերջ ի վերջոյ բոլորովին ձեռք վերցրեց իր հայրենիքից և գնաց Ռուսաստան:

Համեմատաբար լաւ էր հայերի դրութիւնը: Գանձակի մօտից վերադառնալուց յետոյ, հայ զօրքերը դաժ չը գրին իրանց զէնքը և չը յրուեցան, այլ ամրացան լեռներում և երկու մշտական բանակ կազմեցին, որոնք կոչւում էին Սղնախ: Մեծ Սղնախը, դատելով այն մի քանի անորոշ ցուցմունքներից, որոնք մնացել են ժամանակակից գրութիւնների մէջ, գտնւում էր Մուսի լեռներում (Ջրաբերդ գաւառ), Թարթառ գետի վրայ**): Իսկ փոքր Սղնախը այդտեղից դէպի հարաւ պիտի լինէր, երևի Վա-

*) П. Иоселиани—„Грузія подъ властью царей-магометанъ“, Тиф. 1849, кр. 123.

**) «Ղափթ-բէկ», Վաղարշապատ, 1871, եր. 2:

բանդայի Գիրս լեռներում *): Գլխավոր հրամանատարն էր Մէ-լիք-Աւանը **):

Բացի այդ երկու ամրացրած բանակներից, հայ զորքեր կային և Սիւնեաց երկրի Ղափան գաւառում: Սիւնիքում էր սկիզբ առել Իսրայէլ Օրիի գործունէութիւնը և Ղափանը, չնորհիւ իր լեռնային ամուր դիրքի և խիտ հայ ազգաբնակութեան, նրա ծրագրի մէջ նկատուած էր իբրեւ մի շատ կարեւոր կենտրոն ապստամբական գործողութիւնների համար: Երբ լէզգիների արշաւանքը ոտքի կանգնեցրեց հայերին, իսկ Պետրոսի մօտալուտ գալուստը ոգևորեց բոլոր քրիստոնեաներին, Ղափանում էլ վառուեց ապստամբութեան բոցը: Վախտանգը, ինչպէս տեսանք, առանձին հոգատարութեամբ կարգաւորում էր հայ ղինաւորութիւնը: Նոյն բարեացակամութեամբ վերաբերում էր հայերին և նրա որդի Բակուրը (Շահ-Նաւաղ): Սա Վրաստանում գտնուող այն հայերին, որոնք ծանօթ էին պատերազմական գործին, ուղարկեց Ղարաբաղ և Սիւնիք՝ հայ գնդերը առաջնորդելու համար: Այդ զօրավարների թիւը հասնում էր 30-ի և դրանց մէջ էր հայազգի Դաւիթ-բէկը, որ Սիւնիքում հանդիսացաւ մի քաջ և տաղանդաւոր հրամանատար, սկսեց գործել սնկախ և ինքնագլուխ: Նրա մասին յետոյ կը խօսենք: Առ այժմ տեսնենք թէ ինչ էին սնում Ղարաբաղի երկու Սղնախները:

V

Պետրոս Մեծի վերադարձը հայերի համար դեռ չէր նշանակում թէ ամեն ինչ վերջացել է և այլ ևս աւելորդ են ջանքերը: Նրանք դարձեալ սկսեցին խնդրել, աղաչել կայսրին: Մինաս վարդապետը ստանում էր բազմաթիւ նամակներ, որոնց մէջ նրան խնդրում էին ճար գտնել: Նա էր ամենքի յոյսը, նա պիտի համոզէր ռուսաց կառավարութիւնը շարունակել սկսած գործը: Վրաստանի հայոց առաջնորդ Մինաս եպիսկոպոս Փերվազեան գրում էր որ եթէ ռուսները միւս տարին, այսինքն 1723-ին, նորից չերևան Շամախում, հայերը բնաջինջ կը դառնան: Նոյն աղաչանքն էին անում և Ղարաբաղի մէլիքները. նամակ գրեց նոյն իսկ Ներսէս կաթողիկոսը:

*) Այս ենթադրութեան ուժ է տալիս այն ժամանակ, որ 1723 թուին պարսից զօրքերի առաջապահ մասերը ընդհարումից հայ զօրքերի առաջապահ մասերի հետ Հաղրութ գիւղի մօտ (ՅՅՕԲԵ, հր. 362), որ գտնուում է Դիզակ գաւառում և որը, ինչպէս բացատրում էր ականատես պատմողը, «մօտ էր հայոց զօրքին»: Շուշու մօտ այժմ էլ կա Սղնախ անունով հայ գիւղը:

**) Դիզակի տէրը, Դաւիթ-բէկի պատմութեան մէջ Մէլիք-Աւանը կոչուած է «Յովհաննէս պետ Գուգարացու» (հր. 10):

Եւ իրաւ, հայերի դրութիւնը չափ վտանգաւոր էր: Մահմադական աշխարհում միայն այդ ազգն էր, որ ըստ երեւոյթին, միսնդամայն հաշտուել էր իր ճակատագրի հետ և երկար ժամանակներից ի վեր ցոյց էր տուել թէ ամենաանվնաս և հլու հպատակը ինքը պիտի լինի: Սովորել էին նրան կեղեքել, իսկ նա սովորել էր համբերել: Այժմ, յանկարծ, այդ խեղճ ժողովուրդը զինուած բանակ էր՝ դարձել և սպառնական դիրք էր գրաւել իր լեռներում: Ամեն կողմից այդ բանակի դէմ էր ուղղուած մահմադական զէնքը, արևմուտքից առաջանում էին օսմանցիները, պարսիկները, մանաւանդ տեղական թուրք ազգաբնակչութիւնը անտարբեր չէր, իսկ հիւսիսից սպառնում էին Թիւրքերայի գործիք դարձած լեզգիները: Եւ հայերը, ի հարկէ, այլ ևս չէին ծածկում իրանց ապստամբական դիրքը, բոլորքուեկ լեռնային պատերազմը նախ և առաջ տեղային թուրքերի դէմ, ազատարար հրապանը զրկած հայը ամենից սուռջ տեսնում էր իր ամենամօտիկ թշնամուն, որ շարունակ կեղեքել ու տանջել էր նրան: Արշաւանքներ էին գործուած զանազան ցեղերի դէմ, յաղթում, կոտորում էին հայերը: Այդ կոտորածները այնքան մեծ չափեր ընդունեցին, որ Կախէթի Մահամէդ-Կուլիխանը, իբրև Երևանի կառավարիչ, 700 թուման տուգանքի ենթարկեց էջմիածնի Ասատուածատուր կաթողիկոսին և ստիպում էր նրան որ պահանջէ հայ զօրքերից վերջ դնել այդ արիւնսահողութիւններին: Կաթողիկոսը չուզեց խառնուել այդ գործի մէջ և չէր էր կարող խառնուել, քանի որ ինքն էլ այժմ սկսել էր համակրել ապստամբութեան, թէև ամեն կերպ ցոյց էր տալիս իր չեզոքութիւնը:

Չը նայած այս աջողութիւններին, հայերի սուջն կանգնած էր ապագայի հարցը: Այդ անկանոն, դեռ անփորձ զինուորութիւնը չէր կարող դիմադրել մի մեծ կանոնաւոր բանակի, մանաւանդ որ զէնքեր քիչ ունէր և զուրկ էր մի ընդհանուր, փորձուած առաջնորդից: Յոյսը դարձեալ ուստաց կայսրն էր: Եւ անդադար դիմումներ էին անում նրան: Մինչև այժմ այդ դիմումները առանձին մարդկանց, մեծ մասամբ հոգևորական պետերի կողմից էին լինում. այժմ բանակցութիւններ վարողը հայ զօրքն էր: Նրա զլխաւորների ժողովն էր վճռում թէ ինչ պէտք է անել և լիազօրներ էր ուղարկում, առաջարկութիւններ, խնդրքներ էր ներկայացնում:

Պետրոսը այդ միջոցին զբաղուած էր իր Կասպիական ծերագիւրներով: Դերբենտում նա մանրամասն հրահանգներ էր տուել ապագայ գործողութիւնների մասին և այժմ հետևում էր թէ ինչպէս են կատարւում այդ հրահանգները: Գնդապետ Շի-

պով գրաւեց Ռէշտը, սկսեց ամբողթիւններ կառուցանել այդ քաղաքի մօտ և Ղազվինի ճանապարհի վրայ: Աւելի դժուար եղաւ այն գործը, որ յանձնարարուած էր զօրքերի գլխաւոր հրամանատար գններալ Մատուշկինին. Բագուն չը համաձայնեց իր կամքով անձնատուր լինել. ոռւսաց նաւերը մօտեցան ակին և մի թեթև կռուից յետոյ փախցրին պարսիկ բերդապահ զօրքը: Այդ կարեւոր նաւահանգիստը ձեռք գցելուց յետոյ, Պետրոսը իրաւունք ունէր իրանը համարել Կասպից ծովի արևմտեան ափը. դժուար չէր և նրա հարաւային ափին տիրանալը: Պարսկաստանը որ և է դիմադրութիւն ցոյց տալու ընդունակութիւնից միանգամայն զուրկ էր: Այնտեղ տիրում էր կատարեալ խառնաշփոթութիւն:

1722-ի հոկտեմբերի վերջերում սովը պաշարուած Սպահանում այն աստիճանի կատաղութեան հասաւ, որ սկսեցին նոյն իսկ մարդկային միս էլ ուտել: Հիւսէին-Շահը ճարահատեալ զնաց Միր-Մահմուդի բանակը, իր ձեռքով Սէֆէվիների թագը դրեց նրա գլխին, իսկ ինքը բանտարկուածի պէս մնաց, գոհ մնալով և նրանով, որ յաղթողը կեանք չնորհեց իրան: Այսպէս Սպահանում դահ բարձրացաւ աղանձների հարստութիւնը: Իմանալով այդ բանը, Թահմազն էլ իրան Շահ հրատարակեց հիւսիսային Պարսկաստանում. բայց շահութիւնն էլ նրան օգուտ չը բերեց. նա մնաց նոյն թոյլ ու ողորմելի մարդը, որ թափառում էր քաղաքից քաղաք, բայց ոչ մի տեղ չէր գտնում ոյժ և օգնութիւն՝ իր ժառանգական իրաւունքները պահպանելու համար:

Թահմազը չէր վտանգաւոր Պետրոսի համար: Վտանգը Թիւրքիայի կողմից էր, որ աւելի և աւելի խստապահանջ էր դառնում և չէր ուզում որ Պարսկաստանում քրիստոնեայ տիրապետութիւն հաստատուի: Ռուսաց զիպլօմատիան ամեն ջանք գործ էր դնում վէճը խաղաղութեամբ վերջացնելու համար: Պետրոսը առաջարկում էր խաղաղ կերպով բաժանել Պարսկաստանը: Նա բաւականանում էր իր Կասպիական նուաժումներով և թոյլ էր տալիս որ Թիւրքիան էլ վերցնէ իր ուզած կտորները: Թիւրքիան չէր ուզում լսել անգամ այդ առաջարկութեան մի կէտը մանաւանդ: Անդրկովկասեան քրիստոնեաների աղաչանքները չէր արհամարհում Պետրոսը, նա անկեղծ կերպով կամենում էր մի բան անել նրանց համար, որքան ներում են քաղաքական միջոցները: 1723 թուականի ապրիլին ոռւսաց կառավարութեան կողմից մի նամակ ուղարկուեց Թիֆլիսի հայոց առաջնորդ Մինաս եպիսկոպոս Փերվազեանին, իբրև պատասխան նրա մի աղերսական գրութեան: Այդ նամակի մէջ յայտնուած էր, որ կայսրը չէ մոռացել հայերին և անպաշտպան չի թողնի նրանց: Թիւրք կա-

առվարութիւնը պահանջում էր որ ոռւսները այլ ևս արչաւանք չը գործեն լէզզիների դէմ. Պետրոսը համաձայն էր այդ բանին, բայց իր կողմից պահանջում էր որ թիւրքաց զօրքերն էլ Հայաստան և Վրաստան մտնելու իրաւունքը չունենան: Եւ որովհետեւ Բ. Դուռը ուշադրութիւն չէ առել ոռւսաց այդ պահանջը, ոռւսի յայտնւում էր հայերին և մանրամասն գրուած էր Վախտանգին որ կայսր չի թողնի որ թիւրքերը վրասն քրիստոնէականերին:

Իրաւ է, Պետրոսը Կ. Պօլսում դրեց Հայաստանը և Վրաստանը չէզոք ևրկիրներ ճանաչելու առաջարկը, բայց թիւրք կառավարութիւնը սաստիկ հակառակուեց. թէ այս և թէ ուրիշ պատճառներով անխուսափելի էր թւում պատերազմը: Պետրոսը հրամայեց պատրաստութիւններ տեսնել: Բայց Կ. Պօլսի ֆրանսիական դեսպան Բժնա խաղաղ միջնորդի դեր ընդունեց և սկսուեցան երկարատև խորհրդակցութիւններ՝ վէճը առանց զէնքի վճռելու համար:

Այսպէս ահա հայերը դեռ վերջնականապէս յուսահատուելու պատճառ չունէին: Նրանց առաջարկւում էր պինդ պահուել, միաբան լինել վրացիների հետ և սպասել յարմար ժամանակի: Պետրոսը ընդունում էր իր մայրաքաղաքում եղած հայերին, յուսադրում էր նրանց: Իսկ 1723-ի յունիսին նա գրեց իր երկրորդ հրովարտակը հայերին և ուղարկեց նրան Ղարաբաղ Իվան Կարապետ անունով հայի ձեռքով: Այս երկրորդ հրովարտակն էլ գրուած էր, առաջինի նման, անորոշ, մութ ոճով: Դրա մէջ Պետրոսը թոյլ էր տալիս որ հայերը վաճառականութիւն անեն Կասպից ծովի վրայ իր ձեռք բերած քաղաքներում և խոստանում էր զանազան արտօնութիւններ չնորհել: Բայց Կարապետի առաքելութիւնը այդ նպատակը չունէր. հրովարտակը գրուած էր այդ ձևով, որպէս զի եթէ թշնամիների ձեռքն ընկնելու լինի՝ չը վրասէ հայերին: Իվան Կարապետը մեծամեծ զգուշութիւններով տանում էր իր հետ և մի այլ թուղթ, որի բովանդակութիւնը չատ կարենոր էր: Պետրոսը ամենադրական, պարզ խոստումներով յուսադրում էր հայերին և հաւատացնում էր թէ ինքը անպատճառ գլուխ կը բերէ նրանց ազատութիւնը: «Մենք—ասուած էր այդ թղթի մէջ—չատ տրամադիր ենք և պատրաստ ազատել նրանց (հայերին) անհաւատների լուծից: Բայց նրանք էլ կարող են հասկանալ, որ այդ բանի համար չափազանց անհրաժեշտ էր, որ մենք նախ Կասպից ծովի վրայ հաստատուենք և այդ ծովի վրայ եղած տեղերին տիրենք, որպէս զի ախտեղից դէպի հայերը արշաւելու և նրանց հետ միանալու բոլոր պատրաստութիւնները տեսնենք»: Կասպից ծո-

վի վրայ հաստատուելու գործը աջողութեամբ առաջ է գնում, ուրեմն հայերը պիտի ապահով լինեն, որ նրանց օգնութեան համակու և ղերութիւնից թափելու ժամանակն էլ կը գայ: Պետրոսը խորհուրդ էր տալիս պինդ պահուել, ամեն կերպ աշխատել պիմանալու, մինչև որ կը գան ուսաները: Իսկ եթէ զօրքի գլխաւորները և առհասարակ ժողովրդի երեւիները չեն կարողանում զիմանալ և սաստիկ նեղուած են մահմեդականներէից, այդ դէպքում թող նրանք հեռանան երկրից, ապաստան գտնեն ուսաների գրաւած քաղաքներում, պատուիրելով ժողովրդին առժամանակ հանդարտ մնալ:

Իվան Կարապետը այս վերին աստիճանի կարեւոր թուղթը մեծ դժուարութիւններով կարողացաւ տեղ հասցնել: Ուղևորուելով Բագուից, նա մէկ էլ յետ դարձաւ, մնաց մի քանի օր և նորից ճանապարհուեց: Շամախի նա չը մտաւ, այլ գնաց Մէյսարիի վանքը, ուր մնաց 18 օր: Լէզգիները սաստիկ հակողութիւն ունէին ճանապարհների վրայ, Իվանը ծածուկ մարդ ուղարկեց Շամախի, կանչեց Ալէքսանդր անունով քահանային և երկու գլխաւորների, ցոյց տուեց իր բերած թղթերը: Դրանց օգնութեամբ նա անցաւ Սաղիանի վանքը, ուր մնալով երկու օր, փոխեց իր շորերը և ղեկտեմքերի ցրտերին մուրացկանի կերպարանքով ինն օր ճանապարհ կտրելով, հասաւ Փոքր Սղնախ, իսկ այդտեղից էլ գնաց Մեծ Սղնախ: Կայսրի հրովարտականքը, ի հարկէ, մեծ ուրախութիւն պատճառեցին և նորից ոգևորեցին հայ զինուորներին:

Երկու Սղնախների ներքին հանգամանքների մասին ոչ մի մանրամասն տեղեկութիւն չը կայ: Այդ պատճառով շատ հետաքրքրական են այն մի քանի խօսքերը, որ նուիրում է Իվան Կարապետը հայ զինուորութեան: Այդտեղից մենք նախ և առաջ իմանում ենք որ հայկական ազատութեան գործը դեռ մանկական թոյլ քայլեր էր անում, բայց դաւաճանութիւնը արդէն իր բոյնն էր զրել նրա սրտում: Ներսէս կաթողիկոսի հաշտութիւնը Եսայու հետ շատ կարճատե եղաւ. նա խղուեց հէնց այս փափուկ ժամանակներում. Ներսէսը քաջուել էր Երից Մանականց վանքը և իր եղբայր Սարգսի ու մի քանի իւզբաշխների հետ հակառակորդի դիրք էր բռնել, դառնալով թուրքերի կողմնակից: Այս դաւաճանները բանը այն տեղն էին հասցրել, որ նոյն իսկ յարձակում էին հայ զիւղերի վրայ և կողոպտում նրանց: Բայց կար աւելի վտանգաւոր դաւաճան: Դրա անունն էր Մէլիք-Բաղըր, հիմնելով իր համար առանձին բերդ, նա մեծ շփոթութիւն էր մտցնում հայերի մէջ և նրանց ամեն մի գործը հասցնում էր Շահ-Թահմազի ականջին: Ինչպէս յատուկ է ստոր

դաւաճաններին, Մէլիք-Բաղըը, ճաշի հրաւերելով իր մօտ 55 նշանաւոր մարդիկ հայոց զօրքերից, բոլորի գլուխները կտրել տուեց և ուղարկեց Շահին: Քանի կենդանի էր այդ մարդը, հայերի միաբանութիւնը միշտ վտանգուած պիտի լինէր. ուստի Սղնախում վճռուած էր քարուքանդ անել նրա բերդը, վերացնել մէջ տեղից այդ անխիղճ մատնիչին:

Հայ զինուորութեան համար այս դաւաճանութիւնները մոայլ հանգամանքներ էին: Բայց նրանք վհատութիւն, կազմալուծութիւն պատճառել չը կարողացան: Սղնախները արդէն անուն էին հանել իրանց գործողութիւններով: 1723-ի աշնանը թիւրքաց մի ահագին բանակ յարձակուեց Փանձակի վրայ և աւերեց նրա մի մասը: Շատ հայեր գերի ընկան, իսկ վնասուածների մեծ մասը, մերկ ու բոբիկ, փախաւ Մեծ Սղնախը, հայ զօրքերի պաշտպանութեան տակ մտաւ: Հայերը ոչ միայն պատրաստակցին իրանց դժբախտ եղբայրակիցներին, այլ և մի պատգամաւորութիւն ուղարկեցին Իբրահիմ փաշայի մօտ և պահանջեցին որ նա արձակէ գերի հայերին: «Դու ուղարկուած ես Փանձակը գրաւելու և ոչ թէ խաղաղ մարդկանց գերելու համար», — ասում էր հայոց զօրքը: Եւ Իբրահիմը կատարեց այդ պահանջը, ի հարկէ աւելի սիրտ չահելու համար, քան երկիւղից զրդուած: Սիրտ չահելը ունէր առանձին նպատակ. թիւրք կառավարութիւնը աշխատում էր իր կողմը գցել հայոց զօրքը: Իբրահիմը մարդ ուղարկեց հայերի հրամանատար Մէլիք-Աւանի մօտ և առաջարկեց նրան միանալ թիւրք բանակի հետ: Հայերը մերժեցին այդ առաջարկութիւնը: Թէև այդ ժամանակ նրանք դեռ չէին ստացել Պետրոսի յուսադրական հրովարտումը, բայց և այդպէս, հաւատում էին որ անց օգնութեան չեն մնայ և առաջ կը տանեն իրանց գործը:

Բայց զօրքան զրական նշանակութիւն ունէին ի վան կարապետի բերած կայսերական թղթերը: Որ Պետրոս Մեծը քրիստոնեաներին ազատելու անկեղծ ցանկութիւն ունէր, զրա մասին կասկած չէինել չէ կարող: Բայց քաղաքական հանգամանքները կայսրի անձնական կամեցողութիւնից զօրաւոր էին: Թիւրքիայի դիմադրութիւնը անխորտակելի էր. այդպիսի հանգամանքներում պահանջը առաջ տանել կարելի էր միայն պատերազմի միջոցով: Ռուսաստանը չէր կարող պատերազմի աւերանքներին ենթարկուել Անդրկովկասի մի քանի երկրների համար: Եւ նրա կառավարութիւնը, կասպիական նուաճումներին օրինական ձև տալու համար, ստիպուած եղաւ պաշտպանողական դաշնակցութիւն կապել Պարսկաստանի հետ: Հայերին ուղղուած հրովարտականները գրուեցան յունիսին. իսկ նոյն 1723-ի սեպտեմբերի

Յունիս, 1901.

12-ին Պետերբուրգում ռուս լիազորները և Թահմազի գեապան Իսմայիլ-բէկը ստորագրեցին ռուս-պարսկական դաշնագիրը: Երկու պետութիւնների մէջ համաձայնութիւն էր կայանում այսպիսի պայմաններով. Ռուսաստանը ստանում էր Դերբենտը, Բաղուան իրանց չրջականերով, Գիլան, Մազանդարան և Աստրաբադի նահանգները և դրա փոխարէն պարտաւորւում էր իր զօրքերով պահպանել Շահի դահը, կռուել նրա թշնամիների դէմ և ճնշել ամեն մի ապստամբութիւն, որ բարձրանում էր Շահի իշխանութիւնը խախտելու համար: Դաշնագրի հինգերորդ յօդուածը ասում էր. «Նորին կայսերական մեծութիւնը խոստանում է որ ամեն ժամանակ բարեկամ կը համարէ նրանց, որոնք բարեկամ են Շահին ու պարսից կառավարութեան և թշնամի նրանց, որոնք Շահի ու պարսից կառավարութեան թշնամիներ են. ամբողջ պարսկական պետութեան մէջ եթէ որեւիցէ մէկ կողմից թշնամական դործողութիւն լինի, կայսրը պիտի օգնէ այդ թշնամութիւնները զսպելու համար *):»

Այս դաշնագրութեան ուղիղ հետևանքն այն էր, որ քրիստոնէսայ հայերի և վրացիների ազատութեան միտքը դառնում էր մի բան, որին այժմ պիտի հակառակուէր Ռուսաստանը, քանի որ իր վրայ էր վերցրել այսպիսի պարտաւորութիւններ: Թէև Թահմազ-Շահը չընդունեց այդ պայմանները, թէև օսմանեան կառավարութիւնը սնդուում էր թէ Թահմազը այդպիսի դաշնակցութիւններ կնքելու իրաւունք էլ չունի, քանի որ դեռ կենդանի է նրա հայրը, բայց ռուսաց կառավարութիւնը միայն այդ թղթի վրայ կարող էր հաստատել իր տիրապետական իրաւունքները կասպից ծովում. ռուսի և ամուր հաստատուելով դաշնագրի մէջ յիշուած տեղերում, յայտարարեց որ թոյլ չի տայ որ և է մէկին խանգարել այդ տիրապետութիւնը: Պէտք էր սպասել, որ դաշնագրի մի կողմը կատարելուց յետոյ, ռուսները կը սկսեն կատարել և միւս կողմը: Սպահանում նստած էր Մահմուդ-Շահը և մի բարբարոս ինքնակալի նման անգթութիւններ էր անում: Բայց ռուսաց զօրքը չը գնաց նրա դէմ, որպէս զի, դաշնագրի զօրութեամբ, զէնքի ոյժով վերահաստատէ Սէֆէվիների թագաւորական իրաւունքները:

Այնուհետև Պետրոսը, ի հարկէ, այլ ևս չէր կարող յոյսեր տալ հայերին: Յարաբերութիւնները ընդունում են այլ կերպարանք: Նոր դրաւած երկրների մէջ պէտք էր վստահելի տարր բնակեցնել. այդ նպատակով Պետրոսը կարգադրութիւններ է

*) Юзефовичъ—„Договоры Россіи съ Востокомъ“ СПб. 1869, т. I, 188.

անում որ հայերին և վրացիներին գրաւեն դէպի Կասպեան ափերը, իսկ մահմեդական, մանաւանդ սիւննի մահմեդական տեղացիներին, որքան հնար է, դուրս մղեն:

Հայերը տեղեակ չէին այս դիպլոմատիական անց ու դարձին և շարունակում էին առաջուայ նման խնդրել Պետրոսին, որ շտապեցնէ իր արչաւանքը: Մինաս վարդապետը անշէջ եռանդով տեղեկութիւններ էր հաղորդում այն բոլոր դէպքերի մասին, որոնք տեղի էին ունենում Արեւելքում: Թէ որքան լաւ էր նա կազմակերպել տեղեկութիւններ ժողովելու զործը, ցոյց է տալիս մի ընդարձակ և շատ մանրամասն յիշատակադիր, որ գրուած է Ռէշտում 1723 թուականի օգոստոսին *): Զուղայեցի մի հայ վաճառական, Պետրոս դի-Սարգիս Գիւլաննց, թողնելով իր առևտրական գործերը, ծախսում է իր միջոցները հայրենիքի փրկութեան գործի համար: Նստած Ռէշտում, ուր ամեն կողմից հայեր էին գալիս առևտրական և այլ գործերով, նա մանրամասն տեղեկութիւններ է հաւաքում այդ հայերից Մինաս վարդապետի համար: Կովկասում, Թիւրքիայում, Պարսկաստանում փոքր ի շատէ աչքի ընկնող դէպք չէր լինում, որի մասին տեղեկութիւն չունենար Գիւլաննցը: Մի զարմանալի ընդունակութեամբ, որ պատիւ կարող էր բերել նոյն իսկ հեղինակ մարդկանց, նա դասաւորել է այդ կցկտուր տեղեկութիւնները, դուրս է դրել հակասութիւնները, և ստացուել է մի պատմական յիշատակարան, որի մէջ շատ մանրամասն են մանաւանդ Հիւսէյն-Շահի և Մահմուդի գործերը, աւղանցիների արչաւանքը, Սպահանի պաշարումը, օսմանցիների պատրաստութիւնները: Իր այդ նշանաւոր յիշատակարանը Պետրոսը ուղարկեց Մինաս վարդապետին և վերջում խնդրում էր նրան օգնութիւն հասցնել խեղճ հայոց ազգին, որին մեծ վտանգ էր սպառնում:

Այդ մի և նոյն վտանգի մասին էին անդադար գրում և մէլիքները: Նւ իրաւ, օսմանեան զօրքերը առաջ էին արչաւում մեծ եռանդով. նրանք շտապում էին ոչ միայն պարսկական ժառանգութիւնից չաղ-չաղ պատաններ խլել, այլ և ոչնչացնել Պետրոսի ձեռնարկութիւնները Կովկասում: Նրանց գլխաւոր նշնաւորներէից մէկն էր վաղօրօք գրաւել Բաղուն, որպէս զի զբաւնով պատուն Կասպից ծովեզերքը բռնած ուս զօրքերի զիծը, երկու կտրուած մասերի բաժանեն նրանց ու հարկադրեն հեռանալ այդ կողմերից: Թիւրք պետութեան համար սաստիկ վտանգաւոր էր մանաւանդ քրիստոնեաների միաբան ապստամբութիւնը և էրզրումի փաշայի պատգամաւորը էջմիածնում

*) «Կոունկ» ամսագիր, 1863, № 2-3:

բացարձակ ասում էր կաթողիկոսին, թէ հայերն են ոռոսներին բերել տուել, ուղղում են գրաւել նոյն իսկ օսմանեան երկիրները և դրա համար էլ 60 հազար զինուած մարդ են պատրաստել. պատգամաւորը իմաց էր տալիս, որ այդ բանը հայերին էժան չի նստի *): 1724-ին օսմանցիները նշանաւոր աջողութիւն ունեցան. նրանք գրաւեցին Խոյը, Համադանը, Երևանը, Վերջապէս հաստատուեցան Վրաստանում. Վախտանգը, ինչպէս տեսանք, յաղթուեց և փախաւ Իմերեթիաւ: Միայն Ղարաբաղն ու Ղափանն էին կանգնած օսմանեան արշաւանքի առաջ: Պարզ էր, որ օսմանցիները իրանց ամբողջ ծանրութեամբ պիտի ընկնեն այդ երկրների վրայ և ոտնակոխ անեն, որովհետեւ չէին կարող իրանց ետևում թողնել մի քանի տասնեակ հազար զինուած թշնամիներ և այդպէս առաջանալ դէպի Կասպից ծովը:

Ահա այս նեղ դրութիւնը հարկադրեց հայերին մի պատգամաւորութիւն ուղարկել Պետերբուրգ: Երեք հոգի էին պատգամաւորները—երկուսը քահանայ, Անտօն և Պետրոս անուններով, իսկ երրորդը աշխարհական, որին կոչում էին Քեօխվա-Չէլէբի: Պետրոս քահանան Շամախու Ղաբալա գիւղից էր, բայց երևում է որ Անտօնն էլ շամախեցի էր: Քեօխվա-Չէլէբիի մասին յայտնուած էր, որ նշանաւոր մարդ է, թէպէտ և մի զբժբախտ հայր. 19 հոգուց բաղկացած նրա ընտանիքը գերի էր Դաղստանում: Այդ երեք մարդկանց յանձնարարուած էր յայտնել Պետրոսին հայերի դժուար դրութիւնը, օսմանցիների արշաւանքը և ինչդրեւ օգնական զօրք: Ամբողջ վեց ամիս պատգամաւորութիւնը Աստրախանում սպասում էր թոյլտուութեան՝ Պետերբուրգ գնալու: Եւ երբ տեղ հասաւ, տեսաւ որ քաղաքական հանգամանքները բոլորովին փոխուած են:

Պետրոս Մեծը այլ ևս իրաւունք չունէր բողոքել օսմանցիների արշաւանքի դէմ: 1724 թուականի յունիսի 24-ին նա ինքը Բ. Դրան հետ դաշնագիր ստորագրեց, որով վերջ էր տրուում ոռոս-թիւրքական վէճերին: Համաձայնութիւնը կայացել էր այն մտքով, որ ոռոսները իրանց ձեռքում պահեն Կասպիական արեւմտեան ծովեզերքը, իսկ թիւրքիան վերցնէ Անդրկովկասի մնացած տեղերը և Ատրպատականը. Շամախին տրուեց դաղստանցի Դօւլթ-բէգին, սուլթանի վասսալին: Այսպէս, ուրեմն, Ղարաբաղն ու Ղափանն էլ օսմանեան սեփականութիւն էին: Այդ համաձայնութիւնը դեռ հայերին յայտնի չէր և նրանք չը գիտէին թէ ինչու ոռոսաց կառավարութիւնը այլ ևս չէ պատասխանում իրանց թղթերին:

*) Պետրոս Գիլանենց, «Կոունկ», 1863, № 3, էր. 196.

Ղարաբաղին ու Ղափանը շարունակում էին կռուել և սպասել օգնութեան: Էջմիածնի Աստուածատուր կաթողիկոսը մի նամակով յորդորում էր Եսայի կաթողիկոսին հնազանդուել օսմանցիներին, հաւատացնում էր որ օսմանցիներն էլ լաւ տիրողներ են: Ներսէս կաթողիկոսն էլ նոյն խորհուրդն էր տալիս. նա հօ առանց այդ էլ մահմեդականների կողմնակից էր, այժմ հաւատացնում էր իր հակառակորդին թէ իզուր է այլ ևս օգնութեան սպասում, քանի որ օսմանցիները մօտենում են Գանձակին և այնտեղից պիտի արշաւեն դէպի Ղարաբաղ: Բայց երկու կաթողիկոսների նամակներից, տեղի ունեցաւ մի վհատեցուցիչ եղելութիւն էլ, որ եկաւ հաստատելու թէ ամբողջ մահմեդական աշխարհում Ղարաբաղն ու Ղափանն են մնում այն քրիստոնէայ երկիրները, ուր բարձրացած է ազատութեան գէնքը: 1724-ին, Վախտանգը, կորցնելով ամեն մի յոյս, ընդ միշտ թողեց իր հայրենիքը և վերցնելով իր ամբողջ ընտանիքը, ուղևորուեց Աստրախան՝ Ռուսաստանում բնակութիւն հաստատելու համար: Դա մի ամբողջ գաղթականութիւն էր, որին մասնակցում էին վրաց ազգի բոլոր դասակարգերը, սկսած եպիսկոպոսներից և իշխաններից: Ընդամենը մօտ 1400 հոգի էին Վախտանգի հետ գնացողները. ով չէր կարողացել հաշտուել օսմանեան տիրապետութեան հետ, անդառնալի կերպով հեռանում էր իր երկրից: Եւ սակայն Եսայի կաթողիկոսն ու նրա հետ միաբանուած մէլիքները անդրդուելի մնացին: Ոչինչ չէր կարողանում յուսահատեցնել այդ ոգևորուած զինուորներին: Ղափանի և Ղարաբաղի մէջ հաստատուած կապը, երկու երկրներում էլ տեղի ունեցող պատերազմական աջողութիւնները հայ զօրքերին մոռացնել էին տալիս թէ կայ օսմանեան բանակ...

Հայ պատգամաւորութեան Պետրոս Մեծը կարող էր մի խորհուրդ միայն տալ—գաղթել Կասպից ծովի ափերը: 1724 թուի նոյեմբերի 10-ին նա մի հրովարտակ ուղղեց հայոց ազգին, որի մէջ ասուած էր թէ հայերը Ղարաբաղից և Ղափանից կամենում են գաղթել ոռոսաց նոր գրաւած երկիրները, ուստի ինքը, որ միշտ մի առանձին բարեհաճութիւն է ունեցել դէպի հայոց ազգը, ընդունում է այդ ցանկութիւնը և հրաւիրում է ամեքին, մեծին թէ փոքրին, անյապաղ գնալ բնակութիւն հաստատել այնտեղ: Խօսք կար որ ոռոսաց զօրքերը առաջնաւն մինչև Շամախի, որպէս զի հայերը նրանց պաշտպանութեան տակ դաղթեն, բայց Պետրոսը մերժեց զօրք տալը, ի նկատի ունենալով Թիւրքիայի հետ կնքած դաշնադրութիւնը: Նա հրամաններ գրել տուեց Դերբենտի, Բագուի, Գիլանի, Մազանդարանի կառավարիչներին, որ հայ գաղթականներին բնակութեան

տեղեր յատկացնեն: Ի վան Կարապետը մնացել էր Ղարաբաղում, մի թուղթ էլ նրան գրուեց որ համոզէ հայերին զաղթել:

Կայսերական հրովարտակը և ուրիշ թղթեր հայերին ուղարկուեցին Քեօխվա-Չէլէքի և Երկու քահանաների հետ: Սրանք ճանապարհ ընկան Պետերբուրգից նոյեմբերին և ճանապարհին ձմերեցին: Գարունը բաղուելուն պէս էլ չը կարողացան շարունակել ճանապարհը, որովհետեւ Շամախուն տիրած լեզգիները սաստիկ հսկում էին ճանապարհներին և պատգամաւորներէ մէկը ընկաւ նրանց ձեռքը, սպանուեց: Մնացածները տեղ հասան միայն 1725-ի մայիսին:

Մինչև այդ Ղարաբաղում արդէն սկսուել էր կոիւ օսմանցիների դէմ: Կանոնաւոր պատերազմ, ի հարկէ, չէր կարող լինել. հայերը փոքր զօրաբաժիններով լեռներից յարձակումներ էին գործում: Որքան էլ աջող լինէին այդ յարձակումները հայերի համար, բայց նրանք չէին կարող կանգնեցնել մի կանոնաւոր բանակի արշաւանքը: Եւ օսմանեան մի զօրաբաժին, բաղկացած մօտ վեց հազար մարդուց, երեք փաշաների հրամանատարութեամբ, մօտաւ Ղարաբաղ: Հայերը սպիալուած էին հնազանդութիւն ցոյց տալ, բայց դիմեցին խորամանկութեան. զօրքը մանր խմբերով—երկու հարիւրով, երեք հարիւրով—բաժանեցին զիւղերի վրայ և ապա այդ խմբերը կոտորեցին *): Ամբողջ բանակից միայն 150 մարդ ազատուեց կոտորածից: Երեք փաշաներից երկուսը սպանուեցան, երրորդը, Սալահ-փաշան, ընկաւ հայերի ձեռքը և յայտնեց որ օսմանցիները վճռել են ոչնչացնել հայերին, որպէս զի բաց ճանապարհ ունենան դէպի Կասպից ծովը: Հայերը ազատեցին և մօտ 200 քրիստոնէայ գերիներ, որոնք գտնւում էին օսմանեան բանակում:

Այս դէպքը տեղի ունեցաւ 1725 թուի մարտի 1-ին: Եսայի կաթողիկոսը մէլիքների հետ շտապեց թուղթ հասցնել ռուսաց կառավարութեան և յայտնել նրան թէ ահա օսմանցիներն էլ ևս կան, բայց կայսրի խոստացած զօրքը չը կայ: Օսմանեան բանակը բնաջինջ անելու մասին նրանք գրում էին. «Ահա այս արարք և գործ մեր ոչ թէ մերով կարողութեամբ է, այլ դքս ամենա-

*) Այս ձևի կոիւը, ինչպէս երևում է, շատ էր գործադրում Ղարաբաղում: Պետրոս Գիլանենցը պատմում է որ Ղանլու-Շաբան անունով իղբաշու երեք հարիւր մարդիկ կոտորուեցան Սեւտարանոց գիւղում այսպէս. այդ մարդիկ բաժանուեցին տների վրայ, և երբ մէլիքի տանից հրացանի ձայն լսուեց, ամեն մէկը վեր կացաւ և սպանեց իր հիւրին: Երեք, օսմանեան բանակի այս կոտորածն է, որ աւանդութիւնը ցիշում է կատարուած 1732 թուականին: Այդ աւանդութեան վրայ է հիմնուած իմ «Մէլիքի Սղջիկը» վէպը:

յաղթ զօրութիւնդ և օգնութիւն յուսայով, ապաւինեմք և համբերեմք սպասելով: Օսմանցիները հիմա, ի հարկէ, աւելի մեծ զօրքով կը գան Ղարաբաղի վրայ. և հայերը Քրիստոսի անունով աղաչում էին շտապեցնել օգնութիւնը: Այդ թղթի վերջում մի բնորոշ հանգամանք է չօչափուած: Դիմելով Դերբենտի և Բագուի ոռոս հրամանատարներին, հայերը զարմանում էին թէ ինչպէս է որ կայսրից ոչինչ պատասխան չեն ստանում. արդեօք դրա պատճառն այն է, որ հայերի գրած թղթերը չեն ուղարկուում Ռուսաստան, թէ ուղարկուում են, բայց այնտեղից չէ ստացուում պատասխան:

Ահա այսպիսի անհամբեր սպասողութեան, յուզմունքների մէջ էր Ղարաբաղը, երբ Քեօլսլա-Չէլէքին և Անտօն քահանան ներկայացան Մէլիք-Աւանին Շօշու գիւղի *) մօտ եղած բանակում և յայտնեցին որ թղթեր ևն բերել Պետերբուրգից: Իսկոյն մարդիկ ուղարկուեցին Եսայի կաթողիկոսի և մէլիքների ետեղի: Նրանք հաւաքուեցան. կարգացուեց Պետրոսի հրովարտակի հայերէն թարգմանութիւնը: Ընդհանուր զարմանք, ամենքը սալած ևն: Ոչ դժի մշտքովն անգամ չէր անցել գաղթել կասպից ծովեզերքը, իսկ հրովարտակի մէջ տեսած էր թէ հայ պատգամաւորութիւնն է աւել թէ Ղարաբաղն ու Ղափանը պատրաստ ևն գաղթելու: Բոլորում ևն լեռնցի առաջնորդները մի շրջանի մէջ և ասում ևն.

—Այ տէր-Անտօն, մենք քեզ ուղարկեցինք, գնա՛, իմացիր, տես ղօշուն կը գնայ մեղ, մին քօմակ և ձար կը լինի թէ ոչ. երբ ասացինք մեզ համար տեղ ուղիւր Դարբանդ, Բագու, Գիւլան և կամ այլ տեղ որ մենք գնանք տեղն կենանք. մեր գիրն որ դու տարար, հաստ էր գրած թէ մեզ տեղ տուր, որ գնանք տեղդ կենանք...

Անտօն քահանան չը կարողացաւ պատասխան տալ. նա խաբել էր, նա իրանից էր յայտնել ոռոս կառավարութեան թէ Ղարաբաղի ամբողջ ազգաբնակչութիւնը, որ հարիւր հազար տներից աւել է, ինչպէս նաև Ղափանը, ուր աւելի մեծ քանակութեամբ հայեր ևն ապրում, ինքնայօժար կամենում ևն գաղթել: Խաբերայ քահանան թողեց իր բերած թղթերը և երկու օրում անյայտացաւ, փախաւ Ղարաբաղից: Մնացածը բացատրեց Քեօլսլա-Չէլէքին:

—Դուք մեր տուն քանդեցիք, ասացին մէլիքները:

*) Շօշու գիւղը գտնւում է Շուշի քաղաքի մօտ: Վերջինս իր անունը հէնց այդ գիւղից է ստացել:—Ահա՛ մի վկայութիւն էլ, որ Փոքր Աղնախը գտնւում էր Քիրսի լեռներում, այժմեան Շուշու շրջականերում:

—Ախրէր, ես ի՞նչ անեմ, իմ անուհս գրած չէր գրումն, ինքն (այսինքն քահանան) միայն գրել երես ինչ որ իւրեան մաթլաքն էր:

—Մեր գրերն թամամի տարանք:

—Իւզը աչոյ գիրն, Իվան Կարապետի գիրն տարանք, ամա Եսայի կաթողիկոսի գիրն Ղամբախ ջղոտեց, ինքն մէկ գիր գրեց, տարաւ առ թագաւոր *):

Գործուած էր անազին սխալ: Եսայի կաթողիկոսը փորձեց դրստել այդ սխալը յուլիսի 25-ին գրած իր նամակով. նա յայտնեց որ իրանք գաղթելու մասին չեն խնդիրք ներկայացրել, որ գաղթելը անհնարին է այդքան անազին բազմութեամբ, եթէ ոուսաց զօրքերը չը մօտենան Ղարաբաղի սահմաններին: Թէև կաթողիկոսը յայտնում էր որ հայերը չեն ընդդիմանայ գաղթելու հրամանին, բայց դա ճիշտ չէր ընդհանուր տրամադրութեան տեսակէտից: Հայերը լսել անգամ չէին ուզում գաղթելու մասին: «Եւ իրաւ, մեծ իրաւունք ունին,—գրում էր իշխան Դօլգօրուկովը.—առաջինը, որ պիտի թողնեն իրանց վաճառականութիւնը, երկորդ՝ այնպիսի ընտիր և հաճելի տեղեր թողնելով, գնալ այնպիսի անպտղատու տեղեր, ուր իրանց ապրուստի համար ոչինչ չեն կարող գտնել» **):

Գրելով իր թուղթը, Եսայի կաթողիկոսը չը գիտէր որ Պետրոսը այլ ևս չը կայ: Մեծագործ կայսրը վախճանուել էր 1725 թուի յունուարի 28-ին:

Լ է Օ

(Լը Շարունակուի)

*) ЭЗОВЪ, стр. 424.

**) Ibid, стр. 435.

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

25) В. Ө. ТОТОМІАЦЪ. Потребительныя общества на западѣ. Изда-
ніе В. Н. Звонарева, С. Петербургъ, 1901. цѣна 1 р. 75 к.

Մենք չափ անգամ են ընդգծել այն բնորոշ յատկութիւ-
նը, որով արեւմուտքի զաւակը տարբերուում է արեւելցուց.
առաջինը ինքնալստահ և գիտակցարար մաքառում է իր զրու-
թիւնը աւելի լաւ պայմանների մէջ գնելու համար, իսկ երկ-
րորդը՝ թուլամորթութեամբ ամեն բան թողնում է ճակատա-
գրի կամ բախտի բերմունքին: Արեւելցու և արեւմտեան մարդու
հոգեկան այդ հիմնական տարբերութիւնը աչքի է ընկնում և
տնտեսական յարաբերութիւնների մէջ: Առաջինի կարծիքով
անհատները իրանց փոքրիկ չնչին միջոցներով չեն կարող ընդ-
դիմադրել հարստութեան եւ ոյժի ճնշումներին, մինչդեռ երկ-
րորդը գիտէ համախմբել, միացնել և կազմակերպել աննշան
անհատական ջանքերը և այդպիսով ստեղծել հզօր ընդդիմա-
դրական զօրութիւններ՝ մաքառելու համար թէ դրամի և թէ
բռունցքի դէմ:

Այդպէս անա արեւմուտքի չքաւոր մարդիկ տնտեսական
պայքարի համար միանալով կազմում են կօօպերացիաներ կամ
ընկերակցութիւններ, որոնց մասին դադարաւոր չունեն գրաստի
համբերութեամբ իրանց դառն վիճակը տանող արեւելցի զըր-
կուած դասակարգերը: Արեւելցին ի հարկէ չափ լաւ գիտէ, որ
մանրով առնտուր անողը չափ թանգ է ծախում ապրանքը և
ծծում է սպառողից շատ և շատ աւելի, քան ապրանքի իսկա-
կան արժէքն է. նա գիտէ, որ մեծ քանակութեամբ կամ առա-
ջին ձեռքից ապրանք գնելը աւելի ձեռնտու է, բայց նրա խել-
քը չի կտրում այդ մանրավաճառ խանութպանների ճանկերից
ազատուել: Մինչդեռ արեւմուտքի զաւակը շատ հեշտ միջոց է
գտել մաքառելու այդ չարիքի դէմ. չքաւոր սպառողները միա-
նում են և կազմում սպառողական ընկերակցութիւններ, որոնք

գնում են առաջին ձեռքից կամ մեծ քանակութեամբ վաճառողներից ապրանք, գործածութեան անհրաժեշտ մթերք ու իրեր և ապա մատակարարում այդ բոլորը շատ աժան գնով իրանց անդամներին:

Այդպիսով այն՝ ինչ աւելորդ տեղը մանում էր միջնորդ խանութպանների զրպանը, մնում է սպառողների զրպանում և, բայցի այդ, ապրանքը ազատ է լինում կեղծումներից: Բայց ընկերակցութիւնների կամ կօօպերացիաների դերը դրանով չէ սահմանափակուած: Յայտնի է թէ ինչ մեծ դեր է կատարում ներկայ տնտեսական կեանքում և կրեդիտը, վարկը: Բայց դժբաղդաբար դրանից էլ օգտւում են միայն ունեւորները, իսկ չքաւորը վարկի յոյսով չէ կարող ոչ մի ձեռնարկութիւն սկսել: Բանկերի անդուկները բաց են միմիայն ունեւորների համար. իսկ չքաւորին մնում է վաչխառուներից սոսկալի շահով պարպը վերցնել: Այդպէս էլ անում է արեւելիքն: Մինչդեռ արեւմուտքի զաւակը, փոխարէն վաչխառուներին դիմելու, կազմում է փոխադարձ վարկի կամ փոխատու—խնայողական ընկերակցութիւններ: Ուրեմն թէ միջնորդ խանութպանից, թէ փոխատու վաչխառուի ձանկերից՝ ինքնօգնութեամբ ազատւում է եւրոպացի չքաւորը: Մնում է միայն խոշոր արդիւնագործութեան մէջ գործարանատէր-ձեռնարկուների հարստահարող գերիշխանութիւնը: Դրա դէմ էլ, բայցի բանուորական հզօր կազմակերպութիւնները, ուղղուած են երրորդ տեսակի կօօպերացիաները, այսինքն արդիւնաբերական ընկերակցութիւնները: Աշխատողները միանում են, ձեռք բերում արդիւնաբերութեան գործիքներ և իրանց աշխատանքով ստեղծած ապրանքների կատարեալ տէր դառնում իրանք, առանց առիւծի մաս հանելու դրամատէր-ձեռնարկուին...

Ահա այդ երեք տեսակ ընկերակցութիւնների շնորհիւ (սպառողական, փոխատու—խնայողական և արդիւնաբերական) չքաւոր դասակարգերը Արեւմուտքում կարողանում են մաքառել միջնորդ-խանութպանի, փոխատու-վաչխառուի և տղաբուկ-գործատիրոջ ձանկերից:

Պ. Տօտօմեանի դիրքը խօսում է միմիայն սպառողական ընկերակցութիւնների մասին, այսինքն այն ընկերակցութիւնների, որոնց նպատակն է ազատել սպառողներին միջնորդ-խանութպանների հարստահարումներից: Հեղինակը տեղն ու տեղը ուսումնասիրել է Արեւմտեան Եւրոպայի սպառողական ընկերակցութիւնները: Միայն Անգլիայի մասին, որ իսկապէս կօօպերացիա չարժման հայրենիքն է, այս դրքում հեղինակը ոչինչ չէ խօսում: Նա ծանօթացնում է Աւստրօ-Ունգարիայի, Դա-

նիայի, Հօլանդիայի, Շվեդիայի, Սպանիայի, Շվեյցարիայի, Բելգիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ընկերակցութիւնների մասին: Հեղինակը, առաջին աղբիւրներից օգտուելով, ծանօթացնում է այդ ընկերակցութիւնների գործունէութեան հետ: Այդ ընկերակցութիւնները կարող են օրինակ դառնալ Ռուսաստանի նմանօրինակ ընկերակցութիւնների համար:

Պ. Տօտօմեանցի բերած թուերը և ճիշտ ֆակտերը ամենայնոք տես մարդուն կարող են համոզել ընկերակցութիւնների բարերար ազդեցութեան մասին՝ հասարակական տեսակէտից: Շատ ցանկալի է, որ հայ ընթերցողը, որ աւելի հնազդեցական — լեզուաբանական յօդուածների է սովոր, իր ուշադրութիւնը դարձնի շուրջը կատարուող անտեսական կեանքի հսկայական հոսանքների վրայ, որոնցից մէկը այնքան հետաքրքիր ձևով պատկերացրուած է պ. Տօտօմեանցի այս գրքում: Պէտք է տեսնել թէ արևմուտքի մարդը փոխարէն «լալու ու ողբալու» կամ ճառելու, ինչպէս է կեանքի մէջ իրագործում ամենախոշոր ծրագիրները: Դէպի մաքուր օդ, ընթերցող, այդ գերեզմանների և մագաղաթների խեղդուկ մթնոլորտից!

Լ. Ս.

26) Գ. ՄԵԼԻՔ-ԼԱՐԱԳ-ԵՌԶԵԱՆ. Գերմանական Օգնութեան Ընկերութիւնները Տաճկա-Հայաստանի համար (հետազօտութիւն), Արտատպուած 1899—1900 թ.թ. „Մուրճ“ ամսագրից, Թիֆլիս, 1901 թ., գինն է 35 կոպէկ:

Հայկական կոտորածներից յետոյ Եւրոպայում կազմակերպուեցան զանազան ընկերութիւններ՝ հայ որբերին օգնելու համար: Այդպիսի ընկերութիւններ հիմնուեցին 1896 թ. նաև Գերմանիայում, այնտեղի հոգեւորականութեան ղեկավարութեամբ: Այդ ընկերութիւնները մեղադրուած էին նրա մէջ, որ նրանց գործիչները՝ օգնութիւն հասցնելով թշուառացած հայերին, նպատակ ունեն դաւանափոխ անել, հեռացնել աղգային եկեղեցուց և գերմանացնել խնամուողներին: Հեղինակը ծանօթանալով գերման-հայկական ընկերութիւնների գործունէութեան հետ, աշխատում է նախ մի պատկեր տալ այդ ընկերութիւնների գործունէութեան ճաճկաստանում և երկրորդ՝ պարզաբանել «դաւանափոխութեան» հարցը:

Ընթերցողը ստանում է այդ հարցերի մասին բազմակողմանի տեղեկութիւններ, քաղած առաջին աղբիւրներից: «Հիլֆսբունդը» դաւանափոխական և քաղաքական նպատակների մասին այնու-

ամենայնիւ դրական պատասխան համարեա չի ստանում ընթերցողը: Այն եզրակացութիւնը, որին դալիս է հեղինակը մի քիչ առաջ, յետոյ՝ վերջաբանում մի քիչ փոխուում է, որովհետև հետագոտողը տատանւում է երաշխաւորել, որ ապագայում չեն խախտուիլ այն մարդասիրական, անշահ սկզբունքները, որոնցով մտադրութիւն ունէր զեկավարուել Հիլֆսբունդը իր գործունէութեան սկզբում: Անշուշտ մարդասիրութիւնը, միսիօնարական նախանձախնդրութիւնը և քաղաքական նպատակները այնքան խճճուած են Հիլֆսբունդի գործիչների մէջ, որ դժուար էլ է միմիայն դրական, իդէալական կողմեր սպասել: Սակայն անկասկած է, որ այնու ամենայնիւ Տաճկաստանի բռնութեան թշուառ զոհերը մեծ օգնութիւն են ստանում գերմանական հայասէրներից: Հետազոտութեան մէջ դովելի զգուշութեամբ և շրջահայեցողութեամբ արած եզրակացութիւնները ցոյց են տալիս թէ յամենայն դէպս հարցը շատ աւելի բարդ է, քան թւում է առաջին անգամից: Յանկալի է, որ հեղինակը չարունակի հետեւել Հիլֆսբունդի գործունէութեան եւ բաժանի հայ ընթերցողների հետ այն նոր տեղեկութիւնները, որ նա ձեռք կը բերի իր հետազոտած հարցի մասին:

Լ. Ս.

27) Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ. Գրչի հաճախեալ. Մոսկուա, 1901 թ. 88
երես, Գինն է 50 կ.:

«Էն հանաքին ի՞նչ ասեմ, որ կէսը զորթ չը լինի», ժողովրդի այս խօսքերը հեղինակը բերում է իբրև նշանաբան իր գրքոյկի: Եւ իսկապէս, պ. Ծատուրեանը հանաքի ձևով դառն ճշմարտութիւններ է ասում ընթերցողին: Անշուշտ նոր մտքեր և նոր խօսքեր չը կան թէ այդ «հանաքների» և թէ առակների մէջ, այլ նորութիւնը գողտրիկ, գեղարուեստական ձևակերպութեան մէջ է: Այն, ինչ մտրակել և մեր հրապարակախօսները իրանց յօգուածներում, այժմ բանաստեղծը մի քանի կենդանի գծերով պատկերացնում է իր ոտանաւորներով: Այդ հանաքներէ մէկը, «Ժողովը», արդէն սպուած էր մեր ամսագրի յունուարի համարում: Առաջ բերենք մի երկու «հանաքներ» էլ, գրգռելու համար ընթերցողի ախորժակը այդ նոր ձևի մտրակումներով:

Ահա ձեզ «Կաշառուած մամուլը».

Երբ հայոց թերթում
Ներքող եմ կարդում
Տըզըուկ աղայի անուան ու փողին,
Իսկոյն իմ մըտքում
Մի հարց է ծագում.
«Թերթը ո՞րքան է ստանում տողին...»:

Իսկ «Հայկական բանակուռի» պատկերը այսպէս է նկարագրում պ. Ծատուրեանը.

—Մի՛տք, իմա՛ստ չը կայ ձեր գրուածներում...
«Բայց դուք, ո՛վ պարոն, փաստե՛ր չէք բերում...
—Փաստե՛ր էք ուզում. համեցէ՛ք, իսկոյն,—
Ձեր քիթը մեծ է, ծեր դէմքը—դըժդոյն,
Աչքերնիդ՝ ակնոց, միւրութնիդ՝ երկար...
Ըստ լօգիկայի՝ դուք շա՛տ էք տըխմար...
«Բայց դո՞ւք... ով պարոն, մի՞թէ կարող էք
Ողջամիտ դատել, երբ զիշեր ցերեկ
Թութուն էք քաշում—ձեր փոքրիկ քըթից
Ծուխն է անպակաս, զուրկ էք և միւրքից...
Դո՛ւք էք տըխմարը՝ ըստ լօգիկայի,
Եւ ընթերցողն էլ այդ կը վըկայի»...

Առակները թարգմանուած են Թլօրիանի, Լաշամբօղի, Գեղերտի, Բատիսբօնի և այլն առակներից:

Առհասարակ հասարակական ցաւերի մօտով հանգիստ չէ կարողանում անցնել մեր բանաստեղծը և նրա «Գրչի հանաքների» տակ դժուար չէ նկատել վիշտ և թագուն արտասուք... Տխուր է և այն ժպիտը, որ երևում է գրքի չապկի վրայ նկարած աղջկայ երեսին: Ի դէպ, պ. Սուրէնեանցի նկարած այդ գլուխը բաւական տարօրինակ է իր մեծութեամբ և մազերի խտութեամբ...

Կասկած չը կայ, որ այս չքեղ հրատարակուած գրքոյկը սիրով կ'ընդունի մեր ընթերցող հասարակութիւնը:

Լ. Ս.

ՉՅ) ԲԺՊ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ. «Վաս ցաւ» (պատկերազարդ),
Քիֆլիս, 1901 թ., գինն է 6 կոպ.:

Այս գրքոյկը Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութիւնն է և կազմում է բժպ. Վահան Արծրունու ձեռնարկած «Բժշկի գրոյցներ» սերիայի № 2: Գրքոյկը, յարգելի հեղինակի միւս հրատարակութիւնների նման, կազմուած է պարզ

և մատչելի լեզուով: 32 փոքրագիր երեսների մէջ ընթերցողը ստանում է ամբողջ տեղեկութիւն սիֆիլիս կամ «վատ ցաւ» հիւանդութեան մասին. նա իմանում է թէ ինչ ըստ է վատ ցաւը, ինչպէս են մարդիկ վարակւում այդ ցաւով, ինչպէս է սիֆիլիսը տարածւում զիւղերում, որոնք են վատ ցաւի նշանները, ինչպէս մարդ պիտի պահպանի իրան վատ ցաւից և, վերջապէս, թէ սիֆիլիսոտը երբ կարող է ամուսնանալ: Գրքովը զարդարուած է 8 հատ նկարներով, որոնք ներկայացնում են խոցեր մարմնի զանազան մասերում: Այստա որ նկարները աֆրան էլ պարզ և աճողուած չեն: Ցանկալի էր, որ հեղինակը խօսելով վատ ցաւի նշանների մասին (երես 15), պարզէր պինդ շանկրի և փափուկ շանկրի տարբերութիւնը, այլապէս ընթերցողի հասկացողութեան մէջ վատ ցաւի նկատմամբ բաց տեղ է մնում:

«Վարակուելուց (այսինքն թոյնը մի տեղ դիպչելուց) մի քանի օր անցած, ասում է հեղինակը, այն տեղում, որտեղ թոյնը ընկել է, դուրս է գալիս ոսպի մեծութեամբ խոցիկ»: Այդ կարելի է ասել միայն փափուկ շանկրի մասին, իսկ պինդ շանկրը, որի հետևանք է սիֆիլիսը և որին պիտի վերաբերէր վերև բերած կտորը, ինչպէս յայտնի է, երևում է վարակուելուց 3—6 շաբաթ անց: Բայց դուցէ այդ տպագրական սխալ է: Ի՞նչ ասել կ'ուզի որ ժողովրդի մէջ այս գրքոյկի տարածուելը շատ և շատ ցանկալի է:

ԲԺ. Գ. Ս.

229) ԱՆԳՐԱՆԻԿ. Տ(Դ)ԷՐՍԻՄ: Համապարփողութիւն և հեղափոխութիւն: Հրատարակութիւն Քիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան. Քիֆլիս, 1901. 237 էր. 80%, գինը 75 կոպէկ:

Էրդրումի, Դիարբէքիւրի և Խարբերդի մէջ տեղ բարձրացած է մի խորհրդաւոր լեռնաշխարհ, Դէրսիմը: Մինչև այժմ էլ նա մի անժանօթ երկիր է, մինչև այժմ էլ թիւրքաց իշխանութիւնը չէ հաստատուել այդ ազատ բարձրութիւնների վրայ, թէև շատ անգամ են թիւրք զօրքերը թնդանօթներով արշաւել այնտեղ ազատասէր դէրսիմցուն ընկճելու և Ստամբուլին հպատակեցնելու համար:

Խորհրդաւոր է Դէրսիմը իր անյայտութեամբ: Ի՞նչ կայ այդ անմատչելի բարձրութիւնների վրայ—չատերին չէ յայտնի, թէև եւրոպայի մի քանի ճանապարհորդներ (օր. Տէյլօր) աշխատել են, որքան հնարաւոր է, ուսումնասիրել այդ լեռնաստա-

նում ապրող ազգաբնակիչները: Այնտեղ ապրում է քրդերի մի առանձին ցեղ, որ կոչւում է Ղզլբաշ: Նրա լեզուն խառնուրդ է զանազան լեզուներից վերցրած բառերի, նրա կրօնն էլ մի այդպիսի հաւաքածու է: Մեզ համար հետաքրքրական է, որ զէր-սիմցի քրդի լեզուի և թէ կրօնի վրայ ազդեցութիւն են արել և հայերը: Դէրսիմում ապրում են և հայեր:

Ահա այս վերին աստիճանի հետաքրքրական, խորհրդաւոր աշխարհի հետ ծանօթացնելու միտքն ունի այժմ գոյութիւն չունեցող Հայոց Հրատարակչական Ընկերութեան հրատարակած այս գիրքը, որ լայս տեսակ նորերում: Պ. Անդրանիկ երկու անգամ փոքրիկ ճանապարհորդութիւններ է կատարել Դէրսիմի կողմերում, հաւաքել է տեղեկութիւններ լեռնաստանի բնակած բնակիչների նիստ ու կացի, մօտիկ անցեալի մասին և այս բոլորը ամփոփել է իր գրքում:

Հեղինակը հանգուցեալ Սրուանձտեան եպիսկոպոսի խիստ ազդեցութեան տակ է կելլ: Յայտնի է, որ Սրուանձտեան իր ճանապարհորդական նկարագրութիւնների մէջ աւելի բանաստեղծ է, աւելի հայրենասիրական ղեղումներ կրել, քան սառնարիւն գիտող, նկարագրող: Լինում են երկու տեսակ ճանապարհորդներ, մէկը ճանապարհի տպաւորութիւններից զուրս ոչինչ չէ ճանաչում. նա պատկերահանի պէս նկարագրում է բնութիւնը, իր զգացմունքները, իր տրամադրութիւնը, իսկ միւսը, անտես անելով այդ բոլորը, տալիս է լուրջ ուսումնասիրութիւն երկրի ներկայի և անցեալի մասին, քննում է մարդկանց, լուսարանում է նրանց ընկերական, տնտեսական, քաղաքական կեցութիւնը: Երկու տեսակ ճանապարհորդական նկարագրութիւնների մէջ կայ մեծ տարբերութիւն: Առաջին տեսակը տուրիստի թուոյիկ տպաւորութիւններն են, որոնք ընթերցանութեան հաճելի, բայց չուտ մոռացուող նիւթ են տալիս, եթէ զրոյդ ճիշտ որ բանաստեղծ է, ճիշտ որ կարողանում է իր տրպաւորութիւններին արտայայտութեան գեղեցիկ ձև տալ: Այդպէս է Սրուանձտեանը իր ճանապարհորդութիւնների այն մասում, ուր նա հնութեան յիշատակներ կամ ազգագրական նիւթեր հաւաքող չէ, այլ տեղեր տեսնող ու նկարագրող: Իսկ լուրջ ուսումնասիրութիւնները թէև այնքան հեշտութեամբ չեն կարգադրում, բայց մի երկիր ճանաչելու ամենազրական, վստահելի միջոցներն են տալիս:

Պ. Անդրանիկին չէ կարելի համարել առանձնապէս աչքի ընկնող, նկարագրական լաւ ձիրք ունեցող տուրիստ: Այդ կողմից նա համեմատուել էլ չէ կարող Սրուանձտեանի հետ: Թէ ճանապարհորդութիւնների և թէ տեղագրութեան մէջ նա կըց-

կտուր տեղեկութիւններ հաղորդող է, տալիս է պատասխաններ և ոչ ամբողջութիւն, զարթեցնում է հարցեր, բայց չէ վճռում նրանց: Նրա տպաւորութիւնները միանման են, ընդհանրապէս դժգոյն: Բայց և այդպէս, չենք կարող ասել թէ գրքի մէջ կարգալու բաներ չը կան: Հետաքրքրութիւն է զարթեցնում դէրսիմյի հայը իր նիստ ու կացով, իր հայերէնով. տեղ-տեղ ձեզ գրաւում են լեռնային տեսարանները, լաւ է մանաւանդ Հաւլորի ս. Կարապետ վանքի նկարագրութիւնը: Դուք զգում էք, որ ձեզ տարել են մի խորհրդաւոր, վայրենի անկիւն, ուր աւազակութիւնը, արեան պաշտամունքը մարդու աւետարանն են կազմում:

Աւելի խստապահանջ լինել դէպի հեղինակը մենք անարգարութիւն կը համարէինք: Պէտք է նկատի ունենալ երկիրը, ուր չէ կարողանում մանել նոյն իսկ օսմանեան զինուորը, ուր այնքան քիչ են եղել եւրոպացի հետազոտողներ: Գիրքը մի համեստ հասկացողութիւն է կազմել տալիս հեղինակի պատրաստութեան մասին: Աւելին տալ նա չէր կարող: Բայց ինչ տուել է, մեր գրականութեան համար աւելորդ բան չէ: Սրուանձ-տեանի ճանապարհորդութիւնների մէջ մի քանի կցկտուր յիշողութիւններ ենք գտնում Դէրսիմի մասին: Իսկ այստեղ մանրամասնութիւններ չատ կան: Հեղինակի մատուցած ծառայութիւններից մէկն այն է, որ նա փոքր ի շատէ լոյս է հանել դէրսիմյի հայերին կամ Միրաքեաններին. թէ ինչպէս են նրանք ապրում ազատ լեռներում, վայրենի քուրդ ազգաբնակչութեան մէջ, ինչպէս են պահպանում իրանց հայութիւնը—սրանք հետաքրքրական նորութիւններ են մեզ համար:

Դէրսիմյի քրդերի յայտնի պատմութիւնը սկսւում է անցեալ դարի քսանական թուականներից: Հեղինակը աւանդութիւններից և ժամանակակիցների պատմութիւններից հաւաքել է հետաքրքրական տեղեկութիւններ այն պատերազմների մասին, որ Դէրսիմը մղում էր թիւրքաց կառավարութեան դէմ՝ իր անկախութիւնը պահպանելու համար: Այդ տեղեկութիւնները, ընդհանուր առմամբ, համաձայնում են ռուսաց գրականութեան մէջ եղած տեղեկութիւնների հետ, որքան մեզ է յայտնի: Աւելորդ է ասել, որ ընդհանուր հետաքրքրութիւն են ներկայացնում և այն գլուխները, որոնք պատմում են դէրսիմյիների կրօնի, սովորութիւնների, ծէսերի, հաւատալիքների, պաշտամունքների մասին:

Պ. Անդրանիկի «Դէրսիմը» մի կտոր է թիւրքաց Հայաստանից: Յիշենք թէ որքան քիչ բան ունենք այդ դժբախտ, բայց գեղեցիկ երկրի մասին. յիշենք թէ մանաւանդ վերջին ժամա-

նակներս որքան հեռացած, կտրուած ենք այդ երկրից: Որքան էլ թերութիւններ գտնենք այդ գրքի մէջ, բայց չենք կարող չը խոստովանել և այն, որ դա մի օգտակար աշխատութիւն է: Այստեղ տեսնում ենք թիւրքահայի իրական կեանքը, տեսնում ենք ամեն կողմով դարմանալի երեւոյթ կազմող դէրսիմցի քըրդին, որ հայի բարեկամն է, ապրում է նրա հետ հաշտ ու խաղաղ, սրաշուտ է նրա սրբերին, հասկանում է նրա լեզուն: Քրդական աշխարհը, մանաւանդ վերջին արիւնահեղ դէպքերից յետոյ, մեծ հետաքրքրութիւն է զարթեցրել: Օտար ազգերը, որոնք քրդերի մասին միայն լսել են, գրում են քրդական ներկայի և անցեալի ուսումնասիրութիւնները: Բայց մենք ճանաչում ենք մեր այդ արեւախումբ հարեաններին, վեր հոգեհան դներին:

«Դէրսիմը» յայտնի չափով կարող է լրացնել այդ պահասութիւնը:

Լ.

30) ՄԵՍՐՈՎԻՔ ԲՈՒՆ. ՄԵԼԵՑԿ. «Քառասնյական խնդրի» ՇՈՒՐՈՒՄ: Թիֆլիս, 1901 թ.

Մեր ժամանակի նշանաւոր եկեղեցական և բաղմաշխատ գրող Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան, ինչպէս յայտնի է, անցեալ տարի գրեց մի գիրք, որ ամբողջապէս նուիրուած է մեր ընթացիկ կեանքի հրատապ խնդիրներից մէկի անաչառ քննութեան. դա հեղինակի «Քառասնյական խնդիրն» է: Այն ջերմ ընդունելութիւնը, որ գտաւ այդ աշխատութիւնը ժողովրդի և մամուլի ինտելիգէնտ, բարեսէր շրջաններում, ցոյց է տալիս, թէ որքան հասունացել է հեղինակի յարուցած խնդրի կարեւորութիւնը և նրա կանոնաւոր և շուտափոյթ լուծումը. այդ խնդրի շուրջը ծագած վիճաբանութիւնների մէջ առանձնապէս չհշտուած էր Արիստակէս եպիսկոպոսի անդուլ եռանդը և այն անչեղ, անվեհեր ողին, որով նա շարունակ մաքառում է մեր ազգի և եկեղեցու պատուի յայտնի և աներեւոյթ թշնամիների դէմ: Այդպէս չէ կարծում հ. Մելեանը, որ նորերս իր հրատարակած «Քառասնյական խնդրի» շուրջը գրքով ձգնում է ջրել Արիստակէս եպիսկոպոսի շօշափած խնդրի հիմնական կէտերը, սակայն ըստ էութեան, իսկապէս, ոչինչ չէ կարողանում ապացուցել և նրա խճրճական նկատողութիւնները ամբողջապէս պատում են սրբազանի անձնաւորութեան շուրջը: Մանրամասն կանգ առնել

այդ գրքի վրայ չենք ուղղում, որովհետև դա ոչ լուրջ քննադատութիւն է և ոչ գրական տեսութեան մի փորձ, այլ իրան հեղինակի «Թռուցիկ տպաւորութիւնները», որ նա ստացել է Արիստակէս սրբազանի քահանայական խնդրին նուիրած գրքի ընթերցումից: Բայց Մելեան քահանան այնպիսի հեղինակաւոր անձնաւորութիւն չէ, որ նրա «Թռուցիկ գիտողութիւնները» առանձին արժէք ունենան: Ինչպէս ինքն իր յառաջաբանի մէջ խոստովանում է, հեղինակ քահանան մտադիր է նոյն խնդրին նուիրուած իր՝ արդէն ծրագրած աշխատութիւնը լոյս հանել. սակայն ինչն է ստիպել նրան հրատարակել իր «Թռուցիկ գիտողութիւնները». դրա գաղանխը, ընթերցող, կ'իմանանք հեղինակի գիտողութիւնների հետ ծանօթանալուց յետոյ, երբ ձեզ համար պարզ կը լինի, որ հ. Մելեանին զբաղեցնող նիւթը, ինչպէս ասացինք, առաւելապէս Արիստակէս սրբազանի անձն է, քան նրա գրքի բովանդակութիւնը: Քննադատութեան այդ ձևը—ձիշտ ասիական է, որ և բնորոշում է հեղինակի ներքին աշխարհը և նրա յետին մտքերը. այդպիսի «քննական» գիտողութիւնների մէջ զաղափարի և իդէալի պաշտպանութիւնը քողարկւում է տաղտալի և ձանձրոյթ պատճառով սովեստութիւններով, առողջ գաղափարներ՝ անձի դէմ ուղղած չարամիտ յարձակումներով. իսկ անաչառութիւնը, որ քննադատողի սրտի և մտքի զարդը պիտի լինի, մաղձով թունաւորուած զգացմունքին զոհ է գնում... Իդուր է հ. Մելեանը աշխատում համոզել իր լաւակամ արամադրութեան մէջ գէպի սրբազան հեղինակը (20 էջ). դա անպարզիւն և աննպատակ փորձ է. այդ խօսքերի կշիռը որոշելու համար թող ընթերցողը նախ ծանօթանայ «Լաւակամութեան» այն գոհարների հետ, որոնք առատօրէն ցրուած են հ. Մելեանի գրքի մէջ և յատկապէս ուղղուած Արիստակէս սրբազանի դէմ: Գրքի զաղափարական մասը թողած, հ. Մելեանը ինկվիլիտօրին վայել հաւատարմական եռանդով՝ քրքրում է սրբազանի անցեալ կեանքը և գործունէութիւնը. մերթ ձեռքատում է թափանցել նրա սրտի խորքերը՝ նորանոր ամբաստութիւններ գտնելու համար, մերթ գիմում է երեսակայութեան աշխարհին, յուսալով այնտեղից ևս ձարել մարդկային անուան և պատուի վրայ ստուեր գցող փաստեր—և այդպիսի ողորմելի փորձերով նսեմացնել յարգելի եկեղեցականի անունը և գործունէութիւնը. դա հին և ժանդոտած դէպք է, որի օգնութեան գիմում են որոշ ճգնաժամներին...

Հ. Մելեանի ասելով ինքը առաջ Արիստակէս սրբազանի ջերմ յարգանքներից մէկն էր. հիասթափուած առաջ եկաւ միայն վերջին ժամանակ, երբ նա հեղինակի գրքի բովանդակութիւնից

նկատեց, որ նա իրաւամբ չէ վայելում ժողովրդի սէրը և յարգանքը: Անկէղծ է արդեօք հ. Մելեանի խոստովանութիւնը և ինչ նոր փաստեր սրբազանի դէմ նա կարող էր գտնել այդ զրբի մէջ: Այստեղ մենք չենք կարող չը նկատել, որ Արիստակէս եպիսկոպոսի գործունէութիւնը, մանաւանդ վերջին նշանաւոր 10—12 տարիների ընթացքում, անցաւ մեր աչքի առաջ և նրա մերձ անցեալում կատարած դերը անջնջելի և պատուաբեր հետքեր թողեց եկեղեցական տարեգրութեան մէջ. ահա այդ անցեալի մի բեկորն էր, որ սրբազան հեղինակը փաստօրէն արձանագրեց իր «Քահանայական խնդրի» մէջ և որ ամենքիս, բայց մանաւանդ հ. Մելեանին, արդէն անցած-գնացած անցքերից շատ լաւ յայտնի է. ուստի մենք երկմտում ենք, անկեղծ էր արդեօք երբեքիցէ հ. Մելեանի յարգանքը դէպի սրբազանի գործունէութիւնը և երկդիմի չէր առհասարակ բարեկրօն քահանայի վերաբերմունքը վերջին ժամանակուայ հասարակական-կրօնական հոսանքների նկատմամբ...

Ո՛րչափ մեծ օգուտ և բարոյական մխիթարութիւն տուած կը լինէր հ. Մելեանը, եթէ իր արդար ցասումը ուղղէր այն կողմը, ուր այնչափ նիւթ կայ խօսելու և բորբոքուելու...

N.

Ն ՈՐ Ս Տ Ա Յ ՈՒ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

- 1) Материалы по вопросу о фальсификации пищевых продуктовъ съ приложеніемъ законопроекта. Изданіе редакціи журнала «Вѣстникъ Винодѣлія». Одесса, 1901. Цѣна 2 р.
- 2) Критическая замѣтка по поводу статей А. П. Артемьева. «Тифлисъ—какъ климатическая станція». А. Н. Бабаева. (Оттискъ изъ прод. Им. Кав. Мед. Общ. № 19, 1901 г. стр. 590).
- 3) Պ. Մոճունեանց. Սրտի վերքերը. արտատպ. «Տարազից»: Ալեքսանդրապոլ, 1901 թ. գինն է 10 կ.:
- 4) Տմբաշի խաչան. Տեղբաւ, II հատոր. արտատպուած «Նոր-Դարից». Բագու, 1900 թ. գինն է 40 կ.:
- 5) Տմբաշի խաչան. Զուռնա-Տմբա, հատոր III. արտատպ. «Նոր-Դարից». Բագու, 1900 թ. գինն է 40 կոպ.:
- 6) Տ. ք. Մարադեան. Կանանց խնդրի առթիւ. արտատպ. «Նոր-Դարից», Թիֆլիս, 1901. գինն է 40 կոպ.:

- 7) Ի. Պօտապենկօ. Փարաջաուր ուսանողը. Թարգմ. Դ. Աղա-
ջանեանց. Թիֆլիս, 1900 թ. գինն է 15 կոպ.:
- 8) Ֆարրարի քարոզներ. Թարգմ. ռուսերէնից Ս. Մ. Վաղար-
շապատ, 1901 թ. գինն է 1 ռ.:
- 9) Շիլլէր. Օրլէանի կոյսը, բնագրից ամիսփեց Ս. Թառայեանց.
Թիֆլիս, 1901 թ. գինն է 20 կոպ.:
- 10) Բժպ. Վ. Արծրունի. Ամուսնութիւն. առողջապահական է-
տիւղ. արտատպուած «Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, 1901 թ.
գինն է 75 կոպ.:
- 11) Տ. Վարդանեանց. Ժողովրդական անգիր բանաստեղծու-
թիւններ. Թիֆլիս, 1901 թ. գինն է 30 կ.:
- 12) Վ. Ռոտինեանց. Գործնական Խոհարարական դասադիրք.
Թիֆլիս, 1901 թ. գինն է 1 ռ.:
- 13) Է. J. Basmadjian, La Stèle de Zouarthnotz. Paris, 1901:
- 14) Լ. Շելլոնսովա. Արջի պատմութիւնը: Զասոգիմսկի. Գայլը.
Նուէր մանուկներին. Թիֆլիս, 1901 թ. գինն է 15 կոպ.:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

«ՀՈՂԱՅԻՆ ՏՈՒՐՔԸ» ԵՒ ՀԱՐԿԵՐԸ ԿՈՎԿԱՍՍՈՒՄ *)

Բայցի վերը յիշածից, 1901 թուից սկսուող հարկատիրական ձևը հանգիստանում է խոշոր քայլ երկրում տիրող հարկատիրական ձևերի զարգացման համար: «Միտահարկի» սկզբունքի փոխարինումը «հողահարկով» անհրաժեշտ պայման է, որպէս զի մեր գիւղերում գոյութիւն ունեցող խառնիճաղանճ հարկատիրական և հողատիրական ձևերը ենթարկուեն անհրաժեշտ և ներկայ պայմաններում հասունացած և կարելի բարեփոխութիւններին:

Իսկ որ այս բարեփոխութիւնները աւելի քան կարևոր են երկրի առաջադիմութեան համար—դա ակնհեր և ներկայ կացութեան ամենաթոռեցիկ հայեացքից անգամ:

Չը նայած Կովկասի բնական ու աշխարհագրական բազմակողմանի ու բարդ պայմաններին, չը նայած քաղաքական ու ազգայնական մանրամուկ բաժանումներին, որոնց ենթակայ է եղել երկիրը դարերի ընթացքում, և մանաւանդ չը նայած այն բանին, որ միմեանց կից այստեղ գոյութիւն են պահպանում զանազան կուլտուրական կենցաղավարութիւն վարող ազգաբնակչութիւններ՝ թափառաշրջիկ խաշնարածներից սկսած մինչև հողագործայեղագործները, և նոյն իսկ զուտ արդիւնաբերութեամբ պարապողները—չը նայած այս բոլոր բարդութիւններին, Կովկասում դժուար է գտնել մի անկիւն, ուր հարկերի ծանրութիւնը, կամ նրանց բաժանման ձևերը համազիւղացիների մէջ առիթ չը լինէին գիւղերում տեղի ունեցող անվերջ կռիւների ու խռովութիւնների:

Լինի դա հայի թէ թուրքի գիւղ, հարուստ թէ աղքատ, դաշտում թէ սարերում—ամեն տեղ լսւում են միմիայն տըր-

*) Տե՛ս «Մուրճ» № 5.

տունջները հարկի ծանրութեան ու մանաւանդ անարդար բաժանման մասին: Ոչ ազգաբնակչութեան զարգացումը, ոչ կրօնը, ոչ կուլտուրական բարձրութիւնը ազդեցութիւն չունեն, կարծես, այդ խնդրի աւելի արդարացի լուծման վրայ: Աղքատների աւելի ծանրաբեռնուած լինելը (հարուստների հետ համեմատած) նկատելի է ինչպէս հողագործ հայ գիւղերում, այնպէս և թափառաշրջիկ թարաքամանների, ինչպէս անհատական սեփականատէր իմերէշներին ու գերմանացիների մէջ, նոյնպէս և նահապետական ղանդեղուրցի ու հեթանոս եղիգիւնների մէջ... Այս ամենի պատճառը, հարկաւ, փնտռելու է նրա մէջ, որ մեղահոռւմ հասարակական կեանքի ու կուլտուրայի զարգացումը ընդհանրապէս, ինչպէս և հարկատիրական ձևերի բարեփոխութիւնը մասնաւորապէս, ընթանում են շատ դանդաղ քայլերով: Երկրի միմեանց յաջորդող վարչութիւնները՝ հարկերը նշանակելիս դեկավարուել են շատ անգամ ոչ-լուսամիտ և յաճախ միմեանց հակասող սկզբունքներով...

Միւրիւթարականը այն է, որ մի քիչ մօտ ծանօթանալով ժողովրդի տրամաբանութեան մէջ կատարուող փոփոխութիւնների հետ, խառնիճաղանձ դրութիւնից աջողւում է որոշել այն ցանկալի, թէև մեծ ելնէջներ ունեցող ուղին, որով ընթանում է մեր երկրում հարկատիրական ձևերի զարգացումը...

II

Թողնելով հեռու անցեալը, կանգ առնենք այն դրութեան վրայ, որ իշխում էր Կովկասում վերջին դարերի ընթացքում:

Վրաստանում (ներկայ Թիֆլիսի և Գուլիստի նահանգներում), ինչպէս յայտնի է, ժողովուրդը բաժանուած էր զանազան դասակարգերի. արտօնեալ՝ ազնուական և հոգևորական ու սրանցից կախումն ունեցող գիւղացի և քաղաքացի զանազան պարտականութիւններ կրող հարկատուներ: Ազնուականներն ու հոգևորականները ազատ էին տուրքերից և վերջինների ծանրութիւնն ընկած էր գիւղացիների վրայ, որոնք ըստ իրանց գիրքի անուանւում էին՝ թագաւորական, ազնուական և եկեղեցական: Հարկատուների վճարելէք տուրքերը՝ պ. Բախտաձէի *) ասելով զանազան բնաւորութիւն էին կրում.

«Սուրսարի» — 3-ական կոտ (կոտը = 2 փութին) հաց (2 կոտ

*) Податное обложение Госуд. кр-янь Закавказья. Сводъ Матер. по изуч. экономич. быта Госуд. кр-янь Закавказья. т. I. Тифлисъ, 1889.

ցորեն, 1 կ. գարի) ամեն մի ընտանիքից կամ ծխից: Անբեր-
րիութեան ժամանակ «սուրսաթի» տեղ վերցնում էին դրամ՝
կոտի արժէքը մի ոսկւի հաշուելով: Այս հարկից ազատ էին մի-
միայն վրաստանի մահմեդական շրջանները (Ղազախն ու Բօր-
չալուն):

«Ղալա»—միմիայն թագաւորական գիւղացիներից. սրա
չափը զանազան շրջաններում տարբեր էր և հաւասար էր բերքի
 $\frac{1}{5}$, $\frac{1}{6}$ $\frac{1}{7}$ — $\frac{1}{10}$ -ին:

«Մախսա»—որ ժողովւում էր դրամով գլխաւորապէս քաղա-
քացիներից, արհեստաւորներից և մահմեդական շրջաններից:
Այս տուրքը չափն էր՝ չնչից 1 ո. 4 $\frac{3}{4}$ կ. և սրանից ազատ էին
ազնուականների գիւղացիք:

«Մախսա» հայով—մահմեդական շրջաններից:

«Մալի»—գլխահարկ՝ միմիայն քաղաքում ապրողներից.
պահուածներին 1 ո. 20 կ. էին առնում, իսկ աղապներից՝ 60-
ական կոպ.: Այս տուրքը կոչւում էր «թաթարների» տուրք և
հաւանական է որ նշանակուած էր յաղթողներին կօնտրիբուցիա
վճարելու համար:

«Կուլուխի»—գինու տուրք, բերքի $\frac{1}{10}$ մասը, իսկ տեղ-
տեղ բերքի $\frac{1}{7}$: Երբեմն այս տուրքը վճարւում էր և դրամով.
այդ ժամանակ գինու սապաշնէն (112 թունդին կամ 28 փութը)
դնահատւում էր 10 ո.:

Կօդէս պուրի եւ կալան—անհրաժեշտ տուրք, որ սուրսա-
թից զատ վերցնւում էր մի քանի հարուստ գիւղերից:

Վրաստանի քաղաքական գոյութեան վերջին տարիների
ընթացքում նշանակուած էին յատուկ տուրքեր «սարուսօ» և
«սալէկօ» («ուռենների և լէզզիների» համար)՝ ուսւ օգնական
զօրքի և լէզզի վարձկան պահապանների վարձատրութեան հա-
մար: Եւ վերջապէս, արօտների համար լեռնախանները վճարում
էին «սաբալախօ» անուանեալ տուրք: Ամբողջ «թուշ» կոչուած
ազգութիւնը օրինակ, վճարում էր 400 ոչխար (1 ո. 20 կոպ.
արժողութեամբ հատը) և 200 գառը (հատը 70 կ. արժողութեամբ),
իսկ յետոյ դրանց փոխարէն 620 ո.: Փշաւները վճարում էին 50
ոչխարից մէկը: Օսերը վճարում էին. 1) ամեն մի ընտանիքը
3-ական ոչխար 3 ո. արժողութեամբ: 2) «բէգար» ամեն մի
«սակօմլօ» կոչուած տարածութեամբ հողից (15—20 օրավար)
մի-մի կով 5 ո. արժողութեամբ, կամ 5 ոչխար և 3) ամեն մի
«սակօմլօ» տարածութիւնից մի-մի եզը 10 ո. արժողութեամբ—
«դասաչուքրօ» (ընծայ):

Բացի այս ընդհանուր բնաւորութիւն կրող տուրքերից՝
ամեն մի «կախումն ունեցող» կամ «ստորադրեալ» ունէր զէպի

իր «պարոնը» (թագաւորը, եկեղեցին, ազնուականը և այլն) որոշ պարտականութիւններ: Այդ պարտականութիւնները, նայած անձնաւորութեանն ու տեղին՝ չատ տարբերուած էին միմեանցից:

Մեծ մասամբ ազնուականների և գիւղացիների կամ աւելի ճիշտն ասած՝ արտօնեալի և կախումն ունեցողների յարաբերութիւնները սահմանուած էին այն ձևով, որպէս զի բաւարարութիւն տրուի «պարոնի» բոլոր, թէև բազմակողմանի, բայց ոչ մեծ, պահանջներին: Մէկը պարտական էր «պարոնին» վճարել, բացի բերքի $\frac{1}{10}$ -ից, նաև պսակուելու համար 5—10 ռուբլի, կերակրել պարոնին տարին 1, 2 անգամ, ընծայել Ձատկին մէկ զառը.—միւսը՝ իր ցանքսի ու այգու համեմատ վճարում էր 10 կոտ ցորեն, 15 թունգի գինի, Ձատկին՝ մէկ հաւ, 20 ձու, $\frac{1}{4}$ մետաքսի թել, չալաթը մէկ մշակ: 3-րդը պարտական էր տալին մի անգամ հիւրասիրել պարոնին, 4-րդը ցրել նրա նամակները և ամեն բարեկենդանի ընծայ տանել մի-մի գոճի... և այլն...

«Բոլոր տուրքերը վրաստանում—գրում էր իշխան Վօրօնցովը ^{13/VII} 1849 թ. *) որոշուած չէին զրաւոր օրէնքներով, այլ միմիայն սահմանուած էին տեղական ազաթով (դէբուլէրա): Չը նայած դրան, տուրքերի և պարտականութիւնների վճարելիքն ու ձևերը, որ յայտնի էին երկու կողմերին էլ, դարմացնում էր իր կանոնաւորութեամբ և մշտակեցութեամբ... Տուրքերի ու պարտականութիւնների վերաբերութեամբ ազնուականը իրաւունք չուներ մտցնել ոչ մի փոփոխութիւն, նա չէր կարող այդ նոյն իսկ անել, որովհետև ոչ մի գիւղացի յօժարութեամբ չէր ենթարկուի դրան... Այս պարագայում ազաթը (սովորութիւնը) աւելի ուժեղ էր հանդիսանում, քան օրէնքը նոյն իսկ այս դէպքում, երբ ազաթի փոփոխութիւնը կարող էր միմիայն օգտակար լինել գիւղացու համար:

Օրինակ, պատահում էր, որ այն գիւղացուն, որ պարտական էր փայտ բերել շալակով, պարոնը (իր և գիւղացու օգտից դրդուած) առաջարկում էր իր (պարոնի) եզները, բայց գիւղացին հրաժարւում էր՝ հիմնուելով ազաթի վրայ... Թղթատար գիւղացին չէր համաձայնում կատարել ուրիշ պարտականութիւն, թէկուզ պարոնը դադարէր նամակագրութիւնից. «ձիապանը» մնում էր «ձիապան», չը նայած նրան, որ պարոնը վաղուց ի վեր ձիեր չուներ և այսպէս չատ դէպքերում»:

*) Акты Археогрaфия. Коммисіи, томъ X. стр 40—45.

Այսպիսով պարզ է, որ Վրաստանում հարկատու ու կախույն ունեցող գիւղացիների վճարելիք տուրքերը կատարում էին մթերքներով, համապատասխան տեղի պայմաններին, և որ տուրքերի քանակութիւնը մօտաւորապէս հաւասար էր բերքի $1/10$ -ին: Ծանր էին այստեղ «անձնական պարտականութիւնները» դէպի պարոնը, բայց չը պէտք է մոռանալ և այն, որ այդ «պարտականութիւնները» սահմանուած էին փոխադարձաբար այն պարտականութիւնների (գլխաւորապէս պաշտպանութեան) համար, որ իր վրայ էր վերցնում «պարոնը»:

Այդ անձնական պարտականութիւններից ազատ էին մահմեդական և հայկական շրջանները: Ճիշտ է, այստեղ էլ կային բէգեր, աղալարներ, մէլիքներ, մինրաչիներ, սուլթաններ, մասֆներ և այլն, բայց սրանք չէին կազմում որոշ արտօնեալ դասակարգ, այլ կրում էին միմիայն որոշ պաշտօններ, ստանալով դրա համար որոշ վարձ, մեծ մասամբ ժողովուրդ տուրքի որոշ մասը: Երկիրը կառավարող խանը կամ սարգարը կարող էր դրանցից իւրաքանչիւրին պաշտօնից հեռացնել, յանձնելով բէգութիւնը՝ թէկուզ իր նախկին ծառային... Յամենայն դէպս, յիշեալ պաշտօնեաները ազատ էին տուրքերից և վերջիններիս ծանրութիւնը ընկած էր մնացած ազգաբնակչութեան վրայ:

Նոյնանման կացութիւն եղել է և հայկական շրջաններում, որոնք կառավարուելիս են եղել հայ մէլիքներով: Խօսելով Մէլիք-Բէգլարեանների հասարակական և իրաւաբանական սովորութիւնների մասին, պ. Լալայեանը *) գալիս է այս եզրակացութեան, որ դրանք ստանում էին հարկատու ազգաբնակչութիւնից.

Մալջահատ—հայահատիկներին $1/5$ մասը:

Սալեան—?

Գլխահարկ կամ ոսկի—տունը մօտ 3 ռ.:

Գիւնդուլի—մէլիքի հողերը վարելու, ցանելու, հնձելու համար... տարին մօտ 20 օր կամ 4 ռ.:

Ծառայ և աղալին—իւրաքանչիւր 25—30 տնից մի հոգի:

Փայտ—տունը մի իշարեռ:

Պսակի համար—3—6 ռ., մնացուի սուկին, երեկամունքը, 2 հաւ, 2 չիչ օղի:

Չափար—փուլի, զուլլուղ—փուլի և այլ մանր ծախսեր և

Զօրք—ամեն մի տուն մի զինուոր գլխուորական պարագաներով վտանդի ժամանակ:

Տուրքերի վճարումի համար չը կար որ և է գրաւոր օրէնք: Ինչպէս Վրաստանում այստեղ էլ մէլիքի ու ստորադրեալների

*) Ե. Լալայեան. Գանձակի գաւառ (աճղագրական Հանդէս):

յարաբերութիւնները հիմնուած էին աւանդութիւնների վրայ, որոնք աւատական պայմաններում որոշ անհրաժեշտութիւն էին ներկայացնում երկու կողմերի համար էլ:

1825 թուին թալիշի մահալի 143 հարկատու և 102 հարկից ազատ տներից խանին վճարւում էր թէ հալախատիկներով, թէ դրամով 1473 ո. և 114 չերվոնեց, չը հաշուած 300 ո. չափար փուլին և այլն: Այսպիսով միջին թուով ամեն մի ընտանիքի բոլոր վճարելիքի քանակութիւնը (առանց զինուորական տուրքի) կազմում է մօտ 12 ոտւրլի:

Մահմեդական չրջանների հարկային դրութիւնը պարզելու համար, մենք կանգ կ'առնենք Երևանեան նահանգի վիճակի վերայ, որի մասին մանրամասն տեղեկութիւններ ղետեղւած են Ի. Ծօպէնի ուշադրութեան արժանի գրքի մէջ *):

Ծօպէնի ասելով «հայկական չրջանի» հարկային-ֆինանսական դրութիւնը բաժանելու է երկու մասի՝ նա որ գոյութիւն ունէր Երևանեան խանութեան մէջ, ուր «հարկային դրութեան նկատմամբ երևի պահպանուել էին որոշ հիմքեր հայկական թագաւորութեան ինքնուրոյնութիւնից մնացած» և Նախիջևանի խանութեան, որ իբրև մաս Ատրպատականի՝ ենթակայ էր Պարսկաստանի կարգերին:

Երևանեան խանութեան մէջ գոյութիւն ունէին երկու տեսակ տուրքեր—դրամով և բերելով: Դրամական տուրքը ամեն տարի նշանակւում էր սարդարի կողմից հողագործների, քաղաքացիների, թափառականների և հայ կուսակից հոգևորականների վրայ: Վճարելիք տուրքի բաժանումը հասարակութեան մէջ թողնուած էր հասարակութիւններին:

Դրամական տուրքերը կազմում էին.

- 1) Երևան քաղաքի մահմեդականներից . 1254 թուման.
- » » հայերից 470 »
- 2) Էջմիածնից (յանձնուած զիւղերի փոխարէն) 400 »
- 3) Մաքուայ Ալի-խանից (յանձնուած զիւղերի փոխարէն) 300 »
- 4) Թափառական թաթար ու քիւրդ հասարակութիւններից (հաշուելով երկու թուման 1 ընտանիքից) 8219 »
- 5) Բացի դրանից, որովհետև զանազան զիւղեր իրանց ջրի քանակութեամբ, հողերի ու բերքի առատութեամբ, աշխարհագրական դիրքի և այլ տնտեսական պայմանների դրութեամբ

*) Историческій памятникъ состоянія Армянской Области въ эпоху ея присоединенія къ Россійской Имперіи. СПб. 1852.

չատ տարբերում էին միմեանցից, ամեն դեպ հաշվում էր որոշ թիւ «բինաչի»: Զանգի-Բասարի հացով առատ Հաջի-Էլիաս գիւղում, ուր համարեա բոլորը ունեւոր էին, 1 բինաչի մէջ հաշվում էր 3 ընտանիք, ընդհանրապէս Սուրմալուի Զանկիան գիւղում 1 բինաչիի վրայ հաշվում էր 10 ընտանիք: Լինում էին գէպքեր, որ մէկ հարուստ ընտանիք կազմում էր մի ամբողջ «բինաչի» և ընդհանրապէս մի այլ տեղ բինաչի հաշվում էր ամբողջ գիւղը: Այսպիսով «բինաչին» արտայայտելով միմիայն կարողութեան աստիճանը, համապատասխանում էր Վրաստանի «սակօմլօ»-ին. կամ ներկայումս հայ և վրացի գիւղերում գոյութիւն ունեցող «համիլա» և «լիտրա»-ներին: Կային գիւղեր, որոնք նոր հաստատուած լինելու պատճառով (որոնց սարգար տալիս էր սերմացու, լծկան, գործիքներ և այլն), կամ շնորհիւ իրանց անյարմար դիրքի (սահմանագլխին և այլն, հաշվում էին որոշ թուով բինաչի, բայց տուրքը վճարում էին ջած, կամ նոյն իսկ բոլորովին ազատ էին տուրքերից:

Բինաչիները վճարում էին տուրք երկու տեսակ. Բահրաւքերնի անուանեալ գիւղերի բինաչին վճարում էր տարին 10-ական թուման կամ 40-ական ուրլի. Եարիքիօրնի անուանեալ գիւղերի բինաչին 3-ական թուման (12 ու.):

Սարգարի վարչութեան վերջի տարիներում բնակիչների թիւը և վճարելիք տուրքը հաւասար էր.

	Բինաչի. Թուման.	
Բահրաւքերնի գիւղերում	539 ₅	5395
Եարիքիօրնի »	300 ₅	901 ₅
Խառը (մեծ մասամբ թափառական) գիւղ.	253	1539 ₆

Ընդամենը . 1093 7836₁

Բացի դրանից, հաշվում էր և 490 բինաչի զանազան շրջաններում (Շարուր, Սարգարաւատ, Եղվարթ), որ էին վճարում «բինաչի» տուրք, բայց մասնակցում էին բէգարի, օլամի և այլ հասարակական պարտականութիւնների մէջ:

6) Մշտական ընծաներ, որ ի նշան երախտագիտութեան, բերում էր սարգարին Նօվրուղ Բայրամի օրը թէ զրամով (Մաքուայ Աւի խանից 200 թուման, Էջմիածնից 150 թ., Երևանի հասարակութիւնից 100 թ. և այլն), և թէ մթերքներով (բրնձով, ձիով)..
1320₆ թուման:

7) Տուրք հայերի այգիներից, որոնք պարապում էին գինեգործութեամբ (Քանաքեռից 100 թ., Աշտարակից 240 թ.),
ընդամենը 680 թ.:

8) Զանազան տուրքեր՝ մաղաների, գրագիրների, միրաբ-

ների (դրամով և միջերջներով) ոտճիկ՝ 740 թ., հարկահանների համար (6-ական շահի=12 կոպ.) ամեն մի խալվար հացահատիկի համար և 2-ական թուման ամեն մի խալվար բամբակին, որ մտնում էր գանձարան) 1,388 թ.

Գիշերուայ պահապանների համար (երևանում) 72 »

Հնձուորներից (34 շահի կամ 68-ական կոպ.) 400 »

Ընդամեն մշտական որոշուած տուրք դրամով 23,0767 թ.
կամ 92,307 ո.

Կողմնակի մուտքերը կազմում էին.

1) Կողբայ աղահանքերից (պետ. կառավար. տակ)	3,500	թ.
2) Բամխտար (մաքս) արտահանուող և ներմուծ. մթք.	3,394	»
3) Խանութներից (երևանի և Սարտարապ. ամրոցի)	1,300	»
4) Ներկարարներից	1,245	»
5) Սպանդանոցներից և սապոնի գործարաններից.	1,208	»
6) Սարգարի այլին. (չը հաշուած տանը գործածածը.	835	»
7) Զրադացներից (կապալով տրուող)	766	»
8) Կշէոքներից	715	»
9) Քարվանսարաններից	700	»
10) Բաղանիաններից	390	»
11) Հրապարակներից	348	»
12) Դրամ կտրելու իրաւունքից	300	»
13) Կօշիկներու պայտ պատրաստող գործարանից .	225	»
14) Գինի և օղի վաճառելու իրաւունքի համար .	110	»
15) Գեօկչայ լճից ձուկ որսալու համար	100	»
16) Ծխախոտ ծախելու իրաւունքից	72	»
17) Կաշիներ դրոշմելուց	50	»
18) Ստրգարի բոստանից	20	»
19) Մի քանի գիւղերի տուրքը վաճառելուց	525	»
20) Դարուգ (ոստիկանապետից)	819	»

Կողմնակի մուտք ընդամենը . 16,6325 թ.

Բոլորը միասին զրամական մուտք՝ . 39,7092 »

կամ 158,837 ո.

Շատ աւելի մեծ էին կենսական եւ այլ մթերքներով ժողովուրդ տուրքերը, որ վերաբերում էին ժողովրդի արդիւնաբերութեան բոլոր ճիւղերին—բամբակից սկսած մինչև ցորենն ու հաւիկիթը:

Այս տուրքերի վերաբերմամբ հողերը բաժանուած էին 4 ստակարգերի՝

1) Բահրաքերնի գիւղերից, որ ունէին առատ հողեր, յար-

մար դիրքը, մեծ քանակութեամբ անասուններ, վերցնուած էր 10-ական թուման, բինաչիից՝ բերքի $10/30$ մասը:

2) Եարիքիօրնի գիւղերից, որոնք նոր էին բնակուած՝ աղքատ էին և որոնց սարգարը տուել էր սերմ, անասուններ, գործիքներ—իւրաքանչիւր բինաչիից վերցնուած էր 3-ական թուման, իսկ միւլեքներից (սերմը դուրս գալով) կէսը՝ $15/30$:

3) Ռաշպարական գիւղերը, որոնք ստանուած էին սարգարից ամեն ինչ ապրուստի համար և վճարուած զանազան չափով՝ կէսից սկսած մինչև $2/3$ և նոյն իսկ $4/5$:

4) Կապալով տրուած գիւղեր. սրանց մէջ կային այն տեսակները, որոնց կապալը վերցրել էր ինքը խանը, վճարելով միւլեքադարներին որոշ քանակութեամբ դումար իր բերքերից:

Բոլոր այս չորս տեսակ գիւղերը կարող էին լինել արքունական (խալիսա) կամ միւլեքադարական. առաջի դէպքում՝ խալիսա գիւղերից, ամբողջ տուրքը (բերքի $10/30$ բահրաք. գ. կամ $15/30$ եարիք. գ., մտնում էր դանձարան. երկրորդ դէպքում՝ բահրաքներնի գիւղերից վերցնուող բերքի $10/30$ -ից $3/30$ -ը գնում էր միւլեքադարներին, իսկ $7/30$ մնում էր տէրութեան եարիքիօրնի գիւղերից. բերքի $15/30$ -ից $3/30$ գնում էր միւլեքադարին, իսկ տէրութեան մնում էր $12/30$:

Վաղուց ի վեր սովորութիւն էր դարձած, որ 30 մասից մէկն էլ պէսք է գնար «սարքեար»-ին (հարկ ժողովողին), «չիլեաքի» անուան տակ, բայց որովհետեւ սարքեարներն ապրուստը գիւղերի պարտականութիւնն էր—չիլեաքը վերցնում էր սարգարը, կամ թոյլ էր տալիս այն՝ ստանալու իր խաներից մէկին:

Մի քանի բահրաքներնի գիւղերում, որոնք բնակեցրած էին թափառաւոր ջիւղներով ու գտնուում էին սահմանազլխին, կամ համեմատաբար անյարմար ձորերում, սարգարը զիջում էր գիւղացիներին «միւլեքը» ($3/30$ մասը) և «չիլեաք»-ը, վերցնելով $10/30$ -ի տեղ միայն $7/30$ կամ $6/30$ -ը, իսկ գիւղը խալիսա էր իսկ միւլեքադարական գիւղերից—միմիայն $4/30$ և $3/30$ -ը:

Դարաքենդ-Պարջինի ձորերի ազգաբնակութիւնը վճարում էր միայն 800 թուման և դուրս էր բերում 200 ձիաւոր: Նոյն մաղալի սահմանազլխի լեռներում ապրող «այրումլի» գիւղացիք բոլորովին աղատ էին հաղահատիկների տուրքերից, միայն թէ պարտաւոր էին իրանց ցեղապետ Մհամմէդ Ջափար-խանին վճարել նաև մի-մի բաթման իւղ, մի-մի բեռը յարգ և մի-մի բեռը փայտ...

Երբ Երևանեան խանութիւնը յանձնուած էր Ռուսաստանին, սարգար Հուսէին խանի, վեզիր Միրզա Իսմայիլը ներկայ-

ացրեց ուսաց կառավարութեան մանրամասն և հետաքրքիր տեղեկագիր այն բոլոր եկամուտների, որ ունեցած էր սարգարը իր խանութեան վերջին տարին: Այդ ցուցակին նայած՝ խանութեան մէջ ստացուած զանազան բերքերի քանակութիւնն ու արժէքը (հաշուած ներկայիս գներով) հաւասար էր.

Ի՞նչ բոլո՞ց.	Սալլ.	Արժէք ուրիշ Խալվար.	Ընդամենը.
Ցորեն	142,175 ₅	7	95,522
Գարի	53,147 ₅	5	26,574
Կորեկ	13,425	4	5,368
Չալթուկ	105,031	8	89,024
Խալվար			
Ծխախոտ	22 ₁₂	50	1,106
Սոխ	34 ₁₈	5	170
Բամբակ	753 ₅₁	120	90,420
Գերչակ	44 ₉₈	16	719
Քունջութ	23 ₆₄	15	355
Կտուահատ	42 ₂₁	18	760
Սխեռ	3 ₅₃	20	71
Ոսպ	6 ₄₅	20	120

Ընդամենը . 305,219

Չը հաշուած 9,822 հաւը և 19,644 ձուռ:

Բացի բերքից ստացուող որոշ մասից, սարգարը ստանում էր հացահատիկներ և «փարափար» անուանեալ պարտաւորութեան համաձայն: Այն գիւղերը, որոնք ունէին առատ հող և ջուր, պարտական էին ցանել սարգարի համար որոշ քանակութեամբ զանազան հատիկներ և վերագարձնել՝ մէկին 5 ցորեն ու զարի:

» 7 չալթուկ:

» 0₅ մաքր. բամբակ:

Բոլոր «փարափարի» սովորութեամբ մշակուող 162 գիւղերից ցանւում և ստացւում էր՝

Ի՞նչ բոլո՞ց.	Ցանւում տաշկիր.	Ստացւում խալվար.	Արժողութեամբ ուրիշ Խալվարը.	Ընդամենը.
Ցորեն	278	111 ₂	7	778
Գարի	1,882	752 ₀	5	3,764
Չալթուկ	1,757	1,054 ₅	8	8,436
Բամբակ	149 ₅ խալ.	85 ₅	120	10,736

Ընդամենը . 23,715

Բացի այս ամենից ստացւում էր և յարգ: Կանոնով որոշուած էր մի խալվար հացահատիկին վերցնել 2 խալվար յարգ:

թէն իրականացէս (կարիք չը լինելու պատճառով), ստացուում էր կէսը: Հաշուելով յարդի խալվարը 1 ուրբի, ամբողջ յարդից ստացած ակամուտի քանակութիւնը հաւասար կը լինի 2500 թումանի կամ 10,000, ու, կանոնով պիտի ստացուէր խոտից և եօնջից $\frac{1}{5}$ մասը, բայց կարիք չը լինելու պատճառով, մօտակայ տեղերից միայն ժողովուում էր 400,000 խուրձ. հաշուելով խուրձը 1 կոս,՝ հաւաքուող խոտի ընդհանուր արժէքը կը լինի 4000 ո. կամ 1000 թուման: Բամբակի սերմ ժողովուում էր մօտ 500 խալվար (15-ական ո.)—ընդամենը—7500 ուրբու:

Այլ եւ այլ եկամուտներ.—կենդանիներից—թափառական աղզերից ստացուում էր 100 ոչխարից՝ մէկ մեծը և մի հատ փոքրը՝ մի-մի ուրբի արժողութեամբ:

Զիւանցի քուրդերից 100,000 ոչխարի հմբ. 2000 ո. = 500 թ.

Միւս թափ. աղզերից 100,000 » » 2000 » = 500 »

Մնացած քուրդերից 51,700 » » 1034 » = 282 »

251,700 » » 5034 » = 12822 »

Բացի դրանից, թափառականները պարտաւոր էին պահել նաև սարդարի ոչխարները որոշ պայմաններով: Յանձնելով որոշ թուով, որոշ տարիքի ոչխար թափառականներին, սարդարը իրաւունք ունէր ամեն բողէ յետ պահանջել նոյն քանակութեամբ և տարիքի ոչխար և ստանալ ամեն մի կիթան ոչխարից կէս-կէս բաթման իւղ և իւրաքանչիւր ոչխարից մի-մի ստիլ բուրդ: Այդ «դէշբեգէշ» անուանեալ պայմանով, չորանգնարցիք, բիւրիւքցիք և միւս թափառականները պահում էին 10,841 ոչխար, որոնց համար սարդարը ստանում էր 55205 բաթման իւղ և 504 ստիլ բուրդ:

Երկրորդ, «Ամանի» ասուած պայմանով, աղբանքի յաւելուածը և կորուստը սարդարի հաշուին էր, իսկ իւղով և բուրդով՝ նա ստանում էր $7\frac{1}{2}$ բաթման իւղ ամեն մի կիթան ոչխարից և բոլոր բուրդը: Իւրաքանչիւր 500 ոչխարին նշանակւում էր 2 հովիւ, որոնք ստանում էին 20-կան գառը և 120 բաթման ցորեն: Այս պայմանով տրուած էր թափառականներին 8425 ոչխար և 830 մեծատաւար ու դոմէշ, որոնցից ստացւում էր՝ դոմէշից 6, իսկ կովից 4-ական բաթման իւղ:

Ամանի պայմանով տրուած աղբանքից { 3,154 բաթման իւղ
սարդարը ստանում էր ոչխարից՝ { 3,197 ստիլ բուրդ

կովից և գոմէշից՝ 2,060 բաթման իւղ

Ուրեմն իւղ ստացւում էր 10,634 բաթմ. սարդարի ոչխարներից և մօտ 1,300 քրդերից:

Ընդամենը՝ 11,940 բ. (բաթմ.=1 ո.)՝ 11,940 ո. կամ 2,985 թում. բրդով—հաշուելով բաթմանի զինը 1 ուրբի,

3,701 ուուլի=925₂ թում: Բացի այս, զիւանցի քրդերը պիտի տային տարեկան 50-ական փալան ուղտերի համար, ընդամենը 50 թ.:

Ջալալցի քրդերը տալու էին 250 ջուխտ բրդէ ջուալներ (զոյգը=1 ո.)=62₅ թ.:

Փայտ եւ ածուխ—վճարւում էր բինաչի հաշուով (Բահրաքիրնի գիւղերը 3, Կարիքիօրնի 1¹/₂ բեռ փայտ):

Ընդամենը 5,021 բեռ փայտ (45 կ.) և 300 բեռ (1 ո.) ածուխ 539₈ թ.

Հաւ եւ ձու 9,822 և 19,644 հատ, հաշուելով հաւը և 10 ձուն 5-ական կուպէկ=147₂ թ.:

Շարուրի մաղալում հաւի և ձուի տեղ ամեն մի դինգից վերցնում էին 18 մինալթուն=55 թ.:

Ծանր տուրքերից մէկն էր հաշոււմ նաև զինուորական տուրք: Թափառական ցեղերը պարտաւոր էին սարդարի մօտ պահել լաւ զինուորուած ձիաւորներ, պատրաստ ամեն րոպէ պատերազմի (զիւանցիք 1000 հ., Նազի խանի Ղարափափախները 1000 հ.), ընդամենը 3600 հոգի: Հաշուելով ամեն մէկի ծախսը 24 ո. ամբողջ զինուորական տուրքի ծանրութիւնը կը լինի 86,400 ո.:

Այս բարդ և մանրակրկիտ հարկագիտական դրութիւնը պահպանելու համար պահանջւում էր և մեծ թուով հարկահաններ, մօտ 200 հոգի, որոնցից 50 նշանակւում էին սարդարի կողմից, իսկ 150 մաղալների կառավարիչների: Դրամական հարկերը ժողովում էին տարին երկու անգամ, աշնան, բերքը ժողովելուց յետ, և փետրուարին, երբ մաքրւում էր բամբակը: Հարկահանը մաղալի գրագրի հետ յայտնում էր իւրաքանչիւր գիւղին գիւղի վճարելիք գումարը, որ պարտաւոր էին ժողովել տանուտէրերը և յանձնելով սարդարի պանծապահին՝ ստանալ համապատասխան վկայագիր (բարաթ): Այդ վկայագիրը ժողովում էր յետոյ մաղաչի կառավարիչը և ներկայացնում սարդարին: Շատ աւելի դժուար ու բարդ էր մթերքներ ժողովելը: Գարնանից սկսած հարկահանները (սարքեարները) ապրում էին գիւղերում. նախ նրանք որոշում էին ամեն մէկի ցանքսի քանակութիւնը. հնձելիս յետ էր դրւում հնձողի մասը (հացահատիկներից ¹/₁₀, չալտուկից և բամբակից ¹/₂), որի համար ամեն հնձուորից ստացւում էր վերնը նշանակուած 34 չահին: Հսկողները իբրանց գիւրութեան համար կալերը ժողովում էին մի տեղ գիւղերից կէս վերստ հեռաւորութեան վրայ:

Կալերի մէջ տեղը բարձրանում էր սարքեարի քեօջը (աշտարակը), որտեղից նա հսկում էր, որ ոչ ոք տուն չը տանի

հաշուի չենթարկած բերքերից: Ամեն երեկոյ կալսելուց և մաքրելուց յետոյ հաւաքում էին հատիկները մի տեղ և այդ հացահատիկների թումբը կողքերից և վերևից կնքւում էր փայտէ կնիքով: Գիշերները հսկում էին որ այդ կնիքները մնան անձեռնմխելի: Երբ «կալուկուտը» վերջանում էր, սկսում էին բերքի բաժանելը: Բահրաքերնի գիւղերից $\frac{1}{3}$, իսկ եարէքիօրնի գիւղերից $\frac{1}{2}$ (առաջուց սերմը դուրս գալով) ածւում էր գիւղի արքունական ամբարները: Ամբարների դռները փակ և կնքուած էին և սերմը ածւում էր շտեմարան վերևից: Ամբողջ բերքը ամբարում ժողովելուց յետոյ դալիս էր մաղալի կառավարիչը կամ նրա գրագիրը և սարքեարի տանուտէրի ու քահանայի ներկայութեամբ վերջնում էր կնիքը և հաշւում եղած բերքը: Միւլքադարական գիւղերում ներկայ էր լինում և միւլքադարը, որ ստանում էր իր մասը ($\frac{3}{30}$ -ը): Սրանից յետոյ գիւղացիք պարտաւոր էին բերքը տանել արքունական կենդրոնական ամբարները, որոնք գտնւում էին Երևանում, Սարգարաւատում, Շահրեար, Սուրմալու, Թալին, և ստանում ստացականներ: Աղքատ, ապրանք չունեցող գիւղացիների բերքը փոխադրում էր սարդարը իր հաշուով: Բամբակի և ծխախոտի բերքի քանակութիւնը, բոյսերի դեռ չը հասած ժամանակ, որոշւում էր առաջուց գիւղացի քեթխուղաների երդմամբ, որից յետոյ գիւղացիները ստորագրութիւն էին տալիս, որ վճարելու են այս ինչ քանակութեամբ բերք: Ընդունում էին որ բերքի $\frac{1}{4}$ մասը կաղմում են զուտ բամբակ, $\frac{2}{4}$ մասը սերմը $\frac{1}{4}$ մասը տերև...

Սարքեաների ծախսը գիւղացոց վրայ էր: Սարդարի սարքեարներին տրւում էր ամիսը 5—6 ուլբլի ոռճիկ. 3-ական լիտր ամեն տեսակ բերքից ամեն կալից, լաւ սնունդ հերթով բոլոր տներից և օրական մի-մի լիտր դարի ձիու համար: Սարքեարները մնում էին գիւղում մինչև 6 ամիս և ամեն մի սարքեարը նստում էր գիւղացոց մինչև 72 ու. 72 կոպ. իսկ 50 սարդարի սարքարները 3633 ու: Մաղալի սարքեարները ստանում էին 2—4 ու. ամիսը ոռճիկ, 3-ական լիտր կալից և ուտելիղէն. ամեն մէկի ծախսը նստում էր գիւղին 43 ու., իսկ բոլոր մաղալական սարքեարներինը՝ 6450 ու: Այսպիսով ուրեմն ամբողջ Երևանեան խանութեան ուղղակի և կողմնակի, զրամով և մթերքներով ստացուող եկամուտը հաւասար էր.

$$\text{Դրամով} \left\{ \begin{array}{ll} \text{Ուղղակի տուրք} & 92,307 \text{ ու.} \\ \text{Կողմնակի} & 66,530 \text{ »} \end{array} \right\} = 158,837 \text{ ու.}$$

Դաշտային մթերքներով (հացահատիկներից—
բամբակ, խոտ և յարդ) 359,241 »

Յունիս, 1901.

Անասնապահութիւն (մթերքներով ու թռչուն-

ներով)	38,589 ո.
Զիւաւորներով	86,400 »
Հարկահանների վրայ ծախս	10,083 »

Հնդամենը 653,150 ո.

Այս գումարը պիտի համարել մօտաւորապէս՝ ճիշտ և մըշտական Երևանի խանութեան համար: Շարդէնի ճանապարհորդութեան ժամանակ, 1636 թուին, նոյն չրջանի եկամուտը հաշուում էր 46,000 թուման, որ կազմում էր 460,000 ուրբլի: Մօրիէրը, որ յաճախած էր Երևանը 1813 թուին՝ վերջի սարգարի եկամուտը հաշուում էր 174,000 թուման (696 հազար ուրբլի), որից 150,000 թ. (600 հազար ո.) հաշուում էր տուրքից՝

12,000 ո. մաքսասաններից,

6,000 » աղահանքերից:

6,600 » շահից (ռոճիկ և արտակարգ ծախս. համար):

Վերջապէս, եթէ ի նկատի ունենանք և այն հանգամանքը, որ Երևանի Մհամէդ խանը, պարտաւորութիւն կրելով, ստիպուած էր տալ վրաց Իրակլի II թագաւորին տարեկան 40,000 թուման կամ 400,000 ո. պատերազմական տուգանք, — Շօպէնի հաշուած 653 հազար ուրբլին շատ մօտ կը թուայ իրականութեան:

Երևանեան խանութեան մէջ այդ ժամանակ 8,211 ընտանիք էր հաշուում, իսկ երեսունական թուականներին հին ընտանիքներ՝ 12,694 ընտանիք և 70,000 ընտանիք (երկու սեռի). առաջի դէպքում միջին թուով, մի ընտանիքի վճարելիք բոլոր տուրքերը հասնում էին 80 ուրբլու, իսկ երկրորդ դէպքում 514 ուրբլու (93 ո. մարդապլուս):

Կովկասի միս մահմեդական խանութիւններում գոյութիւն ունէր նոյնանման բարդ հարկային դրութիւն, տարբերուելով ամեն մի անկիւնում՝ նայած տեղի պայմաններին և կառավարչի հայեցակէտին:

Երևանի խանութեան կից Նախիջևանի խանութեան մէջ օրինակ՝ հարկերը կազմւում էին հետեւեալ մասերից.

I. 1) Բաշ-փուլի—գլխահարկ տալիս մի հասակաւոր զիւղացուց (15 տարեկանից վեր) հայերից 4 ո., թուրքերից՝ 2 ո. 20 կ., 2) Էւ-փուլի—ծխահարկ » 42 » » 40 » 3) Անասուններից՝ զատ-զատ գումարհներ՝ ձիուց 208 և, աւրաքստար ձիուց 340 ո., գոմէշից 208 ո., կովից, էշից—1 ո., ոչխարից 20 կ., 4) Մեղուններից—32 կոպ. (իւրաքանչիւր փէթ թակից), 5) Զրադայներից, մետաքս մանող, չիթ գործող մե-

քենաներից 2, 2 և 1 թուման, 6) Հայ եկեղեցիներից—4-ական թուման, 7) Վաճառականական կապիտալից $\frac{1}{20}$;

II. Կապալով տրուող շինութիւններից վարձ—քարվանսարանների, խանութների, բաղնիքների տէրերից զուտ արդիւնքի $\frac{1}{5}$ մասը:

III. Այգեգործութիւնից, բամբակագործութիւնից և շերամապահութիւնից ստացուած էր իբրև տուրք բերքի արժէքի $\frac{1}{5}$ մասը—մի խալվար այգուց և բամբակից 18—16 ուրբլի. 1 ընկուղի ծառից 40 կ. և այլն:

IV. Վերջապէս հացահատիկներից ստացուած էր ամբողջ բերքի $\frac{31}{2}$ -ը, որից միւլքադարական գիւղերում 1 կամ $\frac{11}{2}$ -ը ստանում էր միւլքադարը, իսկ մնացած $\frac{1}{2}$ -ը տէրութիւնը: Նախիջևանի խանութեան ամբողջ եկամուտի քանակութիւնը հաշուում էր 146 հազար ուրբլի կամ միջակ ընտանիքի վրայ 31 ո. 74 կ. (10⁵⁸ ո. մարդագլուխ):

Օրդուբադի չրջանում 54,076 ո. կամ 25 ո. 38 կ. ընտանիքի վրայ (8 ո. 46 կոպ. մարդագլուխ):

Ներկայ Երևանեան նահանգում (բացի Ալէքսանդրապոլի գաւառից), որ պարունակում է իւր մէջ 23,730 ընտանիք և 71,190 հոգի ար. ս., տուրքերի թիւը հաւասար է 853,226 ուրբլու, կամ միջին թուով ամեն մի ընտանիքի վրայ 35 ո. 95 կոպ. (իսկ ար. ս. հոգուն 11 ո. 98 կ):

Եթէ ի նկատի առնենք որ ներկայումս միւլքները համեմատած այն ժամանակուայ հետ 3—4 անգամ աւելի թանգ են և որ հիմիկուան արծաթ դրամը այն ժամանակուանից 2—3 անգամ արժան է, և որ միջակ անձնաւորութեան տարեկան եկամուտը ներկայումս հաւասար է մօտ 40 ուրբլու (կամ այն ժամանակուայ 13—20 ուրբլուն) ակներև պիտի համարել, որ խանական իշխանութեան ժամանակուայ տուրքերի քանակութիւնը համեմատ էր ստացուած եկամուտի $\frac{1}{2}$ $\frac{1}{3}$ -ին (մօտ 6 ո. ստացած 13—20-ից):

Վճարել ստացուածի այդ տոկոսը տէրութեան՝ մի այն տեսակ բռն է, որի տանելը ծանր պէտք է համարել ոչ միայն այն ժամանակուայ կիսաղքատ և կիսակուլտուրական ազգաբնակչութեան համար, այլ նոյն իսկ ներկայի աւելի հարուստ և կուլտուրական եւրոպացիների համար:

Զարմանալի չէ, որ այդչափ հարկերով ծանրաբեռնուած երկրում չէր առաջ գնում լուսաւորութիւնը և չէր աճում նոյն իսկ ինքը ազգաբնակչութիւնը:

Ս. ԶԱԽԱՐԵԱՆ

ՎԵԱԶԵՍԼԱԻ ԱԻԿՍԵՆՏԵՎԻԶ ՄԱՆԱՍՍԷԻՆ

Փետրուարի 13-ին Պետերբուրգում վախճանուեց նախկին պրոֆէսոր Վեաչեսլաւ Աւկսենտեվիչ Մանասսէին, որի անունը ամենաժողովրդական անուններից մէկն է Ռուսաստանում: Նրա մահը անկեղծ ցաւակցութիւն առաջ բերեց ամեն տեղ:

Օգտուելով զանազան կենսագրական տեղեկութիւններից, որոնք լոյս են տեսել մինչև այժմ, մենք կ'ուզէինք ծանօթացնել հայ ընթերցողներին այս հաղուագիւտ անձնաւորութեան հետ:

Մանասսէինը ծնուել է Ղազանի Վերին-Դեվլեդէր գիւղում 1841 թուի մարտի 3-ին, այդ գիւղի աղքատ կալուածատէր մայեօր Աւկսենտի Պետրովիչ Մանասսէինի ընտանիքում: Այդ ընտանիքից դուրս են եկել մի քանի նշանաւոր մարդիկ. Վեաչեսլաւ Աւկսենտեվիչի հարազատ հօրեղբայրը († 1833) եղել է իրաւաբանութեան շատ յայտնի պրոֆէսոր Ղազանի համալսարանում: Նրա եղբայրը, Նիկալայ Աւկսենտեվիչ († 1895 թ.), արդարադատութեան մինիստր էր:

Իր սկզբնական կրթութիւնը ստանալով իրաւաբանական ուսումնարանում, Վեաչեսլաւ Աւկսենտեվիչը 1857 թ. քննութիւն տուեց Մոսկուայի համալսարանի բժշկական քաժնում և ընդունուեց իբրեւ 450 աշակերտներից առաջինը: Մինչև ուսման ընթացքը աւարտելը նա ստիպուած էր 5 անգամ փոխել համալսարանները իր բողոքող բնաւորութեան շնորհիւ, թէև միշտ առաջնակարգ ուսանողներից էր: Դորբատի համալսարանում ուսանելիս նա երկու ամիս բանտարկութեան ենթարկուեց:

Պետերբուրգում 1866 թ. բժշկական գիտութիւնը աւարտելով, Ակադեմիայի առաջարկութեամբ Մանասսէինը 3 տարի մնաց պրոֆ. Բօտկինի մօտ կատարելագործուելու համար և յետոյ 1870 թ. երկու տարով ուղարկուեց արտասահման՝ ուսուցչապետութեան համար պատրաստուելու նպատակով:

Իբրև պրոֆէսոր և գիտնական, Մանասսէինը աչքի էր ընկնում իր արտաքոյ կարգի զարգացումով, իր յիշողութեամբ և դասախօսելու հազուագիւտ ընդունակութիւնով: Նրա դասախօսութիւնները—միշտ կենդանի, փայլուն և գրաւիչ—հաւաքում էին բազմաթիւ ունկնդիրներ զանազան լսարաններից, նոյն իսկ բժիշկներից: Բովանդակութեամբ հարուստ նրա դասախօսութիւնները կրում էին և հրապարակախօսական կնիք: Իր դասախօսութիւնների մէջ նա կանգ էր առնում և բարոյական հարցերի վրայ—բժիշկի բարոյական պարտականութեան և անձնագործ վերաբերմունքի մասին դէպի իր մերձաւորը, դէպի հասարակութիւնը:

Նա ինքը բարոյական պարտականութիւնների մարմնացումն էր: Նա սկզբունքով հակառակ էր, որ բժիշկ-պրոֆէսորները պարագեն մասնաւոր պրակտիկայով և պահանջում էր, որ նրանք նուիրուեն գիտութեան, մասնաւոր պրակտիկան թողնելով պրակտիկայով ապրող բժիշկներին: Հաւատարիմ իր սկզբունքին նա հրաժարուեց փողաւոր պրակտիկայից: Այնու ամենայնիւ նա ունէր բազմաթիւ հիւանդներ աղքատ դասակարգի, բժիշկների, ուսանողների և գրականագէտների շրջանում, որոնց բժշկում էր նա սիրով ձրիաբար և այցելում էր երբեմն օրեկան երկու անգամ: Այդ կողմից նա կատարեալ հակապատկեր էր ներկայացնում պրոֆ. Զախարինին, որի շահամու հետեողները տարածուեցին ամեն տեղ:

«Մանասսէինը թշուառների իսկական բարեկամն էր: Նա կարողանում էր տաքացնել կեանքի ցրտից սառածներին, նա կարողանում էր մի հայեացքով ցրել, գոնէ մի բուպէ, այն խաւարը, որ կիտուել է թշուառի շուրջը: Նրա խորունկ և պայծառ աչքերի մէջ փայլում էր բժշկական խորատեսութեան և սիրոյ, քնքոյշ ցաւակցութեան բարեխառնութիւն», ասում է «Рус. Вѣд.» լրագիրը:

Նա միշտ և ամեն տեղ ջերմ և անկեղծ պաշտպան էր հանդիսանում ուսանողների շահերին, չը բաւականանալով միայն լուր խօսքով, այլ նաև դործով ապացուցանում էր իր համակրութիւնը դէպի երիտասարդութիւնը: Այսպէս, օրինակ, 1872 թուից ի վեր լինելով բժշկական Ակադեմիայի մատենադարանապետ, 1879 թ., երբ փակեցին ուսանողների ընթերցարանը, միացնելով նրան Ակադեմիայի մատենադարանին, նա ցաւակցելով ուսանողութեան՝ հրաժարուեց զրադարանապետի պաշտօնից: Մտնելով չքաւոր ուսանողներին օգնող ընկերութիւնը նրա անկեղծ դրութեան ժամանակ, նա 14 տա-

րի շարունակ իր նախագահութեամբ շատ եռանդուն կերպով առաջ էր տանում ուսանողների օգնութեան գործը: Բազմաթիւ ուսանողներին նա միջոց տուեց աւարտելու իրանց ուսումը: Ուսանողութիւնը նրան պաշտում էր իբրեւ իր ազնիւ ուսուցչին և անփոխարինելի ցաւակցողին: /

31 դեկտեմբերի 1891 թ. լրացաւ 25 տարին նրա ուսուցչապետական գործունէութեան և նա 50 տարեկան հասակում, սկզբունքով սահման համարելով այդ հասակը դաստիարակչի համար, հեռացաւ պրոֆէսորութեան պաշտօնից՝ ասպարէզը թարմ ոյժերին թողնելու համար: Եւ յորդորը անդօր եղաւ յետ կանգնեցնելու նրան այդ վճռից:

1880 թուից սկսում է Մանասսէինի հրապարակախօսական գործունէութիւնը: Նրա ստեղծած «Врагъ» շաբաթաթերթը, որ նա խմբագրում էր 21 տարուց աւելի, հէնց սկզբից գրաւեց ուսւ բժիշկների սէրը և համակրութիւնը, և շատ շուտով հեղինակութիւն և ժողովրդականութիւն ձեռք բերեց զանազան խաւերում: Եթէ համալսարանում նա խօսում էր միայն ուսանողների հետ, շաբաթաթերթի միջոցով նա հնարաւորութիւն ունէր իր ձայնը լսելի դարձնել ամբողջ հասարակութեան համար: Մանասսէինի քարոզը բղխած լինելով, անպայման ազդեցիւ և չիտակ, միևնոյն ժամանակը գիտութեամբ սպառազինուած մարդուց, այնքան աջող էր, որ նա ստեղծեց Թուսաստանում, մինչև այդ չեղած, բժշկական հասարակական կարծիք:

Շատ բարձր պահելով բժշկի կոչումը հասարակութեան մէջ, առաջադրելով հանգերձ շատ մեծ բարոյական պահանջներ բժշկին, նա միշտ պաշտպանում էր նրանց հասարակութեան անարդար յարձակումներից, բայց միևնոյն ժամանակ անխնայ հալածում էր բժշկութեան անարժան ներկայացուցիչների զաւղիր գործերը: Նա ինքը, ինչպէս իրաւացի նրան անուանում են, մարմնացած «հասարակութեան խիղճն» էր: Նա միշտ հակառակ էր բժիշկների կողմից տարածած բեկլամներին, Զախարինի նիւթապաշտ շիօլային, ազգայնական թշնամութեան: Նա շարունակ քննադատում էր կլասիկական ուսումը, մատնացոյց էր անում գիւտորական բժիշկների աննախանձելի դրութիւնը: Նա ջերմ պաշտպան էր կանանց բարձրագոյն կրթութեան և նրանց իրաւունքների հաւասարութեան տղամարդկանց հետ: Զեմպովների բժշկական օգնութիւնը նրա փայփայած ինդիւրներէն մէկն էր:

Նա թողել է բազմաթիւ գիտական յոյժառուութիւններ՝ թէ որոնք են և թէ օտար չեղանկրողի: Մ. Երվանդայի փոխադատ Բ. Ի. ամ. փամանտի մամկնոցը յաժման ազմ զմեկնոց փայլ

Իբրև խմբագիր նա ուշադրութեամբ կարդում և խմբագրում էր, երբեմն հիմնաւորապէս բարեփոխում և գրական-գիտական ձեռնարկա թուր տպուելիք յօդուածներին: Մանասսէինը աշխատում էր չափազանց: Նոյն իսկ ամառանոցում, հանգստութեան ժամանակ, օրական 13 ժամ զբաղւում էր խմբագրական շտաբի օգնականի, օրական 13 ժամ զբաղւում էր խմբագրական շտաբի օգնականի, օրական 13 ժամ զբաղւում էր խմբագրական շտաբի օգնականի, օրական 13 ժամ զբաղւում էր խմբագրական շտաբի օգնականի:

Հանգուցեալի կտակի համաձայն «Врачъ» շաբաթաթերթը, լրացնելով 1901 թիւը, պիտի դադարացնէ իր գոյութիւնը: Եւ իսկապէս այդ շաբաթաթերթը իր բարոյական դերքով և իր ազդեցութեամբ անպայման կապուած էր Մանասսէինի բարձր անձնաւորութեան հետ: Առանց Մանասսէինի «Врачъ»-ը բոլորովին այն չէր լինի, ինչ որ էր:

Բացի գիտական, մանկավարժական և գրականական գործունէութիւնից, Մանասսէինը եռանդուն դեր էր կատարում զանազան ընկերութիւնների մէջ: Գրականագէտների օգնութեան ընկերութեան մէջ նա նախագահ էր և պատուի դատաւոր: Գրականագէտների Դաշնակցութիւնը (СЮЗЪ ПИСАТЕЛЕЙ) հիմնուելիս, Մանասսէինը, իր բարոյական բարձր անուան շնորհիւ, միաձայն ընտրուեց պատուի դատաւոր և մինչև մահ ամեն տարի ընտրւում էր այդ պաշտօնի համար:

Մանասսէինը մասնաւոր կեանք, բառիս սովորական նշանակութեամբ՝ չունէր: Նրա կեանքը ամբողջապէս նուիրուած էր հասարակութեան բարձր իդէալների ծառայութեան: Նա ապրում էր շատ պարզ և համեստ մի անշուք բնակարանում, զբօսելի շրջանում, միշտ զբաղուած, միշտ սիրալիր դէպի շրջապատողները, դիւրահաւատ դէպի մարդիկ, միշտ մտածելով ուրիշների համար: Իբրև իսկապէս ինտելիգենտ և զարգացած մարդ, նա անտարբեր էր դէպի կեանքի «հաճոյքները» (հարքստութիւն, պատիւ, զուարճութիւններ և այլն) և առում էր մարդկանց սուտ, կեղծ և անտի յարաբերութիւնները: Նա մեծ մարդկանց յատուկ համեստութեամբ, հրաժարւում էր զանազան պատուաւոր անուններից (տիտղոսներից) և պաշտօններից: Այսպէս օրինակ, նա հրաժարուեց ակադեմիկ ընտրուելու քուէարկութիւնից, նա միշտ հրաժարւում էր բժշկական համաժողովներում նախագահ ընտրուելուց, առարկելով թէ՛ ինքն անպէտք է այդպիսի պատուաւոր և հանդիսաւոր տեղերի համար: «Ես ինձ զգում եմ սարսափելի յիմար և անբախտ մեծ հասարակութեան մէջ. այն միտքը, որ ես ստիպուած կը լինեմ ճառեր արտասանել, ինձ վաշտաւորում է», ասում էր նա:

Ամեն մի գործի մէջ ինչ որ նա յանձն էր առնում, զընում էր իր ամբողջ հոգին և սիրտը. վարել մի պաշտօն միայն ձեռնանութեան կամ պատուի համար, այդ շատ հեռու էր նրա բնաւորութիւնից:

Մանասէինը իբրև անձնաւորութիւն՝ իդէալական մաքրութիւն ունէր, իբրև ուսուցիչ՝ հանճարեղ էր, իբրև բժիշկ՝ օրինակելի և իբրև խմբագիր՝ հազուագիւտ:

ԲԺ. ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Վրաց գրականութեան ապագան. — Գրական լեզուի հարցը. — Նոր արշաւանք
հայերի դէմ:

Վրաց մամուլի և գրականութեան մէջ Երևան են գալիս լաճախ այնպիսի հարցեր ու երևոյթներ, որ միանգամայն յատուկ են և մեր մամուլին ու գրականութեան: Վերջացաւ XIX դարը, որ ահագին զարկ տուեց վրաց և հայոց նոր գրականութեան: Պէտք է արդեօք լինել լաւատես, մտածում են այժմ վրացի գրողները, և կարծել թէ վրաց գրականութիւնը հաստատ հողի վրայ է կանգնել արդէն և կարող կը լինի շարունակել իր զարդացումը: Չը կան արդեօք այնպիսի աննպաստ, ձախող համաձայնութիւններ, որ արդեւք հանդիսանան նրա բարգաւաճման. ինչ կարելի է սպասել ընթացիկ քառներորդ դարից — կենք թէ մահ այդ գրականութեան. ինչ միջոցների պէտք է դիմել այդ նորածին մանուկը, 19-դ դարու պտուղը, կորստից աղատելու համար: Ահա հարցեր, որոնցով շատ տաք, շատ ոգևորուած կերպով զբաղուած էին, քառներորդ դարը սկսուելուն պէս, վրաց պարբերական հրատարակութիւնները: Մեր ընթերցողներին արդէն ծանօթ պ. Կիսա Աբաշիձէն դիմել էր այդ առիթով (առանձին նամակներով) վրաց մէջ իրանց մտաւոր զարգացմամբ որոշ զիրք ունեցող մի քանի անձերին և խնդրել յայտնել իրանց կարծիքը, թէ ինչ արժէք կարելի է տալ անցած տասնիններորդ դարու վրաց գրականութեան, ինչ է սպասում նրան և ինչպիսի ապագայ է ցանկալի նրա համար: Պ. Աբաշիձէի առաջարկութեան ամենից առաջ սիրալիք կերպով արձագանք տուեց մի կին, որ իր հայեացքներով ահագին աղմուկ յարուցեց «Յնօրիս-Փուրցելի» և «Իվերիա» ամենօրեայ լրագիրներում: Տիկնոջ գրութիւնը, ուղղուած պ. Աբաշիձէին, ունէր, վրացի գրողների կարծիքով, խիստ կարևոր նշանակութիւն այն պատճառով, որ նա մի կատարեալ արտայայտութիւն էր վրաց ինտելիգէնցիայի ահագին մեծամասնութեան տրամադրութեան. այն մեծամասնու-

թեան, աւելացնում են նրանք, որ փայլում է իր «եսական, փափկասէր, սուտ-պեսսիմիստ, իդէալազուրկ և այլասեռուած բնաւորութեան բոլոր նշաններով»:

Բերում ենք այստեղ այդ զարդացած տիկնոջ նամակը մի քանի կրճատումներով.

«Թէպէտ և իմ կողմից մեծ համարձակութիւն է—ասում է տիկինը—կարծիք յայտնել այն առարկայի մասին, որ, պէտք է խոստովանուեմ, համարեա բոլորովին անծանօթ է ինձ, բայց և այնպէս, պէտք է կատարեմ ձեր ինդիքը, յարգելի պարոն: Ես, իմ դժբախտութեան և ամօթի համար, քիչ եմ ծանօթ վրաց գրականութեան հետ և՛ անկեղծ խօսելով, ցանկութիւն էլ չունեմ նրան ճանաչելու: Եւ չունեմ ցանկութիւն այն պատճառով, որ այդ գրականութիւնը անկարող է գոհացում տալ մտքիս: Մեր գրականութիւնը շատ աղքատ ու անհետաքրքիր է այն անձերի համար, որոնք ունեն արթուն բանականութիւն և սովորելու անյաղ ծարաւ... Մեր գրականութիւնը կեանքից յետ մնաց... Սովորելու զօրեղ տենչը, որ այրում, փոթոթում է այժմ այն ամեն մարդկանց, որոնց մէջ զարթել է փոքր ի շատէ բանականութիւնը, ամենեւին գոհացում չէ ստանում վրաց գրականութիւնից: Այն մի քանի օազիսները, որ ուրախ-ուրախ հանդէս են գալիս տեղ-տեղ այդ ահալին անապատում,—Ռուսթաւելին, Բարաթաշվիլին, Ճավճալաձէն, Օրբելիանին, Ակ. Ծերեթելին, Ղազըէզը—այնքան հարուստ չեն ջրով ու ստուերով, որպէս զի այնտեղ հանգիստ առնէ, ծարաւը կտտրէ և ոյժ ժողովէ երաշտից և նեղութիւնից թուլացած ճանապարհորդը: Վրաց գրականութիւնը, կրկնում եմ, յետ մնաց և այժմ միայն պատմական ու հնազդիտական հետաքրքրութիւն է ներկայացնում: Վրաց գրականութիւնը աղքատ է, որովհետեւ կարգացող չունի, և կարգացող չունի—որովհետեւ աղքատ է: Այսպէս, յարգելի պարոն, ինչպէս տեսնում էք, ես վրաց գրականութեան երկրպագուն չեմ, թէպէտ և կը ցանկայի լինել այդպիսին: Այդ պատճառով միք զարմանայ, եթէ ես ձեր այն հարցին՝ թէ «ինչ ապագայ է սպասում վրաց գրականութեանը»—մի այսպիսի հարց առաջարկեմ. ինչ է սպասում արդեօք թղթախտաւոր ծնող-ների այն զաւակին, որ մեծանում է մութ և խոնաւ նկուղում, բարձի թողի եղած և մոռացուած ամենքից: Այդ հարցը կարող է ունենալ միայն մի պատասխան. ի հարկէ մահ, բայց դանդաղ թէ՛ արագ վրայ հասնող մի մահ—այս է հիմա գլխաւոր հարցը: Բանը նրանումն է, թէ որքան ժամանակ կարող է պահպանել մեր գրականութեան շունչը այն բարեգործ բժիշկը, որ վրացի գրող է կոչւում: Ե՞րբ վերջ կը տրուի արդեօք մեր գրականու-

Թեան հոգեկարգին—ներկայ թէ եկող քսանը մէկերորդ դարում։ Ինձ թւում է, թէ այդ բազմատանջ երեխան աւելի շուտ կը տայ հոգին, որովհետեւ չափից դուրս մուլթն է նրա ընակած նկուղը և հանճարի ու տաղանդի ոչ մի շողք չէ լուսաւորում ու տաքացնում նրան իր կենդանատու ոյժով։ Մի հանճար միայն կարող է յարութիւն տալ մեզ, եթէ միայն ժամանակին ծնուի դա, ապա թէ ոչ, նա կարող է գուցէ այնպիսի մի ժամանակ երևալ, երբ նրան հանդիպի միայն մի լուռ գերեզման, որտեղ վրացերէն արտասանուած խօսքը այլ ևս ոչ ոքին հասկանալի չի լինի։ Մտէք վրացի ընտանիքը, մտէք ուսումնարանը, որ տեղերից դուրս են գալիս մեր ապագայ մայրերն ու գործիչները, դուք կը գտնէք մարդու սիրտը տակն ու վրայ անող պատասխանը այն հարցի՝ թէ մնացել են արդեօք դեռ ևս աշխարհում վրացիք։ Եւ եթէ այսօր կարելի է գտնել դեռ ևս որեէ անկիւնում սգի շոր հագած ու այտերը չանգոտած, իր բախտը ողբացող վրացի մարդ,—քսաներորդ դարու վերջը, իմ կարծիքով, այդպիսի վրացին հնազիտական հաղուագիւտ իրերից մէկը կը դառնայ... Մի այսպիսի ժամանակ մարդկանց անտարբերութիւնն ու սառնութիւնը ոչ հասկանալի է և ոչ էլ տանելի։ Դեռ մենք կարող ենք ապրել, քայց բռնի կերպով սպանում ենք մեզ, զօռով անդամալոյժ ենք չլինում մեզ։ Նայենք մեր շուրջը և ամենայն տեղ կը տեսնենք, որ ճանապարհորդները այնքան աւելի ապաւինում են խարիսխի ոյժին, որքան նաւը դէպի ծովի խորերն է քաշւում։ Մի ժողովրդի փրկիչ խարիսխը գեղարուեստն ու գիտութիւնն են և որչափ այդ խարիսխը գոյութիւն ունի, ոչ մի ազգ չի կլանուի, ինչքան էլ փոթորիկը կատաղի։ Այդ է իմ հուստը, միայն չը գիտեմ թէ արդեօք այդպիսի մի հաւատ ինձ, իբրեւ վրացուհու, դէպի յոյս կը տանի, թէ յուսահատութիւն։ Գիտեմ միայն, որ ներկայ քսաներորդ դարը այն սփիւնքն է, որ իր սառը և անդուլթ ձայնով մեզ ասում է. գուշակիւր ինձ, ապա թէ ոչ կը կլանեմ քեզ *)»։

Այսպէս է խօսում ինտելիգէնցիայի ահագին մեծամասնութեան սրտի թարգման, բարձր դիրք ունեցող, լուսաւորուած սիկինը։

Այդ գրութեանը վրացի գրողները տուեցին հետեւեալ պատասխանը։

Մեր ինտելիգէնցիան, ասում են նրանք, վատ է համարում այն ամենը, ինչ որ գրուած է վրացերէն լեզուով։ Բայց եթէ ամբողջ վրաց գրականութիւնը, կամ նրա որ յօդուածը կ'ուզես,

խմբագրութեան 1884 թ. 1366 (27 յունուարի)։

— Լուսաւորումը զոչ ամենայն յոյսով —

թարգմանուի, օրինակ, ուսերէնի,—նա կրկնապատիկ արժէք կ'ունենայ այդ արհարմարհող ինտելիգէնցիայի աչքում: Թարգմանեցէք հէնց այժմեան նոր, տաղանդաւոր մի քանի վրացի վիպասանների արտադրութիւնները և նրանց տակը դրէք Պօթօպենկօի կամ Չելսօվի անունները,—ասում է մի գրող—և կը տեսնէք, որ այդ ինտելիգէնցիան կը թռչկոտի ոգևորութիւնից: Վրացերէն գրութիւնները չեն կարդում,—գրում է մի ուրիշը—և ուզում են որ նրանք անպատճառ շատ տաղանդաւոր, հանճարեղ լինեն, բայց մոռանում են որ հետտօրին հարկաւոր են լըսողներ, դերասանին—հանդիսականներ, քահանային—ժամաւորներ, որպէս զի այդ մարդիկ ոգևորուած կատարեն իրանց գործը. իսկ ի՞նչ սրտով գործէ մի գրող, երբ նա չունի կարգացողներ, նամանաւանդ ինտելիգէնտ կարգացողներ:

Բոլոր յօդուածագիրները գալիս են վերջի վերջոյ այն եզրակացութեան, որ վրաց գրականութեան նման մի գրականութիւն, որ տուել է անցած 19-դ դարում այնչափ աչքի ընկնող տաղանդներ, չը պէտք է, իսկապէս, մեռնի, բայց այդ մահը կարող է և տեղի ունենալ, եթէ հասարակութիւնը և մանաւանդ հետզհետէ աճող ինտելիգէնցիան չարունակէ քչայնեկ այդպէս այդ գրականութեան ընթերցողների թիւը:

Վրաց մամուլի մէջ գրուած է այժմ գրական լեզուն մաքրելու և զարգացնելու հարցը: Այդ կողմից չափազանց խիստ և բծախնդիր է պահպանողական «Իվերիա» լրագիրը, որ շարունակ ուղղում է միւս հրատարակութիւնների քերականական սխալները ու պահանջում, որ նրանք օտար բառեր չը գործածեն: Բանը հասաւ մինչև այնտեղ, որ նա մի օր յարձակում գործեց «Յնօբիա-Փուրցելի»-ի վրայ և այն պատճառով, որ վերջինս գործ էր ածել՝ առանց թարգմանելու՝ Красногогорская փողոց զարծուածը, մինչդեռ աւանդական սովորութեան համաձայն լրագիրը պէտք է թարգմանէր նրան: Յօդուածագիրներից ոմանք մեղադրում են նոր գրողներին, որ նրանք չեն ուսումնասիրում հին վրացերէնը, միւսները—թէ նրանք գլխովին և ստրկօրէն անձնատուր են լինում օտար լեզուի ազդեցութեան, երրորդները—թէ նրանք չեն յագեցնում իրանց ծարաւը իսկական, մաքուր աղբիւրներից—բուն ժողովրդից: Ահա ինչ է ասում, օրինակ, այդ կենդանի աղբիւրի մասին վրացի լեռնականների մէջ ապրող, ճոխ ու անուշ լեզուով գրող, տաղանդաւոր երիտասարդ բանաստեղծ Վաթա-Փչաւելաւն. «Ի՞նչ է նշանակում լեզու գիտենալ: Ի հարկէ, բաւական չէ, որ մարդս լոկ բառեր իմանայ, թէկուզ ամբողջ վրացերէն բառարանը. նա պէտք է կարողանայ բառերն այնպէս համաձանեցնել միմեանց հետ, որ նախադասու-

Թիւն կազմուի: Դրա համար հարկաւոր է, որ մենք իմանանք լեզուի սիրտն ու հոգին, իսկ այդ բանի համար գրողին անհրաժեշտ է ունենալ այն արժանաւորութիւնը, որ նրա սիրտն ու երակները վրայերէն զարկեն: Այդպիսի գրողներին մենք պէտք է որոնենք զեղարուեստական արտագրութիւնների հեղինակներին մէջ: Ամենաընտիր բանաստեղծին պէտք է անպատճառ ընդունենք և ամենալաւ գիտացողը լեզուի: Ի՞նչու համար: Նրա համար, որ ժողովուրդը ամենից առաջ մայրն է այդ լեզուի, իսկ ամենաընտիր երգիչը—նրա հարադատ զաւակը, և ոչ ոք չէ կարող լինել այնչափ մօտիկ իր ծնողին, որչափ նա, որ իւրացրել է իր մօր արւունն ու մարմինը: Եթէ մենք գրողի տաղանդի համեմատ գնահատում լինէինք և նրա լեզուն, այն ժամանակ ամեն մի վրայի գրող չէր ասի, միայն իր լեզուն է արժանի հետևողութեան *)»:

Յօդուածագրերի մեծ մասը, մի տեսակ գրաբարեաններ, մեծ կարեորութիւն են տալիս այդ նպատակով հին վրայերէն ձեռագիրների լեզուի ուսումնասիրութեան: Հետազօտենք, ասում են նրանք, մեր լեզուի այդ հին գանձերը, ճոխ բառարան, քերականութիւն և այլ լեզուաբանական ձեռնարկներ պատրաստենք նրանց հարուստ բառերի ու դարձուածների օգնութեամբ և ստանք գալոյ սերունդների ձեռքը՝ ուսումնասիրելու: Պէտք է ասած, որ բանը առանց չափազանցութեան չէ անցնում. մի գրող, օրինակ (պ. Պ. Յիւլիօէլի-ն), դուրանելով այդ հին լեզուն և առհասարակ վրայերէնը, ոգևորուած բացականչում է. «Պարոններ, մեր լեզուն խկապէս կարիք էլ չունի մշակուելու, այլ նրան պէտք է սովորել: Նա մշակուած է արդէն դարերի ընթացքում և գտուած որպէս կօթն անգամ կրակի միջով անցած ոսկին: Նրա հարստութեան մասին երկար ճառել հարկաւոր չէ. իր քերականական ձևերով նա ամենահարուստն է և ամենաընտիրը երկրագնդիս երեսին... Վրաց լեզուի հետքը մինչև օրս էլ պարզ կերպով պահպանուած է ամբողջ Աֆրիկայում և Ասիայում**)»... Մի ուրիշը (պ. Արչ. Զօրջաձէ-ն) խօսելով այդ ձեռագիրների և առհասարակ Վրաստանի հնութիւնների արժէքի մասին ազգութեան տեսակէտից, չէ մոռանում մի աքացի էլ տալ հայերի հասցէին: «Պէտք է աշխատենք պաշտպանել—ասում է պարոնը—մեր ազգութեան շահերը թէկուզ հէնց, օրինակի համար, ընդդէմ հայոց սուտ հայրենասէրների, որոնք

*) Տե՛ս „Իվերիա“, № 46.

**) Տե՛ս «Իվերիա», № 37.

ցանկանում են ջնջել (հերքել) Կովկասում վրաստանի հին քաղաքակրթութեան բոլոր նշանները» *):

Պէտք է ասել ի պատիւ վրացիների, որ նրանք չատ գովելի եռանդով հաւաքում են վերջին տարիներս հին ձեռագիրներ և առհասարակ վրաստանի վերաբերեալ հնութիւններ: Նրանց մի քանի տարի առաջ հիմնած (Թիֆլիսի Սիօն եկեղեցու բակում) պատմական-եկեղեցական թանգարանում գտնուում է այժմ մօտ 700 մեծ և փոքր ձեռագիր և բազմաթիւ հին իրեր: Բաւական է ասել, որ այդ ձեռագիրներից 400 հատը ձեռք են բերուած միայն վերջին 2 տարում: Այժմ, երկու մասնագէտ զբաղուած են, վրաց Կիրիոն եպիսկոպոսի նախաձեռնութեամբ, թանգարանի ձեռագիրների և իրերի գիտնական ցուցակի պատրաստութեամբ, որ շուտով պէտք է տպագրութեան յանձնուի: Սպասուում են նոյնպէս մօտ 100 ձեռագիր, որոնց ձեռք բերելու համար բանակցութիւններ են սկսուել: Այժմ, երբ վրաց զրական լեզուն զարգացնելու հարցը առաջնակարգ տեղ է բռնում վրաց մամուլի մէջ, ցանկութիւն է յայտնուում՝ կազմել մի ընկերութիւն, բայց անել յատկապէս գիտնական նպատակով մի սեփական տպարան և ձեռք զարկել այդ ձեռագիրների տպագրութեան, որոշ ընտրութեամբ: Այդ նպատակով Իմերէթի վրացի եպիսկոպոս և բարեգործ Ալէքսանդրը նուիրեց մի քանի ամիս առաջ 2200 ռուբլի, իսկ Թիֆլիսի Թեմի վրաց հոգևորականութիւնը — յատկացրեց տարեկան 1000 ռուբլի Թեմի մոմավաճառութեան արդիւնքից, սկսած անցեալ 1900 թուականից:

Շատ ցաւալի է մեզ արձանագրել այստեղ ուղղութեան այն փոփոխութիւնը, որ տեղի ունեցաւ վերջին ժամանակներս ամենօրեայ «Յնօբիս-Փուրցելի» (Տեղեկութիւնների թերթ) լրագրում: Այդ լրագիրը, որ առաջ միմիայն լուրերի և յայտարարութիւնների մի անշա՛ն թերթիկ էր, ներկայ տարուայ սկզբից դուրս է դալիս մեծացրած զիրքով և սովորական լրագիրների բոլոր բաժիններով: Նա ունի նոյնպէս խմբագրութեան անդամներ և աշխատակիցների բոլորովին նոր կազմ: Առանձին համակրութեան արժանի էին, ի միջի այլոց, «Յնօբիս-Փուրցելի» — ի խմբագրական մի շարք յօդուածները քաղաքային ընտրութիւնների մասին, որ տպւում էին այդ լրագրի էջերում փետրուար և մարտ ամիսների ընթացքում. նրանք բոլորն էլ համակուած էին անպայման անաչառութեամբ: Սակայն վերջին երկու ամսուայ ընթացքում բոլորովին նոր քամի է վհոււմ «Յնօբիս-Փուր-

*) Տե՛ս «Յնօբիս-Փուրցելի» № 1358.

ցելի»-ի խմբադրատանից, որ սկսել է մի եռանդոտ, բայց իր ազատամիտ ուղղութեան բոլորովին անհամապատասխան, արշաւանք հայերի դէմ: Կոռւի զաշտում առայժմ հանդէս են գալիս երկու աշխատակից—պ. պ. Արշիլ Զօրջաձէ և Կլիրայա: Առաջինը այդ առիթով տպագրեց մի շարք յօդուածներ քաղաքային ընտրութիւններէ, վրացիների ապագայ տնտեսական ծրագրի և նրանց ապագայ «աղղային գործունէութեան ղեկավարող, հիմնական մտքի» մասին: Պ. Զօրջաձէն մի ոգևորուած, եռանդոտ հայրենասէր... բայց ցաւալին այն է, որ այդ ըստ երևոյթին համակրելի երիտասարդը օժտուած է մի շատ անհամակրելի յատկութեամբ. նա աշխատում է ատելի դարձնել իր հայրենակիցների աչքում նրանց դարեւոր հարեաններին, այսինքն՝ հայերին, և այդ բանի համար չէ դժուարանում դիմելու նոյն իսկ զբաղարտութիւններին:

Վրացի հրապարակախօսի այդ չար և անհեռատես ոգու հետ մեր ընթերցողներին ծանօթացնելու համար բաւական ենք համարում բերելու այստեղ հետեւեալ մի հատուած նրա բազմաթիւ գրուածներէ մէկից.

«Մեր կեանքի ամենազլիւսուոր հարցը,—ասում պարոնը—այն հարցը, որի վրայ պէտք է դարձնենք ամենամեծ ուշադրութիւնը և որի լիուլի պարզութեւոյ կախուած է նաև մի շարք ուրիշ հարցերի պարզութիւնը,—դա մեր ազգայնական հողի վրայ հիմնուած գործունէութեան հարցն է: Ամենից առաջ պէտք է պարզել, թէ կայ արդեօք մեր երկրում ազգութիւնների մաքսուում: Հակառակում են արդեօք մեր ժողովրդի շահերը օտարների շահերին: Եթէ ճիշտ այդպիսի մի մաքսուում գոյութիւն ունի, այն ժամանակ հեշտ կը լինի պատասխանել և այն հարցին, թէ ինչպէս պէտք է վարուենք մենք մեր գործունէութեան մէջ, որովհետև այն ժամանակ այդ գործունէութեան բնաւորութիւնը պէտք է բոլորովին այլ լինի: Եթէ մենք պարզենք, որ մեր ժամանակի առաջին հարցը—ազգութիւնների մէջ տեղի ունեցող կռուի և ոչ թէ տնտեսական կամ դասակարգային հարցն է, եթէ որոշուի, որ մեր կռուի հողը ունենալու է ոչ թէ տնտեսական, այլ ազգայնական բնաւորութիւն,—այն ժամանակ անհրաժեշտ կը լինի, որ մենք մշակենք մեզ համար մի սկզբունքի վրայ հիմնուած բարդ ազգայնական ծրագիր, որոշենք, թէ ինչպէս պէտք է վարուենք մեր հասարակական ասպարէզում (քաղաքային ինքնավարութեան հարցում) կամ Վրաստանի հնութեան մնացորդները պաշտպանելու գործում և կամ ուրիշ ազգերի հետ փոխադարձ տնտեսական յարաբերութիւն ունենալում: Տրամաբանութեան հակառակ կը լինի, եթէ մենք մի կողմ

մից տեսնենք և միւս կողմից բանի տեղ չը դնենք ազգայնութեան հողի վրայ տեղի ունեցող կռիւը, մի կողմից զիտենք թշնամու (?) ցոյց տուած ազգայնական զէնքը և միւս կողմից — բացասենք այդ զէնքի գոյութիւնը:

«Մենք այդ գրութեան մէջ չենք կարող մանրամասն քննել այդ հարցը, այլ միայն կը հարցնենք ընթերցողին, թէ ի՞նչ է նշանակում արդեօք այն հանդամանքը, որ Բագում, օրինակ, արդիւնաբերողները այլ ևս չեն ընդունում իրանց մօտ իմերէշներին (վրացիներին) և այդպէս էլ, Թիֆլիսում, պաշտօնից հեռացնում են մի քանի գործարաններում վրացի բանուորներին և նրանց փոխարէն գաղթականներին (հայ) ընդունում: Կամ ուրիշ ի՞նչ բան է արդեօք, եթէ ոչ մի կատաղի ազգայնական մաքառումն Թիֆլիսի ձայնաւորների ընտրութեան հարցը, ի՞նչ բան է արդեօք, եթէ ոչ մի յանդուգն ազգայնական յամառութիւն Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի վճիռ՝ ամիսփոխ պահպանելու ընտրութիւնների հին ձեւը (միանուագ): Միթէ այդ բոլոր հարցերը միայն բուրժուազական և ոչ ընդհանուր ազգային հարցեր են: Միթէ վրացի բանուորների վնասելը Թիֆլիսի գործարաններից նոյնպէս բուրժուազական և ոչ վերաց-բանուորական, ընդհանուր ազգայնական մի հարց է: Միթէ ուրիշ ազգի բուրժուազիայի զարգանալը բանուորների (վրացի) բարօրութեան հիմք կը դառնայ: Միթէ մեր, վրացիների, բարօրութեան գործին կը ծառայէ ձայնաւորների ընտրութեան այն ձեւը, որի չնորհով վրացիք միշտ յաղթուող են դուրս գալիս, ընկճուելով ուրիշների թուի գերազանցութիւնից՝ միանուագ և մի բաժնում կատարուած ընտրութեան ձևի պատճառով: Բուրժուազական թէ ազգայնական հարց է, որ այդ ընտրութիւններում հաստատուի ազգերի համահաւասար ներկայացուցչութիւնը: Եթէ քարերի վրայ գտնուած վրացերէն արձանագրութիւնների ջնջելը (?), վրաց պատմութեան խարդախելը (!) և վրաց հնութիւնների մնացորդների սեփականացնելը (!) ուրիշների (հայերի) կողմից՝ միմիայն բուրժուազիայի գործ է,—հասկա ինչո՞ւ այդ ուրիշների մէջ լոյս չեկաւ մի խրդճմտաւոր «դեմօկրատ», որ վերականգնէր ճշմարտութիւնը և ամօքէր վրացիների արդարացի զայրոյթը: Չէ, ձեռք վերցնենք այդ դասաւորութիւնից. նա այս զէնքում նշանակութիւն չուունի: Թողնենք օտարներին, որ խօսեն, ինչ ուզում են. մեզ այդ խօսքերից չահ չը կայ: Մեզ նեղաջնում են մեր սեփական վէրքերը: Այդ վէրքերը — օտարների ձեռքով մեր ազգութեան հասցրած նեղութիւններն են: Թոյլ չը տանք, որ մեզ հարստահարեն: Յոյսներս ուրիշների վրայ չը դնենք: Եթէ մենք ինքներս

մեր գլխի ճարը չը տեսնենք, ուրիշները բացի մլասից մեզ ոչինչ օգուտ չեն տայ: Այսպէս է կեանքի կանոնը. նա մի կատաղի կռիւ է գոյութեան համար և մեր երկրի բոլոր անկիւններում զգալի են եղած արդէն այդ անգութ կանոնի հետեւանքները *)»:

Այսպէս է խօսում պ. Զօրջաձէն: Աւելորդ կը լինի, կարծում ենք, ասել որ հատուածի մէջ յիշած «օտարներ», «ուրիշներ» բառերով ակնարկուում են միմիայն հայերը և ինքը յօդուածագիրն էլ յաճախ կրկնում է հայ անունը իր գրուածքների ուրիշ մասերում:

Յաւալի է, որ լրագրի այդ ոգեորուած և նոր աշխատակիցը, որ եկել է Պարիզից՝ շարունակում է կրկնել հին, բազմիցս հերքուած անհեթեթ մեղադրանքները—հայերի կողմից արձանագրութիւններ ջնջելու և հնութիւններ սեփականացնելու մասին: Ինչ վերաբերում է քաղաքային ընտրութիւններին, «Մուրճում» ցոյց է տուած արդէն, որ ազգայնական ձգտումներ չեն կարող լինել այդ հարցում: Իսկ վրացի բանուորներին գործարաններից հեռացնելու հարցը մեզ թւում է մի առասպել:

Վրացիք—շարունակում է պարոնը,—պէտք է միանան ազգայնութեան զրօշակի տակ՝ հայերի դէմ մաքառելու և զարգացնելու մայրենի լեզուն ժողովրդի մէջ, ծաւալելուն դրա մէջ ազգայնութեան իդէալները մայրերի գրականութեան և գեղարուեստների միջոցով, կազմել ընկերութիւններ և սինդիկատներ վրացի վաճառականների և արդիւնագործների թիւը շատացնելու համար, կազմել ընկերութիւններ անանկացող ազնուականների կալուածները գնելու և նպաստաւոր պայմաններով գիւղացիներին տալու համար, որպէս զի այդ կալուածները շանյնեն հայերի ձեռքը, զօրեղ կերպով միանալ ձայնաւորների ընտրութիւնների ժամանակ բոլոր այն քաղաքներում, որտեղ հայեր կան և մրցել դրանց հետ ինքնավարութեան գործում:

Բայց պ. Զօրջաձէն համեմատաբար քաղաքավարի լեզուով է խօսում հայերի դէմ, մինչեւ «Յնօբիս-Փուրցելի»-ի միս աշխատակից պ. Կվիրայաշն ուղղակի անպատկառ է:

«Իմ ախալցխացի թղթակիցս—ասում է պ. Կվիրայաշն իր ֆէլիտոներից մէկում—դանգատուում է իրանց քաղաքային ինքնավարութիւնից. վերջինս ուշադրութիւն չէ դարձնում քաղաքի այն մասի վրայ, որ վրացիներով է բնակեցրած և որ «հին

*) Տե՛ս «Յնօբիս-Փուրցելի», № 1466 (16 մայիսի):

քաղաք» կամ «Ռուբաթ» է կոչւում: Այդ ցաւը, իմ վայրացած թղթակից, նոր չէ, հին է: Զարմանալին այն կը լինէր, որ այժմեան քաղաքային ինքնավարութիւնները մի լաւ բան անէին, ապա թէ ոչ վատ բան անելը—նրանց արհեստն է: Ճշմարիտ որ, զարմացել եմ քեզ վրայ, ախր դու Ախալցխայի կեանքը ուսումնասիրած լինելով՝ էլի զարմանում ես դրանց արածի վրայ... ում ձեռքումն է արդեօք արեւելեան Վրաստանի քաղաքների ինքնավարութիւնը... Ահա ես նկատում եմ, հեռուից նկատում եմ, որ բեղիդ տակը ժպտացիր... Դա այնպիսի մի տեսակի կամ ցեղի ժողովրդի ձեռքումն է, որի ամենեկին հոգը չէ թէ մի գեղեցիկ առաւօտ քո «Ռաբաթը» գետինը կ'անցնի. նրա հոգը չէ, թէ մի այդպիսի առաւօտ ջուրը կը կործանէ Գօրի քաղաքը. նրա հոգը չէ, թէ ամբողջ Թիֆլիսը կը խեղդուի գարշաճոտութիւնից և միմիայն Սօլօլակի թաղը կ'ապրի ու կը փարթամանայ: Դիտես մենք ինչի ենք նմանում: Մի այնպիսի՝ արտաքուստ հիանալի՝ խնձորի կամ տանձի, որի միջուկը ճիճու է նստած. կրծում է նրա սիրտն այդ ճիճուն ու կամաց-կամաց հատեցնում նրա կեանքի զօրութիւնը: Դանակը քսելով այդ հիանալի պտուղին, մենք տեսնում ենք նրա մէջ շարժուող պարարտ, սպիտակ, ձիւնաթաթախ որդը: Ահա այս հիւր-որդը կրծում է իր ասպնջականի (հիւրընկալի) սիրտը ու ձգտում նրա կեանքը կարճելուն: Ահա այստեղ է, սիրելի բարեկամ, թաղուած շան գլուխը: Դատարկ հառաչանքն ու ողբը անօգուտ է, մի այնպիսի ժամանակ, գոյութեան համար մղուող կռիւր սաստկացել է: Թէպէտ այդ կռուին պէտք է ուղեկցէր մշտապէս նաև բարոյականութիւնը, սակայն ով է տուել մի այդպիսի բան: Այդ պատճառով հարկաւոր է գտնել այնպիսի մի վահան, որի վրայ թշնամու հանած թրի սուր ծայրը ծալուի: Հիւրը հաճելի է, նա ոսկի է առաւօտը, բայց եթէ նա մնաց տանը պէտք եղածից աւելի՝ նախ արջի նման կը գրկի քեզ և ապա գլխիդ էլ կը բամբի. այդ ժամանակ արդէն նա վերածւում է սլոնձի և պէտք է նրան տնիցդ վռնգելու ճարը տեսնես» *):

Բարեբախտաբար վրաց ինտելիգենցիայի մէջ կան Գօմարտիլիի նման լուսամիտ գլուխներ էլ, որոնք խնդրին չեն նայում Զօրջաձէների և Կվիրայանների մութ ակնոցներով **):

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ

*) Տե՛ս «Յնօրիս-Փորցելի», № 1457 (6 մայիսի).

**) Տե՛ս „Новое Обозрѣніе“ 1901 г. № 5724. „Армяно-Грузинскія отношенія, И. Гомартели.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հասարակական կարգերի էվոլյուցիան.—Մարդկանց զործունէութիւնը ուղղող երկու սկզբունք.—Նուեռուրը և արդիւնագործութիւնը, իբրև հասարակական կազմակերպութեան արդիւնք.—Միջնորդներից պաշտպանող ընկերակցութիւններ.—Ռօչլէյիան սպառողական ընկերակցութիւն.—Կօօպերատիւ և ակցիօներական ընկերութիւնների տարբերութիւնը.—Ինչո՞ւ կօօպերատիւ ընկերութիւնները չեն ծաղկում հայերիս մէջ.—Նա՞հ և սկզբունք.—Նոր սերունդը գաղափարական դարձնելու միջոցներից մէկը. Գրիգ. Արծրունու հրապարակախօսական լօղուածների հրատարակութիւնը առանձին գրքով.—Մտի կրիզիսը Քիֆլիսում.—Բնակարանների կրիզիս.—Տնատէր ձայնաւորների կատարելիք դերը:

Մի ժամանակ ոչ միայն «խաւար ամբոխը», այլ և հոշակաւոր գիտնականները համոզուած էին, թէ երկիրը ոչ մի փոփոխութեան չի ենթարկուել «ստեղծագործութեան» առաջին օրից սկսած: Մարդիկ հաւատացած էին, որ նոյն սարերը, նոյն գետերն ու ծովերը, բոյսերի ու կենդանիների նոյն տեսակները եղել են, կան և պէտք է լինեն մինչև աշխարհի «կատարածը»: Բայց անցեալ դարի գիտութեան հզօր հարուածներից իսպառ ջախջախուեցան այդ միամիտ հասկացողութիւնները և զարմացած մարդկութեան մտաւոր հայեացքի առաջ բացուեց երկրի անհուն դարերի հրաշալի անցեալը իր անընդհատ և աստիճանական փոփոխութիւններով: Այլ ևս կասկած չը կար, որ մեր տեսած աշխարհի ամբողջ իրականութիւնը անցողական մի վայրկեան է երկրի առաջընթաց զարգացման մէջ, մի օղակ է, որ միացնում է դարերի խորքում կորած անցեալը անվերջ ապագայի հետ: Մարդը իր հաստատութիւններով ոչ մի բացառութիւն չէ կազմում զարգացման այդ ընդհանուր օրէնքի կամ էվոլյուցիայի մէջ, ուստի եթէ քարէ շրջանի ողորմելի մարդուկը հիմա հեռագիրներ, հեռախօսներ, օդապարիկ և շոգեկառք ունի, եթէ նրա հասարակական կեանքը իր օրէնադրական, վարչական և տնտեսական կարգերով, ինչպէս պատմութիւնն է ցոյց տալիս, այնքան փոխուել է, ինչո՞ւ յոսեռես լինել ապա-

գայի նկատմամբ և չը հաւատալ, որ մարդս ընդունակ է ստեղծել հանրականցաղի աւելի կատարեալ և արդար պայմաններ:

Անկասկած մենք կատարեալ իրաւունք ունենք դժգոհ լինելու, տեսնելով տիրող իրականութեան մէջ գերակշռող չարիքը: Սակայն մարդկանց բարքերի և հասարակական պայմանների մէջ նոյն յարաբերութիւնը կայ, ինչ որ բնական պայմանների և դրանց յարմարուած կենդանիների սովորութիւնների մէջ: Մարդկային հասարակութիւնների մէջ տիրապետող սկզբունքը այժմ ձևակերպում է՝ «ամեն մէկը իր համար» խօսքերով: Ուրեմն, ով ուզում է իր գոյութիւնը պահպանել պէտք է լաւ յարմարուի այդ պահանջին: Նախ և առաջ, ամենից շատ մարդը, այժմեան հանգամանքներում, պէտք է մտածի իր համար, որովհետև այլապէս նա աջողութիւն չի ունենալ տիրող հասարակական կարգերում: Եւ ահա ամեն մի գործնական, կամ ինչպէս ասում է ժողովուրդը՝ «խելքը գլխին մարդ» աշխատում է լինել «դանակ»՝ «գմակ» աշխարհի նկատմամբ: Եւ, իսկապէս, անհատը մեղաւոր չէ այդ բանում: Ո՞վ չի ուզւնալ լաւ ապրել, օգտուել կեանքի բարիքներից, ապահոված տեսնել իր ընտանիքը, իր զաւակներին, ո՞վ չի մտածի հիւանդութեան և ծերութեան սև օրերի մասին: Ներկայումս հասարակական կեանքը, իբրև ամբողջութիւն, չի ապահովում անհատին, պահանջելով նրանից այդ ապահովութեան փոխարէն միմիայն աշխատասիրութիւն, այլ ասում է՝ «ինչ ուզում ես արա, ինքդ քո գլխի ճարը տես. գիդիր նիւթական կարողութիւն, որովհետև միայն այդ պայմանով դու ձեռք կը բերես ապահովութիւն անձիդ և ընտանիքիդ համար. կը վայելես գիտութեան, տեխնիկայի և գեղարուեստի բոլոր բարիքները, ձեռք կը բերես պատիւ, ղիրք»: Մի խօսքով՝ ներկայումս մասնաւոր սեփականութեան քանակութիւնից է կախուած կեանքի բարիքների մեծագոյն մասը:

Այդ հիմնական սկզբունքն է իսկապէս մարդկանց տանջանքների և կատարած ոճիրների բուն պատճառը: «Ամեն մէկը իր համար» սկզբունքը զուտ անասնական է, ուստի և գոյութեան կռոււմ տիրում է անխիղճ եսականութիւն: Բայց մարդը «հասարակական կենդանի է» իր բոլոր հակումներով: Հասարակական տեսակէտը, բազմութեան աւելի նպաստաւոր լինելով, անշուշտ կամաց-կամաց պէտք է աւելի զարգանայ և «ամեն մէկը իր համար» սկզբունքը փոխուի աւելի մարդասէր սկզբունքի: «մէկը՝ բոլորի համար և բոլորը՝ մէկի համար»:

Այդ նոր սկզբունքը օրէցօր տարածւում է, և հասարակա-

կան կեանքի ստեղծած բարիքները դառնում են սեփականութիւն մասսայի: Եթէ օդը, ջուրը, լոյսը՝ բնութեան պարզեւած բարիքներ են, չը պէտք է մոռանալ որ կօմֆօրսը, կրթութիւնը, բժշկութիւնը, արդարադատութիւնը, գեղարուեստը եւ այլն՝ հասարակական կեանքի ստեղծած բարիքներ են, ուստի իրաւունք չունեն այդ բոլորը վայելել միմիայն առանձնաշնորհները: Պարզ է որ այդ բարիքները չէին կարող առաջանալ, եթէ մարդիկ, զուրկ հասարակական համակենցաղից, դատ-զատ թափառէին անապատներում և անտառներում:

Վերև մենք չը յիշեցինք մարդկանց զուտ տնտեսական գործունէութիւնը, առեւտուրը և արդիւնագործութիւնը: Բայց զժուար չէ հասկանալ, որ տնտեսական ապահովութիւնը ևս հասարակական և ոչ մասնաւոր ծագում ունի, իսկ եթէ այդ հանգամանքը խոստովում է ուշադրութիւնից՝ պատճառը այն է, որ մենք սովոր չենք վերլուծել նրան:

Վերցրէք շինեցէք մի հոյակապ տուն անապատում: Ի՞նչ արժէք կ'ունենայ այդ տունը:—Ոչ մի:

Բայց նոյն տունը մի մեծ քաղաքի կենտրոնում կը դառնար իր տիրող համար անսպառ հարստութեան աղբիւր: Այդ դեռ բաւական չէ. այն գետինը, որի վրայ կառուցած է տունը, եթէ սկզբում, երբ քաղաքը սակաւամարդ էր, արժէք քառակուսի սաժէնը, դիցուք, մի ուսուրի, գնալով բարձրանում է և դառնում 300, 500, 1000 և աւելի: Հիմա հարց տուէք ձեզ. ի՞նչ անհատական, մասնաւոր աշխատանք գործ դրեց այդ տան սեփականատէրը իր կայքի արժէքը բարձրացնելու համար: Նրա կապիտալը աշխատանքի օգնութեամբ չէր կարող այդքան օգուտ տալ: Հասկանալի է, որ հասարակական կեանքը, քաղաքի մեծանալը, մի խօսքով՝ անհատից անկախ պայմանները բարձրացրին տան, գետնի արժէքը: Այդպէս ահա այդ մի օրինակից պարզ է, որ տնտեսական աջողութիւնն էլ իր մէջ կրում է հասարակական պատճառների ազդեցութիւն:

Մենք դեռ չը յիշեցինք, որ առանց մարդկանց աշխատակցութեան, առանց որոշ պետական կարգերի, ճանապարհների յարմարութեան և այլն՝ առեւտուրը և արդիւնագործութիւնը չեն կարող ծաղկել: Իսկ ո՞վ կարող է ուրանալ, որ այդ հանգամանքները հասարակական բնաւորութիւն ունեն և ոչ մասնաւոր: Բնականաբար, առևտրի և արդիւնաբերութեան մէջ չէ կարելի թողնել, որ անհատական քմահաճոյքին զոհ գնան հասարակական շահերը: Արդարութեան պահանջը այդ տեղ էլ պէտք է մտցնի նոր, զուտ մարդկային սկզբունք, որպէս զի բախտի բերմամբ հարստացած մի ապուշ կամ գազան իրաւունք

չունենան հարստահարել մարդկանց, օգտուելով տնտեսական կեանքի անկերպարան վիճակից: Եւ այդ վերանորոգութիւնը սկսուել է:

Այս անգամ մենք միայն ուզում ենք կանգ առնել այն շարժման վրայ, որի նպատակն է պաշտպանել թէ՛ սպառողին և թէ՛ արդիւնաբերողին միջնորդների հարստահարութիւններից: Կեանքի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ միջնորդները ոչ վարում են և ոչ ցանում, բայց ամենից շատ են հնձում: Միջնորդ վաճառականները որոշ դէպքերում ահագին շահ են վերցնում, մի կողմից պակասեցնելով արդիւնաբերողի աշխատանքի չափը (օրինակ գիւղացու անճարացած զրութիւնից օգտուելով կիսագին ձեռք բերելով նրանից միս, իւղ, կաթ, ձու, բանջարեղէն, հաց, և այլն) իսկ միւս կողմից՝ թանգ ծախելով այդ մթերքները չքաւոր սպառողներին (արհեստաւորներ, բանուորներ, մանր ծառայողներ):

Այնտեղ, ուր հասարակական գիտակցութիւն կայ, հարըստահարուող գիւղացի-արդիւնաբերողները և չքաւոր սպառողները միջոց գտան պաշտպանուել միջնորդների տգրուկային յատկութիւններից: Ինքնօգնութեան անհրաժեշտութիւնը լաւ ընթերցողին առաջին անգամ Անգլիայում 1844 թուին Ռօչդէլ քաղաքի մի խումբ ջուլհակներ, տեսնելով որ անկարող են աւելացնել իրանց օրավարձը, որի մեծ մասը մտնում էր մանրավաճառների և մթերքների ծախողների գրպանները, որոշեցին սեփական խանութ բանալ, մտածեցին իրանց պէտքերի համար անհրաժեշտ ապրանքը գնել առաջին ձեռքից կամ մեծ քանակութեամբ վաճառողներից, ինչպէս անում են խանութպանները, և սեփական խանութից ծախել իրանց ընկերութեան անդամներին: «Ինչո՞ւ աւելորդ տեղը օգուտը տանք միջնորդ խանութպաններին», ասացին այդ գործնական և հաստատակամ մարդիկ, «քանի որ մենք, սպառողներս, կարող ենք առանց զրանց էլ ամեն բան ունենալ աւելի լաւ տեսակի և աւելի աժան»: Եւ այդ 40 ջուլհակները չնչին անդամավճարներով հաւաքեցին մօտ 300 ուրլի և համեստ չափերով հիմնեցին առաջին սպառողական խանութը: Փորձը աւելի աջող էր քան սպասում էին այդ առաջին պիժնէրները: Հինգ տարի շանցած Ռօչդէլեան սպառողական ընկերութեան անդամների թիւը հասնում էր արդէն 600-ի, իսկ զրամագլուխը 23 հազարի: Իւրաքանչիւր անդամ ստանում էր ընդհանուր օգտից այնքան շահաբաժին, ինչ գումարի ապրանք էր գնել նա սպառողական խանութից: Ուրեմն նա ստանում էր աւելի թարմ, աւելի լաւ և աւելի աժան ապրանք, քան մասնաւոր խանութներից և, բացի այդ, իրանց

սպառողական խանութի օգտից էլ յետ էր ստանում այնքան, որքան օգուտ էր ընկնում իր մսխած գումարին:

1891 թուին այդ ընկերակցութեան դրամագլուխը հասնում էր 3 միլիոն 700 հազար ռուբլու, իսկ զուտ օգուտը $1\frac{1}{2}$ միլիոնի... Հասկանալի է, որ այդ ընկերակցութիւնը այնուհետեւ դարձեց էլ կը բանար, գրադարան էլ, ընթերցարան էլ... Ռօչդէլեան ջուհակաները հետևողներ ունեցան ոչ միայն Անգլիայում*), Եւրոպայում և Ամերիկայում, այլ և Ռուսաստանում, և այժմ կօօպերատիւ շարժումը, ինչպէս այդ կարելի է տեսնել և պ. Տօտամանյի գրքից, հսկայական մի հոսանքի կերպարանք է ստացել, որ ողողել է բոլոր կուլտուրական երկիրները:

Գուցէ աւելորդ չը լինի մեր ընթերցողների համար մի քանի խօսքով պարզել կօօպերատիւ և ակցիօներական ընկերութիւնների տարբերութիւնը:

Ակցիօներական ընկերութեան միակ նպատակն է առևտուր անել՝ չսճ ստանալու համար, մինչդեռ կօօպերացիայի նպատակը շահը չէ, այլ տգրուկ-միջնորդներից արդիւնաբերողին և սպառողին պաշտպանելը: Կօօպերացիայի մէջ նշանակութիւն ունի անձը և ոչ նրա դրամը. մինչդեռ ակցիօներական ընկերութիւնների մէջ գերիշխողը գրանն է իր քանակութեամբ: Կօօպերատիւ ընկերութիւնները մոցնում են առևտրի և արդիւնագործութեան մէջ գեմօկրատիական, հասարակական սկզբունք, անդամների թիւը անորոշ է, ամեն մէկը ազատ կարող է մըտնել և դուրս գալ ընկերութիւնից, բոլորն էլ հաւասարապէս օգուտում են ձեռնարկութեան օգուտներից, ընդհանուր ժողովում ձայների հաւասարութիւն է տիրում: Մինչդեռ ակցիօներական ընկերութեան մէջ «փայերն» են դեր խաղում. ով շատ բաժնեթղթեր ունի, նա էլ իսկապէս ակցիօներական ընկերութեան տէրն է, ղեկավարը: Եւ իրականապէս մի խումբ կապիտալիստներ դառնում են այս կամ այն ակցիօներական ընկերութեան հրամանատարներ:

Ակցիօներական ընկերութիւնը իսկապէս շահագործում են մի խումբ կապիտալիստներ իրանց արբանեակներով: Ապշեցուցիչ է այն անամօթ ինքնավստահութիւնը, որ արտայայտում են այդ ընկերութիւնների գործերին տիրացած մի խումբ մարդիկ. դրանք նախ և առաջ ահագին ոռճիկներ են նշանակում իրանց, բաժանում են զանազան անուանական պաշտօններ իրանց

*) Կօօպերատիւ ընկերութիւնների թիւը Անգլիայում 1900 թուին հասնում էր 1,634, մօտ 2 միլիոն անդամներով, 23,2 միլ. ֆ. ստ. դրամագլխով: Զուտ օգուտը տարեկան հասնում էր 8,6 միլ. ֆ. ստերի. իսկ առևտրական շրջանառութիւնը՝ 77 $\frac{1}{4}$ միլ. ֆ. ստ:

մարդկանց՝ միմիայն դրանց փող տալու համար, ստեղծում են անբարոյականացնող սինեկուրաներ և այլն: Որ աւելի պարզ լինի տարբերութիւնը ակցիօներականի և կօօպերատիւի մէջ, առաջինը կարող ենք համեմատել կառավարութեան օլիգարխիական ձևի հետ, իսկ երկրորդը՝ հանրապետականի: Ակցիօներական ընկերութիւններն էլ ի հարկէ ունեն «բնդհանուր ժողովներ», բայց դրանք ըստ էութեան... կուշտ կատունների և քաղցած մկների մէջ մի գուարճալի խաղ է միայն:

Անշուշտ աւելի քիչ հասարակական բնագոյ, ընդհանուր շահերի աւելի պակաս գիտակցութիւն է պահանջւում ակցիօներից, քան կօօպերատիւ ընկերութեան անդամից: Այդ է պատճառը որ երկրորդ տեսակի ընկերութիւնները կարող են ծաղկել միմիայն այն ժողովուրդների մէջ, որոնք սովոր են հասարակական կեանքին: Այդ ի նկատի ունենալով դժուար չէ բացատրել թէ ինչո՞ւ հայերիս մէջ այնպէս չուտ ընդունելութիւն են գտնում ակցիօներական ձեռնարկութիւնները, իսկ ոչ մի ուշադրութեան չեն արժանանում կօօպերատիւ ընկերութիւնները: Մենք մինչև անգամ յետ ենք մնացել այդ բանում մեր դրացի վրացիներից, էլ չեմ ասում ռուսներից:

Կօօպերատիւ շարժումը կարիք ունի պրօպագանդայի: Մեր չքաւոր գիւղացին, արհեստաւորը, բանուորը առանց ինտելիգենցիայի օգնութեան չեն կարող իրանք սկսել այդ տեսակ ձեռնարկութիւններ, որոնք պահանջում են ծանօթութիւն ուրիշ ազգերի փորձի հետ և կազմակերպական որոշ ընդունակութիւն: Ուրեմն ուրանալ հայ ինտելիգենցիայի մեղքը մեր այդ յետամնացութեան մէջ՝ անկարելի է:

Տեսէք ի՞նչ ոգևորութեամբ և ճարպիկութեամբ է այդ նոյն ինտելիգէնտը, օրինակ Բագում, խեղճ ու կրակ արհեստաւորներից, գործակատարներից կարողանում «փայլեր» հաւաքել և զուտ շահագիտական ձեռնարկութիւններ կազմակերպել, ուր ինքը, այդ ինտելիգէնտը, «իբրև կազմակերպող և կառավարիչ», նախ և առաջ, ի հարկէ, «արժանավայել կերպով» իր թանկագին անձի ապահովութեան խնդիրն է ձևակերպում...

Առանց գաղափարների բեղմնաւորութեան ոչ մի գործ չի կարող սկսուել մասսայի մէջ: Ինչպէս միջատները ծաղկից ծաղիկ թռչելով նպաստում են բոյսերի բեղմնաւորութեան, այնպէս էլ ինտելիգէնտը, չփուելով ժողովրդի հետ, կարող է հարստացնել նրան բեղմնաւոր գաղափարներով: Իսկ երբ միմիայն անձնական շահով է ապրում մի ազգի ինտելիգենցիա, ինչո՞ւ, զարմանալ որ նրա ժողովուրդը այնքան խաւար է, թշուառ, անօգնական և յետամնաց:

Գաղափարադուրկ ինտելիգենցիայի մէջ գուցէ ամենաչափա- սէրը հայկականն է։ Այդ ասելով ակամայ մարդ յիշում է մի քա- նի բացառութիւններ, որոնցից ամենափայլունը Գրիգոր Արծրու- նին էր։ Եւ այդ եղակի անձնաւորոյթիւնը սրբան բեղմնա- ւոր էր իր գաղափարական դործով։ Տարաբախտաբար գերեզ- ման իջնելով նա, կարծես, դադարեց կրթիչ լինել նորանոր սե- րունդների համար։ Եւ այդ բանի մեղքը դարձեալ մեր ինտելի- գենցիայի վրայ կարելի է գցել։ Միթէ դժուար էր առանձին գրքով հրատարակել նրա բոցավառ յօդուածները։ Ինչո՞ւ ամեն մի հայ պատանի հնարաւորութիւն չունենայ կարդալ նրա հրա- պարակախօսական գրութիւնները։ Միթէ կարելի է պահանջել իւրաքանչիւրից հնախոյզի համբերութիւն և առաջարկել գրադա- րանների անկիւններում փնտռել «Մշակի» հին համարները։ Այդ շատ բնորոշ մի ֆակտ է հայերիս համար, միակ մեծ հրապարա- կախօսի յօդուածները մոռացութեան են տրուած, մինչդեռ նրա անունը դարդարում է նոյն իսկ նաւերի ճակատները ի տես ամենքի... Զարմանալի բան, մարդկանց նոյն իսկ մտքով չի անց- նում որ լոկ անունով նոր սերունդը ոչ մի գաղափար չի կարող կաղմել Արծրունու մասին, չենք ուզում օգտուել այն գանձից, որ ունենք, երևի ըստ հայկական տխմար սովորութեան պէտք է դա- րեր անցնեն, փոշիով և ցեխով ծածկուեն Արծրունու գրուածք- ները որ արժանանան լոյս ընծայուելու։ Ասում են, որ մի խումբ ինտելիգէնտներ, Բագու, մտադիր են զբեր հրատարակել, բայց դրանց գլխով չի անցնում նախ և առաջ ժողովրդին, պա- տանիներին տալ այն մարդու գրուածքները, որոնք կրթել են, ազնուացրել, զարթեցրել մի քանի սերունդ։ Եւ այդ պարոնները մտածում են մի ողորմելի ինքնահաւանի պատմութեամբ սկսել իրանց գործը... Բայց չը՝ չեղունք բուն հարցից և դառնանք կօօպերացիաների խնդրին։

Անդրկովկասի զանազան քաղաքներում կան մի քանի սպառողական ընկերութիւններ։ Երկաթուղային ծառայողների ընկերութիւնը կարծեմ դրանցից ամենաընդարձակն է։ Օգուտ տալով բազմաթիւ չքաւոր ծառայողներին, բանուորներին, նա ուսանելի օրինակ եղաւ մի խնդրում նաև Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան համար, ինչպէս այդ ցոյց տուեց «մայլին կրիզիսի» հարցը։

Ի հարկէ, Թիֆլիսի բնակիչներից բոլորն էլ միջոց չունեն միս գործ ածել ամեն օր և, գուցէ, հացը, ձուկը, իւղը, կաթը և այլն աւելի տեղ են բռնում աղքատնակութեան մեծամասնու- թեան անդառուտեան մէջ, քան միսը։ Սակայն առայժմ քաղա- քային խորհրդարանը իր ուշադրութեան է արժանացրել միայն

մասվաճառութիւնը: Ունեւոր դասերի համար, ի հարկէ, մայիսին խնդիրը աւելի մեծ նշանակութիւն ունի, քան հացի խնդիրը:

Այսպէս թէ այնպէս «մայիսին կրիզիսը» ստիպեց քըն-նել այդ հարցը դումայում: Բանից դուրս եկաւ, որ Թիֆլիսի մասվաճառները բոլորն էլ չքաւոր մարդիկ են. ոչ փող ունեն, ոչ էլ կրեգիտ—աւելի խոշոր և կատարեալ ձև տալու համար մի առևտուրին: Իբրև մանր առևտրականներ՝ մագաղանները չունէին դումայում ներկայացուցիչներ, մինչդեռ ձայնաւորների մէջ պակաս չեն կաթ, իւղ, ձուկ, հաց վաճառող խոշոր վաճառականներ, որոնք փող էլ ունեն, վարկ էլ և հազիւ թէ աւելի քիչ «ազահութիւն» արտայայտում լինէին դէպի սպառողի գըրպանը, քան մանր մագաղանները: Բայց... «մինչ ներելի է Արսմաղդին՝ անկարելի է եղան համար»...

Եթէ մեր քաղաքներում և գիւղերում չքաւոր սպառողները և մանր արդիւնաբերողները բմբունէին կօսպերսալու ընկերութիւնների նշանակութիւնը, ի հարկէ, շատ բան այնպէս չէր լինի, ինչպէս որ լինում է. սակայն ներկայ պայմաններում քաղաքային մասխանութիւնները ունենալն էլ մի քայլ է դէպի առաջ, որովհետև ընդհանուրի շահերը հասարակական խանութները յամենայն դէպս աւելի լաւ կը պահպանեն, քան նոյն իսկ կապիտալիստների ձեռքով տարած մասվաճառութիւնը: Ճանկալի է, որ հայը, կաթը, իւղը, ձուկը և այլ մթերքները նոյնպէս արժանանան մեր ձայնաւորների ուշադրութեան...

Աղգարհակութեան աժան և լաւ մնունդ մատակարարելը քաղաքային ինքնավարութեան խորհրդակցութեան նիւթ դառնալով, ինչո՞ւ չը պէտք է ուշադրութեան առնուի նաև բնակարանների հարցը: Բնակարանային կրիզիսը չէ նկատուում ձայնաւորների կողմից, որովհետև զրանց մեծամասնութիւնը կամ անատէրեր են կամ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ, որոնք կարող են մի քանի հազար յատկացնել բնակարան վարձելու համար: Բայց ազգաբնակչութեան միջին և չքաւոր դասակարգի համար բնակարանային կրիզիսը գուցէ աւելի զգալի է, քան մայիսը: Մեղ թւում է, որ բնակարանների հարցը կը ծագէր դումայում, եթէ բնակարանատէրերը ևս ձայն ունենային. թէև հետազօտութեան կարօտ չէ այն հանգամանքը, որ միջակ և չքաւոր կարողութեան տէր ընտանիքները մեր քաղաքում կամ ստիպուած են սարսափելի դնել վճարել բնակարանների համար կամ՝ կուշ գալ օդից ու լոյսից զուրկ խոնաւ նկուղներում: Քաղաքային ինքնավարութիւնը շատ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնէ բնակարանների հարցի վրայ: Եթէ մասխանութիւնների համար 50

հազար է յատկացուում և դեռ յայտնի չէ թէ ի՞նչ կը դուրս գայ այդ փորձից,—աներկբայելի է, որ եթէ քաղաքը իր հողերի վրայ փոքրիկ և միջակ բնակարանների բաժանուած յարմար տներ կառուցանի և մատչելի վարձով տայ ցանկացողներին, յամենայն դէպս, թէ ինքը կը շահուի և թէ ազգաբնակչութեան ստուար մասը:

Ի հարկէ, տնատէր ձայնաւորներից շատերը այն ժամանակ ստիպուած կը լինեն մի քիչ իջեցնել (ինչպէս ձայնաւորներից մէկը փողագուրկ և վարկագուրկ մսագործներին յանդիմանեց) իրենց «ագահութեան» չափը, բայց... պէտք է սովորել մի քիչ էլ ալտրուիստ լինել. թէև այդ ունենայ տնատէր ձայնաւորների համար լոկ բարոյական հետեանք. բայց միթէ քիչ բան է առօք-փառօք բաղմել սեփական տների փառաւոր սեղանատներում, խմիչքներով և խորտիկներով բեռնաւորուած չքեղ սեղանների շուրջը, ախորժակով ուտել քաղաքային մսախանութներից գնած ֆիլէները և միևնոյն ժամանակ մտածել, որ գովելի ինքնազոհութեամբ բնակարանների հարցն էլ վճռեցինք յօգուտ չբաւորների...

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

I. Ոռոգման հարցը Արարատեան դաճում:

Արարատեան դաշտը լեռնաշղթաներով շրջապատուած մի ցած հարթութիւն է, որ չը նայած իր սուր փոփոխական հովերին՝ ունի բաւական տաք կլիմա: Ենորհիւ այդ կլիմայի Արարատեան դաշտը կազմում է Երևանեան նահանգի շտեմարանը, նրա բազմատեսակ բերքերի պարտէզը, սակայն այն չափով, ինչ չափով որ նա ոռոգւում է, որովհետև առանց ջրի ամառային արեգակի կիզիչ ճառագայթների տակ գետինը աղանձւում, չորանում է: Անցնելով Արարատեան դաշտի երկարութեամբ գեղեցիկ այգիների, ցորենի հասուն արտերի, բրնձի ցանքերի, և բամբակի պլանտացիաների միջով, յանկարծ դուրս էք գալիս մի ամայի տեղ, որ ձեզ յիշեցնում է անապատը իր խանձուած մակերևոյթով: Այսպիսի ամայի տեղեր հարկւրաւոր և հազարաւոր դեսնառիւններով ընկած են Նախիջևանի գաւառում, Եարուրի մօտակայքը, Խոր-Վիրապի շուրջը, Սուրմալուի կողմերում և վերջապէս Սարգարաբատում: Լինէր ջուր՝ ոսկի կ'արտադրէր այդ ամայի դաշտերի իւրաքանչիւր բուռ հողը:

Ահա թէ ինչու Արարատեան դաշտում, որտեղ սղմուած ապրում է հայերից և թուրքերից կազմուած երկրագործ մի ստուար տարր, ոռոգման հարցը դառել է կեանքի ու մահուան խնդիր:

Հողի սեփականութիւնը, նրա սահմանների որոշելը անհամեմատ աւելի հեշտ է, քան ջրինը: Եթէ հողային վէճերը, կռիւ ու մարդասպանութիւններն ու անվերջ դատավարութիւնները այսօր դառել են մեր ժողովրդի համար մի չարիք, ապա որ աստիճանի քայքայիչ չափեր է ընդունել ժողովրդի մէջ նոյն վէճերը, կռիւ ու մարդասպանութիւնները ջրի առիթով:

Եւ իսկապէս վէճերն ու մարդասպանութիւնները, ջրի առիթով անպակաս են ոչ միայն սահմանների, համագիւղացիների կամ միմեանց կողքի ընկած զիւղերի, այլ և երկու հասարա-

կուլթիւնների երկու շրջանների ժողովրդի մէջ, որոնք բռունցքի և զէնքի զիմելուց յետոյ զիմում են դատարան, և տարիներ քարշ գալով այս և այն զրազրի կամ «արլակատի» յետևից և դատաստանատների շէմքերը մաշելով, քայքայւում են ու յետին աղքատութեան հասնում:

Մտէք Արարատեան դաշտի գիւղերը, հետաքրքրուեցէք նրանց վէճերով, մարդասպանութիւններով, երգել տուէք ժողովրդական երգեր, պատմել տուէք և ամեն տեղ դուք կը հանդիպէք նոյն ողբերգական անցքերին, որոնք տեղի են ունեցել նոյն ջրի պատճառով առաջացած վէճերից:

Այս չարիքը առաջացել է այն հանգամանքից, որ մի քանի տասնեակ գիւղեր օգտուում են նոյն գետից, իսկ գետի վրայ հսկում է մի ջրպետ, որ օգտուելով իր լայն իրաւունքներից ջրի կանոնաւոր բաժանումը ծառայեցնում է իր անձնական շահերին, չը նայելով որ առանց այն էլ ջրի կարիքը շատ և շատ մեծ է:

Այսպէս Արարատեան դաշտի վրայ փռուած աւելի քան 400—500 գիւղերը իրանց դաշտերով ոռոգւում են Արաքսի, Հրազդանի, Քասախի, Սև ջուր, կամ Մեծամօր, Գեառնի կամ Ազատ գետի, Վէդգի, Արփա-չայի և այլն գետերի ջրերով, սակայն զրանց իւրաքանչիւրի վրայ ինչպէս միահեծան մի տէր իշխում է ջրպետը:

Այդ գետերից իւրաքանչիւրը ոռոգում է աւելի կամ պակաս չափով գիւղերի հողեր, այսպէս օրինակ, Գեառնի կամ Ազատ գետը, որ սկիզբն առնելով Գեղարգունեաց լեռներից գընում թափւում է Երևանից դէպի հարաւ 25 վերստ հեռավորութեան վրայ Արաքսի մէջ, ոռոգում է 50—60 գիւղերի բաժանուելով 9 առունների:

Գետի հարաւային ափից ճիւղաւորւում են.

1) Ասորի Դուգիւնի առուն *), ոռոգելով 3 գիւղեր՝ համանուն, Ղրբզաւան և Թափարաչ:

2) Հայի Դուգիւնի առուն ոռոգելով 4 գիւղեր՝ համանուն, Զոհրաբլու, Մեհրաբլու և Աղջաղչաղ:

3) Ղամարլուի առուն ոռոգելով 11 գիւղեր՝ Արտաշատ, Անասլու, Ղուլամարզաւանդ, Ախունդբզաւանդ, Բէզջղաղլու, համանուն վերին և ներքին, Իւվա, Դարդալու վերին և ներքին և Մասումլու:

4) Դողկուզի առուն ոռոգելով 5 գիւղեր՝ համանուն, Օղուրբեկլու, Դալուլար, Գեօղակլու և Նօվրուզլու:

*) Առունները կոչւում են ոռոգուող գիւղերից մէկն ու մէկի անունով:

5) Բաշնալուի առուն ոռոգելով 3 գիւղեր՝ Լամանջալու, համանուն և Գիդամլու:

Գետի հիւսիսային ափից ճիւղաւորուած են.

6) Զանաղլուի առուն ոռոգելով 2 գիւղեր՝ համանուն և Վերին Աղբալ կամ Թուրքի:

7) Մի փոքրիկ առուն ոռոգելով միմիայն մի գիւղ՝ Ներքին Աղբալ կամ Հայի:

8) Իմանջալուի առուն ոռոգելով 4 գիւղեր՝ Ղարադոյունլու, Ղարադաղլու և Խարաթլու:

9) Զարֆարա կոչուած առուն ոռոգելով 7 գիւղեր՝ Ղարադոյունլու, Ղայլասար վերին և ներքին, Թօխանշանլու, Սաբունչի, Ղարահամդալու և Թամամլու:

Բացի այդ գիւղերը, Գեառնի գետի շրջանում գտնուած են 10-ից աւելի գիւղեր, ինչպէս են՝ Մուղամլու, Ռէհանլու, Չլրխանլու և այլ, որոնք ունենալով սեփական աղբիւրներ, գտնուած են Գեառնի գետի ջրային վարչութեան բայօնում:

Այժմ տեսնենք վարչական սրբախի կազմ է տնօրինում մի ամբողջ գետի ջրարածանութեան հարցը կամ աւելի ճիշտը՝ մի քանի տասնեակ գիւղերի ժողովրդի բախտը:

Իւրաքանչիւր գետի կամ ոռոգման շրջանի վրայ հսկում է մի պաշտօնեայ, որ կոչւում է Միրաւ կամ ջրպետ (մի քանի շրջաններում կոչւում է նաև չայ-բագի):

Ջրպետը ընտրւում է երեք տարի ժամանակով ժողովրդի քուէարկութեամբ եւ գաւառապետների նախագահութեամբ. և մեր ժողովրդի մէջ ոչ մի ընտրութիւն, լինի նա «գլավայական», տանուաէրական թէ գատաւորական այնքան ազմուկ չեն բարձրացնում, որքան ջրպետի ընտրութեանը: Ջրպետութեան համար, ինչպէս իրանք գիւղացիք ասում են, քարի են կանգնում ամենաազդեցիկ մարդիկ, ահագին գեր է խաղում կաշառքը, թայֆայական ու խնամիական կապերը, ջրի պէս հոսում է գինին և օղին, նոյն իսկ ընտրութեան ժամանակ տեղի են ունենում այնպիսի ջանքեր, որ յաճախ ընտրութիւնը տալիս է սպասածից բոլորովին հակառակ հետևանք: Ընտրութեանը մասնակցում են շրջանի բոլոր գիւղացիները, ամեն տասը տնից մի ներկայացուցիչ: Այսպէս Գեառնի գետի շրջանում, որ միևնոյն ժամանակ կոչւում է Գեառնի-Բասարի շրջան, եղած 50—60 գիւղը հաշւում է 6000 տուն, 10 տան կողմից մի ձայն հաշուելով, ընտրութեանը մասնակցում են 600 քուէարկողներ: Որքան էլ այդ ընտրութիւններին տրուած է կանոնաւոր ձև, գործադրելով տուփը և գաղտնի քուէարկութիւնը, բայց և այնպէս ձայներ որսալը, մանաւանդ մեր գիւղական տարրի մէջ,

կատարվում է շատ դիւրին կերպով: Եւ այսպիսի պայմանների մէջ կէսից բարձր սպիտակ քուէներ ստացողը համարւում է ջրպետ:

Ջրպետը որոշ օրէնքներ չունի, որոնցով առաջնորդուէր նա իր պաշտօնավարութեան մէջ, այլ նա ջուրը բաժանում է այն կարգով, ինչ կարգ որ սահմանուած է եղել տասնեակ տարիների ընթացքում, համապատասխան հողի քանակութեան և ջրի կարիքի. բայց դրանից դուրս նրան իրաւունք է տրուած այսպէս անուանուած «հաւար հասնել», այսինքն՝ երբ նա տեսնում է, որ այս կամ այն անհատի կամ գիւղի ցանքերը չորանում և ձեռքից գնում են, նա կարող է մէկի ջուրը կտրել տալ շատ կարիք ունեցողին:

Ահա այն իրաւունքը, որ դարձել է ջրպետի ձեռքում հարստահարելու և կեղեքելու մի աղբիւր, անարդարութիւնների ասպարէզ և անվերջ կռիւների ու մարդասպանութիւնների գլխաւոր պատճառը: Եւ այդ հաւար հասնելու հարցը այնպիսի ընդարձակ ծաւալ է ստացել, որ առանց ջրպետին դիմելու ոչ ոք ջուր չէր ստանում, իսկ ջրպետին դիմելու համար, գոնէ քաղաքավարութեան տնտեսկէտից պէտք էր մի բան տանել, լինի այդ ոչխար, թէ մի գլուխ շաքար, թէ դրամ, որոնք աւելացնում են նրա «կողմնակի եկամուտները»...

Այսպիսի քմահաճոյքներով, իւրաքանչիւր ջրպետ տնօրինում էր ամբողջ մի շրջանի ոռոգման հարցը մինչև 1891—92 թ.:

Սակայն այդպիսի տնօրմալ սխառեմից առաջացած վէճերն ու կռիւները մարդասպանութիւններն ու անվերջ դատավարութիւնները կառավարութեան ուշադրութիւնն են դարձնում խնդրի բարեփոխութեան վրայ և ահա 1891—92 թուերին այդ ուղղութեամբ տեղի է ունենում առաջին քայլը: Ջրպետների կամայականութիւնները սահմանափակելու նպատակով հաստատուեցին ժողովրդի կողմից ընտրուած (նայած շրջանի ծաւալին, աւելի կամ պակաս թուով անդամներից կազմուած) խորհուրդ, առանց որի վճռի ջրպետը իրաւունք չունի ջրաբաժանութիւնը կարգադրել: Նախկին Քեօդուկ կոչված բաժանարար փայտերը, որոնք համապատասխան բացուածքներով թափւում էր իւրաքանչիւր գիւղի ջուրը, փոխարինուեցին նոր ձևի կանոնաւոր դռնակներով (Дверь) — որոնք ունենալով իւրաքանչիւր գիւղի պատկանեալ ջրի համեմատական չափ, դրւում են ջրաբաժան կէտում, դռնակների փակմանը բացվում են հաւասար չափով ու ամրանում ջրպետների ու անդամների ներկայութեամբ: Շատ տեղերում մինչև այժմ էլ այդ դռնակները գործածութեան

մէջ չեն մտել, անհասկանալի պատճառներով: Դռնակների վրայ հսկելու համար նշանակուեցին պահապաններ: Իւրաքանչիւր գիւղում հաստատուեց գիւղացիների հերթի վրայ հսկելու համար հսկողի պաշտօն: Իսկ բոլորի հսկողութիւնը յանձնուեց մասնագէտ ջրաբաշխի, (инженеръ-гидравликъ), որ բացի հսկողութիւնից, պիտի շարունակ շրջէր գաւառները, չափէր իւրաքանչիւր գետի ջրի քանակութիւնը, տարբեր ժամանակներում և ուսումնասիրէր հողերի քանակութիւնը ու նրանց ունեցած ջրի կարիքը, որպէս զի երկար փորձերից յետոյ կարելի լինէր սահմանել իւրաքանչիւր գիւղի տրուելիք ջրի քանակութիւնը:

Ջրպետը անդամների հետ ունի իր դիւանը, իր գրագիրը և համաձայն նոր կազմած, դեռ ևս կիսամշակ, հրահանգի ունենում է նիստեր, լսում գանգատաւորներին, արձակում վճիռներ և այդ բոլորի համար կազմում արձանագրութիւններ: Չը նայած այդ բոլորին մինչև այսօր գործադրուում է «հաւար հասնելու» սխտանը, հետեապէս խաթրը, խնամութիւնը և կաշտութիւնը, թէև այժմ աւելի քիչ չափով, որովհետև այժմ պիտի ջոկ-ջոկ չահել թէ ջրպետին և թէ անդամներին...

1899 թուին մի քանի մասերում, ինչպէս նաև օրինակ Գեառնի գետի շրջանում, կազմուեց գաւառական մասնաժողով՝ բաղկացած գաւառապետից, հաշտարար միջնորդից (мировой посредникъ), մասնագէտ ջրաբաշխից և երեք էլ ժողովրդի կողմից ընտրուած մարդկանցից, որոնք երկար ժամանակ քննում էին այդ շրջանում ծագած վէճերը, ջրի ընդհանուր քանակութիւնը, հողերի տարածութիւնը, նրանց ջրի կարիքի չափը:

Այժմ Երևանում սկսել է իր գործունէութիւնը մի այլ մասնաժողով, այսպէս անուանուած նահանգական, որ քրննում է նախկին շրջանային մասնաժողովների քննած գործերը: Հրաւիրուած են զանազան գիւղական հասարակութիւններ, որոնք միմեանց դէմ ունեն վէճեր: Այսպէս օրինակ՝ Գեառնի գետի Դողկուղի առուից օգտուող Օղուրբեկլու, Դալուլար, Գեօդակլու և Նովրուզլու գիւղերը վարում են մի վէճ, մինչդեռ առաջին երեք գիւղերը իրանց պահանջը պատճառաբանելով հողերի քանակութեամբ խնդրում են 10 բահ ջուրը հաւասար կերպով կիսել 4 գիւղերի մէջ, վերջինը պահանջում է 4 բահ ջուր, որպէս իր նախնական սեփականութիւնը:

Եւ այսպէս այժմ կառավարչական շրջանները զբաղուած են այդ կարեւոր խնդրի բաւարար լուծման հարցով, որ շատ զբաղեցնում է մեր երկրագործ ժողովրդին, խլելով նրանից թէ նիւթական և թէ բարոյական մեծամեծ զոհողութիւններ:

II. Վիճակագրական տեղեկություններ Ալեքսանդրոպոլի հայ-լուսաւորչականների մասին:

Անցեալ տարի վիճակիս յաջորդը՝ քաղաքիս քահանաների մէջ տիրող ծայրայեղ անհաւասարութիւններին ու զրկանքներին վերջ տալու համար, ուղեց ծիսակատարութիւնների ու եկեղեցական այլ և այլ եկամուտները ժողովել մի ընդհանուր գանձարանում և զոյացած արդիւնքից բաժանել չորս եկեղեցու սպասաւորների վրայ, համաձայն իրանց զիրքին, աստիճանին ու ծառայութեանը: Այդ ծրագրի լաւ գործադրուելով, այլ ևս չէր լինիլ քահանաների վիճակի անհաւասարութեան տրտունջ, անբաւականութիւն:

Ահա՛ այդ նպատակով կրկնակի առաջադրութեամբ քահանաներից պահանջուեց ծխերի լիակատար ցուցակը: Բայց որովհետեւ այդ նորութիւնը ցանկալի չէր քահանաներից մի քանիսին, ուստի նրանք երկար ձգձգելուց յետոյ ներկայացրին թերի, անսրոշ ցուցակներ:

Սենք աշխատեցինք ըստ կարելոյն լիակատար տեղեկութիւններ հաւաքել:

Հասարակական տեսակէտից հետաքրքրական համարելով հայաբնակ քաղաքներից մէկի բնակիչների բաժանումը ըստ կարողութեան, թոյլ ենք տալիս առաջարկել ընթերցողի ուշադրութեան մեր հաւաքած հետեւեալ տեղեկութիւնները: Բնիկ տեղացի լինելով և մի և նոյն ժամանակ իմանալով աղքատակութեան արհեստների ու պարսպմունքների պայմանները, մենք բաժանում ենք Ալեքսանդրոպոլի հայ-լուսաւորչականներին հինգ դասակարգերի. — հարուստ, ունեւոր, միջակ, չքաւոր և աղքատ:

Սեր այդ բաժանմունքներով՝

Հարուստ դասակարգին են պատկանում՝ քաղաքիս ուշքի ընկնող ընտանիքները, կալուածատէրերը, փողի տոկոսով ապրողները, կապալառուները, քաղաքական ծառայութեան մէջ աշքի ընկնող պաշտօնեաները, բժիշկները, փաստաբանները, եթէ միայն կան:

Ունեւորների խմբում մտնում են՝ մանրավաճառները, մանր բազաղները, տեղական խանութներ ու տներ ունեցող մսագործները, զինուորական ծառայութեան մէջ եղող սպաները:

Միջակ են համարում ընդհանրապէս արհեստաւորները, բազմանդամ երկրագործ գերդաստանները, հաստատ ծառայութեան տէր մարդիկ 3—4 հարիւր ուլլու տարեկան եկամուտով: Սրանց մէջ մտնում են նաեւ քահանաների մեծամասնութիւնը:

Չքաւորների խմբին պատկանում են երկրորդական արհեստների տէրերը, ստորին ծառայողները, մշակ դասակարգը, աշխատանքի ընդունակ, բայց առաջիմ անգործ տղամարդիկ, այրի կանայք, որոնց երեխաները չափահաս են:

Աղքատ են համարում անորդի ծերունիները, կոյրերը, կաղերը, հաշմանդամները, որոնք ապրում են հասարակաց բարեգործութիւնով: այս դասակարգի մէջ են հաշուած նաեւ այրի կանայք՝ ծանրաբեռնուած մանր երեխաներով:

Քաղաքիս մէջ կան չորս հայ-լուսաւորչական եկեղեցի՝ 24 քահանայով և 3431 տուն ժողովրդով:

Քահանաներից 2-ը՝ ձեռնադրուած են 57 թուին. 5-ը՝ 60—70-ական թուերին, 4-ը՝ 70—80-ին, 5-ը՝ 80—90-ին և 8-ը՝ 90—1900-թուերին: Այդ քահանաները տեղաւորուած են այսպէս. 11 հոգի գտնուում են ս. Աստուածածին եկեղեցում, 8 հոգի՝ ս. Փրկչում, 2 հոգի՝ ս. Նշանում և 3 հոգի՝ ս. Լուսաւորչում:

Բոլոր հայ-լուսաւորչականների թիւն է 18,456, որից 9227 հոգի արական և 9229 հոգի իգական են: Ցուցակի մէջ չեն մտել քաղաքից երկար ժամանակ բացակայ ընտանիքները և անհատները: Միջին թուով իւրաքանչիւր տան վրայ ընկնում է 5 հոգի:

Բոլոր ծխերը եկեղեցիների վրայ բաժանուած են այսպէս. ս. Փրկիչն ունի 1117 տուն ժողովուրդ, ս. Աստուածածինը՝ 1487, ս. Նշանը՝ 208, իսկ ս. Լուսաւորիչը՝ 619 տուն:

Քահանաների թուի համեմատութեամբ, Լուսաւորչի եկեղեցին ունի ամենից շատ ժողովուրդ. Երեք քահանան ունեն 619 տուն, 3435 անդամով: Աստուածածնի 11 քահանան ունեն 1487 տուն 8299 անդամով. ս. Նշանի 2 քահանան ունեն 108 տուն 1084 անդամով, իսկ ս. Փրկիչն ունի 1117 տուն 5638 անդամով:

Նայելով ժողովրդի կարողութեանը, առաջին տեղը բռնում են ս. Աստուածածնի ծխականները—երեք դասադարձը միասին առած՝ կազմում են 1048 տուն: Երկրորդ տեղը կարելի է տալ ս. Փրկչի ծխականներին, դարձեալ երեք դասակարգը միասին հաւասար են 571 տան: Սրանցից չեռոյ ս. Լուսաւորչի ծխականներն են 313 տուն, իսկ դարձեալ վերջին տեղը ընկնում է է ս. Նշանին: Վերածելով այս թուերը տոկոսների, կը տեսնենք, որ ս. Աստուածածնի ծխականներից 70⁰/0-ը ունեւոր ընտանիք են, Փրկչի ծխականներից՝ 51⁰/0-ը, Լուսաւորչից և ս. Նշանից՝ 50-ական տոկոս:

Այս թուերը պերճախօս վկայ են ս. Նշան եկեղեցու նւթապէս ընկած դրութեան, որ չը նայելով իր արտաքուստ վառահեղ շէնքին, անկարող է գոյութիւնը պահպանել և Հոգ. Եպարագոյն իշխանութեան կարգադրութեամբ պետք է դադարի լուր օրերում ժամասացութիւն և յատուկ քահանայ ունենալուց:

Վերը բերած թուերն ակներև լինելու համար, դնում ենք հետևեալ աղիւսակը:

№	Եկեղեցիներ:	Քահան. քահան.	Քանի՞ ծուխ.	Ո՞րքան արակ.	Ո՞րքան իգակ.	Գումար.	Քանի՞ հարուստ.	Քանի՞ ունեւոր.	Ո՞րքան միջակ.	Ո՞րքան չքատր.	Քանի՞ անդամ.
1	Ս. Փրկիչ . . .	8	1,117	2,760	2,878	5,638	28	99	444	529	17
2	Ս. Աստուածածին	11	1,487	4,239	4,060	8,299	79	192	677	523	16
3	Ս. Նշան . . .	2	208	539	545	1,084	10	24	73	89	12
4	Ս. Լուսաւորիչ .	3	619	1,689	1,746	3,435	10	49	254	290	16
Ընդամենը .		24	3,431	9,227	9,229	18,456	127	363	1,448	1,431	61

Այժմ անցնենք վիճակագրութեան երկրորդ մասին, որով պարզ-տում են հայ-լուսաւորչականների աճելութեան պայմանները: Թուանշան-ների ստուգութեան մասին ո՛չ մի կատարած չէ կարող լինել, քանի որ խը-նամբով վերցրած են եկեղեցիների չափաբերական մատեաններից, վա-ւերացրած քահանաների ստորագրութեամբ և հոգ. կառավարութեան կնիքով: Միջին թուեր ստանալու համար, համեմատութեամբ դուրս են

բերումը վերջին քառամեակի՝ այն է 1897, 98, 99 և 1900 թուերի ծխակատարութիւնները:

Պարզութեան համար գնում ենք աղիւսակի մէջ:

Սկզբնականներ:	1897.			1898.			1899.			1900.		
	Սկզբ.	Նշան.	Պատ.	Սկզբ.	Նշան.	Պատ.	Սկզբ.	Նշան.	Պատ.	Սկզբ.	Նշան.	Պատ.
Ս. Աստուածածին . . .	440	261	100	454	355	82	435	401	87	431	230	76
Ս. Փրկիչ	289	189	79	329	301	48	326	310	62	311	218	56
Ս. Նշան	67	45	14	69	52	8	49	52	6	57	39	10
Ս. Լուսաւորիչ . . .	203	103	42	203	192	35	211	173	40	211	113	33
Ընդամենը . . .	999	598	235	1,055	920	173	1,021	936	195	1,010	609	175

Կարծում եմ պակաս հետաքրքիր չի լինիլ և հետագայ աղիւսակը, որի մէջ գրուած են քաղաքումս ծնունդների արական և իգական սեռերի համեմատութիւնները, մեռնողների սեռերի տարբերութիւնը և անելութեան տոկոսը:

Ցարեթուեր.	Մկրտութիւն.			Մահացութիւն.			Մնաց. Աճմ. տոկ.	
	Արակ.	Իգակ.	Գում.	Արակ.	Իգակ.	Գում.		
1897	521	478	999	333	265	598	401	40%
1898	522	533	1,055	480	440	920	135	12,6% *)
1899	517	504	1,021	486	450	636	85	8,3% *)
1900	507	503	1,010	321	288	609	401	39%
Գումար . . .	2,067	2,018	4,085	1,620	1,443	3,063	1,022	

Այսպէս, ուրեմն, վերջին քառամեակում ծնունդ են 4085 երեխաներ, չորս տարուայ ընթացքում մեռնողներ եղել են 3063 հոգի, իսկ ծննդաւորների աւելացածը, որպէս մնացորդ եղել է 1022 հոգի, կամ միջին հաշուով, տարեկան աւելանում են աղգարնակութեան թուի վրայ 255 հոգի, որ կազմում է ընդհանուր թուի 1,39%-ը: Ժողովրդի ալիշափ դանդաղ անելութիւնը անպայման պէտք է վերագրել նրա տնտեսական անախանձեղի դրութեան:

Ն. քահ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

*) 98 և 99 թուերում մահացութեան դէպքերը շատ են, շնորհիւ այն հանգամանքի, որ այդ երկու տարիներում դիֆտերիա և ուրիշ վարակիչ հիւսանդութիւններ են եղել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Զինական պատերազմի վախճանը.—Բոտայի նամակը.—Թիւրքական ոտըն-
ձգութիւններ.—Սզգերի հաւասարութեան սկզբունքը.—Ֆրանց-Յովսէփի
չեխերի մալրաքաղաքամ.—Վեօրբերի տնտեսական-հասարակական ծրա-
գիրները.—Վալդէկ-Րոտտօի բանուորական կենսաթոշակի օրինագիծը:

Վերջապէս դաշնակից պետութիւնների զօրքերը թողնում
են «խաղաղացրած» Զինաստանը: Կարելի է ասել եւրոպացի-
ների մասին՝ «բազում աշխատեցան և կալան գոյին»:

Չը պէտք է չլանալ տուգանքների քանակութիւնով, ո-
րովհետեւ եթէ դրա դէմ աչքի առաջ ունենալ այն ահագին
ծախքերը, մարդկանց զոհերը, տուգանքների յաւելումները, որ
ուճեցան եւրոպացիները, հազիւ թէ մի բան մնայ իբրեւ
աշխատանք այդ ձեռնարկութիւնից: Դեռ մենք ոչինչ չենք
ասում այն բարոյական պարտութեան մասին, որ կրեց Եւրո-
պան, այն բարբարոսական բարքերի մասին, որ իրանց հետ
պէտք է հայրենիք բերեն պատերազմի դաշտում վայրենացած
ղինուորները: Զինական դիւանագէտները յամենայն դէպս ցոյց
տուին, որ խորամանկութեան և ճարպիկութեան մէջ կարող են
դասեր տալ միամիտ եւրոպացիներին: Հերոսական առանձին
դէպքեր ևս չեղան այդ պատերազմում, որով պարծենալ ֆելդ-
մարշալ Վալդերֆէն իր համարգներով: Դաշնակից զի-
նուորները իրանց կռուարարութեամբ մի քանի անգամ քիչ
մնաց պատճառ դառնան աւելի մեծ միջազգային տուրուղմ-
փոցների: Առհասարակ միլիտարիզմի անփառունակ էջերից
մէկն էր այդ Պեկինեան արշաւանքը և հազիւ թէ դառնուի մէկը,
որ նոյնպէս ոգևորուի այդ պատերազմով, ինչպէս հին դարե-
րում մի Հոմերոս, որ երգեց Տրոյայի պաշարումը...

Սակայն չի կարելի չը ոգևորուել այն հերոսական կռուով,
որ վարում են քաջ բօէրները: Ծիշտ է, Անգլիան վաղուց է
յայտնել, որ Հարաւային-Աֆրիկայում պատերազմը վերջացել է,
բայց ամեն օր շարունակում են տեղալ հեռագիրներ բօէրական
յաղթութիւնների մասին: Ինչպէս երևում է Կիտչենէրի և Բո-

տայի մէջ բանակցութիւնները անհետեանք անյան: Այդ վկայում է կոռուղ բօէրներին Բօտայի կողմից ուղղած հետեանալ կոչը.

«Թանկագին եղբայրներ! Լօրդ Կիտչենէրի նամակը ցոյց տուեց ձեզ անյայտնի պարզութեամբ, որ անգլիական կառավարութիւնը միայն մի նպատակ ունի—մեր աֆրիկական ազգաբնակչութեան բնաջինջ անելը: Մեր կողմից բոլորովին անկարելի է ընդունել նրա առաջարկած պայմանները: Եւ իսկապէս նամակը պարունակում է իր մէջ շատ քիչ զիջումներ, մինչև անդամ աւելի քիչ, քան որքան անգլիական կառավարութիւնը ստիպուած կը լինէր տալ մեզ, եթէ մենք վայր դնէինք զէնքը: Զոռյշ կայէք! Անգլիական կառավարութիւնը ուզում է մեր շիինքին փաթաթել օրէնսդրական խորհուրդ, բաղկացած նրա սեփական պաշտօնեաներից և նրա նշանակած անդամներից: Իսկ ազգաբնակչութեան ցանկութիւնները բնաւ ուշադրութեան չեն առնում: Անգլիական կառավարութիւնը առաջարկում է մեզ իբրև մեծ ողորմութիւն՝ գործադրել միլիօն—մեր ազգային պարտքը ծածկելու համար. բայց, իւրիսկօսսուլտների կարծիքով, բրիտանական կառավարութիւնը, իբրև շահուող կողմ, պէտք է իր վրայ վերցնէր մեր բոլոր պարտքերը: Մեր քաղաքացիներին վիճակուած է տանել ամենաժանր կօիւ: Այլ կերպ չի էլ կարող լինել, երբ մեր ազգայնութեան գոյութիւնը վտանգի է երթարկուած: Ի հարկէ, տխուր պարտականութիւն է արիւն թափել, բայց մեր ճակատագիրը աւելի ևս տխուր կը լինէր, եթէ մենք ստիպուած լինէինք հրաժարուել մեր հայրենիքից... Բայց մի վհատէք. ով վհատում է, նա ոչ միայն անարդարութիւն է ցոյց տալիս իր համաքաղաքացիների նկատմամբ, այլ և հրաժարւում է իր հաւատից: Ինչքան աւելի վատ է վարւում մեզ հետ թշնամին, ինչքան աւելի է ճնշում մեզ, այնքան աւելի մեծ քաջութեամբ պէտք է պաշտպանենք մեր հողը և մեր իրաւունքները»:

Ուշադրութեան արժանին այն է, որ շատ անգլիացիների համակրանքը՝ իրանց կառավարութիւնից «թշնամի» ճանաչուած բօէրների կողմն է:

Եւրոպական պետութիւնների մտադրաւոր դրութիւնից ուղեց օգտուել և գիւնանագէտ Աբդուլ-Համիդը: Թիւրքիայի վատթար վարչութեան մէջ վատթարագոյնը նրա պոստն է, որից ոչ մի ցանկութիւն չունեն օգտուել եւրոպացիք, ուստի վաղուց ի վեր սեփական պոստ ունեն այդ կամայականութեան երկրում: Աբդուլ-Համիդը փորձեց ոյժով ազատուել իր վերահսկողութիւնից զերծ մնացած այդ օտար հիմնարկութիւնից, բայց

պետութիւնները ցոյց տուին, որ իրանց շահերը գիտեն պաշտպանել և մտադիր չեն նոյն անգործութիւնը ցոյց տալ, որ ապշեցրեց հայկական կոտորածների ժամանակ... նոյն իսկ թուրքերին: Պարտութիւն կրելով պոստային հարցում, սուլթանը կարծես դարձեալ իր վրէժը ուզեց հայերից հանել. մայիսի 18-ին հրատարակուած իրագէտով արգելուեց Ռուսաստանի և Միացեալ-Նահանգների հպատակութիւնը ստացած հայ փախստականներին՝ մուսք գործել Օսմանեան երկիրները: Մտածելով որ Եւրոպայի գլուխը խառն է հեռու երկիրների գործերով, սուլթանը վերսկսեց Մակենդոնիայում հալածանքները: Մահմեդական ալբանացիք էլ սերբիական սահմանագլխի վրայ իրանց արշաւանքներով կարծես ուզում են ծաղրել Եւրոպայի քաղաքակրթութիւնը Բալկանեան թերակղզում: Արաբիան ապրտամբուած է: Բայց այդ բոլորը մի կողմ թողած, Իլդրզ-Քեօշկում երազում են համաշխարհային մահմեդական պետութեան մասին: Դեսպանութիւն են ուղարկում Չինաստան, Եսպոնիա, չը մտածելով որ եթէ նոյն իսկ հնարաւոր լինի ստեղծել համիսլամականութեան մի վիթխարի հրէշ—նա կ'ունենայ կաւից շինած ոտներ: Աւելի լաւ չէր օրինակ վերցնել խաղաղացած Կրետէից, որ ապացուցեց, թէ երկրի բարօրութեան միակ խոչընդոտը թիւրքական բեժինն էր: Աւելի հեռատես չէր լինի թիւրքիան ծանօթանալով այն կարգերի հետ, որոնք մտցնում են Բօսնիա-Հերցեգովինայի մէջ Աւստրո-Ունգարիայի ջանքերով: Մահմեդական-քրիստոնէական վայրագ յարաբերութիւնները ինչո՞ւ տեղի չունեն այդ երկրներում—Որովհետեւ բարբարոսութիւն ներշնչող բեժիմը վերացրած է:

Աւստրիայում էլ են ապրում կողք-կողքի բազմակրօն և բազմալեզու ցեղեր, շատ զարգացած ազգային ինքնաճանաչութեամբ. գերմանացին, լեհը, չեխը յամենայն դէպս աւելի նուրբ և բարձր ազգային ինքնաճանաչութիւն ունեն, քան հայը, թուրքը, քուրդը: Եւ առաջ աւստրիական կառավարութիւնը կարծում էր որ իր օգուտը պահանջում է «բաժանել—տիրելու համար», բայց փորձը համոզեց Ֆրանց-Յովսէփ կայսրին, որ Մետերնիխի քաղաքականութիւնը պէտք է թողնել և նոր սկզբունք մտցնել բազմալեզու պետութեան կեանքի մէջ: Մի-նիստր-նախագահ Կետրերը շատ որոշ կերպով արտայայտեց այդ նոր սկզբունքը ըստ իսրաւանում. «Արդարութիւն բոլոր ազգութիւնների համար—անա Աւստրիայի քաղաքական պատիւը, ազգային քաղաքականութիւն չի կարող լինել բազմացեղ տէրութեան մէջ»: Եւ մինիստրը առաջարկում է մի շարք հսկայական ծրագրեր, որոնք ահագին զարկ կը տան Աւստրիայի տնտե-

սական կեանքին, համահաւասար կերպով շահաւէտ լինելով բոլոր հպատակների համար: Արդարութիւն դէպի բոլոր հպատակ ազգութիւնները՝ ահա մի սկզբունք, որի արտայայտութիւններից մէկն էլ Ֆրանց-Յոսէփի այցելութիւնն էր չեխական մայրաքաղաքին: Պրագայում կայսրը աշխատում էր ընդգծել, որ իր համար իր երկրի բոլոր ազգութիւնները հաւասար են և այս անգամ նա իր ճառերի կէսը արտասանում էր չեխերէն լեզուով, կէսը գերմաներէն:

Կեօրքերի առաջարկած անտեսական-հասարակական ծրագրով պէտք է $1\frac{1}{2}$ միլիարդ կրօն մսիուի երկաթուղիների և ջրբանջանների ցանցով ծածկելու համար Աւստո-Ունգարիան: Բայի այդ, նրա առաջարկութեամբ քարածխահանքերում բանողների համար սահմանւում է օրեկան 10 ժամուայ աշխատութիւն և ոչ աւել, ինչպէս առաջ էր: Այդ վերջին հարցում ի հարկէ աւելի արմատական կուսակցութիւնների պահանջը 8 ժամուայ աշխատութիւն էր, բայց կառավարութեան առաջարկն էլ, յամենայն դէպս, քայլ էր դէպի առաջ: Նոյն բանը կարելի է ասել Ֆրանսիական պատգամաւորական ժողովին Վալդէկ-Րուսսօի առաջարկած բանուորական կենսաթոշակի օրինագծի մասին: Կրօնական միաբանութիւնների օրէնքից յետոյ այդ երկրորդ մեծ գործն է, որ արաւ ներկայ մինիստրութիւնը Ֆրանսիայի առաջադիմութեան համար:

Վայրենիները սպանում են իրանց ծերերին, որ չը կերակրեն նրանց, անկուղտուրական երկրներում աշխատաւորներից ծծելով բոլոր հիւթերը, ապա մրգուած կիտրոնի նման դէն են գցում, մինչդեռ քաղաքակրթուած ազգերը օրից օր նորանոր միջոցներ են ձեռք առնում ապահովելու համար քրտնաջան վաստակաւորներին: Հարկ չը կայ որ գործաւորը հաշմանդամ դառնայ՝ հասարակական օգնութեան արժանանալու համար, բոււական է որ նա 65 տարիքին է հասել և անկարող է աշխատելով ապահովել իրան: Արդարութիւն է թողնել որ այդ աշխատաւորը իր կեանքի վերջալոյսին ստիպուած լինի մութալ—Ուլ գիտակցութեան հասած ամեն մի ժողովուրդ զգում է, որ հասարակութեան պարտականութիւնն է ապահովել ծերացած և աշխատելու անկարող իր անդամներին:

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ

Ն Ա Մ Ա Կ Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն Ի Ց

Քաւրիզ, 1901 թ., Մայիսի 25.

Ասրպատականի առաջնորդական ընտրութիւնը:

Ասրպատականի հայ գաղութը Վեհ. Կաթողիկոսի փետր. 2-ի կոնդակով ստացաւ ժողովրդական ընտրողական սահմանադրական իրաւունք:

Կոնդակի համաձայն իւրաքանչիւր գաւառ պէտք է մասնակցէր առաջնորդական ընտրութեան երկ-երկու պատգամաւորով, իսկ Թաւրիզը՝ 16: Ղարապաղն էլ երկու ձայն պէտք է ունենար, Խոյն էլ, այն ինչ առաջինը ունի 27 զիւղ, իսկ վերջինը 7: Ձայնքը չափ անհաւասար էր բաժանուած: Այդ անհաւարութիւնը փոքր ինչ վերացնելու համար. Սահակ եպ. Այվատեանը գաւառները բաժանեց գործակալութիւններ, իւրաքանչիւր գործակալութեան տալով երկու ձայնի իրաւունք: Այս նոր բաժանման հիման վրայ, Ղարապաղը, ունենալով երեք գործակալութիւն—Տիգմար, Մեշափար-Մնջուան և Քէյվան, երկու ձայնի փոխարէն ստանում է 6 ձայնի իրաւունք, իսկ Սօուղ-բուլաղը, որ առանձին ձայնի գործակալութիւն չէ, այս բաժանումով ձայնից զրկւում էր, բայց որովհետեւ առանձնապէս յիշուած էր կոնդակում, Այվատեան եպ., ի պատիւ Վեհափառի, Սուլդուղի հետ միացրած երկու ձայնի իրաւունք ստեց: Իսկ ամենախոշոր անհաւասարութիւնը նրանումն է, որ միայն Թաւրիզը, որ թէև ունի 600 տուն, ունի համարեա բոլոր գաւառների չափ ձայն: Ամենահաւանականն է, որ Վեհ. Կաթողիկոսը առաջնորդուել է նրանով, որ Թաւրիզն է Ասրպատականի զարգացման կենտրոնը, ուր խմբուած են կարող անձինք և այլն. ինչ և է:

Սահակ եպ. Այվատեանը կոնդակը տպել տալով՝ ցրուեց

գաւառները և պաշտօնական շրջաբերական ուղղելով գաւառների գործակալներին, յայտարարեց, որ ընտրեն երկ-երկու պատգամաւոր, որպէս զի առաջնորդական ընտրութեան մասնակցեն մի-մի ձայնի իրաւունքով, իսկ Թաւրիզում, Բաջի այդ, յիշել էր թէ այն օտարականը, որ միայն երկու տարի է Թաւրիզում, նա միայն քուէ տալու իրաւունք ունի, իսկ նա, որ երեք տարի է, իրաւունք ունի նաև ընտրուելու:

Պատգամաւորական ընտրութիւնների ժամանակ, թէ Թաւրիզում և թէ գաւառներում գործում էր երկու կուսակցութիւն, ազատական և պահպանողական: Առաջին կուսակցութեան թեկնածուներն էին Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեան, Սահակ եպ. Այվատեան, Բադրատ վարդապետ Թաւաքալեան և Եղիշէ վարդապետ Մուրադեան, իսկ երկրորդ կուսակցութեան թեկնածուներն էր Յովսէփ եպ. Սարաջեանը: Ազատական կուսակցութիւնը ակնյայտին կերպով պրօպագանդա էր անում պատգամաւորական ընտրութիւնների խնդրում, երկրորդ կուսակցութիւնն էլ թէև պրօպագանդա անում էր, բայց ծածուկ:

Առաջին կուսակցութեան հետ էր Թաւրիզի Լիւաւա թաղը, շատ աննշան բացառութեամբ, և գաւառների մեծագոյն մասը, իսկ երկրորդ կուսակցութիւնը կազմում էին Թաւրիզի Ղալաթաղի խան-աղաները և մի երկու գաւառակներ:

Հետաքրքիր և ուշադրութեան արժանի կէտերը հետևեալներն են, որ տեղի ունեցան պատգամաւորական ընտրութիւններին:

Առաջին.—Ղարազաղի Գէյվան գործակալութիւն իր ձայների իրաւունքը թողնում է կաթողիկոսին, յայտնելով, որ, ումն էլ ուղարկէ կաթողիկոսը, համաձայն են նրան: Ողորմելի ժողովուրդ, որ չի հասկանում իրան տուած արտօնութեան վեհ նշանակութիւնը... Դեռ այդ ոչինչ, քէյվանցուն, որպէս տղէտ ժողովուրդի, այնքան էլ մեղադրելի չէ, բայց արի ու տես, որ նոյն միտքը պաշտպանում են և հասկացող մի քանի աղաներ: Երկրորդ.—Սօուդ-բուլաղը և Սուլդուղը զբիւրեցին իրանց ձայներից, որովհետև ընտրութիւնը սալօրինի ձևով էր կատարուել: Գործակալից Այվատեան եպիսկոպոսը մի գրութիւն է ստանում, որով յայտնում էր, թէ ընտրութիւն չը կայացաւ, որովհետև ինչքան մոտոճեցինք, յարմար մարդ չը գտանք: Բայց դրանից երկու օր առաջ և մի քանի օր յետոյ, Սօուդ-բուլաղից առաջ հեռադիր է գալիս մի քանի աղաների վրայ, որ աւետում է նրանց պատգամաւոր ընտրուելը: Իսկ ով է ընտրել և լինչպէս. ոչ մի պաշտօնական բան: Բայց յետոյ, ինչպէս պարզուեց, դա կեղծիք էր մի քանի մարդկանց կողմից: Այդ պատգամաւորների ընտ-

րութիւնը, ի հարկէ, ապօրինի համարուեց և դրանք չը մասնակցեցին ընտրութեան: Երրորդ.— Խոյի ընտրութեան ժամանակ Սարաջեան եպիսկոպոսի երկրպագուները, իրանց մարդկանց ընտրել տալու համար, նոյն իսկ սպառնալիքներ չէին դիմել... Այժմ գանք Թաւրիզի ծխական պատգամաւորների ընտրութեան:

Լիւաւա թաղի ծխական պատգամաւորական ընտրութիւնը անցաւ աղմկալի և կենդանի: Նախ արծարծուեց օտարականների խնդիրը— թէ օտարականը իրաւունք ունի մասնակցելու ընտրութեան: Օտարականների մասնակցութեանը հակառակողները, միւս կողմի բացատրութիւնները լսելով, հասկացան, որ իրանց պնդածը մի շատ հնացած և անմիտ հասկացողութիւն է: Ժողովին, Այվատեան եպիսկոպոսի կարգադրութեամբ, նախագահում էր հոգաբարձու պ. Բ. Մելիք-Սարգսեանը: Ժողովում անհամութիւններ առաջացան շնորհիւ այն մարդկանց, որոնք ամեն տեղ որոնում են շահ և առաջնորդում են անձնական և ցած հաշիւներով: Դրանք էին, որ պատգամաւորական ընտրութեան խնդիրը մի կողմ թողած, մէջ բերին հոգաբարձական և այլ խընդիրներ ու չօչափեցին սրա նրա անձնականութիւնը: Սրանք են, որ պղտորում են ժողովրդի պարզ և մաքուր միտքը և միեւնոյն ժամանակ իրանց «ինտելիգենտ» են համարում, ահա ցաւալին: Դրանք յոյս ունէին որ իրանց թեկնածուներից գոնէ մէկ երկուսը կ'ընտրուէին. բայց ինչ... Խափուսիկ յոյսեր և ոչ մէկը: Լաւ կազմակերպած և զօրեղ պրօպագանդա անող երիտասարդ կուսակցութիւնը յաղթութիւնը տարաւ և ընտրեց իր չորս թեկնածուներին էլ. — Պ. պ. Բաղդասար Մելիք-Սարգսեան, Յակոբ Մելիք-Սարգսեան, Տիգրան Ռաշմաճեան և Դօկ. Կարապետ Փաշայեան, չը նայած որ վերջին երկուսն էլ օտարականներ են: Յանկարծ, ժողովի արդիւնքը իմանալով, հակառակ կուսակցութիւնը բողոքեց՝ ընտրութիւնը ապօրինի համարելով: Դրանք ոչ թէ բողոքում էին ապօրինութեան դէմ, այլ հետեւանքի, որովհետեւ նախ քան քուէարկութիւն չը բողոքեցին որ այդ անձնաւորութիւնները մասնակցում էին քուէարկութեան: Իսկ ինչ վերաբերում է Ղալայի ծխականների ընտրութեանը, անցել է շատ լուռ և «գառնուկներին» վայել խոհեմութեամբ: Ընտրութիւնը կայացել է շատ օրինակելի եղանակով: Չորս աղա-խանների անուններ դրել են գրատախտակի վրայ և առաջարկել են, որ նոյն մարդկանց տան իրանց քուէն: Ե՛ւ ժողովուրդը, և՛ երիտասարդները ընդունում են այդ առաջարկը: Ընտրուած չորս պատգամաւորներն էլ. — Սողմոն-Խան, Սարգիս-աղա, Գալուստ-Խան և Մելքոն-աղա, վստահօրէն կ'ասենք, որ ոչ թէ միայն չեն մաս-

Նախկցում հասարակական խնդիրներին, այլ նոյն իսկ չեն էլ հետաքրքրում գրանցով: Դալա-թաղում կեանքը, կարծէք, մեռել է և մի տեսակ ծանրացած է: Թէև երիտասարդներ կան, բայց դրանք էլ չեն համարձակւում հակառակել իրանց «արբաբներին» և աղայական հովերով են փառաբանւում: մի բան, որ պատիւ չէ բերում նրանց:

Այսպիսով մենք ստանում ենք պատգամաւորների հետեւալ ցանկը. Թաւրիզ.—6 ձայնով, Ուրմի.—2 ձայնով, Սալմաս.—2 ձայնով, Խոյ.—2 ձայնով, Մակու.—2 ձայնով, Դաւադաղ.—4 ձայնով, Տիզմուս.—2 ձայնով, Մեծափոր-Մեջուս.—2 ձայնով, Արդաբիլ.—2 ձայնով, Մարաղա.—2 ձայնով:

Ահա դրանք պէտք է մասնակցէին առաջնորդական ընտրութեան, որ նշանակուած էր Ապրիլի 22-ին: Այդ, մօտ մի շաբաթ առաջ յայտնեց Սահակ եպ. Այլատեանը և դրա հետ զբուռեց և ընտրողական ժողովի ներքին կանոնադրութիւնը: Որ անփութիւն մէջ ևս բերում այստեղ.

1. Ընտրողական Ընդհանուր ժողովը ներկաների մի տոմար կ'ունենայ, յորում պատգամաւորները իրանց ներկայութիւնը պարտին ստորագրել:
2. Ամենից առաջ Ընտրողական ժողովը կազմելու է իր Դիւանը, որ կը բաղկանայ մէկ Ատենապետից և մէկ Քարտուղարից:
3. Ատենապետի պարտականութիւնն է վարել անկողմնակալութեամբ ժողովի գործողութիւնները, կարգաւ խօսք տալ խօսողներին և հսկել որ՝ ո և է շփոթութիւն և խանգարում տեղի չունենայ:
4. Քարտուղարի պարտքն է կարգաւ գրել խօսք ուղղորդների անունները և ներկայացնել Ատենապետին և ժողովի ընտրութեան արձանագրութիւնը կազմել:
5. Դիւանի ընտրութիւնը գաղտնի քուէարկութեամբ կատարելու է:
6. Առանց Ատենապետի արտօնութեան ոչ ոք իրաւունք չունի խօսելու և պարտաւոր է սպասել իր կարգին:
7. Մի խնդրոյ վրայ մի խօսող երկու անգամից աւելի խօսք չի կարող առնել:
8. Խօսելու տեղութիւնը սահմանուած է մինչև—15—րոպէ, միմիայն ժողովի թոյլտւութեամբ աւելի կարող է խօսել:
9. Խօսողը միշտ Դիւանին ուղղելու է իր խօսքը:
10. Խօսողին ներելի չէ երբէք խնդրից շեղուել:
11. Ընտրութեան համար կատարուելիք քուէարկութեան եղանակը. Ա. Ատենան կը բերտի քուէտուփը և դրուելու է ժողովարանի մէջ տեղը սեղանի վրայ:
- Բ. Դիւանը 4 անձ քննիչ նշանակում է, որոնք նստում են քուէտուփի շուրջը:
- Գ. Յետոյ Դիւանից մանրածալ քանակուած թղթեր կը բաժանուի պատգամաւորներին, որոնք այն թղթի վրայ գրում են ընտրելի Անունը Ատօնանը և Աղգանունը: Մի պատգամաւոր երկու ձայնից աւելի չի կարող առնենալ:

Դ. Այս գործողութեան համար 15 բողոք պիտի տրուի:

Ե. Յետոյ Դիւանը նշանակում է մինը՝ քուէները ժողովելու համար և Ատենապետը ներկաների տետրակի միջից պատգամաւորի անունական կոչում կ'անէ. քուէհաւաքը իւրաքանչիւր պատգամաւորներից՝ անունը տրուածի պէս, ծալուած քուէն կ'առնէ և քննիչներին աչքի առաջ ձգում է քուէտուփը: Վատարուելուց այս գործողութիւնը քննիչները բանում են քուէտուփը, կը համարեն քուէները և եթէ քուէարկողների թուոյն համեմատ գտնեն, հաստատում են օրինաւորութիւնը:

2. Ապա բացում են քուէները մի առ մի. քննիչների մինը բանում է և կարդում միւսի հսկողութեան տակ: Քուէները քանի կարդացուեն միւս երկուսն էլ հետզհետէ կը նշանակեն: Ձայները գումարելուց և ճշտութիւնը ստուգելուց յետոյ վերջնական արդիւնքը հաղորդում են դիւանին, որ պաշտօնապէս կը հռչակէ:

12. Դիւանը իր կողմից անմիջապէս Ընտրողական ժողովոյ արձանագրութիւնը կազմելով ստորագրել կը տալ պատգամաւորներին և ո՛ր տեղի պատգամաւոր լինելը միասին նշանակելով:

13. Ստորագրեալ արձանագրութիւնը յանձնւում է նախագահ-Սրբազան հօր, որ պահպանիչով մի փակում է ժողովը:

14. Ձեղձումների տեղի չտալու համար կանոնական պատիժներ կան սահմանուած, որ չորս կարգի են բաժանւում. Պարզ դիտողութիւն, Ի կարգ հրաւիրել, Պարսաւանաց քուէ, Արտաքսումն:

15. Առաջի երկու պատիժներ տնօրինում է Ատենապետը իր կողմից, իսկ միւս վերջին երկուսը ժողովի կողմից Ատենապետի առաջարկութեան վրայ:

16. Դիտողութիւն կը լինի նրան, որ յաճախակի ընդմիջումներով խօսողին խանգարում է:

17. Ի կարգ կը հրաւիրուի այն, որ Ատենապետի դիտողութիւններին անտատէ և անուղղայ հնում է, ժողովի վեհութեան դէմ մեղանչէ և ընկերոջ դիւրադգացութիւնները վիրաւորէ:

18. Պարսաւանաց քուէ կ'առաջարկուի նրա համար որ կարգի հրաւիրուելով հանդերձ ուղղութեամբ օրինակ չէ տալիս պարսաւանաց քուէ ընդունողը, միայն խօսելու իրաւունքից զրկում է:

19. Այս ամեն պատիժներ կը ներուեն, երբ որ իր լանցանքը ճանաչելով ազնուաբար յետ է առնում իր անզգոյշ խօսքերը և ներողութիւն է խնդրում Դիւանից իր անպատշաճ վարմունքի համար:

20. Արտաքսումն այն ծանր պատիժն է, որ ծանրակշիռ սլաքազաներում միայն ի գործ կը դրուի, այն էլ շատ համբերութեամբ և փորձի դնելով ամեն զգաստացուցիչ մեղմ միջոցներ, զորօրինակ չիղեալ ամեն ազգարարութիւններին և պատիժներին անհաւան և անհնազանդ գտնուէ և անուղղայ մնայ, այն ժամանակ Ատենապետը ապիպում է ժողովի պատկառանքը պահելու և պատիւը փրկելու համար այնպիսին արտաքսումը առաջարկել:

Պ. Բ. Մելիք-Սարգսեանը երեք ձայն ունէր, այն ինչ կանոնագրութեան համաձայն միայն երկու ձայնի իրաւունք ունէր պառագամաւորը, բայց որովհետեւ Արդարիլից նրան տուել էին այնպէս մի արտօնութիւն, որ ումը ուզենայ կարող է յանձնել ձայնը, պ. Բաղդասարը տուեց պ. Թադէոս Աֆթանդիլեանին:

Այժմ արդէն պարզ էր, թէ որ կողմն է ձայների մեծամասնութիւնը և յաղթութիւնը: Սարաջեան եպիսկոպոսի թեկնածութիւնը պաշտպանողները պարզ տեսնում էին, որ տարուած են և այդ հանգիստ չէր տալիս նրանց: Նրանք մինչև ընտրողական ժողովը, նախապատրաստական ժողովներ կազմակերպեցին, ուր ներկայ էին լինում, աւելի ճիշտ, հրաւիրւում էին միայն ոչ-օտարականները. իսկ թէ ինչու օտարականներին չէին հրաւիրում, յայտնի չէ: Դեռ այն շատ հին համոզմունքը—օտարականի վրայ խորդ աչքով նայելը, տիրապետում է այս երկրում: Նրանք Սարաջեան եպ. թեկնածութիւնը մէջ բերելով աշխատում են ընդհանուր համաձայնութիւն կայացնել տալ նրա վրայ, ի հարկէ գլուխ չեկաւ: Եւ էլի նրանք են պաշտպանում Սարաջեան եպիսկոպոսին, որոնք այնպէս անարդ կերպով ճանապարհ են դրել, ուզում են այժմ բերել, աւելի վատթարացնելու համար, չը նայած որ նա լաւ անուն չի թողել թէ այստեղ և թէ ընդհանրապէս Ատրպատականում: Նա աչքաթող էր արել ժողովուրդը և աղաների ձեռքին խաղալիք դարձել:

Վերջին նախապատրաստական ժողովը նշանակուած էր Ապրիլի 21-ին պ. Յ. Մելիք-Սարգսեանի տանը, ուր հրաւիրուած էին բոլոր պատգամաւորները: Ժողովի հէնց սկզբից առանց գէս գէն ընկնելու, համաձայնութեան խնդիրը մէջ են բերում: Օտարականներն էլ միանում են նրանց հետ. զրանց ցանկութիւնն էլ հէնց այդ էր: Արձանագրութիւն է կազմւում և բոլորն էլ ստորագրում են: Որպէս ղի ընտրութեան ժամանակ աղմուկ և խարդախութիւն տեղի չունենայ, կամ մէկը չը ցանկանայ բաց քուէ տալ, որով խանդարւում է քուէարկութիւնը, պ. Մ. Յարութիւնեանը առաջարկում է, հէնց այժմանից իւրաքանչիւրը իր քուէն գրած և ծրարած տայ պատհամաւորներից մէկին, որին կ'ընտրէ ժողովը. եթէ ընտրութեան ժամանակ բան պատահի, այդ ծրարները զցնեն տուփը: Առաջարկը ընդունւում է: Այդ միջոցին են դիմում, որովհետև կասկածում, չեն վստահում իրար:

Ահա այդ նախապատրաստութեամբ, միւս օրը, գնում են առաջնորդարան: Ոչ մի աղմուկ. քաղցր ժպիտն էր խաղում բոլորի շրթունքներին: Ընտրուել են ատենապետ՝ Նազար էֆ. Գորոյեան և քարտուղար՝ Վահան Բժշկեան: Նախագահ Այվատեան եպիսկոպոսը բացեց ժողովը և մի քանի խօսքով բացատրեց այդ սահմանադրական իրաւունքի նշանակութիւնը և չեւտեց, որ թէև անցնալում այդպիսի ընտրութիւնները միշտ ժողովուրդն էր կատարում, բայց յետոյ ինչ-ինչ պատճառներով անձեռնհաս է եղել այդ կատարել, իսկ այժմ էլի վերստանում

է Ատրպատականի ժողովուրդը այդ իրաւունքը: Ապա ժողովուրդականները կանգնեցին ոտի և միաձայն ընտրեցին Արիստակէս արքեպ. Սեդրակեանին Ատրպատականի առաջնորդ: Պ. Արեղ-նազով Ալէքսանեանը առաջարկեց յոտնկայս շնորհակալութիւն յայտնել Վեհ. Կաթողիկոսին այդ արտօնութեան համար, իսկ պ. Ջիբրայէլ Բուղաղեանը առաջարկեց նոյնպէս յոտնկայս շնորհակալութիւն յայտնել Այվատեան եպիսկոպոսի եռամեայ եռանդուն պաշտօնավարութեան և գործունէութեան համար, և այդ երկու առաջարկն էլ մտցնել արձանագրութեան մէջ:

Ժողովի արդիւնքը անմիջապէս թէ՛ Սահակ կպ. Այվատեանի և թէ՛ պատգամաւորների կողմից հեռագրուեց Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին:

Պատգամաւորները ուրախ տրամադրութեամբ հեռացան:

Ժողովում Այվատեան եպիսկոպոսը վերջնականապէս հրաժարուեց և յայտարարեց, որ այսօրուանից գործերը յանձնում է գործակալ քահանային: Եպիսկոպոս Այվատեանը, ինչպէս թեհրանում, նոյնպէս և Ատրպատականում, մի շարք կենդանի փաստերով ցոյց է տուել, որ ժողովրդին է նուիրուած և եռանդուն հովիւ է: Գիւղի և գաւառի ցաւը և ուրախութիւնը նրա ցաւը և ուրախութիւնն էին: Նա հետաքրքրուում էր ժողովրդի ցաւով, կարիքով, և ամեն կերպ աշխատում էր դարմանել ու հոգալ. այդ կը վկայէ ամեն մի գիւղացի, նոյն իսկ ամեն մի բարեխիղճ թաւրիզեցի, բացի այն մի քանի աղաներից, որոնք ամեն տեսակ կեղտոտ միջոցներ ձեռք առան նրա վարկը գցելու: Եւ ինչո՞ւ: Անձնական ընդհարումների պատճառով. որովհետեւ Այվատեան եպիսկոպոսը չէր ճանաչում նրանց աղայական քմահաճութիւնները: Բայց դաւառը և գիւղը չի մոռանայ եպիսկոպոսին:

Ինչպէս հաստատ լուծւում ենք, Այվատեան եպիսկոպոսը հրաւիրուած է թեհրան առաջնորդ, և դա շատ ընտրոշ է, թեհհանցին հասկացել է նրա առաւելութիւնները, որոնցից զուրկ են շատ հոգևորականներ:

Ապրիլի 28-ին թագաժառանգը ճանապարհուեց թեհրան ընտանիքով: Այվատեան եպիսկոպոսը գնացել էր թագաժառանգի մօտ և՛ այցելութեան, և՛ ճանապարհ գցելու և միևնոյն ժամանակ պաշտօնապէս յայտնելու, որ հրաժարուած է և շուտով ուղևորուելու է Վիսաբին:

Թագաժառանգը երկար խօսում է Այվատեան եպիսկոպոսի հետ և, ի միջի այլոց, ասում է. «Շատ անգամ ասել եմ, այժմ էլ կրկնում եմ, որ միշտ գոհ և բաւական եմ եղել ձեր գործունէութիւնից և պաշտօնավարութիւնից և միշտ էլ յարգել եմ

ձեզ: Ահա տալիս եմ իմ լուսանկարը նուէր, որպէս փաստ իմ անկեղծ յարգանքի և որպէս գովումնս ձեր եռանդուն գործունէութեան այս երկտող ձօնը»:

Այդ ձօնի մէջ չեղտուած է, թէ Այվատեան եպիսկոպոսը եռանդուն և արիաջան գործել, կառավարել է Ատրպատականը, արթուն հովիւ է եղել և դրա համար էլ յայտնում է իր չնորհակալութիւնը և գոհունակութիւնը:

Ինչպէս յայտնի է արդէն Արիստակէս արքեպ. Սեդրակեանը հրաժարուեց և չընդունեց Ատրպատականի առաջնորդութիւնը*):

Մայիսի 11-ին նշանակուած էր առաջնորդական նոր ընտրութիւն: Ժողովում նախ կարգացուեցին Վեհ. Կաթողիկոսի հեռագիրը, որով յայտնում էր Արիստակէս արքեպիսկոպոսի հրաժարուելը և կարգադրում էր նոր ընտրութիւն անել, և Արիստակէս արքեպ. հրաժարականը հեռագրով ուղղած պատգամաւորներին:

Նախ քան բուն խնդրին անցնելը, ուրախութեամբ յիշատակում ենք այստեղ և մի երևոյթ, որ Թաւրիզի համար նորութիւն է: Այդ այն է, որ այս ընտրողական ժողովի թոյլաւութեամբ ներկայ են և թերթերի թղթակիցները:

Ատենապետ՝ Նադար էֆ. Գորոյեանը մի քանի խօսքով բացեց ժողովը և ասաց. ընդունելով այս գործի պատասխանատւութիւնը և ղեկավարութիւնը, ընտրողական իրաւունքը կամ պէտք է թողնել Վեհ. Կաթողիկոսին կամ սնդել մեր առաջուայ ընտրածի վրայ: Ինչպէս իմ, նոյնպէս և մեծամասնութեան կարծիքը այն է, որ մենք աւելի խոհեմութիւն արած կը լինենք, եթէ թողնենք Կաթողիկոսին. ինչ էք ասում:

— Ինչ վերաբերում է երկրորդ կէտին, ասում է դօկ. Փաշայեանը, ոչինչ չունեմ, բայց մենք իրաւունք չունենք մեր ձայնը թողնել Կաթողիկոսին: Մենք ժողովրդի իրաւունքը ի չարն ենք գործ դնում և զրանով բռնաբարում: Պօլսում այդպիսի սահմանադրական իրաւունք ձեռք գցելու համար զոհեր են տուել, բայց մենք այժմ չենք կարողանում օգտուել այդ իրաւունքից և ուզում ենք թողնել Կաթողիկոսին. դա ամօթ և ծիծաղելի է:

— Ես էլ այդ կարծիքի եմ, աւելացնում է Տիգրան Ռաչմաճեան, — որ մենք իրաւունք չունենք այդ անելու: Մենք չենք ընտրուել նրա համար, որ մեր ձայները տանք Վեհափառին,

*) Յարգելի եկեղեցականը բացատրում է իր հրաժարականի պատճառները մի նամակում, որ տպուած է ՎՇակիւ Յ. 127. Խմբ.

ուրիշ խօսքով նրա շնորհած իրաւունքը, արտօնութիւնը նորից իրան վերադարձնենք: Իսկ գալով երկրորդ կէտին, եւ կարծում եմ աւելորդ է մեր պնդելը, քանի որ, եթէ նա հրաժարուել է, ուրեմն ունեցել է իր բանաւոր պատճառները:

—Եթէ պատգամաւորները անձեռնհաս են համարում իրանց այս խնդրում,—ասում է Մարտ. Յարութիւնեանը, պիտի հրաժարուեն պատգամաւորութիւնից, որպէս զի նոր պատգամաւորներ ընտրուեն. այդ է պահանջում ժողովուրդի իրաւունքները, եթէ չենք ուզում, որ ժողովուրդը չը զրկուի իրան շնորհած այդ սահմանադրական իրաւունքից: Ես էլ եմ կարծում, որ աւելորդ է պնդել մեր առաջուայ ընտրածի վրայ, քանի որ հաւատացած եմ, որ նա մեզ հետ խաղ չի անում, նա այդպիսի բնաւորութիւն չունի. ուրեմն կամ նա հիւանդ է կամ մի ուրիշ հիմնաւոր պատճառ ունի:

—Թողնելով Կաթողիկոսին,—պնդում է ատենապետը, մենք չենք զրկում ընդմիշտ մեր իրաւունքից. այժմ անձեռնհաս ենք, իսկ մի ժամանակից յետոյ պատրաստուած կը լինենք:

—Դա մեզ համար սռաջին օրինակն է, եթէ չը կարողանանք օգտուել դրանից, ասում է, Արշակ Ղորղանեանը, դա մեզ համար անպատուաբեր է:

Այս խնդիրը թէ՛ տաք վիճաբանութեան տեղիք տուեց, բայց էլի մեծամասնութիւնը լուռ էր: Խօսողները բոլորն էլ, ինչպէս տեսնում էք, հակառակ են Կաթողիկոսին թողնելու մտքին, բացի Վահան Բժշկեանից, որ համամիտ էր Ատենապետի հետ:

Ատենապետը մեծամասնութեան լուռ տրամադրութիւնից օգտուելով, խնդիրը առաջարկեց քուէարկութեան. —Թողնել Կաթողիկոսին, թէ ոչ:

Այստեղ արդէն դօկ. Փաշայեանը յուզուած և դողդոջիւն ձայնով ասաց.

—Ես նորից կրկնում եմ, որ դա ամօթ և խայտառակութիւն է մեզ համար. դա մեր իրաւունքից դուրս է, նոյն իսկ եթէ մեծամասնութիւնն էլ համաձայն լինի այդ մտքի հետ: Ես և նրանք, որ համամիտ են ինձ հետ, դուրս կը գանք ժողովից մի բողոք կը խմբադրենք և դրանից մի օրինակ կ'ուղարկենք Վեհ. Կաթողիկոսին և մի օրինակ էլ «Մշակին» տպագրելու: Եթէ դուք ուզում էք խայտառակուել, ես բնաւ ցանկութիւն չունեմ խայտառակուելու: Հէնց ես կը լինեմ առաջինը, այժմ ասում եմ, որ կը խայտառակեմ ձեզ մասուլի մէջ...

—Ես միանգամայն համաձայն եմ դօկ. Փաշայեանի հետ, ա-

ւեղացրեց Միք. Զարափեանը: Մենք նոյն իսկ իրաւունքը չունենք այդ խնդիրը քուէարկութեան դնել, ուր մնաց մեր ձայնը տանք կաթողիկոսին. շատ-շատ մենք կարող են հրաժարուել:

Ելի կարծիքների փոխանակութիւններ եղան: Պատճառաբանուեցին, որ անմիտ և ամօթալի է այդ վարմունքը և, որ ամենագլխաւորն է, դուրս է պատգամաւորների իրաւասութիւնից: Առանց այդ խնդրին վերջնական լուծում տալու և փակելու, ատենապետը տեսնելով որ գլուխ գալու բան չէ, առաջարկեց՝ կամ դիմել Վեհ. կաթողիկոսին, որ թեկնածուների անուան ցանկ ուղարկի, համառօտ կենսագրականներով, կամ յետաձգել մի քանի ամսով, լաւ խորհելու համար, առարկելով թէ չենք ճանաչում հոգևորականներին:

Նոյն միտքը պաշտպանեց և Աբէղնագով Ալէքսանեանը, բայց աւելացրեց և այն, որ նախապէս առնել և թեկնածուի հաճութիւնը:

—Դա նոյնն է դուրս գալիս, նկատեց Միք. Զարափեանը, որ էլի թողնում ենք կաթողիկոսին: Պէտք է ընտրենք նրա առաջարկածը, նոյն բանն է ասել, թէ թող կաթողիկոսը ուղարկի Նա դրան հակառակ եմ: Դա նոյն իսկ, ներեցէք ասել, տարրական քաղաքավարութիւնից հեռու է. ինչ կը նշանակէ առնել և թեկնածուի հաճութիւնը:

Շատերի կողմից պատճառաբանուեց և առարկուեց, որ դա աւելորդ է, քանի որ ամեն մի կուսակցութիւն ունի անշուշտ իր թեկնածուն և երկրորդ՝ պատգամաւորներից շատ շատերը ճանաչում են հոգևորականներին: Առաջարկուեց թեկնածուների մասին խորհրդակցել: Խնդրուեց նախագահ եպիսկոպոսից, որ մի առժամանակ հեռանայ ժողովից, որպէս զի ազատ, առանց ճնշուելու յայտնեն իրանց կարծիքները:

Դօկ. Փաշայեանը իր կողմից առաջարկեց Սահակ եպ. Այվատեանին, Բագրատ վարդ. Թաւաքալեանին և Եղիշէ վարդ. Մուրադեանին, իսկ Վահան Բժշկեանը և Աբէղնագով Ալէքսանեանը՝ Գրիգորիս եպ. Տէր-Յորհաննիսեանին, Յովսէփ եպ. Սարաջեանին և Սահակ եպ. Խապայեանին:

Նա, որ մի քանի բոպէ առաջ պնդում էր, թէ յարմար և արժանաւոր հոգևորականներ չենք ճանաչում, այժմ թեկնածու է առաջարկում. ինչպէս բացատրել այդ հակասութիւնը: Այվատեան և Սարաջեան եպիսկոպոսները, որպէս բոլորին լաւ ծանօթ, դրանց մասին բոլորովին չը խօսեցին, այլ միւս թեկնածուների մասին խորհրդակցութիւններ եղան: Թուեցին նրանց արժանաւորութիւնները, առաջ բերին պակասութիւնները.

բայց ընդհանուր համաձայնութիւն չը կայացաւ և խնդիրն էլ նոյն դրութեան մէջ մնաց:

Ամբողջ ժողովի ընթացքում հետեւելով բոլոր խորհրդակցութիւններին և ատենապետի աստիճանաբար արած զիջողութիւններին, դժուար չէր համեմել այն եզրակացութեան, որ ատենապետը և նրա համամիտները աշխատում, ձգտում էին խոյս տալ, մանաւանդ յետաձգել ընտրութիւնը. թէ ինչու, այդ հանելուկ էր...

Ուշագրաւ է և մի ուրիշ կէտ: Հասկանալի է, որ ժողովում, երբ մի խնդիր է արծարծւում, նրա մասին խօսում, վիճում և մի որոշ ու ընդհանուր համոզմունքի գալուց և այդ խնդիրը փակելուց յետոյ են անցնում մի ուրիշ խնդրի: Բայց ի՞նչ... խնդիրները բարդւում էին իրար վրայ և առանց ընդհանուր եզրակացութեան գալու և լուռ մնացածների կարծիքը իմանալու, ատենապետը իր կողմից վճռած էր համարում և անցնում ուրիշ գործերի:

Այդպէս վարուեց և վերջին առաջարկի վերաբերմամբ: Առաջարկուեց մի քանի օրով յետաձգել ընտրութիւնը: Ատենապետը դեռ ընդհանուր համաձայնութիւնը չառած, կանչեց Այվատեան եպիսկոպոսին, և որպէս հաստատ վճիռ հաղորդեց նրան, որ ժողովը, աչքի առաջ ունենալով գործի դրութիւնը, համաձայնեց մի քանի օրով յետաձգել ընտրութիւնը:

Ահա այդ անկանոնութեան համար դիւանը նկատողութեան առնուեց դօկ. Փաշայեանի կողմից:

— Մանաւանդ պէտք է ընտրել այնպիսի մէկը, որ կառավարութեան առաջ կարողանայ հեղինակութիւն պահել և ժողովուրդը զգոհ չը լինի, չարունակում է ատենապետը:

Այդ խօսքերը առիթ տուին Այվատեան եպիսկոպոսին արտայայտելու իր արդար զայրոյթը:

— Ժողովուրդ, դուք այդ ձեռք մէջ՝ փնտռեցէք: Առանց ժողովրդի աջակցութեան ի՞նչ կարող է անել առաջնորդը, թէկուզ գերբնական մարդ լինի. դուք ևս պէտք է աջակցէք նրան: Ի՞նչ էք միշտ մեղքը բարդում կառավարութեան և ժողովրդի վրայ. յոյց տուէք մի օրինակ, որ կառավարութիւնը վատ աչքով նայած լինի առաջնորդի վրայ, կամ ընդունած չը լինի... Ի՞նչ էք միշտ էլ ժողովրդից խօսում. «գաւառը կամ զիւղը երբ է գանգատուել և դժգոհել առաջնորդից: Եւ ոչ մէկը. միմիայն Թաւրիզի, այն էլ մի քանի խմբալիւսներ են, որ միջոցների մէջ առանց խտրութիւն դնելու, կեղտոտ թղթերով զգուեցնում են վեհ. կաթողիկոսին և ճիգ են գործ դնում առաջնորդի վարկը

գրելու... Որովհետև շուտով մեկնելու եմ էջմիածին, լաւ կը լինէր, որ շատ շուտով նշանակէք ընտրութիւնը:

Ընտրութիւնը ընդհանուր համաձայնութեամբ յետաձգուեց մինչև մայիսի 15-ը:

Դրանից յետոյ սկսուեալ են խաղեր, անվերջ խաղեր...

Մայիսի 14-ին նախապատրաստական ժողով էր նշանակուած Գալստեանի մօտ: Այդ նախապատրաստական ժողովում խօսում են երկու կողմի առաջարկած թեկնածուների մասին: Երկար խորհրդակցութիւններից և զիջումներից յետոյ ընդհանուր համաձայնութեան են գալիս Եղիշէ վարդապետ Մուրադեանի վրայ: Յանկարծ, ինչպէս է լինում, մէջ է բերում Հմայեակ վարդապետ Դիմաքսեանի անունը և ոմանք առաջարկում են հաւասար ձայներով ընտրել երկուսին էլ և առաջարկել կաթողիկոսին, որին ցանկանայ, նրան էլ ուղարկէ: Եղիշէ վարդապետի իսկական կուսակիցները ոչ մի կերպ չեն զիջում և չեն համաձայնում: Դիմաքսեան վարդապետի կուսակիցները առաջարկում են հրաժարուել պատգամաւորութիւնից, անձեռնհաս համարելով իրանց այդ գործի համար: «Ախր մեր ինչ բանն է սա, մենք ինչ ենք հասկանում», ասում են Դալայի ծխական պատգամաւորները և ուրիշները. և այդ խոստովանութիւնը շատ ճիշտ է և ընտրուի:

Անցան այն երանելի ժամանակները, որ դրանք տէր և հրամայող էին ժողովրդին (թէև այժմ էլ այդ էլի որոշ չափով պահպանուած է) և իրանց քմահաճութեան համար առաջնորդին և՛ հետաքննում, և՛ բերում էին: Պատմում են, որ առաջ, երբ առաջնորդ բերելու խնդիր էր լինում, մի բանի ազաններ թուղթ էին պտտեցնում և, առանց առաջնորդի ու լինելը ասելու, ստերադրել էին տալիս ժողովրդին. իսկ ուլ կը յանդգնէր հակառակել նրանց. նա, ուլ կեանքից ձեռք էր վերցրել, բայց քանի այդպիսի մարդիկ կը ճարուէին: Համարեա և ոչ մէկը: Այժմ նրանց հակառակ գործողներ կան, այն էլ յայտնի կերպով գործողներ և առանց այդպիսի սարսափելի պատիժներ աչքի առաջ ունենալու:

Դիմաքսեան վարդապետի պաշտպանները, հէնց այստեղ, ժողովում, գրաւոր կերպով հրաժարւում են պատգամաւորութիւնից, որ ուղղած էր Սահակ եպ. Այվատեանին, իսկ միւսները ժողովից դուրս են գալիս: Դա էլ, ի հարկէ, խաղ էր, բայց այդ էլ չաջողուեց: Միւսների դուրս գալուց անմիջապէս յետոյ, սրանք փոխում են իրանց վճիռը, և նոր խաղի դիմում, թէև համոզուած էին, որ դրանով էլ չեն կարող հասնել իրանց որոշ նպատակին. բայց ինչ արած, ճար չունէին: Պակաս ազ-

դեցութիւն չարաւ սրանց վրայ և մի բարձրաստիճան հոգեւորականի նամակը...

Խնդիրը ահա այդ դրութեան մէջ, միւս օրը գնում են ժողովի:

Ատենապետը ժողովը բացեց և աւելացրեց, որ, ինչպէս անցեալ օրուայ նախապատրաստական ժողովումն էլ ասուեց, ցանկալի էր, որ ընտրութիւնը միաձայն լինի, այն էլ յիշած՝ երկու անձանց վրայ՝ Եղիշէ վարդ. Մուրադեանի և Հմայեակ վարդ. Դիմաքսեանի վրայ:

Նախագահն եպիսկոպոսը ձայն խնդրեց և ասաց. «Ծիշտ է, Ռուսաստանում կաթողիկոսական երկու թեկնածուներ են ընտրուում, համաձայն Պօլօժենիայի և առաջարկում կայարին, որ իր վէտօն է դնում. բայց դա մեր եկեղեցու ոգուն հակառակ է: Մենք պիտի մէկը ընտրենք և առաջարկենք հաստատութեան, ինչպէս յիշուած է կոնդակում:

Այս խաղն էլ չաջողուեց: Փութարկութիւնն իսկի ձեռնտու չէր նրանց համար:

— Եթէ այդպէս է, ուրեմն հրաժարուենք, ինչպէս անցեալ անգամ էլ ասացինք, ասում է ատենապետը, համաձայն էք...

— Ո՛չ, ո՛չ, — լսուեցին զանազան կողմերից:

Ախր ինչպէս կարելի է, որ աղան իր խօսքը չը կարողանայ առաջ տանել: Դա շատ ծանր է և աղան անկարող է տանել. և ահա ինչո՞ւ չէին խնայում ամեն անհերքելի միջոցներ՝ ընտրութիւնը խանգարելու, գլխաւորապէս յետաձգելու համար: Դրանք աղնիւ պայքար և կռիւ մղելու անընդունակ են, այլ ծածուկ և կեղտոտ միջոցներով: Ահա Թաւրիղի աղան: Ի հարկէ բացառութիւններ կան, դրանք լիւաւացիներն են, որ փոքր ի շատէ գործելու, հասարակական խնդիրներով զբաղուելու եռանդ ունեն, բայց այդ բացառութիւններն էլ շատ աննշան տոկոս են կազմում:

Աղաները տեսնելով, որ ոչ մէկն էլ գլուխ չեկաւ, մի բողոք առաջարկեցին, որի մէջ շեշտուած էր հետեւեալ կէտերը. — Նախ՝ Լիւաւայի ծխականների ընտրութիւնը ապօրինի է, երկրորդ՝ Սօւդ-Բուլաղի ձայները ի զուր է կորել, ապօրինի ձևով, երրորդ՝ Տիգրան Ռաշմաճեանը, Արշակ Ղորղանեանը և Տէր-Յակոբը իրաւունք չունեն, որովհետեւ նախ՝ առաջինը երեք տարի լրիւ չէ ապրել Թաւրիզում, երկրորդը և երրորդը պաշտօնական ձևով չեն ճանաչուում, ժողովուրդը չէ ընտրել նրանց:

Թէ նախագահի և թէ ուրիշների կողմից պատճառաբան-

ուեց, որ Լիւրաւայի ընտրութիւնը ապօրինի չէ, քանի որ բոլորն էլ մասնակցել են քուէարկութեան և մասնաւանդ, բողոքի մէջ ստորագրել էին այնպիսի մարդիկ, որ կամ ժողովում չեն եղել, կամ ստորագրել են և իսկական արձանագրութեան: Սօսու-
Բուլաղի ընտրութիւնը ապօրինի է, որովհետեւ գործակալից ոչ մի պաշտօնական բան չը կայ, դրանք միայն մասնաւոր մարդկանց հետադիւրներ են, չենք կարող դրան հաւատալ. եթէ բողոքելու բան կար, պէտք է իր ժամանակին բողոքուէր: Տիգրան Ռաշմաճեանը երկը տարի է, որ գործում է Թաւրիզում. ինչ նշանակութիւն ունի, թէ մի երկու ամիս պակաս է, իսկ զալով Արշակ Ղորղանեանին և Տէր-Յակոբին, առաջինը հոգաբարձութեան հաստատած երէցիօնն է, իսկ երկրորդը Լիւրաւայի միակ ծխական քահանան. ուստի կարելի էր տալ ձայնը, չէ որ մէկը պէտք է մասնակցէր ընտրութեան:

Դրանք, աւելի ճիշտը, ոչ թէ բողոքում էին ապօրինութիւնների դէմ, այլ արդիւնքի, պարզ տեսնելով, որ տարուած են: Եւ բանը այն է, որ զիմելով զանազան խաղերի, ընկնում են և հակասութիւնների մէջ: Բողոքից մի բոլորէ առաջ առաջարկում էին ընդհանուր համաձայնութեամբ ընտրել երկուսին էլ, ի հարկէ, ապօրինի պատգամաւորներով (նրանց կարծիքով), չը նայած մի ընտրութիւն էլ արդէն կատարել են նոյն պատգամաւորներով, և այժմ բողոքում են ապօրինութեան դէմ: Մասնաւանդ յետոյ էլ առաջարկում և աւելացնում են, որ եթէ ընդհանուր համաձայնութիւն կայացուի երկուսի վրայ, բողոքին ուշադրութիւն չենք դարձնի: Տեսնում էք, դրանց «սկզբունքները»:

Երբ այդ վերջին խաղն էլ չաջողուեց, ատենապետը իր համախոհներով դուրս եկան ժողովից: Ատենապետը գոնէ իր տարրական քաղաքավարութիւնը և պարտականութիւնը չը կատարեց: Նա պարտաւոր էր, նախ քան ժողովից դուրս գալը, հրաժարուէր իր պաշտօնից և զիւանի գործերը յանձնէր ժողովի նախագահ ևսկիսկոպոսին. բայց նոյն իսկ բողոքն էլ չը վերադարձրին, չը նայած որ մնացած պատգամաւորների խնդրանքը գեր. նախագահը պահանջեց այդ:

Մնացած պատգամաւորները, որ մեծամասնութիւն էին կազմում, նոր զիւան կազմեցին, ատենապետ՝ դօկ. Փաշայեան, իսկ քարտուղար՝ Մարտ. Յարութիւնեան, և բացարձակ քուէով ընտրեցին Եղիշէ վարդապետ Մուրադեանին Ատրպատականի առաջնորդ: Ժողովում առաջարկուեց և ընդունուեց, որ ներկայ զիւանը պահանջէ նախկին զիւանից մայիսի 11-ի արձանա-

գրութիւնը, կամ՝ նորից մանրամասն կազմել: Թէ ինչո՞ւ այդ ժողովի արձանագրութիւն կազմելուց խոյս են տուել, դա շատ պարզ է, որովհետեւ այդ ժողովը զրազուած էր մի շարք ամօթալի առաջարկներով: Բայց մամուլը իր դերը կը կատարէ:

Մայիսի 24-ին Սահակ եպ. Այվատեանը վեհ. Կաթողիկոսից ստացաւ հետեւեալ հեռագիրը.

«Ընտրութեան մասնակցող պատգամաւորներին հաղորդեցէք մեր ջնորհակալութիւնը»:

Իսկ 26-ին Եղիշէ վարդ. Մուրադեանը հեռագրով պատասխանում է.

«Յայտնում եմ իմ խորին ջնորհակալութիւնս այն մեծ պատուի և վստահութեան համար, որ պատգամաւորները ցոյց են տուել դէպի ինձ. թող Տէր Աստուած օգնի ինձ արդարացեալ իմ հօտի ամենալաւ յոյսերը ի փառս հայկական եկեղեցւոյ»:

ԵՐ. ՅՐԱՆԳԵԱՆՑ

ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

II *)

ՏԻԿԻՆ ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱՐ

Ահա մի կորուստ, որ շօշափում է մի շատ կարևոր էական հարց—հայ կնոջ դերը մեր կեանքի մէջ...

Գրել այդ դերի պատմութիւնը, չափազանց դժուար է. մեր գրաւոր պատմութեան մէջ հայ գինը շատ համեստ, շատ աննկատելի տեղ ունի բռնած: Պատմութիւնը գործ ունի խոշոր դէպքերի հետ. իսկ մեղանում նա, բայի զրանից, մի առանձին խոշոր պակասութիւն էլ ունի: Մեղանում պատմութիւնը կղերական մի տարեգրութիւն է, որի մէջ ամենից շատ արհամարհուածը, ամենից շատ մոռացուածը աշխարհային կեանքն է, այն շրջանը, ուր դարեր է անցկացրել հայի ընտանեկան-հասարակական կեանքը: Չը կան մեղանում նաև հին երգեր, գրոյցներ, վէպեր, սրտնային մենք կարողանայինք լիակատար տեղեկութիւններ քաղել այդ կեանքի մասին: Հանկնք մեր պատմութիւնից այն դէպքերը, երբ հայ կինը մի-մի սուպարէզ էր զալիս իբրև քրիստոնեայ նահատակ, իբրև բարեպաշտ ազնուական կին, թագուհի,—և մենք կը մնանք կատարեալ մթութեան մէջ:

Բայց այդ հանգամանքը չէ արգելում մեզ հասկանալ որ հայ կինը մի շատ խոշոր դեր է կատարել մեր երկար անցեալում: Նա մեր ընտանեկան կազմակերպութեան հոգին էր, իսկ ընտանիքը առանձին զոյն ու կերպարանք էր տալիս մեր համայնական կեանքին: Այս խոշոր իրողութիւնը փոքր ի շատէ լուսաբանելու համար դիմենք այն լոյսին, որ վառում է ընտանիքի յարկի տակ: Դա մի հնադարեան կրակ է, որ անշէջ է մնացել մինչև մեր օրերը, որ հայի ազգային յատկութիւնների բնորոշ արտայայտութիւնն է, նրա մարմինն ու արիւնը: Դա մեր օջախն է:

Մի բոսկէ, ընթերցող, տեղափոխուենք միջին դարերը, այն սև, արիւնոտ ժամանակները, երբ Հայաստանում Ալփ-Ասլանի սրին յաջորդում էր Չինգիզ-խանի սուրը, սրան—լէնկ-

*) Տե՛ս «Մուրճ» № 4.

Թիմուրի սուրը և այլն: Նայում ենք զարհուրելի իրականութեանը և զարմանում ենք, նոյն իսկ չենք կարողանում հասկանալ Կոտորած և Կոտորած. մեղքների պէս ջարդուող ժողովուրդը ոչ մի պաշտպան—ոչ դանակ իր ձեռքում, ոչ գլխաւոր ևրկինք վերնում: Բայց ինչ զարմանալի տեսարան. չէ սպառնում այդ ժողովուրդը, չէ անհետանում իր դժբախտ հողի երեսից: Նստած է իր աւերակների վրայ, յամառ տոկունութեամբ, որքան թոյլ են տալիս խորտակուած ոյժերը, նորից կենդանացնում է նրանց. նորից մըջիւնի նման սկսում է աշխատել, գլուխը հազար ու մի քարի տալ, որպէս զի չը մարէ նրա երգիկի ծուխը: Սակայն ոչինչ բան յարատւ չէ հայի երկնքի տակ. դալիս քանդում են այդ նոր բնակութիւնները, զարծեալ սուգ, զարծեալ գերեզմանային ամայութիւն. միայն գիշատիչ թռչուններն ու գաղաններն են կեանքի խնձոյք բոլորում աւերակների տեղերում: Բայց ահա արիւնը ծծուեց հողի մէջ, ահա մարեց քանդողների ոտնաձայնը: Նայեցէք. էլի նոյն յամառութեամբ, էլի նոյն մըջիւնային վստահութեամբ վերանորոգում է շինութեան գործը. էլի կանգնում է հայի տունը, էլի ծուխ է դուրս գալիս նրա երգիկից: Այդտեղ ապրում է հայի ազգային ինքնութիւնը. այդտեղ է նրա հին ոգին, որ պաշտպանում է նրա լեզուն, սովորութիւնները, մի խօսքով այն ամենը, ինչով նա հայ է: Եւ արեան ծովերը չեն կարողանում խեղդել այդ մի բուռն շնչին, միայն մորթուելու ընդունակ մարդկանց: Այդ ինչ զիւթական ոյժ է, որ այդքան զարմանալի գործեր է կատարում մեր քարուքանդ աշխարհում:

—Օջախը...

Ինչպէս յայտնի է, օջախը մի մեծ սրբազան հիմնարկութիւն էր բոլոր հին ազգերի մէջ: Այնտեղ էր հին մարդը դրել իր կրօնը, իր բոլոր գաղափարները աշխարհային կեանքի, սրբութիւնների, իրաւունքների և պարտաւորութիւնների մասին: Օջախը ընտանիքի աստուածութիւնն էր: Տղամարդն էր նրա տէրը, տղամարդն էր նրան անուն տալիս, տղամարդը, իբրեւ հիմնարկող, իբրեւ պատճառ, իբրեւ իր աշխատանքով ամենքին ապրեցնող, տան թաղաւորն էր, հրամաններ տուող: Բայց տղամարդից աւելի մեծ դեր օջախի մօտ ունէր կինը: Սա էր մարմնացնում օջախի մաքրութիւնը, սրբութիւնը: Առանց պառուի տուն չէր կարող լինել. և պառուի օջախի մօտ մշտապէս ապրող, օջախի սիրտն ու հոգին կազմող կինն էր, որ հաւաքում էր ընտանիքի անդամներին, միայնում մի յարկի տակ: Կինը ամբողջապէս ինքնազոհութիւն էր. իրաւունքներ նա չուներ ոչ իր հօր տանը, քանի աղջիկ էր, ոչ ամուսնու մօտ:

Բայց պարտաւորութիւնների ճրպիսի մեծ բեռ կար նրա վրայ: Անձնական տրամադրութիւն, ազատ կամք, անհատականութիւն չը կային նրա համար. ամեն ինչ պէտք էր մոռանալ՝ ընտանիքի սուրբ հասկացողութիւնը անաղարտ պահպանելու, նրա ամբողջութեան հիմնաքարը դառնալու համար:

Հայերի մէջ օջախը իր դիրքն ու նշանակութիւնը պահպանեց շատ երկար: Մենք սաստիկ աւանդապահ ժողովուրդ ենք և այսօր էլ մեր գիւղերում կարելի է տեսնել արողութիւններ, որոնք հազարաւոր տարիներ առաջ էին կատարուում: Գրիստոնէութիւնն անգամ չը կարողացաւ ջնջել օջախը, այլ ստիպուած էր զիջողութիւններ անել նրան, նուիրագործել նրա սովորութիւնները, հասկացողութիւնները: Այնպէս էր, օրինակ, օջախի հիմնական գաղափարներից մէկը—նախնիքների պաշտամունքը, որ մեր եկեղեցու արարողութիւնների մէջ դարձաւ մեռելների պաշտամունք:

Մի թոռնիկի նախարանի մէջ մենք չենք կարող մանրամասն հետազոտութիւն կատարել հնադարեան մեծ և բարդ սրբութեան, օջախի շուրջը: Տեսնենք թէ ինչ էր նա համայնական տեսակէտից:

Օջախը ընտանեկան կազմակերպութիւնն է, մարդկային հանրակեցութեան նախնական ձևը: Իւրաքանչիւր օջախ մի առանձին աշխարհ էր. նա մի ինքնավար թագաւորութիւն էր, իր առանձին սովորութիւններով, առանձին պաշտամունքով: Ընտանիքի ամբողջ աշխարհը տան չորս պատերի մէջ էր պարփակուած. այդ պատերից դուրս չը կային ընդհանուր շահեր, ընդհանուր գաղափար:

Ժամանակի ընթացքում այս նախնական ձևը տեղի տուեց ուրիշ հասկացողութեան: Առաջ եկաւ համայնական սկզբունքը: Ընտանիքը դարձաւ համայնքի մասնիկ, զարգացաւ ցեղի ընդհանուր համայնակեցութեան գաղափարը, որ զարգացրեց պետական սկզբունքը: Միախմբուած համայնքները քաղաքական ուժեղ կազմակերպութիւն տուին իրանց, տիրեցին աշխարհին, հանրային կուլտուրայի ասպարէզում առաջագիմութիւններ ցոյց տուին: Մեզանում, սակայն, ընտանիքի հին կազմակերպութիւնը համարեա անխախտ մնաց, մենք չը կարողացանք զարգացնել համայնական-պետական ձգտումներ, բայց դրա փոխարէն չափազանց զարգացրինք ընտանեկան կեանքը: Այստեղից արդէն պարզ է մեր ազգային կեանքի պատմական հիմնաւոր յատկութիւնը. մենք զուրկ մնացինք համայնականութիւնից, բայց ծաղկեցրինք անհատականութիւնը: Մեր ոյժերից վեր էր երկար ժամանակ պահպանել պետական գաղափարը, որովհետև միշտ

թոյլ էինք իբրև քաղաքական միաձայն, ամբողջացրած մարմին, բաժանուած էինք ընտանիքների:

Սակայն մեր այս թուլութիւնը մեր երկարակեցութեան գաղտնիքներից մէկն է: Այն անվերջ երկար դարերում, երբ մեզ շարունակ կոտորում էին, համայնականութիւնը չէր կարող ապրել, բայց ընտանեկան սիստեմը, մեր այդ հնագոյն կազմակերպութիւնը, դարձաւ մեր ցեղի մասնիկները պահպանող մի լաւ միջոց: Հայ մարդուն արիւնի ժամանակներում ոգևորում էր օջախի պաշտամունքը. ունենալ սեփական փոքրիկ անկիւնը, սեփական ծուխը, կապել այդ սրբավայրը նախնիքների ոսկորների հետ—ահա ինչ ներքին հզօր ոյժ էր դրդում հային աւերակներ վերակենդանացնելու: Հաւաքական, համայնական ոյժերով ոչինչ փրկել չէր կարելի, բայց լեռների ծերպերում, անտառների խորքերում ծխացող օջախները ազգութիւն պահպանելու լաւ միջոցներ էին:

Եւ որովհետև կրնն էր, ինչպէս տեսանք, մաքուր ու անխառն օջախի հողին, նրա շունչը, կենդանութիւնը, ուստի հասկանալի է թէ որքան երկար ժամանակ, որպիսի տոկունութեամբ հայ կրնը, այդ աննկատելի հերոսութիւն, կրում էր իր սարսափելի ծանր խաչը: Աւանդապահ, իրաւագուրկ մի մարտիրոսութիւն, նա իր տանջանքների գնով կարողացել է հայի օջախը հայի հողի վրայ պահել: Նա էր, որ մանտիրոսական համբերութեամբ տանեակ տարիներով նստում էր իր օջախի կողքին և սպասում էր օտարութիւն գնացած իր ամուսնու վերադարձին: Անսանձ բռնութիւնների ժամանակներում ընտանիքը յաճախ էր զրկւում իր տղամարդից. բայց նրա տեղը իսկոյն կանգնում էր կինը, որ գերբնական ջանքեր գործ դնելով, վառ էր պահում իր օջախը, մեծացնում էր իր զաւակներին:

Ահա ինչ է եղել հայ կինը:

Փոխուեցին ժամանակները: Եւրոպական քաղաքակրթութիւնը նոր պահանջներ ծնեց, նոր հասկացողութիւններ բերեց: Մեր ընտանեկան կազմակերպութիւնը ենթարկուեց ցնցումների, օջախը կորցրեց իր հին, աւանդական նշանակութիւնը: Եւ հայ կինը այս նոր հոսանքների մէջ բռնեց բոլորովին ուրիշ դիրք: Հինը, աւանդականը վերացաւ, բայց նրա տեղ ազգայնութեան հիմնաքարեր չը դրուեցան. հայ կինը այլ ևս հայ ընտանիքի մէջ ազգային ոգի, լեզու պահպանող մի հզօր գործօն չէր, ինչպէս եղել էր անհուն դարերից ի վեր, այլ ուղիղ դրա հակառակը—օտարացնող, ազգութիւնից հեռացնող...

XVIII և XIX դարերում հայ տղամարդը շատ ջանքեր գործ դրեց իր ազգային առանձնայատկութիւնները նոր ժամա-

նակի ոգով զարգացնելու համար. նա սկսեց մշակել իր լեզուն, հիմնեց աշխարհիկ գրականութիւն, պարբերական մամուլ. նա ուսուցիչ էր, բանաստեղծ էր, եւրոպական ուսումը պատուաւ տոււոյ էր իր ազգի մէջ, քարոզում էր վերածնութեան նոր ժամանակի ոգով: Եւ այդ ջանքերի մէջ հայ տղամարդը համարեա մենակ էր: Հայ կինը համարեա չը կար նրա հետ: Այդ մենակութիւնը մի գծախտութիւն էր: Նա չէզոքացնում էր տղամարդու առաջադիմական ջանքերը ազգային ինքնաճանաչութեան ասպարէզում. նա չէր թոյլ տալիս, որ վերանորոգութիւնը հիմնաւոր ու կատարեալ լինի: Հայ ընտանիքի օտարացումը առաջ էր գնում սոսկալար: Կարծես հայ կինը վրէժ էր հանում իր բազմադարեան ստրկութեան, իր վրայ դրած ծանր խաչի փոխարէն: Եւ չէ կարելի ասել, թէ այսպէս էր դրութիւնը այն պատճառով, որ հայ կինը կրթուելու, դաստիարակուելու միջոց չունէր: Մեզանում արական դպրոցների հետ սկսեցին բացուել և իգական դպրոցներ. հայուն առջև բաց էր նոյն իսկ բարձրագոյն կրթութեան ճանապարհը: Վերջին երկու դարերի մեր գրականութեան մէջ մենք հազիւ թէ մի քանի հայ կանացի անուններ հանդիպենք հայ հեղինակների և թարգմանիչների շարքում: Խոշոր անձնաւորութիւններ, տաղանդներ միայն տղամարդ գործիչների մէջ են երևում. հայ կինը ազգային դաստիարակութեան մէջ չէ կարողանում ցոյց տալ ինքնուրոյն, ուժեղ գէմքեր: Նոյն իսկ մահմեդական հարէմներում լոյս են ընկնում բանաստեղծ կանայք, իսկ մեզանում եթէ կամենաք հայ կնոջ սրտի զգացմունքները որոնել, պիտի կամ մի Վիկտորիա Աղանուր տեսնենք, որ գրում է իտալերէն, կամ թէ դիմենք մի այլ օտար գրականութեան:

Ահա թէ ինչու մի առանձին աչքի ընկնող, մի փայլուն բացառութիւն է կազմում մեզանում տիկին Սրբուհի Տիւսար, որ վախճանուեց Կ. Պօլսում այս տարուայ յունուարի 3-ին:

Ի պատիւ թիւրքահայերի մենք պիտի խոստովանենք, որ նրանց մէջ հայ կինը կարողացել է տաղանդ ցոյց տալ: Պատճառը պարզ է: Հայոց լեզուն թիւրքահայ ընտանիքում այնպէս չէ արհամարհուած, ինչպէս ռուսահայ ընտանիքներում. ազգային դաստիարակութեան կարևորութիւնը այնտեղ աւելի լաւ, աւելի բարեխղճօրէն է ըմբռնուած, քան մեզանում: Բնականաբար հայունին այնտեղ աւելի պիտի ցոյց տար իր հոգեկան կարողութիւնները գեղարուեստի մէջ: Եւ իրաւ, մի համեմատաբար կարճ միջոցում արեւմտեան հայերի մէջ երևան եկան չորհրդ և տաղանդի տէր հայուհիներ, որոնք անուն հանեցին թէ բնմի վրայ և թէ գրականութեան մէջ:

Լ.

(Եր օտարակուլութիւն)

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

«Մշակի» № 88-ում պ. Տ. Յովհաննիսեանը «Մուրճի» № 4-ի մէջ «Զեյթունի ներկայէն ու անցեալէն» գրողի մասին գրած իմ մասենախօսական նկատողութիւնների առիթով գրում է. «Մեր քննադատը աղաւաղում է փաստերը, անհրաժեշտութիւն է ծագում վերականգնել նեմարտութիւնը»:

Եւ ապացուցանելու համար իր այդ ասածը, նա խաղ է աւնում մի պարբերութեան հետ, քէ արդեօք հեղինակի՞նքն է այդ, քէ ձեռագրից առնուած: Սակայն խնդիրը նրանումն է, որ յիշած գրողի հեղինակը ոչ միայն բաւականաճում է այդ անհիմն, անհիշ ձեռագիրը մէջ բերելով, այլ եւ աւելի վերջ, գրողի 17-րդ երեսում, ինքը հեղինակը, հիմնուելով «ձեռագրի» բովանդակութեան վրայ, աւելացնում է իր կողմից, որ «բացի ս. Փրկչէն՝ Բարդուղիմէոս առաքեալը ս. Կարապէտ անուամբ մենաստան մ'ալ շինեց Զերմուկի հիւսիսային արեւմտեան կողմը, այժմ աւերակ... եւ այլն»: Առհասարակ «ձեռագրի» եւ հեղինակի սեփական բացատրութիւնների մէջ տարբերութիւններ գտնել դժուար է, այնքան սերտ են դրանց հայեացքները: Գրողի հեղինակը յայտնում է, իբր այդ աւետարանը գրուած էր «Քրիստոսի 250 թուականին», այսինքն *ԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒ* կետում...

Այդ անհեթեթութիւնը ակնյայտ է, ուստի բժախնդրութիւնը, ձեւական անճշտութիւնը մի կողմ թողնենք, նայենք եւ հարցին ըստ էութեան: Դժուար չէ համոզուել, որ այդ «ձեռագիրը» գրուած է XIX-րդ դարում եւ ո'չ երրորդ, որովհետեւ «ձեռագիրը» ունի մեր ժամանակի արեւմտեան հայերի, այն էլ մի որոշ մասի, ոնք, շարադրութիւնը եւ այլն, ուրեմն եւ այդ «ձեռագիր» անուանուածի գոյութիւնը կասկածելի է, զուրկ է նշտութիւնից ու նշանակութիւնից, ինչպէս նաեւ գրողի հեղինակի բացատրողական վկայութիւնները:

Պ. Տ. Յ. կարծիքով քանի որ այդ գրողի «հեղինակը գտնուում է զարգացման գրեթէ նոյն աստիճանի վրայ, որի վրայ կանգնած են բոլոր գեյթունացիները», հետեւաբար... մարդիկ պարտաւոր էին ընդունելու հեղինակի «պատմական նախը հայեացքները», որպէս նեմարտութիւններ... Իրա՞ւ: Ի վերջոյ կարող ենք հաւատացնել պարոնին, որ Զեյթունի քէ՛ քաղաքում եւ քէ գիւղերում կան բաւական դպրոցներ, ինչպէս եւ զարգացած անձնաւորութիւններ, որոնք հեռու են երեւակայական «նայիվութիւնից» եւ կարող են ջոկել հեփաթները պատմութիւնից:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

Անվէռ. Մ. Խ. — «Մուրճի» Յունուարի համարը սպառնում է. նայեցէք ՆՁ 5,
երես 318.

Միխայիլօ. Ա. 2. — Կարդացէք վերին պատասխանը:
Նիւ-Գորկ. Հ. Գ. Մ. — Կարդացէք առաջին պատասխանը: Պէտք է ու-
ղարկէք 6 ա.:

Պարիզ. Տ. — Յանկալի է, բայց ի նկատի ունեցէք և մեղնից անկախ պատ-
ճառները:

Ժրճէվ. Յ. Ի. — Audiatur et altera pars.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» մայիսի համարում մտել են ի միջի այլոց
հետևեալ վրիպակները.

երես	սող	սպում է	պէտք է լինի
98	8	5—9	5—6
"	41	երկրագործներ	երկաթագործներ
102	28	անսպասելի	անսպասելի
113	33	"	"
317	22	բժիշկները չեն ուզում զաւառները գնալ	բժիշկներ» կան:

Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐԱՍՈՒՆԻԿԵԱՆ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

— ՅԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ԳՆԵԼ —

«Մուրճ» ամսագրի

1901 թ.

Յ Ո Ն Ն Ո Ն Վ Ր Է Փ Ե Վ Ր Ո Ն Վ Ր

ԱՄԻՍԵՆՐԻ

Հ Ա Մ Ա Ր Ն Ե Ր Ը:

Դիմել առաջարկութեամբ «Մուրճի» խմբագրասուն:

1—1

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Լ Է Օ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում

Հասոյ առաջին:—XVI—XVII դար

Գինն է 1 ՌԱԲԻԼԻ 50 ԿՈՊԵԿ

Ծախսում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրասանը:

Օտարաբաղադրացիները դիմում են. Тифлис, редакция „Мшакъ“ 1—5

L n j u s h u a l

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

ԳՐԶԻ ՀԱՆԱՔՆԵՐ

աճիւսուրիւնը:

Գրքի երեսը զարգարուած է նկարիչ Վ. Սուրէնեանցի նկարով:

Գինն է 50 կոպէկ

Դիմել հեղինակին՝ Москва, Садовая-Каретная, меб.
ком. Носальскаго, Ал. Цатуряну. 3—2

«Մուրճի» խմբագրատանը, «Թիֆլիսի Կենտրոնական» և
«Դուռտէնքէրգ» գրավաճառանոցներում ծախուում է
Խօզէ Էշէգարայի՝

„Մ Ա Ր Ի Ա Ն Ա“

գրաման, թարգ. Արսէն Կրասիլնիկեանի:

Գինն է 1 ՌՈՒԲԼԻ

Հրատարակութեան վաճառման արդիւնքը յատկացուած է
«Եղբայրական օգնութեան»:

3—2

Ն Ո Ր Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ

„ԳՈՒՏՏԷՆԲԵՐԳ“

Գ Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ա Ն Ո Յ Ո Ւ Մ

վաճառում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբոմներ,
ատլասներ և այլ տեսակի հրատարակութիւններ: Վենետիկում,
Վիեննայում, Կ. Պօլսում և Զմրւոնիայում տպուած գրքերից
ցանկացողներին կարող ենք ուղարկել: Գումարով գնողներին
զիջումն կը լինի:

Գրավաճառանոցը ընդունում է վաճառելու համար
գրքեր:

Գրավաճառանոցի հետ գործ ունեցողները պէտք է դիմեն՝
Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ», Галусту
Галустяну. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ

վաճառուում են հետեւեալ հայերէն գրքերը.

- Աբեղեան Ման., Գէորգ Դ. Մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, մի լուսանկարով, Վաղարշ. գինը 50 կ.:
- Աբովեան Խաչատուր, Երկասիրութիւնների ժողովածու (Վէրք Հայաստանի և ուրիշները), հեղինակի լուսանկարով, Մոսկ. գ. 1 ա.:
- Աբուսահլ Հայ. Պատմութիւն և կեդեցեաց և Վանորէից Եղիպատոսի, Վենետիկ, գ. 25 կ.:
- Ադամեան Յակ., Ազատ ժամեր, ճանապարհորդական նամակներ, Թիֆլ. գ. 75 կ.:
- Ադամեան Պետ., Շէքսպիր և իւր Համլէտ ողբերգութեան աղբիւրը, Թիֆլ. գ. 1 ա.:
- Ադրիանապոլսեցի Պող. վարդ., Թանգարան խրատութեւ, երկու հատոր, Երուսաղէմ, գ. 2 ա.:
- Աբանասեան Յովհ., Երեմի նահանգի լուսաւորութիւնը, Երււսան, գ. 50 կ.:
- Ալիխանեան Նիկ., Երուսնդ Երկրորդ, ողբերգութիւն հինգ տար. Թիֆլ. գ. 50 կ.:
- Ալիւսեան Հ. Ղեւոնդ, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, պատկերազարդ, Վենետիկ. գ. 30 ա. կողմով 35 ա.:
- » Հին հաւատք կամ հեթանոսական կրօնը Հայոց, Վենետիկ. գ. 1 ա. 50.:
- » Հայ-Վենետ կամ յարընչութիւնը Հայոց և Վենետաց, Վենետիկ. գ. 1 ա. 50 կ.:
- Ալիսագեան Աստ. Սարկ., Համառօտ ձեռնարկ ծաղկահատութեան կամ ծաղկի պատուաստման, Թիֆլ. գ. 5 կ.:
- Ախվերդեան Գ., Սայեաթ-Նօվայ, Մոսկ. գ. 50 կ.:
- Ահարոնեան Աւ., Պատկերներ (վերջին տարիների Տաճկահայոց կեանքից) Մոսկ. գ. 1 ա.:
- Աղաբեգեան Մարկ., Կոռնկ Հայոց աշխարհին, ամսագիր, ութ դիրք (1860—1863), Թիֆլ. գ. 7 ա.:
- Աղայեան Ղազ., Հայկական հնչիւնների մասին, Թիֆլ. գ. 25 կ.:
- Աղանեան Գիւս Բահ., Դիւան Հայոց պատմութեան Ա.—Բ. դիրք 2 ա., Գ. դիրք. 7 ա., Դ. դիրք. 4 ա.:
- » Լուսնայ զրական հանգէս, տարեկան երկու դիրք, 1896 թուականից սկսած, իւրաքանչիւր դիրքը 2 ա.:

Աղանեան Գիւտ Բան., Հնդկ-նորից, հնախուզական ուղեորութիւն,
Թիֆլ. դ. 30 կ.:

» Տումար և տօնացոյց Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, Բ.
տպ. գ. 50 կ.:

» Կարնոյ գաղթը (1829—1830), Թիֆլ. 10 կ.:

» Թ., Խոհարարունի կերակուր պատրաստելու ձեռ-
նարկ, Թիֆլ. գ. 40 կ.:

Այվազեան Բագր., Տանջանքի բովից, վէպ իրական կեանքից,
Թիֆլ. գ. 30 կ.:

» Աշոտ Երկաթ, պատմական վէպ, Բ. տպ., Թիֆլ. գ. 1 ո.:

Առաքելեան Համբ., Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական ընտ-
րութիւնը, Թիֆլ. գ. 20 կ.:

Ասրպետեան Սարգ., Խն Կարապետ, վէպ հայ կաթողիկէների կեան-
քից, Թիֆլ. գ. 1 ո.:

» Սարրաֆ, ողբերգութիւն հինգ արարուածով, Թիֆլ.
30 կ.:

» Շուշան, օպերա 3 արար. (Թիւրքահայերի կեան-
քից), 1 ո.:

» Շինոց, պատկեր Թիւրքահայերի իրական կեանքից,
Նոր-Նախիջ. գ. 30 կ.:

» Քոռ-Եղիկ, վէպ շիրակեցիների կեանքից, Թիֆլ. գ.
30 կ.:

» Ժառանգներ, գիւղական կեանքից, Նոր-Նախիջ. գ.
30 կ.:

» Բէրսայի Առաքէլը, Թիւրքահայերի կեանքից, Նոր-
Նախիջ. գ. 25 կ.:

» Թուրումբաջիներ, կ. պօլսեցիների կեանքից, Նոր-
Նախիջ. գ. 10 կ.:

Արարատեան Սեդ. եպս., Համառօտ բարոյագիտութիւն, Վաղարշ.
գ. 40 կ.:

Արծրունի Սեմ., Սամուէլ Մուրադեանի կտակի խնդիրը, Թիֆլ.
գ. 50 կ.:

Արծրունի Վահ., Մի խմիր, Թիֆլ. գ. 5 կոպ.:

Արշարունի., Սիրոյ ճարակը Տիրան և Արփենիկ Կաղզուանի
իրակ. կեանքից, Ալէքս. գ. 40 կ.:

Արփիարեան Արփիար., Կեանքի պատկերներ, նորավէպը, Կ. Պո-
լիս գ. 50 կ.:

Աւետարան՝ մեծադիր, եկեղեցու համար, Վաղարշապատ, կաղմով
գ. 3 ո.:

Աւետարան՝ փոքրադիր, ծոցի համար, Վաղարշապատ, կաղմով գ.
70 կոպ.:

Բաբայեան Ա. բժ., Աբղի ուղղութիւն առողջաբանութեան և բժշկականութեան մէջ, Թիֆլ. գ. 40 կ.:

Բագրասունի Արս. Բան.. Արարողութիւն և մեկնութիւն ս. պատարագի, Թիֆլ. գ. 50 կ.:

» Տաան պատգամը կամ բարոյական պարտացոյց, Թիֆլ. գ. 25 կ.:

» Վերջին յուշիկ, նուէր մայրերին և օրիորդներին, Պետր. գ. 30 կ.:

Բալուղեան Ջ., Բանաստեղծութիւններ, Մոսկ. գ. 50 կ.:

Բախսախնդիր., Մասնորո թափառական կամ թշուառ ճանապարհորդ, Թիֆլ. գ. 25 կ.:

Բակ, Կիլիկիա, Թիֆլիս, գ. 15 կ.:

Բահաբեան Ա., Հին հայոց տաղաչափական արուեստը, քննական տեսութիւն, Շուշի գ. 50 կ.:

Բարխուդարեան Գ., Բարեպաշտ մարդիկ, առակ չափահասներին համար, Թիֆլ. գ. 60 կ.:

Բարխուդարեան Մակ. եպս., Արցախ Հայաստանի 15 նահանգներին մէկը, Բագու, գ. 1 ա. 50 կ.:

» Աղուանից երկիր և դրացիք (միջին Դաղստան), Թիֆլ. գ. 1 ա.:

» Քննադատութիւն քննադատութեանց, Թիֆլ. գ. 40 կ.:

» Չորանն ու նշանածը 1883 թուին, Թիֆլ. գ. 40 կ.:

» Բարոյական առածներ, Թիֆլ. գ. 20 կ.:

Բարխուդարեան Յովհ., Մանկական խաղեր նկարներով, Թիֆլ. գ. 50 կ.:

Բեհբուքեան Կոս. իշխան., Ծովեր, ծխական հոգաբարձութեան կազմակերպութեան մասին, Թիֆլ. գ. 15 կ.:

Բեհբուքեան Մ. իշխան., ա. Վսլ քի իմ վէչէր, Փարս 3 պատկերով—40 կ., բ. Բիքեր Բիձու հանարը, օպերետա մի դործող.—25 կ., գ. Անանային երեկոյ գիւղում, վօդովիլ 1 արար.—25 կ., դ. Բոնի ամուսնութիւն, կօմեդիա մէկ արար.—40 կ., ե. Ժանօ և Ժանէտ, օպերա-վօդովիլ 1 արար.—40 կ., զ. Պառաներուն խրատ, վօդովիլ 1 արար.—50 կ., Է. Տիկինը նրան սպասում է, վօդովիլ—30 կ., Բ. Անանուն կատակ, վօդովիլ—40 կ., Բ. Փակուած դռան մօտ, պակեր, մենախօսութիւն—30 կ.:

Բերբերեան Ռուբ., Հայոց նորագոյն բանաստեղծները, մասն ա. Բանաստեղծ-մտածող, Ռօստով Դօնի վրայ, գ. 20 կ.:

Բիւզանդացի Նորայր., Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնը, Թիֆլ. գ. 1 ա. 50 կ.:

- Բուդուղեան Ա. բժ., ա. Մեր նեարդերը, 10 կ., բ. Վեներական
ախտեր 5 կ., գ. Սիֆիլիս 10 կ., դ. Ի՞նչ է անա-
ռակութիւնը 5 կ., ե. Առողջ հոգին առողջ մարմնի
մէջ 10 կ., զ. Գեղձախտ (զօլօտուխտ)—10 կ., Ո՞վ է
յանցաւորը, Նոր-Նախիջևան, 1900 թ. դ. 15 կ.:
- Բրիլիանչիկեան Ա., Հայկական մօնօգրասներ և ծաղկագրեր
ձեռագործի համար, Պետր., գ. 50 կ.:
- Դալֆայեան Ամբ. վարդ., Պատմութիւն Աստուածաշունչ ա. գրոյ
Հին կտակարանի, բ. տպ., Վաղարշ. գ. 1 ռ.:
- » Պատմութիւն Նոր կտակարանի, բ. տպ., Վաղարշ.
գ. 50 կ.:
- Դանջեցեան Միք., Տակոսաբեր աղիւսակ, Շուշի, գ. 25 կ.:
- Դեռոգեան Բարդ. վարդ., Խորենային Խորենայով պէտք է հաա-
կանալ, Վաղարշ., գ. 50 կ.:
- Դործ անախելոց Թուղթք Պօղոսի Թուղթք կաթուղիկեայ
յայտնութիւն Յռհաննու, Երուսաղ. կաղմով, գ. 80 կ.:
- Դուլամիրեան Սիմ., Արաքս գրական գեղարուեստական սլաա-
կերադարդ հանդէս, տարեկան 2 գիրք, 1893 թուի
ա. և բ. գիրք, 1895-ի ա. և բ. գիրք և 1898-ի ա.
գիրք. իւրաքանչիւր գիրքը 2 ռ.:
- » Կիլիկիա աշխարհագրական, տեղագրական, արդի Կի-
լիկիա, Պետեր. գ. 1 ռ. 25 կ.:
- Դաւթեան Արիս. եպս., Աղանդաւորք և մոլորութիւնը նոյա
ի վարդապետութիւնս հաւատոյ, Վաղարշ. գ. 20 կ.:
- » Ծաղկաքաղ վարուց սրբոյ և տօնակատարութիւնք,
Վաղարշ., գ. 20 կ.:
- Դերբենդցի «Շանիր» Խաչատուր, Ծաղիկ ժամանակի երգեր,
Թիֆլ. գ. 50 կ.:
- Դուրեան Պետրոս, Բանաստեղծութիւնների ժողովածու, Բաղու,
գ. 20 կ.:
- Եղիազարեան Բեն., Լուծեալ սէր, Կ. Պօլիս, գ. 80 կ.:
- Եղիշէի պատմութիւն Վարդանանց, Տիֆլիս, գ. 50 կ.:
- Երիցեան Աղ., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի
Հայք XIX-րորդ դարում, 2 հատոր, Թիֆլ. գ. 4 ռ.:
- » Պատմութիւն 75-ամեայ զոյութեան Ներսիսեան Հայոց
Հոգեւոր ղարոյի, հատ ա. Թիֆլ. գ. 2 ռ.:
- » Патриархъ всеѣхъ Армянъ Нерсесъ V-й, съ тремя
фото-типями, Тифл. п. 3 р.
Նիւթեր Ներսէս Ե.-ի կենսագրութեան համար, երեք
տետր, Թիֆլ. գ. 75 կ.:
- » Գրիգոր Արծրունու և նրա 25 տարուայ դրական
գործունէութեան առիթով, Թիֆլ. գ. 25 կ.:

հասարակական կազմակերպութեան արդիւնք.—Միջ-
նորդներից պաշտպանող ընկերակցութիւններ.—Ռօշդէ-
լեան սպառողական ընկերակցութիւն.—Կօօպերատիւ և
ակցիօներական ընկերութիւնների տարբերութիւնը.—
Ինչո՞ւ կօօպերատիւ ընկերութիւնները չեն ծաղկում
հայերիս մէջ.—Շահ և սկզբունք.—Նոր սերունդը գա-
ղափարական դարձնելու միջոցներից մէկը. Գրիգ. Արծ-
րունու հրապարակախօսական լօղուածները հրատարա-
կութիւնը առանձին գրքով.—Մտի կրիդիսը Թիֆլիսում.
Բնակարանների կրիդիս.—Տնտեսք ձայնաւորների կա-
տարելիք գերը. Լևոն Սարգսեան 247

20. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. I. Ոռոգման հարցը Արարատեան
դաշտում, II.—Դօ: II. Վիճակադրական տեղեկու-
թիւններ Ալեքսանդրօպօլի հայ-լուսաւորչականների
մասին. Ն. Բ. Ն. 256

21. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զինական պատերազմի վախճանը.
—Բօտալի նամակը.—Թիւրքական ոտնձգութիւններ.—
Նզդերի հաւասարութեան սկզբունքը.—Ֆրանց-Յովսէփը
չեխերի մայրաքաղաքում.—Կեօրերի տնտեսական-հա-
տարական ծրագիրները.—Վալդէկ-Րուսսօյի բանուո-
րական կենսաթոշակի օրինակիծը. Լ. Ս. 264

22. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՅ, Նամակ Թաւրիզից,
Ե. Ֆրանգեանի 268

23. ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ, II. տիկին Ս. Տիւսաբ, Լ. 283

24. ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ 289

25. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ 290

26. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 291

27. ՅԱՒԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», Վէպ Լ. Տօլստօյի, Թարգմ.
Տ. Յովհաննիսեանի 129—160

ՀԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

Խմբագրության տնօրենքն է՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍՍԱԳՍԵԱՆ և ԼԷՕ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ

Ռուսաստանում տարեկան 10 անգամ. Առաստախմբում՝ 12 անգամ.

»	կէս տարին 6	»	»	7	»
»	1 ամսուան 1	»	»	1	» 50 Կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—խմբագրատանը (Նրեանեան հրատարակ, տ. Խարաղեանի):

Կայսրության աղ ճեղերից պէտք է գրուել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

Առաստախմբից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtech“.

Ծանոթութիւն. Ով դժուարանում է տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միանուագ, կարող է տալ մաս-մաս (սկզբում 5 ռ., մարտի 1-ին 3 ռ. և մայիսի 1-ին 2 ռ.):

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 Կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ղեկեղելու համար պէժք է վճարել.

Մի ևրես բռնող լալտարարութեան համար . 15 ռ.

1/2 » » » » . 8 »

1/4 » » » » . 4 »

ԱՊՍԱՌԻՆ կամ ԶՐԻ ոչ ոքի չէ ուղարկում «Մուրճ»:

ԽՄՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը խնդրում է յօդուածագիրներին՝ գրել պարզ և թերթի միայն մի երեսի վրայ:

2. Չընդունում մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Ձեռագիրը լետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուրճի» համարը չը ստացուելու դէպքում պէտք է խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լույս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պոստային դրասենեակի հաւաստագիրը (удостоверение), որ ամսագրի համարը չի լանձնուած դանդաղատարին: